

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԾՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2010 թ. II ԿԻՍԱՄՅԱԿ, 2011 թ.

Zwsnr III

**ԵՐԵՎԱՆ
ԱՄԱՐԱՍ
2012**

ՀՏԳ. 343.156(479.25)
ԳՄԳ. 67.99 (2Հ) 93
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու: 2010թ. II կիսամյակ. 2011թ.- Եր.: Ամարաս, 2012. Հ. 3.- 896 էջ:

ՀՏԳ. 343.156(479.25)
ԳՄԳ. 67.99 (2Հ) 93

ISBN 978-99930-1-152-1

© Եվրոպայի խորհուրդ, 2012 թ.
© ՀՀ վճռաբեկ դատարան, 2012 թ.

Funded
by the European Union



EUROPEAN UNION



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՏՎՈՂ ԾՐԱԳԻՐ
«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆԸ»

Կազմեցին՝ աշխատանքային խումբ

Սերգեյ Մարաբյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս

Հովհաննես Ավագյան

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի ավագ օգնական

Լուսինե Աբգարյան

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի ավագ օգնական

Արարատ Անդրեասյան

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի ավագ օգնական

Սույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել
Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի
ֆինանսական աջակցության շնորհիվ:
Գրքի հետագա վերահրատարակումը կարող է կատարվել
Եվրոպայի խորհրդի համաձայնությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆախաբանVII

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական
գործերով որոշումների առարկայական դասակարգումIX

Աղբյուրների ցանկ թիվ 1.
ՀՀ Սահմանադրության դրույթներXXV

Աղբյուրների ցանկ թիվ 2.
Սարդու իրավունքների եվրոպական
դատարանի վճիռներXXVI

Աղբյուրների ցանկ թիվ 3.
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներXXVIII

Աղբյուրների ցանկ թիվ 4.
ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերXXVIII

1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0008/11/09 6
2. Հ.Աթոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0014/11/09 14
3. Խ.Գազարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0138/01/09 27
4. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0580/06/09 35
5. Կ.Ռուբինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/ 0007/11/09 48
6. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0128/01/09 56
7. Ա.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0001/11/10 66
8. Ս.Գաբրիելյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0115/01/09 76
9. Տ.Պիրապյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-1/0028/06/10 88
10. Կ.Հովհաննիսյանի և մյուսների
վերաբերյալ որոշում, ԵԲԲԳ/0063/01/08 96
11. Ա.Սաքունցի վերաբերյալ որոշում (թիվ 1), ԼԳ/0001/11/10 117
12. Կ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0301/01/09 126
13. Է.Ներսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0124/01/09 139
14. Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0001/11/10 150
15. Վ.Աղաջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0345/01/09 158
16. Է.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0293/01/09 165
17. Լ.Գուլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0051/11/09 174

18. Ն.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0094/01/09	192
19. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԳԳ1/0003/01/10	201
20. Ա.Սաքունցի վերաբերյալ որոշում (թիվ 2), ԵԿԳ/0045/11/10	212
21. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0151/01/09	217
22. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0149/01/09	228
23. Լ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0286/01/09	244
24. Ս.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0032/01/10	250
25. Ա.Երեմյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0513/06/10	260
26. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0059/11/10	266
27. Վ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0060/11/10	276
28. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0009/12/10	283
29. Վ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ2/0057/01/09	289
30. Գ.Ավետիսյանի և Ա.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0164/01/09	295
31. Լ.Զարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/11/09	306
32. «Իրավագարանտ» ՍՊԸ-ի և Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0008/11/10	316
33. Ա.Պասյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0115/01/09	321
34. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՄԳ/0085/01/10	335
35. Հ.Խաչատրյանի և Վ.Սինասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0195/01/09	345
36. Ա.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0086/01/10	358
37. Գ.Սյրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0002/11/10	368
38. Վ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ1/0063/01/09	379
39. Ա.Գալաթյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0082/13/09	389
40. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԳԳ1/0012/13/09	397
41. Ա.Ասլանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0125/01/09	405
42. Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0126/01/10	417
43. Մ.Սարգսյանի և Կ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0282/01/09	432
44. Հ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0009/11/10	448
45. Է.Եղիճյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0008/11/10	455
46. Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0678/06/10	465
47. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում (թիվ 1), ԵԿԳ/0090/01/09	481
48. Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0209/01/10	495

49. Կ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0002/11/10	512
50. Լ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0176/01/09	521
51. Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0281/01/10	535
52. «Արցախբանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԿԳ/0003/11/10	548
53. Հ.Մալխասյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԼԳ/0136/01/10	554
54. Է.Եղիկյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0008/11/10	567
55. Ե.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0090/01/10	574
56. Հ.Աղեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0744/06/10	583
57. Գ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0211/01/10	592
58. Ա.Սվազյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0055/01/10	602
59. Ա.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0157/01/10	611
60. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0091/01/09	620
61. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0004/11/11	629
62. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում (թիվ 2), ԵԿԳ/0090/01/09	638
63. Ա.Իսկանդարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0007/11/09	644
64. Ա.Ղալաշյանի և Յու.Ղալաշյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0009/11/11	651
65. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10	661
66. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0013/01/11	677
67. Գ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0013/01/11	694
68. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0022/01/10	707
69. Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0008/06/11	730
70. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0212/01/10	740
71. Լ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0136/11/11	754
72. Ն.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0042/01/11	774
73. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10	791
74. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ՎԲ-16/11	806
75. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0168/01/10	813
76. Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0044/01/11	823
77. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0503/06/10	840
78. Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-2/0009/06/11	852
79. Խ.Ավազյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԳ/0341/01/08	863



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2010 Թ. II ԿԻՍԱՄՅԱԿ, 2011 Թ.**

Նախարան

Սկսած 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից, մեր երկրում ընթանում է իրավական համակարգի փոխակերպումների ակտիվ գործընթաց, որի հիմնական ուղղություններից մեկը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորվող և ձևակերպվող իրավական դիրքորոշումների արժեքի բարձրացումն է: Դա ինքնանպատակ չէ և պայմանավորված է մի քանի կարևոր սկզբունքներով, այն է՝ ապահովել արդարադատության կանխատեսելիությունը, դատական համակարգի միասնականությունը, օրենքի առջև իրավահավասարության ապահովումը, իրավունքի զարգացումն ապահովելը և այլն:

Վերոնշյալ սկզբունքների իրականացումն ապահովելու համար կարևոր է այն հանգամանքը, որպեսզի Վճռաբեկ դատարանի որոշումներն ավելի մատչելի լինեն հասարակության լայն շրջանակների համար, որի արդյունքում կբարձրանա նաև հասարակական վստահության մակարդակն արդարադատության նկատմամբ: Ժողովածուն այն միջոցն է, որի օգնությամբ ապահովվում է Վճռաբեկ դատարանի որոշումների հասանելիությունը, որը նպաստում է արդարադատության կանխատեսելիությանը և միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը:

Սույն ժողովածուն կոչված է նպաստելու հասարակության իրավագիտակցության, դատական իշխանություն կրողների պատասխանատվության զգացումը բարձրացնելուն, այն կօգնի դատավորներին, փաստաբաններին ծանոթանալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին և հետևել դրանց:

Կարևոր է ժողովածուի դերը ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունն ապահովելու գործում, այլև արդարադատության թափանցիկության գործում:

Սույն ժողովածուն ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների երրորդ հատորն է և ընդգրկում է 2010 թվականի 2-րդ կիսամյակի և 2011 թվականին ընդունված, ՀՀ վճռաբեկ դատարանի ըստ էության բոլոր որոշումները, որոնք թվով 79-ն են:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը ինչպիսի իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին, դրանում ինչպես և նախորդ հատորում սահմանված են նաև յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, ՄԻԵԴ-ի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որի վրա նույնությամբ ձայնագրված են այն նույն դատական ակտերը, որոնք ներառված են գրքում, ինչը ևս մեկ հնարավորություն է հեշտացնելու ժողովածուից օգտվողների աշխատանքը:

Սույն ժողովածուի հրատարակումը հնարավոր է դարձել իրականացնել Եվրոպայի խորհրդի հետ արդյունավետ համագործակցության և ֆինանսական աջակցության շնորհիվ:

Դ. Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական
պալատի նախագահ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ վաստակավոր իրավաբան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն-I. Սեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը

(ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված)

Ն¹-I-1. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0013/01/11
(66², նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-XVI-2, Ն-XXII-1)677

**Ն-II. Սեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը,
պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները,
պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող
ու ծանրացնող հանգամանքները**

(ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածներ)

Ն-II-1. Խ.Գազարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0138/01/09
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1)27
Ն-II-2. Է.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0293/01/09 (16)165
Ն-II-3. Ն.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0094/01/09
(18, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1)192
Ն-II-4. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0003/01/10
(19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-2, Ն-XXX-1)201
Ն-II-5. Ս.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0032/01/10
(24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-3)250
Ն-II-6. Գ.Ավետիսյանի և Ա.Հովակիմյանի վերաբերյալ որոշում,
ԵԱԶԳ/0164/01/09 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-3)295
Ն-II-7. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում,
ՍԳ/0085/01/10 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-4)335
Ն-II-8. Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0126/01/10 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1, Ն-XVIII-5)417
Ն-II-9. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0091/01/09
(60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-6)620
Ն-II-10. Ն.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0042/01/11 (72)779

**Ն-III. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը
ժամանակի ընթացքում (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված)**

Ն-III-1. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Ն» տառով:

² Սույն հոդվածում ընդգրկված որոշման հերթական համարը:

(65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-2, Ն-V-2, Գ ³ -XXVII-3, Գ-XXXI-2, Գ-XLV-1)661
Ն-III-2. Գ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0013/01/11	
(67, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-3)694

**Ն-IV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը
(ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)**

Ն-IV-1. Լ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0286/01/09	
(23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-2)244
Ն-IV-2. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10	
(65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-V-2, Գ-XXVII-3, Գ-XXXI-2, Գ-XLV-1)661
Ն-IV-3. Գ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0013/01/11	
(67, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2)694

**Ն-V. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության հասկացությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդված)**

Ն-V-1. Ե.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0090/01/10	
(55, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIX-2)574
Ն-V-2. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10	
(65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-2, Գ-XXVII-3, Գ-XXXI-2, Գ-XLV-1)661

**Ն-VI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության տեսակները
(ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված)**

Ն-VI-1. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0022/01/10	
(68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1, Գ-IX-1, Գ-X-3)707

**Ն-VII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների
համակցությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված)**

Ն-VII-1. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0013/01/11	
(66, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-XVI-2, Ն-XXII-1)677

**Ն-VIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքը դիտավորությանմբ
կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդված)**

Ն-VIII-1. Վ.Աղաջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0345/01/09	
(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIX-1, Գ-VIII-2)158

³ Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչում են «Գ» տառով:

Ն-IX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավորձը	
(ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)	
Ն-IX-1. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0168/01/10 (75, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1, Ն-XXIV-2)	813
Ն-X. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ հանցակցության հասկացությունը և տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 37-38-րդ հոդվածներ)	
Ն-X-1. Ա.Ասլանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0125/01/09 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-2, Ն-XXXII-1)	405
Ն-XI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդված)	
Ն-XI-1. Հ.Մալխասյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԼԳ/0136/01/10 (53)	554
Ն-XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անհրաժեշտ պաշտպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդված)	
Ն-XII-1. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0149/01/09 (22)	228
Ն-XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հիմնական և լրացուցիչ պատիժները (ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդված)	
Ն-XIII-1. Ա.Սվազյանի վերաբերյալ որոշում, ԵՍԳ/0055/01/10 (58, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1)	602
Ն-XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի բռնագրավումը (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդված)	
Ն-XIV-1. Ա.Սվազյանի վերաբերյալ որոշում, ԵՍԳ/0055/01/10 (58, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1)	602
Ն-XIV-2. Ա.Սարգսյան վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0090/01/09 (62)	638
Ն-XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)	
Ն-XV-1. Ն.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0094/01/09 (18, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3)	192
Ն-XV-2. Վ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ-2/0057/01/09 (29)	289
Ն-XV-3. Գ.Ավետիսյանի և Ա.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0164/01/09 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-6)	295
Ն-XV-4. Հ.Խաչատրյանի և Վ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0195/01/09 (35)	345

Ն-XXVI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)
 Ն-XXVI-1. Է.Ներսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0124/01/09 (13)139
 Ն-XXVI-2. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0013/01/11 (66, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ի-1, Ն-VII-1, Ն-XXII-1)671

Ն-XXVII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի ժամկետները հաշվարկելը և պատիժը հաշվակցելը (ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդված)
 Ն-XXVII-1. Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0126/01/10 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-8, Ն-XVIII-5)417

Ն-XXVIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)
 Ն-XXVIII-1. Խ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0138/01/09 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1)27
 Ն-XXVIII-2. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0003/01/10 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-XXX-1)201
 Ն-XXVIII-3. Ս.Գավթյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0032/01/10 (24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-5)250
 Ն-XXVIII-4. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0085/01/10 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-7)335
 Ն-XXVIII-5. Գ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0126/01/10 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-8, Ն-XVII-1)417
 Ն-XXVIII-6. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0091/01/09 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-9)620

Ն-XXIX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդված)
 Ն-XXIX-1. Ա.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0157/01/10 (59)611

Ն-XX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդված)
 Ն-XX-1. Ա. և Յու.Ղալաշյանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0009/11/11 (64, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1)651

Ն-XXI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)
 Ն-XXI-1. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0022/01/10 (68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Գ-IX-1, Գ-X-3)707

Ն-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը
(ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)
Ն-XXII-1. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0013/01/11
(66, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-VII-1, Ն-XVI-2) 677

Ն-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)
Ն-XXIII-1. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0168/01/10
(75, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XXIV-2) 813

Ն-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությանը առողջությանը
ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)
Ն-XXIV-1. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10
(73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-VII-1, Գ-VIII-5, Գ-XX-1) 791
Ն-XXIV-2. Ա.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0168/01/10
(75, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XXIII-1) 813

Ն-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անզգուշությանը առողջությանը
ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդված)
Ն-XXV-1. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10
(73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Գ-VII-1, Գ-VIII-5, Գ-XX-1) 791

Ն-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անչափահասին հանցանքի
կատարմանը ներգրավելը (ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդված)
Ն-XXVI-1. Ա.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0086/01/10 (36) .. 358

Ն-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)
Ն-XXVII-1. Լ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0176/01/09 (50) 521

Ն-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավոր ճանապարհով ստացված
եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը)
(ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդված)
Ն-XXVIII. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0090/01/09 (47) 481

Ն-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք,
պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը,
իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)
Ն-XXIX-1. Վ.Աղաջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0345/01/09
(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Գ-VIII-2) 158

Ն-XXIX-2. Ե.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0090/01/10
(55, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1)574

**Ն-XXX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության
և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)**

Ն-XXX-1. Ա.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-1/0003/01/10
(19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-XVIII-2)201

**Ն-XXXI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քննամիջոցների, հոգևերգործուն
նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի
շրջանառությունն իրացնելու նպատակով
(ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)**

Ն-XXXI-1. Կ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ որոշում,
ԵԶԲԳ/0063/01/08 (10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-3)96

Ն-XXXI-2. Ա.Ասլանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0125/01/09
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XXXII-1)405

**Ն-XXXII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քննամիջոցների կամ
հոգևերգործուն նյութերի ապօրինի շրջանառությունն
առանց դրանք իրացնելու նպատակի
(ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)**

Ն-XXXII-1. Ա.Ասլանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0125/01/09
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XXXI-2)405

**Ն-XXXIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ ինքնիրավչությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդված)**

Ն-XXXIII-1. Վ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում,
ԱՎԳ-1/0063/01/09 (38)379

**Ն-XXXIV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ փաստաթղթեր, դրոշմներ,
կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների
պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված)**

Ն-XXXIV-1. Ս.Գաբրիելյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0115/01/09
(8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1)76

**Ն-XXXV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ սուտ ցուցմունք կամ
կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն
կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդված)**

Ն-XXXV-1. Կ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0301/01/09
(12, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-1, Գ-XIX-1, Գ-XXXII-1)126

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Դ-I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետ)

Դ-I-1. Ա.Դալլաբյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0082/13/09
(39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIX-1) 389

Դ-I-2. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԳԴ-1/0012/13/09
(40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIX-2) 397

Դ-I-3. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ՎԲ-16/11
(74, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLXII-2) 806

Դ-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիմողը քրեական դատավարությունում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 33-րդ կետ)

Դ-II-1. Մ. և Կ.Սարգսյանների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0282/01/09
(43, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXII-1, Դ-XXVII-2) 432

Դ-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անձի անձեռնմխելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)

Դ-III-1. Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0678/06/10
(46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-1, Դ-XXXVII-2) 465

Դ-III-2. Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշումը, ԵԿԳ/0281/01/10
(51, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-4, Դ-XLIII-2) 535

Դ-III-3. Լ.Գուլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0051/11/09 (17) 174

Դ-III-4. Գ.Սլյուտյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0002/11/10
(37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1) 368

Դ-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Դ-IV-1. Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0008/06/11
(69, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVII-2, Դ-XXXVII-3) 730

Դ-IV-2. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0212/01/10
(70, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-1) 740

Դ-IV-3. Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում,
ԵԷԳ/0044/01/11
(76, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-VII-4, Դ-XXXIX-1, Դ-XLI-1) 823

Դ-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

Դ-V-1. Ս.Գաբրիելյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0115/01/09
(8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXIV-1) 76

Գ-V-2. Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում,
ԵԷԳ/0044/01/11 (76, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-VII-4,
Գ-XXXIX-1, Գ-XLI-1)823

Գ-VI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտպանության իրավունքը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված)

Գ-VI-1. Ա.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0115/01/09
(33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-1, Գ-XL-1)321

Գ-VI-2. Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի վերաբերյալ որոշումը,
ԵԿԳ/0209/01/10 (48, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIII-1)495

Գ-VII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)

Գ-VII-1. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10
(73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Ն-XXV-1, Գ-VIII-5, Գ-XX-1)791

Գ-VII-2. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշումը, ԵԷԳ/0009/12/10
(28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1)283

Գ-VII-3. Կ.Սահակյանի վերաբերյալ որոշումը, ԱՎԳ/0002/11/10
(49, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-9, Գ-XLIX-1)512

Գ-VII-4. Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում,
ԵԷԳ/0044/01/11 (76, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-V-2,
Գ-XXXIX-1, Գ-XLI-1)823

Գ-VIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)

Գ-VIII-1. Կ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0301/01/09
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXV-1, Գ-XIX-1, Գ-XXXII-1)126

Գ-VIII-2. Վ.Աղաջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0345/01/09
(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XXIX-1)158

Գ-VIII-3. Կ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ
որոշումը, ԵԶԲԳ/0063/01/08 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1)405

Գ-VIII-4. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշումը, ԵԿԳ/0281/01/10
(51, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-2, Գ-XLIII-2)535

Գ-VIII-5. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10
(73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Ն-XXV-1, Գ-VII-1, Գ-XX-1)791

Գ-IX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթի կասեցումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդված)

Գ-IX-1. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԳԳ5/0022/01/10
(68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XXI-1, Գ-X-3)707

Գ-X. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)	
Գ-X-1. Հ.Աթոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳ-Գ/0014/11/09 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1, Գ-XXXVIII-2)	14
Գ-X-2. Լ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0286/01/09 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1)	244
Գ-X-3. Ա.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, Գ-Գ-5/0022/01/10 (68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XXI-1, Գ-IX-1)	707
Գ-X-4. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0503/06/10 (77, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI-3, Գ-XXXVIII-12)	840

Գ-XI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ իրադրության փոփոխության հիմքով քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդված)	
Գ-XI-1. Ա. և Յու.Ղալաչյանների վերաբերյալ որոշում, ԼԳ/0009/11/11 (64, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1)	651

Գ-XII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդված)	
Գ-XII-1. Է.Եղինյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0008/11/10 (45, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-8)	455

Գ-XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի ընդդատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-50-րդ հոդվածներ)	
Գ-XIII-1. Գ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0211/01/10 (57, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLX-1)	592

Գ-XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի մասնակցությունը դատական նիստին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 390-րդ և 438-րդ հոդվածներ)	
Գ-XIV-1. Մ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0009/12/10 (28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-2)	283

Գ-XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալի ցուցմունք տալու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդված)	
Գ-XV-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0580/06/09 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-1, Գ-XXV-1)	35

Գ-XVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավահաջորդի իրավունքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդված)	
--	--

Գ-XXVI-1. Գ.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0002/11/10
(37, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-4)368

Գ-XXVII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վկայի իրավունքներն ու պարտականությունները քրեական դատավարությունում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդված)
Գ-XXVII-1. Ս.Սահակյանի բողոքի վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0059/11/10 (26)266

Գ-XXVIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդված)
Գ-XXVIII-1. Հ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0212/01/10
(70, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2)740

Գ-XXIX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների թույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)
Գ-XXIX-1. Կ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0301/01/09
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXV-1, Գ-VIII-1, Գ-XXXII-1)126

Գ-XX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ ապացուցման ենթակա հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված)
Գ-XX-1. Ս.Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0058/01/10
(73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Ն-XXV-1, Գ-VII-1, Գ-VIII-5)791

Գ-XXI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ իրեղեն ապացույց ճանաչելու դատավարական կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդված)
Գ-XXI-1. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0128/01/09
(6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-1, Գ-XLII-2)56

Գ-XXII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ իրեղեն ապացույցների տնօրինումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ և 119-րդ հոդվածներ)
Գ-XXII-1 Մ. և Կ.Սարգսյանների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0282/01/09
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXVII-2)432

Գ-XXIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը որպես կալանավորման այլընտրանքային միջոց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ և 137-րդ հոդվածներ)
Գ-XXIII-1. Ա.Երեմյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0513/06/10
(25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-3)260

Գ-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի ժամկետի

երկարացման հիմքերը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)

Գ-XXIV-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0580/06/09
(4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-1, Գ-XXV-1) 35

Գ-XXIV-2. Տ.Պիրապյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-1/0028/06/10
(9, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVII-1) 88

Գ-XXIV-3. Ա.Երեմյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0513/06/10
(25, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIII-1) 260

Գ-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը

և կալանքի ժամկետի երկարացումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

18-րդ և 135-րդ հոդված)

Գ-XXV-1. Ա.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0580/06/09
(4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-1, Գ-XXIV-1) 35

Գ-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի կիրառման

հիմքերն ու պայմանները

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

135-րդ և 136-րդ հոդվածներ)

Գ-XXVI-1. Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0678/06/10
(46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-XXXVII-2) 465

Գ-XXVI-2. Հ.Ադեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0744/06/10 (56) 583

Գ-XXVI-3. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0503/06/10
(77, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-4, Գ-XXXVIII-12) 840

Գ-XXVI-4. Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-2/0009/06/11
(78, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-13) 852

Գ-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցը

քրեական դատավարությունում (ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 154-163-րդ հոդվածներ)

Գ-XXVII-1. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0151/01/09
(21, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLVII-1) 217

Գ-XXVII-2. Մ. և Կ.Սարգսյանների վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0282/01/09 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XXII-1) 432

Գ-XXVII-3. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10
(65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-2, Ն-V-2,
Գ-XXXI-2, Գ-XLV-1) 661

Գ-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարական ժամկետների հաշվարկը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)	
Գ-XXVIII-1. Է.Եղիմյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0008/11/10 (54, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIV-4)	567

Գ-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարական ժամկետները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդված)	
Գ-XXIX-1. Ա.Գալլաքյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0082/13/09 (39, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1)	389
Գ-XXIX-2. Ա.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, Գ-Գ/0012/13/09 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-2)	397

Գ-XXX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ժամկետները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներ)	
Գ-XXX-1. Հ.Աթոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳ-Գ/0014/11/09 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1, Գ-XXXVIII-2)	14
Գ-XXX-2. Ա.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0001/11/10 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-4, Գ-XLXI-1)	66
Գ-XXX-3. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0004/11/11 (61)	629

Գ-XXXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրանքի ձևակերպումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածներ)	
Գ-XXXI-1. Ա.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0115/01/09 (33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-1, Գ-XL-1)	321
Գ-XXXI-2. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10 (65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-2, Ն-V-2, Գ-XXVII-3, Գ-XLV-2)	661

Գ-XXXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վկայի հարցաքննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդված)	
Գ-XXXII-1. Կ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0301/01/09 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXV-1, Գ-VIII-1, Գ-XIX-1)	126

Գ-XXXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուզարկություն և առգրավում կատարելիս հայտանաբերված առարկաների	
---	--

**կամ փաստաթղթերի վերցման կարգը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
228-րդ հոդվածի 3-րդ մաս)**

Գ-XXXIII-1. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0128/01/09
(6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1, Գ-XLII-2)56

**Գ-XXXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
232-րդ և 236-րդ հոդվածներ)**

Գ-XXXIV-1. Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում,
ԵՇԳ/0001/11/10 (14)150

**Գ-XXXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը
կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու
մասին որոշման բողոքարկումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդված)**

Գ-XXXV-1. Հ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0009/11/10
(44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-7)448

Գ-XXXV-2. Ա.Իսկանդարյանի վերաբերյալ որոշումը, ԵԱԵԳ/0007/11/09
(63, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-10)644

**Գ-XXXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը
կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու
մասին որոշումը վերացնելու
Ժամկետները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
21-րդ, 264-րդ հոդվածներ)**

Գ-XXXVI-1. Լ.Չարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/11/09
(31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLVI-1)306

**Գ-XXXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման
միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման
օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)**

Գ-XXXVII-1. Տ.Պիրապյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-1/0028/06/10
(9, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-2)88

Գ-XXXVII-2. Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0678/06/10
(46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-XXVI-1)465

Գ-XXXVII-3. Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0008/06/11
(69, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1, Գ-XLVII-2)730

Գ-XXXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Գ-XXXVIII-1. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0008/11/09 (1) 6
Գ-XXXVIII-2. Հ.Աթոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0014/11/09 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1, Գ-XXX-1) 14
Գ-XXXVIII-3. Կ.Ռուբինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/ 0007/11/09 (5). 48
Գ-XXXVIII-4. Ա.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0001/11/10 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-2, Գ-XLXI-1) 66
Գ-XXXVIII-5. Ա.Սաքունցի բողոքի վերաբերյալ որոշում, ԼԳ/0001/11/10 (11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLV-1) 117
Գ-XXXVIII-6. Վ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0060/11/10 (27). 276
Գ-XXXVIII-7. Հ.Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0009/11/10 (44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXV-1) 448
Գ-XXXVIII-8. Է.Եղիմյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0008/11/10 (45, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XII-1) 455
Գ-XXXVIII-9. Կ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0002/11/10 (49, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-3, Գ-XLIX-1) 512
Գ-XXXVIII-10. Ա.Իսկանդարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0007/11/09 (63, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXV-2) 644
Գ-XXXVIII-11. Լ.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0136/11/11 (71) 754
Գ-XXXVIII-12. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0503/06/10 (77, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-4, Գ-XXVI-3) 840
Գ-XXXVIII-13. Հ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-2/0009/06/11 (78, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI-4) 852

Գ-XXXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործը դատական քննության նախապատրաստելիս մեղադրողին վերադարձնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածներ)

Գ-XXXIX-1. Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0044/01/11 (76, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-V-2, Գ-VII-4, Գ-XLI-1) 823

Գ-XL. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)

Գ-XL-1. Ա.Պապյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0115/01/09 (33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-1, Գ-XXXI-1) 321

Գ-XLI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանում մեղադրանքը փոխելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդված)

Գ-XXI-1. Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0044/01/11 (76, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-3, Գ-V-2, Գ-VII-4, Գ-XXXIX-1)	823
---	-----

Գ-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Գ-XXII-1. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0128/01/09 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1, Գ-XXXIII-1)	56
---	----

Գ-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգով գործի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ և 3753-րդ հոդվածներ)

Գ-XXIII-1. Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0209/01/10 (48, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-2)	495
Գ-XXIII-2. Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0281/01/10 (51, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-2, Գ-VIII-4)	535

Գ-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)

Գ-XXIV-1. Ա.Սաքունցի բողոքի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0045/11/10 (20)	212
Գ-XXIV-2. «Իրավագարանտ» ՍՊԸ-ի և Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0008/11/10 (32)	316
Գ-XXIV-3. Հ.Խաչատրյանի և Վ.Սիմասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0195/01/09 (35)	345
Գ-XXIV-4. Է.Եղիմյանի վերաբերյալ որոշումը, ՇԳ/0008/11/10 (54, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-1)	567

Գ-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)

Գ-XXV-1. Ա.Սաքունցի բողոքի վերաբերյալ որոշում, ԼԳ/0001/11/10 (11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-5)	117
Գ-XXV-2. Ա.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0327/01/10 (65, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-2, Ն-V-2, Գ-XXVII-3, Գ-XXXI-2)	661

Գ-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ վերանայման առարկան

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդված)
Գ-XLVI-1 Լ.Ձարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/11/09
(31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVI-1)306

Գ-XLVII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդված)
Գ-XLVII-1. Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0151/01/09
(21, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1)217
Գ-XLVII-2. Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0008/06/11
(69, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1, Գ-XXXVII-3)730

Գ-XLVIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)
Գ-XLVIII-1. «Արցախբանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում,
ԿԳ/0003/11/10 (52)548

Գ-XLIX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդված)
Գ-XLIX-1. Կ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0002/11/10
(49, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-3, Գ-XXXVIII-9)512

Գ-XXL. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդված)
Գ-XXL-1. Գ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշումը,
ԵԿԳ/0211/01/10 (57, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXL-1)592

Գ-XXLI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտի անհստակությունների կամ կասկածների լուծումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդված)
Գ-XXLI-1. Ա.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0001/11/10
(7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-2, Գ-XXXVIII-4)66

Գ-XXLII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերի լուծման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդված)
Գ-XXLII-1. Խ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԳ/0341/01/08 (79)863
Գ-XXLII-2. Ա.Արծրունու վերաբերյալ որոշում, ՎԲ-16/11
(74, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-3)806

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

- | | |
|---|---|
| 1. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված
(33) ¹ , (37), (46), (71), (78) | 10. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդված
(4), (6), (55), (65), (66), (67) |
| 2. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված
(7), (11), (68) | 11. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված
(26) |
| 3. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված
(14), (26) | 12. ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված
(14), (26), (58) |
| 4. ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդված
(68) | 13. ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդված
(22) |
| 5. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված
(33), (46), (56), (68), (78) | 14. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդված
(68) |
| 6. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված
(1), (5), (8), (11), (27), (33), (43), (45),
(46), (63) | 15. ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդված
(68) |
| 7. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված
(6), (8), (27), (43), (45), (49), (61), (69),
(70), (73), (76) | 16. ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդված
(68) |
| 8. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված
(48) | 17. ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդված
(68) |
| 9. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդված
(1), (4), (5), (8), (46), (76) | 18. ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդված
(68), (714) |
| | 19. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդված
(76) |

¹ Սույն և հաջորդ ցանկերում՝ ժողովածուում ընդգրկված որոշման հերթական համարը:

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. <i>Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի</i> 1993թ. փետրվարի 25	(4)	1998թ. հուլիսի 28	(17), (37)
2. <i>Սաունդերսն ընդդեմ Միացյալ քաղաքացիության</i> 1996թ. դեկտեմբերի 17	(4)	18. <i>Մասթրոմաթեոն ընդդեմ Իտալիայի</i> 2002թ. հոկտեմբերի 24	(17), (37)
3. <i>Լոբո Մաչադոն ընդդեմ Պորտուգալիայի</i> 1996թ. փետրվարի 20	(6)	19. <i>Ասենովն ու մյուսներն ընդդեմ Բուլղարիայի</i> 1998թ. հոկտեմբերի 28	(17), (37)
4. <i>Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի</i> 2001թ. մայիսի 31	(6)	20. <i>Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի</i> 2000թ. մայիսի 18	(17)
5. <i>Վալստոնն ընդդեմ Նորվեգիայի</i> 2003թ. հունիսի 3	(6)	21. <i>Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության</i> 2007թ. նոյեմբերի 27	(17)
6. <i>Աքսենն ընդդեմ Գերմանիայի</i> 1983թ. դեկտեմբերի 8	(6)	22. <i>Հաքթոն ընդդեմ Միացյալ Թագավորության</i> 2005թ. մայիսի 10	(17)
7. <i>Դիենենն ընդդեմ Ֆրանսիայի</i> 1995թ. սեպտեմբերի 26	(6)	23. <i>Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի</i> 1989թ. դեկտեմբերի 19	(33)
8. <i>Հունաստովն ընդդեմ Ադրբեջանի</i> 2007թ. նոյեմբերի 29	(6)	24. <i>Պելիասինոն և Սասսին ընդդեմ Ֆրանսիայի</i> 1999թ. ապրիլի 25	(33)
9. <i>Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի</i> 2006թ. հուլիսի 20	(7), (11)	25. <i>Միլին ընդդեմ Սլովենիայի</i> 2009թ. ապրիլի 9	(37)
10. <i>Շոյսյան ընդդեմ Գերմանիայի</i> 2001թ. փետրվարի 13	(9)	26. <i>Բրոմարեսկուն ընդդեմ Ռումինիայի</i> 1999թ. հոկտեմբերի 28	(39)
11. <i>Յիդիթդոդանն ընդդեմ Թուրքիայի</i> 2010թ. մարտի 16	(9)	27. <i>Ռ-յաքիխն ընդդեմ Ռուսաստանի</i> 2003թ. հուլիսի 24	(39)
12. <i>Սանչեզ-Ռեիսենն ընդդեմ Շվեյցարիայի</i> 1986թ. հոկտեմբերի 21	(9)	28. <i>Չեհենտներն ընդդեմ Ավստրիայի</i> 2009թ. հուլիսի 16	(39)
13. <i>Բ.-ն ընդդեմ Միացյալ քաղաքացիության</i> 1987թ. հուլիսի 8	(17), (37)	29. <i>Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության</i> 1975թ. փետրվարի 21	(43), (45)
14. <i>Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի</i> 2003թ. դեկտեմբերի 4	(17), (37)	30. <i>Էյրին ընդդեմ Իռլանդիայի</i> 1979թ. հոկտեմբերի 9	(43), (45)
15. <i>Կիպրիուսն ընդդեմ Թուրքիայի</i> 2001թ. մայիսի 10	(17), (37)	31. <i>Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի</i> 2007թ. հուլիսի 26	(43), (45)
16. <i>Մքքանն ու մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության</i> 1995թ. սեպտեմբերի 27	(17), (37)	32. <i>Թիմուրտաշն ընդդեմ Թուրքիայի</i> 2000թ. հունիսի 13	(46)
17. <i>Էրզին ընդդեմ Թուրքիայի</i>			

33. Բագորկինան ընդդեմ Ռուսաստանի 2006թ. հունիսի 27	(46)	2001թ. փետրվարի 13	(69)
34. Կլիֆան ընդդեմ Միացյալ Թագավորության 2010թ. հունիսի 13	(46)	51. Ունտերայերտինգերն ընդդեմ Ավստրիայի 1986թ. նոյեմբերի 24	(70)
35. Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության 1994թ. հոկտեմբերի 28	(46)	52. Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի 2001թ. հունիսի 17	(70)
36. Բրոզանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1988թ. նոյեմբերի 29	(46)	53. Հուլիի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի 2003թ. հունիսի 19	(70)
37. Ֆոկսը, Քենթելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության 1990թ. օգոստոսի 30	(46)	54. Գոսսան ընդդեմ Լեհաստանի 2007թ. հունվարի 9	(70)
38. Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի 1997թ. նոյեմբերի 27	(46)	55. Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի 2008թ. նոյեմբերի 4	(70)
39. Լարիտան ընդդեմ Իտալիայի	(51)	56. Չական ընդդեմ Ալբանիայի 2009թ. դեկտեմբերի 8	(70)
40. Դիկմեն ընդդեմ Թուրքիայի	(51)	57. Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի 2010թ. մարտի 4	(70)
41. Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի 2008թ. փետրվարի 12	(55)	58. Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի 2010թ. սեպտեմբերի 28	(70)
42. Կոկլինակիսն ընդդեմ Հունաստանի 1993թ. մայիսի 25	(66), (67)	59. Դեվերեն ընդդեմ Բելգիայի 1980թ. փետրվարի 27	(71)
43. Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի 1995թ. սեպտեմբերի 27	(66), (67)	60. Էլլեն ընդդեմ Գերմանիայի 1982թ. հունիսի 15	(71)
44. Ս.Ո.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության 1995թ. նոյեմբերի 22	(66), (67)	61. Շուրֆինակին ընդդեմ Մլովենիայի 2007թ. հունվարի 18	(71)
45. Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության 1995թ. նոյեմբերի 22-ի	(66), (67)	62. Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի 2004թ. հունվարի 20	(71)
46. Քենփրելն ու Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության 1984թ. հունիսի 28	(68), (69)	63. Շաբելինին ընդդեմ Ուկրաինայի 2009թ. փետրվարի 19	(71)
47. Փելադոան ընդդեմ Նիդեռլանդների 1994թ. սեպտեմբերի 22	(69)	64. Արտիկոն ընդդեմ Իտալիայի 1980թ. մայիսի 13	(71), (76)
48. Օջալանն ընդդեմ Թուրքիայի 2003թ. մարտի 12	(69), (70)	65. Բարբերան, Մեսսեզը և Յաբարդոն ընդդեմ Իսպանիայի 1988թ. դեկտեմբերի 6	(73)
49. Գարսիա Ալվան ընդդեմ Գերմանիայի 2001թ. փետրվարի 13	(69)	66. Սանդերն ընդդեմ Միացյալ Թագավորության 2000.թ. մայիսի 9	(76)
50. Լիեթգով ընդդեմ Գերմանիայի		67. Ֆինդլեյն ընդդեմ Միացյալ Թագավորության 1997թ. փետրվարի 25	(76)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

- | | |
|--|---|
| 1. ՍԳՌ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7 (1), (5), (11), (27) | 4. ՍԳՌ-921, 2010 թվականի հոկտեմբերի 19 (39), (40) |
| 2. ՍԳՌ-871, 2010 թվականի մարտի 30 (1), (5) | 5. ՍԳՌ-930, 2010 թվականի դեկտեմբերի 21 (63) |
| 3. ՍԳՌ-872, 2010 թվականի ապրիլի 2 (76) | 6. ՍԳՌ-983, 2011 թվականի հուլիսի 12 (58), (62) |

Աղբյուրների ցանկ թիվ 4
ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր

- | | |
|---|---|
| 1. <i>Ա.Սողոմովյանի</i> վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12-ի որոշում (1), (5), (11), | 11. <i>Ա.Ճուղուրյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. օգոստոսի 30-ի որոշում (9), (56), (78) |
| 2. <i>Վ.Գրիգորյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշում (2),(49), (71) | 12. <i>Մ.Հովհաննիսյանի</i> վերաբերյալ գործով 2010 թ. փետրվարի 12 որոշում (12), (15), (73) |
| 3. <i>Կ.Հարությունյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. նոյեմբերի 30-ի որոշում (3) | 13. <i>Կ.Հարությունյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. նոյեմբերի 30-ի որոշում (16) |
| 4. <i>Հ.Հաբեշյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. օգոստոսի 30-ի որոշում (3), (18), (29) | 14. <i>Գ.Մաղաթյանի</i> վերաբերյալ գործով 2009 թ. փետրվարի 17 որոշում (16), (19), (34), (42), (72) |
| 5. <i>Ա.Սարգսյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. օգոստոսի 30-ի որոշում (3) | 15. <i>Պ.Բայրամյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. հունիսի 1-ի որոշում (16), (24), (30), (42), (72) |
| 6. <i>Ա.Մինասյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. հոկտեմբերի 26-ի որոշում (3) | 16. <i>Վ.Մնացականյանի</i> վերաբերյալ գործով 2008 թ. մայիսի 23-ի որոշում (18), (30), (35) |
| 7. <i>Դ. Հովհաննիսյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (3), (19), (34), (42), (60), (72) | 17. <i>Ս.Հունիկյանի</i> վերաբերյալ գործով 2008 թ. փետրվարի 29 որոշում (18), (75) |
| 8. <i>Տ.Վահրադյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի որոշում (4) | 18. <i>Թամարա Տեր-Գրիգորյանի</i> վերաբերյալ գործով 2007 թ. հոկտեմբերի 26-ի որոշում (19), (24), (34), (42) |
| 9. <i>Ա.Ավետիսյանի</i> վերաբերյալ գործով 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշում (4), (46), (78) | 19. <i>Գ.Հախնազարյանի</i> վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 29-ի որոշում (21) |
| 10. <i>Հ. Աթոյանի</i> վերաբերյալ գործով 2010 թ. հուլիսի 23-ի որոշում (7), (63) | 20. <i>Հ.Բաղդասարյանի</i> վերաբերյալ գործով 2008 թ. նոյեմբերի 28-ի որոշում (24), (60) |

21. *Ռ.Խատոյանի* վերաբերյալ գործով 2007 թ. մայիսի 4-ի որոշում (24), (72)
22. *Ա.Հայրապետյանի* վերաբերյալ գործով 2010 թ. օգոստոսի 27-ի որոշում (26)
23. *Վ.Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2008 թ. հուլիսի 25-ի որոշում (27)
24. *Հ.Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով 2008թ. փետրվարի 29-ի որոշում (29), (30), (35)
25. *Ս.Նալբանդյանի* վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (33), (76)
26. *Ա.Մերոբյանի* վերաբերյալ գործով 2007 մարտի 30-ի որոշում (33), (76)
27. *Ա.Սահակյանի* վերաբերյալ գործով 2010 թ. օգոստոսի 27-ի որոշում (34)
28. *Մ.Բոլյանի* վերաբերյալ գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշում (41)
29. *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* վերաբերյալ գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշում (41), (53)
30. *Ա.Այվազյանի* վերաբերյալ գործով 2008թ. մայիսի 23-ի որոշում (41)
31. *Ա.Սահակյանի* վերաբերյալ գործով 2010 թ. նոյեմբերի 5-ի որոշում (43)
32. *Ն.Միսակյանի* վերաբերյալ գործով 2009 թ. ապրիլի 10-ի որոշում (45), (71), (77), (78)
33. *Գ.Միքայելյանի* վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (46)
34. *Տ.Քամայանի* վերաբերյալ գործով 2010 թ. մարտի 26-ի որոշում (48)
35. *Ն.Պողոսյանի* վերաբերյալ գործով 2010 թ. մարտի 26-ի որոշում (48)
36. «Նարեկ» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով 2008 թ. նոյեմբերի 28-ի որոշում (49)
37. *Վ.Մանուկյանի* վերաբերյալ գործով 2010 թ. նոյեմբերի 5-ի որոշում (49), (71)
38. *Ա.Ղավալյանի* վերաբերյալ գործով 2008 թ. նոյեմբերի 28-ի որոշում (49)
39. *Ա.Սարգսյանի* վերաբերյալ գործով 2009 թ. սեպտեմբերի 16-ի որոշում (51)
40. *Ա.Հովսեփյանի* վերաբերյալ գործով 2010 թ. մարտի 26-ի որոշում (56)
41. *Ե.Մելքոնյանի* վերաբերյալ գործով 2011թ. մայիսի 11-ի որոշում (65), (66)
42. *Ա.Պապյանի* վերաբերյալ գործով 2010թ. նոյեմբերի 5-ի որոշում (65)
43. *Վ.Գևորգյանի* վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի որոշում (69), (77), (78),
44. *Ա.Սաղաթեյանի* վերաբերյալ գործով 2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (71)
45. *Ա.Բաբայանի և Ա.Թումանյանի* վերաբերյալ գործով 2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (73)
46. *Ա.Արծրունու* վերաբերյալ գործով 2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (79)
47. *Ա.Ղարիբյանի* վերաբերյալ գործով 2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (79)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0008/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախազահությանը՝</i>	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>մասնակցությանը դատավորներ՝</i>	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությանը՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությանը ներկայացուցիչ՝</i>	Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի որոշման դեմ դիմող Արամ Ջավենի Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի վճռաբեկ բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով ավագ քննիչ Վ.Հարությունյանը 2008 թվականի մարտի 25-ին Ա.Սարգսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացրել, որով «Հանրապետություն» կուսակցության նախազահ Արամ Ջավենի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով, 225.1-րդ հոդվածի 1-ին մասով, 300-րդ հոդվածի 1-ին մասով, և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Արամ Սարգսյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով:

Վիճարկելով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը՝ Ա. Սարգսյանի ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանը 2008 թվականի դեկտեմբերի 23-ին հիշյալ որոշումը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով փոխել Ա.Սարգսյանի արդարացման հիմքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և, վերացնելով ՀՀ ՀԶԾ ՀԿԳ ավագ քննիչ Վ.Հարությունյանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ին կայացրած որոշումը, կայացնել նոր որոշում:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա.Նադոյանի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 29-ին որոշում է կայացվել բողոքը մերժելու մասին:

3. 2009 թվականի հունվարի 20-ին Արամ Սարգսյանը և նրա ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանը Ա.Սարգսյանի ազատության և անձնական անձեռնմխելիության, սեփականության, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների խախտման փաստերի ճանաչման և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջների մասին բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ՝

1/ Արամ Սարգսյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը փոփոխելու մասով բողոքը մերժվել է

2/ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա.Նադոյանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 29-ի «Բողոքը մերժելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու մասով բողոքը մերժվել է

3/ քրեական հետապնդման մարմնին Արամ Սարգսյանից գրավոր ներդրություն հայցելուն պարտավորեցնելու մասով բողոքը մերժվել է

4/ պատճառված վնասների հատուցման մասով բողոքը թողնվել է առանց քննության՝ Արամ Սարգսյանին իրավունք վերապահելով հետագայում այն լուծել քաղաքացիական դատավարության կարգով

5/ Արամ Սարգսյանի անձնական անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի, մտքի, խղճի ազատության, արտահայտվելու ազատության, միավորումներ կազմելու ազատության, սեփականության իրավունքների խախտման փաստերը ճանաչելու պահանջների մասով բողոքը թողնվել է առանց քննության:

4. Վերոհիշյալ որոշման բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մարտի 30-ի որոշմամբ Արամ Սարգսյանի և նրա ներկայացուցիչ Արտակ Ջեյնալյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 16-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի որոշման

բողոքարկման արդյունքում Վճռաբեկ դատարանը 2009 թվականի մայիսի 27-ի որոշմամբ Ա.Սարգսյանի և նրա ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

6. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը՝ Ա.Ջեյնալյանը, Ա.Սարգսյանը, Կ.Ռուբինյանը և Մ.Դանիելյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան: ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությամբ» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման 2-րդ կետով գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

7. Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու համար՝ դիմող Ա.Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանը 2010 թվականի մարտի 4-ին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որով խնդրել է հարուցել Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի որոշման վերանայման վարույթ, վերանայել (փոփոխել, բեկանել) այդ որոշումը, վարույթ ընդունել Ա.Սարգսյանի անունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի որոշման դեմ բերված 2009 թվականի ապրիլի 21-ի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 15-օրյա ժամկետ:

8. 2010 թվականի մայիսի 4-ին Արամ Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանը կրկին վճռաբեկ բողոք է բերել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի հունիսի 4-ին կայացրել է նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

9. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. «Զննիչի կողմից Ա.Սարգսյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով բողոքը նույնպես ենթակա է մերժման, քանի որ Ա.Սարգսյանի կողմից քննիչի գրավոր ներողություն չհայցելու գործողությունը չի բողոքարկվել դատախազին» (տե՛ս քրեական գործի նյութեր, էջ 116)

10. Վերաքննիչ բողոքում բողոքաբերները նշել են, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, որպեսզի պահանջը մերժելու «լուծում» գտնի, գրավոր ներողություն չխնդրելու ձևով դրսևորած անգործությունը ներկայացրել է որպես «գործողություն» և կիրառելի է դարձրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը և մերժել է պահանջը:

11. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Ա.Սարգսյանը գործի քննության ընթացքում դատախազին չի բողոքարկել իր՝ վերաքննիչ բողոքում նշված իրավունքների և ազատությունների խախտումների մասին» (տե՛ս քրեական գործի նյութեր, էջ 180):

12. ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

13. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳՈ-871 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները, կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, Արամ Սարգսյանին գրկել են իր սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության իրավունքից: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

14. Բողոք բերած անձը, ի լրումն նախորդ բողոքի, նաև նշել է, որ իր՝ 2010 թվականի մարտի 4-ի վճռաբեկ բողոքը դատարան ներկայացնելուց հետո, մինչ կլուծվեր դրա ընդունելության հարցը, ՀՀ սահմանադրական դատարանը իր դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սույն գործով կիրառված մեկ այլ դրույթ: Խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳ-Ո-871 որոշմանը, որը կայացվել է «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության արդյունքում: Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի իմաստով նոր հանգամանք է:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի որոշման վերանայման վարույթ, վերանայել (փոփոխել, բեկանել)՝ այդ որոշումը, վարույթ ընդունել Ա.Սարգսյանի անունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի որոշման դեմ բերված՝ 2009 թվականի ապրիլի 21-ի վճռաբեկ բողոքը, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի որոշումը և Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի փետրվարի 16-ի որոշումը, հաստատել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա.Նաղդյանի՝ «Բողոքը մերժելու մասին» որոշման անվավեր լինելը, ճանաչել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի և ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից Ա.Սարգսյանի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի, անձնական անձեռնմխելիության իրավունքի, անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի, մտքի, խղճի, արտահայտվելու, միավորումներ կազմելու ազատության, սեփականության իրավունքի խախտման փաստերը, պարտավորեցնել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը փոխել Ա.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը՝ արարքում հանցակազմ չլինելու հիմքով, ինչպես նաև գրավոր ներողություն հայցել Ա.Սարգսյանից:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-844 որոշումը, որով հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կող-

մից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, պարտավորեցնում է արդյոք Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով քրեական հետապնդում դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դիմող Ա.Սարգսյանի և նրա ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանի բողոքը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

18. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերագրել է նաև անգործությանը: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանը, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Այլ կերպ՝ ՍԳՈ-844 որոշման հիման վրա՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի անգործությունը կարող է անմիջականորեն բողոքարկվել դատարան:

19. Ինչպես երևում է գործի նյութերից և բողոքի բովանդակությունից, քրեական հետապնդման մարմնի կողմից գրավոր ներողություն չհայցելը ստորադաս դատարանները դիտել են որպես գործողություն և ոչ թե անգործություն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Բողոքաբերի կարծիքով՝ դատարաններն այն դիտել են գործողություն, որպեսզի կիրառելի լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը, և իրենց բողոքը մերժվի:

20. Քննության առարկա հարցի կապակցությամբ իրենց դիրքորոշումները Սահմանադրական դատարանը և Վճռաբեկ դատարանն արտահայտել են, համապատասխանաբար, 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշմամբ և Ա.Մողրովյանի վերաբերյալ որոշմամբ:

Սահմանադրական դատարանի ՄԳ-Ո-844 որոշման 7-րդ կետի համաձայն՝ «...«Անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, պետք է ընկալվի որպես հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում»:

Ա.Մողրովյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն» (տե՛ս Արևիկ Մողրովյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշման 14-րդ և 15-րդ կետերը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմինը պարտավոր է գրավոր ներողություն հայցել արդարացվածից:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմինը, Ա.Սարգսյանի նկատմամբ դադարեցնելով քրեական հետապնդումը, նրանից գրավոր ներողություն չի հայցել: Այլ կերպ՝ քրեական հետապնդման մարմինն առերևույթ չի կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունը, այսինքն՝ դրսևորել է անգործություն, այլ ոչ թե կատարել է գործողություն:

22. Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Ա.Մողրովյանի վերաբերյալ որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պարտավոր էր դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով քրեական հետապնդում դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ դիմող Ա.Սարգսյանի և նրա ներկայացուցչի բողոքը:

23. Սույն որոշման 16-22-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանն եզրակացնում է, որ Ա.Սարգսյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելը մերժելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 16-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի, Վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի դատական ակտերը նոր հանգամանքի հիմքով պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մա-

րաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

24. Բողոք բերած անձը որպես նոր հանգամանք վկայակոչել են նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳՈ-871 որոշումը: Այդ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Փաստորեն, Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 21-րդ հոդվածին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը: Մինչդեռ սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Սարգսյանի նկատմամբ կայացվել է ոչ թե քրեական գործի վարույթը կարճելու, այլ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Այսինքն, նախաքննության մարմնի կիրառած նորմը Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական չի ճանաչվել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-871 որոշումը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի դատական ակտը վերանայելու հիմք չէ:

23. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 290-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 4261-րդ, 4262-րդ, 4264-րդ, 4267-րդ և 4269-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Քրեական հետապնդման մարմնի կողմից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելը մերժելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 16-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մարտի 30-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱԴԴ/0014/11/09
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան

ԵԱԴԴ/0014/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 22-ի որոշման դեմ Հայարփի Միշայի Աթոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 7-ին Ջավահիր Գավթյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի քննչական բաժին հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը ժամը 18³⁰-ի սահմաններում խանութից, որտեղ ինքն աշխատում է որպես վաճառող, երկու անչափահաս երեխա փորձել են գողանալ մեկ տաբատ և սրբիչ, սակայն ինքը նկատել և խափանել է հանցագործությունը:

2. 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Ջ.Գավթյանի հաղորդման հիման վրա կազմված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում է կայացվել:

3. Վերը նշված որոշումը 2009 թվականի դեկտեմբերի 17-ին անչափահասների մայրը՝ Հայարփի Աթոյանը բողոքարկել է Երևանի Աջափնյակ և Գավթաշեն

վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (Այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով փոփոխել 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և քրեական գործի հարուցումը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2009 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանը մերժել է Հ.Աթոյանի բողոքը:

4. Հ.Աթոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, իսկ Հ.Աթոյանի վերաքննիչ բողոքը՝ մերժել:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 22-ի որոշման դեմ 2010 թվականի մարտի 12-ին Հ.Աթոյանը վճռաբեկ բողոք է բերել:

5. 2010 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 15-օրյա ժամկետ:

Հ.Աթոյանը 2010 թվականի մայիսի 6-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 25-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

6. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ 2009 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Երևանի Բաշինջաղյան 184/1 հասցեում գտնվող հագուստի խանութից Սուսաննա Գրիգորյանը, ծնված 1997 թվականին, փորձել է գաղտնի հափշտակել 15.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ կանացի տաբատ, իսկ վերջինիս եղբայրը՝ անչափահաս Նարեկ Գրիգորյանը, ծնված 2000 թվականին, փորձել է գաղտնի հափշտակել 2.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ սրբիչ, սակայն վերջիններիս կամքից անկախ հանգամանքներում արարքը ավարտին չի հասցվել, քանի որ նրանք բռնվել են խանութի աշխատակիցների կողմից (տե՛ս քրեական գործ, էջ 3):

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 9-րդ կետերի հիման վրա քրեական գործի հարուցումը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ՝ Սուսաննա Անդրանիկի Գրիգորյանի արարքում առկա են

ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գողության համար քրեական պատասխանատվության ենթակա է անձը, ում 14 տարին լրացել է մինչև հանցանք կատարելը, իսկ Ս.Գրիգորյանը ծնվել է 1997 թվականին և գողություն կատարելու պահին եղել է 12 տարեկան, այսինքն՝ տվյալ հանցակազմի սուբյեկտ չի հանդիսացել, իսկ Ն.Գրիգորյանի արարքը թեև ձևականորեն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, սակայն հափշտակված գույքի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, բացի այդ Գ.Գրիգորյանը 9 տարեկան է և նույնպես չի հանդիսանում վերը նշված հանցակազմի սուբյեկտ, Ձևավահիր Դավթյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, էջ 3):

8. Վիճարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշման հիմքերը՝ անչափահասներ Ս.Գրիգորյանի և Ն.Գրիգորյանի օրինական ներկայացուցիչ Հայարվի Աթոյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով փոփոխել 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և քրեական գործի հարուցումը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այսինքն՝ քրեական գործի հարուցումը մերժել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Իր պահանջը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ վերոնշյալ որոշման արդյունքում խախտվել է իր երեխաների՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, քանի որ վերջիններս հաշվառման են վերցվում և նրանց նկատմամբ սահմանվում է հսկողություն (տե՛ս քրեական գործ, էջ 2):

9. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Հ.Աթոյանի կողմից քննիչի որոշման դեմ բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության 185-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ, այն ժամկետանց է, իսկ նրա պահանջը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

Դատարանի դիրքորոշման համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոքը կարող էր ներկայացվել ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված մեկամսյա ժամկետում, այլ նույն օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված ժամկետում, քանի որ 185-րդ հոդվածում ընդհանուր կանոնից նախատեսված է բացառություն, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ իրավական

ակտում հակասություն չի համարվում ընդհանուր նորմից բացառության սահմանումը:

Առաջին ատյանի դատարանը պարզաբանել է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառմամբ քրեական գործի հարուցման մերժումը չի կարող որևէ անբարենպաստ հետևանք առաջացնել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ: Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ և ՀՀ քրեական դատավարության 18-րդ հոդվածների համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով (տե՛ս քրեական գործ, էջ 36):

10. Առաջին ատյանի դատարանում գործը քննվել է անչափահասների և նրանց օրինական ներկայացուցիչ Հ.Աթոյանի բացակայությամբ, թեև առկա է վերջինիս դիմումը՝ դատական նիստին իր և փաստաբանի մասնակցությունը ապահովելու համար գործի քննությունը հետաձգելու մասին (տե՛ս քրեական գործ, էջ 26):

11. Վերաքննիչ դատարան ներկայացված բողոքում Հ.Աթոյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի որոշումը և փոփոխել 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները և քրեական գործի հարուցումը մերժել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, 42-43 էջեր):

12. Վերաքննիչ դատարանը մերժել է Հ.Աթոյանի բողոքը և, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասը, վերահաստատել է Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ Հ.Աթոյանի բողոքը ժամկետանց է, իսկ նրա պահանջը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից (տե՛ս քրեական գործ, էջ 71):

13. Ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանը չեն պարզել վիճարկվող որոշման հետևանքով անչափահաս երեխաների իրավունքների հնարավոր խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

14. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ինչպես Առաջին ատյանի, այնպես

ել Վերաքննիչ դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը և չեն կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

15. Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանի դատական ակտում որևէ կերպ չի հիմնավորվել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքի փոփոխումը ինչու է դուրս մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից: Բացի այդ, բողոքի հեղինակը շարունակել է պնդել, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման արդյունքում խախտվել է իր երեխաների՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով երաշխավորված ազատության և անձեռնմխելիության իրավունքը, քանի որ նշված որոշման հետևանքով իր երեխաները ոստիկանության համապատասխան բաժնում պետք է վերցվեն հաշվառման և վերջիններիս նկատմամբ պետք է սահմանվի հսկողություն:

Բողոքաբերը փաստարկել է, որ իր երեխաների՝ Սուսաննա և Նարեկ Գրիգորյանների արարքներում ոչ թե գողության հանցակազմն է բացակայել, այլ առհասարակ բացակայել է գողության դեպքը: Ուստի քրեական գործի հարուցումը պետք է մերժվեր ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ կետերով, այլ նույն հոդվածի 1-ին կետով («բացակայում է հանցագործության դեպքը»):

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 22-ի որոշումը և փոփոխել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և քրեական գործի հարուցումը մերժել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 9-րդ կետերով քրեական գործով վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող ո՞ր հիմքով է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և արդարացվե՞լ են արդյոք անչափահասներ Սուսաննա և Նարեկ Գրիգորյանները, թե ոչ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա

է կարճման, եթե՝ (2) արարքի մեջ հանցակազմ չկա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ (9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, ...»:

19. Նախորդ կետում մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 9-րդ կետերը, որպես վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքեր, էապես տարբերվում են միմյանցից իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական և բարոյական հետևանքներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը դասվում է քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «արդարացնող» հիմքերի խմբին: Նշված հիմքով գործի վարույթը կարճելիս և քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Այս հիմքերով քրեական հետապնդման դադարեցումը միշտ ենթադրում է մեղադրյալի լիովին արդարացում, այսինքն՝ այս հիմքով արդարացված անձին ոչ ոք իրավունք չունի ներկայացնելու իրավական և (կամ) բարոյական բնույթի որևէ պահանջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետն ընդգրկված է քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «ոչ արդարացնող» հիմքերի շարքում: Նման հիմքերով վարույթի կարճման դեպքում փաստվում է, որ անձի կատարած արարքն իր մեջ պարունակում է հանցակազմի հատկանիշներ, սակայն օրենքով սահմանված պայմանների առկայության պարագայում քննչական մարմինները նրան ազատում են քրեական պատասխանատվությունից:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հիմքը նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքից առանձնացնելը ենթադրում է, որ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ) քրեական գործով վարույթը պետք է կարճվի, և անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, եթե նրա արարքում բացակայում են հանցակազմի տարրը կամ տարրերը: Նշված կանոնից բացառություն է այն դեպքը, երբ հանցակազմի

բացակայությունը պայմանավորված է բացառապես հանցանք կատարած անձի՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելով: Վերջին դեպքում քրեական գործով վարույթը պետք է կարճվի և անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի չ՛քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով՝ առանց վկայակոչելու 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Այլ կերպ՝ եթե հանցագործության կատարման պահին անձը չի հասել չ՛քրեական օրենսգրքով նախատեսված՝ քրեական պատասխանատվության տարիքին, իսկ հանցակազմի մյուս բոլոր տարրերը և հատկանիշներն առկա են, ապա նրա նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի չ՛քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և ոչ թե նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Ջ.Գավթյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ՝ հիմք ընդունելով այն, որ անչափահաս Ս.Գրիգորյանը հանցագործության կատարման պահին եղել է 12 տարեկան, այսինքն՝ տվյալ հանցակազմի սուբյեկտ չի հանդիսացել, իսկ անչափահաս Ն.Գրիգորյանի արարքը թեև ձևականորեն համապատասխանում է չ՛քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, սակայն հափշտակված գույքի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, բացի այդ Գ.Գրիգորյանը 9 տարեկան է և նույնպես չի հանդիսանում վերը նշված հանցակազմի սուբյեկտ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Սույն որոշման 20-րդ կետում առկա իրավական դատողությունների և սույն որոշման 21-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների համադրման և վերլուծության արդյունքում առերևույթ ակնհայտ է դառնում, որ 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ քրեական գործը կարճվել է չ՛քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով (արարքում հանցակազմի բացակայություն), որը, ինչպես նշվեց վերևում, քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «արդարացնող» հիմք է և բացառում է այս հիմքով արդարացված անձի վրա իրավական կամ բարոյական բնույթի որևէ պահանջ դնելը:

Սակայն նույն որոշման մեջ նշվել է, որ անչափահասներ Ս.Գրիգորյանը և Ն.Գրիգորյանը չ՛քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված գողության հանցակազմի սուբյեկտ չեն: Որոշման մեջ առկա այս ձևակերպումը ենթադրում է, որ սույն քրեական գործի հարուցումը մերժելու հիմք է հանդիսացել նաև չ՛քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, որը, ի տարբերություն չ՛քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման

դադարեցման «ոչ արդարացնող» հիմք է և չի բացառում անձի վրա որոշակի իրավական կամ բարոյական բնույթի պարտականություններ դնելը:

Վերոշարադրյալ դատողությունների լույսի ներքո ինչպես բողոքաբերին, այնպես էլ նրա անչափահաս երեխաններին կարող է անհասկանալի մնալ, թե սույն գործով ինչ հիմքով է մերժվել քրեական գործի հարուցումը՝ «արդարացնող», թե «ոչ արդարացնող», որը նրանց համար կարող է անցանկալի հետևանքներ առաջացնել:

23. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անչափահասների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու հիմքի հստակեցումն առաջին հերթին կարևոր է նրանց իրավունքների, մասնավորապես, բողոքաբերի կողմից մատնանշված ազատության և անձեռնմխելիության իրավունքի (ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված) ապահովման նկատառումով: Մինչդեռ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ոչ Առաջին ատյանի դատարանը և ոչ էլ Վերաքննիչ դատարանը չեն պարզել վիճարկվող որոշման հետևանքով անչափահաս երեխաների իրավունքների հնարավոր խախտման փաստի առկայությունը կամ բացակայությունը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը, ներպետական օրենսդրության պահանջներից բացի, հիմնված է «Երեխաների իրավունքների մասին» Նյու Յորքի 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1992թ. հունիսի 1-ին) 3-րդ հոդվածի 1-ին մասի վրա, որի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասը մասնակից պետություններին պարտավորեցնում է երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ, նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկվում են համապատասխան բոլոր օրենսդրական ու վարչական միջոցները:

24. Անդրադառնալով սույն որոշման 10-րդ կետում արձանագրված այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանում գործը քննվել է անչափահասների և նրանց օրինական ներկայացուցիչ Հ.Աթոյանի բացակայությամբ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Կոնվենցիայի նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ունկնդրվել թե անմիջականորեն, թե իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին առյանի դատարանում դատաքննությանն անհրաժեշտ էր ապահովել երեխաների և վերջիններիս ներկայացուցչի մասնակցությունը:

II. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման ժամկետները

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին առյանի և Վերաքննիչ դատարանների եզրահանգումն այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետում, այլ ոչ թե 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասն ամբողջությամբ է, որ՝ «Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

27. Մեջբերված իրավական դրույթերի վերլուծությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանցում առկա է ուղղակի հակասություն. առաջին դրույթը սահմանում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման յոթնօրյա ժամկետ, իսկ երկրորդը՝ մեկամսյա:

28. Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «(...) Միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, (...)»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը գործում է օրենսգրքի սկզբնական խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ին), մինչդեռ 185-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-93-Ն օրենքի խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2007թ. ապրիլի 7-ին):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կոլիզիոն կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ:

29. Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական (...) մարմինները ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ-իրավական ակտը կամ դրա մասը»:

Սույն որոշման 28-րդ կետում շարադրված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կոլիզիոն կանոնից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բողոքարկման մեկամսյա ժամկետը քաղաքացիների համար ավելի նախընտրելի է, քան 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված յոթնօրյա ժամկետը:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի և թե Վերաքննիչ դատարանի որոշումներով Հ.Աթոյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ քննիչի որոշման դեմ բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ և ժամկետանց է (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

31. Սույն որոշման 28-29-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման 30-րդ կետում շարադրված փաստական հանգամանքերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների եզրահանգումն այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետում, իրավաչափ չէ:

III. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակները

32. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքը փոխելու պահանջը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից:

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպե-

րատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...):»:

34. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները նշել են, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքը փոխելը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից (տե՛ս սույն որոշման 9-րդ և 12-րդ կետերը):

35. Սույն որոշման 33-րդ կետում մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատարանն իրավասու չէ փոփոխել նախնական քննության մարմնի որոշումները: Սակայն դրա փոխարեն, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդյունքում դատարանն իրավասու է պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու անձի իրավունքների և ազատությունների խախտումը կամ մերժել ներկայացված բողոքը:

Թեև բողոքաբերը ստորադաս դատարաններին ներկայացրել էր քննիչի որոշման փոփոխման պահանջ, որը բավարարվել չէր կարող, այնուհանդերձ դա Վերաքննիչ դատարանին հիմք չէր տալիս քննարկվող հարցը համարելու դատական վերահսկողության շրջանակից դուրս: Դատական վերահսկողության շրջանակը բնութագրում է դատական վերահսկողության ոլորտը՝ մինչդատական վարույթի այն ակտերը, որոնք ենթակա են դատական վերահսկողության, և ոչ թե բողոքաբերի պահանջը: Եթե բողոքը վերաբերում է դատական վերահսկողության շրջանակի մեջ մտնող որոշմանը, գործողությանը կամ անգործությանը, եթե բողոքարկման իրավական ընթացակարգերը պահպանված են, և եթե դատական վերահսկողություն իրականացնող դատարանը իրավաչափ է համարում բողոքաբերի հիմնավորումները, ապա բողոքը չի կարող մերժվել միայն այն պատճառով, որ բողոքի պահանջը ձևական առումով բավարարել հնարավոր չէ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը մինչդատական

վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակից դուրս չէ:

36. Բնության առարկա հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև դատական վերահսկողության շրջանակի հարցին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կիրառության շրջանակի և, համապատասխանաբար, հետագա դատական վերահսկողության ոլորտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Վ. Գրիգորյանի վերաբերյալ գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: (...)» (տե՛ս Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հուլիսի 25-ի ԵԿԴ/0031/11/08 որոշման 12-րդ կետը):

37. Սույն գործի փաստերից երևում է, որ քննիչի որոշմամբ հաստատված է ճանաչվել Սուսաննա և Նարեկ Գրիգորյանների արարքներում գողության հանցակազմի որոշ տարրերի և հատկանիշների առկայությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Մինչդեռ բողոքաբերը փաստարկում է, որ Սուսաննա և Նարեկ Գրիգորյաններն առհասարակ գողություն չեն կատարել, ոչ էլ դիտավորություն են ունեցել կատարելու գողություն:

38. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության դեպքի բացակայությունն արդարացվածի համար քրեական հետապնդման դադարեցման առավել բարենպաստ հիմք է, քան որևէ այլ հիմք: Ուստի այն դեպքում, երբ վարութային որոշմամբ ճանաչվել է անձի արարքում հանցակազմի բացակայությունը, ապա արդարացվածի օրինական շահերի շրջանակում է պահանջել, որ դրա փոխարեն ճանաչվի հանցագործության դեպքի բացակայությունը:

Այս առումով, դատական վերահսկողություն իրականացնող դատարանը պետք է ուսումնասիրի ինչպես տվյալ որոշումն ընդունած քրեական հետապնդման մարմնի, այնպես էլ բողոքաբերի հիմնավորումները և «ապացույցների գերակշռության» չափանիշով հանգի համապատասխան հետևության:

39. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 17-38-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումները հիմք են Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 22-ի որոշումները բեկանելու համար:

40. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 9-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի վերաբերյալ առկա է օրենքի

միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշման դեմ անչափահասների օրինական ներկայացուցիչ Հայարվի Սիշայի Աթոյանի դիմումը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 22-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ-0138/01/09
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Մ.Միմոնյան,
Ս.Ավետիսյան

ԵԷԴ-0138/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ.ԱԹՈՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դմբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Խաչիկ Հովասափի Ղազարյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության ԶԳՎ Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12135709 քրեական գործը:

2009թ. հոկտեմբերի 24-ին կասկածյալ Խաչիկ Հովասափի Ղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2009թ. հոկտեմբերի 30-ին Խ.Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2009թ. դեկտեմբերի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արագացված դատական քննության կիրառմամբ 2010թ. փետրվարի 16-ի դատավճռով ամբաստանյալ Խաչիկ Ղազարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3/երեք/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Խաչիկ Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 3 /երեք/ տարի ժամկետով:

3. Մեղադրողների վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010թ. ապրիլի 7-ի որոշմամբ պատժի մասով փոփոխել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. փետրվարի 16-ի դատավճիռը: Խաչիկ Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է քերել ամբաստանյալ Խ.Ղազարյանի պաշտպանը:

Վճռաբեկ դատարանը 2010թ. հունիսի 11-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Գործի փաստական հանգամանքները

5. Ամբաստանյալ Խ.Ղազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է հետևյալ արարքի համար. 2009թ. ապրիլ ամսին իր եղբայր Սիբայել Ղազարյանի քենակալ Կարեն Հովսեփյանի խնդրանքով Խ.Ղազարյանը Կ.Հովսեփյանին տվել է 1.120.000 ՀՀ դրամ արժողության կոշիկ արտադրելու համար նախատեսված կաշի: Բանավոր պայմանավորվածության համաձայն՝ Կ.Հովսեփյանը պարտավորվել է նշված կաշվի արժեքը մինչև 2009թ. մայիսի վերջը վճարել Խ.Ղազարյանին, սակայն պայմանավորված ժամկետում վերջինս վճարել է միայն 600.000 ՀՀ դրամ: Մնացած 520.000 ՀՀ դրամը վճարելու համար միջոցներ չունենալով՝ Կ.Հովսեփյանն առաջարկել է Խ.Ղազարյանին վերադարձնել չիրացված կաշվի մնացորդը կամ մաս-մաս տալ դրա արժեքը, սակայն վերջինս մերժել է Կ.Հովսեփյանի այդ առաջարկը:

2009թ. օգոստոսի 4-ին՝ ժամը 14⁰⁰-ի սահմաններում, Երևան քաղաքի Խորենացի փողոցի 112 հասցեում գտնվող կոշիկի արտադրամասում Կ.Հովսեփյանի և

Խ.Ղազարյանի միջև նշված պարտքի շուրջ տեղի ունեցած հերթական խոսակցության ժամանակ վերջինս պահանջել է Կ.Հովսեփյանից պարտք մնացած ողջ գումարը վճարել մինչև 2009թ. օգոստոսի 15-ը, սակայն վերջինս հայտնել է, որ նշված ժամկետում չի կարող վճարել պարտքը: Դրանից Խ.Ղազարյանը վրդովվել է և բռունցքով հարվածել Կ.Հովսեփյանի պարանոցին, տապալել գետնին ու ոտքերով մի քանի անգամ դիտավորությամբ հարվածել է արտադրամասի միջանցքի հատակին ընկած Կ.Հովսեփյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կրծքավանդակի հետին մակերեսի, թիակի, գոտկային շրջանի քերծվածքների ու արյունազեղումների, գոտկային մկանի և աջ երիկամի պատռվածքների ձևով մարմնական վնասվածքներ, որոնք բերել են ներքին արյունահոսության՝ հետորոպայնաձային և ներորոպայնաձային տարածությունների արյունահավաքների առաջացմամբ: Դրա հետևանքով Կ.Հովսեփյանի առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 7-ի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ հոդվածների պահանջները և Խ.Ղազարյանի նկատմամբ նշանակվել է ոչ արդարացի պատիժ, որը չի համապատասխանում ինչպես կատարված հանցանքի ծանրությանը, այնպես էլ այն կատարելու հանգամանքներին, անհրաժեշտ և բավարար չէ նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Մասնավորապես, հաշվի չեն առնվել ամբաստանյալի կողմից հանցանքը կատարելու հանգամանքները և հանցավորի անձնավորությունը:

7. Բողոքում նշվում է, որ ամբաստանյալի կատարած արարքը տուժողի անբարոյական վարքագծի հետևանք է: Վերջինս, բարեկամական կապերի մեջ լինելով ամբաստանյալի հետ և տեղյակ լինելով նրա նյութական և ընտանեկան վիճակին, անբարո կերպով դրժել է միմյանց միջև ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունը և Խ.Ղազարյանին կանգնեցրել անսպասելի փաստի առջև: Գործում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված այնպիսի մեղմացուցիչ հանգամանքներ, ինչպիսիք են Խ.Ղազարյանի՝ նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագրվելը, խնամքին 3 անձ ունենալը, մեկ նորածին երեխայի առկայությունը, ընտանիքի սոցիալապես անապահով լինելը և ընտանիքի միակ կերակրող լինելու փաստը:

Բացի այդ, թե առաջին և թե վերաքննիչ դատարաններում տուժողը խոստովանել է, որ դեպքը հիմնականում տեղի է ունեցել իր մեղքով, որ ինքը ամբաստանյալի նկատմամբ թույլ է տվել անբարո վարքագիծ, և դատարանին հայտնել է, որ ամբաստանյալը հատուցել է իր բուժման բոլոր ծախսերը, ինքը որևէ բողոք չունի և խնդրել է նրա հետ մեղմ վերաբերվել:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը եզրահանգել է, որ ամբաստանյալը գտնվում է ուղղման ճանապարհին, հասարակության համար որևէ վտանգ չի ներկայացնում, հետևաբար նրա նկատմամբ հնարավոր է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները: Ուստի, խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. ապրիլի 7-ի որոշումը և ուժի մեջ թողնել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 16-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանվա՞ծ է արդյոք Խ.Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

10. Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղադրամասերից է, ուստի օրենսդրի կողմից մեծապես կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանումը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Կարեն Հարությունյանի վերաբերյալ գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի ՎԲ-201/07 որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք դրույթներ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածները, հանգել է այն հետևության, որ պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար (տե՛ս նաև Հ.Հաբեշյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի ՎԲ-145/07 որոշումը, Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի ՎԲ-142/07 որոշումը, Ա.Մինասյանի վերաբերյալ գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի ՎԲ-185/07 որոշումը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

Անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-124/07, ԱՎԳ-2/0059/01/08 և այլ որոշումներում, որոնցում հայտնել և վերահաստատել է իրավական դիրքորոշում այն մասին, որ, չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, այնուհանդերձ, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Հովհաննիսյանի վերաբերյալ 2009թ. դեկտեմբերի

18-ի ԵԱԶԴ/0078/01/09 որոշման 18-րդ կետը):

13. Սույն գործի նյութերից երևում է, որ Խ.Ղազարյանը, չհամաձայնվելով տուժող Կարեն Հովսեփյանի՝ պարտքը մաս-մաս վճարելու կամ չիրացված կաշվի մնացորդը վերադարձնելու խնդրանքին, բռունցքով հարվածել է նրա պարանոցին, տապալել գետնին և ոտքերով դիտավորությամբ հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Այն բանից հետո, երբ կոշիկի արտադրամասի աշխատակիցներից մեկը բռնել է ամբաստանյալի թևերից և հետ քաշել, տուժողն օգտվել է առիթից և հեռացել է (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Փաստորեն, Խ.Ղազարյանի հանցավոր գործողությունները դադարեցվել են արտադրամասի աշխատակցի ջանքերով, որպիսի հանգամանքը պատիժ նշանակելիս դատարանի կողմից անտեսվել է:

Ամբաստանյալ Խ.Ղազարյանի կողմից ծանր հանցագործության կատարման՝ վերը նշված հանգամանքները վկայում են նրա անձի՝ հասարակական վտանգավորության բարձր աստիճանի մասին և բացառում են նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

Այս պայմաններում նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագրվելը, խնամքին 3 անձ ունենալը, մեկ նորածին երեխայի առկայությունը, ընտանիքի սոցիալապես անապահով լինելը և վերջինիս՝ ընտանիքի միակ կերակրող լինելու փաստը չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Խ.Ղազարյանի կատարած հանցագործությանը: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և վերջինիս նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 9-13-րդ կետերում առկա հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում ամբաստանյալ Խ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատժատեսակի և պատժաչափի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների հետ և գտնում, որ դրանք համապատասխանում են գործի փաստական հանգամանքներին ու ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատժի արդարացիության պահանջներին:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Խ.Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված է:

15. Անդրադառնալով Խ.Ղազարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը Խ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս որպես նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք համարել է տուժողի վարքագծի հակաբարոյականությունը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝

պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը:

Մեջբերված դրույթի մեկնաբանությունը թույլ է տալիս հետևություն անել, որ տուժողի վարքագծի հակաօրինականությունը չի սահմանափակվում միայն հանցագործության կատարումով: Այն իր մեջ ներառում է նաև այլ գործողություններ, որոնք արգելվում են իրավունքի այլ ճյուղերով, օրինակ, վարչական, աշխատանքային, քաղաքացիաիրավական օրենսդրությամբ: Հակաօրինական վարքագիծը կարող է արտահայտվել ծեծի, խոշտանգման, ծանր վիրավորանքի, մարդկային արժանապատվության նվաստացման ձևով: Այն կարող է դրսևորվել նաև պաշտոնական դիրքը չարաշահելու, շանտաժի և այլ գործողությունների ձևով, որոնք չեն հանդիսանում բռնություն, ծաղրանք, ծանր վիրավորանք, սակայն կրում են հակաօրինական բնույթ:

Ինչ վերաբերում է տուժողի վարքագծի հակաբարոյականությանը, ապա այն գնահատելու համար անհրաժեշտ է ելնել հասարակության մեջ համընդհանուր ճանաչում գտած բարոյական և էթիկական կանոնների դիրքերից, այնպիսի կատեգորիաների մասին պատկերացումներից, ինչպիսիք են արդարությունը, պատիվը, բարին ու չարը և այլն: Հակաբարոյական վարքագծի դրսևորումներից է խաբեությունը, դավաճանությունը, խարդավանքը, պահպանության վատահաված փողերը վատնելը, բամբասանքներ տարածելը, ամուսնական դավաճանությունը և այլն: Սակայն այդպիսի հակաբարոյական վարքագիծը պետք է աչքի ընկնի բավականաչափ ցինիզմով և հանդգնությամբ, որպեսզի հանցավորի մոտ առաջացնի հոգեկան խիստ հուզմունքի վիճակ և դրդի հանցագործություն կատարելու վճռականության:

17. Հանցագործության առիթ հանդիսացող՝ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը հաճախ կապված է հանցավորի անձի աֆեկտի վիճակի հետ: Հոգեկան խիստ հուզմունքի վիճակը կարող է հանկարծակի առաջանալ և հարուցվել տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի կամ ծանր վիրավորանքի հետևանքով: Աֆեկտի վիճակը հնարավոր է, երբ հոգեճնշող իրավիճակն առաջանում է տուժողի կողմից պարբերաբար ծեծի, ծաղրուծանակի, խոշտանգման, մշտական հոգեբանական ճնշման ազդեցության տակ: Այն դեպքում, երբ աֆեկտի վիճակն ընդգրկված է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի դիսպոզիցիայում, այն չի կարող համարվել պատիժը մեղմացնող հանգամանք և ընդհակառակը: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը կարող է չհանգեցնել աֆեկտի վիճակի, բայց և այնպես հանցագործության կատարման առիթ հանդիսանալ: Այսպիսի դեպքերում տուժողի նշված վարքագիծը կարող է համարվել պատիժը մեղմացնող հանգամանք:

18. Ելնելով վերը շարադրվածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերցրած պարտքը խոստացած ժամկետում չվճարելը և այն մաս-մաս վերադարձնելու խոստում տալը չի կարող դիտվել որպես հակաբարոյական վարքագիծ: Ուստի,

սույն գործով դա ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա պատիժը մեղմացնող հանգամանք դիտելու մասին Առաջին աստիճանի դատարանի հետևությունն անհիմն է, չի բխում գործի փաստական տվյալներից: Փաստորեն, Առաջին աստիճանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը որևէ անդրադարձ չի կատարել նշված հարցին:

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ առումով Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, հիմնավորված և համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ, ապա Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, որը թերի է պատճառաբանված: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի 2009 թվականի ապրիլի 7-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Խաչիկ Հովասափի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. ապրիլի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0580/06/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Մ.ԱՌՈՒՄՏԱՄՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունվարի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Աշոտ Գազիկի Առաքելյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2009թ. հոկտեմբերի 28-ին Աշոտ Առաքելյանը ձերբակալվել է:

2009թ. հոկտեմբերի 31-ին որոշում է կայացվել Ա.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 2009թ. հոկտեմբերի 31-ի որոշմամբ բավարարվել է Ա.Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու մասին նախաքննության մարմնի

միջնորդությունը և մերժվել մեղադրյալի նկատմամբ գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

3. Ա.Առաքելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով որպես խափանման միջոց կալանքն ընտրելու և գրավի կիրառումը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 31-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել վերոնշյալ որոշումը:

4. 2009թ. դեկտեմբերի 7-ին Ա.Առաքելյանի պաշտպանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանը 2010թ. հունվարի 11-ի որոշմամբ վերադարձրել է՝ թերությունները վերացնելու համար սահմանելով 15-օրյա ժամկետ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. նոյեմբերի 16-ի որոշման դեմ Ա.Առաքելյանի պաշտպանը 2010թ. հունվարի 25-ին կրկին վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. փետրվարի 25-ի որոշմամբ վերադարձվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ բավարարվել է Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը և մերժվել մեղադրյալի նկատմամբ գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

6. Ա.Առաքելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, ինչպես նաև մեղադրյալի նկատմամբ գրավ կիրառելու մասին պաշտպանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 23-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010թ. հունվարի 19-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել վերոնշյալ որոշումը:

7. 2010թ. փետրվարի 25-ին մեղադրյալ Ա.Առաքելյանի պաշտպանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. հունվարի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. ապրիլի 29-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Գործի փաստական հանգամանքները

8. Ա.Առաքելյանին մեղադրվել է առաջադրվել այն բանի համար, որ նա 2009թ. հոկտեմբերի 28-ին՝ ժամը 24⁰⁰-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագոր-

ծած վիճակում, Երևանի Հյուսիսային պողոտա 1 հասցեում գտնվող «Ատլանտիկ» սրճարանում, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, վիճաբանել է «Ատլանտիկ» ակումբի աշխատակիցների հետ և, ցուցաբերելով բացահայտ անհարգալից վերաբերմունք փողոցում գտնվող քաղաքացիների նկատմամբ, տվել է հայհոյանքներ, այնուհետև, չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ բռուցքներով հարվածել է իր խուլիգանական գործողությունները կանխող՝ ՀՀ ոստիկանության ՊՊՇ գնդի աշխատակից Կարեն Ղազարյանի դեմքին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

9. Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմինը Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ նշել է, որ.

ա) Աշոտ Առաքելյանը հրաժարվել է ցուցմունքներ տալուց,

բ) նրան մեղադրանք է առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով,

գ) նկատի ունենալով, որ Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2009թ. դեկտեմբերի 28-ին, սակայն քրեական գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական գործողություններ, ավարտել նախաքննությունը, կողմերին ծանոթացնել քրեական գործի նյութերին, կազմել մեղադրական եզրակացություն: Մինչդեռ չի վերացել մեղադրյալ Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը, ուստի անհրաժեշտ է նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երկու ամսով:

Քննիչն իր միջնորդությունը հիմնավորող որևէ նյութ գործին չի կցել:

10. Առաջին ատյանի դատարանը գտել է, որ քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Ա.Առաքելյանը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, կատարել է ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 5-10 տարի ազատազրկում և նրան մեղաազրվող հանցագործության ծանրությունը կարող է բավարար լինել նրան ազատությունից զրկելու համար:

Անթույլատրելի ճանաչելով կալանքից գրավով ազատելը՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ Ա.Առաքելյանը կատարել է ծանր հանցագործություն և հավանական է, որ ազատության մեջ մնալով, նա կխոչընդոտի գործով ճշմարտության բացահայտմանը:

Մինչդեռ Ա.Առաքելյանին մեղաազրված արարքներից ոչ մեկը ծանր հանցագործություն չէ:

11. Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ առկա է հիմնավոր կասկած

այն մասին, որ մեղադրյալ Ա.Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող հանցավոր արարքներ, որոնցից ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսվող ազատազրկման ձևով նշանակվող պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավել է, նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների ծավալը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Ա.Առաքելյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը, թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, հետևաբար նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայելու հիմքեր չկան:

Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ վերը նշված հանգամանքների առկայության պայմաններում մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի համարվել չի կարող, այսինքն՝ գրավի կիրառումը մերժվել է այն նույն հիմքով, որով հիմնավորվել է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոք բերած անձը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, ՀՀ Սահմանադրության 3-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 143-րդ և 285-րդ հոդվածների պահանջները:

13. Ի հիմնավորումն վերոգրյալ փաստարկների, բողոքաբերը նշում է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որի համաձայն՝ քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ պետք է շարադրի այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը: Քննիչն իր միջնորդությունը հիմնավորող որևէ նյութ չի կցել գործին, իսկ դատարանները, հիմնվելով նախաքննության մարմնի սուբյեկտիվ կարծիքի վրա, այն բավարարել են:

Քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու որոշման մեջ նշել է, որ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար անհրաժեշտ է կատարել մի շարք քննչա-

կան գործողություններ, ավարտել նախաքննությունը, կողմերին ծանոթացնել քրեական գործի նյութերին, կազմել մեղադրական եզրակացություն, մինչդեռ չի վերացել մեղադրյալ Աշոտ Առաքելյանին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը, որի համար անհրաժեշտ է նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երկու ամսով: Անհիմն է որոշման այն փաստարկը, թե գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման, նախաքննության ավարտման և մեղադրական եզրակացության կազմման համար անհրաժեշտ է երկու ամիս ժամկետ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դա քննիչի պարտականություն է և ոչ թե մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմք:

Բացի այդ, քննիչն իր որոշման մեջ չի նշել որևէ հիմք, թե Ա.Առաքելյանը, ազատության մեջ գտնվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված ինչ անօրինական գործողություններ կարող է կատարել և ինչպես կարող է խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը:

Չնայած դրան՝ դատարանները, հիմնվելով նախաքննության մարմնի սուբյեկտիվ կարծիքի վրա, քննիչի միջնորդությունը բավարարել են:

14. Ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները, դուրս գալով քննիչի միջնորդության շրջանակներից, իրենք են շարադրել շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է Ա.Առաքելյանին կալանավորելու անհրաժեշտությունը:

Այսպես, Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը բավարարելու հիմք է համարել այն, որ մեղադրյալը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, կատարել է ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 5-10 տարի ազատազրկում: Մինչդեռ ցուցմունք տալուց հրաժարվելը մեղադրյալի իրավունքն է, իսկ նրան մեղսագրվող արարքը միջին ծանրության հանցագործություն է: Իր հերթին Վերաքննիչ դատարանը, անտեսելով Առաջին ատյանի դատարանի թույլ տված խախտումները, կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող այլ փաստարկներ է նշել:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ մեղադրյալ Ա.Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող հանցավոր արարքներ, որոնցից ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսվող ազատազրկման ձևով նշանակվող պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավել է, նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների ծավալը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը, թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, հետևաբար առաջին ատյանի դատարանի դատական ակտը, որով արդեն իսկ երկարացվել է Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը, վերանայելու հիմքեր չկան:

Բողոք բերած անձը նշել է որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների որոշումները չեն համապատասխանում նմանատիպ գործերով Եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներին: Դրանք հակասում են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի ԱՎԳ/0022/06/08 որոշմանը:

15. Բողոքաբերը նաև գտնում է, որ դատարանները կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումներ կայացնելիս անհիմն մերժել են Ա.Առաքելյանի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշում է, որ գրավը կալանքի այլընտրանքային խափանման միջոց է, և կալանքը հիմնավորող հիմքերի պատճառաբանությամբ չի կարող կալանքից գրավով ազատել մերժվել կամ ճանաչվել անթույլատրելի: Բացի այդ, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները մերժելիս դատարանների կողմից չի նշվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում սպառիչ թվարկված որևէ հիմք, որն իրավունք կտար Ա.Առաքելյանին գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի:

16. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. հունվարի 19-ի որոշումն ամբողջովին բեկանել և փոփոխել՝ վերացնելով կալանքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշումը և լռություն պահպանելու նրա իրավունքը

17. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատարանի կողմից կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման հիմքում մեղադրյալի՝ ցուցմունքներ տալուց հրաժարվելը (լռություն պահպանելը) դնելը:

18. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Անձը, որին քրեական վարույթն իրականացնող մարմնին առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր տրամադրելուց»:

Մեղադրյալի իրավունքներն ու պարտականություններն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, իսկ նույն հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց:

Վկայակոչված և մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ լռություն պահպանելու մեղադրյալի իրավունքը ամրագրված և երաշխավորված է ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

19. Խափանման միջոց կիրառելու հիմքերն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը մեղադրյալի ցուցմունքներ տալուց հրաժարվելը, լռություն պահպանելու նրա իրավունքը որպես մեղադրյալի ազատության սահմանափակման հիմք չի նախատեսում:

Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ա.Առաքելյանի նկատմամբ անբարենպաստ հետևանքը բխեցրել է այն փաստից, որ նա հրաժարվել է ցուցմունք տալուց (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից նշված՝ ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող հիմնավորել Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը: Կալանավորման կիրառման հիմքերի էության և նպատակային նշանակության ոչ ճիշտ ընկալումը հանգեցրել է այն բանին, որ ըստ էության տարբերություն չի դրվել մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և նրա պաշտպանության իրավունքի միջև: Մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար:

20. Իր դեմ ցուցմունք չտալու մեղադրյալի իրավունքի բովանդակությունն առաջին հերթին կազմում է լռություն պահպանելու իրավունքը:

Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ քրեական գործով արդարացի դատական քննության իրավունքը ներառում է «յուրաքանչյուր անձի, ում առաջադրվել է քրեական մեղադրանք, իրավունքը (...), պահպանելու լռություն և չտալու իր մեղքը հաստատող ցուցմունքներ»:

Նշված գործով Եվրոպական դատարանը լռություն պահպանելու, իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտումը համարել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (տե՛ս *Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի* (Funke v. France) գործով Պալատի 1993թ. փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 10828/84, կետ 44):

Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ «լռություն պահպանելու իրավունքը և դրա բաղկացուցիչ մասը՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածում հստակ հիշատակված չեն, սակայն դրանք հանրաճանաչ միջազգային նորմեր են, որոնք ըն-

կած են արդարացի դատաքննության հասկացության հիմքում, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում: Դրանց իմաստը, *inter alia*, իշխանությունների ոչ պատշաճ հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին (...): Մասնավորապես այդ իրավունքը նպաստում է, որ մեղադրանքը չհիմնվի այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կամքին հակառակ՝ հարկադրանքի կամ ճնշման միջոցով: Այս իմաստով նշված իրավունքը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում» (տե՛ս Saunders v. the United Kingdom, գանգատ թիվ 19187/91, Մեծ Պալատի 1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռը, կետ 68):

21. Վերը շարադրվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ստյանի դատարանը, Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքում դնելով նաև նրա՝ լռություն պահպանելու իրավունքը, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 20-րդ, 65-րդ, 135-րդ հոդվածների, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետի պահանջների խախտում:

II. Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշումը և նրա անմեղության կանխավարկածը

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը հետևյալն է. խախտվե՞լ է արդյոք Ա.Առաքելյանի անմեղության կանխավարկածը, երբ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտում հաստատված է համարվել, որ նա կատարել է հանցագործություն:

23. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

24. Անմեղության կանխավարկածի լույսի ներքո որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Տ. Վահրադյանի* վերաբերյալ գործով որոշմամբ: Համաձայն այդ որոշման.

«(...) [Մինչդատական վարույթի նկատմամբ] դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերում անձի մեղավորության հարցերի քննարկ[ումը] (...) սահմանադրական և քրեադատավարական կարևորագույն սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտում է» (տե՛ս *Տ. Վահրադյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի ԼԳ/0197/06/08 որոշման 41-րդ կետը):

25. Սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, համապատասխանաբար, Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումները, *inter alia*, հիմնավորել են այն հանգամանքով, որ Ա.Առաքելյանը «կատարել է հանցանք...» (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը): Այդպիսով, փաստացի քննարկման առարկա է դարձվել իրեն վերագրվող արարքներում Ա.Առաքելյանի մեղավորության հարցը և հաստատված է համարվել նրա մեղավորությունը:

26. Սույն որոշման 25-րդ կետում նշված փաստի նկատմամբ կիրառելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված իրավական նորմերը և 24-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Առաքելյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա մեղավորությունը հաստատված համարելը նրա անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի խախտում է:

III. Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ստորադաս դատարանների որոշումների հիմնավորվածության չափանիշը

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ հարցը հետևյալն է. Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները համապատասխանո՞ւմ են, արդյոք, դրա համար անհրաժեշտ հիմնավորվածության չափանիշին:

28. Կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման որոշման հիմնավորվածության չափանիշի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը սահմանված է *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման համապատասխան հատվածի.

«(...) [Խ]ափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը

պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակագրվի:

(...) Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա» (տես *Ասլան Ավետիսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 19-20-րդ կետերը):

29. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Առաքելյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանները բավարարվել են միայն օրենքով նախատեսված կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումների շարադրանքով, և իրենց որոշումները չեն պատճառաբանել փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններով:

30. Հետևաբար՝ մեղադրյալ Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

IV. Կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը բացառապես նրան մեղսագրվող հանցագործության ծանրությամբ և քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորելու իրավաչափությունը

31. Մույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված չորրորդ հարցը հետևյալն է. ստորադաս դատարաններն իրավասու⁶ էին արդյոք Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումները հիմնավորել բացառապես նրան մեղսագրվող հանցագործության ծանրությամբ և քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ:

32. Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ գործով վերը նշված որոշման մեջ: Համաձայն այդ որոշման համապատասխան հատվածների.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալան-

քը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

(...) [Մ]եղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի գործում առկա մնացած, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում: Այդ առումով կարող է քննության առկա դառնալ նաև դեռևս չկատարված քննչական գործողությունների բնույթը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը» (տե՛ս *Ասլան Ավետիսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշման 24-րդ և 26-րդ կետերը):

Ա.Ավետիսյանի վերաբերյալ գործով նշված հետևությունների Վճռաբեկ դատարանը հանգել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի վերլուծության և կիրառման արդյունքում (տե՛ս *Ասլան Ավետիսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշման 25-րդ կետը):

33. Սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 32-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Առաքելյանի կալանքի ժամկետը երկարացնելիս ստորադաս դատարանները պարտավոր էին բավարար փաստերի ներքո հիմնավորված ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքի առկայությունը: Բացի այդ, բավարար չափով պետք է հիմնավորվեր տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո հիմնավորեր նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

34. Այս չափորոշիչներով գնահատելով Ա.Առաքելյանի կալանքի ժամկետի տևողությունը երկարացնելու գործընթացը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն

չի համապատասխանել անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքին վերաբերող ինչպես երկրի ներքին օրենսդրության, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի հիմնարար պահանջներին:

V. Կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը և գրավի կիրառման անթույլատրելիությունը

35. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ա.Առաքելյանին կալանքից գրավով ազատելը մերժելու և այն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները:

36. Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է վերը նշված *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ, որտեղ սահմանվել է, որ «անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (...)» (տե՛ս *Սսյան Ավետիսյանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, 34-րդ կետ):

37. Ինչպես երևում է Ա.Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 23-ի որոշումից՝ նրան գրավով կալանքից ազատելը ճանաչվել է անթույլատրելի, քանի որ կատարել է ծանր հանցագործություն և «հավանական է, որ նա ազատության մեջ մնալով՝ կխոչընդոտի գործով ճշմարտության բացահայտմանը» (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Սինչդեռ Ա.Առաքելյանին մեղսագրված արարքներից ոչ մեկը ծանր հանցագործություն չէ, իսկ ինչ վերաբերում է գործով ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելուն, ապա այն սույն գործով առկա որևէ փաստական տվյալի վրա հիմնված չէ:

Վերաքննիչ դատարանի 2010թ. հունվարի 19-ի որոշումից երևում է, որ գրավի կիրառումը մերժվել է նույն հիմքով, որով հիմնավորվել է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը, ընդ որում, գրավի կիրառումը մերժելու պատճառաբանությունը հիմնված չէ գործով առկա փաստական տվյալների վրա:

Հետևաբար, Ա.Առաքելյանին կալանքից գրավով ազատելը մերժելու և այն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

VI. Սույն որոշման իրավական արժեքը

38. Սույն որոշման 17-րդ-37-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտը բեկանելու համար:

Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր, դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը, ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

Բացի այդ, գործի նյութերից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2010 թվականի մարտի 23-ին կայացվել է դատավճիռ, որով Ա.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա վերջնական դատապարտվել տուգանքի 30.000 ՀՀ դրամի չափով և ազատազրկման 9 ամիս ժամկետով: Պատիժը կրելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Ա.Առաքելյանին անազատության մեջ պահելու ողջ ժամանակահատվածը:

Այսպիսով, Ա.Առաքելյանի նկատմամբ քրեական վարույթի ողջ համատեքստում չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

39. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել:

40. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

41. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ Աշոտ Գագիկի Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և նրան կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունվարի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Առաքելյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/ 0007/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախազահուրյամբ՝</i>	Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ներկայացուցիչ՝</i>	Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ Կարապետ Ռուբենի Ռուբինյանի ներկայացուցիչների վճռաբեկ բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. 2008 թվականի մարտի 5-ին Կարապետ Ռուբինյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ և 300-րդ հոդվածի 1-ին մասերով:

3. 2008 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Կարապետ Ռուբինյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով:

4. Վիճարկելով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը՝ Կ.Ռուբինյա-

նր 2008 թվականի դեկտեմբերի 18-ին հիշյալ որոշումը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով վերացնել վերը նշված որոշումը և պարտավորեցնել դադարեցնելու իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանը 2008 դեկտեմբերի 22-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

5. 2009 թվականի հունվարի 18-ին Կ.Ռուբինյանը և նրա ներկայացուցիչը ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումն անվավեր ճանաչելու, Կ.Ռուբինյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը փոփոխելու, քրեական հետապնդման մարմնի կողմից Կ.Ռուբինյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու, Կարապետ Ռուբինյանի անձնական անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի, մտքի, խղճի, արտահայտվելու, միավորումներ կազմելու ազատության, սեփականության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի խախտման փաստերը ճանաչելու և Կ.Ռուբինյանին պատճառված վնասների հատուցման պահանջների մասին բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մարտի 9-ի որոշմամբ՝

1/ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի բողոքը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կ.Ռուբինյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը փոփոխելու, քրեական հետապնդման մարմնի կողմից Կ.Ռուբինյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասերով բողոքը մերժվել է,

2/ Կ.Ռուբինյանին պատճառված վնասների հատուցման մասով բողոքը թողնվել է առանց քննության՝ նրան իրավունք վերապահելով հետագայում այն լուծել քաղաքացիական դատավարության կարգով,

3/ Կարապետ Ռուբինյանի անձնական անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի, մտքի, խղճի, արտահայտվելու, միավորումներ կազմելու ազատության, սեփականության, արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջների մասով թողնվել է առանց քննության:

6. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 9-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել Կ.Ռուբինյանը և նրա ներկայացուցիչը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ Կարապետ Ռուբինյանի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 9-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ Կ.Ռ-ուրբինյանը և նրա ներկայացուցիչը վճռաբեկ բողոք են բերել, որը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ վերադարձվել է:

8. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը՝ քաղաքացիներ Ա.Սարգսյանը, Կ.Ռ-ուրբինյանը, Մ.Գ-անիելյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան: ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳ-Ռ-844 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման 2-րդ կետով գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

9. Ելնելով այն բանից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4264-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳ-Ռ-844 որոշումը հիմք է ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու համար՝ Կ.Ռ-ուրբինյանի ներկայացուցիչները վճռաբեկ բողոք են բերել:

Վճռաբեկ դատարանն իր 2010 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 15-օրյա ժամկետ:

2010 թվականի մայիսի 4-ին Կ.Ռ-ուրբինյանի ներկայացուցիչները կրկին վճռաբեկ բողոք են բերել:

10. Մինչ այդ, վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը՝ քաղաքացիներ Ա.Սարգսյանը և Կ.Ռ-ուրբինյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան: ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի մարտի 30-ի ՍԳ-Ռ-871 որոշման 1-ին կետով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի մարտի 30-ի ՍԳՈ-871 որոշման 2-րդ կետով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի հունիսի 4-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

11. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է «Քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից Կ.Ռ-ուրբիյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով բողոքը նույնպես ենթակա է մերժման, քանի որ Կ.Ռ-ուրբիյանի կողմից քրեական հետապնդում իրականացնող մարմնի ներողություն չհայցելու գործողությունը չի բողոքարկվել դատախազին» (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, էջ 112):

12 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը գրավոր ներողություն խնդրելու ձևով դրսևորած անգործությունը ներկայացրել է որպես գործողություն (տե՛ս գործի նյութեր, հատոր 1, էջ 112, էջ):

13. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Կ.Ռ-ուրբիյանը գործի քննության ընթացքում դատախազին չի բողոքարկել իր՝ վերաքննիչ բողոքում նշված իրավունքների և ազատությունների խախտումների մասին» (տե՛ս գործի նյութեր, հատոր 2, էջ 111):

Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

14. Ելնելով այն բանից, որ դատարանները, կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՈ-844 որոշմամբ, խախտել են Կարապետ Ռ-ուրբիյանի դատական պաշտպանության և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները, բողոք բերած անձինք խնդրել են՝

1/ հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման վարույթ,

2/ վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը,

3/ վարույթ ընդունել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ Կարապետ Ռ-ուրբիյանի անունից 2009 թվականի հունիսի 1-ին ներկայացված վճռաբեկ բողոքը,

4/ բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհա-

նուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 9-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշումները,

5/ հաստատել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի բողոքը մերժելու մասին որոշման անվավեր լինելը,

6/ ճանաչել՝

ա) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների կողմից Կ.Ռուբինյանի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման փաստերը,

բ) Կարապետ Ռուբինյանի անձնական անձեռնմխելիության իրավունքի, անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի, մտքի, խղճի, արտահայտվելու, միավորումներ կազմելու ազատության, սեփականության իրավունքի խախտման փաստերը,

գ) փոխել Կարապետ Ռուբինյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքը,

դ) գրավոր ներողություն հայցել Կարապետ Ռուբինյանից:

15. Բողոք բերած անձինք, ի լրումն նախորդ բողոքի, նաև նշել են, որ իրենց՝ 2010 թվականի մարտի 4-ի վճռաբեկ բողոքը դատարան ներկայացնելուց հետո, մինչ կլուծվեր դրա ընդունելության հարցը, ՀՀ սահմանադրական դատարանն Ա.Սարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել Կ.Ռուբինյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով կիրառված մեկ այլ դրույթ: Խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳՌ-871 որոշմանը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Բողոք բերած անձինք նշել են, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի իմաստով նոր հանգամանք է:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՌ-844 որոշումը, որով հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կող-

մից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերազրվող բովանդակության մասով, պարտավորեցնում է արդյոք Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դիմող Կ.Ռուբինյանի ներկայացուցիչների բողոքը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

18. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳՌ-844 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերազրել է նաև անգործությանը: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերազրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Այլ կերպ՝ ՍԳՌ-844 որոշման հիման վրա՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի անգործությունը կարող է անմիջականորեն բողոքարկվել դատարան:

19. Ինչպես երևում է գործի նյութերից և բողոքների բովանդակությունից, քրեական հետապնդման մարմնի կողմից գրավոր ներողություն չհայցելը ստորադաս դատարանները դիտել են որպես գործողություն և ոչ թե անգործություն (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Բողոքաբերների կարծիքով՝ դատարաններն այն դիտել են գործողություն, որպեսզի կիրառելի լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը և իրենց բողոքը մերժվի:

20. Քննության առարկա հարցի կապակցությամբ իրենց դիրքորոշումները Սահմանադրական դատարանը և Վճռաբեկ դատարանն արտահայտել են, համա-

պատասխանաբար, 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԳ-Ո-844 որոշմամբ և *Ա.Մողրովյանի* վերաբերյալ որոշմամբ:

Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԳ-Ո-844 որոշման 7-րդ կետի համաձայն՝ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, պետք է ընկալվի որպես հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում»:

Ա.Մողրովյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ (...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն (տե՛ս Արևիկ Մողրովյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշման 14-րդ և 15-րդ կետերը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմինը պարտավոր է գրավոր ներողություն հայցել արդարացվածից:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական հետապնդման մարմինը, Կ.Ռ-ուբինյանի նկատմամբ դադարեցնելով քրեական հետապնդումը, նրանից գրավոր ներողություն չի հայցել: Այլ կերպ՝ քրեական հետապնդման մարմինը, չկատարելով օրենքով իր վրա դրված պարտականությունը, դրսևորել է անգործություն:

22. Ելնելով վերոգրյալներից, ինչպես նաև հիմք ընդունելով *Ա.Մողրովյանի* վերաբերյալ որոշման մեջ շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պարտավոր է դատական վերահսկողության կարգով ըստ էության քննության առնել գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դիմող Կ.Ռ-ուբինյանի ներկայացուցիչների բողոքը:

23. Սույն որոշման 14-20-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է. Կ.Ռ-ուբինյանից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելը մերժելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 9-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի, ՀՀ վճռաբեկ դատա-

րանի 2009 թվականի հուլիսի 3-ի դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

24. Բողոք բերած անձինք որպես նոր հանգամանք վկայակոչել են նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԳ-Ո-871 որոշումը: Այդ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Փաստորեն, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 21-րդ հոդվածին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «... իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը: Գործի նյութերից երևում է, որ Կ.Ուրբինյանի նկատմամբ կայացվել է ոչ թե քրեական գործի վարույթը կարճելու, այլ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը): Այսինքն, նախաքննության մարմնի կիրառած նորմը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական չի ճանաչվել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի դատական ակտը վերանայելու հիմք չէ:

25. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 290-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426¹-րդ, 426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Քրեական հետապնդման մարմնի կողմից գրավոր ներողություն հայցելուն պարտավորեցնելը մերժելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 9-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի, ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 3-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԱԲԿ/0128/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան,
Մ.Արղամանյան

ԵԱԲԿ/0128/01/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Հարություն Արշավիրի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Հակոբյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործերը հարուցվել են 2009թ. հունիսի 3-ին և հուլիսի 7-ին:

Նախաքննության մարմնի 2009թ. հունիսի 26-ի որոշմամբ Հ.Հակոբյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2009թ. օգոստոսի 28-ին Հ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

2009թ. սեպտեմբերի 7-ին Հ.Հակոբյանին նախկինում առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. 2009թ. սեպտեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 2009թ. նոյեմբերի 18-ի դատավճռով Հ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նա դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, Հ.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Հակոբյանի պաշտպանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 18-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Հակոբյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը:

2010թ. մայիսի 20-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Հարություն Արշավիրի Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ նա 2009թ. ապրիլի 23-ից հունիսի 22-ն ընկած ժամանակահատվածում, գործով չպարզված հանգամանքներում, ապօրինի ձեռք է բերել ու իր բնակության վայրում՝ Երևան քաղաքի Կ.Ուլենցու փողոցի 1-ին փակուղու 3-րդ շենքի թիվ 12 բնակարանում պահել է հրազեն հանդիսացող, ինք-

նաշեն, թմբուկավոր ատրճանակ և ռազմամթերք հանդիսացող, 24 հատ 5.6 մմ տրամաչափի օղակավոր բոցավառվող փամփուշտներ: Բացի այդ, նա առանց իրացնելու նպատակի, 2009թ. ապրիլի 23-ից հունիսի 22-ն ընկած ժամանակահատվածում, ապօրինի ձեռք է բերել ու նույն բնակարանում պահել թմբամիջոց հանդիսացող, առանձնապես խոշոր չափերի՝ 0.0336 գրամ քաշով ֆենտանիլ պարունակող, «Durogesic 50 g/suur, plaisters voor transdermaal gebruik, 8,4 mg fentanyl per pleister voor transdermaal gebruik van 21 cm2» դեղամիջոցի (մեկ տուփի մեջ 4 հատ) կաշուն ժապավեն, որոնք 2009թ. հունիսի 22-ին կատարված խուզարկության ընթացքում հայտնաբերվել և առգրավվել են վերը նշված բնակարանում:

6. 2009թ. հունիսի 22-ին ամբաստանյալ Հ.Հակոբյանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրության մեջ քննիչի կողմից մանրամասն նկարագրվել են հայտնաբերված հրազենի և փամփուշտների անհատական հատկանիշներն ու առանձնահատկությունները, բացի այդ էլ դրանք ճանաչվել են Հ.Հակոբյանի կողմից (տե՛ս քրեական գործի 1-ին հատոր, 11-12 էջեր):

7. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության ունկնդրմամբ պարզ է դառնում, որ սույն գործով 2009թ. հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ դատարանը որոշել է հետաձգել վկա Հասմիկ Գևորգյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների հրապարակումն ու այլևս չի անդրադարձել այդ հարցին (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործի 2-րդ հատոր, էջ 38):

8. Առաջին ատյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 18-ին կայացված դատավճռի՝ «Ապացույցների հետազոտում» բաժնում, որպես ամբաստանյալ Հ.Հակոբյանի կողմից նրան մեղսագրվող արարքի կատարումը հիմնավորող ապացույց, դատարանը նշել է նաև վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները: Այնուհետև դատարանը համադրել է վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները և գտել է, որ արժանահավատ պետք է համարել վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները:

9. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրությունից հետևում է, որ դատարանն ընդհանրապես իրեղեն ապացույցների զննություն չի իրականացրել (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործի 2-րդ հատոր, էջ 38):

10. Առաջին ատյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 18-ին կայացված դատավճռի՝ «Ապացույցների հետազոտում» բաժնում՝ որպես ամբաստանյալ Հ.Հակոբյանի կողմից նրան մեղսագրվող արարքի կատարումը հիմնավորող ապացույց, Առաջին ատյանի դատարանը նշել է նախաքննության մարմնի կողմից իրեղեն ապացույց ճանաչված՝ հրազեն հանդիսացող թմբուկավոր ատրճանակն ու ռազմամթերք հանդիսացող 5.6 մմ տրամաչափի 24 հատ փամփուշտները:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

11. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, այն կայացնելիս թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

12. Բողոք բերած անձի պնդմամբ, իր պաշտպանյալի նկատմամբ կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի և 268-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, որոնք տվյալ գործով կիրառման ենթակա չէին:

13. Անդրադառնալով դատավարական իրավունքի խախտումներին՝ բողոք բերած անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պետք է հաստատված համարեր, որ հնարավոր չէ հերքել ամբաստանյալի պատճառաբանություններն այն մասին, որ գործում առկա առարկաներն իրենց բնակարանից առգրավված առարկաները չեն և որ խուզարկությամբ հայտնաբերված առարկաները չեն փաթեթավորվել ու չեն կնքվել: Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշում է, որ խուզարկություն և առգրավում կատարելու կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 8-րդ մասը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ «Իատարանն առարկային իրեղեն ապացույցի նշանակություն է տալիս միայն այն դեպքում, եթե դրա մանրամասն նկարագրությամբ, կնքելով և այն ձեռք բերելուց անմիջապես հետո կատարված այլ մանրամասն գործողություններով բացառվել է առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը (...):»:

Վերը նշվածից բացի, բողոք բերած անձը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը չի հրապարակել և չի հետազոտել վկա Հասմիկ Գևորգյանի նախաքննական ցուցմունքները, ինչպես նաև չի հետազոտել իրեղեն ապացույց ճանաչված ատրճանակն ու փամփուշտները, հետևաբար վերջիններս չէին կարող դրվել դատավճռի հիմքում:

14. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

15. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերի բարձրացրած հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես, սույն որոշման 12-րդ կետում բարձրացված հարցը վերաբերում է Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իրավաչափությանը, այսինքն, այս հիմքով բողոքը վերաբերում է նյութական իրավունքի խախտմանը: Իսկ սույն որոշման 13-րդ կետում

բարձրացված հարցերը վերաբերում են Հ.Հակոբյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցների հետազոտմանը, այսինքն՝ փաստարկվում է դատավարական իրավունքի խախտման առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից վկայակոչված նյութական և դատավարական իրավունքի խախտումները փոխկապակցված են. նյութական իրավունքի ենթադրյալ խախտումը կարող է հետևանք լինել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի և Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել ստորադաս դատարանների կողմից գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտման հարցը:

I. Երևան քաղաքի Արաբկիր և Բանաբեռ-Ջեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմնավորվածությունը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանն իրավասու՞ էր արդյոք դատավճռի հիմքում դնել վկայի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև նախնական քննության մարմնի կողմից իրեղեն ապացույց ճանաչված ատրճանակն ու փամփուշտները, եթե դրանք չեն հետազոտվել դատաքննության ժամանակ:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

18. ՀՀ Սահմանադրության իմաստով «հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի (...) քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «արդարացի (...) դատաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ դատավարության յուրաքանչյուր մասնակից պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ դատավարական հակառակորդի ներկայացրած ցանկացած ապացույցի և, դատարանի դիրքորոշման վրա ազդելու ակնկալիքով, իր վերաբերմունքը հայտնել դրա առնչությամբ: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքից (տե՛ս *Lobo Machado v. Portugal*) գործով Պալատի 1996թ. փետրվարի

20-ի վճիռը, գանգատ թիվ 15764/89, կետ 31, *Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի (K.S. v. Finland)* գործով Մեծ Պալատի 2001թ. մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 29346/95, կետ 21, *Վալստոնն ընդդեմ Նորվեգիայի (Walston (no. 1) v. Norway)* գործով Պալատի 2003թ. հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 37372/97, կետ 56):

ՀՀ Սահմանադրության իմաստով «իր գործի հրապարակային քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «հրապարակային դատաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ, որպես կանոն, ապացույցների հետազոտումը պետք է իրականացվի հրապարակային դատաքննության պայմաններում: Դա ապահովում է արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վերահսկողությունը, ինչը կարևոր հանրային արժեք է: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքից (տե՛ս *Աքսենն ընդդեմ Գերմանիայի (Axen v. Germany)* գործով Պալատի 1983թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 8273/78, կետ 25, *Դիեննե ընդդեմ Ֆրանսիայի (Diennet v. France)* գործով Պալատի 1995թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 18160/91, կետ 33, *Հումատովն ընդդեմ Ադրբեյջանի (Hummatov v. Azerbaijan)* գործով Պալատի 2007թ. նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 9852/03 և 13413/04, կետ 140):

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հետաձգել է վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների հրապարակումն ու այլևս չի անդրադարձել այդ հարցին, սակայն, 2009թ. նոյեմբերի 18-ին կայացված մեղադրական դատավճռի հիմքում՝ որպես ամբաստանյալ Հ.Հակոբյանին մեղաազրվող արարքի կատարումը հիմնավորող ապացույց նշել է նաև վկա Հ.Գևորգյանի նախաքննական ցուցմունքները: Այնուհետև դատարանը համադրել է վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները և գտել է, որ արժանահավատ պետք է համարել վկա Հ.Գևորգյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանն ընդհանրապես իրեղեն ապացույցների զննություն չի իրականացրել, սակայն, 2009թ. նոյեմբերի 18-ին կայացված մեղադրական դատավճռի հիմքում, որպես ամբաստանյալ Հ.Հակոբյանին մեղաազրվող արարքի կատարումը հիմնավորող ապացույց, դատարանը նշել է նախաքննության մարմնի կողմից իրեղեն ապացույց ճանաչված ատրճանակն ու 5.6 մմ տրամաչափի 24 հատ փամփուշտները (տե՛ս սույն որոշման 9-րդ և 10-րդ կետերը):

20. Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնց վերաբերյալ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել արտահայտելու իր դիրքորոշումը և որոնք հրապարակային դատաքննության ժամանակ չեն հետազոտվել:

21. Համաձայն ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված արգելքը վերաբերում է նաև արդար դատաքննության չափանիշների խախտմամբ օգտագործվող ապացույցներին, քանի որ նման ապացույցների օգտագործումը բացառելու սահմանադրական իմաստը լիովին համարժեք է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը բացառելու Սահմանադրական իմաստին:

22. Նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 19-րդ կետում նշված ապացույցներն օգտագործելով՝ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասը:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝ դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, (...)»:

Շարադրված դրույթի վերլուծությունից հետևում է, որ դատարանի դատավճիռը չի կարող հիմնավորված համարվել, եթե դրա նկարագրական-պատճառաբանական մասում բովանդակվող հետևությունները էապես հիմնված են դատաքննության ժամանակ չհետազոտված ապացույցների վրա:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները էապես հիմնված են սույն որոշման 19-րդ կետում նշված ապացույցների վրա, որոնք դատաքննության ժամանակ չեն հետազոտվել:

25. Սույն որոշման 19-րդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 18-րդ և 20-24-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր իր դատական ակտի հիմքում դնել վկայի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև նախնական քննության մարմնի կողմից իրեղեն ապացույց ճանաչված՝ հրազեն հանդիսացող թմբուկավոր ատրճանակն ու ռազմամթերք հանդիսացող 5.6 մմ տրամաչափի 24 հատ փամփուշտները, քանի որ դրանք չէին հետազոտվել դատաքննության ժամանակ: Նշված փաստական տվյալները մեղադրական դատավճռի հիմքում դնելով՝ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը և 22-րդ հոդվածի 2-րդ մասը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով կայացրել է չհիմնավորված դատավճիռ, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թողնվել է օրինական ուժի մեջ:

II. Խուզարկության արդյունքում հայտնաբերված առարկաների վերցման դատավարական կարգը պահպանված լինելը

26. Վճռաքեկ դատարանը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե սույն գործով իրականացված խուզարկության ժամանակ պահպանվե՞լ է արդյոք վերջինիս արդյունքում հայտնաբերված առարկաների վերցման դատավարական կարգը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առարկան իրեղեն ապացույց է ճանաչվում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանն առարկային իրեղեն ապացույցի նշանակություն է տալիս միայն այն դեպքում, եթե դրա մանրամասն նկարագրությամբ, կնքելով և այն ձեռք բերելուց անմիջապես հետո կատարված այլ մանրամասն գործողություններով բացառվել է առարկան փոխելու, առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը (...):»:

Խուզարկություն և առգրավում կատարելու կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը ներկայացվում են քննչական գործողության մասնակիցներին, մանրամասն նկարագրվում են արձանագրության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կնքվում քննիչի կողմից»:

28. Վկայակոչված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են առարկան իրեղեն ապացույց ճանաչելու իրավասություն ունեցող սուբյեկտներին և ճանաչման ընթացակարգը, իսկ 228-րդ հոդվածի 8-րդ մասը՝ այդ առարկայի ձեռքբերմանն ուղղված քննչական գործողությունների կատարման կարգը: Վերջինիս իմաստով, խուզարկության կամ առգրավման արդյունքում առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը համարվում է օրենքով սահմանված կարգի պահպանմամբ իրականացված եթե՝

ա) վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը ներկայացվել են քննչական գործողության մասնակիցներին,

բ) վերցված բոլոր առարկաները և փաստաթղթերը մանրամասն նկարագրվել են արձանագրության մեջ:

Ինչ վերաբերում է վերցված առարկաների և փաստաթղթերի կնքմանը, ապա հոդվածի վերլուծությունից երևում է, որ դա իրականացվում է միայն անհրաժեշտության դեպքում: Այսինքն, ՀՀ քրեադատավարական օրենքը, կիրառելով «անհրաժեշտության դեպքում» արտահայտությունը, առգրավված կամ խուզարկության արդյունքում հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի կնքման իմպերատիվ պահանջ չի նախատեսել: Կնքման անհրաժեշտության առկայության կամ բացակայության հարցը յուրաքանչյուր դեպքում որոշում է քննիչը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, հայտնաբերված առարկայի առանձնահատկություններից, ՀՀ քրեական դատավարության օրենսդրության սկզբունքներից և ապացուցումը սահմանող օրենսդրական պահանջներից:

29. Շարադրված վերլուծության լուսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ վկայակոչված հոդվածի իմաստով կնքման պահանջը վերաբերելի է այն դեպքերին, երբ գործի կոնկրետ հանգամանքների և հայտնաբերված առարկայի առանձնահատկությունների գնահատմամբ կողմնակի դիտորդին ակնհայտ է, որ խուզարկության կամ առգրավման արդյունքում վերցվող առարկայի կնքումը անհրաժեշտ է դրա նույնականությունը ողջամտորեն հիմնավորելու համար:

30. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանն ընդհանրապես իրեղեն ապացույցների գնություն չի իրականացրել (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չպարզաբանված է մնացել այն հարցը, թե սույն գործի նախաքննության ընթացքում իրականացված խուզարկության ժամանակ հայտնաբերված առարկաների վերջման ժամանակ դրանց կնքումն արդյո՞ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով անհրաժեշտ է եղել: Այդ հարցը ենթակա է պարզաբանման իրեղեն ապացույցների անմիջական հետազոտման պարագայում՝ սույն որոշման 24-26-րդ կետերում առկա իրավական դիրքորոշման հիման վրա:

31. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ առկա հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտեր կայացնելիս ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են սույն գործով դատական ակտերը բեկանելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ վերաքննիչ դատարանի կարգավիճակը բավարար չէ սույն գործով արձանագրված դատական սխալը ուղղելու համար, ուստի անհրաժեշտ է գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 228-րդ հոդվածի 8-րդ մասի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

32. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ առկա հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհնար է դատողություն անել Հ.Հակոբյանի նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութական իրավունքի խախտման հարցին, որը կապված է Հ.Հակոբյանի արարքի որակման հետ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճուարեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հարություն Արշավիրի Հակոբյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 18-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԱԲԿ/0001/11/10 որոշում
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան

ԵԱԲԿ/0001/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՕՀԱՆՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010թ. փետրվարի 24-ի որոշման դեմ դիմող
Ալբերտ Օհանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 4-ին Ալբերտ Օհանյանը դիմում է ներկայացրել
ՀՀ գլխավոր դատախազին՝ հայտնելով, որ 1995 թվականի օգոստոսի 29-ին քաղա-
քացի Արմենակ Ավետիսյանին տրվել է կեղծ տեղեկանք այն մասին, որ իբր նա
բնակվում է Բաֆֆու փողոցի 7-րդ տանը և այնտեղ ուրիշ անձինք գրանցված չեն և
չեն բնակվում, այնինչ, տեղեկանքը տալու պահին Ա.Ավետիսյանը մահացած է եղել,
իսկ Բաֆֆու փողոցի 7-րդ տանը գրանցված են ինքը՝ Ա.Օհանյանը և իր ամբողջ ըն-
տանիքը: Հիշյալ կեղծ տեղեկանքը ներկայացվել է այն ժամանակվա ինվենտարի-
զացիոն բյուրո, ինչի հիման վրա Ա.Ավետիսյանի դուստրը՝ ՀՀ գլխավորական դա-

տախազության դատախազ Գայանե Ավետիսյանը տիրացել է Բա.Ֆ.Ֆու փողոցի 7-րդ տանը, որի մի մասը պատկանել է իրենց:

2. 2009 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված վերոնշյալ դիմումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին՝ քննության առնելու համար:

ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Ռ.Ղարիբյանի 2009թ. դեկտեմբերի 15-ի որոշմամբ Ա.Օհանյանի դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

3. 2010 թվականի հունվարի 15-ին Ա.Օհանյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա վերացնել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Ռ.Ղարիբյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2009 թվականի դեկտեմբերի 15-ի երկու որոշումները, պարտավորեցնել հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հատկանիշներով: Իր պահանջը բողոքաբերը պատճառաբանել է նրանով, որ հետաքննիչի որոշումները օրինական և հիմնավորված չեն, քանի որ հետաքննությունը կատարվել է թերի, չի նշանակել փորձաքննություն՝ պարզելու թիվ 15 համարի կնիքը կեղծ է, թե՛ ոչ, չի հարցաքննվել տեղեկանք տված թաղային լիազորը՝ պարզելու համար հետևյալը՝ ա) ինչու տեղեկանքում չի գրված թաղային լիազորի ազգանունը, բ) ստորագրությունը թաղային լիազորինն է, թե՛ ոչ, գ) ինչու է թաղային լիազորը նման տեղեկանք տվել այն դեպքում, երբ այդ հասցեում ինքը և իր ընտանիքը գրանցված են և բնակվում են 1974 թվականից:

Դատական միտի ժամանակ դիմող Ա.Օհանյանը և նրա ներկայացուցիչ Լ.Բաղդասարյանը ներկայացրել են լրացուցիչ հիմնավորումներ՝ մասնավորապես նշելով, որ չնայած այն հանգամանքին, որ հետաքննիչն իր որոշման մեջ նշել է, որ կադաստրից ստացված տեղեկանքի բնօրինակի վրա պարզ երևում է, որ տեղեկանքը տրվել է ոչ թե 1995, այլ 1990 թվականին, այնուամենայնիվ տեղեկանքի վրա նշված տարեթիվը, ըստ իրենց, կարդացվում է «1995 թվական»: Ա.Օհանյանը նշել է նաև, որ հետաքննիչի երկրորդ որոշումն իրեն է հանձնվել 2009 թվականի դեկտեմբերի 29-ին:

ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ս.Սարգսարյանը և հետաքննության բաժանմունքի տեսուչ Ռ.Ղարիբյանը Առաջին ատյանի դատարանին խնդրել են մերժել բողոքը՝ նշելով, որ Ա.Օհանյանի դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերով երկու որոշում չի կայացվել, պարզապես որոշման պարբերություններից մեկը չի տպվել տպագրական խոտանի պատճառով:

4. Առաջին ատյանի դատարանը 2010թ. փետրվարի 1-ի որոշմամբ Ա.Օհանյանի բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ այն բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված յոթօրյա ժամկետի խախտումով:

Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ հայտնած հետևությունը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է ընդհանուր նորմ, որն անձին տալիս է որոշումը յոթօրյա ժամկետում բողոքարկելու իրավունք՝ չմատնանշելով այն մարմինը, որին պետք է բողոքը ներկայացվի: Իսկ նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում համապատասխանաբար սահմանված են վերադաս դատախազի և դատարանի գործողությունները քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացնելու դեպքում: Նշված նորմերի վերլուծությունը դատարանին հիմք է տալիս գալու այն հետևության, որ քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը բողոքարկելու յոթօրյա ժամկետը կիրառելի է թե վերադաս դատախազին, թե դատարանին բողոք ներկայացնելու դեպքերում»:

5. Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Օհանյանը՝ նշելով, որ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը, ինքը բողոք է ներկայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա՝ նույն ամսաթվով հետաքննության մարմնի կայացրած երկու անօրինական և անհիմն որոշումների դեմ: Բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանում ծանոթանալով դատարան ներկայացված նյութերին՝ համոզվել է, որ իրականում նույն ամսաթվով երկու որոշում է կայացվել, այլ ոչ թե տպագրական խոտանն է պատճառը, որ իրեն երկու որոշում է տրվել, ինչպես դատարանում պնդել է հետաքննիչը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը Վերաքննիչ դատարանին խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի որոշումը և ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքին պարտավորեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցել:

6. Վերաքննիչ դատարանը 2010թ. փետրվարի 24-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու մասին: Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում դատարանը նշել է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը Ա.Օհանյանը չի բողոքարկել դատախազին, «հետևաբար նրա կողմից չի պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգը», իսկ առաջին ատյանի դատարանի որոշումը բխում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներից և այն բեկանելու հիմքեր չկան:

7. Վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ա.Օհանյանը:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ներկայացված բողոքը չի բովանդակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին

մասի որևէ կետի հիմնավորում, 2010թ. ապրիլի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է թերությունները վերացնելու համար՝ սահմանելով հնգօրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից:

Ա.Օհանյանը վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելուց հետո 2010թ. ապրիլի 26-ին կրկին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

2010թ. մայիսի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

8. Վերաքննիչ դատարանի 2010թ. փետրվարի 24-ի որոշման ուսումնասիրությունից ակնհայտ է հետևյալը.

ա) Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ա.Օհանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման է ենթարկվում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 2-ի որոշումը:

Մինչդեռ Ա.Օհանյանը բողոքարկել է իր վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի որոշումը:

բ) Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ, 290-րդ, 393-394-րդ հոդվածներով, որոշել է «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. հունվարի 26-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ, Արթուր Հայրապետյանի վերաքննիչ բողոքը մերժել»:

Այսինքն՝ Ա.Օհանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի որոշման եզրափակիչ մասը որևէ առնչություն չունի դիմող Ա.Օհանյանի և նրա կողմից բողոքարկված դատական ակտի հետ:

9. 2010թ. մարտի 29-ին Վճռաբեկ դատարանի գրասենյակ է մուտքագրվել «Անհատակությունը լուծելու մասին» Վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 23-ի որոշումը, ըստ որի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածով, որոշել է՝ «Անհատակությունը լուծել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 24-ի որոշման եզրափակիչ /որոշեց/ մասն ընթերցել՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010թ.

փետրվարի 01-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ, Ալբերտ Օհանյանի վերաքննիչ բողոքը մերժել»:

10. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Ռ.Ղարիբյանի կողմից 2009թ. դեկտեմբերի 15-ի ամսաթվով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին տարբեր բովանդակության երկու որոշում. մեկը՝ հանցակազմի բացակայության, իսկ մյուսը՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Ընդ որում՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի կազմած նյութերում ընդհանրապես բացակայում է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, իսկ դատարանում ստացված նյութերում առկա հիշյալ որոշման պատճենները ներկայացվել են դիմող Ա.Օհանյանի կողմից և հանդիսանում են նրան ուղարկված որոշման պատճենները:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

11. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ իր վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատական ակտն անօրինական է և չհիմնավորված, դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում՝ սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշում է, որ հետաքննության մարմինը նույն ամսաթվով երկու որոշում է կայացրել, որոնցից մեկում նշված է, որ քրեական գործի հարուցումը ենթակա է մերժման հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ մյուսում նշված է, որ բացակայում է հանցագործության դեպքը: Վերոնշյալ որոշումների դեմ ինքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջներից բխող բողոք է ներկայացրել դատարան, իսկ դատարանը ոչ իրավացիորեն մերժել է իր բողոքը՝ հղում անելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի վրա:

12. Բողոքի հեղինակը նշում է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասում նշված փաստական հանգամանքները իր հետ ոչ մի կապ չունեն:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի և Վերաքննիչ դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ, որով հետաքննության մարմինը կպարտավորեցվի նյութերով քրեական գործ հարուցել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի կիրառելիությունը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը մինչև իր կողմից կայացված

դատական ակտն ուժի մեջ մտնելն իրավասու^o էր արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի հիման վրա կայացնել անհատակությունը լուծելու մասին որոշում:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից մեկամսյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի համաձայն՝ դատավճիռ կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհատակությունները, մասնավորապես՝ հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ. լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել կամ լուծված է եղել ոչ հստակ. մեկնաբանել իր որոշումների անհատակությունները:

16. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Սույն որոշման 15-րդ կետում շարադրված իրավական դրույթների տառացի մեկնաբանությունից երևում է, որ դատարանը կարող է անհատակությունը լուծելու մասին որոշում կայացնել միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) եթե տվյալ դատավճիռը կամ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ և գտնվում է ի կատար ածման փուլում, և

բ) անհատակությունը պայմանավորված է ոչ հստակ որոշված պատժի չափի հետ կամ ոչ հստակ լուծված կամ ընդհանրապես չլուծված խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցերի հետ կամ դատական ակտի անհատակությունների մեկնաբանման հետ:

Այսինքն, օրենսդիրը հստակ սահմանել է այն պայմաններն ու հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանը լիազորված է կայացնելու անհատակությունը լուծելու մասին որոշում:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն անհատակությունը լուծելու մասին որոշում է կայացրել այն ժամանակ, երբ իր կողմից 2010թ. փետրվարի 24-ին կայացրած որոշումը դեռևս օրինական ուժի մեջ

չէր մտել, քանզի բողոքաբերի կողմից 2010թ. մարտի 17-ին այդ որոշման դեմ արդեն վճռաբեկ բողոք էր բերվել, ինչը կասեցրել էր վերաքննիչ դատարանի դատական ակտի ուժի մեջ մտնելու գործընթացը: Բացի այդ, վերաքննիչ դատարանն այդ որոշումը կայացրել է այնպիսի հիմքով, որը նշված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի որևէ կետով:

18. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ գանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան (տե՛ս Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով 2006 թվականի հուլիսի 20-ի ՄԻԵԴ վճիռը, գանգատներ թիվ 29458/04 և 29465/04):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

19. Սույն որոշման 17-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 16-րդ կետում սահմանված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը մինչև իր կողմից կայացված դատական ակտն ուժի մեջ մտնելն իրավունք չունեի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի հիման վրա կայացնել անհստակությունը լուծելու մասին որոշում: Վերոնշյալ որոշումը կայացնելով՝ Վերաքննիչ դատարանը չի գործել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

II. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների կիրառելիությունը

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրա-

վական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների եզրահանգումն այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետում, այլ ոչ թե 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի որոշմամբ Ա.Օհանյանի բողոքը մերժվել է՝ այն օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Դիմող Ա.Օհանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով առաջին ատյանի դատարանի որոշումը՝ վերաքննիչ դատարանն իր 2010թ. փետրվարի 24-ի որոշմամբ դատարան ներկայացված բողոքը մերժել է՝ նշելով, որ Ա.Օհանյանի կողմից «չի պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգը» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

23. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների միջև առկա է ուղղակի հակասություն. առաջին դրույթը սահմանում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման յոթնօրյա ժամկետ, իսկ երկրորդը՝ մեկամսյա:

Նշված հակասության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել Հ.Աթոյանի բողոքի կապակցությամբ կայացված որոշման մեջ և սահմանել, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը գործում է օրենսգրքի սկզբնական խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ին), մինչդեռ 185-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-93-Ն օրենքի խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2007թ. ապրիլի 7-ին): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կոլիզիոն կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ»:

Վերը շարադրված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը բխում է

նան «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կոլիզիոն կանոնից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բողոքարկման մեկամսյա ժամկետը քաղաքացիների համար ավելի նախընտրելի է, քան 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված յոթնօրյա ժամկետը»: (տե՛ս Հայաստանի Աթոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ԵԱԴԴ/0014/11/09 որոշման 28-29-րդ կետերը):

24. Սույն որոշման 23-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները (սահմանվել են Հ.Աթոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշմամբ) կիրառելով սույն որոշման 22-րդ կետում շարադրված փաստական հանգամանքերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների եզրահանգումն այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետում, իրավաչափ չէ:

25. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել և գնահատական չի տվել Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին, այլ նշել է բողոքը մերժելու նոր հիմք՝ որոշումը դատախազին բողոքարկված չլինելը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը, տալով օրենքի կամայական մեկնաբանություն, գտել է որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը պահանջում է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը նախ բողոքարկել դատախազին, ապա դատարան: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը նման պահանջ չի բովանդակում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշման մեջ նշել է, որ Ա.Օհանյանը չի պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերը: Մինչդեռ խնդրո առարկա ընթացակարգերը սահմանված են ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 14-25-րդ կետերի հիմնավորումները և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 290-րդ և 430-րդ

հողվածների միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Ալբերտ Օհանյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
գործ թիվ ԵՇԴ/0115/01/09
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Մ.Սիմոնյան,
Ս.Ավետիսյան

ԵՇԴ/0115/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Զ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
2010թ. փետրվարի 24-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Սամվել Վոլոդյայի
Գաբրիելյանի և նրա պաշտպան Զոյա Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. հուլիսի 28-ին:
2. Նախաքննության մարմնի 2009թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ Սամվել
Գաբրիելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել
ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա
2009թ. մարտի 4-ին Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի թաղային

լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանից ստանալով իր բնակության վայրի վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկանք, 2009թ. ապրիլի 11-ին այն ներկայացրել է Երևանի «Կենտրոն» նոտարական գրասենյակ, որի հիման վրա ստացել է միանձնյա ժառանգության իրավունքի վկայական՝ այդ եղանակով օգտագործելով կեղծ փաստաթուղթը:

3. 2009թ. հոկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռով Սամվել Գաբրիելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով արդարացվել է:

4. Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազներ Ժ.Սահակյանը և Մ.Շահգալդյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատավճռով մեղադրողների վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 22-ի արդարացման դատավճիռը բեկանվել է, Ս.Գաբրիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ 400.000 ՀՀ դրամի չափով: Կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշումը և Ս.Գաբրիելյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը և նրա պաշտպան Ջ.Հակոբյանը:

2010թ. ապրիլի 22-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով («վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ, գործով մեղադրող Ժ.Սահակյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որում արտահայտելով իր դիրքորոշումը գործով կայացված դատական ակտերի և բերված բողոքի վերաբերյալ՝ մեղադրողը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավճիռը թողնել անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ մերժել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

6. Նախաքննության մարմինը քրեական գործով ձեռք բերված ապացույցներով հաստատված է համարել հետևյալը

Սամվել Վոլոդյայի Գաբրիելյանը և գործով վկա Սմբատ Վոլոդյայի Գաբրիելյանը հանդիսանում են հարազատ եղբայրներ: Սամվել Գաբրիելյանը, 1988 թվականին ամուսնանալով Աննա Եփրեմյանի հետ, բնակվել է Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 տանը՝ ծնողների ու եղբոր հետ: Նույն հասցեում բնակվել է նաև նրանց հորեղբայրը՝ Հրանտ Արամի Տիգրանյանն իր ընտանքով: 1995 թվականից Սամվել Գաբրիելյանը բնակվել է աներոջ կողմից գնված Երևան քաղաքի Սվաճյան փողոցի 20 շենքի թիվ 9 բնակարանում: Եղբայրների փոխհարաբերությունները եղել են լարված, ինչը վերջիններիս ծնողների մահվանից հետո (Վոլոդյա Գաբրիելյանի՝ 1995 թվականին և Մաթիկ Մարութանյանի՝ 1998 թվականին) ավելի է սրվել՝ կապված Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում գտնվող գույքի և կենցաղային հարցերի հետ:

Նախաքննության մարմինը հաստատված է համարել նաև, որ Սամվել Գաբրիելյանը, որոշելով «տունը սեփականաշնորհել և ըստ օրենքի դառնալ դրա ժառանգ», Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանի անվամբ կազմել է տեղեկանք այն մասին, որ իբր ծնողների մահից հետո մինչ այդ տեղեկանքը տալու պահը (2009թ. մարտի 4-ը) բնակվել է Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 տանը, և այն ներկայացրել է Ա.Ժամխարյանի հաստատմանը: Վերջինս, լինելով նորանշանակ և սպասարկելով 2000 բնակչի, չի տիրապետել բնակիչների շարժին: Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Սամվել Գաբրիելյանը հաշվառված է այդ տանը, պահանջել է, որ տեղեկանքի իսկությունը այլ մարդիկ հաստատեն, որից հետո նոր ինքը կվավերացնի այն: 2009թ. մարտի 4-ին Սամվել Գաբրիելյանը Ա.Ժամխարյանի մոտ է հրավիրել Հ.Տիգրանյանին, որը ցանկանալով աջակցել եղբոր որդուն տան սեփականաշնորհման վկայական ունենալու հարցում, կեղծ հայտարարություն է տվել՝ հաստատելով տեղեկանքի իսկությունը: Ա.Ժամխարյանը վստահելով՝ ստորագրել և կնիքել է ներկայացված տեղեկանքը: Սամվել Գաբրիելյանը ստանալով իր բնակության վայրի մասին ակնհայտ կեղծ փաստաթուղթ՝ 2009թ. ապրիլի 11-ին այն ներկայացրել է «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարին, և այդ եղանակով օգտագործելով կեղծ փաստաթուղթը, ստացել է միանձնյա ժառանգության վկայական:

7. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռով Սամվել Գաբրիելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով արդարացվել է:

Վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները, առաջին ատյանի դատարանը եկել է եզրահանգման, որ ամբաստանյալին մեղսագրված այն արարքը, որ նա 2009թ. մարտի 4-ին Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանից ստացել է իր բնակության վայրի վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկանք և այն օգտագործել է 2009թ. ապրիլի 11-ին՝ ներկայացնելով Երևանի «Կենտրոն» նոտարական տարածքի գրասենյակ, որի հիման վրա ստացել է միանձնյա ժառանգության իրավունքի վկայական, իրականությանը չի համա-

պատասխանում, քանի որ այդ տեղեկանքում նշված հանգամանքը, որ Սամվել Գաբրիելյանը «բնակվում է Երևանի Ղարիբջանյան փողոցի 50 տանը և կատարում է բոլոր կոմունալ վճարումները», չի կարող կեղծ դիտվել այն հիմքով, որ դրանում նշված տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Առաջին ատյանի դատարանը նշել է նաև, որ Սամվել Գաբրիելյանը ստացել է ոչ թե միանձնյա ժառանգության իրավունքի վկայական, ինչպես նշված է նրան առաջադրված մեղադրանքում, այլ տան 1/2-րդ մասի նկատմամբ, իսկ մյուս 1/2-րդ մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայական է տրվել նրա հորեղբայր Հրանտ Տիգրանյանին:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ նախաքննական մարմինը Սամվել Գաբրիելյանի արարքին տվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, և վերջինիս վերաբերյալ կայացված արդարացման դատավճիռը պետք է բեկանել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նշել է, որ դատավճռում շարադրված դատարանի պատճառաբանությունները չեն կարող սույն քրեական գործի շրջանակներում բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալ Սամվել Գաբրիելյանի նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հանգել է այն հետևության, որ գործի փաստական հանգամանքների մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված հետևությունները չեն համապատասխանում ինչպես քրեական գործով ձեռք բերված ապացույցներին, այնպես էլ գործի փաստական հանգամանքներին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ քրեական գործով վկաների՝ «ինչպես նախաքննական, այնպես էլ դատաքննության ընթացքում տված ցուցմունքներով հիմնավորվել է, որ թիվ 16 տեղամասային թաղային լիազոր Ա.Ժամխարյանի կողմից 2009թ. մարտի 4-ին տրված տեղեկանքը, ըստ որի Սաթիկ Գրիգորի Սարուխանյանի 30.11.1998թ. մահվանից հետո մինչև օրս Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 տանը բնակվում է Վլոդյա Արամի Գաբրիելյանի որդի Սամվել Վլոդյայի Գաբրիելյանը, չի համապատասխանում իրականությանը, այսինքն՝ հիշյալ հասցեի տանը ամբաստանյալ Սամվել Գաբրիելյանի կողմից 1998 թվականից մինչև 2009թ. մարտի 4-ը բնակվելու փաստը և տվյալը կեղծ է»:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաստատված է համարել, որ «ամբաստանյալ Սամվել Գաբրիելյանը 04.03.2009թ. Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանից ստացել է իր բնակության վայրի վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկանք և օգտագործել է 11.04.2009թ-ին՝ ներկայացնելով Երևանի «Կենտրոն» նոտարական տարածքի գրասենյակ, որի հիման վրա ստացել է միանձնյա ժառանգության իրավունքի վկայական, այսինքն կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով»:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոքի հեղինակները փաստարկում են, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատավճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով:

10. Բողոքաբերները գտնում են, որ Սամվել Գաբրիելյանը դատապարտվել է մի արարքի համար, որը չի կատարել, նրա գործողություններում հանցակազմը բացակայում է: Ի հիմնավորումն իրենց փաստարկների՝ բողոք բերած անձինք նշում են, որ Սամվել Գաբրիելյանը կեղծ փաստաթուղթ չի օգտագործել, փաստաթուղթ կեղծելու անհրաժեշտություն չի էլ եղել, քանի որ տվյալները, որ Սամվել Գաբրիելյանը բնակվում է Երևանի Ղարիբջանյան փողոցի 50 տանը և կատարում է բոլոր կոմունալ վճարումները, համապատասխանում են իրականությանը:

11. Վճռաբեկ բողոքի հեղինակները գտնում են, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը, ՀՀ Սահմանադրության 19-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածների պահանջները: Ի հիմնավորումն իրենց փաստարկների՝ բողոքաբերները նշում են, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացման դատավճիռը բեկանելու և մեղադրական դատավճիռ կայացնելու հարցում հիմնական դեր են խաղացել Սամվել Գաբրիելյանի եղբոր՝ Սմբատ Գաբրիելյանի շանտաժները և զրպարտանքը, մասնավորապես՝ արդարացման դատավճիռ կայացրած դատարանին կաշառակերության մեջ մեղադրելը, ինչպես նաև սպառնալիքները՝ իր եղբայր Սամվել Գաբրիելյանին չդատապարտելու դեպքում նրա հետ ինքնադատաստան տեսնելու մասին:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակները խնդրում են ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատավճիռը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 22-ի դատավճիռն:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից Սամվել Գաբրիելյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը հիմնվա՞ծ է արդյոք գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջության վրա:

14. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը սահմանում է, որ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն ենթակա է հիմնավորման գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելու, կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելու կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ պատրաստելու կամ իրացնելու, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու համար:

16. Մեջբերված դրույթի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանցագործության առարկան՝ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթը, դրոշմը, կնիքը, ձևաթուղթը, տրանսպորտային միջոցի պետհամարանիշը:

Տվյալ դեպքում որպես պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնիների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և

հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ:

Փաստաթղթերի, դրոշմների և մյուս առարկաների կեղծումը կարող է իրականացվել երկու ձևով՝

1. իրական փաստաթղթերի կամ մյուս առարկաների տեքստի, բովանդակության, դրանցում առկա տեղեկատվության աղավաղումը տարբեր եղանակներով (ջնջում, քերծվածք, լրացում),

2. ամբողջովին կեղծ փաստաթղթի կամ այլ առարկայի պատրաստում:

Օգտագործել կեղծ փաստաթղթեր՝ նշանակում է դրանք շրջանառության մեջ դնել սեփական կարիքների համար՝ դրանց միջոցով իրավունքներ ձեռք բերելու կամ պատասխանատվությունից ազատվելու նպատակով:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է, որ պատրաստում և օգտագործում է կեղծ փաստաթղթեր կամ այլ առարկաներ:

17. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

ա) Գործով իրեղեն ապացույց է ճանաչվել 2009թ. մարտի 4-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանի կողմից Սամվել Գաբրիելյանին տրված տեղեկանքը, որի բովանդակությունը հետևյալն է.

Տրվում է Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 տան բնակիչ Հրանտ Արամի Տիգրանյանին, առ այն, որ Արամ Գաբրիելի Տիգրանյանի 01.02.1956թ. մահվանից, և Շողեր Սումբաթի Տիգրանյանի 30.12.1981թ. մահվանից հետո Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 տանը բնակվել են Արամ Գաբրիելի Տիգրանյանի որդիներ Հրանտ Արամի Տիգրանյանը և Վոլոդյա Արամի Գաբրիելյանը: Վոլոդյա Արամի Գաբրիելյանի 01.05.1995թ. մահվանից և Վոլոդյա Արամի Գաբրիելյանի կնոջ՝ Սաթիկ Գրիգորի Սարուխանյանի 30.11.1998թ. մահվանից հետո մինչ օրս Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 տանը բնակվում են Հրանտ Արամի Տիգրանյանը և Վոլոդյա Արամի Գաբրիելյանի որդին՝ Սամվել Վոլոդյայի Գաբրիելյանը և կատարում են բոլոր կոմունալ վճարումները (տե՛ս քրեական գործի 2-րդ հատորի կազմին ամրացված՝ իրեղեն ապացույց ճանաչված տեղեկանքը պարունակող ծրարը):

բ) Սամվել Գաբրիելյանը ցուցմունք է տվել, որ բնակվել է, և այժմ էլ բնակվում է Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 տանը, ինքը կեղծ տեղեկանք չի օգտագործել, 2009թ. մարտի 4-ին տրված տեղեկանքում նշված տվյալները համապատասխանում են իրականությանը, տեղեկանքն էլ ինքը չի ստորագրել և կնքել, այլ դա արել է պատշաճ անձը՝ Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանը՝ մինչև ստորագրելը ստուգելով և համոզվելով, որ գրվածը համապատասխանում է իրականությանը (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործի 3-րդ հատոր, էջ 91):

գ) Գործում առկա են «Երևան-Ջուր» ՓԲԸ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ Սամվել Գաբրիելյանը հանդիսանում է Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 տան բաժանորդ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 135, 137):

դ) Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի թաղային լիազոր ներկայացուցիչ Գասպարյանի կողմից 2005թ. հուլիսի 13-ին տեղեկանք է տրվել Սամվել Գաբրիելյանին այն մասին, որ նա գրանցված է Երևանի Ղարիբջանյան փողոցի 50 տանը, ուր բնակվում է իր ընտանիքով (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 63):

ե) 2007թ. նոյեմբերի 12-ին Երևանի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի թաղային լիազոր ներկայացուցիչ կողմից ևս մեկ տեղեկանք է տվել Սամվել Գաբրիելյանին առ այն, որ նա 1976 թվականից հաշվառված է և մշտապես բնակվում է Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոցի 50 տանը, ծնողների մահվանից հետո մինչ օրս նա է կատարում իր կողմից անընդմեջ օգտագործվող նշված տան բոլոր կոմունալ վճարումները (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 23):

զ) Գործում առկա են նախաքննության ընթացքում վկաների տված ցուցմունքներն այն մասին, որ վերջին տարիներին Սամվել Գաբրիելյանին օրվա տարբեր ժամերի հաճախ տեսել են Երևանի Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում, սակայն պնդել են, որ նա այդ հասցեում չի բնակվել:

18. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության ունկնդրմամբ պարզ է դառնում հետևյալը.

ա) վկա Օնիկ Մարգարյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ առնվազն վերջին երեք տարիների ընթացքում հաճախ է տեսնում Սամվել Գաբրիելյանին Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում, սակայն չի կարող հաստատապես ասել, նա այդ տանը բնակվել է, թե ոչ: Նախազահող դատավորի այն հարցին, թե այդ դեպքում ինչու՞ է նախաքննության ժամանակ միանշանակ ասել, որ Սամվել Գաբրիելյանը չի բնակվում այդ հասցեում՝ վկա Օ.Մարգարյանը պատասխանել է, որ քննիչն իրեն հարց է տվել, թե ինքը տեսել է արդյո՞ք, որ Սամվել Գաբրիելյանը Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում է քնում-արթնանում, ինքը պատասխանել է, որ ոչ՝ չի տեսել, ինչից հետո քննիչն իրեն ասել է. եթե այդպես է՝ գրի, որ չի ապրում: Վկա Օ.Մարգարյանը հայտնել է նաև, որ Սամվել Գաբրիելյանի տունը կահավորված է և պիտանի է բնակվելու համար:

բ) վկա Գյուլնարա Հարությունյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ վերջին 3-4 տարում՝ համարյա ամեն օր տեսնում է Սամվել Գաբրիելյանին Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում, կարծում է, որ նա այդ հասցեում է բնակվում: Սամվել Գաբրիելյանն է ջուր քաշել, վերանորոգել այդ տունը: Հարցին պատասխանելով՝ վկա Գ.Հարությունյանը ասել է, որ երբ ինքը նախաքննության ժամանակ ասել է, որ Սամվելը չի բնակվում այնտեղ, իրականում բնակվել բառի իմաստը ճիշտ չի ընկալել: Քննիչն իրեն հարցրել է՝ Սամվել Գաբրիելյանն ապրում է այդ տանը, թե

ոչ, քննիչը պահանջել է ասել՝ այո կամ ոչ: Ինքն ասել է, և դատարանում էլ պնդում է, որ Սամվել Գաբրիելյանին հիշյալ հասցեում շատ հաճախ տարբեր ժամերի տեսել է, ընդ որում նաև վաղ առավոտյան և ուշ երեկոյան, սակայն ինքն ինչպես կարող է իմանալ, Սամվել Գաբրիելյանն այդ տանը գիշերը քնում էր, թե ոչ, չէ որ ինքը Սամվել Գաբրիելյանի պահակը չի:

զ) վկա Լիդա Մարտիրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ առնվազն վերջին երեք տարիների ընթացքում ցերեկվա ժամերին հաճախ տեսնում է Սամվել Գաբրիելյանին Ղարիբջանյան փողոցի 50 հասցեում: Հարցին պատասխանելով՝ վկա Լ.Մարտիրոսյանը հայտնել է, որ չի կարող ասել, թե Սամվել Գաբրիելյանը հիշյալ տանն է գիշերում, թե ոչ, քանի որ նրա հետ համատեղ չի բնակվում: Վկա Լ.Մարտիրոսյանը հայտնել է նաև, որ Սամվել Գաբրիելյանի տունը կահավորված է և պիտանի է բնակվելու համար:

դ) վկա Սվետլանա Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ երբ իր երեխաներին դպրոց է տարել կամ խանութ է գնացել, Ղարիբջանյան 50 հասցեում հաճախակի տեսել է Սամվել Գաբրիելյանին, բայց գիտի, որ վերջինս այդ հասցեում չի բնակվում: Հարցին պատասխանելով՝ վկա Ս.Հակոբյանը հայտնել է, որ Ղարիբջանյան 50 տան բակ ընդհանրապես չի մտնում, մտել է շատ վաղուց՝ մի պահ (տես դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործի 3-րդ հատոր, էջ 91):

19. Շարադրված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ գործով վկաների ցուցմունքներով հաստատվում է, որ վերջին տարիներին, գրեթե ամեն օր, օրվա տարբեր ժամերի հաճախակի տեսել են Սամվել Գաբրիելյանին Երևանի Ղարիբջանյան 50 հասցեում: Վկաների այս պնդումները հիմնված են իրենց հաստատապես հայտնի փաստերի վրա, քանի որ անձամբ են տեսել Սամվել Գաբրիելյանին Երևանի Ղարիբջանյան 50 հասցեում: Վկաները ցուցմունք են տվել նաև այն մասին, որ այցելությունների ժամանակ համոզվել են, որ Երևանի Ղարիբջանյան 50 տունը պատշաճ կահավորված է և պիտանի է բնակվելու համար:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ վկաները հայտնել են, թե Սամվել Գաբրիելյանը Երևանի Ղարիբջանյան 50 հասցեում չի բնակվել, ապա այդ պնդումները հիմնված են ենթադրությունների վրա: Վկաները չեն նշում Սամվել Գաբրիելյանին՝ Ղարիբջանյան 50 տանը չբնակվելու վերաբերյալ իրենց հայտնած տվյալի ստացման աղբյուրը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վկայի հաղորդած տվյալները չեն կարող ծառայել որպես ապացույց, եթե նա չի նշում դրանց ստացման աղբյուրը»: Ավելին, վկաներ Օնիկ Մարգարյանը, Գյուլնարա Հարությունյանը, Լիդա Մարտիրոսյանը դատարանում այդ կապակցությամբ հայտնել են, որ չեն կարող հաստատապես ասել, թե Սամվել Գաբրիելյանը Ղարիբջանյան 50 հասցեում գիշերում է, թե՛ ոչ, քանի որ տեղյակ չեն: Վկա Սվետլանա Հակոբյանը դատարանում ցուցմունք տալով այն մասին, որ թեև օրվա տարբեր ժամերի հաճախ տեսել է Սամվել Գաբրիելյանին

Երևանի Ղարիբջանյան 50 հասցեում, բայց գիտի, որ վերջինս այդ հասցեում չի բնակվում, իրեն ուղղված հարցին պատասխանել է, որ Ղարիբջանյան 50 տան բակ ընդհանրապես չի մտնում, մտել է շատ վաղուց՝ մի պահ:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված օրենսդրական պահանջներն ու իրավական վերլուծությունները, ինչպես նաև 17-19-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, խախտելով ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի պահանջները, չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու փոխարեն մեկնաբանելով ի վնաս մեղադրյալի, հանցանք գործելու մեջ Սամվել Գաբրիելյանի մեղավորության մասին հետևությունը հիմնելով ենթադրությունների վրա, գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջության բացակայության պայմաններում Սամվել Գաբրիելյանի նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ: Մինչդեռ, գնահատելով յուրաքանչյուր ապացույցն ըստ վերաբերելիության և թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, չփարատված կասկածները մեկնաբանելով հօգուտ ամբաստանյալի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաստատված պետք է համարեր, որ գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում Սամվել Գաբրիելյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարումը:

21. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, սխալ մեկնաբանելով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի թիվ 16 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Ադուն Ժամխարյանի կողմից 2009թ. մարտի 4-ին տրված տեղեկանքի բովանդակությունը՝ նշել է, որ Երևանի Ղարիբջանյան 50 տանը Սամվել Գաբրիելյանի կողմից 1998 թվականից մինչև 2009 թվականի մարտի 4-ը բնակվելու տվյալը կեղծ է: Մինչդեռ, հիշյալ տեղեկանքում ասվում է, որ Սամվել Գաբրիելյանը Ղարիբջանյան փողոցի 50 տանը բնակվում է 1995 թվականի մայիսի 1-ին իր հոր մահանալուց, և 1998 թվականի նոյեմբերի 30-ին իր մոր մահանալուց հետո, այլ ոչ թե սկսած 1998 թվականից, ինչպես մեկնաբանում է վերաքննիչ դատարանը: Հիշյալ ամսաթվերով ընդամենը նշվել է ծնողների մահվան կոնկրետ ժամկետը, այլ ոչ թե Սամվել Գաբրիելյանի կողմից Ղարիբջանյան փողոցի 50 տանը բնակություն հաստատելու սկզբնաժամկետը:

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արդարացման դատավճռում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նշել է, որ Սամվել Գաբրիելյանը ստացել է ոչ թե միանձնյա ժառանգության իրավունքի վկայական, ինչպես նշված է նրան առաջադրված մեղադրանքում, այլ տան 1/2-րդ մասի նկատմամբ, իսկ մյուս 1/2-րդ մասի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայական է տրվել նրա հորեղբայր Հրանտ Տիգրանյանին:

Չնայած այն հանգամանքին, որ 2009թ. մարտի 11-ին տրված ժառանգության իրավունքի վկայագրում նշված է, որ Սամվել Գաբրիելյանի ժառանգական գույքը բաղկացած է Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնից (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 50), ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանելով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը և կայացնելով մեղադրական դատավճիռ՝ նույնությամբ վերաշարադրել է քննիչի կողմից առաջադրված մեղադրանքի ձևակերպումը և հաստատված համարել, որ Սամվել Գաբրիելյանը ստացել է «միանձնյա ժառանգության իրավունքի վկայական»: Ընդ որում, մեղադրական դատավճռում սխալ է նշվել Սամվել Գաբրիելյանին ժառանգության իրավունքի վկայագիր տալու ամսաթիվը՝ իրականում այն տրվել է 2009թ. մարտի 11-ին, այլ ոչ թե 2009թ. ապրիլի 11-ին, ինչպես նշել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ նույնությամբ կրկնելով մեղադրական եզրակացության համապատասխան մասի շարադրանքը:

23. Վերոգրյալից բացի, հաստատված համարելով, որ Սամվել Գաբրիելյանն իրականում Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 տանը չի բնակվել, նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք, քանի որ կեղծ տեղեկանք է օգտագործել այն մասին, որ բնակվում է այդ տանը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր կայացրած մեղադրական դատավճիռն ամբաստանյալ Սամվել Գաբրիելյանին է ուղարկել Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 հասցեով (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, էջ 280): Նույն կերպ է վարվել նաև Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ, գործով մեղադրող Ժ.Սահակյանը, ով իր կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկելով՝ ամբաստանյալ Սամվել Գաբրիելյանին վճռաբեկ բողոքի պատասխանի պատճենը ուղարկել է Երևանի Ղարիբջանյան փողոցի թիվ 50 հասցեով:

24. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սամվել Գաբրիելյանի վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի արդարացման դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, իսկ այդ դատական ակտը բեկանելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատավճիռը՝ անօրինական և չհիմնավորված: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտով խախտվել են ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 9-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 7-րդ, 17-րդ, 18-րդ, 112-րդ, 127-րդ, 365-րդ, 366-րդ հոդվածների պահանջները:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թույլ է տրվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. այն է՝ կիրառվել է քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա

չէր կիրառման: Սույն գործով դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածում ամրագրված՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու մասին պահանջները:

25. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի դատավճռում նշված՝ Մամվել Գաբրիելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի հիմնավոր լինելու մասին բոլոր փաստարկները և հաստատվում նրա նկատմամբ առաջին ատյանի դատարանի կայացրած արդարացման դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի դատավճիռը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մամվել Վոլոդյայի Գաբրիելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. փետրվարի 24-ի դատավճիռը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

9.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐՔԻ ԳԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԱՐԳ-1/0028/06/10 որոշում
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան

ԱՐԳ-1/0028/06/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Շ.Հ.ԲԲԵՅԳԻԻ

2010 թվականի հուլիսի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
2010թ. մարտի 24-ի որոշման դեմ մեղադրյալ Տարոն Հակոբի Պիրապյանի
պաշտպան Շեյն Հիթ Բրեյդիի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2010թ. փետրվարի 2-ին:

Նախաքննության մարմնի 2010թ. մարտի 2-ի որոշմամբ Տարոն Հակոբի Պի-
րապյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-
ին մասով:

2. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատա-
րանի 2010թ. մարտի 2-ի որոշմամբ Տ. Պիրապյանի նկատմամբ որպես խափանման
միջոց է կիրառվել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ

Տ.Պիրապյանի պաշտպան Շեյն Հիթ Բրեյդին:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժվել է, իսկ Տ.Պիրապյանի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Տ.Պիրապյանի պաշտպանը բերել է վճռաբեկ բողոք:

4. 2010թ. մայիսի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով («վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին» և «վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Տ.Պիրապյանը 2009թ. հոկտեմբերի 22-ին ստացել է գորակոչման ծանուցագիր՝ բանակ գորակոչվելու համար, սակայն, հարելով «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության գաղափարներին, 2009թ. նոյեմբերի 3-ին դիմում է ներկայացրել Արմավիրի զինվորական կոմիսարին՝ հրաժարվելով ինչպես ժամկետային զինվորական ծառայությունից, այնպես էլ այլընտրանքային ծառայությունից՝ պատճառաբանելով, որ զինվորական ծառայության անցնելը դեմ է իր դավանած աստվածաշնչային սկզբունքներին:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

6. Փաստարկելով, որ ՀՀ-ում գործող այլընտրանքային ծառայությունը քաղաքացիական բնույթ չունի, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին՝ բողոքի հեղինակը նշել է, որ իր պաշտպանյալ Տ.Պիրապյանը հանցագործություն չի կատարել, հետևաբար հանիրավի է գտնվում կալանքի տակ:

7. Վերոգրյալից բացի, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, առանց որևէ հիմք ունենալու եզրակացրել են, որ անհրաժեշտ է կալանքը որպես խափանման միջոց ընտրել, քանի որ մեղադրյալը կարող է թաքնվել քննությունից և խուսափել պատասխանատվությունից:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Տ.Պիրապյանը չի թաքնվել քրեական վարույթ իրականացնող մարմնից, և կեղծ են քննիչի պնդումներն այն մասին, որ մեղադրյալը փորձել է խուսափել քրեական վարույթ իրականացնող մարմնից, քանի որ չի պատասխանել իր հեռախոսազանգերին 2010թ. փետրվարի 25-ին և 26-ին ու տանը չի եղել նույն թվականի մարտի 1-ին: Բողոք բերած անձի պնդմամբ, Տ.Պիրապյանի բջջային հեռախոսի զանգերի վերծանումները հաստատում են, որ վերջինս և քննիչը խոսել են 2010թ. փետրվարի 25-ին՝ ժամը 12:28-ին և հաջորդ օրը՝ ժամը 17:55-ին, ինչպես նաև այն, որ մեղադրյալը զանգահարել է քննիչին 2010թ. մարտի 2-ին՝ ժամը 10:54:

Վերոգրյալից բացի, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանում քննիչը խոստովանել է, որ 2010թ. մարտի 1-ին Տ.Պիրապյանը տանն է եղել և նրանք պայմանավորվել են հանդիպել հաջորդ օրը, ինչը և տեղի է ունեցել:

8. Ըստ բողոք բերած անձի, դատարանները չեն հիմնավորել Տ.Պիրապյանի նկատմամբ կալանավորման կիրառման անհրաժեշտությունը և ընտրել են ամենախիստ խափանման միջոցը՝ առանց քննարկելու ավելի մեղմ խափանման միջոցի կիրառման հնարավորությունը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Տ.Պիրապյանը չի խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, չի եղել և չկա ոչ մի վտանգ, որ նա կկատարի քրեական օրենքով չթույլատրված արարք:

9. Վերոգրյալից բացի, բողոք բերած անձը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, չսպառնալով մեղադրյալ Տ.Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը, նրան գրկել է արդար դատաքննության իրավունքից:

10. Հիմք ընդունելով շարադրված փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշումը և Տ.Պիրապյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի իրավաչափությունը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Տ.Պիրապյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն արդյո՞ք օրինական, հիմնավորված և պատճառաբանված է:

12. Կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Ճուղուրյանի* վերաբերյալ որոշման մեջ և, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող

գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: (...)» (տե՛ս *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. մարտի 2-ին քննության է առել Ս.Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը և նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, հաշվի առնելով նրան վերագրվող արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը և այն, որ նա, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խուսափել պատասխանատվությունից, գտել է, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է և պետք է բավարարել: Դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, սակայն, որ դրանում իսպառ բացակայում են հիմնավորումներ այն մասին, թե ինչու է դատարանը կարծում, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է, և Ս.Պիրապյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խուսափել պատասխանատվությունից:

14. Սույն որոշման 13-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 12-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները (սահմանված *Ա.Ճուղորյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանն անտեսել է այն իրավական պահանջը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, և կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: Փաստորեն դատարանը, առանց համապատասխան հիմքերի առկայության, հետևություն է արել Ս.Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորված լինելու մասին և արդյունքում կայացրել անհիմն և չպատճառաբանված որոշում:

15. Ս.Պիրապյանի նկատմամբ ընտրված կալանավորման որոշման դատական ստուգման վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի

24-ի դատական նիստի ձայնային արձանագրության ունկնդրմամբ պարզ է դառնում, որ դատական նիստում քննիչն ընդունում է այն փաստը, որ 2010թ. մարտի 1-ին Տ.Պիրապյանի բնակարան այցելության ժամանակ ինքը հանդիպել է վերջինիս և նրանք պայմանավորվել են հաջորդ օրը՝ 2010թ. մարտի 2-ին իր մոտ հանդիպելու մասին: Համաձայն պայմանավորվածության, 2010թ. մարտի 2-ին Տ.Պիրապյանը կամովին ներկայացել է նրա մոտ, ինքը Տ.Պիրապյանին մեղադրանք է առաջադրել, ապա միասին գնացել են դատարան, ուր դատարանի կողմից բավարարվել է Տ.Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու քննիչի միջնորդությունը:

Նախագահող դատավոր Հ.Տեր-Ադամյանի այն հարցին, թե ինչո՞ւ է քննիչը որոշում կայացրել Տ.Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին այն դեպքում, երբ Տ.Պիրապյանը կամովին է ներկայացել քննիչի կանչով, քննիչ Գ.Մամուկյանը պատասխանել է, որ դա արել է մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, նյութերի 1-ին հատոր, էջ 66):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, դատական ստուգման ենթարկելով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումը, գտել է, որ առաջին ատյանի դատարանը, բավարարելով Տ.Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը, այդպիսով ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը:

16. Վերոշարադրյալ մեջբերումից երևում է, որ, դատական ստուգման ենթարկելով առաջին ատյանի դատարանի դատական ակտը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ևս անտեսել է սույն որոշման 12-րդ կետում նշված հանգամանքները և հետևության հանգել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը ապահովելու նկատառումով քննիչի միջնորդությունը բավարարվել է իրավացիորեն, առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի պահանջների, այնպես էլ օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ) և որոշումը բեկանելու հիմք:

II. Բողոքի հեղինակի կողմից վկայակոչված այլ հանգամանքներ

Սույն գործով բողոք բերած անձի կողմից բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, չապահովելով մեղադրյալ Տ.Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը, արդյո՞ք նրան զրկել է արդար դատաքննության իրավունքից:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին»:

Շարադրված դրույթի վերլուծությունից երևում է, որ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը վերաքննիչ դատարանի կողմից կատարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով, որը դատական ստուգմանը մեղադրյալի մասնակցության մասին դրույթ չի պարունակում:

Վերաքննիչ դատարանում կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցության ապահովման պահանջ նախատեսված չէ նաև որևէ այլ իրավական նորմով:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, որպես ընդհանուր կանոն, վերաքննիչ դատարանը չունի կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու պարտականություն:

19. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն իրավական դիրքորոշման՝ անձին ազատությունից զրկելու դեմ բողոքների դատական ստուգումը պետք է իրականացվի որոշակի երաշխիքների պահպանմամբ, մասնավորապես՝ կողմերի մրցակցության («զենքերի հավասարության») պայմաններում և դատական նիստի շրջանակներում: Մասնավորապես, այս իրավական դիրքորոշումն ամրագրված է Եվրոպական դատարանի հետևյալ վճիռներում. *Շյոպսն ընդդեմ Գերմանիայի* (Schöps v. Germany), գանգատ թիվ 25116/94, Պալատի 2001թ. փետրվարի 13-ի վճիռ, կետ 44, Պալատի վճիռը, *Յիդիթ-դողանն ընդդեմ Թուրքիայի* (Yigitdoğan v. Turkey), գանգատ թիվ 20827/08, Պալատի 2010թ. մարտի 16-ի վճիռ, կետ 26: Ընդ որում, մրցակցության պահանջը կարող է ապահովված համարվել, եթե ազատությունից զրկված անձը հնարավորություն է ստացել մասնակցել իր բողոքի քննությանը կամ անձամբ, կամ ներկայացուցչի

միջոցով (տե՛ս *Սանչեզ-Ռեյսես ընդդեմ Շվեյցարիայի* (Sanchez-Reisse v. Switzerland) գործով Պալատի վճիռը, գանգատ թիվ 9862/82, 1986թ. հոկտեմբերի 21, կետ 51, *Ստեֆենսն ընդդեմ Մալթայի* (Stephens v. Malta) գործով Պալատի վճիռը, գանգատ թիվ 11956/07, 2009թ. ապրիլի 21, կետ 95):

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը վերաքննիչ դատարանում մեղադրյալի մասնակցությունը սահմանում է ներկայացուցչության (պաշտպանի մասնակցության) եղանակով, ինչը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Իսկ սույն գործով Տ.Պիրապյանի պաշտպանը վերաքննիչ դատարանում իր պաշտպանյալի կալանավորման հարցի քննությանը փաստացի մասնակցել է:

Հետևաբար Տ.Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը չապահովելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի խախտում թույլ չի տվել:

21. Սույն գործով բողոք բերած անձի կողմից բարձրացվել է նաև այն հարցը, որ քննիչը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին կեղծ տեղեկություններ է հայտնել այն մասին, որ Տ.Պիրապյանը փորձել է խուսափել քրեական վարույթ իրականացնող մարմնից, քանի որ չի պատասխանել իր հեռախոսագանգերին 2010թ. փետրվարի 25-ին և 26-ին և տանը չի եղել նույն թվականի մարտի 1-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Անդրադառնալով բողոքաբերի վերոշարադրյալ փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հանգամանքները ստորադաս դատարաններին հայտնի չեն եղել, քանի որ ո՛չ մեղադրյալ Տ.Պիրապյանը, որը մասնակցել է առաջին ատյանի դատարանի դատական նիստին, ո՛չ էլ փաստաբան Շեյն Հիթ Բրեյդին, որը մասնակցել է վերաքննիչ դատարանի դատական նիստին, այդ մասին ստորադաս դատարանին չեն հայտնել: Այդ հանգամանքերի մասին նշվել է վճռաբեկ բողոքում և բողոքին են կցվել «Վիվա ՄԵլ ՄՏՍ»-ից ձեռք բերված՝ հեռախոսագանգերի վերծանման փաստաթղթերի պատճենները:

III. Սույն որոշման իրավական արժեքը

23. Սույն որոշման 12-16-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտը բեկանելու համար: Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր և դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը: Ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

Բացի այդ, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 22-ին կայացրել է դատավճիռ, որով Տ.Պիրապյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Պատիժ նշանակելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Տ.Պիրապյանին անազատության մեջ

պահելու ողջ ժամանակահատվածը:

24. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունեն, ինչպես նաև Տ.Պիրապյանի նկատմամբ քրեական վարույթի ողջ համատեքստում չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

25. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Տարոն Հակոբի Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵՔԲԴ/0063/01/08
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան
դատավորներ՝ Մ.Արղամանյան,
Մ.Ռեհանյան

ԵՔԲԴ/0063/01/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպաններ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Լ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ա.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Ալեքսանդրի Հովհաննիսյանի, Աբել Ջոնի Աբելյանի, Ալեքսան Սամվելի Տերտերյանի, Արթուր Արշալույսի Ստեփանյանի, Արսեն Վաչագանի Մաթևոսյանի և Արմեն Հակոբի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի մարտի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Սիմոնյանի, ամբաստանյալ Ա.Աբելյանի, ամբաստանյալ Ա.Տերտերյանի պաշտպան Ռ.Սաֆարյանի, ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Ա.Մանուկյանի, ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2007 թվականի հունվարի 10-ին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում թիվ 62200906 քրեական գործի նյութերով հարուցվել և նույն քրեական գործին է միացվել թիվ 62200207 քրեական գործը՝ Արա Խալաթյանի կողմից 2006 թվականի ընթացքում բազմիցս ապօրինաբար հերոին տեսակի թմրամիջոց ձեռք բերելու և առանց բժշկի թույլտվության գործածելու փաստի առթիվ:

2007 թվականի հունվարի 12-ին Կ.Հովհաննիսյանը, Ա.Տերտերյանը, Ա.Աբրահամյանը և Ա.Մաթևոսյանը ձերբակալվել են:

2007 թվականի հունվարի 14-ին Կ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով, Ա.Տերտերյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով, Ա.Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրը Կ.Հովհաննիսյանի և Ա.Տերտերյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, իսկ Ա.Աբրահամյանի և Ա.Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2007 թվականի փետրվարի 3-ին Ա.Աբելյանը ձերբակալվել է:

2007 թվականի փետրվարի 6-ին Ա.Աբելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Նույն օրն Ա.Աբելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2007 թվականի հուլիսի 9-ին Ա.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրն Ա.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2007 թվականի հոկտեմբերի 29-ին Կ.Հովհաննիսյանի մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

2007 թվականի հոկտեմբերի 29-ին Ա.Աբելյանի մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի

3-րդ մասի 2-րդ կետով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի հոկտեմբերի 29-ին Ա.Տերտերյանի մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի նոյեմբերի 8-ին Ա.Մաթևոսյանի մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-268-րդ հոդվածի 2-րդ մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի նոյեմբերի 9-ին Ա.Աբրահամյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի նոյեմբերի 14-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել թիվ 62200906 քրեական գործից Կ.Հովհաննիսյանի, Ա.Աբելյանի, Ա.Տերտերյանի, Ա.Ստեփանյանի, Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի վերաբերյալ մասն անջատելու մասին, անջատված մասին շնորհվել է թիվ 62200207 համարը:

2007 թվականի նոյեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հուլիսի 28-ի որոշումներով ամբաստանյալներ Կ.Հովհաննիսյանի, Ա.Աբելյանի, Ա.Տերտերյանի, Ա.Ստեփանյանի, Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճռով ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ազատազրկման 8 տարի 6 ամիս ժամկետով՝ անձնական գույքի 30 տոկոսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 1.705.000 ՀՀ դրամից, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 6 տարի ժամկետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամկետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 6 ամիս ժամկետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 100.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Կ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 10 տարի ժամկետով՝ անձնական գույքի 30 տոկոսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 1.705.000 ՀՀ դրամից և տու-

զանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Ամբաստանյալ Ա.Աբելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել: Ա.Աբելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա դատական նիստի դահլիճում ազատվել է կալանքից:

Ամբաստանյալ Ա.Տերտերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ազատագրկման 8 տարի ժամկետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատագրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Տերտերյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրկում 9 տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ա.Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ազատագրկման 3 տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ա.Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ազատագրկման 1 տարի 6 ամիս ժամկետով, 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատագրկման 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրկում 2 տարի ժամկետով: Նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Ա.Մաթևոսյանի՝ 2007 թվականի հունվարի 12-ից մինչև 2007 թվականի հունվարի 14-ն արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

Ամբաստանյալ Ա.Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատագրկման 1 տարի 6 ամիս ժամկետով: Նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Ա.Աբրահամյանի՝ 2007 թվականի հունվարի 12-ից մինչև 2007 թվականի հունվարի 14-ն արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

3. Պաշտպանների և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի մարտի 22-ի որոշմամբ պաշտպանների բողոքները մերժել է, իսկ մեղադրողի բողոքը՝ բավարարել մասնակիորեն:

Ա.Աբելյանի մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը բեկանվել է, Ա.Աբելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատագրկման 8 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով, նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Ա.Աբելյանի կալանքի տակ գտնված

ժամանակահատվածը՝ 2007 թվականի փետրվարի 3-ից մինչև 2009 թվականի օգոստոսի 24-ը և վերջնական թողնվել է կրելու ազատագրվում 5 տարի 5 ամիս 9 օր ժամկետով: Ա.Աբելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Պատժի սկիզբը հաշվվել է Ա.Աբելյանին փաստացի կալանքի վերցնելու պահից:

Կ.Հովհաննիսյանի և Ա.Տերտերյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը փոփոխվել է:

Կ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ազատագրվման 8 տարի 6 ամիս ժամկետով՝ անձնական գույքի 30 տոկոսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 1.705.000 ՀՀ դրամից, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատագրվման 6 տարի ժամկետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատագրվման 1 տարի 6 ամիս ժամկետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատագրվման 6 ամիս ժամկետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 100.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Կ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրվում 10 տարի ժամկետով՝ անձնական գույքի 30 տոկոսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 1.705.000 ՀՀ դրամից և տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Ա.Տերտերյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ազատագրվման 8 տարի ժամկետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատագրվման 2 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Տերտերյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրվում 9 տարի ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Սիմոնյանը, ամբաստանյալ Ա.Աբելյանը, ամբաստանյալ Ա.Տերտերյանի պաշտպան Ռ.Սաֆարյանը, ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Ա.Մանուկյանը և ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանի ու Ա.Աբրահամյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մայիսի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել հետևյալը.

5. Կ.Հովհաննիսյանը 2005-2007 թվականների ընթացքում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի հերոին տեսակի թմրամիջոց, որի մի մասն առանց բժշկի թույլտվության գործածել է ներարկվելու միջոցով, իսկ մնացած մասը նույն ժամանակահատվածում իրացրել է տարբեր անձանց: Միաժամանակ, առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել և պահել մանր չափի մարիխուանա տեսակի թմրամիջոց և թմրամիջոցների պատրաստման համար պրեկուրսոր հանդիսացող քացախաթթվի անհիդրիդ: Դա դրսևորվել է հետևյալում.

2005-2006 թվականների ընթացքում Կ.Հովհաննիսյանը նախաքննությամբ չպարզված անձից (անձանցից) և Ա.Աբելյանից նախնական համաձայնությամբ, իրացնելու նպատակով, հունիս-հոկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր շաբաթ՝ 5-ական գրամ չափաբաժիններով, այնուհետև՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 10-ական գրամ չափաբաժիններով, 1 գրամը 80 ԱՄՆ դոլարով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 180 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որից մի մասն առանց բժշկի թույլտվության գործածել է ներարկվելու միջոցով:

Նախնական պայմանավորվածության համաձայն նա կապ է հաստատել Ա.Աբելյանի հետ վերջինիս բջջային հեռախոսահամարներով, որից հետո, հանդիպելով նրան, ապօրինի ձեռք է բերել և պահել հերոին տեսակի թմրամիջոց:

Քննությամբ չպարզված անձից և Ա.Աբելյանից ապօրինի ձեռք բերած ու պահած հերոին տեսակի թմրամիջոցը Կ.Հովհաննիսյանը պարբերաբար իրացրել է ներքոհիշյալ անձանց.

1) 2005 թվականի աշնանը նա, 30 օրվա ընթացքում նախնական համաձայնությամբ Էդուարդ Հովհաննիսյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 4 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2) 2006 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում նա նախնական համաձայնությամբ Արա Խալաթյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 40 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

3) 2006 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում նա նախնական համաձայնությամբ Արա Շահբազյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 33 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

4) 2006 թվականի օգոստոսի վերջին և հոկտեմբերի կեսերին նա նախնական

համաձայնությամբ Արտյոմ Առաքելյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում, հյուրասիրելու եղանակով, 0,25-ական գրամ չափաբաժիններով իրացրել է խոշոր չափի՝ 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2006 թվականի հոկտեմբերի կեսերին, երբ Ա.Առաքելյանը վերջին անգամ ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու նպատակով այցելել է նրան, վերջինս, իր մոտ չունենալով հերոին տեսակի թմրամիջոց, այն ձեռք բերելու նպատակով Ա.Առաքելյանի ներկայությամբ հեռախոսով զանգահարել է Ա.Արեյանին և, թմրամիջոց ձեռք բերելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով նրա հետ, Ա.Առաքելյանի հետ միասին գնացել են Ա.Արեյանի վարձակալած բնակարանի մոտ, ուր այցելելուց հետո, դուրս գալով Մաշտոցի պողոտա, խոշոր չափի՝ 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոցը հյուրասիրելու եղանակով իրացրել է Ա.Առաքելյանին:

5) 2006 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում նա նախնական համաձայնությամբ Էմիլ Ավագյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական և 1-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով կամ 50.000 ՀՀ դրամով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 8 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

6) 2006 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում նա նախնական համաձայնությամբ Արթուր Ստեփանյանին և Էմիլ Անտոնյանին վերջինիս միջոցով Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 50.000 ՀՀ դրամով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 2 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

7) 2006 թվականի սեպտեմբերից 2007 թվականի հունվարը ներառյալ նա նախնական համաձայնությամբ Ալեքսան Տերտերյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում և իր վարձակալած՝ Երևան քաղաքի Պուշկինի 3-րդ շենքի 17-րդ բնակարանում, 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 30 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2006 թվականի աշնանը, երբ Ա.Տերտերյանն ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու նպատակով այցելել է Կ.Հովհաննիսյանին, վերջինս իր մոտ չունենալով հերոին տեսակի թմրամիջոց, վեց անգամ Ա.Տերտերյանի ներկայությամբ հեռախոսով զանգահարել է Ա.Արեյանին և, թմրամիջոց ձեռք բերելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով նրա հետ, Ա.Տերտերյանի հետ միասին գնացել են Ա.Արեյանի վարձակալած բնակարանի մոտ, ուր այցելելուց հետո, նույն շենքի մոտ, իր վարած ավտոմեքենայի մեջ, առանձնապես խոշոր չափի՝ 3 գրամ հերոին տեսակի թմրամիջոցն իրացրել է Ա.Տերտերյանին՝ հայտնելով, որ թմրամիջոցն Ա.Արեյանը ստանում է Կոլումբիայից և այն իրացնում է միայն իրեն:

8) 2006 թվականի դեկտեմբերի կեսերին նա նախնական համաձայնությամբ Երևան քաղաքի բնակիչներ Արմեն Աբրահամյանին և նախաքննությամբ չպարզված ոմն Աշոտին վերջինիս միջոցով Երևան քաղաքի Կենտրոն համայնքի

տարածքում իրացրել է խոշոր չափի՝ 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, 2007 թվականի հունվարի 2-ին իր վարձակալած Երևան քաղաքում գտնվող բնակարանում գործածելու նպատակով խոշոր չափի՝ 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոցով պատրաստել է ներարկման լուծույթ, որից խոշոր չափի՝ 0,25 գրամը հյուրասիրելու եղանակով իրացրել է Վահրամ Սմբատյանին և վերջինիս հետ միասին առանց բժշկի թույլտվության գործածել է խոշոր չափի՝ 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2007 թվականի հունվարի 12-ին Կ.Հովհաննիսյանի վարձակալած բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել է ապօրինի ձեռք բերած և պահած խոշոր չափի՝ 0,0719 գրամ հերոին տեսակի թմրամիջոցը, մանր չափի՝ 0,04 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցը և պրեկուրսոր հանդիսացող քացախաթթվի անհիդրիդի հետքերով ներարկիչը:

6. Ա.Աբելյանը 2006 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել առանձնապես խոշոր չափի հերոին տեսակի թմրամիջոց և նույն ժամանակահատվածում իրացրել է այն: Դա արտահայտվել է հետևյալում.

2005-2006 թվականների ընթացքում Ա.Աբելյանը նախաքննությամբ չպարզված անձից (անձանցից) իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել առանձնապես խոշոր չափի՝ 180 գրամ հերոին տեսակի թմրամիջոց և Կ.Հովհաննիսյանի հետ նախնական պայմանավորվածության համաձայն իր շահագործած բջջային հեռախոսահամարներով կապ է հաստատել վերջինիս հետ, որից հետո նախնական համաձայնությամբ, Կ.Հովհաննիսյանի հետ հանդիպելով վարձակալած բնակարանում, աստիճանահարթակում և Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 2006 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր շաբաթ 5-ական գրամ չափաբաժիններով, այնուհետև՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 10-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 80 ԱՄՆ դոլարով, վերջինիս իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 180 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

7. Ա.Տերտերյանը 2006 թվականի դեկտեմբերից 2007 թվականի հունվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել առանձնապես խոշոր չափի՝ 3,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որը նույն ժամանակահատվածում իրացրել է տարբեր անձանց, բացի այդ, 2006 թվականի սեպտեմբերից 2007 թվականի հունվարը ներառյալ, առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել, պահել առանձնապես խոշոր չափի՝ 30 գրամ հերոին տեսակի թմրամիջոց: Դա արտահայտվել է հետևյալում.

2006 թվականի դեկտեմբերից 2007 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում Ա.Տերտերյանն իրացնելու նպատակով Կ.Հովհաննիսյանից ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 3,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որը պարբերաբար իրացրել է ներքոհիշյալ անձանց.

1) 2006 թվականի դեկտեմբեր ամսին նա նախնական համաձայնությամբ Արա Շահբազյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 2 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2) 2006 թվականի դեկտեմբերից 2007 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում նա նախնական համաձայնությամբ Արսեն Մաթևոսյանին Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը՝ 40.000 ՀՀ դրամով իրացրել է առանձնապես խոշոր չափի՝ 1 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, իսկ 2007 թվականի հունվարի 11-ին 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոցն իր կամքից անկախ Ա.Մաթևոսյանին չի կարողացել իրացնել՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն բերման ենթարկվելու պատճառով:

Բացի այդ, 2006 թվականի սեպտեմբերից 2007 թվականի հունվարը ներառյալ նա նախնական համաձայնությամբ Կ.Հովհաննիսյանից Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարբեր վայրերում և վերջինիս վարձակալած բնակարանում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը 120 ԱՄՆ դոլարով կամ 40.000 ՀՀ դրամով, առանց իրացնելու նպատակի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափի՝ 30 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

2006 թվականի աշնանը, երբ նա ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու նպատակով այցելել է Կ.Հովհաննիսյանին վեց անգամ, վերջինս չունենալով հերոին տեսակի թմրամիջոց, այն ձեռք բերելու և իրացնելու նպատակով նրա ներկայությամբ հենախոսով զանգահարել է Ա.Աբելյանին և նախնական համաձայնության գալով, նրա հետ միասին գնացել են Ա.Աբելյանի վարձակալած բնակարանի մոտ, որտեղ Ա.Աբելյանին հանդիպելուց հետո նույն շենքի մոտ առանձնապես խոշոր չափի՝ 3 գրամ հերոին տեսակի թմրամիջոցն իրացրել է նրան՝ հայտնելով, որ թմրամիջոցն Ա.Աբելյանը ստանում է Կոլումբիայից և այն իրացնում է միայն իրեն:

8. Ա.Մաթևոսյանը 2006 թվականի դեկտեմբերից 2007 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում, առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափի՝ 1 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, իսկ 2007 թվականի հունվարի 11-ին, առանց իրացնելու նպատակի, իրականացրել է խոշոր չափի՝ 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման փորձ, որն արտահայտվել է հետևյալում.

2006 թվականի դեկտեմբեր 2007 թվականի հունվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում նա նախնական համաձայնությամբ Ա.Տերտերյանից Երևան քաղաքի Պուշկինի 3-րդ շենքի բակում 0,5-ական գրամ չափաբաժիններով, մեկ գրամը՝ 40.000 ՀՀ դրամով, առանց իրացնելու նպատակի, ձեռք է բերել խոշոր չափի՝ 1 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որն առանց բժշկի թույլտվության գործածել է վերին շնչուղիները քաշելու միջոցով, իսկ 2007 թվականի հունվարի 11-ին նախնական համաձայնությամբ Ա.Տերտերյանից, առանց իրացնելու նպատակի,

վործել է ձեռք բերել խոշոր չափի՝ 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ պատճառներով չի կարողացել ավարտին հասցնել՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն բերման ենթարկվելու հետևանքով:

9. Ա.Աբրահամյանը 2006 թվականի դեկտեմբերին, առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափի՝ 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որն արտահայտվել է հետևյալում.

2006 թվականի դեկտեմբերի կեսերին նա, նախնական համաձայնության գալով և 15.000 ՀՀ դրամ տրամադրելով իր ծանոթ ոմն Աշոտին, նրա հետ գործածելու դիտավորությամբ, վերջինիս միջոցով Կ.Հովհաննիսյանից Երևան քաղաքի Կենտրոն համայնքի տարածքում, առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել 0,5 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որից իր մասնաբաժին, խոշոր չափի՝ 0,25 գրամը գործածել է նույն օրը՝ ներարկվելու միջոցով:

10. Ա.Ստեփանյանը 2006 թվականի դեկտեմբերի սկզբին, առանց իրացնելու նպատակի, ձեռք է բերել և պահել խոշոր չափի՝ 0,125 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, իսկ 2006 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում, կրկին, առանց իրացնելու նպատակի, ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 2 գրամ հերոին տեսակի թմրամիջոց: Դա արտահայտվել է հետևյալում.

2006 թվականի դեկտեմբերի սկզբին նա, իր բնակության վայրի՝ Երևան քաղաքի Տիգրան Մեծի 36 շենքի բակում հանդիպելով վաղեմի ծանոթ Էմիլ Անտոնյանին, նրանից ապօրինաբար ձեռք է բերել և պահել է խոշոր չափի՝ 0,125 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որը գործածել է վերին շնչուղիները շնչելու միջոցով:

Բացի այդ, 2006 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում նախնական համաձայնությամբ իր տրամադրած գումարով Է.Անտոնյանի միջոցով համատեղ գործածելու նպատակով մեկ գրամը 50.000 ՀՀ դրամով, 0,25-ական գրամ չափաբաժիններով Կ.Հովհաննիսյանից ապօրինաբար ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 2 գրամ հերոին տեսակի թմրամիջոց, որից առանձնապես խոշոր չափի՝ 1 գրամ թմրամիջոցը գործածել է վերին շնչուղիները շնչելու միջոցով:

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Ըստ պաշտպան Լ.Միմոնյանի (այսուհետ՝ նաև առաջին բողոքաբեր)՝ դատարանների կողմից կայացված դատական ակտերն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, գործը քննելիս և դատական ակտեր կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Դատարանները թույլ են տվել նաև քրեական օրենքի և միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, սխալ են մեկնաբանել օրենքը:

Մասնավորապես, առաջին բողոքաբերը, ըստ դրվագների վերլուծելով ամ-

բաստանյալ Կ.Հովհաննիսյանի մեղադրանքը և դրա հիմքում դրված ապացույցները, եզրակացություն է արել այն մասին, որ Կ.Հովհաննիսյանի մեղքը մեղսագրվող հանցագործությունների կատարման մեջ դատաքննությանը հետազոտված ապացույցներով հաստատված չէ:

12. Առաջին բողոքաբերը դիրքորոշում է հայտնել նաև, որ Առաջին ատյանի դատարանը Կ.Հովհաննիսյանի մեղադրանքի ծավալից արդարացիորեն հանել է երեք դրվագ, մինչդեռ Վերաքննիչ դատարանն առանց բավարար ապացույցների Կ.Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել նաև նշված երեք դրվագներով:

Մասնավորապես, դրանցից առաջինով՝ Վ.Սմբատյանին թմրամիջոց իրացնելու դրվագով, Կ.Հովհաննիսյանի անմեղությունը հաստատված է Վ.Սմբատյանի նկատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 15-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած թիվ 517/07 որոշմամբ: Նշված դատական ակտով հաստատված է, որ Վ.Սմբատյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում և ձեռք են բերվել քննության խորթ մեթոդների կիրառմամբ:

Երկրորդ դրվագով՝ Ա.Առաքելյանին թմրամիջոց իրացնելու մասով, վերջինս դատական քննության ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ թմրամիջոց ձեռք բերելու վերաբերյալ նախաքննության ընթացքում ընդհանրապես ցուցմունք չի տվել, իսկ քրեական գործում առկա, իր անվանը վերագրված ցուցմունքներն ինքը չի գրել, և դրանցում առկա ստորագրություններն իրենը չեն:

Այն հանգամանքը, որ Ա.Առաքելյանը նման ցուցմունք չի տվել, ըստ պաշտպան Լ.Սիմոնյանի, հաստատվում է նաև վերջինիս և Կ.Հովհաննիսյանի առերես հարցաքննությամբ, որը կատարվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, մասնավորապես, առերեսմանը մասնակից չի դարձվել Կ.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը:

Երրորդ դրվագով՝ Ա.Տերտերյանին Ա.Աբելյանի վարձակալած շենքի բակում թմրամիջոց իրացնելու մասով, Կ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը հերքվում է մի շարք ապացույցներով: Նշված դրվագի հիմքում Վերաքննիչ դատարանի կողմից դրվել են Ա.Տերտերյանի նախաքննական ցուցմունքները և նրա մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության արձանագրությունը: Հետագայում Ա.Տերտերյանը հրաժարվել է իր տված ցուցմունքներից՝ հայտարարելով, որ քննչական փորձարարության արձանագրության մեջ նշված տվյալներն իրականությանը չեն համապատասխանում: Այն, որ նշված արձանագրությունը կեղծված է, առաջին բողոքաբերի պնդմամբ հաստատվում է նաև Առաջին ատյանի դատարանի կողմից իրականացված՝ Երևանի Գ.Փարպեցի 9բ շենքի զննությամբ, որի ժամանակ ակնհայտ է դարձել, որ նշված շենքն ունի երկու մուտք, մինչդեռ քննչական փորձարարության արձանագրության մեջ նշված է, որ շենքն ունի մեկ մուտք:

13. Առաջին բողոքաբերը փաստարկել է, որ Կ.Հովհաննիսյանի դեմ ցուցմունք տված վկաներից Է.Հովհաննիսյանը և Ա.Խալաթյանը հարցաքննվել են միայն

նախաքննության ժամանակ, դատարան չեն ներկայացել, և պաշտպանության կողմը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու նրանց:

Ըստ առաջին բողոքաբերի՝ նախաքննության մարմինը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն՝ քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում: Մինչդեռ սույն գործով Կ.Հովհաննիսյանի և Ա.Խալաթյանի միջև առերես հարցաքննություն չի կատարվել: Նման պայմաններում Ա.Խալաթյանի հարցաքննության արձանագրություններն օգտագործելով որպես ապացույց՝ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքը:

Բացի այդ, Կ.Հովհաննիսյանի մեղադրանքի հիմքում են դրվել նրա բնակարանի խուզարկությամբ հայտնաբերված և նախաքննության մարմնի կողմից իրեդեն ապացույց ճանաչված թմրամիջոցները, որոնք, սակայն, քրեական գործի հետ միասին դատարան չեն ուղարկվել, դատարանի կողմից չեն հետազոտվել, հետևաբար չէին կարող օգտագործվել որպես ապացույց:

14. Ըստ առաջին բողոքաբերի՝ ստորադաս դատարանները պարտավոր էին որպես ապացույց անթույլատրելի ճանաչել նաև նախաքննության ժամանակ Կ.Հովհաննիսյանի տված ինքնախոստովանական ցուցմունքները, ինչպես նաև Ա.Տերտերյանի, Ա.Շահբազյանի և Է.Ավագյանի ցուցմունքները, քանի որ դրանք ձեռք են բերվել բռնությունների, խաբեության և այլ անօրինական գործողությունների արդյունքում:

15. Պաշտպան Լ.Միմոնյանը փաստարկել է նաև, որ դատարանները թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ Կ.Հովհաննիսյանին միաժամանակ մեղավոր են ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասով և նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, ինչն, ըստ բողոքաբերի, անթույլատրելի է:

16. Վերոգրյալի հիման վրա առաջին բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը և Կ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ:

17. Ամբաստանյալ Ա.Աբելյանը (այսուհետ՝ նաև երկրորդ բողոքաբեր) իր բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Ըստ երկրորդ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը գործը քննելիս և իր մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելիս, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Երկրորդ բողոքի հեղինակը, շարադրելով և վերլուծության ենթարկելով իրեն առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, եզրակացություն է

արել այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ իր մեղավորության մասին թե՛ նախաքննության մարմնի և թե՛ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա և գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատված չեն:

18. Վերոգրյալի հիման վրա ամբաստանյալ Ա.Աբելյանը խնդրել է իր մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճռին:

19. Պաշտպան Ռ.Սաֆարյանը (այսուհետ՝ նաև երրորդ բողոքաբեր), իր բողոքում ըստ դրվագների վերլուծելով ամբաստանյալ Ա.Տերտերյանի մեղադրանքը և դրա հիմքում դրված ապացույցները, եզրակացություն է արել այն մասին, որ սույն գործով դատական ակտերը կայացվել են ենթադրությունների, օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների հիման վրա, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 105-րդ, 397-րդ և 398-րդ հոդվածների պահանջները:

20. Ըստ երրորդ բողոքաբերի՝ դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը նախաքննության ընթացքում բոլոր ամբաստանյալների և հարցաքննված վկաների նկատմամբ կիրառել է քննության խորթ մեթոդներ, նրանցից ցանկալի ցուցմունքներ կորզել բռնությունների և սպառնալիքների ազդեցության տակ:

21. Երրորդ բողոքի հեղինակը նաև փաստարկել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկան՝ տվյալ դեպքում հերոին տեսակի թմրանյութը, քրեական գործի քննության ընթացքում չի հայտնաբերվել, այն չի կշռվել, դրա տեսակը փորձաքննությամբ չի պարզվել, հետևաբար Ա.Տերտերյանին առաջադրված մեղադրանքը հիմնված է միայն ենթադրությունների վրա:

22. Վերոգրյալի հիման վրա պաշտպան Ռ.Սաֆարյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը և Ա.Տերտերյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով գործի վարույթը կարճել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխել և նրա արարքը վերաորակել 268-րդ հոդվածի 2-րդ մասով:

23. Պաշտպան Ա.Մանուկյանը (այսուհետ՝ նաև չորրորդ բողոքաբեր) իր բողոքում նշել է, որ սույն գործով դատարանները սխալ են կիրառել ՀՀ քրեական

օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասը, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 107-րդ, 127-րդ, 396-րդ, 397-րդ և 398-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ չորրորդ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է ապացուցման ենթակա հանգամանքի՝ հանցագործության առարկա հանդիսացող թմրանյութի քաշի, տեսակի և ընդհանրապես դրա առկայության վերաբերյալ որևէ ապացույցի բացակայությունը և, հիմք ընդունելով միայն մեկ ապացույց, ամբաստանյալ Ա.Ստեփանյանի՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքը, դրան տվել է նախապես հաստատված ապացույցի ուժ, չի հերքել դատաքննության ընթացքում ի պաշտպանություն ամբաստանյալի բերված փաստարկները և, հիմնվելով միայն ենթադրությունների վրա, վերջինիս մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ:

24. Վերոգրյալի հիման վրա պաշտպան Ա.Մանուկյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը և Ա.Ստեփանյանի նկատմամբ քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով դադարեցնել և այդ մասով գործի վարույթը կարճել:

25. Պաշտպան Ռ.Սիրեկանյանն (այսուհետ՝ նաև հինգերորդ բողոքաբեր) իր բողոքում նշել է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ըստ հինգերորդ բողոքաբերի՝ ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանին և Ա.Աբրահամյանին առաջադրված մեղադրանքները չեն հիմնավորվել գործում առկա ապացույցներով և հիմնված են միայն ենթադրությունների վրա: Բողոքաբերը նշել է, որ Ա.Մաթևոսյանը և Ա.Աբրահամյանը մեղադրվում են խոշոր չափի հերոին տեսակի թմրամիջոց ձեռք բերելու մեջ, սակայն նրանց մոտ ոչինչ չի հայտնաբերվել, գործում առկա չէ իրեղեն ապացույց ճանաչված՝ հերոին տեսակի թմրամիջոցը, առկա չէ նաև փորձագետի եզրակացություն թմրամիջոցի քաշի և տեսակի վերաբերյալ, ինչն, ըստ բողոքաբերի, բերում է ամբողջ հանցակազմի բացակայության:

26. Հինգերորդ բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքները չպետք է որպես ապացույց դրվելին դատավճռի հիմքում, քանի որ ձեռք են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ՝ բռնության և սպառնալիքների ազդեցության տակ:

27. Հինգերորդ բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ քրեական գործի քննությունը կատարել է ամբաստանյալներ Ա.Ստեփանյանի և Ա.Մաթևոսյանի բացակայությամբ:

28. Վերոգրյալի հիման վրա պաշտպան Ռ.Սիրեկանյանը խնդրել է բեկանել

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը և ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանի ու Ա.Աբրահամյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

29. Վճռաբեկ դատարանը, ներկայացված բողոքների հիմքերի, հիմնավորումների և պահանջների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգեց այն հետևության, որ վճռաբեկ բողոքները պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորումներով.

30. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալներ Կ.Հովհաննիսյանի, Ա.Աբելյանի, Ա.Տերտերյանի, Ա.Ստեփանյանի, Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

Կ.Հովհաննիսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով, Ա.Աբելյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Ա.Տերտերյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով, Ա.Ստեփանյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, Ա.Մաթևոսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Ա.Աբրահամյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքներում հաստատված է, իսկ բողոքաբերների պատճառաբանությունները հերքված են Կ.Հովհաննիսյանի, Ա.Տերտերյանի, Ա.Ստեփանյանի, Ա.Մաթևոսյանի, Ա.Առաքելյանի, Է.Ավագյանի, Է.Հովհաննիսյանի, Ա.Շահբազյանի, Ա.Խալաթյանի, Վ.Սմբատյանի ցուցմունքներով, հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումներով, դատակենսաբանական և թմրանյութի փորձաքննության, դատաքիմիական փորձաքննությունների, դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով, Կ.Հովհաննիսյանի վարձակալած

բնակարանի խուզարկության, որպես իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված՝ Կ.Հովհաննիսյանի բնակարանի խուզարկության արդյունքում առգրավված երկու թղթի կտորների զննում կատարելու մասին և քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրություններով:

Այսպիսով, ամբաստանյալներ Կ.Հովհաննիսյանի, Ա.Աբելյանի, Ա.Տերտերյանի, Ա.Ստեփանյանի, Ա.Մաթևոսյանի և Ա.Աբրահամյանի կատարած հանցանքներն ապացուցված և նրանց մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանի հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերների փաստարկները (տե՛ս սույն որոշման 11-րդ, 17-րդ, 19-րդ, 23-րդ, 25-րդ կետերը) գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

31. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից Կ.Հովհաննիսյանի մեղադրանքի ծավալից հանված դրվագների մասով առաջին բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնազուրկ են և հերքվում են քրեական գործի նյութերով:

Այսպես՝ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի 2007 թվականի մայիսի 22-ի որոշմամբ թիվ 62200906 քրեական գործից անջատվել է Վ.Սմբատյանի և Ա.Ծառուկյանի վերաբերյալ մասն ու ուղարկվել դատարան: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2007 թվականի օգոստոսի 14-ին վերոգրյալ անձանց նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ: Վ.Սմբատյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ. «Ապօրինաբար թմրամիջոց ձեռք բերելու և գործածելու նպատակով այցելել է Կարեն Հովհաննիսյանի վարձակալած՝ Երևան քաղաքի Պուշկինի 3 շենքի 17 բնակարան, որտեղ Կարեն Հովհաննիսյանից ապօրինաբար ձեռք է բերել և ներարկվելու միջոցով գործածել է 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոցի պատրաստի լուծույթ»: Նշված դատավճիռը Վ.Սմբատյանի կողմից չի բողոքարկվել և նրա մասով մտել է օրինական ուժի մեջ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 14-ի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկվել է միայն Ա.Ծառուկյանի կողմից, ընդ որում՝ բողոքաբերը խնդրել է դատավճիռը փոփոխել պատժի մասով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 517/07 որոշմամբ բողոքը բավարարվել է, և Ա.Ծառուկյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխվել է:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանի համար անհասկանալի է առաջին բողոքաբերի այն փաստարկը, որ Կ.Հովհաննիսյանի անմեղությունը հաստատված

է Վ.Սմբատյանի նկատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 15-ին կայացված թիվ 517/07 որոշմամբ, որով, ըստ առաջին բողոքաբերի, հաստատված է նաև, որ Վ.Սմբատյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում և ձեռք են բերվել քննության խորթ մեթոդների կիրառմամբ:

32. Անդրադառնալով վկա Ա.Առաքելյանի հարցաքննության արձանագրությունների կեղծված լինելու վերաբերյալ առաջին բողոքաբերի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից նշված հարցի պարզաբանման նպատակով 2008 թվականի նոյեմբերի 29-ին նշանակված դատաձեռագրաբանական փորձաքննության արդյունքում կազմված եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված թվով 5 հարցաքննությունների արձանագրություններում տեղավորված՝ Ա.Առաքելյանի անունից ձեռագիր գրառումները կատարվել են միևնույն անձի կողմից, իսկ դրանցում առկա ստորագրությունները հավանաբար կատարվել են Ա.Առաքելյանի կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ նախաքննության մարմինը 2007 թվականի նոյեմբերի 14-ին որոշում է կայացրել մեղադրյալ Ա.Առաքելյանի կողմից գործածելու նպատակով ապօրինաբար խոշոր չափի հերոին տեսակի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու և այն առանց բժշկի թույլտվության գործածելու վերաբերյալ քրեական գործի մասը կարճելու և Ա.Առաքելյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ գործուն գղջալու պատճառաբանությամբ: Նշված որոշման նկարագրական մասում նշվել է, որ. «Նախաքննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի բնակիչ Արտյոմ Սարգսի Առաքելյանը 2006թ. օգոստոսի վերջին, Երևան քաղաքի Թումանյան փողոցի բնակիչ, «Պուչի» մականունով Կարեն Հովհաննիսյանից, առանց իրացնելու նպատակի, անհատույց, ապօրինի ձեռք է բերել, պահել և առանց բժշկի թույլտվության վերին շնչուղիները քաշելու միջոցով գործածել է 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոց:

Այնուհետև, շարունակելով հանցավոր գործունեությունը, 2006թ. հոկտեմբերի կեսերին, կրկին առանց իրացնելու նպատակի, ապօրինի հերոին տեսակի թմրամիջոց ձեռք բերելու նպատակով հանդիպել է Կարեն Հովհաննիսյանին, որն իր մոտ չունենալով թմրամիջոց, նրան ուղեկցել է Գ.Փարպեցի 9Ք շենքի մոտ, ուր այցելելուց հետո, նրան իրացրել է 0,25 գրամ հերոին տեսակի թմրամիջոց և տեղեկացրել, որ այն ձեռք է բերել իր ընկեր Աբել Ջոնի Աբելյանից (...)

Առաջադրված մեղադրանքում Ա.Առաքելյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և գործուն գղջալով, տվել է խոստովանական ցուցմունքներ»:

Վերոգրյալ որոշումը սահմանված կարգով ուղարկվել է Ա.Առաքելյանին և վերջինիս կողմից չի վիճարկվել:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանի համար կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ վիճարկվող հարցաքննության արձանագրություններում առկա փաստական տվյալները քրեական վարույթն իրականացնող մարմնին հայտնվել են

Ա.Առաքելյանի կողմից, իսկ Առաջին ատյանի դատարանի դատական քննության ժամանակ վկա Ա.Առաքելյանի տված ցուցմունքն այն մասին, որ թմրամիջոց ձեռք բերելու վերաբերյալ նախաքննության ընթացքում ընդհանրապես ցուցմունք չի տվել, իսկ քրեական գործում առկա, իր անվանը վերագրված ցուցմունքները ինքը չի գրել, և դրանցում առկա ստորագրություններն իրենը չեն, հիմնագուրկ է և նպատակ է հետապնդում ամբաստանյալներ Կ.Հովհաննիսյանին և Ա.Արեյանին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից:

33. Ինչ վերաբերում է առաջին բողոքաբերի այն փաստարկին, որ Ա.Առաքելյանի և Կ.Հովհաննիսյանի առերես հարցաքննությունը կատարվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, քանի որ առերեսմանը մասնակից չի դարձվել Կ.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի նյութերի համաձայն՝ պաշտպան Կ.Գրիգորյանը մի քանի անգամ տեղեկացվել է իր պաշտպանյալի հետ կատարվելիք քննչական գործողությունների մասին, սակայն չի ներկայացել, ինչի արդյունքում նշված քննչական գործողությունների կատարումը ձախողվել է:

Դրանից հետո վարույթն իրականացնող մարմինը 2007 թվականի մարտի 12-ին գրությամբ դիմել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ հայտնելով, որ պաշտպան Կ.Գրիգորյանը, պատշաճ կերպով տեղեկացված լինելով իր պաշտպանյալ Կ.Հովհաննիսյանի հետ կատարվելիք քննչական գործողությունների մասին, այդպես էլ չի ներկայացել: Նույն գրությամբ խնդրվել է պաշտպան Կ.Գրիգորյանին տեղեկացնել, որպեսզի 2007 թվականի մարտի 13-ին՝ ժամը 14-ին, նա ներկայանա վարույթն իրականացնող մարմնին՝ քննչական գործողություններին մասնակցելու նպատակով՝ հայտնելով, որ հակառակ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջների համաձայն կլուծվի մեղադրյալին մեկ այլ պաշտպանով ապահովելու հարցը:

2007 թվականի մարտի 13-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել մեղադրյալ Կ.Հովհաննիսյանի շահերի պաշտպանությունն իրականացնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատից փաստաբան հրավիրելու մասին: Որոշման պահանջը կատարելու նպատակով ներկայացել է փաստաբան Ռ.Սաֆարյանը, սակայն Կ.Հովհաննիսյանը վերջինիս ներկայությամբ հայտնել է, որ հրաժարվում է փաստաբան Ռ.Սաֆարյանի ծառայություններից և փաստաբան Կ.Գրիգորյանից բացի այլ պաշտպան ունենալ չի ցանկանում: Դրանից հետո միայն Կ.Հովհաննիսյանի մասնակցությամբ կատարվել են քննչական գործողություններ, այդ թվում՝ վերջինս առերես հարցաքննվել է վկա Ա.Առաքելյանի հետ:

Վերոգրյալի գնահատմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկա Ա.Առաքելյանի և մեղադրյալ Կ.Հովհաննիսյանի առերես հարցաքննության ժամանակ վերջինիս պաշտպանության իրավունքի խախտում տեղի չի ունեցել, իսկ այս առումով առաջին բողոքի հեղինակի փաստարկներն անհիմն են:

34. Անդրադառնալով Ա.Տերտերյանի մասնակցությամբ կատարված քննչա-

կան փորձարարության արձանագրության կեղծված լինելու մասին փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս պնդման հիմքում պաշտպանության կողմը դնում է այն հանգամանքը, որ Երևանի Ղ.Փարպեցի 9բ շենքն ունի երկու մուտք, իսկ արձանագրության մեջ նշված է, որ շենքն ունի մեկ մուտք:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված անճշտությունը՝ շենքի մուտքերի քանակը ոչ ճիշտ նշված լինելը, որևէ կերպ չի կարող ազդել քննչական փորձարարության արձանագրության մեջ տեղ գտած տեղեկությունների հավաստիության և Ա.Տերտերյանի կողմից գործի քննության ընթացքում տված, գործի օբյեկտիվ տվյալներից բխող ցուցմունքների արժանահավատության վրա:

35. Քննարկելով դատական ակտերի հիմքում դրված ապացույցների անթույլատրելիության վերաբերյալ առաջին բողոքաբերի փաստարկները (տես սույն որոշման 13-րդ կետը), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք նույնպես հիմնագուրկ են:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վկա Է.Հովհաննիսյանը դեռևս նախաքննության ժամանակ առերես հարցաքննվել է ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանի հետ և ամբողջությամբ պնդել իր ցուցմունքները: Ընդ որում, նշված առերես հարցաքննությանը մասնակցել է նաև Կ.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը, և պաշտպանության կողմը պատշաճ հնարավորություն է ունեցել հարցաքննելու նշված վկային:

Ինչ վերաբերում է վկա Է.Հովհաննիսյանի՝ դատարան չներկայանալուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը համապատասխան որոշում է կայացրել վերջինիս դատարան բերման ենթարկելու մասին, սակայն որոշման պահանջը հնարավոր չի եղել կատարել, քանի որ Է.Հովհաննիսյանը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Անդրադառնալով նախաքննության մարմնի կողմից Ա.Խալաթյանի և Կ.Հովհաննիսյանի միջև առերես հարցաքննություն չկատարելու, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի պահանջների խախտում թույլ տալու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի նախաքննության սկզբնական փուլում վերոգրյալ անձանց ցուցմունքների միջև էական հակասություններ չեն եղել: Կ.Հովհաննիսյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և մանրամասն ցուցմունքներ տվել Ա.Խալաթյանին թմրամիջոց իրացնելու վերաբերյալ: Նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել նաև Ա.Խալաթյանը, հետևաբար նրանց միջև առերես հարցաքննություն անցկացնելու անհրաժեշտություն չի եղել:

Քրեական գործի քննության ընթացքում Ա.Խալաթյանին մեղադրանք է առաջադրվել, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը, որից հետո վերջինս սկսել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Այդ իսկ պատճառով քրեական գործի հետագա քննության ընթացքում, երբ Կ.Հովհաննիս-

յանը փոխել է իր ցուցմունքները, հրաժարվելով նախկինում տվածներից, նախաքննության մարմինը գրկված է եղել Ա.Խալաթյանին Կ.Հովհաննիսյանի հետ առերեսելու հնարավորությունից:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման մասին բողոքաբերի փաստարկը:

36. Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի այն փաստարկին, որ Կ.Հովհաննիսյանի բնակարանի խուզարկությամբ հայտնաբերված թմրամիջոցները չէին կարող օգտագործվել որպես ապացույց, քանի որ քրեական գործի հետ միասին դատարան չեն ուղարկվել և դատարանի կողմից չեն հետազոտվել, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված թմրամիջոցը ստորադաս դատարանների կողմից որպես ապացույց չի օգտագործվել: Դատական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Հովհաննիսյանի մեղավորությունը հաստատող ապացույցների զանգվածում ներառվել են վերջինիս վարձակալած բնակարանի խուզարկության արձանագրությունը, նշված խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված թմրամիջոցի նկատմամբ իրականացված դատաքիմիական փորձաքննության եզրակացությունը, որոնք Առաջին ատյանի դատարանը, պահպանելով քրեական դատավարության օրենսդրության պահանջները, հետազոտել է դատաքննության ժամանակ:

37. Քննարկելով առաջին, երրորդ և հինգերորդ վճռաբեկ բողոքներում տեղ գտած փաստարկներն առ այն, որ սույն քրեական գործի նախաքննությունն իրականացնող մարմինը ապացույցներ է հավաքել բռնությունների, խաբեության և քննության խորթ այլ մեթոդների կիրառմամբ (տե՛ս սույն որոշման 14-րդ, 20-րդ, 26-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքների հեղինակների կողմից նշված փաստարկը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել, այդպիսիք բացակայում են նաև քրեական գործի նյութերում:

38. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ամբաստանյալ Կ.Հովհաննիսյանը կատարել է երկուսից ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքներ, որոնց մի մասը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ մյուս մասը՝ նույն հոդվածի 3-րդ մասով, ինչն ըստ էության բացառում է նրա կատարած արարքների որակումը միայն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կ.Հովհաննիսյանի կատարած հանցանքներին տրվել է ճիշտ քրեաիրավական որակում, իսկ այդ առումով առաջին բողոքաբերի փաստարկները (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը) անհիմն են:

39. Անդրադառնալով երրորդ, չորրորդ և հինգերորդ վճռաբեկ բողոքներում տեղ գտած այն դատողություններին, որ քրեական գործի քննության ընթացքում չի հայտնաբերվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատես-

ված հանցագործությունների առարկան՝ թմրամիջոցը, ինչը բերում է հանցակազմի բացակայության (տե՛ս սույն որոշման 21-րդ, 23-րդ, 25-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը կրկին արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալներին մեղսագրվող հանցագործությունները հաստատված են թույլատրելի ապացույցների բավարար ամբողջությամբ, որոնց առկայության պայմաններում թմրամիջոցի բացակայությունն ինքնին չի կարող վկայել նրանց գործողություններում հանցակազմի բացակայության մասին:

40. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով վերաքննիչ բողոքները վարույթ է ընդունել և քննության նշանակել վճռաբեկության կարգով: Դատավարության մասնակիցները պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի ժամանակի և տեղի մասին: Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը կաշկանդված չի եղել դատավարության մասնակիցների ներկայությամբ, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հինգերորդ բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ քրեական գործի քննությունը կատարել է ամբաստանյալներ Ա.Ստեփանյանի և Ա.Մաթևոսյանի բացակայությամբ (տե՛ս սույն որոշման 27-րդ կետը), նույնպես անհիմն է:

41. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքներում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերների փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքները պետք է թողնել առանց բավարարման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Ամբաստանյալներ Կարեն Ալեքսանդրի Հովհաննիսյանի, Աբել Ջոնի Աբելյանի, Ալեքսան Սամվելի Տերտերյանի, Արթուր Արշալույսի Ստեփանյանի, Արսեն Վաչագանի Մաթևոսյանի և Արմեն Հակոբի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մարտի 22-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԴ/0001/11/10
վերաքննիչ քրեական դատարանի
ԼԴ/0001/11/10 որոշում
նախագահող դատավոր՝ Ռ.Ազարյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
(այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010թ. մայիսի 12-ի որոշման դեմ դիմող
Արթուր Սաքունցի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
նախագահ Ա.Սաքունցը 2010թ. փետրվարի 16-ին դիմում է ներկայացրել Լոռու մար-
զի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առա-
ջին ատյանի դատարան), հայտնելով հետևյալը.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ-
ներում հասարակական դիտորդական խմբի անդամ Միքայել Արամյանի հետ

2009թ. նոյեմբերի 8-ին ինքն այցելել է «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ: Այցելության ընթացքում իրենք հանդիպել են Վլադիմիր Տոնոյանին և հասցրել հայտարարած Արմեն Մելքոնյանին: Վերջինները տեղեկացրել են, որ իրենք ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով հարուցված քրեական գործով 2009թ. սեպտեմբերի 29-ին ձերբակալվել և ժամը 5⁰⁰-ից մինչև ժամը 17⁰⁰-ը պահվել են ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժնում: Այնտեղ, ըստ Վլադիմիր Տոնոյանի, քաղաքացիական հագուստ կրող ոստիկանության աշխատակիցներն իր նկատմամբ կիրառել են բռնություններ՝ ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Ըստ Վ.Տոնոյանի հայտարարության՝ ոստիկանության աշխատակիցները ռետինե մահակներով հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Նրանց կիրառած բռնության հետևանքով նա մի քանի անգամ կորցրել է գիտակցությունը: Ըստ Արմեն Մելքոնյանի հայտարարության՝ ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժնում ոստիկանության աշխատակիցների կողմից նրա նկատմամբ կիրառվել են բռնություններ՝ ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները ռետինե մահակներով հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին: Արմեն Մելքոնյանի նկատմամբ կիրառված ծեծը փոքր ընդմիջումներով տևել է 4-5 ժամ: Ծեծի ընթացքում Արմեն Մելքոնյանը ոստիկանության աշխատակիցներին տեղեկացրել է, որ իր գլուխը վիրահատված է, բայց ոստիկանության աշխատակիցները որևէ ուշադրություն չեն դարձրել դրան և շարունակել են ծեծը: Վլադիմիր Տոնոյանը «Վանաձոր» ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում ենթարկվել է բժշկական զննության, ուղարկվել է ռենտգեն հետազոտության, քանի որ նրա առողջական վիճակը անհանգստություն է առաջացրել ՁՊՎ-ի աշխատակիցների մոտ:

2009թ. սեպտեմբերի 30-ին Արմեն Մելքոնյանը տեղափոխվել է «Վանաձոր» ՁՊՎ, որտեղ, ՀՀ ոստիկանության Սպիտակի բաժնում նրա նկատմամբ կիրառված ծեծի արդյունքում, առողջական վիճակը վատացել է, ժամը 13⁰⁰-14⁰⁰-ի սահմաններում «Վանաձոր» ՁՊՎ-ից նրան տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց, որտեղ մարմնի վրա կոտրվածքներ ունենալու կասկածանքով իրականացվել է ռենտգեն հետազոտություն, որի արդյունքում կոտրվածքներ չեն հայտնաբերվել: 2009թ. սեպտեմբերի 30-ի գիշերը Արմեն Մելքոնյանի առողջական վիճակը այնքան է վատացել, որ ոստիկանության աշխատակիցները նրա ցավերը մեղմելու նպատակով հանգստացնող կաթիլներ են տվել:

2009թ. նոյեմբերի 11-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ոստիկանության Սպիտակի բաժնի աշխատակիցների կողմից Վլադիմիր Տոնոյանի և Արմեն Մելքոնյանի նկատմամբ անօրինական գործողություններ իրականացնելու վերաբերյալ:

2009թ. նոյեմբերի 23-ին պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ վերը նշված հաղորդումն ուղարկվել է Լոռու մարզի դատախազության քննարկմանը:

2009թ. նոյեմբերի 25-ին Լոռու մարզի դատախազությունից ստացվել է թիվ 2/537-09 գրությունը, ըստ որի՝ ներկայացված հաղորդումն ուղարկվել է Լոռու մարզի քննչական բաժին:

2010թ. հունվարի 25-ին դիմումատուն ստացել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչ Է.Կարապետյանի 2010թ. հունվարի 13-ի որոշումը, ըստ որի՝ Արմեն Մելքոնյանը և Վլադիմիր Տոնոյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ իրենց մարմնի վրա առկա վնասվածքները ստացել են սայթաքելու և վայր ընկնելու հետևանքով:

2. Ա.Սաքունցը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա դիմում ներկայացնելով Առաջին ատյանի դատարան, խնդրել է վերացնել Վլադիմիր Տոնոյանի կողմից մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչ Է.Կարապետյանի կողմից 2010թ. հունվարի 13-ին կայացված որոշումը:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 9-ի որոշմամբ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահի դիմումը բավարարվել է. Վլադիմիր Տոնոյանի կողմից մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ քրեական հետապնդում չիրականացնելու մասին Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Է.Կարապետյանի 2010թ. հունվարի 13-ի որոշումը վերացվել է:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է բերել Լոռու մարզի դատախազության դատախազ Ս.Տոնոյանը:

Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշմամբ դատախազի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 9-ի որոշումը բեկանվել է, իսկ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչ Է.Կարապետյանի 2010թ. հունվարի 13-ի որոշումը վերացնելու վերաբերյալ Ա.Սաքունցի դիմումը՝ մերժվել:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմող Ա.Սաքունցը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Ա.Սաքունցի դիմումի քննության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ քննիչ Է.Կարապետյանն իր կողմից հարուցված քրեական գործի շրջանակներում հավաքել է մի շարք ապացույցներ Վլադիմիր Տոնոյանի կողմից մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ, սակայն քրեական հետապնդում չիրականացնելու մասին

որոշում կայացնելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիմնարար սկզբունքներն ու դրույթները, լրիվ և բազմակողմանի քննություն չի կատարել առկա հակասությունները պարզելու կապակցությամբ, ոստիկանների կողմից տրված ցուցմունքներին տվել է առավել նշանակություն, և նվազ նշանակություն է տվել մեղադրյալների տված ցուցմունքներին:

6. Վերաքննիչ դատարանը դատական ստուգման արդյունքում հանգել է այն հետևության, որ. «Առաջին ատյանի դատարանը, ըստ էության քննելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի դիմումը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Է.Կարապետյանի՝ 2010 թվականի հունվարի 13-ի որոշման դեմ, և բավարարելով այն՝ քննության առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Է.Կարապետյանի՝ 2010 թվականի հունվարի 13-ի վերոհիշյալ որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին, հանգել է սխալ հետևության: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը բողոքը ըստ էության չպետք է քններ, այլ այն պետք է մերժեր՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները չկատարելու պատճառաբանությամբ (...):»

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

7. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի հետևանքով Արմեն Մելքոնյանը և Վլադիմիր Տոնոյանը զրկվել են իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշում է, որ դատախազ Ս.Տոնոյանի կողմից «վերաքննիչ բողոք է բերվել նյութական իրավունքի խախտման կապակցությամբ ներկայացված փաստական հանգամանքները Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որպես ապացույց գնահատելու կամ չգնահատելու մասով: (...) դատավարական իրավունքների խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքում որևէ պահանջ չի ներկայացվել»: Այս բողոք բերած անձը շեշտում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության ընթացքում նյութական իրավունքի խախտման փաստերին բացարձակապես չի անդրադարձել, այլ գործը քննել է բոլորովին այլ՝ դատավարական իրավունքի հիմքով:

Բողոքի հեղինակը փաստարկում է, որ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն՝ Հայաստանի

իշխանությունները պետք է իրականացնեն ոստիկանության աշխատակիցների կողմից անձին խոշտանգելու և նրա նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի վերաբերյալ փաստերի արդյունավետ քննություն: Մինչդեռ վատ վերաբերմունքի փաստերի առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու ընթացքը և հնարավորությունը ընդհատվել է, և դա հնարավոր է դարձել այն պատճառով, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի շրջանակներից:

8. Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 844 որոշմանը: Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ սահմանադրական դատարանը նախաքննության մարմնի գործողությունները և անգործությունը դատարան բողոքարկելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում դրված արգելքը վերացրել է, սակայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը «վերակենդանացրել է» այդ արգելքը, որով էլ սահմանափակել է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Ի հիմնավորումն իր փաստարկի, բողոքաբերը նշում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 844 որոշման վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած՝ «եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթի կիրառումը սահմանափակում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արտահայտել է անհասկանալի այն միտքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը վերաբերում է բացառապես քննիչի կամ դատախազի անգործությանը:

Ըստ բողոքաբերի, որևէ տրամաբանության մեջ չի տեղավորվում այն, թե ինչու «քննչական ծառայության անգործությունը դատարան բողոքարկելու միջնորդավորված ընթացակարգը դատարանի մատչելիության խնդիր է առաջացնում, իսկ նույն մարմնի որոշումների և գործողությունների դատարան բողոքարկելու համար նախապայմանի իրավակարգավորված առկայությունը դատարանի մատչելիության խնդիր չի առաջացնում»:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 9-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, իր 2010թ. մայիսի 12-ի որոշումը հիմնավորելով վերաքննիչ բողոքում չներկայացված փաստարկմամբ,

խախտե՞լ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

11. Այս իրավանորմից, *inter alia*, բխում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում:

Նպատակային մեկնաբանման ենթարկելով դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պարունակում է դատավարության մասնակցին տրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ:

12. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոք ներկայացրած անձն իր բողոքում ընդհանրապես չի անդրադարձել և անգամ չի հիշատակել այն հանգամանքը, որ քննիչի կայացրած որոշումը Ա.Սաքունցը չի բողոքարկել դատախազին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, մատնանշելով որոշումը վերադաս դատախազին բողոքարկված չլինելու հանգամանքը, որոշել է մասնակիորեն բավարարել դատախազի բողոքը, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. մարտի 9-ի որոշումը բեկանել, իսկ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչ Է.Կարապետյանի 2010թ. հունվարի 13-ի որոշումը վերացնելու վերաբերյալ Ա.Սաքունցի դիմումը՝ մերժել:

13. Սույն որոշման 12-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 11-րդ կետում սահմանված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումները պարունակում են էական փաստարկումներ, որոնք վերաքննիչ բողոքում ներկայացված չեն: Ուստի Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը:

14. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտակա-

նությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):»:

6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ գանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան (տե՛ս *Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի* գործով 2006 թվականի հուլիսի 20-ի ՄԻԵԳ վճիռը, գանգատներ թիվ 29458/04 և 29465/04):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

15. Սույն որոշման 14-րդ կետում շարադրված իրավական նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազ Ա.Տոնոյանի բողոքի քննության արդյունքում 2010թ. մայիսի 12-ի որոշումը կայացնելով՝ Վերաքննիչ դատարանը չի գործել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

II. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառությունը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշումը հակասո՞ւմ է արդյոք ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 844 որոշմանը:

17. ՄԳՈ-844 որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր է ճանաչել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ **նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով**, որով գործնականում մույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները»:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին

մասի «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող չի ճանաչվել «որոշումներին» և «գործողություններին» վերագրվող բովանդակության մասով, այլ ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչվել «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել *Արևիկ Մողրովյանի* վերաբերյալ 2010թ. փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշմամբ: Այդ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳ-Ռ-844 որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի միասնական կիրառության կապակցությամբ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) միջնորդական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն» (տե՛ս *Արևիկ Մողրովյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010թ. փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0076/11/09 որոշման 15-րդ կետը):

19. Հետևաբար, հիմք ընդունելով *Ա.Մողրովյանի* վերաբերյալ որոշմամբ հաստատված և սույն որոշմամբ վերահաստատված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ բողոքաբերի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԳ-Ռ-844 որոշմանը, քանի որ Վերաքննիչ դատարանում բողոքարկված դատական ակտը վերաբերել է ոչ թե քրեական հետապնդման մարմնի անգործությանը, այլ որոշմանը:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 10-15-րդ կետերում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ այն հիմք է դատական ակտը բեկանելու և գործը վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի դիմումը մերժելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մայիսի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ/0301/01/09
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԳ/0301/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Գանիելյան,
Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

27 օգոստոսի 2010 թվական ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Լևոնի Սարուխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի օգոստոսի 29-ին Լոռու մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 19128109 քրեական

գործը՝ ինքնությունը չպարզված անձի կողմից Կարեն Սարուխանյանի առողջությանը վնաս պատճառելու դեպքի առթիվ:

2009 թվականի հոկտեմբերի 7-ին Արեն Արայի Անանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ՝ Կարեն Սարուխանյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու մեղադրանքով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2009 թվականի հոկտեմբերի 28-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել թիվ 19128109 քրեական գործի նյութերով տուժող Կարեն Սարուխանյանի կողմից սուտ ցուցմունքներ տալու դեպքի առթիվ հարուցել նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով, այն առանձնացնել առանձին վարույթ և շնորհել թիվ 19132709 համարը:

2009 թվականի հոկտեմբերի 29-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել թիվ 19128109 քրեական գործը միացնել թիվ 19132709 քրեական գործին, և նախաքննությունը շարունակել թիվ 19132709 համարի տակ:

3. 2009 թվականի նոյեմբերի 20-ին Կարեն Սարուխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի դեկտեմբերի 5-ին Կ.Սարուխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի դեկտեմբերի 25-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել թիվ 19132709 քրեական գործից անջատել Արեն Անանյանի վերաբերյալ գործի նյութերը, և նախաքննությունը շարունակել թիվ 19128109 քրեական գործի համարով:

2009 թվականի դեկտեմբերի 29-ին Կ.Սարուխանյանի վերաբերյալ թիվ 19132709 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

4. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճռով Կարեն Սարուխանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է:

5. Մեղադրող Մ.Մովսիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի մայիսի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի արդարացման դատավճիռը:

6. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

2010 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. 2009 թվականի հոկտեմբերի 7-ին թիվ 19128109 քրեական գործով Արեն Արայի Անանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ «նա 2009 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 14-ի սահմաններում Վանաձոր քաղաքի «Ձոռիվածների հուշարձանի» տարածքում, անձնական անբարյացակամ հարաբերությունների հողի վրա առաջացած վիճաբանության ընթացքում, մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ, իր մոտ եղած սուր ծակող-կտրող գործիքով երեք անգամ հարվածել է Վանաձոր քաղաքի բնակիչ Կարեն Լևոնի Սարուխանյանի կրծքավանդակի ձախ և մեկ անգամ կրծքավանդակի աջ կեսերին, ինչպես նաև մեկ անգամ ձախ նախաբազկի և աջ արմնկային հողի շրջաններին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածք» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 30-31 էջեր):

8. 2009 թվականի օգոստոսի 31-ին թիվ 19128109 քրեական գործով որպես տուժող հարցաքննվելիս Կարեն Սարուխանյանը հայտարարել է, որ ինքը տուժող չէ, ինքը վայր է ընկել և հրաժարվում է ցուցմունք տալուց (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, էջ 15):

2009 թվականի հոկտեմբերի 15-ին թիվ 19128109 քրեական գործով որպես տուժող լրացուցիչ հարցաքննվելիս Կարեն Սարուխանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Արեն անունով տղա չի ճանաչում, 2009 թվականի օգոստոսի 27-ին ինքն Արեն անունով տղայի հետ Վանաձոր քաղաքի «Ձոռիվածների հուշարձան» կոչվող վայրում չի վիճաբանել, նրան փայտով ծեծի չի ենթարկել, և ոչ ոք իրեն դանակով չի հարվածել: Ինքը մարմնական վնասվածք է ստացել վերոնշյալ վայրում վազելու ընթացքում (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 39-41 էջեր):

9. Թիվ 19128109 քրեական գործով ստացված փորձագետի թիվ 127/Հ եզրակացության համաձայն՝ «1. Կ.Լ.Սարուխանյանի մարմնական վնասվածքները՝ կրծքավանդակի ձախ կեսի թվով 3 և կրծքավանդակի աջ կեսի թվով 1, ինչպես նաև ձախ նախաբազկի և աջ արմնկային հողի շրջանների 1-ական ծակած-կտրած վերքերը, որոնցից կրծքավանդակի ձախ կեսի թվով 1 և կրծքավանդակի աջ կեսի վերքերը հանդիսանում են կրծքավանդակի խոռոչ թափանցող և առաջացրել են երկկողմանի պնևմոթորաքս, հասցվել են սուր ծակող-կտրող գործիքով կամ գործիքներով, հնարավոր է դանակով, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետին, որոնք առաջացրել են առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

2. Ելնելով վնասվածքների առանձնահատկություններից բացառվում է դրանց

պատճառումը վայր ընկնելու հետևանքով» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 28-29 էջեր):

10. Անհայտ անձի կողմից Կարեն Սարուխանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված թիվ 19128109 քրեական գործով հարցաքննվելիս վկա Ս.Սրապյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Գարիկ Նազարյանից տեղեկացել է, որ Կ.Սարուխանյանը և Ա.Անանյանը Կ.Սարուխանյանի մեքենայով բարձրացել են Վանաձոր քաղաքի «Չոկվածների հուշարձան» կոչվող վայր և վիճաբանել: Մի փոքր անց թաղամասի երեխաներից տեղեկացել է, որ Արեն Անանյանը Վանաձոր քաղաքի «Չոկվածների հուշարձան» կոչվող վայրում դանակահարել է Կարեն Սարուխանյանին (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 16-18 էջեր):

Անհայտ անձի կողմից Կարեն Սարուխանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված թիվ 19128109 քրեական գործով հարցաքննվելիս վկա Գ.Նազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Արեն Անանյանը նստել է Կարեն Սարուխանյանին պատկանող ավտոմեքենան և միասին հեռացել են: Մոտ մեկ ժամ անց թաղամասի երեխաներից լսել է, որ Ա.Անանյանը Կ.Սարուխանյանին դանակահարել է, իսկ վերջինիս արյունոտված տարել են հիվանդանոց (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 22-25 էջեր):

Նույն քրեական գործով հարցաքննվելիս վկա Հ.Մարտիրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Գարիկ Նազարյանից տեղեկացել է, որ Կ.Սարուխանյանը և Ա.Անանյանը Կ.Սարուխանյանի մեքենայով հեռացել են: Որոշ ժամանակ անց թաղամասի բնակիչների խոսակցությունից լսել է, որ վերջիններս Վանաձորի «Չոկվածների հուշարձան» կոչվող վայրում վիճել են (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 19-21 էջեր):

11. Թիվ 19132709 քրեական գործով մեղադրական եզրակացության համաձայն՝ «(...) Կարեն Լևոնի Սարուխանյանը Լոռու մարզի քննչական բաժնի վարույթում քննվող թիվ 19128109 քրեական գործով հանդես գալով որպես տուժող՝ նախաքննության ընթացքում գործի հանգամանքների վերաբերյալ 2009 թվականի օգոստոսի 31-ին և հոկտեմբերի 15-ին նույն քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող Արեն Անանյանի ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ տվել է սուտ ցուցմունքներ առ այն, որ իր առողջությանը ծանր վնաս է պատճառվել վայր ընկնելու հետևանքով, ինչը բացառվում է, քանի որ վնասվածքները հասցվել են սուր ծակող-կտրող գործիքով:

Այսինքն՝ Կարեն Սարուխանյանը կատարել է արարք, որը նախատեսված է ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: (...)» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, էջ 105):

Թիվ 19132709 քրեական գործով մեղադրական եզրակացության մեջ որպես Կ.Սարուխանյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցներ, ի թիվս այլոց, նշվել են վկաներ Սուրեն Սրապյանի, Գագիկ Նազարյանի և Հովհաննես Մար-

տիրոսյանի՝ անհայտ անձի կողմից Կարեն Սարուխանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով տված ցուցմունքները (տե՛ս, քրեական գործ թիվ 19132709, 103-104 էջեր):

12. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցագործության՝ սուտ ցուցմունք տալու հանցակազմը և դրա չորս հատկանիշները, արձանագրել է, որ «Սույն հանցագործության համար պարտադիր տարրերի թվարկմամբ կրկին անգամ փաստվեց, որ սուտ ցուցմունք տալու համար քրեական գործ հնարավոր կլինի հարուցել միայն դատաքննության արդյունքներով կայացված վերջնական դատական ակտի գոյության պայմաններում, քանի որ միայն դրանով միաժամանակ կհաստատվի կամ չի հաստատվի օրենքով նախատեսված հատկանիշների գոյությունը կոնկրետ արարքի մեջ, նաև հանցակազմի առկայությունն այդ նույն արարքի մեջ:

Նախաքննության մարմնի կողմից Կարեն Սարուխանյանին առաջադրված է ՀՀ Քրեական օրենսգրքի 338 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք, մինչդեռ նրա արարքում վերը նշված հանցակազմի տարրերից բացակայում են օբյեկտը, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, քանի որ դրանց գոյությունը կարող է հաստատվել միայն Արեն Անանյանի վերաբերյալ քրեական գործի դատաքննության արդյունքներով կայացված դատական ակտով: (...)

(...) Կարեն Սարուխանյանի արարքում բացակայում են հանցագործության հատկանիշները՝ հետևաբար նաև հանցակազմը, ինչը հիմք է տալիս ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում նրան ճանաչել անպարտ և արդարացնել: (...)» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, էջ 237):

Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա է նաև հետևյալ ձևակերպումը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում: Մինչդեռ նախաքննության փուլում արդեն իսկ վկաների ցուցմունքներին ու փորձագետի եզրակացությանը կանխակալ մոտեցում է ցուցաբերվել և նրանց տրվել է առավել նշանակություն տուժողի ցուցմունքի նկատմամբ: (...)» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, էջ 236):

13. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) սույն գործով սուտ ցուցմունք տալու համար քրեական գործ հնարավոր կլինի հարուցել միայն դատաքննության արդյունքներով կայացված վերջնական դատական ակտի գոյության պայմաններում, քանի որ միայն նշված պայմաններում կհաստատվի կամ կհերքվի օրենքով նախատեսված հատկանիշների գոյությունը կոնկրետ արարքի մեջ, նաև

հանցակազմի առկայությունն այդ նույն արարքի մեջ: (...)

Վերաքննիչ դատարանը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանը՝ գործով ձեռք բերված և դատաքննության մեջ հետազոտված ապացույցների գնահատմամբ և դատական ակտում շարադրված պատճառաբանություններով, հանգել է ճիշտ հետևության և Կարեն Լևոնի Սարուխանյանի նկատմամբ կայացրել արդարացման դատական ակտ: (...)» (տե՛ս քրեական գործ թիվ 19132709, 287-288 էջեր):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

14. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

15. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի բխում սուտ ցուցմունքի հանցակազմի օրենսդրական բնութագրից:

Համաձայն բողոքի՝ սուտ ցուցմունքի հանցակազմը տարածվում է ոչ միայն դատարանում ցուցմունք տալու դեպքերի, այլ նաև քրեական դատավարության մինչդատական վարույթի ընթացքում ցուցմունքներ տալու նկատմամբ, հետևաբար, Վերաքննիչ դատարանը, նշելով, որ սուտ ցուցմունք տալու օբյեկտը արդարադատությունն է, քրեաիրավական տեսանկյունից ճիշտ չի մեկնաբանել «արդարադատություն» եզրույթը:

16. Անդրադառնալով սուտ ցուցմունք տալու հանցակազմի ավարտման պահին՝ բողոքաբերը նշել է, որ ժամանակակից քրեական իրավունքում հանրաճանաչ է դարձել այն մոտեցումը, որի համաձայն՝ սուտ ցուցմունք տալու հանցագործությունն ավարտված է համարվում հարցաքննության արձանագրությունը ստորագրելու պահից, ինչը նշանակում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը, մինչդատական վարույթում սուտ ցուցմունքի հատկանիշներ պարունակելու դեպքում, ղեկավարվելով քրեադատավարական նորմերով, պարտավոր է հարուցել քրեական գործ և լուծել դրա հետագա ընթացքը:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է անում, որ հիմնական քրեական գործով դատական ակտի բացակայությունը չի կարող խոչընդոտել քրեական հետապնդման մարմնին անհապաղ արձագանքելու և քրեաիրավական գնահատական տալու սուտ ցուցմունքի հատկանիշներ պարունակող արարքին, և փաստարկում, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա դատողությունների արդյուն-

քում խախտվում է քրեական դատավարությունում դատական ակտերի նախադատելիության անթույլատրելիության մասին պահանջը: Բացի այդ, սուտ ցուցմունք տալու համար քրեական հետապնդում հարուցելու հարցը հիմնական քրեական գործով կայացվող դատական ակտի հետ կապելու դեպքում խախտվում է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:

17. Բացի այդ, բողոքաբերը վիճարկել է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա այն դատողությունը, որ գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատմամբ Առաջին ատյանի դատարանը ճիշտ դատավճիռ է կայացրել:

Բողոք բերած անձի պնդմամբ, Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ Առաջին ատյանի դատարանը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասին, անթույլատրելի է համարել նախաքննության փուլում մի շարք ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը և դրանց Կ.Սարուխանյանի ցուցմունքի նկատմամբ առավել նշանակություն տալը, սակայն Առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել նույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ապացույցները ներքին համոզմամբ գնահատելու պահանջին: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր իրավական վերլուծությունները կատարելիս անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

18. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 3-ի որոշումը և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Սուտ ցուցմունք տալու հանցակազմը

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Կ.Սարուխանյանի նկատմամբ սուտ ցուցմունք տալու համար քրեական գործ հնարավոր կլինի հարուցել միայն Ա.Անանյանի կողմից Կ.Սարուխանյանին մարմնական վնասվածք պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով վերջնական դատական ակտ կայացնելուց հետո:

20. 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածը (2007թ. խմբագրությամբ) սահմանում է.

«1. Քաղաքացիական գործով սուտ ցուցմունք տալը, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալը, քրեական կամ քաղաքացիական գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը՝ պատժվում է [համապատասխան պատժով]:»

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ,

2) զուգորդվել է այլ արհեստական ապացույցներ ստեղծելով,

3) կատարվել է շահադիտական դրդումներով՝ պատժվում է [համապատասխան պատժով]:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցակազմին համարժեք հանցակազմը նախատեսված էր 1961 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած և մինչ 2003 թվականի օգոստոսի 1-ը գործողության մեջ եղած ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում քննության ժամանակ կամ դատարանում վկայի կամ տուժողի կողմից ակնհայտ սուտ ցուցմունք տալու, կամ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, ինչպես նաև թարգմանի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն էր նախատեսում նույն արարքների համար, որոնք զուգորդված են եղել առանձնապես վտանգավոր պետական, կամ այլ ծանր հանցագործության մեջ մեղադրելու հետ, կամ եթե կատարվել են շահադիտական նպատակով, կամ այլ ստոր դրդումներով, կամ զուգորդված են եղել արհեստականորեն մեղադրանքի ապացույցներ ստեղծելու հետ:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը քննարկվող հանցակազմը սահմանող հոդվածում չէր պարունակում որևէ դրույթ, որը կբացառեր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

21. Վճռաքեկ դատարանը գտնում է, որ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածի նախկին և ներկա ձևակերպումների միջև առկա է էական բովանդակային տարբերություն. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու անհնարինության երկու դեպք՝

1) եթե նրա արարքը (տվյալ պարագայում՝ տված ցուցմունքը) նշանակություն չի կարող ունենալ գործի լուծման համար,

2) եթե նա գործի նախնական քննության կամ դատական քննության փուլերում, ընդհուպ մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին կհայտնի իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:

22. Սուտ ցուցմունք տալու հանցակազմի օրենսդրական ձևակերպման մեջ 3-րդ մասի ավելացումը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես խնդրո առարկայի նկատմամբ օրենսդրի մոտեցման փոփոխություն՝ կապված սուտ ցուցմունք տալու հանցակազմի պարտադիր հատկանիշները ոչ միայն խմբագրական փոփոխության ենթարկելու հետ:

Այսպես, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի ներքո սուտ ցուցմունք տալու հանցակազմն առկա էր հարցաքննության՝ սուտ ցուցմունք պարունակող արձանագրությունը ստորագրելու պահից: Դրան հակառակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավադրույթի լույսի ներքո նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի մեկնաբանությունից բխում է, որ.

ա) սուտ ցուցմունք տալու հանցակազմի պարտադիր տարր է հանդիսանում անձի կողմից տված ցուցմունքի՝ հիմնական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունենալու հանգամանքը, որը, անհերքելիորեն, կարող է պարզաբանվել միայն հիմնական գործով ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ և գնահատմամբ,

բ) հիմնական գործի քննության ընթացքում, ընդհուպ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտ կայացնելը, անձը հնարավորություն ունի հարցաքննվելու և այլ ցուցմունք տալու, կամ կարող է հայտնել իր տված ցուցմունքի սուտ լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու դեպքերում էլ, քանի դեռ իրագործված չեն օրենսդրի կողմից առաջադրված պայմանները, խոսք չի կարող լինել սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության մասին:

23. Խնդրո առարկա հարցի կապակցությամբ օրենսդրի նոր մոտեցումը պայմանավորված է այնպիսի հիմնարար Սահմանադրական արժեքներով, ինչպիսիք են արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից (ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդված) և արդար դատաքննությունը (ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված), ինչպես նաև այդ Սահմանադրական արժեքների հետևողական կենսագործման հրամայականով:

Մասնավորապես, միայն դատարանի կողմից արդարադատության իրականացումը ենթադրում է, որ մինչդատական վարույթում արված հետևությունները նախնական բնույթ են կրում և իրենցով փաստացի չեն կարող փոխարինել վերջնական դատական ակտով կատարվող հետևություններին: Եթե որևէ ցուցմունք գնահատվի որպես «սուտ» նախքան տվյալ գործով վերջնական դատական ակտով այդ ցուցմունքի գնահատումը, ապա դա կխաթարի արդարադատության Սահմանադրական գործառույթի բուն էությունը:

Բացի այդ, եթե քրեական գործով մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմինը հնարավորություն ունենա քրեական հետապնդում հարուցել ենթադրաբար սուտ ցուցմունք տված քրեական դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ, ապա քրեական հետապնդման ենթարկվող անձը կարող է արդա-

րացված մտավախություն ունենալ առ այն, որ դա իր հանդեպ հոգեբանական ճնշում է՝ մեղադրանքի կողմի համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով: Այդ մտավախությունից դրդված՝ քրեական հետապնդման ենթարկվող դատավարությանը մասնակցող անձը կարող է փոխել իր ցուցմունքները մեղադրանքի կողմի համար ցանկալի եղանակով՝ անգամ քրեական հետապնդման մարմնի համապատասխան աշխատակիցների բարեխղճության պարագայում: Այդպիսով կխաթարվի արդար դատաքննության Սահմանադրական արժեքը և հանրային շահը:

24. Սույն որոշման 21-23-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո:

Հետևաբար, իրավաչափ է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Կ.Սարուխանյանի նկատմամբ սուտ ցուցմունք տալու համար քրեական գործ հնարավոր կլինի հարուցել միայն Ա.Անանյանի կողմից Կ.Սարուխանյանին ծանր մարմնական վնասվածք պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով վերջնական դատական ակտ կայացնելուց հետո:

II. Ապացույցների գնահատումը

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ապացույցների գնահատմանը վերաբերող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի և 127-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ ստորադաս դատարանների մեկնաբանությունները:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:

27. Մեջբերված դրույթները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ և 127-րդ հոդվածները համակարգային վերլուծության են ենթարկվել *Մ.Հովհաննիսյանի և Ա.Սարտիքոսյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ: Նշված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ.

«(...) Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և

հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: (...)» (տե՛ս *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵՔԲԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

«(...) [Ա]պացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով:

Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատավարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում: (...)» (տե՛ս Վճռաբեկ դատարանի ԵՔԲԴ/0632/01/08 որոշման 19-րդ կետը):

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրել է, որ սույն գործի նախաքննության փուլում արդեն իսկ վկաների ցուցմունքներին ու փորձագետի եզրակացությանը կանխակալ մոտեցում է ցուցաբերվել և նրանց տրվել է առավել նշանակություն տուժողի ցուցմունքի նկատմամբ (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատողության հետ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

29. Սույն որոշման 22-23-րդ կետերով սահմանված, ինչպես նաև *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ որոշման մեջ արտահայտված և սույն որոշման 27-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն

որոշման 28-րդ կետում նշված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ապացույցների գնահատման կապակցությամբ ստորադաս դատարանների հետևությունները համապատասխանում են Վճռաբեկ դատարանի իրավական մոտեցումներին:

Հետևաբար, ապացույցների գնահատմանը վերաբերող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի և 127-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ ստորադաս դատարանների մեկնաբանություններն իրավաչափ են:

III. Ապացույցների թուլատրելիությունը

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե որպես ապացույց օգտագործված՝ վկաներ Գ.Նազարյանի, Ս.Սրապյանի և Հ.Մարտիրոսյանի ցուցմունքները սույն գործով հանդիսացե՞լ են արդյոք թուլատրելի ապացույցներ:

31. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հարցաքննությունից առաջ քննիչը հավաստիանում է վկայի ինքնության մեջ, տեղեկացնում, թե որ գործով է նա կանչվել և նախազգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ: Գրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը»:

32. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից երևում է, որ նախքան հարցաքննությունը վկան պետք է տեղեկացվի, թե ո՞ր դեպքի (փաստի) առթիվ հարուցված քրեական գործով և պարզաբանման ենթակա ո՞ր հանգամանքների շուրջ է հարցաքննվում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վկան նախազգուշացվում է տվյալ գործով իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայի ցուցմունքը կդիտվի որպես քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված, եթե նախքան ցուցմունք վերցնելը վկան չի տեղեկացվել թե ո՞ր քրեական գործով է հարցաքննվում:

33. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վկաներ Գ.Նազարյանը, Ս.Սրապյանը և Հ.Մարտիրոսյանը հարցաքննվել են Կարեն Սարուխան-

յանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված թիվ 19128109 քրեական գործով: Կ.Սարուխանյանի կողմից սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ հարուցված քրեական գործով նրանք որպես վկա չեն հարցաքննվել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Սույն գործով կազմված մեղադրական եզրակացության մեջ նշվել է, որ Կ.Սարուխանյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորվել է վկաներ Գ.Նազարյանի, Ս.Սրապյանի և Հ.Մարտիրոսյանի՝ Կարեն Սարուխանյանի առողջությանը վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով տված ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

34. Հիմք ընդունելով սույն որոշման 32-րդ կետում առկա վերլուծությունը, սույն որոշման 33-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկաներ Գ.Նազարյանի, Ս.Սրապյանի և Հ.Մարտիրոսյանի ցուցմունքները, որոնք սույն գործով որպես ապացույց են օգտագործվել, չեն եղել թույլատրելի ապացույցներ, քանի որ ձեռք են բերվել տվյալ քննչական գործողության՝ վկայի հարցաքննության կատարման կարգի էական խախտմամբ:

35. Ելնելով սույն որոշման 19-29-րդ կետերում շարադրված հիմնավորումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհրաժեշտ է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

36. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարեն Լևոնի Սարուխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի արդարացման դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԳ/0124/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան
դատավորներ՝ Մ.Ռեհանյան,
Ա.Խաչատրյան

ԵԷԳ/0124/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

**Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

27 օգոստոսի 2010 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էդուարդ Աշոտի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի մայիսի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Է.Ներսիսյանի պաշտպան Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի հունիսի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-

րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12122009 քրեական գործը:

2009 թվականի հունիսի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13129709 քրեական գործը:

2009 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ թիվ 13129709 և թիվ 12122009 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

2009 թվականի հոկտեմբերի 16-ին Էդուարդ Ներսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2009 թվականի նոյեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճռով Է.Ներսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով: Հանցանքների համակցությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Է.Ներսիսյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵՔԲԴ/0412/01/08 դատավճռով նշանակված 5 (հինգ) տարի 9 (ինը) ամիս 14 (տասնչորս) օր ազատազրկման ձևով պատժից 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը և պատիժ է սահմանվել ազատազրկում 8 (ութ) տարի ժամկետով: Նշված պատժի ժամկետին հաշվակցվել է նշված դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 23 (քսաներեք) օր ժամկետով ազատազրկումը, և Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 7 (յոթ) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2009 թվականի հոկտեմբերի 16-ից:

3. Ամբաստանյալ Է.Ներսիսյանի և նրա պաշտպան Ս.Հարությունյանի վերաբնիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ պաշտպան Ս.Հարությունյանի բողոքը բավարարել է մասնակիորեն: Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Է.Ներսիսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճիռը՝ նշանակված պատժի մասով փոփոխել է: Է.Ներսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ

մասի 3-րդ, 4-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով: Հանցանքների համակցությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Է.Ներսիսյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԶԲԴ/0412/01/08 դատավճռով նշանակված 5 (հինգ) տարի 9 (ինը) ամիս 14 (տասնչորս) օր ազատազրկման ձևով պատժից 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցվել է նշված դատավճռով սահմանված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով 2008 թվականի օգոստոսի 25-ից:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Է.Ներսիսյանի պաշտպան Ս.Հարությունյանը:

2010 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը պաշտպան Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճռով Է.Ներսիսյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2006 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, պատուհանի ապակին կտրելու միջոցով մուտք է գործել Ռոբերտ Մելքոնյանին պատկանող, Երևանի Էրեբունի այգեգործական ընկերության 12-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող ամառանոցի նկուղային տարածք և գողացել 29.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության լսպտեր, օդու թորման պղնձյա կաթսա և այգեգործական բուժանյութի սրկման սարք՝ Ռ.Մելքոնյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

2006 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Է.Ներսիսյանը գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, պատուհանի ապակին կտրելու միջոցով ապօրինի մուտք է գործել Իվետա Պետրոսյանին պատկանող, Երևանի Էրեբունի այգեգործական ընկերության 12-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող ամառանոցի նկուղային տարածք և գողացել 50.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 100 կգ մետաղյա ամրաններ և

մետաղալարեր՝ Ի.Պետրոսյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

Նույն ժամանակահատվածում Է.Ներսիսյանը գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, մետաղյա ցանկապատի վրայից ցատկելու միջոցով մուտք է գործել Ռ-ազմիկ Սահակյանին պատկանող, Երևանի Էրեբունի այգեգործական ընկերության 12-րդ փողոցի թիվ 18 հասցեում գտնվող ամառանոցի հողամաս և գողացել 20.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության այլումինե թիթեղներ՝ Ռ.Սահակյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

Բացի այդ, նույն ժամանակահատվածում Է.Ներսիսյանը գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, պատուհանի ապակին կտրելու միջոցով ապօրինի մուտք է գործել Արտակ Ներսիսյանին պատկանող, Երևանի Էրեբունի այգեգործական ընկերության 12-րդ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող ամառանոց և գողացել 150.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության այլումինե անկյունակներ, խողովակներ ու շինարարական գործիքներ՝ Ա.Ներսիսյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

Այնուհետև, նույն ժամանակահատվածում, Է.Ներսիսյանը գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, պատուհանի ապակին կտրելու միջոցով ապօրինի մուտք է գործել Սամվել Գալստյանին պատկանող, Երևանի Էրեբունի այգեգործական ընկերության 12-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող ամառանոց և գողացել 100.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության այլումինե անկյունակներ, շինարարական նյութեր և օղու թորման սարք՝ Ս.Գալստյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

Գրանից հետո, 2007 թվականի հոկտեմբերի 3-ին, Է.Ներսիսյանը գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, դուռը տեղահան անելու միջոցով, մուտք է գործել Գեորգի Առաքելյանին պատկանող, Երևանի Ջրաշեն այգեգործական ընկերությունում գտնվող ամառանոց և գողացել 50.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության այլումինե տակառ և օղու թորման սարք՝ Գ.Առաքելյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

Բացի այդ, 2007 թվականի նոյեմբեր ամսվա սկզբին Երևանի Օդակաճև այգու 3-րդ հատվածում Է.Ներսիսյանը Ստեփան Կարապետյանի առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, այն է՝ դանակի գործադրման սպառնալիքով, վերջինից պահանջել և ստացել է 95.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության «Նոկիա-7610» տեսակի բջջային հեռախոս և 2 գրամ քաշով պարանոցի ոսկյա շղթա, որից հետո դիմել է փախուստի՝ Ս.Կարապետյանին պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

6. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի թիվ ԵՔԲ-0224/01/08 դատավճռով Է.Ներսիսյանը 2007 թվականի սեպտեմբերի 13-ից նոյեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում կատարած հափշտակությունների համար ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-

ին, 4-րդ, 5-րդ կետերով, հանցանքների համակցությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2007 թվականի նոյեմբերի 9-ից:

7. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵՋՐԳ/0412/01/08 դատավճռով Է.Ներսիսյանը 2006 թվականի ամռանը և 2007 թվականի նոյեմբերին կատարած հափշտակությունների համար ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ, նշանակված պատժին գումարվել է առաջին՝ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի թիվ ԵՋՐԳ/0224/01/08 դատավճռով նշանակված 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ազատազրկում պատժից 4 (չորս) տարի 7 (յոթ) ամիս ժամկետով ազատազրկումը և Է.Ներսիսյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 7 (յոթ) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցվել է նշված դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ 9 (ինը) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով ազատազրկումը, և Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 9 (ինը) ամիս 14 (տասնչորս) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է թիվ ԵՋՐԳ/0412/01/08 քրեական գործով Է.Ներսիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու օրվանից՝ 2008 թվականի օգոստոսի 25-ից:

Որպես Է.Ներսիսյանի՝ առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մաս հաշվարկվել է 2007 թվականի նոյեմբերի 9-ից մինչև 2008 թվականի օգոստոսի 25-ն ընկած ժամանակահատվածը:

8. Սույն քրեական գործով ամբաստանյալ Է.Ներսիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշում է կայացվել 2009 թվականի հոկտեմբերի 16-ին:

9. Է.Ներսիսյանն անազատության մեջ է գտնվում 2007 թվականի նոյեմբերի 9-ից:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Ըստ բողոքաբերի, առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ իր պաշտպանյալի նկատմամբ ՀՀ

քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման հարցում թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը դատավճռով նշանակված 8 տարի վերջնական պատժի ժամկետին հաշվակցել է Երևանի քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԶԲԳ/0412/01/08 դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 23 (քսաներեք) օր ժամկետով ազատազրկումը և Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 7 (յոթ) օր ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով սույն գործով Է.Ներսիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելու օրվանից՝ 2009 թվականի հոկտեմբերի 16-ից:

Ապա բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարել է իր բողոքը և, Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանելով ազատազրկում 8 (ութ) տարի ժամկետով, պատժի սկիզբը հաշվել է 2008 թվականի օգոստոսի 25-ից: Սակայն, պատժի կրման սկիզբը 2008 թվականի օգոստոսի 25-ից հաշվարկելու դեպքում Է.Ներսիսյանի նկատմամբ սահմանված 8 տարի ազատազրկման ժամկետը կավարտվի 2016 թվականի օգոստոսի 25-ին, այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանի դատավճռով 2009 թվականի հոկտեմբերի 16-ից հաշվարկվող 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 7 (յոթ) օր ժամկետով ազատազրկման ժամկետը կլրանար 2016 թվականի մարտի 23-ին, այսինքն՝ ավելի քան հինգ ամիս շուտ: Փաստորեն, Վերաքննիչ դատարանի որոշմամբ ամբաստանյալ Է.Ներսիսյանի վիճակը վատթարացել է:

12. Բողոքի հեղինակի կարծիքով, դատական սխալի հանգեցրած սխալ հաշվակցումը թույլ է տրվել Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԶԲԳ/0412/01/08 դատավճռով, որով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի կիրառմամբ, Է.Ներսիսյանի նկատմամբ սահմանված վերջնական պատժի սկիզբը հաշվարկվել է ոչ թե 2007 թվականի նոյեմբերի 9-ից, այլ 2008 թվականի օգոստոսի 25-ից: Մինչդեռ, նկատի ունենալով, որ ինչպես նախորդ, այնպես էլ սույն գործով ամբաստանյալ Է.Ներսիսյանին մեղսագրված բոլոր հանցավոր արարքները կատարվել են 2006 և 2007 թվականների ընթացքում՝ այսինքն նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը, ուստի պատժի կրման սկիզբ պետք է հաշվվեր առաջին գործով անազատության մեջ գտնվելու օրվանից՝ 2007 թվականի նոյեմբերի 9-ից, որի փոխարեն պատժի սկիզբ է հաշվվել թիվ ԵԶԲԳ/0412/01/08 քրեական գործով Է.Ներսիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու օրը՝ 2008 թվականի օգոստոսի 25-ը:

Վերը շարադրվածից պաշտպանը հետևություն է արել, որ իր պաշտպանյալի՝ 2007 թվականի նոյեմբերի 9-ից կալանքի տակ գտնվելու պայմաններում, նրա նկատմամբ նշանակված վերջնական պատժի ժամկետին նախկինում կայացված դատավճռով նշանակված պատժի կրած մասի սխալ հաշվակցման արդյունքում վատթարացել է ամբաստանյալ Է.Ներսիսյանի վիճակը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ իր պաշտպանյալի նկատմամբ հանցանքների համակցությամբ նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ:

13. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 7-ի որոշումը բեկանել և փոփոխել, այն է՝ Ե.Ներսիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ համաչափ պատիժ սահմանել և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ՝ նախորդ դատավճռով նշանակված պատժի կրած մասը ճիշտ հաշվակցել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Ամբաստանյալ Է.Ներսիսյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու իրավաչափությունը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Է.Ներսիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պահպանվե՞լ են արդյոք հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի կանոնները (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

(...)

6. Պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.

2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

2. Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝

« (...)

3. Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց, (...):

(...):»:

16. Շարադրված դրույթների վերլուծությունից հետևում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պետք է լինի արդարացի, նշանակվի քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի կանոնները:

ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասը, ի թիվս պատիժ նշանակելու այլ կանոնների, ամրագրում է նաև հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ կանոններ, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է՝

1. նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու միջոցով,

2. նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

Իսկ այն դեպքում, երբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը, ապա պատժի ժամկետում հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը:

17. Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ կանոններն են.

1. քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել,

2. անձը պետք է մեղավոր ճանաչվի այնպիսի հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը,

3. հանցանքների համակցությամբ, յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժ պետք է նշանակի նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով,

4. վերջնական պատժի ժամկետին պետք է հաշվակցվի առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը:

18. Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը վերջնական

պատժի ժամկետին հաշվակցումը կարող է իրականացվել երկու եղանակով՝

1. դատարանը, վերջնական պատիժ նշանակելով, նշանակված պատժից հանում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով այդ դատավճիռը կայացնելու օրվանից,

2. դատարանը, վերջնական պատիժ նշանակելով, հաշվակցում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվելով առաջին դատավճռով սահմանված ժամկետից:

Թեև նշված երկու եղանակներից ցանկացածի ընտրության դեպքում նշանակված պատժի ժամկետները լրանալու առումով հետևանքները նույնն են՝ պատժի ժամկետները լրանալու օրերը համընկնում են, այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցելու եղանակի ընտրությունը կարևորվում է նաև նրանով, որ կախված եղանակի ընտրությունից, կարող են վրա հասնել դատապարտյալի համար անբարենպաստ և նրա վիճակը վատթարացնող այլ իրավական հետևանքներ: Մասնավորապես, այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները կիրառվում են այնպիսի անձի նկատմամբ, ով առաջին գործով կայացված դատավճռից հետո անընդմեջ գտնվում է անազատության մեջ, ապա վերը նշված երկու եղանակներից առաջինի կիրառման դեպքում դատապարտյալի՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունքը ծագում է ավելի ուշ, քան այն դեպքում, երբ երկրորդ կանոնի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատժի ժամկետի սկիզբը հաշվվում է առաջին դատավճռով սահմանված ժամկետից:

19. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ սույն գործով Է.Ներսիսյանին մեղսագրված հանցավոր արարքները նա կատարել է նախքան Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի և 2008 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճիռներով դատապարտվելը՝ 2006 թվականի օգոստոսից մինչև 2007 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում (տե՛ս սույն որոշման 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը):

Նշված արարքների համար Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճռով Է.Ներսիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 5 (հինգ) ամիս 7 (յոթ) օր ժամկետով, պատժի սկիզբը հաշվվելով 2009 թվականի հոկտեմբերի 16-ից:

Ընդ որում, Առաջին ատյանի դատարանը Է.Ներսիսյանի նկատմամբ առաջին (Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԶԳ/0412/01/08) դատավճռով նշանակված պատժի կրած մասը հաշվարկել է 2008 թվականի օգոստոսի 25-ից մինչև դատավճիռ կայացնելու օրը՝ 2010 թվականի մարտի 19-ը, սակայն պատժի սկիզբը 2010 թվականի մարտի 19-ից հաշվելու փոխարեն հաշվել է սույն գործով Է.Ներսիսյանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու օրվանից՝ 2009 թվականի հոկտեմբերի 16-ից: Արդյունքում 2009 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2010 թվականի մարտի 19-ն ընկած ժամանակահատվածը

կրկնակի է հաշվակցվել Է.Ներսիսյանի նկատմամբ նշանակված պատժին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, իրավացիորեն պատճառաբանելով, որ Է.Ներսիսյանի պատժի սկիզբը 2009 թվականի հոկտեմբերի 16-ից հաշվելով Առաջին ատյանի դատարանը փաստորեն վատթարացրել է Է.Ներսիսյանի վիճակը, նրա նկատմամբ սահմանված վերջնական պատժի՝ 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկման սկիզբն այս անգամ հաշվել է 2008 թվականի օգոստոսի 25-ից, ինչով չնայած ուղղել է վերոնշյալ կրկնակի հաշվակցման սխալը, սակայն իր հերթին ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնները կիրառելիս որպես առաջին դատավճիռ է դիտարկել Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵՋԲԳ/0412/01/08 դատավճիռը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

20. Փաստորեն, երկու դատական ատյաններն էլ անտեսել են այն հանգամանքը, որ Է.Ներսիսյանը նրան մեղսագրված հանցավոր արարքները կատարել է ոչ միայն նախքան Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի, այլև նախքան Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի դատավճիռ կայացնելը, որով պատժի կրման սկիզբ է սահմանվել 2007 թվականի նոյեմբերի 9-ը, և այդ օրվանից սկսած Է.Ներսիսյանն անընդմեջ գտնվել է անազատության մեջ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

21. Հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցելու կանոնների վերաբերյալ սույն որոշման 15-18-րդ և 20-րդ կետերում կատարված վերլուծությունը և 19-րդ կետում շարադրված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Է.Ներսիսյանի նկատմամբ հանցանքների համակցության կանոններով պատիժ նշանակելիս թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ, մասնավորապես.

ա) Է.Ներսիսյանի նկատմամբ կայացված առաջին դատավճիռ են դիտել Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 29-ի դատական ակտը, անտեսելով, որ սույն գործով Է.Ներսիսյանի նկատմամբ կայացված առաջին դատավճիռ է հանդիսանում 2008 թվականի հուլիսի 3-ի դատական ակտը,

բ) ամբաստանյալ Է.Ներսիսյանի նկատմամբ նշանակված պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցելու հարցում ստորադաս դատարանները ընտրել են վերջինիս համար անբարենպաստ և նրա վիճակը վատթարացնող եղանակ:

Արդյունքում, ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները, որով վատթարացվել է ամբաստանյալ Է.Ներսիսյանի վիճակը:

22. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պնդմանը, որ իր պաշտպանչալի նկատմամբ հանցանքների համակցությամբ նշանակվել է ակնհայտ խիստ

պատիժ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատական ատյանը պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձը բնութագրող տվյալների, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների գնահատմամբ, Է.Ներսիսյանի նկատմամբ նշանակել է համաչափ պատիժ:

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 21-րդ կետում նշված նյութական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 406-րդ հոդվածների իմաստով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

24. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնների միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Էդուարդ Աշոտի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մարտի 19-ի դատավճռի պատժի մասը փոփոխելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵՇԴ/0001/11/10
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան

ԵՇԴ/0001/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Արարատի Հայրապետյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 23-ի որոշման դեմ Ա.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 11128109 քրեական գործը:

2. 2009 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ քննչական բաժնի քննիչ Հ.Հովհաննիսյանը

որոշում է կայացրել «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու մասին:

3. 2009 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Երեւն Գարիբի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա, գտնվելով փորձաշրջանի մեջ, կրկին անգամ, 2009 թվականի փետրվարի 11-ին, չարաշահելով Ստյոպա Մելքոնյանի վստահությունը, վերջինիս պատկանող՝ 8.835.000 (ութ միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ արժողության «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի ավտոմեքենան գնելու պատրվակով, որպես նախավճար վճարելով 1.550.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, մնացած 7.285.000 (յոթ միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամը հետագայում վճարելու պայմանով և որպես լրացուցիչ վստահության ձեռք բերման եղանակ՝ կնքելով փոխառության պայմանագիր, հափշտակել է ավտոմեքենան և 2009 թվականի փետրվարի 16-ին գրանցելով իր անվամբ՝ նույն օրն այն վաճառել է Արթուր Հայրապետյանին, որից հետո դիմել է փախուստի՝ Ս.Մելքոնյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

4. 2009 թվականի դեկտեմբերի 16-ին Ա.Հայրապետյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին՝ խնդրելով վերացնել «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու մասին ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ քննչական բաժնի քննիչ Հ.Հովհաննիսյանի 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը:

Ա.Հայրապետյանի կողմից Երևան քաղաքի դատախազին հասցեագրված նշված բողոքը Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Է.Սադաթյանի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է:

5. 2010 թվականի հունվարի 14-ին Ա.Հայրապետյանը դիմում է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ քննչական բաժնի քննիչ Հ.Հովհաննիսյանի 2009 թվականի նոյեմբերի 24-ի՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը և իր սեփական ավտոմեքենան հանձնել իր տիրապետմանը:

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Ա.Հայրապետյանի բողոքը մերժվել է:

6. Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 26-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոքը՝ մերժել:

7. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 23-ի որոշման դեմ վճարել բողոք է բերել Ա.Հայրապետյանը:

2010 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 15-օրյա ժամկետ:

Ա.Հայրապետյանը 2010 թվականի մայիսի 18-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

8. 2009 թվականի փետրվարի 16-ին քաղաքացիներ Երեմ Առաքելյանի և Արթուր Հայրապետյանի միջև կնքվել և նոտարական կարգով վավերացվել է «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի 16 ՕՕ 943 պետհամարանիշի ավտոմեքենայի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր (տե՛ս Նյութեր, էջ 3):

9. 2009 թվականի դեկտեմբերի 8-ին մեղադրյալ Ե.Առաքելյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել (տե՛ս Նյութեր, էջ 9):

10. 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի Շենգավիթ քննչական բաժնի քննիչ Հ.Հովհաննիսյանը գույքի վրա կալանք դնելու մասին որոշում է կայացրել: Նշված որոշմամբ հաստատված է համարվել, որ Երեմ Առաքելյանը հանցավոր ճանապարհով ձեռք բերված «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի 16 ՕՕ 943 պետհամարանիշի ավտոմեքենան վաճառել է Արթուր Հայրապետյանին, ով այն գնելուց հետո ճանապարհային ոստիկանությունում ավտոմեքենան ձևակերպել է իր անվամբ, հանձնել նախկին պետհամարանիշները և ստացել նոր՝ 18 ՍՍ 354 պետհամարանիշներ:

Քննիչը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-233-րդ հոդվածներով, «Ֆոլկսվագեն-Տուարեզ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու մասին որոշում է կայացրել՝ նկատի ունենալով, որ նշված ավտոմեքենան հանդիսացել է հանցագործության առարկա (տե՛ս Նյութեր, էջ 6):

11. Ա.Հայրապետյանի բողոքի քննության արդյունքում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Է.Սաղաթելյանը 2009 թվականի դեկտեմբերի 23-ին բողոքը մերժելու մասին որոշում է կայացրել՝ նշելով, որ նշված ավտոմեքենան չի կարող հանձնվել խարդախության կատարումից հետո այն ձեռք բերած Ա.Հայրապետյանի պատասխանատու պահպանմանը այն պատճառաբանությամբ, որ ավտոմեքենան իրեղեն ապացույց է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրա տնօրինման հարցը դեռևս չի լուծվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշում չի կայացվել քրեական գործի

վարույթը կարճելու մասին, նշված ավտոմեքենան Ե.Առաքելյանի կողմից խարդախությամբ հափշտակելու հետևանքով գործով տուժող ճանաչված Ս.Մելքոնյանին պատճառվել է նյութական վնաս, ուստի առկա է նախաքննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու խնդիր, ինչպես նաև օրենքի պահանջն ապահովելու անհրաժեշտություն (տե՛ս Նյութեր, էջ 7-8):

12. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Ա.Հայրապետյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, հարուցված քրեական գործով դեռևս կատարվում է նախաքննություն, հետևաբար հիմքեր չկան քննիչի՝ գույքի վրա կալանք դնելու մասին 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը վերացնելու համար (տե՛ս Նյութեր, էջ 24):

13. Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ մերժել է Ա.Հայրապետյանի բողոքը՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ նախաքննական մարմնի որոշմամբ «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենան ճանաչվել է իրեղեն ապացույց, իսկ իրեղեն ապացույցները քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ (տե՛ս Նյութեր, էջ 53):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասը և 886-րդ հոդվածը, որի արդյունքում խախտվել է իր՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը:

15. Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն գնահատել գործում առկա և բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք ապացույցներ, մասնավորապես՝ ավտոմեքենայի առուվաճառքի և փոխառության պայմանագրերը:

Բողոքաբերը նշում է նաև, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ավտոմեքենան ճանաչվել է իրեղեն ապացույց:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 23-ի որոշումը, վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը և իր սեփական ավտոմեքենան հանձնել իր տիրապետմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՄՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու և այն Ա.Հայրապետյանի պատասխանատու պահպանմանը չհանձնելու արդյունքում խախտվե՞լ են արդյոք Ա.Հայրապետյանի՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

18. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք»:

19. Շարադրված սահմանադրական և կոնվենցիոն դրույթներից երևում է, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակալիք իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը.

1) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է գրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

2) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է (...) գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բացի անշարժ գույքից և մեծածավալ առարկաներից, այլ կալանադրված գույքը, որպես կանոն, վերցվում է»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Չվերցված գույքը, որի վրա կալանք է դրված, կնքվում և պահպանության համար թողնվում է գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին: Նրանց բացատրվում է տվյալ գույքն օտարելու կամ փչացնելու համար օրենքով նախատես-

ված պատասխանատվությունը, ինչի մասին նրանցից վերցվում է ստորագրություն»:

Սեջրերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ կալանադրված գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին արգելվում է տնօրինել այն: Տնօրինման հետ մեկտեղ, կալանադրված գույքի սեփականատերը կարող է գրկվել նաև իր գույքի տիրապետման և օգտագործման իրավագործությունից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի իմաստով կալանադրված գույքը, եթե այն անշարժ կամ մեծածավալ գույք չէ, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող է վերցվել: Միևնույն ժամանակ վերոնշյալ հոդվածով սահմանված կանոնն ունի բացառություն, այն է՝ չվերցված գույքը կարող է թողնվել սեփականատիրոջ կամ տիրապետողի պատասխանատու պահպանությանը:

21. Սույն որոշման 20-րդ կետում շարադրված կանոնը և այդ կանոնից նախատեսված բացառությունը մեկնաբանելով սեփականության իրավունքի սահմանադրական արժեքավորության մասին սույն որոշման 19-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանադրված գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանությանը թողնելու օրենսդրական պահանջը բխում է յուրաքանչյուր անձի՝ իր սեփականությունը տիրապետելու և օգտագործելու սահմանադրական իրավագործությունից և նախատեսված է այն նպատակով, որպեսզի հնարավորություն ընձեռվի սեփականատիրոջը մինչ քրեական գործով վարույթի ավարտն անարգել տիրապետել և օգտագործել իր գույքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի կալանադրման յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ հարցերը՝

1) կալանադրված գույքը կարո՞ղ է արդյոք թողնվել սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանությանը,

2) կալանադրված գույքը սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը չհանձնելու պարագայում սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակումն արդյո՞ք համաչափ է:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Է.Սաղաթեյանի որոշման մեջ նշվել է, որ կալանդրված «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնվել է ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի պատասխանատու պահպանմանը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Ա.Հայրապետյանի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, հարուցված քրեական գործով դեռևս կատարվում է նախաքննություն, հետևաբար հիմքեր չկան քննիչի 2009 թվականի նոյեմբերի 24-ի՝ գույքի

վրա կալանք դնելու մասին որոշումը վերացնելու համար (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), իսկ Վերաքննիչ դատարանը Ա.Հայրապետյանի բողոքը մերժելիս վկայակոչել է այն հանգամանքը, որ նախաքննական մարմնի որոշմամբ «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենան ճանաչվել է իրեղեն ապացույց, իսկ իրեղեն ապացույցները քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Հայրապետյանի գույքի վրա կալանք դնելու որոշման մեջ և սույն որոշման հետ կապված բոլոր, այդ թվում՝ դատական ակտերում քննարկման առարկա չի դարձվել այն հարցը, թե կալանադրված մեքենան չի՞ կարող արդյոք թողնվել Ա.Հայրապետյանի պատասխանատու պահպանությանը և առկա՞ են արդյոք դրան խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ:

Նշված հանգամանքը Վճռաբեկ դատարանը կարևորում է հատկապես այն պատճառով, որ մեղադրյալ Ե.Առաքելյանը թաքնվում է քննությունից (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հիմք է քրեական գործով վարույթը կասեցնելու համար: Բացի այդ, սույն գործով պարզաբանված չէ նաև այն հարցը, թե արդյոք «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենան նախկին սեփականատիրոջ տիրապետումից դուրս է եկել կորստի, հափշտակության կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով նախատեսված՝ նրա կամքից անկախ այլ ճանապարհով:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչ սույն քրեական գործով քննության ավարտը գույքի սեփականատեր Ա.Հայրապետյանը, փաստորեն, անորոշ ժամկետով զրկված է լինելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունքից և հնարավորությունից:

23. Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 18-22-րդ կետերում առկա իրավական հիմնավորումները և դրանք համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ֆոլկսվագեն-Տուարեգ» մակնիշի 18 ՍՍ 354 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու և այն Ա.Հայրապետյանի պատասխանատու պահպանմանը չհանձնելու արդյունքում խախտվել են Ա.Հայրապետյանի՝ որպես սեփականատիրոջ, իրավունքները:

24. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված

իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Հետևաբար, սույն գործով գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ Ա.Հայրապետյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 26-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 23-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի վրա կալանք դնելու, կալանքի տակ գտնվող գույքը պահպանելու, մասնավորապես, այն սեփականատիրոջ պատասխանատու պահպանությանը թողնելու հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի 2009 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ Արթուր Հայրապետյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 26-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 23-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0345/01/09
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան,
Մ.Պետրոսյան

ԵԿԴ/0345/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարդան Վահրիչի Աղաջանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան) 2010 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Աղաջանյանի վճռաբեկ քողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում 2009 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 15106009 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ

Վարդան Վահրիչի Աղաջանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

2. 2009 թվականի դեկտեմբերի 29-ին Վ.Աղաջանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Վ.Աղաջանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է՝ բեկանել է Վ.Աղաջանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճիռը, Վ.Աղաջանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտել տուգանքի 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Վ.Աղաջանյանը:

2010 թվականի հունիսի 4-ին Վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Վ.Աղաջանյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի օգոստոսի 31-ին ապօրինի կերպով կրել է սառը զենք հանդիսացող, գործարանային արտադրության ընդհանուր նշանակության որսորդական դանակ:

6. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Վ.Աղաջանյանը 2009 թվականի օգոստոսի 30-ին «Մուրմալու» առևտրի կենտրոնի 15/2 տաղավարից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել առանց սահմանափակման վաճառքի ներկայացված քաղաքացիական շեղբավոր սառը զենքի շարքին դասվող գործարանային արտադրության ընդհանուր նշանակության որսորդական դանակ, ինչը հաջորդ օրը Երևան քաղաքի Բայրոն-Մոսկովյան փողոցների խաչմերուկում, ձեռքին պահած ցուցադրելով, ցանկացել է վաճառել անցորդներին, սակայն չի կարողացել, քանի որ ոստիկանության աշխատակցի կողմից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժին:

Առաջին ատյանի դատարանը նաև գտել է, որ Վ.Աղաջանյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի հանցակազմը, և վերջինիս նկատմամբ արդարացման դատավճիռ է կայացրել այն պատ-

ճառաբանությամբ, որ տվյալ դեպքում Վ.Աղաջանյանի դիտավորությունն ուղղված չի եղել սառը զենք կրելուն: Նա չի գիտակցել իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, չի նախատեսել հանրության համար դրա վտանգավոր հետևաբաները և չի ցանկացել դրանց վրա հասնելը (տե՛ս քրեական գործ, էջ 108):

7. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Աղաջանյանը, թեկուզև վաճառելու նպատակով ձեռքին պահելով որսորդական դանակը, ապօրինի կրել է այն, բացի այդ, ամբաստանյալը գիտակցել է իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել դրանց վրա հասնելը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ այն հանգամանքը, որ ամբաստանյալը չի իմացել, որ վաճառակետում ազատ վաճառվող դանակները կարող են սառը զենք հանդիսանալ, վերջինիս չի ազատում պատասխանատվությունից, քանի որ օրենքի չիմացությունն անձին չի ազատում պատասխանատվությունից (տե՛ս քրեական գործ, էջեր 154-155):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի և 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշում է, որ իր դիտավորությունն ուղղված չի եղել սառը զենք կրելու: Ինքը դանակը ձեռք է բերել հասարակական վայրում առանց սահմանափակումների ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի վաճառակետից և, վերավաճառելու նպատակով ձեռքին պահելով, չի գիտակցել և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը: Այսինքն՝ իրեն մեղսագրված արարքը կատարել է առանց մեղքի, և հետևաբար, իր արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելու հանցակազմը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. մեղքի ի՞նչ ձևով է կատարվում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով (ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելը) արգելված արարքը և որակման առումով որևէ նշանակություն ունի՞

արդյոք գազային, սառը կամ նետողական զենքի ձեռքբերման աղբյուրը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով որպես հանցանք նախատեսված է ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղքը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

2. Անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով»:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Եթե օրենքն ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը չի կապում հանցավոր արարքի որոշակի հետևանքների առաջացման հետ, հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դա կատարող անձը գիտակցել է իր արարքի՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկացել է կատարել դա»:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմի վերլուծությունից երևում է, որ մեղքի դիտավորյալ ձևի առկայության համար (*inter alia*) անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների համաժամանակյա առկայությունը.

ա) անձը պետք է գիտակցի իր կողմից գազային, սառը կամ նետողական զենք կրելու փաստը, ինչպես նաև դրա հանրային վտանգավորությունը,

բ) գազային, սառը կամ նետողական զենքը կրի իր ցանկությամբ (կամքով), այլ ոչ թե անկախ իր ցանկությունից կամ հակառակ իր ցանկության:

Ընդ որում, դիտավորության առկայության համար անհրաժեշտ չէ, որ անձը գիտակցի իր արարքի հակաօրինականությունը, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված լինելու փաստը:

13. Սույն որոշման նախորդ կետում առկա վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասը՝ ՎՃՈՒՐՔԵԿ դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածով արգելված արարքի համար քրեական պատասխանատվությունը չի կապվում հանցավոր արարքի որոշակի հետևանքների առաջացման հետ, և հանցանքը համարվում է ավարտված ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենքը կրելու պահից: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կանոնը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով արգելված՝ ապօրինի կերպով սառը զենք կրելու արարքը կարող է կատարվել միայն դիտավորությամբ:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 11-13-րդ կետերում առկա դատողությունները՝ ՎՃՈՒՐՔԵԿ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով արգելված արարքը, այն է՝ ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելը ենթադրում է մեղքի դիտավորյալ ձևի առկայություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու առումով որևէ նշանակություն չունի, թե անձն այդ զենքը զնել է հանրային առևտրի վայրից, գտել է, նվեր է ստացել կամ ձեռք է բերել ցանկացած այլ եղանակով: Այլ կերպ ասած, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար զենքի ձեռքբերման աղբյուրը որևէ նշանակություն չունի:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Վ.Աղաջանյանը «Սուրմալու» առևտրի կենտրոնից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել սառը զենք համարվող որսորդական դանակ, ինչը հաջորդ օրը, ձեռքին պահած ցուցադրելով, ցանկացել է վաճառել անցորդներին:

Վ.Աղաջանյանի արարքի որակման կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նրա գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի հանցակազմը, քանի որ նրա դիտավորությունն ուղղված չի եղել սառը զենք կրելուն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Բեկանելով առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Վ.Աղաջանյանը, թեկուզև վաճառելու նպատակով ձեռքին պահելով որսորդական դանակը, ապօրինի կրել է այն, բացի այդ, նա գիտակցել է իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել դրանց վրա հասնելը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Վճռաբեկ դատարանը, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա, գտնում է, որ Վ.Աղաջանյանը գիտակցել է իր կողմից սառը զենք կրելու փաստը, ինչպես նաև դրա հանրային վտանգավորությունը, և սառը զենքը կրել է իր ցանկությամբ (կամքով), այլ ոչ թե անկախ իր ցանկությունից կամ հակառակ իր ցանկության: Իսկ այն հանգամանքը, որ Վ.Աղաջանյանը վերոնշյալ սառը զենքը ձեռք է բերել «Սուրմալու» առևտրի կենտրոնից, որևէ նշանակություն չունի նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար:

II. Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով ձեռք բերված ապացույցների գնահատումը

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը սույն գործով ձեռք բերված ապացույցները գնահատե՞լ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով նախատեսված՝ ապացույցների գնահատման կանոնների պահպանմամբ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների

համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Գատարանի կողմից ապացույցների գնահատման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ «Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: (...)» (տե՛ս Մակար Ռազմիկի Հովհաննիսյանի և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԲԳ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Ադաջանյանը, թեկուզև վաճառելու նպատակով ձեռքին պահելով որսորդական դանակը, ապօրինի կրել է այն, բացի այդ, ամբաստանյալը գիտակցել է իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել դրանց վրա հասնելը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ այն հանգամանքը, որ ամբաստանյալը չի իմացել, որ վաճառակետում ազատ վաճառվող դանակները կարող են սառը զենք հանդիսանալ, վերջինին չի ազատում պատասխանատվությունից, քանի որ օրենքի չիմացությունն անձին չի ազատում պատասխանատվությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերոշարադրյալ հետևությունը վերջինիս կողմից սույն գործով ձեռք բերված ապացույցների գնահատման արդյունք է: Գատարանի կողմից ապացույցների գնահատումը, ինչպես նշվել է սույն որոշման 18-րդ կետում և համապատասխանաբար նաև *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ որոշման մեջ, կատարվում է մտավոր, տրամաբանական գործունեության արդյունքում ձևավորված ներքին համոզման հիման վրա:

20. Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 18-19-րդ կետերում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով ձեռք բերված ապացույցները գնահատել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով նախատեսված՝ ապացույցների գնահատման կանոնների պահպանմամբ, ինչի արդյունքում ամբաստանյալ Վ.Ադաջանյանի արարքն իրավամբ որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերով

նյութական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

21. Սույն գործով բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելու նպատակը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառում ապահովելու սահմանադրական գործառույթի իրացումն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Վարդան Վահրիչի Աղաջանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի ապրիլի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ՍԳ/0293/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՍԳ/0293/01/09
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան,
Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Թիվ 41108809 քրեական գործը հարուցվել է 2009 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Էրիկ

Միխայելի Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 139-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2009 թվականի նոյեմբերի 3-ին Է.Հայրապետյանի և Մ.Ալեքսանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռով Է.Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 139-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Է.Հայրապետյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 9 /ինը/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Մ.Ալեքսանյանը, որի մասով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը չի բողոքարկվել:

3. Ամբաստանյալ Է.Հայրապետյանի պաշտպան Յ.Բալասանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունիսի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Է.Հայրապետյանի մասով, պատժի մեղմացման առումով, փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը, Է.Հայրապետյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Վերաքննիչ դատարանը Է.Հայրապետյանին վերջնական դատապարտել է ազատազրկման 7 /յոթ/ տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Է.Հայրապետյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա Կապան քաղաքի բնակիչ Մ.Ալեքսանյանի հետ 2009 թվականի օգոստոսի 30-ին՝ ժամը 23.30-ի սահմաններում, գտնվելով ակոհոլի ազդեցության տակ, Շինարարների թաղամասից կենտրոն տանող աստիճանների վրա հանդիպել են դեպի տուն գնացող՝ Շինարարների թաղամասի բնակչուհի Ազնիվ Մաքսիմի Ստեփանյանին և առաջարկել սեռական հարաբերություն ունենալ, սակայն, ստանալով մերժում, իրենց նպատակին հասնելու համար, բռնություն գործադրելով, այն է՝ ձեռքերով ու ոտքերով հարվածել են Ա.Ստեփանյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով միջին ծանրության մարմնական վնասվածքներ, հարձակվել նրա վրա, պատռտել շորերը, գցել գետին, պատռած շորերով կապել բերանը և, հաղթահարելով նրա դիմադրությունը, վերջինիս կամքին հակառակ Է.Հայրապետյանը երկու, իսկ Մ.Ալեքսանյանը մեկ անգամ սեռական հարաբերություն են ունեցել նրա հետ, այնուհետև սեռական կրքերին հագուրդ տալու նպատակով, Է.Հայրապետյանը Մ.Ալեքսանյանի օժանդակությամբ Ա.Ստեփանյանի նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ տուժողի բերանից:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքներն ակոհոլի ազդեցության տակ կատարելը, ինչպես նաև հանցագործության մեջ նրա առանձնապես ակտիվ դերը, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ հանցանքը կատարելու պահին նրա անչափահաս լինելը, հանցագործությունների համար իրեն լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն զղջալը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 60):

7. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման և գնահատման չի արժանացրել ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նրա կյանքի և դատախազության պայմանները, հոգեկան զարգացման աստիճանը: Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նաև այն, որ նրա մտավոր զարգացվածությունը չի համապատասխանում նրա ստացած կրթությանը, վերջինիս կյանքի և դատախազության, ընտանեական և սոցիալական պայմաններին, այն որ նախկինում նա արատավորված կամ դատապարտված չի եղել, հանցանքը կատարելու պահին եղել է անչափահաս, իրեն լիովին մեղավոր է ճանաչել ու անկեղծորեն զղջացել» (տե՛ս քրեական գործ, հատոր, էջ 166):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Է.Հայրապետյանի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջները, որի արդյունքում նրա նկատմամբ նշանակվել է անարդարացի և ակնհայտ մեղմ պատիժ:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել նրա կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցագործության կատարման հանգամանքներն ու եղանակը, տուժողի նկատմամբ ամբաստանյալի դրսևորած բացառիկ դաժանությունը, անողորությունը և վայրագությունը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալ Է.Հայրապետյանի նկատմամբ նշանակվել է արդյո՞ք արդարացի պատիժ, որի միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատժի նպատակների իրականացմանը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամբագրել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Այս հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

12. Պատժի արդարացիության հետ կապված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Կ.Հարությունյանի* վերաբերյալ որոշման մեջ, որում դիրքորոշում է

հայտնել այն մասին, որ «(...)» Պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձը բնութագրող տվյալները և, քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար: (...)» (տե՛ս Կ.Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի ՎԲ-201/07 որոշումը):

13. Սույն որոշման 11-րդ կետում մեջբերված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համակարգային վերլուծությունից բխում է, որ պատիժն արդարացի է, եթե դրա տեսակի և չափի որոշման ժամանակ դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրա պատասխանատվությունը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները:

14. Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի հետ կապված հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է *Գ.Մադաթյանի* վերաբերյալ որոշման մեջ:

Համաձայն այդ որոշման՝ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (տե՛ս *Գ.Մադաթյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

15. Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները սպառիչ թվարկված են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների օրենսդրական թվարկումը սպառիչ չէ. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում»:

Նշված իրավական դրույթը, սակայն, չի ենթադրում, որ որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքների առումով դատարանի հայեցողությունը բացարձակ է: Այս հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Պ.Բայրամյանի* վե-

րաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ. «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները: (...)» (տե՛ս *Պ.Բայրամյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի ՎԲ-84/07 որոշումը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման 11-15-րդ կետերում առկա վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով պատիժ նշանակելիս անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների գնահատումը հնարավորություն է տալիս դատարանին պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի, բնույթի, ինչպես նաև հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատժի անհատականացման կարևորությունն այն է, որ դա լուրջ երաշխիք է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի նրա կողմից կատարված հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առել

հանցանքներն ակոհողի ազդեցության տակ կատարելը, ինչպես նաև հանցագործության մեջ նրա առանձնապես ակտիվ դերը, իսկ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ հանցանքը կատարելու պահին նրա անչափահաս լինելը, հանցագործությունների համար իրեն լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն զղջալը: Որպես անձը բնութագրող հանագամքներ այն, որ ամբաստանյալ Է.Հայրապետյանն անչափահաս է, գտնվում է միայն մայր ծնողի խնամքի տակ, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված և արատավորված չի եղել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժաչափի հարցը, գտել է, որ բավարար չափով ստուգման և գնահատման չեն արժանացել ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման աստիճանը:

Վերաքննիչ դատարանի որոշումից երևում է նաև, որ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առել այն, որ նրա մտավոր զարգացվածությունը չի համապատասխանում նրա ստացած կրթությանը, վերջինիս կյանքի և դաստիարակության, ընտանեական և սոցիալական պայմաններին, այն որ նախկինում նա արատավորված կամ դատապարտված չի եղել, հանցանքը կատարելու պահին եղել է անչափահաս, իրեն լիովին մեղավոր է ճանաչել ու անկեղծորեն զղջացել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Վերլուծելով սույն որոշման 17-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 11-16-րդ կետերում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելիս հիմք ընդունված հանգամանքներն արդեն իսկ հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս:

Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ ամբաստանյալի մտավոր զարգացվածությունը չի համապատասխանում նրա ստացած կրթությանը, նրա կյանքի և դաստիարակության, ընտանեական և սոցիալական պայմաններին, ապա այդ հանգամանքները չեն կարող նվազեցնել Էրիկ Հայրապետյանի կատարած հանցանքներին բնորոշ հանրային վտանգավորության աստիճանը և չեն կարող բավարար հիմք լինել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարած ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու համար, քանի որ դրանք չեն համապատասխանում *Պ.Բայրամյանի* վերաբերյալ որոշման մեջ ամբագրված չափանիշներին, ուստի բավարար չեն անձի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու համար:

19. Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 11-18-րդ կետերում առկա դատողությունները, Վճռաբեկ դատարանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանն

ամբաստանյալ Է.Հայրապետյանի նկատմամբ նշանակած պատիժը մեղմացնելիս բավարար չափով ստուգման ու գնահատման չի ենթարկել նրա կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները: Արդյունքում, Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանն ու հանցավորի անձին և դրանով հնարավոր չէ հասնել պատժի նպատակների իրականացմանը:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված դատական ակտի կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

21. Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել Է.Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռին:

Բողոքարկված դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբաստանյալ Է.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու մասին որոշում ընդունելիս Վերաքննիչ դատարանը չի քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցը, նույն օրենսգրքի 61-րդ հոդվածում ամրագրված նշանակված պատժի արդարացիության հարցը, գործի քննության ընթացքում թույլ է տվել դատական սխալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՎՃՈՒԱՐԵԿ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էրիկ Սիխայելի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 139-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0051/11/09
նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան

ԵԿԴ/0051/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ տուժողի
իրավահաջորդի ներկայացուցիչ՝*

Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա.Կարախանյանի և Հ.Գուկասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության վարչական շենքի բակում

Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ Երևան քաղաքի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. 2007 թվականի դեկտեմբերի 12-ից քրեական գործը քննվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2008 թվականի մարտի 12-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Պետրոսյանը որոշում է կայացրել վերը նշված գործի վարույթը կարճելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքի հիման վրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008 թվականի հունիսի 6-ի որոշմամբ վերացրել է քննիչի՝ վերը նշված որոշումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դատախազը:

2008 թվականի հուլիսի 21-ին Վերաքննիչ դատարանը, մերժելով դատախազի վերաքննիչ բողոքը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

4. 2008 թվականի օգոստոսի 16-ին սույն քրեական գործով կարճված վարույթը վերսկսվել է, և նախաքննությունը կրկին իրականացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Պետրոսյանի կողմից:

2009 թվականի ապրիլի 16-ին սույն քրեական գործի վարույթը քննիչի որոշմամբ կրկին կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

5. 2009 թվականի հունիսի 2-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները քննիչի վերոնշյալ որոշումը բողոքարկել են ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևոսյանը 2009 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը մերժելու մասին:

6. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որով խնդրել են վերացնել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևոսյանի՝ 2009 թվականի հունիսի 9-ի, քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Պետրոսյանի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշումները և վերսկսել սույն քրեական գործով վարույթը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի

դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ մերժվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը:

7. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

8. Վճռաբեկ բողոք են բերել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա.Կարախանյանը և Հ.Գուկասյանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

9. Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշման համաձայն՝ «2007 թվականի մայիսի 9-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի վարչական տարածքում Ստեփան Վարդանյանի սպանության կապակցությամբ օպերատիվ հարցազրույցի հրավիրված՝ Երևան քաղաքի Եղբայրության փողոցի 14 շենքի 23 բնակարանի բնակիչ, 1976 թվականի ծնված Լևոն Աշոտի Գուլյանը ժամը 15:20-ի սահմաններում ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից փորձել է դիմել փախուստի, սակայն վայր է ընկել և ստացված վնասվածքներից տեղում մահացել» (տե՛ս քրեական գործ հատոր 5, էջ 98):

10. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ Լևոն Գուլյանը 2007 թվականի մայիսի 10-ի գիշերը ժամը 03-04-ի սահմաններում կանչվել և մինչ 2007 թվականի մայիսի 12-ի ժամը 14:00-ը գտնվել է ոստիկանության Շենգավիթի բաժնում (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 9-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 190):

11. Լ.Գուլյանի մուտքը և ելքը ոստիկանության Շենգավիթի բաժնում պաշտոնապես չի գրանցվել (տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 11-րդ էջ, քրեական գործ հատոր 4, էջ 192):

12. Ո՛չ Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի, ո՛չ էլ դատախազի կողմից ոստիկանությանը 2007 թվականի մայիսի 10-ին որպես վկա հարցաքննվելուց հետո Լ.Գուլյանի հետ կապված գործողություններ կատարելու գրավոր կամ

բանավոր որևէ հանձնարարություն կամ ցուցում չի տրվել (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 125-126 էջեր):

13. 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության ԶՀԳՎ պետի հանձնարարությամբ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաները ծառայողական մեքենայով ժամը 14:00-ի սահմաններում Լ.Գուլյանին տեղափոխել են նշված վարչություն (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 10-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 191):

14. Լ.Գուլյանը ԶՀԳՎ-ում աշխատասենյակից աշխատասենյակ է տեղափոխվել ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, իսկ նրա ջուր խմելու հարցով զբաղվել է բարձրաստիճան ոստիկանը (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 19-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 200):

15. 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եզրակացրել է, որ ««Ռոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներով սույն գործի շրջանակներում ծագած կոնկրետ հարաբերությունները կարգավորվել չեն կարող» (տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման 12-րդ էջ, քրեական գործ, հատոր 4, էջ 193):

16. Ի պատասխան Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով քննչական փորձարարություն կատարելու համար մանեկեն տրամադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային կապերի բաժնի պետի հարցման՝ Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է 2008 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված հետևյալ բովանդակությամբ գրություն. «Հայտնում ենք, որ հարցման մեջ նշված բնութագրերով մանեկեն Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի տրամադրության տակ չկա:

Միևնույն ժամանակ, Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի կողմից ներկայում գնված են 170ամ երկարությամբ և 40կգ քաշով շարնիրային մանեկեններ, որոնցից մեկը կարող է տրամադրվել Հայաստանի Հանրապետության իրավապահպան մարմինների ներկայացուցիչներին» (տե՛ս քրեական գործ, 5-րդ հատոր, էջ 66):

17. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ, հղում անելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23 թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ կետի վրա, նշել է. «Ռոպեսգի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննու-

թյունը համարվի «արդյունավետ» Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն և նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարների հետ կապված ապացույցները» (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 9-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 190):

18. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ արձանագրել է. «[Բնություն կատարող մարմինների կողմից] Միջոցներ չեն ձեռնարկվել Լ.Գուլյանի հավանական անկման պայմաններն ու հետևանքները ճշտելու ուղղությամբ: Ընդունելով քննչական փորձարարություն կատարելու անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ նման փորձարարություն չի կատարվել համապատասխան մանեկեն չգտնելու պատճառաբանությամբ»: Նույն որոշման մեջ արձանագրվել է նաև. «Գրավոր ցուցում տված գլխավոր դատախազի տեղակալը /քրեական գործ, հ. 4, էջ 123/ և նախաքննական մարմինը, կարևորելով Լ.Գուլյանի անկման մեխանիզմը պարզելու նպատակով քննչական փորձարարություն կատարելու հանգամանքը՝ այդ հիմքով երկարացնելով նախաքննության ժամկետը՝ առանցքային այդ քննչական գործողությունը չի կատարել միայն այն հիմքով, որ համապատասխան մանեկեն ձեռք բերել չի հաջողվել» (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 4-րդ և 23-րդ էջեր, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, 185, 204 էջեր):

19. Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ «2007 թվականի մայիսի 12-ին ժամը 14-ի սահմաններում ոստիկանության կողմից Լ.Գուլյանին ՀՀ ոստիկանության ԶՀԳ վարչություն տանելը և դրան հաջորդող գործողությունները չեն բխում ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 191-րդ, 205-րդ, 206-րդ, 316-րդ հոդվածների պահանջներից» (Վերաքննիչ դատարանի որոշման 21-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 233):

20. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ նշված է, որ «օրենքով սահմանված կարգով ձեռք բերված վերաբերելի և թույլատրելի փաստական տվյալները իրենց համակցությամբ բավարար են հանգելու հետևության, որ քրեական գործով նախաքննությունը շարունակելու հիմքեր չկան» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման համաձայն՝ «քրեական գործի նյութերի հետազոտությունը ցույց է տալիս, որ նախաքննական մարմինը իրականացրել է բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը՝ ապահովելու հա-

մար Լ.Գուլյանի պատահարի հետ կապված փաստական հանգամանքները» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման համաձայն՝ «վերսկսված նախաքննության ընթացքում քրեական վարույթ իրականացնող մարմինը համապատասխան միջոցներ է ձեռնարկել դատարանների որոշումներում նշված թերությունները, խախտումները, բացերը վերացնելու կապակցությամբ, որի ընթացքում կայացվել է օբյեկտիվ և ճիշտ որոշում, այն է՝ Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

21. Բողոք բերած անձանց պնդմամբ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված ու չպատճառաբանված: Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները նշում են, որ այն հակասում է նախկինում սույն գործի քննությունն իրականացրած ՀՀ դատարանների լին, և դրանով անտեսվում են վերոնշյալ դատական ակտերում առաջ քաշված մի շարք պահանջներ: Մասնավորապես.

21.1 Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ, հղում անելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23 թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ կետի վրա, նշել է. «Որպեսզի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ» Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն և նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարների հետ կապված ապացույցները» (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը):

Մինչդեռ, ըստ բողոքաբերների, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ վերսկսված նախաքննությամբ դեպքի հետ կապված բոլոր ապացույցները չեն հավաքվել, իսկ Լ.Գուլյանի մահվան համար պատասխանատու անձանց ինքնությունը չի պարզվել, և նրանց պատժելու համար անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել:

21.2 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եզրակացրել է, որ. ««Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներով սույն

գործի շրջանակներում ծագած կոնկրետ հարաբերությունները կարգավորվել չեն կարող» (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Մինչդեռ, ըստ բողոքաբերների, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ անտեսվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի այս հետևությունը: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումը հիմնավորվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի առանձին հոդվածներով:

21.3 Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ «2007 թվականի մայիսի 12-ին, ժամը 14-ի սահմաններում ոստիկանության կողմից Լ.Գուլյանին ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն տանելը և դրան հաջորդող գործողությունները չեն բխում ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 191-րդ, 205-րդ, 206-րդ, 316-րդ հոդվածների պահանջներից» (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը):

21.4 Բողոք բերած անձանց պնդմամբ, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ո՛չ Շենգավիթի ոստիկանությունը, ո՛չ էլ ՀՀ ոստիկանության ՔՀԳ-Վ-ն Ս.Վարդանյանի սպանության գործով քրեական վարույթ իրականացնող մարմին չեն հանդիսացել: Ի հիմնավորումն այս պնդման՝ բողոքաբերները ներկայացրել են հետևյալ փաստարկները.

Առաջին, գործով նախաքննությունն իրականացվել է Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի կողմից:

Երկրորդ, ո՛չ Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի, ո՛չ էլ դատախազի կողմից ոստիկանությանը 2007 թվականի մայիսի 10-ին որպես վկա հարցաքննվելուց հետո Լ.Գուլյանի հետ կապված գործողություններ կատարելու գրավոր կամ բանավոր որևէ հանձնարարություն կամ ցուցում չի տրվել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ «Հետաքննության մարմինը քննիչի վարությամբ գտնվող հանցագործությունների գործերով կատարում է քննիչի, դատախազի հանձնարարությունները, դատախազի ցուցումները»:

Երրորդ, ո՛չ Շենգավիթի ոստիկանության, ո՛չ էլ ՀՀ ոստիկանության ՔՀԳ-Վ-ի օպերատիվ աշխատակիցները, որոնք առնչություն են ունեցել Լ.Գուլյանի հետ, հետաքննության մարմին չեն հանդիսացել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմին է համարվում «(...) սույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (...) և աշխատակիցները»:

21.5 Բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ Վերաքննիչ դատարանի

կողմից որևէ կերպ չի բացատրվել Լ.Գուլյանի՝ ոստիկանների մշտական հսկողությամբ տակ գտնվելու և նրա կոշիկների վրայից քուղերի բացակայության հանգամանքները, ինչպես նաև այն, թե ինչու է Լ.Գուլյանը փորձել ՀՀ ոստիկանության վարչական շենքից դուրս գալ երկրորդ հարկի պատուհանից ներքին բակ ցատկելու, այլ ոչ թե կենտրոնական մուտքից հեռանալու միջոցով:

21.6 Մեջբերելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը, որում նշված է, որ «օրենքով սահմանված կարգով ձեռք բերված վերաբերելի և թույլատրելի փաստական տվյալները իրենց համակցությամբ բավարար են հանգելու հետևության, որ քրեական գործով նախաքննությունը շարունակելու հիմքեր չկան» (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), բողոք բերած անձինք նշել են, որ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ բողոքարկվող որոշման հիմքում առավելապես դրվել են նախաքննության մարմնի այն փաստարկները, որոնք գերակշռող մեծամասնությամբ հիմնված են քրեական գործի ելքով ուղղակի շահագրգռվածություն ունեցող ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: Վկայակոչված ցուցմունքները Վերաքննիչ դատարանը քննադատական վերլուծության չի ենթարկել, կասկածի տակ չի դրել և չի փորձել հերքել, թեև դա անելու համար քրեական գործում առկա են ավելի քան բավարար ապացույցներ:

Ըստ բողոք բերած անձանց՝ վերոշարադրյալից բացի, Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են հետևյալ ապացույցները՝

- վկաներ Մ.Գրիգորյանի, Հ.Մելքումյանի, Ջ.Գուլյանի և տուժողի իրավահաջորդ Ա.Գուլյանի ցուցմունքները, որոնցով հաստատվում են Լ.Գուլյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված կամայական և ապօրինի գործողությունները,

- Շենգավիթ համայնքի դատախազ Ջ.Ֆարխոյանի գրությունը, որով հաստատվում է, որ մայիսի 10-ին հարցաքննվելուց հետո Լ.Գուլյանի հետ որևէ գործողության կատարում չի պլանավորվել, և նրա նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կատարած բոլոր գործողությունները դուրս են եղել վարույթն իրականացնող մարմնի վերահսկողության շրջանակներից,

- ՀՀ ոստիկանության կողմից կատարված ծառայողական քննության եզրակացությունը, ըստ որի՝ Լ.Գուլյանը մայիսի 10-ին ժամը 04-ի սահմաններում ներկայացել է ոստիկանության Շենգավիթի բաժին և ազատ է արձակվել ժամը 22-ի սահմաններում,

- փորձագիտական եզրակացություններով, մասնավորապես դատաբժշկական փորձաքննություններով, քրեագիտական, մանրաթելային և դատաքիմիական համալիր փորձաքննությամբ պարզված և դատարանների կողմից հաստատված մի շարք հանգամանքներ, որոնք հերքում են Գ.Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանից Լ.Գուլյանի անկման մեխանիզմը,

- քրեական գործով վկա, ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ պետ Հ.Միլիտոնյանի

ցուցմունքը, ըստ որի՝ Լ.Գուլյանի և Մ.Գրիգորյանի ցուցմունքների միջև առկա հակասության կապակցությամբ ինքը հանձնարարել է նշված անձանց հետ «բացատրական աշխատանքներ տանել և օպերատիվ հարցազրույց կատարելու նպատակով հրավիրել ՔՀԳ վարչություն», ինչը դուրս է ոստիկանությանը վերապահված լիազորությունների շրջանակից: Մինչդեռ ո՛չ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 19-րդ, 20-րդ, ո՛չ այլ հոդվածներով, և ո՛չ էլ այլ իրավական ակտերով ոստիկանությունը նման լիազորություններ չունի, քանզի օրենքում պարզապես բացակայում են «բացատրական աշխատանքներ» և «օպերատիվ հարցազրույց» կամ «օպերատիվ հարցում» եզրույթները:

21.7 Վկայակոչելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը, որի համաձայն՝ «քրեական գործի նյութերի հետազոտությունը ցույց է տալիս, որ նախաքննական մարմինը իրականացրել է բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար Լ.Գուլյանի պատահարի հետ կապված փաստական հանգամանքները» (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չի առնվել այն, որ նախաքննությունը վերսկսելուց հետո քրեական վարույթն իրականացնող մարմինը, հակառակ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների որոշումներում առաջ քաշված պահանջների, չի պարզել գործի արդարացի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես.

- ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում չի պարզվել Գ.Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանից Լ.Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը (չի կատարվել քննչական փորձարարություն, կամ տեխնիկական այլ համալիր փորձաքննություն չի նշանակվել),

- չի ճշտվել, թե միջազգային փորձագետների կողմից նշված «մինչ ընկնելն այլ ուժի ազդեցությամբ առաջացած կապտուկներն ու վնասվածքները» Լ.Գուլյանի մարմնի որ հատվածներին են վերաբերում,

- չի բացահայտվել Գ.Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանին ձեռքի ավի հետք թողած անձի ինքնությունը,

- չի պարզվել, թե ում հագուստի օտար, բնական և քիմիական մանրաթելերն են հայտնաբերվել Լ.Գուլյանի հագուստի վրա և ինչի հետևանքով այդ նպատակով փորձանմուշներ չեն վերցվել և փորձաքննություններ չեն նշանակվել,

- չի պարզվել թե փախուստի փորձ կատարելու պայմաններում կրծքավանդակի և ողնաշարի կրծքային և գոտկային հատվածների վնասվածքները ստանալու պահին Լ.Գուլյանը ինչպես է կրծքավանդակի հետին մակերեսով ուղղված եղել դեպի վնասվածք պատճառող առարկան:

21.8 Վկայակոչելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-

ի որոշումը, որի համաձայն՝ «վերսկսված նախաքննության ընթացքում քրեական վարույթ իրականացնող մարմինը համապատասխան միջոցներ է ձեռնարկել դատարանների որոշումներում նշված թերությունները, խախտումները, բացերը վերացնելու կապակցությամբ, որի ընթացքում կայացվել է օբյեկտիվ և ճիշտ որոշում, այն է՝ Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ» (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը նման հետևության չէր հանգի, եթե հաշվի առներ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման մեջ տրված հետևյալ ձևակերպումը՝ «սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործի հանգամանքների շուրջ արդեն իսկ հարցաքննված Լ.Գուլյանն այդպիսի լիազորություններով չօժտված պաշտոնատար անձանց կողմից «հրավիրվել», ապա փաստացի ազատությունից զրկված լինելու պայմաններում տեղափոխվել է ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն, համապատասխան լիազորություններով չօժտված պաշտոնատար անձանց կողմից «քննչական գործողություններ, այդ թվում նաև առերեսում» կատարելու նպատակով, որով խախտվել է Լ.Գուլյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը, ինչն անհայտ պայմաններում ավարտվել է վերջինիս վախճանով» (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման 22-րդ էջ, տե՛ս Քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 233):

21.9 Սույն որոշման 21-րդ կետի՝ վերոշարադրյալ ենթակետերի հիման վրա բողոք բերած անձինք եզրահանգել են, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային-իրավական պարտավորությունները, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ, ինչպես նաև 5-րդ հոդվածները:

22. Անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի խախտումներին՝ բողոք բերած անձինք նշել են, որ.

22.1 Հայաստանի Հանրապետությունը Լևոն Գուլյանի մահվան կապակցությամբ չի կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում ստանձնած պոզիտիվ պարտավորությունները: Բողոքաբերների վերոնշյալ փաստարկի հիմքում դրված է Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի գործով վճռի 97-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ անհատի սպանության համար պետության պատասխանատվության հանգամանքն իր կողմից հաստատելու նպատակով «պահանջվող ապացույցների մակարդակի ապահովումը կարող է բխել բավականաչափ ուժեղ, հատակ և համահունչ մտահանգումների կամ չհերքված ենթադրությունների գոյակցությունից»:

22.2 Ըստ բողոք բերած անձանց՝ Լ.Գուլյանի մահվան հետ կապված

իրադարձությունները ամբողջությամբ կամ մեծ մասամբ համընկնում են իշխանությունների բացառիկ տեղեկացվածության տիրույթի մեջ, ուստի փաստական լուրջ ենթադրություններ են ծագում նրան պատճառված մարմնական վնասվածքների և մահվան առնչությամբ: Հետևաբար, ապացուցողական բեռն իշխանությունների վրա է, և նրանք պարտավոր են գոհացուցիչ և համոզիչ բացատրություն ներկայացնել (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սալմանն ընդդեմ Թուրքիայի, Չաքիչին ընդդեմ Թուրքիայի և Թիմոթաշն ընդդեմ Թուրքիայի գործերով վճիռներում արտահայտված դիրքորոշումը):

22.3 Այն դեպքում, երբ անձը կալանավորվում է առողջ վիճակում, բայց ավելի ուշ հայտնվում է մահացած, պետական իշխանությունները պարտավոր են հիմնավոր բացատրություններ տրամադրել նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների կապակցությամբ: Նման բացատրություն չտրամադրելը կնշանակի, որ պետական իշխանությունները պատասխանատու կհամարվեն նրա մահվան համար (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի, Անգելովան ընդդեմ Բուլղարիայի գործերով վճիռներում արտահայտված դիրքորոշումը): Հայցվորը միայն պարտավոր է ցույց տալ, որ իշխանությունները չեն արել այն ամենը, ինչը կարելի էր ողջամտորեն ակնկալել նրանցից՝ խուսափելու անձի կյանքի նկատմամբ իսկական և անմիջական ռիսկից, որի մասին նրանք իմացել էին կամ պարտավոր էին իմանալ (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արտահայտված դիրքորոշումը):

22.4 «Պետությունը կարող է ճանաչվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածը խախտող պետություն՝ հետաքննելու պարտավորության առնչությամբ նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չի կարողանում ապացույցներ ներկայացնել պետության գործակալների կողմից անձի դիտավորյալ սպանության կապակցությամբ» (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Յասան ընդդեմ Թուրքիայի գործով վճռում արտահայտված դիրքորոշումը): Հետաքննությունը պետք է լինի «մանրակրկիտ, անկողմնակալ և զգուշավոր» (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի գործով վճռում արտահայտված դիրքորոշումը): Հետաքննությունը պետք է նաև գործուն լինի այն իմաստով, որ դրա արդյունքում հնարավոր լինի պարզել, թե արդյոք նման դեպքերում գործադրված ուժը հիմնավորված է եղել, թե ոչ կոնկրետ հանգամանքներում, և բացահայտվեն ու պատժվեն մեղավորները: Սա ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցների առնչվող պարտավորություն է (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Շենեգանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արտահայտված դիրքորոշումը):

23. Բողոքաբերները նշել են նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական

դատարանը համանման մոտեցում է ցուցաբերում նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտավորությունների կատարման կապակցությամբ: Խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի դրսևորման ապացուցելու բեռը հայցվորից տեղափոխվում է պետության վրա այն դեպքում, երբ անհատը ոստիկանության կողմից կալանավորվում է առողջ վիճակում, սակայն հետագայում նրա մոտ հայտնաբերվում են մարմնական վնասվածքներ: Նման պարագայում պետությունը պարտավոր է հիմնավոր բացատրություն տալ այդ վնասվածքների կապակցությամբ:

24. Հիմք ընդունելով վերևում շարադրված դատողությունները՝ բողոք բերած անձինք հետևություն են արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, չկատարելով Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման կապակցությամբ անկողմնակալ և արդյունավետ քննություն, խախտել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

25. Վճռաբեկ բողոքում շարադրված դատողությունների հիման վրա բողոքաբերները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածների, Եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 13-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ և 25-րդ հոդվածների պահանջները: Վերաքննիչ դատարանը չի կիրառել Կոնվենցիայի այն հոդվածը (հոդվածները), որը ենթակա էր կիրառման, ինչպես նաև թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկել կամ դրանցում սահմանափակել կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, այսինքն՝ թույլ է տրվել միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտում:

26. Ըստ բողոքի հեղինակների՝ վճռաբեկ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածով նախատեսված հետևյալ հիմքերը.

ա) Վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը:

Բողոքի հիմնավորումները շարադրելիս մատնանշվել է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը վերացնելիս առաջին ատյանի դատարանն իր հետևությունները հիմնավորելու համար 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ հղում է արել ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման նախադեպային նշանակություն ունեցող որոշ դրույթների վրա: Մասնավորապես, նշվել է, որ սույն քրեական գործով նախաքննությունը չի եղել պատշաճ, հետևաբար, և արդյունավետ, չեն պարզվել և պատժվել

պատասխանատու անձինք, ինչպես նաև չեն ապահովվել պատահարի հետ կապված բոլոր ապացույցները /որոշ բարձրաստիճան նստիկաններ չեն հարցաքննվել, ոմանք հարցաքննվել են դեպքից հինգ օր անց, Լ.Գուլյանի հետ առնչված վկաները անմիջապես չեն առանձնացվել միմյանցից, որը չի բացառել նրանց հնարավոր հանդիպումն ու դեպքի կապակցությամբ փոխադարձ պայմանավորվածության գալը (թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ և 37-րդ կետեր):

Այնուհանդերձ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի որոշման պարտադրականության պահանջը և կայացրել է դրանցում արձանագրված փաստական հանգամանքներին և տրված հիմնավորումներին հակասող որոշում:

բ) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Նշված դատական սխալն առաջացրել է ծանր հետևանքներ, քանի որ դրա արդյունքում անպատիժ են մնացել ոստիկանության այն աշխատակիցները, ովքեր սահմանազանցելով իրենց լիազորությունները՝ քրեական գործով վկայի կարգավիճակ ունեցող, սակայն փաստացի ազատությունից զրկված Լ.Գուլյանին ֆիզիկապես և հոգեպես առողջ վիճակում, առանց իրավական հիմքի, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներից դուրս հարկադրաբար բերել են ՀՀ ոստիկանության վարչական շենք, որտեղ նա անհայտ պայմաններում մահացել է:

27. Վճռաբեկ բողոքում շարադրված փաստարկների հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումն անփոփոխ բողոնելու և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Ոստիկանությունում մահացած անձի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննության պարտականությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո.

28. Մույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին հարցը հետևյալն է. Լ.Գուլյանի մահվան փաստի նկատմամբ տարածվու՞մ է արդյոք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը:

29. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

(...)»:

30. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է եղել հավաստել, որ «Մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստերում սահմանվել են դատավարական պարտականություններ (տե՛ս, օրինակ, *B. v. the United Kingdom*, 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, *M.C. v. Bulgaria*, 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, 148-153 կետերը, և *Cyprus v. Turkey*, 2001 թվականի մայիսի 10-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը (տե՛ս *McCann and Others v. The United Kingdom*, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, 157-164 կետերը, *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82, *Mastromatteo v. Italy*, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 37703/97, կետ 89, և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, 101-106 կետեր):

31. Մասնավորապես, սույն գործին վերաբերելի մասով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը (կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը) բխում է Մարդու իրավունքիների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված այն իրավական դիրքորոշմամբ, որ եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը (տե՛ս *Velikova v. Bulgaria*, 2000 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 41488/98, կետ 70, *mutatis mutandis*, *Selmouni v. France*, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 87):

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լևոն Գուլյանի մահը վրա է հասել 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից վայր ընկնելու հետևանքով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Նախքան այդ, Լ.Գուլյանը վերոնշյալ վարչություն էր տեղափոխվել ՀՀ ոստիկանության ԶՀԳՎ պետի հանձնարարությամբ, ՀՀ ոստիկանության բարձրաստի-

ճան պաշտոնյաների կողմից, իրենց ծառայողական մեքենայով (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը): Լ.Գուլյանը ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում աշխատասենյակից աշխատասենյակ է տեղափոխվել ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, իսկ նրա ջուր խմելու հարցով զբաղվել է բարձրաստիճան ոստիկանը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

33. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Վելիկովայի* վերաբերյալ վճռով արտահայտված իրավական դիրքորոշման հետ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ, 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների տրամադրության տակ լինելու պայմաններում Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ պետությունը պարտավոր է իրականացնել արդյունավետ քննություն՝ ուղղված նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն ներկայացնելուն:

II. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության դատավարական պարտականության տևողությունը

34. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցն այն է, թե Լ.Գուլյանի մահվան փաստի արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով կարո՞ղ է արդյոք ավարտված համարվել:

35. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային մի քանի որոշումներում արձանագրել է, որ կասկածելի պայմաններում տեղի ունեցած մահվան փաստի արդյունավետ քննության պարտականությունը շարունակում է առկա լինել այնքան ժամանակ, քանի դեռ ակնկալվում է, որ իշխանությունները ողջամտորեն կարող են միջոցներ ձեռնարկել մահվան հանգամանքները բացահայտելու և դրա համար պատասխանատվություն սահմանելու նպատակով (տե՛ս, *mutatis mutandis, Brecknell v. the United Kingdom*, 2007 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 32457/04, 66-72 կետեր, և *Hackett v. the United Kingdom*, 2005 թվականի մայիսի 10-ի որոշումը, գանգատ թիվ 34698/04):

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լ.Գուլյանի մահվան կապակցությամբ քննություն իրականացնելիս չի պարզվել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից Լ.Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը, և այդ նպատակով չի կատարվել քննչական փորձարարություն: Ընդ որում, սույն գործով քննության արդյունավետության տեսանկյունից նշված քննչական փորձարարության կարևորությունը հաստատվել է ինչպես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհա-

նուր իրավասության առաջին ատյանի դատարանի, այնպես էլ նախաքննության մարմնի և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

37. Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Լ.Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը պարզելու նպատակով քննչական փորձարարության կատարման կարևորության մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, նախաքննության մարմնի և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի դիրքորոշմանը:

38. Այս առումով անհրաժեշտ է պարզել, թե ՀՀ համապատասխան իրավապահական մարմինները դեռևս ողջամտորեն կարո՞ղ են միջոցներ ձեռնարկել քննչական փորձարարության համար անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու և քննչական փորձարարությունը կատարելու համար:

Նշված հարցին պատասխանելու համար վերլուծելով ՀՀ գլխավոր դատախազության հարցմանն ի պատասխան Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ուղարկած գրությունը (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ համապատասխան իրավապահական մարմինները դեռևս ողջամտորեն կարող են միջոցներ ձեռնարկել քննչական փորձարարության համար անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու և քննչական փորձարարությունը կատարելու համար: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ուղարկած գրության մեջ նշված է, որ «Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի կողմից ներկայում գնված են 170սմ երկարությամբ և 40կգ քաշով շարնիրային մանեկեններ»: Դրանից հետևում է, որ Լ.Գուլյանի մահվան փաստի քննության համար անհրաժեշտ բնութագրիչներով մանեկենները (178սմ երկարությամբ և 95կգ քաշով) ողջամտորեն կարող են պատվիրվել այն նույն կազմակերպությունից, որից գնումներ է կատարել ՌԴ դատախազությանն առընթեր քննչական կոմիտեն:

39. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշման 16-րդ կետում նշված գրությունը ստանալուց հետո շուրջ 4 ամիս շարունակվող նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը այլևս որևէ միջոց չի ձեռնարկել նշված քննչական փորձարարության կատարումն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, նոր հարցում չի կատարվել ՌԴ դատախազությանը՝ խնդրելով մատնանշել մանեկենները պատրաստող կազմակերպությանը, և այդ կազմակերպությունից Լ.Գուլյանի մահվան փաստի քննության համար անհրաժեշտ բնութագրիչներով մանեկեն պատրաստելու պատվեր չի տրվել:

40. Վերը շարադրված փաստերի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը դեռևս շարունակվում է, քանի որ առկա է ողջամիտ ակնկալիք առ այն, որ անհրաժեշտ մանեկենը ձեռք կբերվի, և համապատասխան քննչա-

կան գործողությունները կկատարվեն:

Քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել, թե Ռ-Գ դատախազությանը կոնկրետ ինչ կազմակերպություն է մատակարարել սույն որոշման 16-րդ կետում վկայակոչված գրությամբ նշված մանեկենները, բանակցել նշված կազմակերպության հետ անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու հարցով, ձևակերպել համապատասխան պատվեր, ստանալ անհրաժեշտ մանեկենը, կատարել քննչական փորձարարություն Լ.Գուլյանի անկման մեխանիզմը պարզելու նպատակով, դրա արդյունքները համադրել գործով ձեռք բերված մյուս տվյալների հետ և անհրաժեշտության դեպքում կատարել դրանից բխող նոր քննչական, այլ դատավարական կամ օպերատիվ-հետախուզական գործողություններ:

41. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված դատավարական պարտականության կատարման մասին վերջնական հետևությունները հնարավոր են միայն քննչական փորձարարության և, անհրաժեշտության դեպքում, դրանից բխող այլ գործողությունների արդյունքների առկայության դեպքում: Այդ պարագայում նշված ապացույցների հաշվառմամբ հնարավոր կլինի նաև ամբողջական գնահատական տալ Լ.Գուլյանի մահվան փաստի քննության արդյունավետությանը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերների բարձրացրած հարցերի պատասխանները կարող են տրվել միայն այն բանից հետո, երբ Լ.Գուլյանի մահվան փաստի առթիվ քննությունը վերջնականապես ավարտվի:

42. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումները և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա.Կարախանյանի և Հ.Դուկասյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումները բեկանել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ՏԳ/0094/01/09 որոշում
Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
Դատավորներ՝ Ս.Ավետիսյան,
Մ.Սիմոնյան

ՏԳ/0094/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՄԱՆԹԱՇՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
2009թ. հոկտեմբերի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Նիկոլայ Խանդամիրի Հով-
սեփյանի պաշտպան Ա.Մանթաշյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. մայիսի 15-ին:

2009թ. հունիսի 4-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Ն.Հովսեփ-
յանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ

քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2. 2009թ. հուլիսի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 13-ի դատավճռով ամբաստանյալ Նիկոլայ Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է կալանքի 2 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Նշված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Տավուշի մարզի դատախազության դատախազ Ա.Չիլինգարյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 5-ի որոշմամբ բավարարել է դատախազի վերաքննիչ բողոքը և բեկանել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 13-ի դատավճիռը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Ն.Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով դատապարտել է ազատագրվման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ն.Հովսեփյանը և նրա պաշտպան Ա.Մանթաշյանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ներկայացված բողոքները չեն բովանդակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորում, 2009թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները վերադարձրել է թերությունները վերացնելու համար՝ սահմանելով բողոքները կրկին ներկայացնելու մեկամսյա ժամկետ:

5. Ն.Հովսեփյանի պաշտպան Ա.Մանթաշյանը վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելուց հետո 2009թ. դեկտեմբերի 17-ին կրկին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

2010թ. հունվարի 12-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ:

6. Մեղադրողի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որտեղ վերջինս, արտահայտելով իր դիրքորոշումն այն մասին, որ Ն.Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 5-ի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չեն տրվել, խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

7. Պաշտպան Ա.Մանթաշյանի վճռաբեկ բողոքի կապակցությամբ Վճռաբեկ դատարան է դիմել նաև տուժողի ներկայացուցիչ Աշոտ Հակոբյանը՝ նշելով, որ ինքը որևէ պահանջ չունի, հիշյալ խողովակները օգտագործման համար պիտանի չեն,

և եթե Ն.Հովսեփյանն իրեն դիմեր, ինքն այդ խողովակներն անհատույց կտար նրան: Ա.Հակոբյանը Վճռաբեկ դատարանին խնդրել է ցուցաբերել մարդասիրական մոտեցում և Ն.Հովսեփյանի նկատմամբ չկիրառել խիստ միջոցներ:

8. Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ սույն գործով իր կողմից կիրառման ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասին, 2010թ. փետրվարի 22-ին որոշում է կայացրել գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համապատասխանությունը որոշելու խնդրանքով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010թ. մայիսի 11-ի ՍԳՈ-882 որոշմամբ գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

9. Նիկոլայ Հովսեփյանը, նախկինում երկու անգամ դատապարտված լինելով գողություններ կատարելու համար, դատվածությունը չմարված, 2008թ. ամռանը Դիլիջան քաղաքի հարակից անտառում՝ «Կոմպոզիտորների տուն» հանգստյան տան մոտ, նկատել է հողի տակ առկա և «Արարատ» հանգստյան տանը պատկանող ջրատար չգործող խողովակներ, որոշել է ապամոնտաժել դրանցից մեկ հատված և օգտագործել անձնական կարիքների համար: Հաջորդ օրը, առանց որևէ մեկից թույլտվություն ստանալու և այդ մասին որևէ մեկին տեղյակ պահելու, իր հետ վերցնելով հող փորելու գործիք, մենակ գնացել է վերոհիշյալ տեղանք, քանդելով հողից հանել է 3 հատ 6 մետր երկարությամբ 13 մմ տրամագծով երկաթյա խողովակներ, դրանք թողել խողովակների տեղից որոշակի հեռավորության վրա՝ հետագայում հարմար պահի տեղափոխելու նպատակով: Մյուս օրը Դիլիջան քաղաքի գլխավոր ճանապարհի վրա պատահական նկատել է մետաղի ջարդոնով բեռնված «ԶԻԼ-157» մակնիշի ավտոմեքենա, դրա վարորդից տեղեկացել, որ մետաղի ջարդոն է գնում և առաջարկել է գնել նախորդ օրը իր հանած և տեղանքում թողած խողովակները: «ԶԻԼ-157» ավտոմեքենայի վարորդը համաձայնվել է գնել խողովակները, նրանք ավտոմեքենայով գնացել են խողովակների մոտ, որտեղ Ն.Հովսեփյանը դրանք բարձել է ավտոմեքենայի մեջ ու դրանց դիմաց վերցրել 18.000 ՀՀ դրամ՝ գնորդից թաքցնելով խողովակների գողացված լինելը:

10. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա խոստովանել է մեղքը, գղջում է կատարածի համար, խնամքին ունի 2 անչափահաս երեխա, չաշխատող կին, թոշակառու ծնողներ, ինքը

վատառողջ է, բնութագրվում է դրական, հանցագործությամբ պատճառել է 27.000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամի նյութական վնաս, որը վերականգնել է, տուժողի ներկայացուցիչը նրանից պահանջ չունի և խնդրել է նրա նկատմամբ մեղմ վերաբերվել:

Դատարանը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել վտանգավոր ռեցիդիվը: Դատարանը նշել է, որ կատարված հանցագործության և նշանակվող պատժի միջև համաչափություն ապահովելու և սոցիալական արդարությունը պաշտպանելու նպատակը դատարանը դիտում է որպես ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմք և վերը շարադրված հանգամանքների գնահատման արդյունքում դատարանը հանգել է հետևության, որ Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու միջոցով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին:

Բացի այդ, հաշվի առնելով ամբաստանյալ Ն.Հովսեփյանի գույքային դրությունը, սոցիալական անապահով վիճակը՝ դատարանը նպատակահարմար չի գտել նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով որպես լրացուցիչ պատժի տեսակ գույքի բռնագրավման կիրառումը:

11. Քննության առնելով մեղադրողի վերաքննիչ բողոքը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված դատավճռի բեկանման հիմք է:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ն.Հովսեփյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմքեր չկան, «առավել ևս երբ առկա է ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող այնպիսի հանգամանք, ինչպիսին է հանցանքի վտանգավոր ռեցիդիվը»:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

12. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Ն.Հովսեփյանի վերաբերյալ 2009թ. հոկտեմբերի 5-ին կայացված դատական ակտով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթները, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Ն.Հովսեփյանի կողմից նախկինում հանցանք կատարելու և դրա համար պատիժ կրած լինելու փաստը չէր կարող նրա

հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, ՀՀ քրեական օրենսգրքում դատավաժության հետ կապված կրկնակիությունը որպես որոշ հանցակազմերի ծանրացնող հանգամանք դիտելը հակասում է *non bis in idem* սկզբունքին:

13. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման և Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա նշանակել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ: Մինչդեռ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, բեկանելով դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով իր պաշտպանյալին դատապարտելով 4 տարի ժամկետով ազատազրկման և չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, թույլ է տվել նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջի խախտում:

Բողոքաբերը նշել է, որ առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս հաշվի է առել, իսկ վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ն.Հովսեփյանը տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար, տառապում է ուղեղի ծանր հիվանդությամբ, նրա խնամքին են 2 մանկահասակ երեխաները, ունի զառամյալ ծնողներ, հայրը ծանր հիվանդ է, Ն.Հովսեփյանը հանցանքը կատարել է նյութական ծանր պայմաններից ելնելով, նա գողացել է հողի մեջ գտնվող կիսաքայքայված, չօգտագործվող խողովակներ, որոնք փորձագիտական եզրակացության համաձայն գնահատվել են ընդամենը 27.000 ՀՀ դրամ, տուժողի ներկայացուցիչը դատարանում խնդրել է ամբաստանյալին ազատել պատժից և հայտարարել է, որ պատրաստ է այդ խողովակները անհատույց նվիրել Ն.Հովսեփյանին, քանի որ իրազեկ է նրա ծայրահեղ վատ նյութական պայմանների մասին:

14. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը եզրահանգում է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, իր պաշտպանյալի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը՝ պահպանել է սոցիալական արդարության սկզբունքը, որը հետագայում խախտվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարելու արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրում է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 5-ի որոշումը և Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 13-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ նշանա-

կելու միջոցով կարելի՞ է, արդյոք, հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների լույսի ներքո վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պատժի նպատակները՝ ՎՃՌաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին: (...)» (ՎՃՌաբեկ դատարանի մի շարք որոշումների թվում տե՛ս, օրինակ, *Հարություն Հաբեշյանի* վերաբերյալ ՎՃՌաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոս 30-ի թիվ ՎԲ-145/07 որոշումը, *Վաչիկ Մնացականյանի* վերաբերյալ ՎՃՌաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-25/08 որոշումը և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք այլ որոշումներ):

17. Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունը՝ ՎՃՌաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

1. գործի բացառիկ հանգամանքները.

2. խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Ինչպես նշված է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում, բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա: (...)» (տե՛ս *Սամվել Հունիկյանի* վերաբերյալ ՎՃՌաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշման 18-րդ կետը):

18. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների գնահատման արդյունքում հանգել է հետևության, որ Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու միջոցով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-

րդ հողվածով սահմանված պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Քննության առնելով մեղադրողի վերաքննիչ բողոքը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված դատավճռի բեկանման հիմք է (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

19. Հիմք ընդունելով սույն որոշման 16-րդ և 17-րդ կետերում վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում առկա վերլուծությունը, ինչպես նաև սույն որոշման 18-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատճառաբանված չէ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հետևությունն այն մասին, թե Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմքեր չկան:

20. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում՝ գտնելով, որ առկա է Ն.Հովսեփյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող այնպիսի հանգամանք, ինչպիսին է հանցանքը կատարելու վտանգավոր ռեցիդիվը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը հանդիսանում է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք: Նույն հոդվածի 4-րդ մասում ամրագրված է, որ «Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք»: Մինևս սույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է սահմանում գողության համար, որը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-182-րդ և մի շարք այլ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ վերջինս, անտեսելով մեջբերված իրավանորմերի պահանջները, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրվող Ն.Հովսեփյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել հանցանքը կատարելու վտանգավոր ռեցիդիվը, մինչդեռ դա արդեն իսկ նախատեսված էր որպես նրան մեղսագրվող հանցագործության հատկանիշ:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 16-20-րդ կետերում առկա դատողություն-

ները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման անհրաժեշտության մասին հետևության է հանգել օբյեկտիվորեն գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերի առկայության մասին:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են Ն.Հովսեփյանի կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, հետևաբար նրա նկատմամբ կարող է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, գործում Ն.Հովսեփյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմքերի առկայության պայմաններում որոշում կայացնելով նրա նկատմամբ հիշյալ հոդվածի կիրառման սխալ լինելու մասին, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում՝ չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Դա հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացման:

23. Հիմք ընդունելով սույն որոշման հիմնավորումները և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 13-ի դատավճիռը բեկանելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ Գ-Գ-1/0003/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Չիչյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան,
Ա.Հովհաննիսյան

Գ-Գ-1/0003/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արամ Սեր-
յոժայի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ
մասով և 244-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վե-
րաքննիչ դատարան) 2010 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ մեղադրող Վ.Լա-
զարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր
վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի
242-րդ հոդվածի 2-րդ մասի և 244-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ

40106609 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից Գ-ավառ քաղաքի բնակիչ Միեր Իսրայելյանին վրաերթի ենթարկելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հունվարի 27-ի որոշմամբ Արամ Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով: Նույն օրը մեղադրյալ Ա.Սահակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չիեռանալու մասին ստորագրությունը:

2010 թվականի փետրվարի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացու-թյամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատ-յանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 22-ի դատավճռով Ա.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, 244-րդ հոդվածով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդ-վածի 2-րդ մասով ազատազրկման 2 տարի ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից 2 տարի ժամկետով, 244-րդ հոդվածով՝ ազատազրկման 6 ամիս ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից 1 տա-րի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով, նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով Առաջին ատյանի դատարանը Ա.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 2 տարի 6 ամիս ժամկետով՝ զրկե-լով նրան տրանսպորտային միջոց վարելու իրավունքից 3 տարի ժամկետով:

Ա.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշը-ջան 2 տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի մայիսի 31-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 22-ի դա-տավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ վճռա-բեկ բողոք է բերել մեղադրող Վ.Լազարյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողո-քը վարույթ է ընդունվել:

Գ-ատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության հա-մար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Սահակյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի նո-յեմբերի 26-ին՝ 20:30-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլային հարբածության

վիճակում, իր անձնական օգտագործման «ԲՄՎ 520» մակնիշի ավտոմեքենայով Գավառ քաղաքի Ջորավար Անդրանիկ փողոցով երթևեկելիս, չհասած «Արեգակ» վարկային կազմակերպության գրասենյակին, նկատելով իր ընթացքի ուղղությամբ, ճանապարհի աջ եզրով, մայթեզրից մոտ 1.5 մետր դեպի ձախ հեռավորությամբ իր ավտոմեքենայի ընթացքին համընթաց քայլող Սիեր Իսրայելյանին, Հակոբ Գվոյանին և Գևորգ Օհանյանին, ցուցաբերելով հանցավոր անզգուշություն և հույս ունենալով անվտանգ անցնել նրանց կողքով, թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների 67-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ 61.7 մետր հեռավորությունից նկատելով իր երթևեկությանը համընթաց ուղղությամբ, երթևեկելի ուղեմասով իր ավտոմեքենայի առջևում գտնվող օբյեկտներին, իսկ 43.7 մետր հեռավորությունից տեսնելով, որ դրանք մարդիկ են, անվտանգ մանևրումով նրանց շրջանցելու կամ ավտոմեքենայի ընթացքը դանդաղեցնելու փոխարեն շարունակել է ընթացքը և մոտենալով նրանց՝ վրաերթի է ենթարկել Մ.Իսրայելյանին՝ նրան պատճառելով մահ և թողնելով դեպքի վայրը՝ դիմել է փախուստի:

6. Գատաքիմիական փորձագետի 2009 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1115 եզրակացության համաձայն՝ «Հետազոտման պահին 27.11.2009թ. ներկայացված [Ա.Սահակյանի] արյան փորձանմուշում ալկոհոլի՝ էթիլ սպիրտի պարունակությունը կազմեց 1.77 գր/լ» (տե՛ս քրեական գործ, էջ 70):

7. Գեպքին նախորդած պահին Ա.Սահակյանի հետ հանդիպած Սուսաննա Մակվեցյանի ցուցմունքի համաձայն՝ Ա.Սահակյանն այն աստիճան հարբած էր, որ անիմաստ մտքեր էր արտահայտում (տե՛ս քրեական գործ, 14-15 էջեր):

8. Վրաերթից անմիջապես հետո դիմելով փախուստի՝ Ա.Սահակյանն ավտոմեքենան թողել է Գավառ-Նորադուս ավտոճանապարհի վրա գտնվող կամրջի հարևանությամբ և հեռացել: Ավտոմեքենան հայտնաբերվել և տուգանային հրապարակ է տեղափոխվել ոստիկանության աշխատակիցների կողմից: Այնուհետև ոստիկանության աշխատակիցների կողմից տարված պրոֆիլակտիկ և բացատրական աշխատանքների շնորհիվ Ա.Սահակյանը 2009 թվականի նոյեմբերի 27-ին՝ ժամը 00:15-ին, ներկայացել է ՀՀ ոստիկանության Գավառի բաժին (տե՛ս քրեական գործ, 12-13 էջեր):

9. Քրեական գործի նախաքննության ընթացքում Ա.Սահակյանը մի քանի անգամ տվել է տարբեր բովանդակություն ունեցող ցուցմունքներ, ինչպես նաև առերես հարցաքննվել է տուժող Մ.Իսրայելյանի հետ դեպքի վայրում եղած վկաներ Հ.Գվոյանի և Գ.Օհանյանի հետ (տե՛ս քրեական գործ, 16-17, 35-37, 38-40, 46-48, 49-50, 83, 97-98 էջեր):

10. Առաջին առյուծի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Ուսումնասիրելով ամբաստանյալ Արամ Մերյոժայի Սահակյանի անձը բնութագրող տվյալները, պարզելով նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքի առկայությունը, դատարանը որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ նա առաջին անգամ հանգամանքների պա-

տահական զուգորդմամբ կատարել է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ: Դատարանը միաժամանակ որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում նաև այն, որ նա կատարած հանցագործությունից հետո զոջացել է կատարածի համար, հաշտվել տուժողի հարազատների հետ և կամովին հատուցել է հանցագործությամբ նրանց պատճառված նյութական վնասը, և տուժողի իրավահաջորդը դիմել է դատարանին՝ նրա նկատմամբ մեղմ պատիժ սահմանելու խնդրանքով: Իսկ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտում այն, որ նա հանցագործությունը կատարել է ալկոհոլ օգտագործած վիճակում: (...)

Ամբաստանյալ Արամ Մերյոժայի Սահակյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս դատարանը միաժամանակ հանգելով այն հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, հետևաբար գտնում է, որ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չպետք է կիրառվի և պետք է սահմանվի փորձաշրջան: (...)» (տե՛ս քրեական գործ, էջ 216):

11. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը վերլուծելով և գնահատելով գործում առկա մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև ծանրացնող հանգամանք՝ հանցագործությունը ալկոհոլ օգտագործած վիճակում կատարելը, հաշվի առնելով նրա անձը բնութագրող հատկանիշներն իրենց համակցության մեջ, մասնավորապես այն, որ նա տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, հոգացել է հանգուցյալի հուղարկավորության ծախսերը, ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, նախկինում դատված չի եղել, խնամքին են երկու անչափահաս երեխա, բնութագրվում է դրական՝ հանգում է հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ և ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Այն բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից: (...)» (տե՛ս քրեական գործ, էջ 247):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջների խախտում:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատա-

րանն արժանի գնահատական չի տվել ամբաստանյալ Ա.Սահակյանի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքին՝ հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելուն:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ դեպքից անմիջապես հետո Ա.Սահակյանը դիմել է փախուստի՝ որևէ օգնություն չցուցաբերելով տուժողին: Բացի այդ, քրեական գործի նախաքննության ընթացքում Ա.Սահակյանը, թեև իրեն մեղավոր է ճանաչել կատարած հանցանքների համար, սակայն տվել է իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ՝ դրանով իսկ նպատակ հետապնդելով խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից:

Վերոգրյալ հանգամանքների գնահատմամբ՝ բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանի մատնանշած՝ Ա.Սահակյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները բավարար չեն հանգելու այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 31-ի որոշումը և Ա.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակել առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ամբաստանյալ Ա.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը,

կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակի և չափի որոշման ժամանակ հաշվի առնվող հանգամանքների հետ կապված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ.Մադաթյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գ-արուշ Մադաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ-0029/01/08 որոշման 14-րդ կետը):

17. Անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-124/07, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԶԳ-0078/01/09 և այլ որոշումներում:

Մասնավորապես, *Գ.Հովհաննիսյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու

միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս Դավիթ Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը):

Թ.Տեր-Գրիգորյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս, Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

18. Հիմք ընդունելով սույն որոշման 15-17-րդ կետերում մեջբերված օրենսդրական կարգավորումները և դրանց հիման վրա Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս դատարանն ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան և այլն) պետք է հաշվի առնի ամբաստանյալի կողմից հանցագործության կատարման եղանակը: Վճռաբեկ դատարանը կրկնում է նաև, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարված հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի

զնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար, որի արդյունքում մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանն անգգուշությամբ հասցվել է վնաս:

Վերոնշյալ հանցակազմի սուբյեկտիվ կողմի բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ հանցանք կատարող անձը հասկանում է, որ իր գործողությունների (անգործության) արդյունքում կարող է հանրության համար վտանգավոր հետևանքներ առաջանան, այսինքն՝ նա գիտակցում է, որ իր կողմից թույլ տված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում հնարավոր է տեղի ունենա վթար և մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանը հասցվի վնաս, սակայն, ցուցաբերելով հանցավոր անգգուշություն, այնուամենայնիվ, թույլ է տալիս նշված խախտումը՝ հույս ունենալով խուսափել հնարավոր ծանր հետևանքների առաջացումից:

Օբյեկտիվ կողմից նշված արարքը դրսևորվում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ, որոնցից առավել կոպիտ խախտումներն ամրագրված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

20. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 18-րդ և 19-րդ կետերում առկա հիմնավորումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ գործերով դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: Նշված հանգամանքի կարևորումը պայմանավորված է նրանով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված՝ ճանապարհային երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումները (լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը և այլն) վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների

առաջացման հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրասնպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը կարևոր նշանակություն ունի նաև հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Սահակյանն իրեն մեղսագրվող հանցագործությունները կատարել է՝ գտնվելով ակտիվալային հարբածության վիճակում (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Շարադրված փաստական տվյալները հնարավորություն են տալիս եզրահանգելու, որ Ա.Սահակյանի ակտիվալային հարբածության վիճակը հանդիսացել է նրա կողմից հանցանքը կատարելուն նպաստող պայման, սակայն ստորադաս դատարանները, արձանագրելով, որ ակտիվալային հարբածության առկայությունը հաշվի են առնում որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (տե՛ս սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերը), այնուամենայնիվ, նշված հանգամանքը պատշաճ գնահատականի չեն արժանացրել:

22. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման տեսանկյունից կարևոր է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումից հետո անձի դրսևորած վարքագծի գնահատումը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևորում է հանցագործության կատարումից անմիջապես հետո հանցանք կատարած անձի վարքագիծը, ինչպես նաև նրա վարքագիծը հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը պետք է գնահատի այն հանգամանքը, թե հանցագործության կատարումից անմիջապես հետո ամբաստանյալն արդյոք անհրաժեշտ օգնություն է ցուցաբերել տուժողին, թե, թողնելով դեպքի վայրը, դիմել է փախուստի: Հետագա վարքագծի գնահատման համար դատարանը պետք է ուշադրության արժանացնի նաև այն, թե քրեական գործի քննության ընթացքում ամբաստանյալն արդյոք ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, դեպքի վերաբերյալ տվել ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ, արդյոք որոշակի քայլեր է ձեռնարկել տուժողի կամ նրա հարազատների հետ հաշտվելու ուղղությամբ կամ ինքնակամ հատուցել է հանցագործության արդյունքում տուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը:

23. Զննության առարկա գործի նյութերով հիմնավորվել է, որ ամբաստանյալ Ա.Սահակյանը, վրաերթի ենթարկելով Մ.Իսրայելյանին, դեպքի վայրից դիմել է փախուստի՝ որևէ օգնություն չցուցաբերելով տուժողին: Դրանից հետո Ա.Սահակյանը,

թողնելով ավտոմեքենան, հեռացել է և միայն ոստիկանության աշխատակիցների կողմից նրա ավտոմեքենան հայտնաբերելուց, հանցավորի անձը պարզելուց և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելուց հետո, ներկայացել է ոստիկանության բաժին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Բացի այդ, քրեական գործի մախաբնության ընթացքում Ա.Սահակյանը բազմիցս հարցաքննվել է և յուրաքանչյուր դեպքում տվել հակասական, իրարամերժ ցուցմունքներ, մի դեպքում նշելով, թե իբր չի նկատել, որ վրաերթ է կատարել, մյուս դեպքում՝ որ ճանապարհի նշված հատվածը սառցապատ էր, երրորդ դեպքում՝ որ հանդիպակաց ավտոմեքենան իր հեռահար լույսերով կուրացրել է իրեն: Ա.Սահակյանի ցուցմունքներում առկա հակասությունները պարզելու նպատակով վերջինս առերես հարցաքննվել է դեպքին ակնատես այլ վկաների հետ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), որի արդյունքում, ինչպես նաև քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով Ա.Սահակյանի տված բոլոր ցուցմունքները հերքվել են:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի դատական ակտում նշված է, որ Ա.Սահակյանը դեպքի վերաբերյալ տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

24. Հիմք ընդունելով սույն որոշման 15-23-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից հաշվի առնված՝ Ա.Սահակյանի անձը բնութագրող և նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքերը չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Ա.Սահակյանի կատարած հանցագործություններին: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Ա.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները և անհիմն կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Այսինքն՝ կիրառվել է քրեական օրենսգրքի հոդված, որը ենթակա չէր կիրառման, դրա արդյունքում թույլ է տրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում: Այսպիսով, ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Սահակյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով, սխալ են կիրառել քրեական օրենքը:

25. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի նշված ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտերի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

26. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արամ Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 22-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0045/11/10
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան

ԵԿԴ/0045/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ դիմող Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցը 2010 թվականի հունվարի 13-ին հաղորդումներ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ 2010 թվա-

կանի հունվարի 10-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ թիվ 10/14 և 10/15 ընտրատեղամասերում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ:

Ա.Սաքունցը 2010 թվականի փետրվարի 22-ին և 2010 թվականի փետրվարի 27-ին դիմումներ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով տրամադրել կազմակերպության ներկայացրած հաղորդումների հիման վրա կայացված որոշումների պատճենները:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Գրիգորյանի 2010 թվականի մարտի 3-ի և 2010 թվականի մարտի 10-ի գրություններով կայացված որոշումների պատճենների տրամադրումը մերժվել է:

2. 2010 թվականի ապրիլի 13-ին Ա.Սաքունցը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան), որը դատարանի 2010 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Սաքունցը, որը Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 17-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Սաքունցը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցն Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2010 թվականի մայիսի 10-ին:

6. Վերաքննիչ դատարանն Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Դիմող «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի կողմից 10.05.2010թ. վերաքննիչ բողոք է բերվել ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.04.2010թ. կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի դեմ, հետևաբար՝ ներկայացված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, քանի որ բողոք բերած անձի կողմից չի

պահպանվել գործն ըստ էության չլուծող դատական ակտը Վերաքննիչ դատարան բողոքարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով ամրագրված տասնօրյա ժամկետը, ինչը հիմք է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու համար (...)» (տե՛ս նյութեր, էջ 101):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ, 83-րդ և 84-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ծրարի վրա առկա կնիքը, գտել է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2010 թվականի մայիսի 10-ին, և բողոքը համարել է ժամկետանց, մինչդեռ բողոքն իր կողմից կապի կազմակերպությանն է հանձնվել 2010 թվականի մայիսի 8-ին, ինչը հաստատվում է վճարման անդորրագրի վրա առկա կնիքով, որի պատճենը ներկայացրել է վճռաբեկ բողոքին կից:

8. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ նույնիսկ այն դեպքում, եթե Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ներկայացման օր է դիտել 2010 թվականի մայիսի 10-ը, ապա պետք է համարեր այն ժամկետի մեջ տրված, քանի որ 2010 թվականի մայիսի 8-ը եղել է շաբաթ օր, որը Հայաստանի Հանրապետությունում համարվում է ոչ աշխատանքային, հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման վերջնաժամկետը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի ուժով եղել է հաջորդ աշխատանքային օրը՝ 2010 թվականի մայիսի 10-ը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 17-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է. սույն գործով վերաքննիչ բողոքը բերվե՞լ է արդյոք գործն ըստ էության չլուծող դատական ակտերը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու համար սահմանված ժամկետի պահպանմամբ:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում են՝ առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝
«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող աշխատանքային օրը (...):

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, (...) Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով (...):»:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով (...):»:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ շաբաթը և կիրակին (...):»:

12. Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 28-ին կայացրել է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կազմել է հրապարակվելու պահից տասը օր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկ կատարելու արդյունքում ստացվում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 28-ի որոշման բողոքարկման վերջնաժամկետ է հանդիսացել 2010 թվականի մայիսի 8-ը ներառյալ: Մինչդեռ 2010 թվականի մայիսի 8-ը եղել է շաբաթ, այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ հանգստյան օր, հետևաբար՝ հիշատակված դատական ակտի բողոքարկման վերջնաժամկետ է հանդիսացել հաջորդ աշխատանքային օրը՝ 2010 թվականի մայիսի 10-ը՝ մինչև ժամը քսանչորսը:

Համաձայն դիմող Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքի, ծրարի վրա առկա փոստային ծառայության դրոշմակնիքի՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2010 թվականի մայիսի 10-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

13. Հիմք ընդունելով սույն որոշման 11-րդ կետում առկա օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև 12-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ Ա.Սաքունցի կողմից վերաքննիչ բողոք է բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ

կետով սահմանված տասնօրյա ժամկետի պահպանմամբ, իսկ ներկայացված բողոքի ժամկետանց լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը) անհիմն են:

14. Նկատի ունենալով, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Ա. Սաքունցի կողմից վերաքննիչ բողոք ցանկացած դեպքում բերվել է քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ բողոքաբերի այն պնդմանը, թե իր կողմից վերաքննիչ բողոքը կապի կազմակերպության է հանձնվել 2010 թվականի մայիսի 8-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: «Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

21.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿԴ/0151/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ս.Չիչոյան, Ե.Դարբինյան

ԵԿԴ/0151/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն.ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆԻ

2010 թվականի օգոստոսի 27-ին

. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի
(այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010թ. ապրիլի 30-ի որոշման դեմ Հրայր
Գեղամի Հարությունյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. հունվարի 16-ին:

2009թ. հունիսի 25-ին Հրայր Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ
քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2009 թվականի հուլիսի 17-ին Հ.Հարությունյանի վերաբերյալ քրեական գործը
մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-

Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճռով Հ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նշանակված պատժին հաշվակցվել է Հ.Հարությունյանի՝ նախնական կալանքի տակ գտնված 3 (երեք) օր ժամկետը և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը և Հ.Հարությունյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց:

Առաջին ատյանի դատարանի դատավճռում որպես Հ.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտվել այն, որ վերջինս 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով կամովին փոխհատուցել է պետությանը պատճառված վնասը:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից մնացյալ՝ 134.505.800 (հարյուր երեսունչորս միլիոն հինգ հարյուր հինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ. վճռվել է հօգուտ պետական բյուջեի այն բռնագանձել «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ տնօրեն Հրայր Հարությունյանից:

3. Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրող Ա.Բոշնադյանը և ամբաստանյալ Հ.Հարությունյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը:

Վերաքննիչ դատարանը 2010թ. ապրիլի 30-ին կայացրած իր որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ամբաստանյալ Հ.Հարությունյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Հրայր Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, լինելով «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ տնօրեն, 2006թ. հունիսից 2008թ. նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն, այն է՝ Երևան քաղաքի Աբովյան 35/1 հասցեում գտնվող 1283.6քմ

տարածքները տրամադրել է առևտրական գործունեություն իրականացնելու համար, ինչի պայմաններում պարտավոր էր իր հարկային պարտավորությունները հաշվարկել և կատարել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սակայն խախտելով հիշյալ օրենքի 10-րդ և 28-րդ հոդվածների պահանջները՝ 2006թ. հունիսի 1-ից մինչև 2008թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատել է պարզեցված հարկով, իսկ 2008թ. հունվարի 1-ից սկսած՝ ընդհանուր հարկման կարգով և վերոհիշյալ ժամանակաշրջանի համար հարկային տեսչություն չի ներկայացրել հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն, չի հաշվարկել և պետական բյուջե չի վճարել հաստատագրված վճարի գումարներ: Դրա արդյունքում, հարկման համար հիմք հանդիսացող հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, չարամտորեն խուսափել է հաստատագրված վճարի գծով առանձնապես խոշոր չափերի՝ 135.505.800 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

6. Գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ Առաջին ատյանի դատարանը 2010թ. փետրվարի 1-ի դատավճռով հաստատված է համարել, որ Հրայր Հարությունյանը չարամտորեն խուսափել է հաստատագրված վճարի գծով առանձնապես խոշոր չափերի՝ 135.505.800 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք:

7. Բողոքի հեղինակի կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված տվյալների համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2010թ. փետրվարի 3-ին կայացվել և արդեն իսկ օրինական ուժի մեջ է մտել Մյասնիկյանի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերության՝ 273.882.800 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին բավարարելու վերաբերյալ վճիռը: Նշված վճռով որոշվել է «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել հաստատագրված վճար՝ 273.882.800 ՀՀ դրամ, որից ապառք՝ 135.505.800 ՀՀ դրամ, տույժ՝ 56.573.500 ՀՀ դրամ, տուգանք՝ 81.803.500 ՀՀ դրամ:

8. Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկել է մեղադրողը, վերջինիս բողոքը Վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և նշանակվել քննության՝ վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 585):

Մեղադրողի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին Վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 3-ի որոշումը նույն օրն ուղարկվել է ինչպես բողոք բերած անձին, այնպես էլ ամբաստանյալ Հ.Հարությունյանին և նրա պաշտպան Ն.Բաղդասարյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջեր 586-591):

9. Մեղադրողի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո, նույն օրը՝ 2010թ. մարտի 3-ին, Վերաքննիչ դատարան է մուտք եղել պաշտպան Ն.Բաղդասարյանի կողմից 2010թ. մարտի 1-ին փոստին հանձնված վերաքննիչ բողոքը, որը Վերաքննիչ դատարանի 2010թ. մարտի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 592):

2010թ. մարտի 4-ի որոշումը չի բովանդակում մատնանշում այն մասին, թե ինչ դատավարական ձևով է իրականացվելու բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում:

Գործի նյութերում առկա չէ պաշտպանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ 2010թ. մարտի 4-ի որոշումը դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող որևէ փաստաթուղթ:

10. Պաշտպան Ն.Բաղդասարյանը 2010թ. մարտի 9-ին դիմում է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Հովհաննիսյանին, և 2010թ. մարտի 9-ին ժամը 13-ին նշանակված դատական նիստի կապակցությամբ հայտնել, որ իր կողմից ևս վերաքննիչ բողոք է բերվել, որը պետք է քննության առնվի դատախազի բողոքի հետ մեկտեղ: Միաժամանակ խնդրել է իր բողոքի քննության համար սահմանել վերաքննության կարգ, քանի որ պաշտպանության կողմը պետք է ներկայացնի ապացույցներ, որոնք հնարավորություն չի ունեցել ներկայացնելու Առաջին ատյանի դատարանում (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 593):

Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշմամբ մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ դատավճիռը՝ թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

11. Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով:

12. Բողոքաբերը փաստարկում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից իր պաշտպանյալ Հ.Հարությունյանի նկատմամբ դատավճիռ կայացնելու պահին նրա մեղադրանքի հիմքում դրված՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը չի գործել, ուստի դատարանն իրավունք չուներ Հ.Հարությունյանին մեղավոր ճանաչել չգործող օրենքը խախտելու արդյունքում հարկերից չարամտորեն խուսափելու համար: Հետևաբար, Հ.Հարությունյանի նկատմամբ թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում՝ նրա նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, որը տվյալ գործով կիրառման ենթակա չէր:

Բացի այդ, բողոքաբերը շեշտում է, որ Հ.Հարությունյանը չէր էլ կարող գիտակցել, որ ինքը սխալ հարկատեսակ է վճարում, քանի որ «Հրայր Հարություն-

յան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերությունը բազմիցս ենթարկվել է ստուգման հարկային մարմինների աշխատակիցների կողմից, և բոլոր ստուգողներն արձանագրել են, որ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերությունը տոնավաճառ չի հանդիսանում և առևտրի կազմակերպման գործունեությամբ չի զբաղվում: Վերոգրյալից բողոքաբերը եզրահանգում է, որ Հ.Հարությունյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի սուբյեկտիվ կողմը:

Շարադրված փաստարկների հիման վրա բողոք բերած անձը գտնում է, որ Հ.Հարությունյանի նկատմամբ թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որը դատական ակտը բեկանելու և Հ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է: Ուստի, ըստ բողոքաբերի, Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը պետք է բեկանել և փոփոխել՝ Հ.Հարությունյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

13. Բողոքաբերը նշում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է *Գևորգ Հախնազարյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԶԲԴ/0219/01/08 որոշմանը:

Այս կապակցությամբ բողոքի հեղինակը փաստարկում է, որ չի ստացել իր վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը և չի տեղեկացվել Վերաքննիչ դատարանում իր բողոքի քննության կարգի մասին: Ընդ որում, ինքը նախապես՝ 2010թ. մարտի 9-ին, գրավոր դիմել է Վերաքննիչ դատարան և հայտնել, որ չի ստացել որոշումը ու խնդրել է իր բողոքի քննության համար սահմանել վերաքննության կարգ:

Ելնելով վերոգրյալից՝ պաշտպանը գտնում է, որ Հ.Հարությունյանի նկատմամբ թույլ է տրվել դատավարական իրավունքի խախտում, որպիսի խախտումը դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք է: Ուստի, Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

14. Բողոքի հեղինակը գտնում է նաև, որ ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած քաղաքացիական հայցը չի կարող բավարարվել, քանի որ առկա է ՀՀ վարչական դատարանի կողմից 2010թ. փետրվարի 3-ին կայացված և արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի համաձայն՝ Մյասնիկյանի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերության՝ 273.882.800 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին՝ բավարարվել է և վճռվել է «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել հաստատագրված վճար՝ 273.882.800 ՀՀ դրամ, որից ապառք՝ 135.505.800 ՀՀ դրամ, տույժ՝ 56.573.500 ՀՀ դրամ, տուգանք՝ 81.803.500 ՀՀ դրամ:

Բողոքաբերը գտնում է, որ այս պայմաններում, երբ առկա է, մի կողմից՝ Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռը, որով ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ և վճռվել է պահանջված գումարը հոգուտ պետական բյուջեի բռնագանձել «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ տնօրեն Հրայր Հարությունյանից, իսկ մյուս կողմից՝ ՀՀ վարչական դատարանի՝ 2010թ. փետրվարի 3-ին կայացված և արդեն օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով բավարարվել է հարկային մարմնի հայցն ընդդեմ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ ընկերության, Վերաքննիչ դատարանը պետք է բավարարեր իր բողոքը և մերժեր քաղաքացիական հայցը, քանի որ «դատախազության կողմից պահանջվող հայցի վերաբերյալ արդեն իսկ գոյություն ունի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ»:

15. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրում է.

ա) վճռաբեկ բողոքի 4-րդ գլխի 1-ին կետում շարադրված փաստարկները (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) հիմնավոր համարելու դեպքում՝ ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը, Հ.Հարությունյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ և քրեական գործի վարույթը կարճել:

բ) վճռաբեկ բողոքի 4-րդ գլխի 2-րդ կետում շարադրված փաստարկները (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը) հիմնավոր համարելու դեպքում՝ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

գ) վճռաբեկ բողոքի 4-րդ գլխի 3-րդ կետում շարադրված փաստարկները (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը) հիմնավոր համարելու դեպքում՝ քաղաքացիական հայցի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը, մերժել ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած քաղաքացիական հայցը և քաղաքացիական հայցի մասով վարույթը կարճել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Վերաքննիչ դատարանում գործի քննության դատավարական կարգը պահպանված լինելը.

16. Վճռաբեկ դատարանը, նախ, պետք է պատասխանի այն հարցին, թե սույն գործով Վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է արդյոք Վերաքննիչ դատարանում գործերի քննության դատավարական կարգը:

17. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում [Գլուխ 47. «Գործի քննությունը վերաքննիչ դատարանում»] շարադրված

կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով»:

18. *Գ.Հախնազարյանի* վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ դատավարության մասնակիցները պետք է նախապես տեղյակ լինեն, թե ինչ դատավարական ձևով է իրականացվելու բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, քանի որ դա անձի արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք է (տե՛ս *Գ-Լորգ Հախնազարյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 29-ի թիվ Ե-ԶԲԴ/0219/01/08 որոշման 18-րդ կետը):

Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը ամրագրել է նաև, որ «վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, երբ`

ա) դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ նշել է այդ մասին և հիշյալ որոշումը պատշաճ կարգով ուղարկվել է դատավարության մասնակիցներին,

բ) վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ Վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ Առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդությունները Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն» (տե՛ս *Գ-Լորգ Հախնազարյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 29-ի թիվ Ե-ԶԲԴ/0219/01/08 որոշման 19-րդ կետը):

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը Վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո, նույն օրը` 2010թ. մարտի 3-ին, Վերաքննիչ դատարան է մուտք եղել ամբաստանյալ Հ.Հարությունյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի կողմից 2010թ. մարտի 1-ին փոստին հանձնված վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ դատարանը 2010թ. մարտի 4-ին կայացրել է որոշում` պաշտպանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Պաշտպանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը Վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին 2010թ. մարտի 4-ի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ այն չի բովանդակում մատնանշում այն մասին, թե ինչ դատավարական ձևով է իրականացվելու բողոքի քննությունը Վերաքննիչ դատարանում, և բացի այդ` գործի նյութերում առկա չէ հիշյալ որոշումը դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող

որևէ փաստաթուղթ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

20. Սույն որոշման 19-րդ կետում նշված փաստերի նկատմամբ կիրառելով *Գ. Հախնազարյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանի սահմանաձև սույն որոշման 18-րդ կետում նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի պահպանել վճռաբեկության կարգով բողոքը քննելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը:

II. Քաղաքացիական հայցը քննելու և լուծելու իրավասությունը

21. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. սույն գործով քաղաքացիական հայցին լուծում տալով Վերաքննիչ դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք օրենքի խախտում՝ այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանի դատավճռից հետո ՀՀ վարչական դատարանը վճիռ էր կայացրել քաղաքացիական հայցի առարկայի վերաբերյալ:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն (...) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքով:

3. Քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

(...):»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ»:

23. Վկայակոչված և շարադրված դրույթների վերլուծությունից բխում է, որ քրեական դատավարությունում հարուցված հայցը պետք է մերժվի, եթե քրեական գործի քննության ընթացքում ամբաստանյալին ներկայացված քաղաքացիական հայցի կապակցությամբ մեկ այլ դատարանի կողմից վճիռ է կայացվել և վերջինս մտել է օրինական ուժի մեջ:

24. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ տնօրեն Հ. Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելուց և դատապարտելուց բացի Առաջին ատյանի դատարանն ամբողջությամբ բավարարել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից 134.505.800 ՀՀ դրամի չափով ներկայացրած քաղաքացիական հայցը (տե՛ս սույն

որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների հիման վրա Վերաքննիչ դատարանի կողմից որոշում է կայացվել 2010թ. ապրիլի 30-ին (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Բողոքի հեղինակի կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված տվյալների համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2010թ. փետրվարի 3-ին կայացվել և արդեն իսկ օրինական ուժի մեջ է մտել Մյասնիկյանի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերության՝ 273.882.800 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին բավարարելու վերաբերյալ վճիռը: Նշված վճռով որոշվել է «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել հաստատագրված վճար՝ 273.882.800 ՀՀ դրամ, որից ապառք՝ 135.505.800 ՀՀ դրամ, տույժ՝ 56.573.500 ՀՀ դրամ, տուգանք՝ 81.803.500 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

25. Մեջբերված փաստական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ նախքան սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից որոշման կայացումը, ՀՀ գլխավոր դատախազության կողմից Հ.Հարությունյանին ներկայացված քաղաքացիական հայցի չափը ներառող մեկ այլ հայց է բավարարվել ՀՀ վարչական դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանի կողմից 2010թ. ապրիլի 30-ի որոշման կայացման պահին ՀՀ վարչական դատարանի վերոնշյալ վճիռն արդեն մտել էր օրինական ուժի մեջ:

Հետևաբար, սույն որոշման 23-րդ կետում առկա վերլուծությունը կիրառելով սույն որոշման 24-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով քաղաքացիական հայցին լուծում տալով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել օրենքի խախտում, քանի որ նախքան Վերաքննիչ դատարանում սույն գործով ներկայացված բողոքների քննությունը ՀՀ վարչական դատարանը վճիռ էր կայացրել քաղաքացիական հայցի առարկայի վերաբերյալ:

26. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն որոշման 21-25-րդ կետերում շարադրված դատողությունների լույսի ներքո պետք է կրկին քննության առնի ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված քաղաքացիական հայցի վերաբերյալ բողոքի հեղինակի փաստարկը:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 16-26-րդ կետերում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

III. Բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութական իրավունքի խախտման հարցը

28. Անդրադառնալով բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութական իրավունքի խախտման հարցին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

2008թ. օգոստոսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-154-Ն ՀՀ օրենքը: Նշված օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլուխը (որում ներառված է նաև 28-րդ հոդվածը), 2010թ. հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո մեկնաբանելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-154-Ն ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջինս հանդիսանում է Հ.Հարությունյանի դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտ, որը պետք է հետադարձ ուժ ունենա:

29. Ինչպես երևում է քրեական գործի նյութերից, Հ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, լինելով «Հրայր Հարությունյան» առևտրի կենտրոն ՍՊԸ տնօրեն, 2006թ. հունիսի 1-ից մինչև 2008թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատել է պարզեցված հարկով, իսկ 2008թ. հունվարի 1-ից սկսած՝ ընդհանուր հարկման կարգով ու վերոհիշյալ ժամանակաշրջանի համար հարկային տեսչություն չի ներկայացրել հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն, չի հաշվարկել և պետական բյուջե չի վճարել հաստատագրված վճարի գումարներ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

30. Սույն որոշման 28-րդ կետում շարադրված իրավական դրույթների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 29-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-154-Ն ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հանդիսանում է Հ.Հարությունյանի դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտ, որը պետք է հետադարձ ուժ ունենա: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հարցը պետք է քննության առնվի Վերա-

քննիչ դատարանի կողմից:

31. Վերոնշյալ փաստական հանգամանքներից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը վերացված լինելու մասին պաշտպանի փաստարկը տեղ չի գտել նրա վերաքննիչ բողոքում: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել վճռաբեկության կարգով բողոքը քննելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգը (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը խոչընդոտել է պաշտպանության կողմին Հ.Հարությունյանի նյութական իրավունքի խախտման վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու հնարավորության հարցում:

32. Հիմք ընդունելով սույն որոշման 28-30-րդ կետերում առկա վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, պահպանելով Գ.Հախնազարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման իրավական պահանջները, գործի նոր քննությամբ պետք է անդրադառնա նաև սույն որոշման 28-րդ կետում շարադրված իրավական հարցին՝ նկատի առնելով որոշման 29-30-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հրայր Գեղամի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 1-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. ապրիլի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿԴ/0149/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Մ.Սիմոնյան, Ս.Ավետիսյան

ԵԿԴ/0149/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

**Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՔԱԼԱՇՅԱՆԻ**

2010 թվականի օգոստոսի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Արտյոմ Նորայրի Հակոբյանի վերաքննիչ Վճռաբեկ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010թ. մայիսի 3-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Ա.Քալաշյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2008թ. հոկտեմբերի 25-ին:

2008թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ Արտյոմ Նորայրի Հակոբյանը ներգրավվել է

որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2009թ. հունվարի 31-ին Ա.Հակոբյանը հայտնաբերվել և տեղափոխվել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

2009թ. մայիսի 14-ին կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2009թ. մայիսի 14-ին Արտյոմ Հակոբյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով:

2009թ. հունիսի 4-ին Արտյոմ Հակոբյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նա որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2009թ. հունիսի 30-ին Արտյոմ Հակոբյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նա որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

2009թ. հունիսի 30-ի որոշմամբ թիվ 13146908 քրեական գործից առանձին վարույթում առանձնացվել է Արտյոմ Նորայրի Հակոբյանի և գործով մյուս մեղադրյալ Վալերիկ Պետրոսի Պետրոսյանի վերաբերյալ գործի մասը և քննությունը շարունակվել է թիվ 13146908/1 համարի տակ:

2009թ. հուլիսի 14-ին թիվ 13146908/1 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2010 թվականի փետրվարի 4-ի դատավճռով Վալերիկ Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 12 (տասներկու) տարի ժամկետով: Նույն դատավճռով Արտյոմ Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով:

3. Վերոհիշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Պետրոսյանի պաշտպան Գ.Հակոբյանը և ամբաստանյալ Ա.Հակոբյանի պաշտպան Ա.Զալաշյանը բերել են վերաքննիչ բողոքներ:

Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 3-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի փետրվարի 4-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 3-ի որոշման դեմ ամբաստանյալ

Ա.Հակոբյանի պաշտպան Ա.Քալաշյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Արտյոմ Հակոբյանի և Վալերիկ Պետրոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի փետրվարի 4-ի դատավճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 3-ի որոշմամբ հաստատված է համարվել հետևյալը.

Վալերիկ Պետրոսյանի որդի Արթուր Պետրոսյանը 2008թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը 01.00-ի սահմաններում, հարբած վիճակում, մարմնավաճառ Անուշ Սահակյանի հետ գնացել է «Ճողոտներ» հյուրանոցային համալիր: Մտնելով հյուրանոցային համալիրի «Վիպ» հատվածի ավտոկայանատեղի՝ Ա.Պետրոսյանը հսկիչ Վարդան Գրիգորյանից կոպիտ տոնով պահանջել է բացել առանձնասենյակներից մեկը: Վ. Գրիգորյանը մերժել է՝ պատճառաբանելով, որ եթե նախապես առանձնասենյակ պատվիրված չէ, ապա տրամադրել չի կարող, քանի որ ազատ առանձնասենյակ չկա: Ա.Պետրոսյանն այդ պատասխանից վրդովվել է, ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել ավտոտնակների դարպասներին, կոպտել է հսկիչին, տվել է անհասցե հայհոյանքներ և աղմկել՝ խանգարելով համալիրում գտնվող այլ հաճախորդների հանգիստը: Այդ ընթացքում Վ.Գրիգորյանի կանչով ընդհանուր ավտոկայանատեղի են եկել հյուրանոցային համալիրի բարմեն Արայիկ Բաղդասարյանը և մենեջեր Արտյոմ Հակոբյանը: Վերջինս, ականատես լինելով Ա.Պետրոսյանի անսթափ վիճակին ու դրսևորած վարքագծին, հետագա անախորժություններից խուսափելու նպատակով նրան հատկացրել է թիվ 6 առանձնասենյակը:

Այդտեղ որոշ ժամանակ անցկացնելուց հետո Ա.Պետրոսյանը կրկին սկսել է աղմկել, հայհոյանքներ տալ և խանգարել համալիրի մյուս հաճախորդների հանգիստը, որի պատճառով մենեջեր Ա.Հակոբյանը ներքին կապով երկու անգամ դիտորություն է արել նրան: Արթուր Պետրոսյանը շարունակել է իր գործողությունները, կոտրել է հյուրանոցային համալիրի սպասքը: Նրա գործողությունները կանխելու նպատակով թիվ 6 առանձնասենյակ է մտել Ա.Հակոբյանը, կրկին պահանջել է չաղմկել, չկոտրել գույքը: Ա.Պետրոսյանը հայհոյել է Ա.Հակոբյանին, որի արդյունքում նրանց միջև վեճ է սկսվել և վերածվել ծեծկռտուքի: Քիչ անց Ա.Պետրոսյանի զանգով հյուրանոցային համալիր են ժամանել գործով ինքնությունները չպարզված նրա ընկերները, որոնց հաջողվել է առժամանակ հանդարտեցնել Ա.Պետրոսյանին:

Միջադեպի մասին Ա.Պետրոսյանի մտերիմները հայտնել են նրա հորը՝ Վալերիկ Պետրոսյանին, որը գործով չպարզված մի խումբ անձանց հետ եկել է այդտեղ: Արթուր Պետրոսյանը, չիմանալով, որ հայրն արդեն հյուրանոցային համա-

լիրի մոտ է, զանգահարել և կանչել է նրան՝ հայտնելով, թե իրեն սպանում են: Գալով հյուրանոցային համալիրի տարածք և հանդիպելով իր որդի Ա.Պետրոսյանին՝ Վ.Պետրոսյանն իր որդու հետ վիճաբանած անձանց հասցեին հայհոյանքներ է տվել, իր մոտ ապօրինի պահվող «SS» տեսակի ատրճանակով կրակել է «Վիպ Ծղոտներ» համալիրի ընդհանուր ավտոկանգառի առաստաղին, ապա ատրճանակը պահելով համալիրի կաթսայատան աշխատակից Գազիկ Բրուտյանի ուղղությամբ՝ Արթուր Պետրոսյանին հարցրել է, թե արդյոք Գ.Բրուտյանն է նրան ծեծի ենթարկել: Բացասական պատասխան ստանալով՝ Վալերիկ և Արթուր Պետրոսյաններն ու գործով չպարզված անձինք գնացել են «Ծղոտներ» հյուրանոցային համալիրի ուղղությամբ՝ գռռալով «դու մեռար», հայհոյանքներ տալով համալիրի աշխատակիցների և տնօրենի հասցեին: «Ծղոտներ» հյուրանոցային համալիրի մուտքի մոտ Վալերիկ Պետրոսյանը քաշքշելով ու կոպտելով պահակ Սիսակ Խոջոյանին՝ նրանից պահանջել է դուրս հրավիրել տնօրեն Գևորգ Աղաջանյանին: Բիչ անց եկել են Գևորգ Աղաջանյանը և նրա եղբայր Գեղամ Աղաջանյանը, որոնց հետ Վ.Պետրոսյանը մտել է համալիրի բար:

Այնուհետև նրանք առանձնացել են Գևորգ Աղաջանյանի աշխատասենյակում, որտեղ Վ.Պետրոսյանը պահանջել է իրեն ներկայացնել որդուն ծեծող անձին: Գևորգ Աղաջանյանի կանչով աշխատասենյակ է եկել Ա.Հակոբյանը: Վերջինս հաստատել է, որ ինքն է հարվածել Վ.Պետրոսյանի որդուն, քանի որ նա վնասել է հյուրանոցի գույքը և իրեն վատ է պահել: Ա.Հակոբյանը հայտնել է նաև, որ Ա.Պետրոսյանի հետ ամեն ինչ նորմալ է:

Դուրս գալով աշխատասենյակից՝ Վ.Պետրոսյանը ներկաների հասցեին հայհոյանքներ է հնչեցրել, ձեռքում թափահարել է «SS» տեսակի ատրճանակը: Ստեղծվել է քաշքշուկ, որի ընթացքում Վ.Պետրոսյանը սպանելու դիտավորյալով մեկ անգամ կրակել է Արտյոմ Հակոբյանի գլխի ուղղությամբ՝ նրան պատճառելով գլխի աջ ճակատագագաթային շրջանի հրազենային մարմնական վնասվածք: Ա.Հակոբյանին սպանելու իր դիտավորությունը Վալերիկ Պետրոսյանն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով՝ առաջացած քաշքշուկի, և միմյանց միջև առկա հեռավորության պատճառով:

Այդ ընթացքում «Ծղոտներ» հյուրանոցային համալիր է մտել Ա.Պետրոսյանը: Նա ոտքով հարվածել է Գևորգ Աղաջանյանին, նրան գցել բարի ապակյա փեղկի վրա, որից անմիջապես հետո Վ.Պետրոսյանը սպանելու դիտավորյալով, իր ձեռքում եղած ատրճանակից կրակոցներ է արձակել Գևորգ Աղաջանյանի ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով հրազենից արձակված կրակոցները կենսական կարևոր օրգանների չեն դիպել, այլ գնդակներից մեկը վնասել է Գևորգ Աղաջանյանի աջ ոտքը՝ թաթի հատվածում:

Վ.Պետրոսյանի կողմից կատարված կրակոցի արդյունքում մարմնական վնասվածք ստանալով՝ Ա.Հակոբյանը նույն համալիրի հավաքարարների սենյակից վերցրել է «Ֆաբարմ» տեսակի որսորդական ողորկափող՝ կոտորակավոր փամ-

փուշտներով լիցքավորված հրացանը, դուրս է եկել համալիրի ջրավազանի մոտ և տեսնելով, որ Վ.Պետրոսյանն արդեն դադարեցրել է հարձակումը և հեռանում է համալիրի տարածքից, մարմնական վնասվածք ստանալուց շուրջ հինգ րոպե անց, սպանելու դիտավորությամբ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով մեկ անգամ կրակել է հյուրանոցային համալիրի ելքի մոտ գտնվող Վ.Պետրոսյանի գլխին, որի արդյունքում վերջինս ստացել է կյանքին վտանգ սպառնացող մարմնական ծանր վնասվածքներ: Ա.Հակոբյանը հանցանքն ավարտին չի կարողացել հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով:

Ա.Հակոբյանի կողմից կատարված նույն կրակոցի արդյունքում ձախ բազկի դրսային մակերեսի շրջանում հրազենային կոտորակային վնասվածք է ստացել նաև Վ.Պետրոսյանից քիչ հեռու կանգնած Գեղամ Աղաջանյանը, որի առողջությամբ պատճառով էլ է միջին ծանրության վնաս:

Միջադեպի ընթացքում Ա.Հակոբյանի կրակոցից վնասվածք ստանալով՝ Վ.Պետրոսյանը դուրս է վազել «Ծղոտներ» հյուրանոցային համալիրից և, գտնվելով փողոցում, սպանելու դիտավորությամբ ատրճանակից կրկին կրակել է Գևորգ Աղաջանյանի ուղղությամբ: Այս անգամ նույնպես Վ.Պետրոսյանի կամքից անկախ պատճառներով նրա հրազենից արձակված գնդակը չի դիպել Գևորգ Աղաջանյանի կենսական կարևոր օրգաններին, այլ վնասել է նրա աջ ոտքի ազդրը: Գևորգ Աղաջանյանն իր մոտ ապօրինի պահվող ատրճանակով կրակել է Վ.Պետրոսյանի ուղղությամբ՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող վնասվածքներ: Քիչ անց Վ.Պետրոսյանին նրա ազգական Տիգրան Ավագյանն իր ավտոմեքենայով տեղափոխել է հիվանդանոց:

6. Ա.Հակոբյանը 2008թ. նոյեմբերի 18-ին ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, 166-167 էջեր):

2009թ. մայիսի 14-ին քննիչը որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ տուժողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 197-199 էջեր):

2009թ. մայիսի 14-ին քննիչը որոշում է կայացրել Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, էջ 200):

2009թ. հունիսի 4-ին Ա.Հակոբյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նա որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 244-247 էջեր):

ՀՀ գլխավոր դատախազի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Թամազյանը 2009թ. հունիսի 30-ի որոշմամբ վերացրել է Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնելու

մասին 2009թ. մայիսի 14-ի որոշումը: Այս որոշումը պատճառաբանվել է հետևյալ կերպ. «Արտյոն Հակոբյանի կողմից Վալերի Պետրոսյանի ուղղությամբ կոտորակավոր փամփուշտով լիցքավորված հրացանից կրակելիս ռեալ կերպով վտանգված է եղել նաև վերջինիս մոտ կանգնած Գեղամ Աղաջանյանի կյանքը և Ա.Հակոբյանը գիտակցել է հանցագործության իր կողմից ընտրած եղանակի վտանգավոր լինելը մեկից ավելի անձանց կյանքի համար, նախատեսել է վտանգավոր հետևանքները և չցանկանալով վտանգավոր հետևանքների առաջացումը, գիտակցաբար թույլ է տվել դրանք, այսինքն՝ Ա.Հակոբյանի արարքում առկա է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով և 121 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 113 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ» (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 280-282 էջեր):

2009թ. հունիսի 30-ին Ա.Հակոբյանին նախկինում առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նա որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Քննիչը որոշման մեջ նշել է, որ Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի կարող իրականացվել՝ նկատի ունենալով, որ Գ.Աղաջանյանը չի բողոքել Ա.Հակոբյանի դեմ (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 283-286 էջեր):

7. Ա.Հակոբյանը 2009թ. փետրվարի 4-ին որպես մեղադրյալ ցուցմունք տալով՝ մասնավորապես հայտնել է, որ Վ.Պետրոսյանի արձակած կրակոցից գլխի զագաթային շրջանում հրազենային վնասվածք ստանալուց հետո, զգալով, որ կրքերը բորբոքվում են և չի բացառվում, որ Վ.Պետրոսյանը փորձի նորից կրակել, ինքը գնացել և հավաքարարների սենյակից վերցրել է իր որսորդական հրացանը: Հավաքարարների սենյակից դուրս գալով՝ ինքը տեսել է, որ Վ.Պետրոսյանի որդին՝ Ա.Պետրոսյանը վազելով մոտեցել է Գ.Լորգին, ոտքով հարվածել է նրա փորին, ինչի հետևանքով Գ.Լորգը մեջքով դիպել է բարի ցուցափեղկին, ապակին կոտրվել է և նա ընկել է գետնին: Այդ պահին Վ.Պետրոսյանը օբյեկտի մուտքի կողմից կրակել է Գ.Լորգի ուղղությամբ, որին հետևել է Գ.Լորգի բղավոցը, ինչից հասկանալի է դարձել, որ Գ.Լորգը կրակոցից վնասվածք ստացավ: Այդ պահին ինքը գտնվել է լողավազանի մոտ և տեսել, որ Վ.Պետրոսյանը ևս մի քանի կրակոց արձակեց: Վախենալով, որ նա Գ.Լորգին նորից կվնասի, ինքը լիցքավորել է հրացանը և կրակել Վ.Պետրոսյանի ուղղությամբ, ինչի հետևանքով վնասվել է վերջինի դեմքը: Քանի որ հրացանը լիցքավորված էր կոտորակավոր փամփուշտով՝ իր կրակոցից վնասվել է նաև Գեղամի ուսը: Իր կրակոցից հետո Վ.Պետրոսյանը գոռացել է՝ խփեցին, և դուրս է գնացել օբյեկտից (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 21-27 էջեր):

8. Մեղադրյալի լրացուցիչ հարցաքննության՝ 2009թ. փետրվարի 6-ի արձանագրությունից երևում է, որ պատասխանելով քննիչի հարցին, մեղադրյալ Ա.Հակոբյանն ասել է, որ ինքը կրակել է Վալերիի Պետրոսյանի ուղղությամբ՝ նրա հնարավոր հետագա կրակոցները կանխելու համար (տե՛ս քրեական գործ, 3-րդ

հատոր, 40-43 էջեր):

9. Ա.Հակոբյանը 2009թ. հունիսի 4-ին որպես մեղադրյալ ցուցմունք տալով՝ մասնավորապես հայտնել է, որ Վ.Պետրոսյանի վարքագծից չի երևացել, որ նա ուզում է դուրս գալ օբյեկտից, և բացի այդ, ինքը գիտակցել է, որ Վ.Պետրոսյանն իրենից վտանգ է ներկայացնում: Ընդ որում, ինքը գիտի, որ նման տարածությունից իր կրակոցը Վ.Պետրոսյանի կյանքին ոչ մի վտանգ չէր կարող պատճառել, և բացի այդ, տվյալ պահին ինքն այլ միջոց չի գտել, քան նրա վրա կրակելը: Հայտնել է նաև, որ կրակոցն արձակելու ժամանակ ինքը չի տեսել, որ Գեղամը մոտակայքում է և չի պատկերացրել, որ նա կվնասվի (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 248-249 էջեր):

10. Ա.Հակոբյանը 2009թ. հունիսի 30-ին որպես մեղադրյալ ցուցմունք տալով՝ մասնավորապես հայտնել է, որ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում, քանի որ ինքը ոչ ոքի սպանելու դիտավորություն չի ունեցել, կրակել է Վ.Պետրոսյանի հետագա կրակոցները կանխելու նպատակով (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, էջ 287):

11. Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Ա.Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Պետրոսյանի արձակած կրակոցից գլխին հրագեռնային վնասվածք ստանալով՝ զնացել և հավաքարարների սենյակից բերել է որսորդական հրացանն ու Վ.Պետրոսյանին վախեցնելու, նրա հետագա կրակոցները կանխելու նպատակով մեկ անգամ կոտորակային զնդակով կրակոց է արձակել նրա ուղղությամբ: Հարցին պատասխանելով՝ ամբաստանյալ Ա.Հակոբյանը հայտնել է, որ ինքը չէր կարող իմանալ Վ.Պետրոսյանի՝ համալիրից հեռանալու ցանկության մասին, քանի որ Վ.Պետրոսյանը դեմքով դեպի դուռը չի եղել կանգնած (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 239):

12. Վ.Պետրոսյանը 2009թ. մայիսի 19-ին, նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ ցուցմունք տալով, հայտնել է, որ փոխել է իր դիրքորոշումը ցուցմունք տալուց հրաժարվելու մասին և ցանկանում է ցուցմունք տալ: Նա, մասնավորապես, նշել է, որ դեպքի ժամանակ իր ատրճանակը «կրակվել» է իր կամքից անկախ, հետո ինքը ոտքով հարվածել է «նրանց դեկավարի» փորին, ինչի հետևանքով վերջինս վայր է ընկել և լավել է կոտրվող ապակու ձայնը: Ինքը հետ է քաշվել դեպի համալիրի ընդհանուր մուտքի կողմը և լսել է կրակոցի ձայն, ապա ուժեղ ցավ է զգացել դեմքի շրջանում: Զննիչի հարցին Վ.Պետրոսյանը պատասխանել է, որ գիտի, որ վնասվածքը ստացել է կոտորակավոր զնդակից, սակայն ինքը չի տեսել, թե ով է կրակել (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 209-214 էջեր):

13. Առաջին ատյանի դատարանում Վ.Պետրոսյանը ցուցմունք է տվել, որ որևէ մեկին սպանելու ցանկություն չի ունեցել: Իր ձեռքում ատրճանակ տեսնելով՝ Գեղամ Աղաջանյանն ասել է. «պահի ապեր, դրա կարիքը չկա, ոչ մի լուրջ բան չկա»: Այդ պահին զենքը հանկարծակի կրակել է, հետո ինքը ոտքով հարվածել է Գևորգ Աղաջանյանին և վերջինս վայր է ընկել ապակիների վրա: Ինքը չի նկատել

և չի հիշում՝ կրակոցը Գևորգ Աղաջանյանի ոտքին է կպել, թե՛ ոչ: Տեսնելով, որ «շատվոր են», «վրա են տալիս»՝ ինքը հետ է քաշվել և դռան մոտ զգացել է, որ աչքերը կուրացան, սակայն այդ ժամանակ ինքը չի հասկացել՝ իրեն հարվածել են, թե կրակել են իր վրա: Հարցին պատասխանելով՝ ամբաստանյալ Վալերիկ Պետրոսյանն ասել է, որ ինքը հետ է քաշվել՝ համալիրից հեռանալու ցանկությամբ: Պատասխանելով այն հարցին, թե ինքն արդյո՞ք ներկաներին հայտարարել էր համալիրից հեռանալու իր ցանկության մասին՝ ամբաստանյալ Վ. Պետրոսյանն ասել է. «դե կրակոցների պահին ըտենց բան ինչ պիտի ասեի, իմ ձեռը ոչ մեկ չէր բռնել, որ ասեի» (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 239):

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

14. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտն իր պաշտպանյալ Ա. Հակոբյանին վերաբերող մասով անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, այն կայացնելիս թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, անտեսվել են Ա. Հակոբյանին առաջադրված մեղադրանքն անհիմն լինելու մասին պաշտպանական կողմի ներկայացրած փաստարկները:

15. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 360-րդ հոդվածի 1-ին մասի, 365-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներին ոչ օբյեկտիվ, սխալ իրավական գնահատական տալով, համարել է, որ Արտյոմ Հակոբյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներին:

Այսպես, բողոքաբերը վկայակոչել է այն փաստը, որ ի սկզբանե՝ 2008թ. նոյեմբերի 18-ին, որոշում է կայացվել Ա. Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Սակայն 2009թ. մայիսի 14-ին որոշում է կայացվել Ա. Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նշված որոշումը պատճառաբանվել է նրանով, որ նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ միջադեպի ընթացքում Ա. Հակոբյանի գործողություններն ուղղված են եղել Ա. Պետրոսյանի խուլիգանական գործողությունները կանխելուն, այլ ոչ թե հասարակական կարգը խախտելուն, և նրա արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Միաժամանակ նախաքննության մարմինը գտել է, որ Ա. Հակոբյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմ, որը պատճառաբանվել է հետևյալով. Վ. Պետրոսյանի կողմից ատրճանակի կրակոցի

արդյունքում գլխի աջ ճակատագագաթային շրջանում հրազենային գնդակային շոշափող վերքի ձևով թեթև մարմնական վնասվածք ստանալով, Վ.Պետրոսյանի կողմից զենքի գործադրմամբ հետագա խուլիզանական վարքագիծը կանխելու նպատակով, նույն համալիրի հավաքարարների սենյակից վերցրել է իր մոտ ապօրինի պահվող «Ֆաբարմ» տեսակի որսորդական ողորկափող հրացանը և տեսնելով, որ Վ.Պետրոսյանը հետ-հետ գնալով ատրճանակից կրակոցներ է արձակում բարի մոտ գետնին ընկած Գևորգ Աղաջանյանի ուղղությամբ և վնասել է նրա ոտքը, կրակոցների ավարտից անմիջապես հետո, Վ.Պետրոսյանի հետագա հնարավոր կրակոցները կանխելու նպատակով իր հերթին, անհրաժեշտ պաշտպանության սահմանագանցմամբ՝ Վ.Պետրոսյանի կողմից կիրառվող ոտնձգության բնույթին և վտանգավորությանը ոչ համարժեք դիտավորությամբ գործելով՝ հրացանով մեկ անգամ կրակել է Վ.Պետրոսյանի ուղղությամբ, որի արդյունքում վերջինս ստացել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնասվածքներ: Նույն կրակոցի արդյունքում միջին ծանրության վնասվածք է ստացել նաև Գեղամ Աղաջանյանը, սակայն մախաքնության մարմինը, ապացուցված համարելով, որ նշված վնասվածքն Ա.Հակոբյանը Գ.Աղաջանյանին պատճառել է անզգուշությամբ և Գ.Աղաջանյանն Ա.Հակոբյանի դեմ բողոք չունի, այս դրվագով Ա.Հակոբյանին մեղադրանք չի առաջադրել:

Այնուհետև՝ 2009թ. հունիսի 4-ին, Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը կրկին փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով: Որոշման պատճառաբանական մասում նշված է, որ Ա.Հակոբյանը, տեսնելով, որ Վ.Պետրոսյանն արդեն դադարեցրել է հարձակումը և հեռանում է համալիրի տարածքից, սպանելու դիտավորությամբ մեկ անգամ կրակել է համալիրի ելքի մոտ գտնվող Վ.Պետրոսյանի գլխին, որի արդյունքում վերջինս ստացել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնասվածքներ: Ժամանակին ցուցաբերված բուժօգնության արդյունքում Վ.Պետրոսյանի կյանքը հնարավոր է եղել փրկել, ուստի Ա.Հակոբյանը հանցանքն ավարտին չի կարողացել հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով:

Ի վերջո, 2009թ. հունիսի 30-ին որոշում է կայացվել Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը նորից փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին:

16. Բողոքի հեղինակը չհիմնավորված է համարում Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքի մեջ առկա այն հետևությունը, որ վերջինս գիտակցել է Վ.Պետրոսյանի՝ հարձակումը դադարած լինելու և համալիրի տարածքից հեռանալու մտադրության մասին: Ա.Հակոբյանն իր բոլոր ցուցմունքներում այդ դրվագի վերաբերյալ նշել է, որ տեսնելով, որ Վ.Պետրոսյանը կրակոցներ է արձակում բարի ուղղությամբ, և այդ կրակոցների հետևանքով վիրավորվել է Գևորգ Աղաջանյանը՝ Վ. Պետրոսյանի կողմից հետագա կրակոցները կանխելու նպատակով կրակել է նրա ուղղությամբ: Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու ժամանակ մախաքնության կողմից հաստատված է

համարվել, որ բարի մոտ գետնին ընկած Գ.Աղաջանյանի ուղղությամբ Վ.Պետրոսյանը կրակոցներ է արձակել, դրա արդյունքում վիրավորվել է Գ.Աղաջանյանի ոտքը: Կրակոցների ավարտից անմիջապես հետո Վ.Պետրոսյանի հետագա հնարավոր կրակոցները կանխելու նպատակով է Ա.Հակոբյանը մեկ անգամ հրացանով կրակել Վ.Պետրոսյանի ուղղությամբ:

Բողոքաբերն ընդգծում է, որ Ա.Հակոբյանի գործողությունները դիտվել են որպես Վ.Պետրոսյանի կողմից Գևորգ Աղաջանյանի կյանքի դեմ ուղղված ոտնձգության դադարեցում, թեև անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով: Ընդ որում, նախաքննության մարմինը չի կարողացել հստակ և համոզիչ սահմանել, թե կոնկրետ ինչումն է կայացել սահմանազանցումը:

Բողոքի հեղինակը նշում է, որ Վ.Պետրոսյանի ցուցմունքն այն մասին, որ ինքը ցանկացել է դուրս գալ համալիրի տարածքից, անհասկանալիորեն հիմք է տվել նախաքննության մարմնին գալու այն հետևության, որ Ա.Հակոբյանը հստակ գիտակցել է Վ.Պետրոսյանի հարձակումը դադարած լինելու, համալիրից դուրս գալու նրա ցանկության մասին: Արդյունքում Վ.Պետրոսյանի ցուցմունքն այն մասին, որ ինքը ցանկացել է դուրս գալ համալիրի տարածքից, մեկնաբանվել է այնպես, որ Ա.Հակոբյանը դիտավորություն է ունեցել սպանելու Վ.Պետրոսյանին:

17. Բողոքաբերը փաստարկում է, որ եթե դատարանը հիմնավորված է համարել, որ Վ.Պետրոսյանը Ա.Հակոբյանին և Գևորգ Աղաջանյանին սպանելու դիտավորություն է ունեցել, ապա ինչ տրամաբանությամբ է Ա.Հակոբյանը դատապարտվել սպանության փորձ կատարելու համար՝ այն դեպքում, երբ փաստորեն փորձել է կանխել Վ.Պետրոսյանի կրակոցները, հետևաբար՝ դրանց հետևանքները:

18. Բողոք բերած անձը նշել է նաև, որ դեպքի վայրի զննության արձանագրությամբ հաստատվել է, որ Վ.Պետրոսյանի կողմից կրակված թվով հինգ պարկուճներն ընկած են նույն տեղում՝ «Եղեմ» կոչվող սաունայի մուտքի մոտակայքում, իսկ նույն սաունայի դռան վրա առկա են կոտորակների հետքերը: Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Վ.Պետրոսյանի ստացած մարմնական վնասվածքների տեղակայումը վկայում է այն մասին, որ Վ.Պետրոսյանը դեմքով դեպի համալիրի ելքն ուղղված չի եղել: Նման ցուցմունք տվել է հենց ինքը՝ Վ.Պետրոսյանը: Կրակոցներ արձակելիս նա գտնվել է նույն տեղում կանգնած և Ա.Հակոբյանն ուղղակի չէր կարող գիտակցել Վ.Պետրոսյանի՝ համալիրի տարածքից հեռանալու նպատակը, եթե նույնիսկ նման նպատակ Վ.Պետրոսյանն ունեցել է:

19. Բողոքի հեղինակը նշել է, որ Վ.Պետրոսյանին սպանելու՝ Ա.Հակոբյանի դիտավորությունը փորձ է արվում հիմնավորել նրանով, որ Ա.Հակոբյանը կրակել է Վ.Պետրոսյանի գլխին:

Այս կապակցությամբ բողոքաբերը փաստարկել է, որ կոտորակով լիցքավորված հրացանով կրակելիս կոտորակները ցրիվ են գալիս և դրանց տարածվելու տրամագիծը տարածության մեծանալու հետ մեկտեղ ավելի է մեծանում: Դատաձգաբանական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ որսորդա-

կան հրացանով կրակոցը կատարվել է կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցությամբ դուրս, իսկ դեպքի վայրի զննության արձանագրությամբ հաստատվել է, որ հրացանից կրակված պարկուճն ընկած է լողավանագի մոտ: Նույն պարկուճի հետ հայտնաբերվել է փամփուշտ, որը Ա.Հակոբյանը լիցքաթափել է հրացանից:

Բողոքաբերը նշել է, որ այս փաստերը վկայում են այն մասին, որ նախ Ա.Հակոբյանը Վ.Պետրոսյանի վրա կրակել է մի քանի մետր տարածությունից և բնական է, որ կոտորակները ցրիվ են եկել ու վնասել Վ.Պետրոսյանի ոչ միայն դեմքի շրջանը, այլև ձեռքերն ու որովայնը: Ընդ որում, դեմքից բացի, մարմնի այլ հատվածները վնասված լինելու մասին քննիչի որոշման մեջ չի նշվել: Բացի այդ, քննիչի նախորդ որոշման մեջ նշված է եղել՝ կրակել է Վ.Պետրոսյանի ուղղությամբ և նշված չի եղել՝ կրակել է Վ.Պետրոսյանի գլխին: Այս բառերի տարբերությունը, ըստ բողոքաբերի, վկայում է նախաքննության մարմնի ոչ օբյեկտիվ լինելու, արհեստականորեն մեղադրանքի տարրեր ստեղծելու միտման մասին:

20. Բողոքաբերը փաստարկել է, որ անհրաժեշտ պաշտպանության ժամանակ ոտնձգողին կարող է պատճառվել ցանկացած վնաս, ուստի Վ.Պետրոսյանի առողջությանը ծանր վնաս պատճառելը «բոլորովին անհարկի է շահարկվում»: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ Ա.Հակոբյանը հանցանքն ավարտին չի կարողացել հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դա նույնպես բոլորովին չի մնավորված և առարկայագուրկ ենթադրություն է:

Բողոքաբերը նշել է, որ սպանելու դիտավորություն ունենալու դեպքում Ա.Հակոբյանին ոչինչ չէր կարող խանգարել, որ հրացանում մնացած ևս մեկ փամփուշտով նա նորից կրակեր Վ.Պետրոսյանի վրա: Սակայն նա վարվել է այլ կերպ. տեսնելով, որ Վ.Պետրոսյանը վիրավորված դուրս է գալիս համալիրից՝ լիցքաթափել է հրացանում մնացած փամփուշտը: Սա ևս վկայում է այն մասին, որ Վ.Պետրոսյանի վրա կրակելու նպատակը եղել է վերջինիս կողմից կատարվող կրակոցները կանխելը, որը և կատարվել է՝ կրակոցները դադարել են և Վ.Պետրոսյանը հեռացել է:

21. Բողոք բերած անձը տարակուսանք է հայտնել, որ նախաքննությամբ ու դատական քննությամբ թեև հաստատված է Վ.Պետրոսյանի կողմից զենքի գործադրումը, նրա կողմից ատրճանակով մի քանի կրակոցներ արձակելը, դրա հետևանքով Ա.Հակոբյանին և Գևորգ Աղաջանյանին հրազենային մարմնական վնաս պատճառելը, այդ կրակոցների ընթացքում Ա.Հակոբյանի կողմից կոտորակով լիցքավորված որսորդական հրացանով կրակելով՝ Վ.Պետրոսյանի հետագա հնարավոր կրակոցները կանխելու նպատակը, այնուհանդերձ Ա.Հակոբյանի արարքը որակվել է որպես սպանության փորձ: Ըստ բողոքաբերի՝ Ա.Հակոբյանի արարքում առկա են անհրաժեշտ պաշտպանության բոլոր հատկանիշները՝ Վ.Պետրոսյանի ոտնձգությունն իր բնույթով եղել է հանրորեն վտանգավոր, ոտնձգությունը փաստացի առկա և իրական է եղել, Ա.Հակոբյանի գործողություններն ուղղված են եղել այդ ոտնձգությունը կանխելուն, պաշտպանությունն իրագործվել է ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով: Իրավիճակից ելնելով, ինչպես նաև Վ.Պետրոսյանից ակնհայտորեն

իրական վտանգ տեսնելով՝ Ա.Հակոբյանն այդ վտանգը չեզոքացնելու այլ միջոց չի գտել, քան Վ.Պետրոսյանի ուղղությամբ կրակելը՝ միաժամանակ ներքին համոզում ունենալով, որ նրան շատ վնաս չի պատճառվի, քանի որ հրացանը լիցքավորված է եղել կոտորակով և կրակոցն արձակվել է մի քանի մետր հեռավորությունից:

22. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկումները՝ բողոք բերած անձը գտել է, որ Ա.Հակոբյանի արարքը սպանության փորձ որակելը զուրկ է որևէ հիմնավորումից, իսկ եղած փաստերը հարմարեցվել են սպանության փորձ կատարելու համար մեղադրանք առաջադրելուն, Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, քանի որ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր և Ա.Հակոբյանի վերաբերյալ արդարացման դատավճիռ կայացնելու փոխարեն կայացրել է մեղադրական դատավճիռ, որն էլ Վեբաքննիչ դատարանի կողմից հանիրավի թողնվել է օրինական ուժի մեջ:

23. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 3-ի որոշումը Արտյոմ Հակոբյանի մասով բեկանել և նրա մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա քրեական գործի վարույթը կարճել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանի այն հետևությունները, որ Ա.Հակոբյանը կատարել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով Վ.Պետրոսյանի սպանության փորձ՝ այն դեպքում, երբ Վ.Պետրոսյանին վնասը հասցվել է նրա կողմից կատարվող ոտնձգության կապակցությամբ և պայմաններում:

25. ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

2. Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ:

3. Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական

կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնեական դիրքից:

4. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև ապօրինաբար և բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից»:

26. Շարադրված դրույթների վերլուծությունից բխում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, կարող է դրսևորվել այն իրավիճակում, երբ հանրորեն վտանգավոր ոտնձգությունից՝ ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվում են անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը: Իսկ սեփական կյանքը, առողջությունը և իրավունքները պաշտպանելիս անհրաժեշտ պաշտպանությունը դրսևորվում է որպես մարդու հիմնարար իրավունք:

27. Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունը իրավաչափ և հետևաբար՝ արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

- ա) ոտնձգության հանրային վտանգավորությունը.
- բ) ոտնձգության առկայությունը.
- գ) ոտնձգության իրական լինելը,
- դ) վտանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին.
- ե) վնաս հասցնելը միայն ոտնձգողին.
- զ) պաշտպանության համարժեքությունը ոտնձգությանը:

Առաջին պայմանից հետևում է, որ ոտնձգությունն օժտված է հանրային վտանգավորությամբ, եթե այն անձի, հասարակության, պետության շահերին կարող է էական վնաս հասցնել:

Երկրորդ պայմանի համաձայն՝ ոտնձգությունը համարվում է առկա այն դեպքում, երբ այն արդեն սկսվել է, ընթացքի մեջ է և չի ավարտվել, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է ոտնձգությունը սկսելու իրական, անմիջական սպառնալիք: Ոտնձգության առկայության պայմանը ենթադրում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն անբույլատրելի է արդեն ավարտված ոտնձգության դեպքում, բացառու-

թյամբ այն դեպքի, երբ վնաս պատճառառոյը չի գիտակցել ոսնձգության ավարտման փաստը: Վերջինիս դեպքում ոսնձգությունից առաջացած հուզմունքի պատճառով պաշտպանվողին կարող է թվալ, թե ոսնձգությունը դեռևս չի ավարտվել և անհրաժեշտ է պաշտպանվել: Նման դեպքերում թեև պաշտպանությունն անժամանակ է (ուշացած է), այն, այնուամենայնիվ, իրավաչափ է:

Երրորդ պայմանի իմաստով ոսնձգությունն իրական է, եթե այն իրոք կատարվում է և ոչ թե պաշտպանվողի երևակայության արդյունք է:

Չորրորդ պայմանի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանությունը ներառում է ոչ միայն սեփական, այլ նաև ուրիշ անձանց իրավունքների, ինչպես նաև հասարակության և պետության շահերի պաշտպանության դեպքերը: Ընդ որում, այլ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրականացնող անձը կարող է պաշտպանությունն իրականացնել սեփական նախաձեռնությամբ՝ առանց սպասելու, որ իրենից օգնություն խնդրեն:

Ըստ հինգերորդ պայմանի՝ անհրաժեշտ պաշտպանությունն իրականացվում է միայն ոսնձգողին վնաս հասցնելու միջոցով: Ընդ որում, անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում անկախ ոսնձգությունից խուսափելու, կամ այլ անձանց, պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև, անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և ծառայողական դիրքից: Այլ կերպ՝ եթե անգամ հնարավորություն կա պաշտպանությունն իրականացնել այլ միջոցներով (օրինակ՝ փախչել, դիմել այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը), բայց պաշտպանություն իրականացնողը ընտրում է պաշտպանության այն ձևը, որը կապված է ոսնձգողին վնաս պատճառելու հետ, իրականացված պաշտպանությունը չի համարվի ոչ իրավաչափ:

Վեցերորդ պայմանը պաշտպանության համարժեքությունն է ոսնձգությանը: Անհրաժեշտ պաշտպանությունը համարժեք չէ ոսնձգությանը, եթե պաշտպանության և ոսնձգության միջև անհամապատասխանությունն ակնհայտ է, այսինքն՝ ոսնձգողին հասցվում է այնպիսի ծանր վնաս, որը տվյալ պայմաններում անկասկած արդարացված չէ: Ընդ որում, ոսնձգության և պաշտպանության միջև եղած անհամապատասխանությունը պետք է ակնհայտ լինի հենց իր՝ պաշտպանությունն իրականացնողի համար: Պաշտպանվողը պետք է գիտակցի, որ չափից դուրս մեծ վնաս է հասցնում ոսնձգողին, ինչն արդարացված չէ տվյալ իրադրությունում:

28. Անհրաժեշտ պաշտպանության համարժեքության գնահատման և որպես արդյունք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման համար անհրաժեշտ է գնահատել ոսնձգության վտանգավորության աստիճանի և պաշտպանության միջև համապատասխանությունը:

Օրենքը չի պահանջում, որ պաշտպանվողը կիրառի ոսնձգողի կողմից կիրառվող միջոցներին հավասարազոր միջոցներ: Պաշտպանվողը կարող է գործադրել նաև առավել արդյունավետ միջոցներ:

Ոսնձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության խնդիր-

որ լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

ա) պաշտպանվող բարիքի արժեքավորությունը և այն վնասի չափը, որ կարող էր հասցվել դրան,

բ) ոտնձգության ինտենսիվությունը ու հանկարծակիությունը,

գ) պաշտպանվողի և ոտնձգողի ֆիզիկական հնարավորությունները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական ուժը և այլն),

դ) ոտնձգողների և պաշտպանվողների քանակը,

ե) ոտնձգության իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն:

29. Գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ա.Հակոբյանի գործողություններն առերևույթ համապատասխանում են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշներին: Նման եզրահանգման Վճռաբեկ դատարանը եկել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա.Հակոբյանի արարքում սույն որոշման 27-րդ կետով սահմանված անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության վեց պայմաններից չորսն ակնհայտորեն առկա են («ա», «գ», «դ» և «ե» ենթակետերով նախատեսվածները):

Ոտնձգության առկայության («բ» ենթակետ) կապակցությամբ, սույն որոշման 5-13-րդ կետերում նախատեսված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 27-րդ կետում սահմանված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում չկան օբյեկտիվ հիմքեր պնդելու, որ Վ.Պետրոսյանին վնաս հասցնելու պահին Ա.Հակոբյանը գիտակցում էր, որ Վ.Պետրոսյանի կողմից ոտնձգությունն արդեն իսկ ավարտված է: Հետևաբար սույն որոշման 27-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված իրավաչափության պայմանը ևս առկա է:

Ինչ վերաբերում է պաշտպանության համարժեքության («գ» ենթակետ) հարցին, ապա այդ հարցը ենթակա է գնահատման ստորադաս դատարանի կողմից՝ պարզելու համար, թե արդյոք Ա.Հակոբյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում, թե թույլ է տվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

30. Սույն որոշման 29-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ սույն գործով Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Ա.Հակոբյանը մեղավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված արարքի (շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ) կատարման մեջ, քանի որ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Ա.Հակոբյանը Վ.Պետրոսյանին վնաս է հասցրել նրա կողմից կատարվող ոտնձգության կապակցությամբ ու պայմաններում: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրական դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն:

31. Այսպիսով, ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ

կիրառում՝ կիրառել են քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Բացի այդ, սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ է տրվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածում ամրագրված՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու մասին ընդհանուր պահանջները:

32. Հիմք ընդունելով սույն որոշման հիմնավորումները և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

33. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արտյոմ Նորայրի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի փետրվարի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մայիսի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԼԳ/0286/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Ա.Պետրոսյան

ԼԳ/0286/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Լարիսա Ասատուրի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2010 թվականի մայիսի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Լ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի օգոստոսի 25-ին:

2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Լարիսա Ասատուրի Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ

մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2009 թվականի նոյեմբերի 16-ին մեղադրյալ Լ.Գևորգյանը հայտնաբերվել է:

2009 թվականի դեկտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճռով Լ.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է տուգանքի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Վերոհիշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Լ.Գևորգյանը բերել է վերաքննիչ բողոք:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի որոշմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Լ.Գևորգյանը բերել է վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Լարիսա Գևորգյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել հետևյալ արարքների համար:

Անբարյացակամ հարաբերություններ ունենալով Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 54 շենքում իր հարևանությամբ բնակվող Արարատ Եսայանի և նրա ընտանիքի անդամների հետ՝ 2009 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, հիշյալ շենքի շքամուտքի մոտ հանդիպելով տուն վերադարձող Եսայանների ընտանիքին՝ Արարատ Եսայանին, նրա կնոջը՝ Մարգարիտա Ղազարյանին, և աղջիկներին՝ Աշխեն և Էմմա Եսայաններին, Լ.Գևորգյանը վերջիններիս հասցեին վիրավորական արտահայտություններ է արել, անպարկեշտ ձևով ստորացրել է նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Նույն օրը՝ ժամը 20:00-ի սահմաններում, Լ.Գևորգյանը, շենքի շքամուտքում հանդիպելով Էմմա Եսայանին, կրկին անգամ նրա հասցեին արել է վիրավորական արտահայտություններ, անպարկեշտ ձևով ստորացրել է նրա պատիվն ու արժանապատվությունը:

2009 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը 14⁰⁰-ի սահմաններում Վանաձորի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 54 շենքի շքամուտքում Լ.Գևորգյանը, լսելով վերելակի

մոտ երկաթ կուտակելու մասին Մ.Ղազարյանի կողմից արված դիտողությունը, կրկին անգամ վիրավորական արտահայտություններ է արել Մ.Ղազարյանի և նրա ամուսնու՝ Արարատ Եսայանի հասցեին, անպարկեշտ ձևով ստորագրել է նրանց պատիվն ու արժանապատվությունը:

6. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճռով և Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի որոշմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքում Լ.Գևորգյանի մեղքը հաստատված է համարվել տուժողներ Մ.Ղազարյանի, Արարատ, Աշխեն և Էմմա Եսայանների, վկաներ Լ.Գատյանի, Վ.Հովհաննիսյանի և Վ.Պողոսյանի ցուցմունքներով:

7. 2010 թվականի մայիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է օրենք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», որի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները ճանաչվել են ուժը կորցրած: Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանվել է, որ այդ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» վերոհիշյալ օրենքն ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 3-ին:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

8. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են իր՝ անհիմն դատապարտման:

9. Բողոքի հեղինակը նշել է, որ իր բնակարանից կատարված գողության կատարման մեջ կասկածելով նույն շենքում իր հարևանությամբ բնակվող Եսայաններին՝ վերջիններիս կողմից սկսված վեճի ժամանակ նրանց գող է անվանել, որով հետև համոզված է, որ իր տնից գողություն նրանք են արել, սակայն նրանց չի վիրավորել և չի անվանարկել:

10. Բողոքաբերը նշել է, որ իրեն առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցներ են դիտվել գործով տուժողների, ինչպես նաև իր տանը ժամանակավոր աշխատանքներ կատարած անձանց ցուցմունքները: Բողոքի հեղինակը փաստարկել է, որ, ի տարբերություն իր ցուցմունքների, այդ անձանց ցուցմունքների միակողմանի լինելն ակնհայտ է, մինչդեռ ապացույցները պետք է գնահատվեն և արժեք ստանան ոչ թե դրանց քանակով, այլ արժանահավատությամբ, ապացուցողականությամբ:

11. Վճռաբեկ բողոքի հեղինակը գտել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատական ակտով թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի ու նույն հոդվածի 5-

րդ մասի պահանջների խախտումներ, որոնք էլ հանգեցրել են ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավունքի խախտման:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ պնդումների բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությամբ 2010 թվականի մայիսի 18-ից հիշյալ օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասը դադարել է քրեորեն պատժելի արարք հանդիսանալ, ուստի Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու փոխարեն պետք է կայացներ այլ դատական ակտ՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերն ու նույն հոդվածի 5-րդ մասը:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատական ակտը բեկանել և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ենթակա՞ է արդյոք Լ.Գևորգյանը քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ նրա վերաբերյալ դատական ակտեր կայացնելուց հետո ուժը կորցրած է ճանաչվել նրան մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

ՀՀ քրեական օրենսգրքի վերոշարադրյալ դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենքի հետադարձության կանոնը կիրառվում է այն դեպքում, երբ անձի կողմից հանցավոր արարքը կատարվել է նախքան արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ուժի մեջ մտնելը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լ.Գևորգյանի վերաբերյալ առկա է վերջինիս կողմից բողոքարկված և այդ պատճառով օրինական ուժի մեջ չմտած դատական ակտ, որով նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ իրեն մեղսագրվող արարքները Լ.Գևորգյանի կողմից կատարվել են նախքան 2010 թվականի հուլիսի 3-ը, այսինքն՝ նախքան «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ??-98-? օրենքն ուժի մեջ մտնելը, որով Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեա-

կան օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները ճանաչվել են ուժը կորցրած:

Մեջբերված հանգամանքների վերլուծությունից երևում է, որ նախքան Լ.Գևորգյանի վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացումը նրան մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասն ապաքրեականացվել է: Այսինքն՝ նախքան Լ.Գևորգյանի նկատմամբ վերջնական դատական ակտի կայացումը տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից բխում է, որ Լ.Գևորգյանի արարքում հանցակազմ չկա:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

Հիմք ընդունելով քրեադատավարական վերոնշյալ դրույթը, ինչպես նաև սույն որոշման 14-րդ և 15-րդ կետերում առկա վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Գևորգյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով Լռոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և քրեական գործի վարույթը կարճել:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև նույն հոդվածի 5-րդ մասի պահանջները, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնազուրկ է, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով դատական ակտ կայացնելու ժամանակ՝ 2010 թվականի մայիսի 18-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած չի եղել:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի կատարման և դատական ակտերի կայացման ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով Լ.Գևորգյանին մեղսագրված արարքում վերջինիս մեղավորությունը հաստատված է համարվել գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, ամբաստանյալի բողոքում առկա փաստարկներն իր անմեղության մասին ճանաչվել են հիմնազուրկ և հերքվել են տուժողներ Մ.Ղազարյանի, Արարատ, Աշխեն և Էմմա Եսայանների, վկաներ Լ.Դասոյանի, Վ.Հովհաննիսյանի և Վ.Պողոսյանի ցուցմունքներով:

19. Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Լարիսա Ասատուրի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2010թ. հունվարի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մայիսի 18-ի որոշումը բեկանել և գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԵԷԴ/0032/01/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0032/01/10
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Ա.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
	Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Կ.ԱՂԱՋԱՆՅԱՆԻ
<i>ամբաստանյալ՝</i>	Ս.ԳԱՎԹՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերյոժա Գերասիմի Գավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ ամբաստանյալի պաշտպան Կարապետ Աղաջանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Թիվ 12143709 քրեական գործը հարուցվել է 2009 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննական մարմնի 2009 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Սերյոժա Գերասիմի Գ-ավթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի մարտի 17-ի որոշմամբ Ս.Գ-ավթյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի մարտի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճռով ամբաստանյալ Ս.Գ-ավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ս.Գ-ավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ս.Սկրտչյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը, վերացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը և Ս.Գ-ավթյանին թողել է կրելու դատավճռով նշանակված պատիժը՝ ազատազրկում 3 (երեք) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Գ-ավթյանի պաշտպան Կ.Աղաջանյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցները՝ տուժող Արսեն Գրիգորյանը և տուժողի ներկայացուցիչ Արուսիկ Գևորգյանը, վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել՝ հայտնելով, որ ամբաստանյալը հոգացել է տուժողի բուժման ծախսերը, իրենք հաշտվել են, և չեն առարկում, որպեսզի Ս.Գ-ավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ս.Գ-ավթյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

2009 թվականի դեկտեմբերի 18-ին՝ ժամը 14⁰⁰-ի սահմաններում, Երևան քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 87 հասցեում գտնվող «Էրեբունի» թաղապետարանի դիմաց նա հանդիպել է իր ծանոթ Արսեն Գևորգյանին: Մոտակա սննդի խանութից օղի, հաց և այլ մթերքներ գնելով՝ նրանք գնացել են նույն հասցեում

գտնվող «Վարդավառի» զբոսայգի, որտեղ օղի խմելուց հետո՝ նրանց միջև ծագած վիճաբանության ընթացքում, Ս.Գավթյանն իր մոտ եղած դանակով դիտավորությանը մեկ անգամ հարվածել է Ա.Գևորգյանի կրծքավանդակի շրջանին՝ վերջինիս պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում արարքի հասարակական վտանգավորությունը, ամբաստանյալի ինքնությունը և գործի ողջ հանգամանքները: Գատարանն ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս մեծահասակ է (74 տարեկան), նախկինում արատավորված չի եղել, բնութագրվում է դրական, մասնակիորեն ընդունել է մեղքը և զղջացել է կատարած արարքի համար: Ս.Գավթյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան» (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 214):

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է նաև. «Գատարանը նկատի է առնում նաև տուժող Ա.Գևորգյանի կողմից դրսևորված հակաօրինական վարքագիծը, որով պայմանավորվել է Ս.Գավթյանի կատարած արարքը» (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 214):

7. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Հանցավորի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, որոնք հաշվի են առնվել Առաջին ատյանի դատարանի կողմից, անիրական են և բավարար չեն հանգելու այն հետևության, որ ամբաստանյալ Ս.Գավթյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, էջ 31):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև. «Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ս.Գավթյանը հանցանքը կատարել է ակոհոլի ազդեցության տակ, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների առկայության պայմաններում, նշել է, որ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան, հիմնավորված է համարել, որ տուժողը դրսևորել է հակաօրինական վարքագիծ, սակայն չի կոնկրետացրել, թե տուժողի որ գործողությունն է համարվում հակաօրինական, իսկ քրեական գործի նյութերում մնան ապացույց ձեռք չի բերվել: Ըստ էության պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրվել է միայն ամբաստանյալի տարիքը» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, էջ 31):

8. Սույն գործում առկա են ինչպես ամբաստանյալի, այնպես էլ տուժողի ցուցմունքները տուժողի կողմից ամբաստանյալին հրելու և վերջինիս վայր ընկնելու վերաբերյալ (ամբաստանյալ Ս.Գավթյանի ցուցմունքը՝ տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, 13 և 17 էջեր, տուժող Ա.Գևորգյանի ցուցմունքը՝ տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 35, ինչպես նաև առերեսման մասին արձանագրությունը՝ տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 87):

9. Սույն գործում առկա է ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Ավանի հոգեբուժական կլինիկայի տեղեկանքն առ այն, որ Ս.Գավթյանը կլինիկայում հաշվառված է «Փսիխապաթիա հիստերիկ շրջանի» ախտորոշմամբ (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 62):

10. Սույն գործում առկա է նաև թիվ 3 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Խ.Ավետիսյանի կողմից տրված բնութագիրն այն մասին, որ Ս.Գավթյանին ճանաչում է շուրջ 50 տարի, հանգիստ անձնավորություն է (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 123):

11. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի նկարագրական մասում նշված է, որ Ս.Գավթյանը ծնվել է 1936 թվականի հուլիսի 13-ին (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 213):

12. Առաջադրված մեղադրանքում Ս.Գավթյանն իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, 14, 17 և 213 էջեր):

13. Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի՝ Ս.Գավթյանը դատվածություն չունի (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 40):

14. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրման համառոտագրում նշված է, որ տուժող Ա.Գևորգյանն ամբաստանյալի նկատմամբ որևէ պահանջ չունի (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 204): Իսկ ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանում տուժող Արսեն Գրիգորյանը և տուժողի ներկայացուցիչ Արուսիկ Գևորգյանը հայտնել են, որ ամբաստանյալ Ս.Գավթյանը հոգացել է տուժողի բուժման ծախսերը, իրենք հաշտվել են, և չեն առարկում, որպեսզի վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվի:

15. Գործի նյութերից երևում է, որ Ս.Գավթյանը 2-րդ կարգի հաշմանդամ է:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

16. Բողոք բերած անձը փաստարկել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունած որոշմանը, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

17. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, այն է՝ խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, այն չի համապատասխանում քրեական գործի հանգամանքներին, բացի այդ, դատարանի կողմից նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ս.Գավթյանը 74 տարեկան է, թոշակառու, նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է՝ տառապում է ծանր հիվանդությամբ, 2-րդ կարգի հաշմանդամ է, բնութագրվում է դրական, իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել կատարածի համար, աջակցել է նախաքննությանը՝ տալով ինքնախոստովանական ցուցմունքներ և օգնել քրեական գործի բացահայտմանը: Ըստ բողոքաբերի՝ դատարանի կողմից հաշվի չի առնվել նաև այն հանգամանքը, որ դեպքը տեղի է ունեցել տուժող Ա.Գևորգյանի հակաօրինական գործողությունների հետևանքով, բացի այդ, քրեական գործում բացակայում են Ս.Գավթյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

18. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 20-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն անիրական գնահատելու վերաբերյալ:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ցանկը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում»:

Դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Պ.Բայրամյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

(...)» (տե՛ս *Պարույր Բայրամյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ վերջինս մեծահասակ է (74 տարեկան), նախկինում արատավորված չի եղել, բնութագրվում է դրական, մասնակիորեն ընդունել է մեղքը և զղջացել է կատարած արարքի համար, ինչպես նաև հաշվի է առել տուժող Ա.Գ.Լորգյանի կողմից դրսևորված հակաօրինական վարքագիծը, որով պայմանավորվել է Ս.Գ.ավթյանի կատարած արարքը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի հաշվի առած՝ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն անիրական են, ինչպես նաև նշել է, որ Առաջին ատյանի դատարանը չի հիմնավորել, թե տուժողի ո՞ր գործողությունն է համարվում հակաօրինական (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Նախորդ կետում շարադրված՝ Վերաքննիչ դատարանի հետևության իրավաչափությունը գնահատելու համար Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտնում Առաջին ատյանի դատարանի կողմից Ս.Գ.ավթյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված հանգամանքներին անդրադառնալ առանձին:

Այսպես՝ սույն գործով մեղադրական եզրակացության և Առաջին ատյանի դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Գ.ավթյանը ծնվել է 1936 թվականին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), այսինքն՝ գործի քննության պահին նա եղել է 74 տարեկան: Ուստի նշված հանգամանքը չի կարող անիրական գնահատվել: Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հաջորդ հանգամանքը՝ դրական բնութագրվելը, հիմնավորվում է թիվ 3 տեղամասի լիազոր ներկայացուցիչ Խ. Ավետիսյանի կողմից տրված բնութագրով, հետևաբար այս հանգամանքը ևս չի կարող անիրական գնահատվել: Մասնակիորեն մեղքն ընդունելու և կատարած արարքի համար զղջալու հանգամանքները հիմնավորվում են ամբաստանյալի թե՛ նախաքննական և թե՛ դատաքննական ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Իսկ արատավորված լինելու վերաբերյալ գործով որևէ ապացույց ձեռք չի բերվել (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Ինչ վերաբերում է տուժողի հակաիրավական գործողությունների բացակայության մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ապա գործում առկա են ինչպես ամբաստանյալի, այնպես էլ տուժողի ցուցմունքները տուժողի կողմից ամբաստանյալին հրելու և վերջինիս վայր զցելու վերաբերյալ (տե՛ս, սույն որոշման 8-րդ կետը):

23. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կող-

մից մատնանշված՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ 74 տարեկան լինելը, նախկինում արատավորված չլինելը, դրական բնութագրվելը, մասնակիորեն մեղքն ընդունելը և կատարած արարքի համար գղջալը, իրական են և սույն գործով կարող են դիտվել որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված՝ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն անիրական լինելու վերաբերյալ:

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից արդյո՞ք հիմնավորված է Ս.Գավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

25. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

26. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել մի շարք որոշումներում: Մասնավորապես, Հ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշման մեջ արձանագրվել է, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Գատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԳ-2/0059/01/08 որոշումը): Նույնանման մոտեցում է արտահայտվել նաև Վճռաբեկ դատարանի ՎԲ-50/07, ՎԲ-192/07, ՎԲ-01/08 որոշումներում:

Թ.Տեր-Գրիգորյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարված

հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) Նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը): Նույնանման մոտեցում է արտահայտվել նաև Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07 որոշմամբ:

27. Այսպիսով, վերը նշված օրենսդրական կարգավորումներից և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար անհրաժեշտ է դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատժատեսակն իրական կրելու: Ընդ որում, այդ համոզվածությունը պետք է հիմնված լինի գործի օբյեկտիվ տվյալների վրա, և պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

28. Չարգացնելով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների կոնկրետ համակցությունը կարող է բավարար լինել հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար՝ անկախ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի առկայությունից: Այլ կերպ՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի առկայությունն ինքնին չի բացառում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը, եթե դատարանը հանգում է հիմնավոր եզրակացության, որ հանցանք կատարած անձի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

29. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյա-

նի դատարանը Ս.Գավթյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել կատարված արարքի հասարակական վտանգավորությունը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները և գործի մյուս վերաբերելի հանգամանքները: Որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել վերջինիս տարիքը (74 տարեկան), նախկինում արատավորված չլինելը, դրական բնութագրվելը, կատարած արարքի համար գոչալը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված՝ ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները բավարար չեն հանգելու այն հետևության, որ վերջինիս ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ս.Գավթյանը հանցանքը կատարել է ակոհոլի ազդեցության տակ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

30. Հիմք ընդունելով սույն որոշման 26-28 կետերում վկայակոչված և սահմանված հիմնավորումները և դրանք համադրելով 29-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, չնայած Ս.Գավթյանի կողմից իրեն մեղսագրվող արարքն ակոհոլի ազդեցության տակ կատարելու հանգամանքին, այնուամենայնիվ, հանցավորի անձը բնութագրող տվյալների և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող կոնկրետ հանգամանքների համակցությունը (հատկապես հանցանք կատարած անձի տարիքը, այդ տարիների ընթացքում արատավորված չլինելը և առողջական վիճակը), ինչպես նաև այն հանգամանքը, որ տուժողը չի առարկում Ս.Գավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեմ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), սույն գործով բավարար են հանգելու այն հետևության, որ Ս.Գավթյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու և հիմք են չհարկապես օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման համար:

Նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ Ս.Գավթյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր է հասնել չհարկապես օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի այս հետևությունը բխում է նաև չհարկապես օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Հետևաբար՝ Ս.Գավթյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել:

31. Վերացնելով չհարկապես օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ս.Գավ-

քյանի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի, մասնավորապես՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ անօրինական և չհիմնավորված որոշման կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Քանի որ գործի նյութերով հերքվում են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները և միաժամանակ հաստատվում է Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

32. Սույն որոշման նախորդ կետում նշված նկատառումներով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բեկանել Ս.Դավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճռին՝ սույն որոշմամբ շարադրված հիմնավորումներով և պատճառաբանություններով հանդերձ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սերյոժա Գերասիմի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0513/06/10
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

ԵԿԴ/0513/06/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ԲՈՇՆԱՂՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական
դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի
7-ի որոշման դեմ դատախազ Ա.Բոշնաղյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի մայիսի 13-ին հարուցվել է թիվ 84100210 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Աննա Սերո-
փի Երեմյանը (Գևորգյանը) ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է
առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 193-րդ հոդվածով:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Ա.Երեմյանի (Գևորգյանի) նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Անթույլատրելի է ճանաչվել նաև մեղադրյալի նկատմամբ որպես այլնորանքային խափանման միջոց գրավ կիրառելը:

3. Մեղադրյալ Ա.Երեմյանի (Գևորգյանի) պաշտպան Գ.Թուխտարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշումը, բավարարել է մեղադրյալ Ա.Երեմյանի (Գևորգյանի) նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ պաշտպան Գ.Թուխտարյանի միջնորդությունը և Ա.Երեմյանին (Գևորգյանին) կալանքից գրավով ազատելը ճանաչել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանելով 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Բոշնաղյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Երեմյանին (Գևորգյանին) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Գոռ և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն, իր ծանոթ Ռոբերտ Ալեքսանդրի Երիցյանի հետ, վերջինիս կազմակերպմամբ ու ղեկավարմամբ, 2009 թվականի ընթացքում զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն չարամտորեն խուսափել է ԱԱՀ-ի գծով 11.420.500 ՀՀ դրամ, շահութահարկի գծով՝ 11.051.000 ՀՀ դրամ, եկամտահարկի գծով՝ 7.196.600 ՀՀ դրամ, սոցվճարի գծով՝ 163.200 ՀՀ դրամ, ընդամենը՝ 29.831.300 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց:

Բացի այդ, Ա.Երեմյանը (Գևորգյանը) որպես «Գոռ և ընկերներ» ՍՊԸ-ի միակ հիմնադիր և տնօրեն, սեփական շահերից ելնելով, պարտատիրոջ՝ պետության հանդեպ ունեցած 29.831.300 ՀՀ դրամի հարկային պարտավորությունները չկատարելու միջոցով շահույթ ստանալու նպատակով 2009 թվականի ընթացքում կանխկացրել է ընկերության բանկային հաշվեհամարին մուտքագրված դրամական միջոցներն ու չի վճարել ծավալած գործունեությունից առաջացած հարկային

պարտավորությունները, այսինքն՝ կանխամտածված ստեղծել է անվճարունակության հատկանիշներ, որի հետևանքով պետությանը պատճառել է խոշոր վնաս:

6. Նախաքննության մարմինն իր միջնորդության մեջ նշել է, որ Ա.Երեմյանը (Գևորգյանը) կատարել է հանրորեն վտանգավոր արարքներ, որոնց համար որպես պատիժ նախատեսվում է մեկ տարուց ավելի ժամկետով ազատազրկում, և նա, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար կարևոր նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու միջոցով (տե՛ս նյութեր, էջ 2):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Գատարանը, հաշվի առնելով, որ Ա.Երեմյանին (Գևորգյանին) մեղսագրվող արարքները դասվում են ծանր հանցագործությունների շարքին, որոնց համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, վերջինս, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար կարևոր նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու միջոցով, որպիսի գործողությունները կարող են ազդել գործի օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը: Ինչ վերաբերում է պաշտպանի միջնորդությանը՝ մեղադրյալի նկատմամբ որպես ալյընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելուն, դատարանը նախաքննության այս փուլում այն ճանաչում է անթույլատրելի՝ վերը նշված պատճառաբանություններով»: (տե՛ս նյութեր, էջ 36):

8. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Ինչպես քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ մեղադրյալ Ա.Երեմյանի (Գևորգյանի) նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու, այնպես էլ այն քննության առնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումներում մատնանշված չեն, թե քրեական գործով ձեռք բերված որ նյութերն են բավարար հիմք տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Ա.Երեմյանը (Գևորգյանը), ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար կարևոր նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու միջոցով: Բացի այդ, մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բավարար չեն վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու և այն գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Երեմյանին (Գևորգյանին) կալանքից գրավով ազատելը թույլատրելի է ճանաչում՝ նկատի ունենալով, որ վերջինիս անձը հայտնի է, նա ունի մշտական բնակության վայր և չի փորձել թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, բացի այդ, վերոհիշյալ հարցը լուծելիս, ինչպես

նաև գրավի չափը սահմանելիս հաշվի է առնում նաև այն, որ Ա.Երեմյանը (Գևորգյանը) այրի է, նրա խնամքին է գտնվում անչափահաս որդին, վատառողջ է՝ ենթարկվել է ծանր վիրահատության, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել» (տե՛ս նյութեր, էջ 71-72):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը նշել է, որ մեղադրյալ Ա.Երեմյանին (Գևորգյանին) մեղսագրվել են հանրորեն վտանգավոր արարքներ, այդ թվում ծանր, որոնց համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում մեկ տարուց ավելի ժամկետով: Բացի այդ, նա, մնալով ազատության մեջ, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար կարևոր նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու միջոցով, այդ թվում՝ այն նյութերը, որոնք նշանակություն ունեն պետական բյուջե վճարման ենթակա լրացուցիչ հարկային պարտավորությունների չափը ճշտելու առումով, ինչը կհակասի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ապահովելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի դրույթներին:

10. Բողոքաբերի պնդմամբ Ա.Երեմյանը (Գևորգյանը) չի վերականգնել պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի վնասը:

Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Ա.Երեմյանի (Գևորգյանի) նկատմամբ կալանավորումից բացի այլ խափանման միջոցի ընտրությունը չի բխում նրան մեղսագրվող հանցատեսակների դեմ իրականացվող քրեական քաղաքականության պահանջներից: Բացի այդ, Ա.Երեմյանի (Գևորգյանի) վերաբերյալ գործով վերաքննիչ դատարանը չի կիրառել Աղասի Հովսեփյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի որոշումը, որի հետևանքով թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը՝ մեղադրյալ Ա.Երեմյանին (Գևորգյանին) կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասով, իսկ մյուս մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

1. Գրավը՝ որպես կալանավորման այրյունտրանքային խափանման միջոց

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք մեղադրյալ Ա.Երեմյանին (Գևորգյանին) կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչել այն դեպքում, երբ հիմնավորված չի համարել նրա նկատմամբ կալանքը որպես խա-

փանման միջոց կիրառելը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: (...)»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից երևում է, որ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ հիմնավորված է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը հիմնավորված չի համարել Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Ա.Երեմյանի (Գ.Լորգյանի) նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) և առանց հաշվի առնելու, որ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է, կիրառել է այն:

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ կետում առկա վերլուծությունը և այն համադրելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր մեղադրյալ Ա.Երեմյանին (Գ.Լորգյանին) կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչել այն դեպքում, երբ հիմնավորված չի համարել նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը:

16. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքը դրա այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելիս դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցը, իսկ դրանց առկայության մասին հետևության հանգեղիս դատարանը պետք է իր հետևությունը հիմնավորի նաև գործի նյութերից բխող որոշակի փաստական տվյալներով:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Ա.Երեմյանի (Գ.Լորգյանի) նկատմամբ գրավ կիրառելու վերաբերյալ որոշումը հիմնավորված չէ:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է չհիմնավորված որոշում: Ուստի, անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

18. Նոր քննությանը անհրաժեշտ է, կալանավորման հիմնավորվածությունը հաստատող նյութերից ելնելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով դատական ստուգման ենթարկել Ա.Երեմյանի (Գևորգյանի) նկատմամբ գրավի կիրառման օրինականությունը ու հիմնավորվածությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Աննա Սերոժի Երեմյանին (Գևորգյանին) կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0059/11/10
նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան

ԵԿԴ/0059/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ՍԱՀԱԿՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝*

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական
դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի օգոստոսի 6-
ի որոշման դեմ Ստեփան Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Դիմող Ստեփան Սահակյանը 2010 թվականի մայիսի 24-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել իր իրավունքների խախտումները և

պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմիններին իրեն տրամադրել թիվ 13149209 քրեական գործի շրջանակներում կատարված համապատասխան քննչական գործողությունների արձանագրությունների և կազմված դատավարական փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ քրեական գործ հարուցելու, նկարներն առգրավելու, քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների պատճենները, քանի որ այդ վարույթն ուղղակիորեն առնչվում է իր իրավունքներին ու օրինական շահերին:

Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի հունիսի 25-ի որոշմամբ մերժել է Ս.Սահակյանի վերոնշյալ բողոքը:

2. Դիմող Ս.Սահակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 25-ի որոշումը:

3. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ս.Սահակյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

4. ՀՀ մշակույթի նախարարությունը և «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը 2009 թվականի հունիսի 5-ին կազմակերպել են նկարիչ Խ.Եսայանի ստեղծագործությունների ցուցահանդես՝ նվիրված նկարչի ծննդյան 100-ամյակին: Ս.Սահակյանն իր սեփական հավաքածուից տրամադրել է նկարիչ Խ.Եսայանի ստեղծագործությունները, այդ թվում՝ «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևանում» գեղանկարները (տե՛ս նյութեր, էջ 26):

5. Ս.Սահակյանը 2009 թվականի մայիսի 29-ին նկարիչ Խ.Եսայանի նկարները հանձնել է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի ներկայացուցչին, որի վերաբերյալ կնքվել է համապատասխան պայմանագիրը, տրվել է թիվ 10 ստացական, որտեղ մասնավորապես նշվել է. «Հայաստանի Պետական Պատկերասրահի կողմից քաղաքացի Ս.Սահակյանից իր սեփականությունը հանդիսացող Խ.Եսայանի չորս գեղանկար և երեք գրաֆիկա է վերցվել անհատական ցուցահանդեսին մասնակցելու նպատակով»:

Վերոնշյալ նկարները ցուցահանդեսի փակումից անմիջապես հետո «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը պարտավորվել է վերադարձնել Ս.Սահակյանին, սակայն քաղաքացիաիրավական պայմանագրի ժամկետի ավարտից հետո Հայաստանի ազգային պատկերասրահը հրաժարվել է Ս.Սահակյանին վերադարձնել Խ.Եսայանի «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևանում» գեղանկարները

(տե՛ս նյութեր, էջ 26-27):

6. 2009 թվականի օգոստոս ամսին Ս.Սահակյանը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի՝ պայմանագրի հիման վրա ստանձնած պարտավորությունները կատարելու պահանջով:

2009 թվականի հոկտեմբերի 12-ին նշանակված դատական նիստի ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ՝ նշելով, որ նույն օրվա դրությամբ Երևան քաղաքի Կենտրոնի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է քրեական գործ, և իրականացվում է նախաքննություն:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ վերը նշված քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև քրեական գործի լուծումը: Հարուցված քրեական գործի շրջանակներում թեև Ս.Սահակյանը ճանաչվել է որպես վկա, սակայն չի իրազեկվել քրեական վարույթի ընթացքում կայացված որոշումների և դատավարական այլ գործողությունների վերաբերյալ (տե՛ս նյութեր, էջ 27):

7. ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Նազարյանը, ի պատասխան Ս.Սահակյանի 2010 թվականի հունվարի 19-ի դիմումի, 2010 թվականի հունվարի 21-ի գրությամբ հայտնել է. «Նկարիչ Խ.Եսայանի հեղինակած «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևանում» գեղանկարների հափշտակության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու մասին որոշման, ինչպես նաև քրեական գործում եղած այլ փաստաթղթերի պատճենները դիմող Ս.Սահակյանին չեն կարող տրամադրվել, քանի որ այդպիսի բան նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Վերը նշված գեղանկարները, որպես հանցավոր գործողությունների օբյեկտներ, 2009 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ ճանաչվել են իրեղեն ապացույցներ և մինչ քրեական գործի ավարտն ի պահ են հանձնվել «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին» (տե՛ս նյութեր, էջ 8):

8. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Բարայանը 2010 թվականի ապրիլի 22-ի գրությամբ դիմող Ս.Սահակյանին պատասխանել է, որ վերջինիս կողմից 2010 թվականի ապրիլի 16-ին ներկայացրած՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Նազարյանի գործողությունների և որոշումների դեմ բողոքները քննարկվել են Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում: Քննիչ Ռ.Նազարյանի վարույթում քննվող թիվ 13149209 քրեական գործով Ս.Սահակյանը հանդիսանում է վկա, չի հանդիսանում քրեական դատավարության մասնակից և չի կարող հանդես գալ քննիչին բացարկ հայտնելու միջնորդությամբ: Ինչ վերաբերում

է թիվ 13149209 քրեական գործով դատավարական փաստաթղթերի պատճենները քննիչի կողմից Ս.Սահակյանին չտրամադրելու վերաբերյալ բողոքին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ քննչական գործողությունների և դատավարական այլ փաստաթղթերի պատճենները տրամադրվում են դատավարության մասնակիցներին (տե՛ս նյութեր, էջ 9):

9. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրության մեջ նշված է. «Քանի որ Սիրանուշ Սահակյանը քրեական գործով ներգրավված չի եղել որպես ներկայացուցիչ, սույն դատական նիստում նա չի կարող հանդես գալ որպես ներկայացուցիչ» (տե՛ս նյութեր, էջ 19):

10. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Բողոք ներկայացնողը քրեական գործով հանդիսանում է վկա և նրան պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով այնպիսի քննչական կամ դատավարական գործողություններ, ինչպիսիք են նախաքննության փուլում գտնվող քրեական գործով վկային քրեական գործի շրջանակներում ընդունված քննչական գործողությունների և դատավարական փաստաթղթերի պատճենների տրամադրումը, նախատեսված չեն, ուստի դատարանը գտնում է, որ բողոքարկված գործողությունները վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, հետևաբար բողոքը պետք է մերժել» (տե՛ս նյութեր, էջ 31):

11. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Առաջին ատյանի դատարանը որոշում կայացնելիս դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, իսկ բողոքաբերի կողմից վկայակոչված իրավանորմերի պահանջների խախտումների վերաբերյալ փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և Ս.Սահակյանի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն» (տե՛ս նյութեր, էջ 81):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

12. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ չի կիրառել կիրառման ենթակա՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 23-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ իր պահանջած տե-

ղեկություններն ու որոշումներն անմիջականորեն առնչվում են իր իրավունքներին և շոշափում օրինական շահերը, քանի որ վերաբերում են սեփականության իրավունքով իրեն պատկանող և առավել քան քսան տարի իր փաստացի տիրապետության ներքո գտնվող գեղանկարների հափշտակության փաստի առթիվ քրեական գործ հարուցելուն, գեղանկարները առգրավելուն և դրանք որպես իրեղեն ապացույց ճանաչելուն: Այդ որոշումների տրամադրումը մերժելը խոչընդոտում է իր սահմանադրական իրավունքների իրականացմանը՝ զրկելով իրեն իր սեփականության իրավունքը խախտող որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու փաստացի հնարավորությունից:

13. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում առկա այն դատողությանը, որ Առաջին ատյանի դատարանը, արգելելով փաստաբանի մասնակցությունը դատական նիստին, խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետով երաշխավորված՝ ներկայացուցչի կամ փաստաբանի միջոցով արդյունավետ պաշտպանության և շահերի ադեկվատ ներկայացման իրավունքը:

Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստարկը՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետը, քանի որ փաստաբանի մասնակցությունը չթույլատրելու մասին որոշումը հիմնավորել է նրանով, որ վերջինս տվյալ գործով ներգրավված չէ որպես պաշտպան: Մինչդեռ սույն գործով որևէ փաստաբան ներգրավված չէ որպես պաշտպան, քանի որ քրեական գործի շրջանակներում որևէ անձ ներգրավված չէ որպես կասկածյալ կամ մեղադրյալ, հետևաբար սույն գործով չկար և չէր կարող լինել որևէ պաշտպան, իսկ ինքը հանդես է եկել ընդամենը որպես վկա:

Ըստ բողոք բերած անձի՝ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանն իրեն զրկել է այլ անձի՝ փաստաբանի միջոցով հանդես գալու և իր շահերը արդյունավետ ներկայացնելու իրավունքից:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 6-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով իր իրավունքների խախտումները և պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին իրեն տրամադրել թիվ 13149290 քրեական գործի շրջանակներում ընդունված և իր իրավունքներին ու օրինական շահերին ուղղակիորեն առնչվող համապատասխան քննչական գործողությունների և դատավարական փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ քրեական գործ հարուցելու, նկարները առգրավելու, քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների պատճենները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Վկային քննչական գործողությունների արձանագրությունների և դատավարական այլ փաստաթղթերի պատճենների տրամադրման իրավաչափությունը

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ նկարիչ Խ.Եսայանի հեղինակած «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևանում» գեղանկարների կապակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունների և կազմված դատավարական փաստաթղթերի պատճենների չտրամադրման արդյունքում խախտվե՞լ են արդյոք վկա Ս.Սահակյանի՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցն անհրաժեշտ է քննության առնել սեփականության և տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքների լույսի ներքո:

16. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: (...):»:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

(...)

Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

(...):»:

17. Մեջբերված սահմանադրական դրույթները ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է *Ա.Հայրապետյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ արձանագրել է, որ «(...) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը՝

3) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է գրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

4) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ» (տե՛ս Արթուր Հայրապետյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԳ/0001/11/10 որոշման 19-րդ կետը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Սահակյանը Խ.Եսայանի չորս գեղանկարների (այդ թվում՝ «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևա-

նում») սեփականատերն է (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Այսինքն՝ վերոնշյալ գեղանկարների կապակցությամբ Խ.Եսայանն օգտվում է Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշման մեջ ամրագրված և սույն որոշման 17-րդ կետում վերահաստատված երաշխիքներից:

19. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք»:

Վերը նշված սահմանադրական դրույթի վերլուծությունից երևում է, որ իրեն վերաբերող տեղեկատվություններին ծանոթանալու իրավունքը ընդհանուր բնույթ կրող սահմանադրական արժեք է, և դրան թղթակցում է հանրային իշխանության ներկայացուցիչների պարտականությունը:

Ընդ որում, այդ իրավունքի իրավաչափ սահմանափակման հնարավորությունը նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում: Այդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, փաստաբանական, նոտարական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները»:

Եթե բացակայում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում ամրագրված իրավական հիմքերը, ապա ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ:

20. Խնդրո առարկա հարցի սահմանադրական բաղադրիչը քննարկման առարկա դարձնելուց հետո Վճռաբեկ դատարանն անդրադառնում է դրա քրեադատավարական բաղադրիչին՝ այնուհետև դրանք համադրելու նպատակով:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասում սպառնիչ թվարկված են քրեական դատավարությունում վկայի իրավունքները: Քրեադատավարական նշված դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ այն չի սահմանում քննչական գործողությունների արձանագրությունների և դատավարական այլ փաստաթղթերի պատճեններն ստանալու՝ վկայի իրավունքը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ստյա-

նի դատարանը դիմող Ս.Սահակյանի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ նախաքննության փուլում գտնվող քրեական գործով վկային քրեական գործի շրջանակներում ընդունված քննչական գործողությունների և դատավարական փաստաթղթերի պատճենների տրամադրումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը որոշում կայացնելիս դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, իսկ բողոքաբերի կողմից վկայակոչված իրավանորմերի պահանջների խախտումների վերաբերյալ փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, և որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և Ս.Սահակյանի իրավունքներն ու ազատությունները խախտված չեն (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վկայակոչված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ստորադաս դատարանները, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածը, վկա Ս.Սահակյանին քննչական գործողությունների արձանագրությունները և այլ դատավարական փաստաթղթեր չտրամադրելը իրավաչափ են համարել:

23. Սույն որոշման 17-19 կետերում շարադրված հիմնավորումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանության պահանջին և ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված՝ իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքի ապահովման պահանջին՝ կիրառված համակցության մեջ: Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վկայի դատավարական կարգավիճակ ունեցող Ս.Սահակյանը միաժամանակ «Սեպտեմբեր» և «Առավոտը Սևանում» գեղանկարների սեփականատերն է և դրանց կապակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունների և կազմված դատավարական փաստաթղթերի պատճենների չտրամադրման հետևանքով կարող է գրկվել իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության հնարավորությունից:

24. Սույն որոշման նախորդ կետում հայտնած իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով նախատեսված դեպքերում դատավարության մասնակցին տրամադրվող քննչական գործողությունների արձանագրությունները և դատավարական այլ փաստաթղթեր պետք է տրամադրվեն նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձին, եթե այդ փաստաթղթերն անմիջականորեն առնչվում են տվյալ անձի սեփականության իրավունքին, խոչընդոտում են այդ իրավունքի իրականացմանը կամ դրա արդյունավետ պաշտպանությանը:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 16-24-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով խախտվել են Ս.Սահակյանի՝ որպես սեփականատիրոջ իրավունքները: Մասնավորապես, վերջինս զրկվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող գեղանկարների կապակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունների և կազմված դատավարական փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություն ստանալու իրավունքից և հնարավորությունից, ինչի արդյունքում զրկվել է նաև իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

II. Դատաքննությանը փաստաբանի մասնակցությունը

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է՝ Առաջին ատյանի դատարանն իրավասո՞ւ էր արդյոք մերժել փաստաբան Սիրանուշ Սահակյանի՝ որպես ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին:

27. ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ «Վկան իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ վկան ևս իրավունք ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի միջոցով:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել փաստաբան Սիրանուշ Սահակյանին դատական նիստում հանդես գալ որպես ներկայացուցիչ այն պատճառաբանությամբ, որ վերջինս քրեական գործով ներգրավված չի եղել որպես ներկայացուցիչ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետ):

29. Սույն որոշման 27-րդ կետում շարադրված իրավական վերլուծությունը համադրելով 28-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր չթույլատրել Ս.Սահակյանի ներկայացուցչին մասնակցել դատական նիստին: Դատական նիստին ներկայացուցչի մասնակցությունն արգելելով՝ Առաջին ատյանի դատարանը խախտել է օրենքով երաշխավորված՝ ներկայացուցչի կամ փաստաբանի միջոցով արդյունավետ պաշտպանություն իրականացնելու և իր շահերը ներկայացնելու՝ Ստեփան Սահակյանի իրավունքը:

30. Սույն որոշման 27-29-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ է տրվել ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մա-

սի 10-րդ կետի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեադատավարական օրենքի էական խախտում է:

31. Հետևաբար, սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 25-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

32. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ քրեական վարույթում վկայի կարգավիճակ ունեցող՝ գույքի սեփականատիրոջ իրավունքներին առնչվող քննչական գործողությունների արձանագրությունների և դատավարական այլ փաստաթղթերի տրամադրման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Նազարյանի և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Բաբայանի գործողությունների դեմ դիմող Ստեփան Սահակյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 25-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0060/11/10
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

ԵԿԴ/0060/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
դիմողի ներկայացուցիչ՝*

**Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ԲՈՇՆԱՂՅԱՆԻ
Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ**

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հուլիսի 9-ի որոշման դեմ դատախազ Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Վարչամ Ղարիբյանի դիմումի հիման վրա 2009 թվականի օգոստոսի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16121309 քրեական գործը՝ Վարուժան Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատ-

կանիչներ պարունակող արարքը ենթադրաբար կատարելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2010 թվականի մայիսի 18-ի որոշմամբ թիվ 16121309 քրեական գործը միացվել է թիվ 69100109 քրեական գործին, և գործի քննությունը շարունակվել է թիվ 69100109 համարով:

2. 2010 թվականի մայիսի 25-ին դիմող Վ.Մանուկյանը և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելու մասին 2009 թվականի օգոստոսի 13-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի որոշմամբ դիմող Վ.Մանուկյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքը մերժվել է:

3. Դիմող Վ.Մանուկյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, վերացրել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի որոշումը և պարտավորեցրել վարույթն իրականացնող մարմնին՝ վերացնելու Վ.Մանուկյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Խաչատրյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներ, դիմող Վ.Մանուկյանը և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխաններ՝ հայտնելով, որ բողոքաբերը չի հիմնավորել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկը:

Բողոքի պատասխանի հեղինակների պնդմամբ, քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունն ըստ պատշաճի չի ստուգվել, և այն չի տրամադրվել Վ.Մանուկյանին, ինչի արդյունքում վերջինս գրկվել է այդ որոշումը բողոքարկելու հնարավորությունից: Բացի այդ, քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկել չթույլատրելու արդյունքում այդ որոշումը դուրս է մնում դատական վերահսկողության ոլորտից, և ստեղծվում է անօրինական հարուցված քրեական գործով հետագա քննչական գործողություններ կատարելու, այդ թվում նաև անձանց իրավունքների անհիմն սահմանափակման, դատավարական հարկադրանքի միջոցների անօրինական կիրառման իրական վտանգ:

Ըստ դիմող Վ.Մանուկյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի՝ Վերաքննիչ դատարանը ճիշտ է մեկնաբանել Վճռաբեկ դատարանի՝ Վ. Գրիգորյանի վերաբերյալ որոշումը և քրեական գործ հարուցելու մասին 2009 թվականի օգոստոսի 13-ի որոշումը դիտել է անձի իրավունքները և օրինական շահերը խախտող որոշում:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ դատական կարգով այդպիսի որոշման բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված չէ» (տե՛ս Նյութեր, էջ 18):

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) դատական բողոքարկման ենթակա են քրեական հետապնդման մարմինների անխտիր բոլոր գործողությունները և որոշումները՝ հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. Այդ որոշումները և գործողությունները խախտում են քրեական դատավարության ոլորտ ներգրավված (ներառյալ՝ այլ անձանց) անձանց իրավունքները և օրինական շահերը:

2. Այդ որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Թիվ 16121309 քրեական գործը հարուցվել է ոչ թե անհայտ անձի կողմից քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման փաստի առթիվ, այլ կոնկրետ անձի՝ Վ.Մանուկյանի դեմ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման փաստի առթիվ, հետևաբար՝ այն առնչվում է կոնկրետ անձի շահերին, իրավունքներին, ազատություններին, հետևաբար՝ ընդհանուր իրավասության դատարանի այն պատճառաբանությունը, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ դատական կարգով այդպիսի որոշման բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված չէ, անհիմն է» (տե՛ս Նյութեր, էջ 74):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորված, տարածական մեկնաբանություն է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմին և արդյունքում հանգել այն հետևության, որ դատական բողոքարկման ենթակա են քրեական հետապնդման մարմինների անխտիր բոլոր գործողությունները և որոշումները, եթե այդպիսիք խախտում են քրեական դատավարության ոլորտ ներգրավված անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և այդ որոշումների ու գործողությունների դեմ բերված բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

8. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դա-

տարանի՝ Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշումը, դրանում արտահայտված իրավական դիրքորոշման առանձին դրույթներ մեկնաբանել է բոլորովին այլ՝ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշմանը հակասող լույսի ներքո: Ի հիմնավորումն իր փաստարկի, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի հիշատակել, թե քրեական գործ հարուցելու արդյունքում Վ.Մանուկյանի կոնկրետ ո՞ր իրավունքներն ու ազատություններն են խախտվել, որոնք վերացնելու պահանջ է առաջադրվել վարույթն իրականացնող մարմնին:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, փորձելով հիմնավորել իր որոշումը, ակնհայտորեն անհիմն շեշտադրել է քրեական գործի վարույթը բացառող հանգամանքների՝ համաներման ակտի առկայության փաստը՝ անտեսելով այն հանգամանքը, որ քննության չի առնվում ստորադաս դատարանի կողմից կայացված վերջնական դատական ակտ, քրեական գործը գտնվում է մինչդատական վարույթում, և այդ փուլում նշված հանգամանքը դատական վերանայման առարկա չի կարող հանդիսանալ:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ քրեական գործ հարուցելու մասին 2009 թվականի օգոստոսի 13-ի որոշումը առերևույթ խախտու՞մ է արդյոք Վ.Մանուկյանի իրավունքները և ըստ այդմ, Վ.Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման ներքո կարո՞ղ է արդյոք դատական վերահսկողության առարկա լինել:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողությունները իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Վկայակոչված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Վ.Գրիգորյանի* վերաբերյալ որոշման մեջ և հետևյալ իրավական դիրքորոշումն է ձևավորել. «(...) եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման:

(...)

ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է *քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ*, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, ուստիև՝ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ քրեական դատավարությունում որևէ մեկի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում» (տե՛ս *Վալերի Գրիգորյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԳ/0031/11/08 որոշման 12-րդ և 14-րդ կետերը):

12. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործը հարուցվել է փաստի առթիվ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմողի և նրա ներկայացուցչի բողոքն այն պատճառաբանությամբ, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ դատական կարգով այդպիսի որոշման բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված չէ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերացնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը առնչվում է կոնկրետ անձի շահերին, իրավունքներին, ազատություններին, հետևաբար անհիմն է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությունը, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

13. *Վ.Գրիգորյանի* վերաբերյալ որոշման մեջ առկա և համապատասխանա-

քար նաև սույն որոշման 11-րդ կետում ամրագրված դատողությունները համադրելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին 2009 թվականի օգոստոսի 13-ի որոշումը դատական վերահսկողության առարկա հանդիսանալ չի կարող, քանի որ այն կայացվել է փաստի առթիվ, ուստի դրանով Վ.Մանուկյանի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն անհամաձայնություն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն մոտեցմանը, որ որոշակի պայմանների առկայության դեպքում դատական բողոքարկման ենթակա են քրեական հետապնդման մարմինների անխտիր բոլոր գործողությունները և որոշումները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի նման տարածական մեկնաբանությունը չի բխում իրավական պաշտպանության միջոցների համարժեքության սահմանադրական պահանջից, որը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի հիման վրա ամրագրվել է ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-844 որոշմամբ (2009թ. դեկտեմբերի 7-ի Սահմանադրական դատարանի որոշման 8-րդ կետ):

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթում իրավական պաշտպանության միջոցների համարժեքությունը գնահատելիս, ի թիվս այլ հանգամանքների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև Հայաստանի Հանրապետությունում գործող քրեական դատավարության ձևը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի համար նախատեսված դատավարական ձևը, մասնավորապես՝ մինչդատական վարույթում ձեռք բերված տվյալների՝ օրենքով որպես ապացույց համարվելը, մինչդատական վարույթի մանրամասն և համակողմանի օրենսդրական կանոնակարգումը, այդ թվում՝ նշված փուլում ապացույցների ձեռքբերման եղանակների և ընթացակարգի մանրակրկիտ կարգավորումը և այդ համատեքստում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռումն ինքնին սահմանափակում են մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմնի յուրաքանչյուր որոշման կամ գործողության դատական բողոքարկման շրջանակը:

16. Նախորդ կետում շարադրված հիմնավորումների լույսի ներքո զարգացնելով Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշման մեջ սահմանված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկ-

ման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

17. Հիմք ընդունելով սույն որոշման պատճառաբանական մասում առկա դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վարույթն իրականացնող մարմինն Վարուժան Մանուկյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ դիմող Վարուժան Մանուկյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0009/12/10
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան

ԵԷԴ/0009/12/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

**Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ**

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազության՝ պատիժ-ների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ավագ դատախազի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Մյասնիկ Ենգիբարի Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Մյասնիկ Ենգիբարի Հակոբյանը Գերագույն դատարանի 1994 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճռով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 4-րդ մասով, 182-րդ հոդվածի 2-րդ մասով և 213-րդ հոդվածի 2-րդ մասով դատա-

պարտվել է ազատագրկման 12 (տասներկու) տարի ժամկետով:

2. 1999 թվականի մայիսի 12-ին ՀՀ վճռաբեկ դատարանը Մ.Հակոբյանի պատիժը պակասեցրել է և թողել կրելու ազատագրկում 8 (ութ) տարի ժամկետով: Մ.Հակոբյանը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է:

3. Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2001 թվականի հոկտեմբերի 31-ի դատավճռով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 4-րդ մասով, 15-89-րդ հոդվածի 2-րդ մասով Մյասնիկ Ենգիբարի Հակոբյանը դատապարտվել է ազատագրկման 8 (ութ) տարի ժամկետով: Նույն դատարանի 2003 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ Մ.Հակոբյանի արարքները համապատասխանեցվել են գործող ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին: Նա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է:

4. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 4-ի դատավճռով Մյասնիկ Ենգիբարի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի հիման վրա նա վերջնական դատապարտվել է ազատագրկման 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

5. 2010 թվականի մարտի 17-ին ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Մ.Հակոբյանին հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու մասին:

6. Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի եզրափակիչ ախտորոշման համաձայն՝ դատապարտյալ Մ.Հակոբյանը տառապում է «Ձախ երիկամի քաղցկեղ, ձախ երիկամային երակի ուռուցքային թրոմբ, մակրոհեմատուրիա անեմիա վիճակ ձախակողմյան նեֆրեկտոմիայից հետո: Ռեցիդիվ ներաճով ձախ գոտկային մկան, մետաստազ հետորովայնամզային ավշահանգուցներ: T4N2Mx (4-րդ փուլ): Վենոտրալ և աջ աճուկային ճողվածք: Ողնաշարի օստրիոխոնդրոզ»: Նշված ախտորոշմամբ հիվանդությունը ներառված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման 2 հավելվածում տեղ գտած ծանր հիվանդությունների ցանկում, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն:

7. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշմամբ մերժվել է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի՝ դատապարտյալ Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու մասին միջնորդությունը:

8. Դատապարտյալ Մ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրա-

վաստության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010 թվականի հունիսի 28-ի որոշմամբ բեկանել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշումը և դատապարտյալ Մ.Հակոբյանին ազատել է Երևանի քրեական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 4-ի դատավճռով նշանակված պատժի հետագա կրումից:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազը՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ դատապարտյալ Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

10. Դատապարտյալ Մյասնիկ Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու միջնորդությունը քննության առնելիս առաջին ատյանի դատարանի դատական նիստին որպես կողմ մասնակցել է ՀՀ գլխավոր դատախազության պատիժժնեքի և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ավագ դատախազ Ա.Ստեփանյանը (տե՛ս Նյութեր, էջ 7):

11. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին 2010 թվականի հունիսի 28-ի որոշումից երևում է, որ դատական նիստին կանչվել են դատախազը և «Վարդաշեն» ՔԿՀ-ի ներկայացուցիչը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դատական նիստին դատախազի մասնակցությունն ապահովելու համար ծանուցում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազության պատիժժնեքի և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ Վ.Ավետիսյանին, սակայն ծանուցումն ուղարկվել է բոլորովին այլ գործով՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ դատապարտյալ Ի.Սալադյանի վերաքննիչ բողոքի քննությանը մասնակցելու համար (տե՛ս Նյութեր, էջ 19):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

12. Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 23-րդ, 52-րդ, 54-րդ և 438-րդ հոդվածների պահանջները, դատախազին մասնակից չի դարձրել դատական նիստին: Դատական նիստին մասնակից չի դարձվել նաև դատապարտյալ Մ.Հակոբյանը, ում մասնակցությունը դատական նիստին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն, պարտադիր է:

Բողոքաբերի պնդմամբ դատարանի կողմից չի ապահովվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ հիվանդության պատճառով դատապարտյալին ազատելու հարցը դատարանի կողմից լուծելիս պարտադիր է նաև եզրակացություն տված բժշկական հանձնաժողովի ներկայացուցչի ներկայությունը դատական նիստին:

13. Բողոքաբերը նշել է նաև, որ դատական ակտ կայացնելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի և 406-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներ, քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ինչպես նաև օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց՝ մասնավորապես դատախազին, օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

14. Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած՝ Արայիկ Հմայակի Սիմոնյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՎԲ-329/06 որոշմանը՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ դատապարտյալ Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թույլ են տրվել արդյոք ՀՀ քրեական դատավարության սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումներ, որոնք դատախազին օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Գատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է»:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում գործի քննության կարգն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ «Գատական նիստին պարտադիր մասնակցում է դատախազը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Գատական որոշման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատական նիստում՝ դատապարտյալի մասնակցությամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պարտադիր է մաս կաշտպանի և դատախազի մասնակցությունը»:

Վկայակոչված և շարադրված իրավական դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանի կողմից քրեական գործերը, ինչպես նաև դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս պետք է պարտադիր ապահովվի դատախազի մասնակցությունը: Այս կանոնից միակ բացառությունը վերաբերում է այն դեպքին, երբ դատարանում իրականացվում է բողոքի քննություն՝ վճռաբեկության կանոններով: Ինչպես երևում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին որոշումից, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բողոքի քննությունը վճռաբեկության կանոններով չի կատարել:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու միջնորդությունը քննության առնելիս առաջին ատյանի դատարանի դատական նիստին որպես կողմ մասնակցել է ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ավագ դատախազ Ա.Ստեփանյանը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին 2010 թվականի հունիսի 28-ի որոշումից երևում է, որ դատական նիստին կանչվել են դատախազը և «Վարդաշեն» ՔԿԿ-ի ներկայացուցիչը:

Գործի նյութերից երևում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դատական նիստին դատախազի մասնակցությունն ապահովելու համար ծանուցում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ Վ.Ավետիսյանին, սակայն ծանուցումն ուղարկվել է բոլորովին այլ գործով՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ դատապարտյալ Ի.Սայադյանի վերաքննիչ բողոքի քննությանը մասնակցելու հա-

մար (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Նշված պատճառով դատախազը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական նիստին չի մասնակցել:

18. Վերը շարադրվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական քննության ժամանակ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 23-րդ հոդվածներ), որոնք գործին մասնակցող անձանց՝ տվյալ պարագայում դատախազին, օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Այդ խախտումները քրեադատավարական օրենքի էական խախտումներ են, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

19. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարվի մասնակիորեն, քանի որ վճռաբեկ բողոքում բարձրացված են դատավարական իրավունքի խախտման վերաբերյալ հարցեր, սակայն բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի ըստ էության որոշումը և օրինական ուժ տալ դատապարտյալ Մ.Հակոբյանին պատժի հետագա կրումից ազատելու վերաբերյալ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 24-ի որոշմանը: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գատապարտյալ Մյասնիկ Ենգիբարի Հակոբյանին պատիժը հետագայում կրելուց ազատելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԱՎԴ-2/0057/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Գ.Մելիք-Սարգսյան

ԱՎԴ-2/0057/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍՍՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Վ.ԶՈՒՌՆԱՉՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարդան Վազգենի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի ապրիլի 1-ի որոշման դեմ դատապարտյալ Վ.Գասպարյանի և նրա պաշտպանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 44115009 քրեական գործը:

2009 թվականի դեկտեմբերի 24-ին կասկածյալ Վարդան Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2009 թվականի դեկտեմբերի 24-ին Վ.Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի դեկտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի դատավճռով Վարդան Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի դատավճիռը: Վ.Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով:

4. 2010 թվականի օգոստոսի 26-ին դատապարտյալ Վ.Գասպարյանը և նրա պաշտպանը Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել և խնդրել են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա դատապարտյալի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել: Նույն օրը կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը կասեցրել է դատական ակտի կատարումը:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վ.Գասպարյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

Արարատի մարզի Մայաթ-Նովա գյուղում գտնվող թիվ 31 հենասյունը, որի վրա ամրացված է էլեկտրական հաշվիչների արկղը, նույն գյուղի բնակիչ Հարություն Խաչատրյանն օգտագործել է որպես ցանկապատի սևեռող հենարան:

Դրսևորելով անփութություն՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արաքս» մասնաճյուղի էլեկտրական ցանցի հսկիչ էլեկտրամոնտյոր Վարդան Գասպարյանը վերոնշյալ հանգամանքի մասին չի հայտնել էլեկտրական ցանցի ղեկավարությանը, այսինքն՝ չի նախատեսել իր անգործության՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող

էր նախատեսել դրանք: Դրա արդյունքում հաղորդալարի մեկուսիչի վնասված հատվածից մետաղյա արկղը և դրան կպած ցանկապատն ընկել են լարման տակ:

2009 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 15:50-ի սահմաններում, հենվելով նշված ցանկապատին՝ Հարություն Խաչատրյանը էլեկտրահարվել և մահացել է:

6. Վարդան Գասպարյանն առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության անգզույշ հանցագործություն, երիտասարդ է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, ընտանիքի միակ կերակրողն է, նրա խնամքին է գտնվում 2008 թվականին սրտի վիրահատության ենթարկված և 2-րդ խմբի հաշմանդամ դարձած հայրը: Վ.Գասպարյանը ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար, իր ցուցմունքներով օգնել է վարույթն իրականացնող մարմնին ճշմարտությունը բացահայտելու հարցում: Գործի նյութերում նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

7. Տուժողի իրավահաջորդ Ռ.Խաչատրյանը վերաքննիչ բողոքի պատասխանում նշել է, որ Վ.Գասպարյանը դատաքննության ընթացքում ամբողջովին հատուցել է տուժողի հուղարկավորության հետ կապված ծախսերը (1.500.000 ՀՀ դրամի չափով): Նա դատարանին խնդրել է Վ.Գասպարյանի նկատմամբ մեղմ պատիժ սահմանել, քանի որ նրա հետ պայմանավորվածություն է ձեռք բերել որդու գերեզմանի հետ կապված ծախսերը հատուցելու մասին, և ամբաստանյալը խոստացել է առաջիկայում հատուցել նաև այդ ծախսերը (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջ 264):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակները նշել են, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունվարի 25-ի և Վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 1-ի դատական ակտերով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և առաջացրել են ծանր հետևանքներ:

Ըստ բողոքաբերների, դատարաններն ընդհանրապես չեն անդրադարձել սույն գործի առանձնահատկություններին, ինչպես նաև գործով հաստատված այն փաստական հանգամանքներին, որոնք բացառիկ են, հնարավորություն են տալիս սույն գործով կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և նշանակել օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ:

9. Բողոքաբերների պնդմամբ՝ դատարանները հաշվի չեն առել սույն գործում հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ կապված բացառիկ հանգամանքների առկայությունը, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, և այդ հանգամանքները բավարար չափով չեն արտացոլվել նշանակված պատժատեսակում և պատժաչափում:

Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ

դատարանը Վ.Գասպարյանի նկատմամբ նշանակված պատիժը փոփոխելիս հաշվի է առել այն, որ Վ.Գասպարյանի դրսևորած հանցավոր անփութության հետևանքով տուժողի ցանկապատը և շրջակա տարածքը տևական ժամանակով գտնվել են 1000վ էլեկտրական լարվածության տակ, ինչը շատերի կյանքի համար վտանգավոր իրավիճակ է ստեղծել: Նշված էլեկտրական լարվածության հետևանքով տուժողին պատճառվել է մահ, ինչով էլ պայմանավորվել է հանցանքի և հանցավորի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Մինչդեռ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի Մասիսի էլեկտրական ցանցի պետ Գ.Գանիելյանի 2010 թվականի հունիսի 26-ի գրության համաձայն՝ Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղում գտնվող N31 հենասյան վրա ամրացված էլեկտրական հաշվիչների մեջ մտնում է 220վ լարում:

Սեջբերված դատողության արդյունքում բողոքաբերները եզրակացություն են արել այն մասին, որ նշված հանգամանքն էականորեն տարբերվում է Վերաքննիչ դատարանի կողմից նշված հանգամանքից: Հետևաբար, այն նվազեցնում է Վ.Գասպարյանի հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները վկայակոչել են նաև այն հանգամանքը, որ Վ.Գասպարյանը դեպքից հետո տուժողի իրավահաջորդին կանոնադրված հատուցել է տուժողի հուղարկավորության ծախսերը (1.500.000 ՀՀ դրամ), որի պատճառով տուժողի իրավահաջորդը հրաժարվել է ներկայացված քաղաքացիական հայցից և միջնորդել է դատարանին Վ.Գասպարյանի նկատմամբ նշանակել մեղմ պատիժ: Որպես Վ.Գասպարյանի անձը բնութագրող հանգամանք բողոքաբերները նշել են, որ նա երիտասարդ է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, ընտանիքի միակ կերակրողն է, նրա խնամքին է գտնվում 2008 թվականին սրտի վիրահատության ենթարկված և 2-րդ խմբի հաշմանդամ դարձած հայրը, ընդունել է մեղքը, անկեղծորեն զոջացել է կատարվածի համար, իր ցուցմունքներով օգնել է վարույթն իրականացնող մարմնին ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ: Բացի այդ, գործի նյութերում նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձինք եզրահանգել են, որ գործում առկա բացառիկ հանգամանքների համակցությունն էականորեն նվազեցնում է հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա դատապարտյալի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմք է: Ուստի, խնդրել են վճարել բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 1-ի որոշումը և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական

հարցը հետևյալն է՝ Վ.Գ.ասպարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանների կողմից հաշվի առնված մեղմացնող հանգամանքների համակցությունը համապատասխանում է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի իմաստով «բացառիկության» չափանիշին, ինչը հիմք է Վ.Գ.ասպարյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, (...) կարող է նշանակվել սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ (...):»

13. Որպես «բացառիկ» հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է հայտնել Հ.Հաբեշյանի և Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշումներում:

Համաձայն Հ.Հաբեշյանի վերաբերյալ որոշման՝ «(...) բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա» (տե՛ս Հարություն Հաբեշյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի ՎԲ-145/07 որոշումը):

Համաձայն Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշման՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում օգտագործված «բացառիկ» բառը ենթադրում է, որ տվյալ փաստական հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս են գալիս սովորականի շրջանակներից: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը պետք է այն աստիճան առանձնահատուկ լինեն, որ վերաձվեն բացառության» (տե՛ս Հակոբ Հովհաննիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 29-ի ՎԲ-13/08 որոշման 19-րդ կետը):

14. Սույն գործի նյութերից երևում է, որ Վ.Գ.ասպարյանն առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության անգգույշ հանցագործություն, երիտասարդ է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, ընտանիքի միակ կերակրողն է, նրա խնամքին է գտնվում 2008թ. սրտի վիարահատության ենթարկված և 2-րդ խմբի հաշմանդամ դարձած հայրը, ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար, իր ցուցմունքներով օգնել է վարույթն իրականացնող մարմնին ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ: Գործի նյութերում նրա պատասխանատվությունը և պատիժը ծան-

րացնող հանգամանքներ չկան (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Բացի այդ, տուժողի իրավահաջորդ Ռ.Խաչատրյանը հայտնել է, որ Վ.Գասպարյանը դատաքննության ընթացքում ամբողջովին հատուցել է տուժողի հուղարկավորության հետ կապված ծախսերը՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով: Նա խնդրել է դատարանին Վ.Գասպարյանի նկատմամբ նշանակել մեղմ պատիժ, քանի որ, պայմանավորվածության համաձայն՝ վերջինս խոստացել է հատուցել նաև որդու գերեզմանի հետ կապված ծախսերը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման 14-րդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև Հ.Հաբեշյանի և Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշումներով սահմանված և սույն որոշման 13-րդ կետով վերահաստատված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Գասպարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա ապացույցները պատշաճ չզնահատելու արդյունքում անտեսվել է այն, որ գործի նյութերում առկա, դատական ակտերում շարադրված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի իմաստով «բացառիկության» չափանիշին, և որ ամբաստանյալի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին:

Վերը նշված նյութական (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված) և դատավարական (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված) իրավունքի նորմերի պահանջները չկատարելն ազդել է պատժի մասով ճիշտ որոշում կայացնելու վրա և դատական ակտը բեկանելու հիմք է: Ուստի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

16. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գատապարտյալ Վարդան Վազգենի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. ապրիլի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵԱԶԳ/0164/01/09
նախագահող դատավոր՝ Ս.Չիչյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

ԵԱԶԳ/0164/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գոռ Գա-գիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մա-սի 14-րդ կետով և ամբաստանյալ Արմեն Իշխանի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատա-րանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հուլիսի 26-ի որոշ-ման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի մարտի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական

բաժնում հարուցվել է թիվ 09104209 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նույն օրը Կոտայքի մարզի դատախազությունում հարուցվել է թիվ 49103009 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներով:

2009 թվականի մարտի 21-ին թիվ 49103009 քրեական գործը միացվել է թիվ 09104209 քրեական գործին:

2009 թվականի մարտի 21-ին Գ.Ավետիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2009 թվականի մարտի 24-ի որոշմամբ Գ.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 24-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2009 թվականի հունիսի 24-ին Ա.Հովակիմյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հունիսի 27-ի որոշմամբ Ա.Հովակիմյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հունիսի 27-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2009 թվականի հուլիսի 16-ին Գ.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2009 թվականի սեպտեմբերի 15-ին Գ.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նախաքննության մարմինը 2009 թվականի հոկտեմբերի 22-ին որոշում է կայացրել Գ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերացնելու մասին, և հաջորդ օրը՝ 2009 թվականի հոկտեմբերի 23-ին, Գ.Ավետիսյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

2009 թվականի նոյեմբերի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 23-ի դատավճռով Գ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-

րդ մասի 14-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 7 տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2009 թվականի մարտի 21-ից:

Ա.Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2009 թվականի հունիսի 24-ից:

3. Ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պաշտպան Կ.Սկրտումյանի և ամբաստանյալ Գ.Ավետիսյանի ու նրա պաշտպաններ Ա.Աթարբեկյանի, Վ.Գևորգյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հուլիսի 26-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պաշտպան Կ.Սկրտումյանի բողոքն ամբողջությամբ, ամբաստանյալ Գ.Ավետիսյանի ու նրա պաշտպաններ Ա.Աթարբեկյանի, Վ.Գևորգյանի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 23-ի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին:

Ա.Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամկետով:

Գ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 6 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 26-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Գ.Ավետիսյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի մարտի 19-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Երևանի Ջաքարիա Մարկավազ և Ծարավ Աղբյուր փողոցների խաչմերուկի հարևանությամբ գտնվող, Գ.Ավետիսյանի ընտանիքին պատկանող «Խաչմերուկ մարկետ» խանութի մոտ եղբոր՝ Արմեն Ավետիսյանի, ընկերոջ՝ Վարուժան Բեգոյանի, ազգական Մարտիկ Կոստանդյանի և գործով չպարզված այլ անձանց հետ միասին նշված խանութից առևտուր կատարելու ընթացքում ծագած տարածայնությունների պատճառով վիճաբանել է Աշոտ Հովհաննիսյանի, նրա ընկերներ Արմեն Հովակիմյանի, Կարեն Հարությունյանի, Օնիկ Մնացականյանի, Էդգար Դումաշյանի և գործով չպարզված այլ անձանց հետ: Վիճաբանության ընթացքում Գ.Ավետիսյանը բռունցքով հարվածել է Ա.Հովհաննիսյանի դեմքին, որի արդյունքում քաշքշուկ, կռիվ է սկսվել: Կռվի ընթացքում Գ.Ավետիսյանի նետած քարերից մեկը դիպել է Ա.Հովհաննիսյանի գլխին՝ դիտա-

վորությամբ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: 2009 թվականի մարտի 20-ին՝ ժամը 6-ից 8-ն ընկած ժամանակահատվածում, Ա.Հովհաննիսյանը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է Կոտայքի մարզի Սոլակ գյուղում:

6. Ա.Հովակիմյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի մարտի 19-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Երևանի Չաքարիա Մարկավազ և Ծարավ Աղբյուր փողոցների խաչմերուկի հարևանությամբ գտնվող «Խաչմերուկ մարկետ» խանութի մոտ ընկերոջ՝ Ա.Հովհաննիսյանի և գործով չպարզված այլ անձանց հետ՝ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության՝ անցորդների, հարակից բնակելի տների բնակիչների նկատմամբ, շուրջ 15 րոպե տևողությամբ կատարել է խուլիգանություն, որի ընթացքում տվել է հայհոյանքներ, իր խուլիգանական գործողությունները զուգորդել ուրիշի գույքը ոչնչացնելով և անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, գետնից վերցրած քարերը որպես զենք գործադրելով՝ նետել է խանութի մոտ հավաքված անձանց վրա, որի արդյունքում նետած քարերով կոտրել է «Խաչմերուկ մարկետ» խանութի՝ 61.000 ՀՀ դրամ արժողությամբ ապակիները:

7. Ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժի հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը որպես վերջինիս անձը դրականորեն բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, խնամքին ունի մինչև 14 տարեկան մեկ երեխա, դատարանը հաշվի է առել նաև տուժողի վարքագծի հակաօրինականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը, ինչպես նաև այն, որ դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն՝ եթե դեպքից անմիջապես հետո Ա.Հովհաննիսյանին ցուցաբերվեր համապատասխան բուժօգնություն, ապա հնարավոր կլիներ փրկել նրա կյանքը:

Վերը նշված հանգամանքների առկայության, ինչպես նաև պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պետք է մեղմացնել:

8. Ամբաստանյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ նշանակված պատժի հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը որպես վերջինիս անձը դրականորեն բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, խանութում ծագած վիճաբանության հետ որևէ առնչություն չի ունեցել, դեպքի վայր է գնացել վիճաբանությունը կանխելու նպատակով, օգնել է տուժող Ա.Հովհաննիսյանին նստեցնել ավտոմեքենան, հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերակատարում չի ունեցել: Ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ Վերաքննիչ դատարանը չի արձանագրել:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, և դրանք համակցության մեջ ճանաչել է բացառիկ (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, 185-186-րդ էջեր):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մեղմացման առումով փոփոխելու վերաբերյալ որոշում կայացնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատակացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում:

10. Բողոքի հեղինակի կարծիքով, Ա.Հովակիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանի կողմից որպես բացառիկ գնահատված մեղմացնող հանգամանքները էապես չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, հետևաբար՝ նրա նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմք չեն:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից որպես մեղմացնող հաշվի առնված այն հանգամանքները, որ Ա.Հովակիմյանը հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերակատարում չի ունեցել, դեպքի վայր է գնացել հանցագործությունը կանխելու նպատակով, հաստատված չեն գործում առկա փաստական տվյալներով:

11. Անդրադառնալով ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժին՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ հետևության է հանգել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցում, ինչի արդյունքում ամբաստանյալի նկատմամբ նշանակել է անարդարացի, ակնհայտ մեղմ պատիժ:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 26-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 23-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

1. Սույն որոշման 8-րդ կետում նշված հանգամանքները որպես մեղմացնող ճանաչելը և Ա.Հովակիմյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դրանք հաշվի առնելը

13. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից նշված հանգամանքները (Ա.Հովակիմյանը հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերակատարում չի ունեցել, դեպքի վայր

է գնացել հանցագործությունը կանխելու նպատակով) արդյո՞ք իրական են և կարո՞ղ էին հաշվի առնվել որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող:

14. Գատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Պ.Բայրամյանի* վերաբերյալ որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Գատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, (...)» (տե՛ս *Պարույր Բայրամյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի ՎԲ-84/07 որոշումը):

15. Զննության առարկա գործի նյութերով հաստատված է, որ ամբաստանյալ Ա.Հովակիմյանը, տեղեկանալով, որ իր ընկեր Ա.Հովհաննիսյանը Քանաքեռ թաղամասում վիճաբանում է ինչ-որ մեկի հետ, անմիջապես մեկնել է դեպքի վայր, որտեղ մի խումբ այլ անձանց հետ, դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, շուրջ 15 րոպե տևողությամբ կատարել է խուլիգանություն, որի ընթացքում տվել է հայհոյանքներ, իր խուլիգանական գործողությունները զուգորդել ուրիշի գույքը ոչնչացնելով և անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, գետնից վերցրած քարերը որպես զենք գործադրելով՝ նետել է խանութի մոտ հավաքված անձանց վրա, որի արդյունքում նետած քարերով կոտրել է «Խաչմերուկ մարկետ» խանութի ապակիները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. *Պ.Բայրամյանի* վերաբերյալ որոշմամբ սահմանված և սույն որոշման 14-րդ կետում վերահաստատված իրավական դիրքորոշումը համադրելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից որպես ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հաշվի առնված հանգամանքները, մասնավորապես այն, որ վերջինս հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերակատարում չի ունեցել, դեպքի վայր է գնացել հանցագործությունը կանխելու նպատակով, գործով ձեռք բերված ապացույցներով ոչ միայն չեն հաստատվում, այլև հերքվում են, ուստի այդ հանգամանքներն իրական չեն և չեն համապատասխանում *Պ.Բայրամյանի* վերաբերյալ որոշման մեջ սահմանված չափանիշներին:

17. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի

կողմից հաշվի առնված, սույն որոշման 14-րդ կետում շարադրված հանգամանքները չեն կարող հանդիսանալ ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ:

II. Ամբաստանյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցը հետևյալն է. ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների համակցությունը որպես բացառիկ գնահատելով՝ Վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:

20. Անձի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԲ-55/07, ՎԲ-145/07, ՎԲ-185/07, ՎԲ-11/08, ՎԲ-13/08, ՎԲ-25/08 և այլ որոշումներում:

Մասնավորապես, Վ.Մնացականյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

1. գործի բացառիկ հանգամանքները.
2. խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Ինչպես նշված է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում, բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը

ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա» (տե՛ս *Վաչիկ Մնացականյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-25/08 որոշման 21-րդ կետը):

Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Օրենքում օգտագործված «բացառիկ» բառը ենթադրում է, որ տվյալ փաստական հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս են գալիս սովորականի շրջանակներից: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը պետք է այն աստիճան առանձնահատուկ լինեն, որ վերաձվեն բացառության» (տե՛ս *Հակոբ Հովհաննիսյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-13/08 որոշումը):

21. Նախորդ կետում և համապատասխանաբար նաև վկայակոչված որոշումների մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված, օբյեկտիվորեն գոյություն ունեցող հանգամանքների համակցությունը (նախկինում դատապարտված չի եղել, խանութում ծագած վիճարանության հետ որևէ առնչություն չի ունեցել, օգնել է տուժող Ա.Հովհաննիսյանին նստեցնել ավտոմեքենան) նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունն էականորեն չի նվազեցրել, և այդ հանգամանքների համակցությունն այն աստիճան առանձնահատուկ չէ, որ վերաձվի բացառության:

22. Հետևաբար, Ա.Հովակիմյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը որպես բացառիկ գնահատելով՝ Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածն առանց բավարար հիմքի կիրառելու արդյունքում Ա.Հովակիմյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ, այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության ու պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս Ա.Հովակիմյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 26-ի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 23-ի դատավճռին:

III. Ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժի մեղմացման իրավաչափությունը

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ հարցը

հետևյալն է. Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում նշանակված պատիժն արդյո՞ք անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:

26. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել ՎԸ-192/07, ՎԸ-50/07, ՎԸ-201/07, ԱՎԳ-2/0059/01/08, ԵՇԳ-0029/01/08 և այլ որոշումներում:

27. Նախորդ կետում շարադրված իրավադրույթների վերլուծությունից երևում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կան-

խելու համար: Հետևաբար, ակնհայտ մեղմ կամ ակնհայտ խիստ լինելու պատճառով անարդարացի կլինի այնպիսի պատիժը, որը նշանակվել է առանց պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանման:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջության այլ ծանր վնաս պատճառելը (...) [որն] անզուշտությամբ առաջացրել է] տուժողի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով»:

29. ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածի սանկցիայի վերլուծությունից երևում է, որ այն հարաբերականորեն որոշակի է պատժի նվազագույն և առավելագույն չափի սահմանմամբ, ինչը դատարանին հնարավորություն է տալիս, ելնելով կատարված կոնկրետ արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանից և բնույթից, հանցավորի անձը բնութագրող տվյալներից, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներից, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել համապատասխան պատիժ:

30. Զննության առարկա գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջին համապատասխան քննարկելով ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ պատժի նշանակման հարցը, անդրադարձել է ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատիժ նշանակելու հնարավորությանը, արձանագրել է ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), որոնք հաշվի չեն առնվել առաջին ատյանի դատարանի կողմից և հանգել հետևության, որ Գ.Ավետիսյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից սահմանված պատժաչափը՝ յոթ տարի ժամկետով ազատազրկումը, անարդարացի է ակնհայտ խիստ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին և չի բխում պատժի նպատակներից: Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժաչափը՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակելով ազատազրկում՝ 6 տարի ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում ամբաստանյալ Գ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժաչափի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների հետ և գտնում, որ այն համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ պատժի արդարացիության պահանջներին, իսկ բողոքաբերի փաստարկն առ այն, որ Գ.Ավետիսյանի նկատմամբ Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, հիմնազուրկ է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Ավետիսյանի մասով վճռաբեկ բողոքը պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի 2010 թվա-

կանի հուլիսի 26-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Ամբաստանյալ Արմեն Իշխանի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 23-ի դատավճռին:

2. Ամբաստանյալ Գոռ Գագիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 26-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0081/11/09
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան

ԵԿԴ/0081/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2007 թվականի փետրվարի 9-ին Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատախազությունում հարուցվել է թիվ 16202307 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ 2007 թվականի հունվարի 17-ին Ժորա Հարությունյանի կողմից Լաուրա Գարեգինի Չարյանին առևանգելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմինը 2007 թվականի մայիսի 9-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և Ժորա, Էդմոնդ, Կարեն Հարությունյանների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2007 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ գլխավոր դատախազությունում որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու որոշումը վերացնելու և նախաքննությունը շարունակելու մասին:

Ժ.Հարությունյանի և նրա պաշտպան Կ.Գրիգորյանի բողոքի քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008 թվականի հունվարի 21-ին որոշում է կայացրել բողոքը հիմնավորված ճանաչելու և դատախազի որոշումը վերացնելու մասին:

2. 2008 թվականի օգոստոսի 14-ին Լ.Ջարյանի դիմումի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազությունում որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման վերանայման հարցի պարզաբանման նպատակով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի 2009 թվականի հունվարի 26-ի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին 2007 թվականի մայիսի 9-ի որոշումը վերացվել է, և նախաքննությունը շարունակելու նպատակով գործն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչություն:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2009 թվականի մարտի 23-ին որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու մասին:

Տուժող Լ.Ջարյանի բողոքի քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի հունիսի 12-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ 2009 թվականի մարտի 23-ի որոշումը վերացնելու մասին:

3. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2009 թվականի օգոստոսի 11-ին կրկին որոշում է կայացվել թիվ 16202307 քրեական գործի վարույթը կարճելու և Ժորա, Էդմոնդ, Կարեն Հարությունյանների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ որոշումը Լ.Ջարյանի կողմից բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, որը 2009 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ մերժվել է:

2009 թվականի հոկտեմբերի 7-ին Լ.Ջարյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան, որը դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է:

4. Լ.Ջարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի նոյեմբերի 17-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը բեկանելու մասին: Նախաքննության մարմնի 2009 թվականի օգոստոսի 11-ի և դատախազի 2009 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումները վերացվել են, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցվել է վերսկսել թիվ 16202307 քրեական գործով կարճված վարույթը:

5. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

6. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հունիսի 4-ին որոշում է կայացրել տուժող Լ.Ջարյանի բողոքը բավարարելու մասին: ՀՀ գլխավոր դատախազության Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը պարտավորեցվել է վերացնել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության բաժնի պետ Ա.Այվազյանի՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 2009 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ տուժող Լ.Ջարյանի իրավունքների խախտումը:

7. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

8. Վերաքննիչ դատարանն իր 2010 թվականի հունիսի 4-ի դատական ակտում նշել է. «ՀՀ Վերաքննիչ դատարանը կրկին անգամ արձանագրում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 17.11.2009թ. որոշումը բեկանել է քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տրված լինելու հիմքով և անհրաժեշտ չի համարել անդրադառնալ վճռաբեկ բողոքի 9-րդ կետում նշված՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկներին:

Հետևաբար, վերաքննիչ դատարանը ևս, սույն գործի քննությունն իրականացնելով ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշմամբ սահմանված ծավալով, չի անդրադառնում գործի փաստական հանգամանքներին (...)» (տե՛ս, Նյութեր, էջ 186):

9. Սույն գործով 2010 թվականի փետրվարի 12-ին կայացրած որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ նախաքննության մարմնի և տուժողի բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները վերացնելու մասին, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը (...):

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված և սույն որոշման 9-րդ կետում շարադրված՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները» (տե՛ս, Նյութեր, էջ 166):

10. Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման եզրափակիչ մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Տուժող Լատուրա Գարեգինի Չարյանի բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության (...)» (տե՛ս, Նյութեր, էջ 167):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի էական խախտում, որն արտահայտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 264-րդ, 385-րդ, 386-րդ, 391-րդ և 393-րդ հոդվածների սխալ կիրառմամբ և ազդել է գործի ելքի վրա:

12. Ի հիմնավորումն այդ պնդման՝ բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի նախորդ՝ 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով, իսկ Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոքի հիմնավորումներից միայն մեկը՝ վերաքննիչ դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելու լիազորության հարցը, արձանագրել է խախտում և, բեկանելով Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը, գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել, որ Վճռաբեկ դատարանը չի սահմանափակել գործի նոր քննության սահմանները, հետևաբար, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

385-րդ և 391-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ քննության առնել Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ տուժողի բողոքը և նույն օրենսգրքի 393-րդ հոդվածով սահմանված կարգով կայացնել դատական ակտ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նշելով, որ գործի քննությունն իրականացնում է Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ծավալով, չի անդրադառնում գործի փաստական հանգամանքներին, խախտել է գործի քննության և դատական ակտ կայացնելու կարգը՝ ըստ էության չկատարելով նոր քննություն, ընդամենը մեխանիկական աշխատանք է կատարել՝ վերաձևակերպելով Վերաքննիչ դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման եզրափակիչ մասը:

13. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի դատական ակտից անհասկանալի է, թե տուժող Լ. Չարյանի ո՞ր իրավունքների խախտումը պետք է վերացնի ՀՀ գլխավոր դատախազության Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը, ինչից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է անորոշ դատական ակտ:

14. Բողոքի հեղինակը, շարադրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 264-րդ հոդվածները, կարծիք է հայտնել նաև այն մասին, որ որպես կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքի երաշխիք, օրենսդիրը սահմանել է քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու միայն վեցամսյա ժամկետի հնարավորություն:

Տվյալ դեպքում սույն քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման կայացման պահից անցել է վեց ամսից ավելի ժամկետ, ինչը, ըստ բողոքաբերի, բացառում է վիճարկվող որոշումը վերացնելու և գործի վարույթը վերսկսելու հնարավորությունը:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ գլխավոր դատախազության Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության համար սահմանել է այնպիսի պարտավորություն, որի կատարման իրավասությունը նշված վարչությունը չունի:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմանը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Վերաքննիչ դատարանի կողմից առանց գործի փաստական հանգամանքների հետազոտության դատական ակտ կայացնելու իրավաչափությունը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման կայացումից հետո իրականացված նոր քննության արդյունքում Վերա-

քննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք առանց գործի փաստական հանգամանքները հետազոտելու կայացնել դատական ակտ:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտում պետք է նշվեն, թե ինչ հիմքերով է առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, ինչն է հիմք ծառայել առաջին ատյանի դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով բեկանելու կամ փոխելու համար»:

Շարադրված իրավական դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը ինչպես իրավական, այնպես էլ փաստական առումով պետք է պատճառաբանված լինի:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ»:

Վկայակոչված քրեադատավարական նորմի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի փետրվարի 12-ին սույն գործով կայացված դատական ակտով մասնակիորեն բավարարել է վճռաբեկ բողոքը և գործն ուղարկել է Վերաքննիչ դատարան նոր քննության՝ արձանագրելով, որ գործի նախորդ քննության ընթացքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված օրինականության սկզբունքի խախտմամբ, կայացրել է այնպիսի դատական ակտ, որի կայացման իրավասությունը չունեն (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերոնշյալ խախտումն իր բնույթով էական էր և ցանկացած դեպքում պետք է հանգեցներ դատական ակտի բեկանմանը: Նման խախտման առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանը քննության չի առել բողոքում բարձրացված նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ այլ փաստարկները՝ նկատի ունենալով, որ դրանց հնարավոր կլինի անդրադառնալ միայն ստորադաս դատա-

րանի կողմից օրինականության սկզբունքի պահպանմամբ կայացված դատական ակտի առկայության պայմաններում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

19. Վճռաբեկ դատարանի կողմից 2010 թվականի փետրվարի 12-ին սույն գործով կայացված դատական ակտի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ և նոր քննության ծավալ չի սահմանվել: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանում սույն գործի նախորդ քննությունը, ինչպես նաև դրա արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության համարվել են առաջին: Դա նշանակում է, որ նոր քննությունը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է իրականացվեր վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների ամբողջ ծավալով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ բաժնի («Վարույթը վերաքննիչ դատարանում») պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ստուգման ենթարկեր գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի նորմերի պահպանումը և դրա արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ կայացներ համապատասխան դատական ակտ:

Մինչդեռ, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն առանց իրավական հիմքի նշել է, որ գործի քննությունն իրականացնում է Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ծավալով և չի անդրադառնում գործի փաստական հանգամանքներին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Դրա արդյունքում Վերաքննիչ դատարանն ըստ էության չի կատարել տուժող Լ.Չարյանի վերաքննիչ բողոքի քննություն, դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ստուգման չի ենթարկել Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և արդյունքում որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու մասին, ինչի իրավասությունը չուներ:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 17-19-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման կայացումից հետո իրականացված նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իրավասու չէր, առանց գործի փաստական հանգամանքները հետազոտելու, կայացնել դատական ակտ: Այլ կերպ՝ նոր քննությունը Վերաքննիչ դատարանի կողմից իրականացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վերաքննիչ դատարանում գործերի քննության և դատական ակտ կայացնելու կարգի խախտմամբ, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտում:

21. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է անորոշ դատական ակտ: Ըստ էության չկատարելով վերաքննիչ բողոքի քննություն և իր դատական ակտում չարձանագրելով բողոքաբերի իրավունքների և ազատությունների որևէ խախտում՝ Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ, իր որոշմամբ տուժողի իրավունքների խախտումը վերացնելու պարտավորություն է սահմանել՝ չմանրամասնելով, թե որ իրավունքների խախտման մասին է խոսքը:

22. Սույն որոշման 20-րդ և 21-րդ կետերում արձանագրված հանգամանքները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

II. Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու իրավաչափությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված ժամկետներն անցնելու դեպքում.

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. դատական ակտի պահանջների կատարման նպատակով կարո՞ղ է արդյոք վերացվել քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, եթե անցել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

3. Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի:

4. Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու դեպքում, եթե չեն անցել սույն օրենսգրքի 21 հոդվածով սահմանված ժամկետները, քրեական գործով վարույթը վերսկսվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

25. Համակարգային վերլուծության ենթարկելով կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքը սահմանող, ինչպես նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը երաշխավորող քրեադատավարական օրենքի վերոշարադրյալ նորմերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման վերացման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետային սահմանափակումները կիրառելի են միայն այն դեպքում, երբ նշված որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը շահագրգիռ անձի կողմից չի վիճարկվել դատական կարգով:

Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետային սահմանափակումները վերաբերում են այն դեպքերին, երբ քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները վերացվում են մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում: Այն դեպքերում, երբ հիշատակված որոշումները վիճարկվում են դատական կարգով, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված ժամկետային սահմանափակումները չեն գործում, և եթե դատարանը բողոքի քննության արդյունքում արձանագրում է անձի իրավունքների ու ազատությունների խախտում և այդ խախտումը վերացնելու պարտավորություն է սահմանում, ապա լիազոր մարմինը դատական ակտի պահանջները կատարելու նպատակով պարտավոր է վերացնել վիճարկվող որոշումը և վերսկսել գործի վարույթը՝ անկախ այն հանգամանքից, թե որքան ժամանակ է անցել որոշման կայացման պահից:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետային սահմանափակումներին հակառակ մեկնաբանություն տալու դեպքում ուղղակի կիմաստագրկվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը, և անձը կզրկվի ՀՀ Մահմանադրությամբ ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից, իսկ դատական պաշտպանությունը կվերածվի պատրանքային և վերացական իրավունքի:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 24-26-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի պահանջների

կատարման նպատակով կարող է վերացվել քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ անկախ այն հանգամանքից, թե որքան ժամանակ է անցել նշված որոշումը կայացնելու պահից:

28. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Տուժող Լատրա Գարեգինի Զարյանի բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱԲԳ/0008/11/10
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան

ԵԱԲԳ/0008/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով «Իրավագարանտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Ն.Բարսեղյանի և դիմող Գ.Լորգ Համլետի Գ.Լորգյանի ներկայացուցիչ Գ.Գ.Լորգյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշման դեմ Ն.Բարսեղյանի և Գ.Գ.Լորգյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի փետրվարի 22-ին «Իրավագարանտ» ՍՊԸ-ի տնօրեն Թ.Վարդանյանը և դիմող Գ.Գ.Լորգյանը բողոք են ներկայացրել Երևանի Արաբկիր

և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Կ.Հակոբյանի կողմից թիվ 14125709 քրեական գործի շրջանակներում 2009 թվականի նոյեմբերի 10-ին կայացված՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 21-ի որոշմամբ «Իրավագաբանություն» ՍՊԸ-ի տնօրեն Թ.Վարդանյանի և դիմող Գ.Գևորգյանի բողոքը մերժվել է:

Նույն անձանց վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հուլիսի 8-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 21-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին:

2. Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 10-ին որոշում է կայացրել «Իրավագաբանություն» ՍՊԸ-ի տնօրեն Թ.Վարդանյանի և դիմող Գ.Գևորգյանի բողոքը մերժելու մասին:

3. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են բերել «Իրավագաբանություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն.Բարսեղյանը և դիմող Գ.Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Գևորգյանը, որոնք Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ թողնվել են առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Ն.Բարսեղյանը և Գ.Գևորգյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. «Իրավագաբանություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն.Բարսեղյանի և դիմող Գ.Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքների վրա առկա դրոշմակնիքների համաձայն՝ բողոքները Վերաքննիչ դատարանում մուտք են եղել 2010 թվականի սեպտեմբերի 22-ին (տե՛ս նյութեր, 165-րդ և 175-րդ էջեր):

6. Վերաքննիչ դատարանը Ն.Բարսեղյանի և Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի

կողմից 10.09.2010թ. կայացված որոշման դեմ վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք են եղել միայն 22.09.2010թ., այսինքն՝ բողոք բերած անձանց կողմից չի պահպանվել գործն ըստ էության չլուծող դատական ակտը ՀՀ վերաքննիչ դատարան բողոքարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով ամրագրված տասնօրյա ժամկետը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ներկայացված վերաքննիչ բողոքները պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ» (տե՛ս նյութեր, 187-րդ էջ):

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքների հեղինակները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը, իրենց վերաքննիչ բողոքները թողնելով առանց քննության, խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ, 379-րդ, 381-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի՝ վերաքննության կարգով բողոքարկման վերջնաժամկետը եղել է 2010 թվականի սեպտեմբերի 22-ը, քանի որ դրան նախորդող օրերը՝ 2010 թվականի սեպտեմբերի 20-ը և 21-ը, Հայաստանի Հանրապետությունում հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր, հետևաբար՝ իրենց կողմից Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են բերվել քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ, իսկ բողոքները ժամկետանց համարելու մասին Վերաքննիչ դատարանի դատողությունները հիմնավոր չեն:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքների հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է. սույն գործով վերաքննիչ բողոքները բերվե՞լ են արդյոք գործն ըստ էության չլուծող դատական ակտերը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու համար սահմանված ժամկետի պահպանմամբ:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու

պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող աշխատանքային օրը (...):»:

«ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Անկախության տոն[ը]՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր [է]:»:

«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1133-Ն որոշման համաձայն՝ «(...) Անկախության տոնի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. 2010 թվականի սեպտեմբերի 20-ի աշխատանքային օրը տեղափոխել սեպտեմբերի 11-ին՝ շաբաթ օրը (...):»:

11. Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 10-ին կայացրել է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որի վերաքննության կարգով բողոքարկման ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, կազմել է հրապարակվելու պահից տասը օր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկ կատարելու արդյունքում ստացվում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման բողոքարկման վերջնաժամկետը եղել է 2010 թվականի սեպտեմբերի 20-ը ներառյալ: Սակայն քանի որ 2010 թվականի սեպտեմբերի 20-ի աշխատանքային օրը ՀՀ կառավարության որոշմամբ տեղափոխվել է սեպտեմբերի 11-ին, իսկ սեպտեմբերի 21-ը «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի իմաստով ոչ աշխատանքային, տոնական օր է, հետևաբար՝ հիշատակված դատական ակտի բողոքարկման վերջնաժամկետը եղել է հաջորդ աշխատանքային օրը՝ 2010 թվականի սեպտեմբերի 22-ը՝ մինչև ժամը քսանչորսը:

Համաձայն վերաքննիչ բողոքների վրա առկա դրոշմակնիքների՝ դրանք Վերաքննիչ դատարանում մուտք են եղել 2010 թվականի սեպտեմբերի 22-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

12. Հիմք ընդունելով սույն որոշման 10-րդ կետում առկա օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև 11-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ «Իրավագարանտ» ՍՊԸ-ի ներկա-

յացուցիչ Ն.Բարսեղյանի և դիմող Գ.Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Գևորգյանի կողմից վերաքննիչ բողոքներ են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված տասնօրյա ժամկետի պահպանմամբ, իսկ ներկայացված բողոքների ժամկետանց լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը) անհիմն են:

13. Ելնելով սույն որոշման 10-12-րդ կետերում շարադրված հիմնավորումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ վերոնշյալ խախտումները հիմք են կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: «Իրավագարանտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Ն.Բարսեղյանի և դիմող Գևորգ Համլետի Գևորգյանի ներկայացուցիչ Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՏԳ/0115/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ա.Խաչատրյան

ՏԳ/0115/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝
պաշտպան՝
տուժողի ներկայացուցիչ՝*

**Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Կ.ԱՂԱԶԱՆՅԱՆԻ
Ռ.ԲԵԶԱՆՅԱՆԻ**

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արկադի Պատվականի Պապյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանի և տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական մախապատմությունը

1. 2005 թվականի օգոստոսի 6-ին հարուցվել է թիվ 47200405 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2005 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Արկադի Պապյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2005 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Ա. Պապյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2005 թվականի օգոստոսի 9-ին մեղադրյալ Ա. Պապյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2005 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ քրեական գործի մախաքննությունը կասեցվել է՝ մինչև մեղադրյալ Ա. Պապյանի գտնվելու վայրը պարզելը:

2009 թվականի փետրվարի 21-ին Ա. Պապյանը հայտնաբերվել և կալանավորվել է:

2009 թվականի փետրվարի 22-ին քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

2. 2009 թվականի մարտի 17-ի որոշմամբ Ա. Պապյանի կողմից ապօրինի զենք պահելու և կեղծ փաստաթղթեր օգտագործելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09104109 քրեական գործը:

2009 թվականի մարտի 23-ի որոշմամբ թիվ 47200405 և թիվ 09104109 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

2009 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ Ա. Պապյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի օգոստոսի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճռով Ա. Պապյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ ազատազրկում 8 (ութ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով՝

պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Պապյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով:

4. Ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանի և տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը:

5. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանը (այսուհետ նաև՝ Առաջին բողոքաբեր) և տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը (այսուհետ նաև՝ Երկրորդ բողոքաբեր):

2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանի և տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի վճռաբեկ բողոքներն ընդունել է վարույթ:

Պաշտպան Կ.Աղաջանյանի վճռաբեկ բողոքի վերաբերյալ պատասխան է ներկայացրել տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը՝ նշելով, որ ամբաստանյալի պաշտպանի վճռաբեկ բողոքը վերաբերում է ոչ թե Վերաքննիչ դատարանի որոշմանը, այլ ստորադաս դատարանի կողմից կայացված դատավճռին և դրա կայացման ժամանակ կիրառված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածներին: Բացի այդ, տուժողի ներկայացուցիչը նշել է, որ բողոքի հեղինակը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդված 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6.1-րդ կետերի պահանջները:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Ա.Պապյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

2005 թվականի օգոստոսի 6-ին՝ ժամը 19³⁰-ի սահմաններում, Տավուշի մարզի Ոսկեպար գյուղի կենտրոնական հրապարակում իր համագյուղացի Բորիս Հակոբյանին սպանելու նպատակով իր կողմից վարվող «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենայից վերցնելով ապօրինի կերպով ձեռք բերված, հրազեն հանդիսացող «ԿՄ-1797» տեսակի ատրճանակը՝ հինգ անգամ դիտավորությամբ կրակել է Բ.Հակոբյանի վրա՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Բացի այդ, Ա.Պապյանն ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել հրազեն հանդիսացող մեկ հատ «Պիետրո Բերետա» տեսակի 2003 թվականի արտադրության ատրճանակ՝ իր խլացուցիչով, 1 պահունակով և 7 հատ փամփուշտներով, 5,45 մմ տրամաչափի «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգ՝ իր խլացուցիչով, 1 պահունակով և 30 հատ փամփուշտներով, որոնք հայտնաբերվել են 2009 թվականի փետրվարի 21-ին՝ ժամը 10³⁰-ի սահմաններում, Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 26/1 հասցեում գտնվող «Էրզրում» հյուրանոցային համալիրում՝ Ա.Պապյանի վարձակալած համարում:

Բացի այդ, ամբաստանյալ Ա.Պապյանն իր լուսանկարի տեղադրմամբ օգտագործել է Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղի բնակիչ Մանվել Նազարյանի անվամբ տրված անձնագիրը:

7. 2005 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Ա.Պապյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշված է. «Տավուշի մարզի Ոսկեպար գյուղի նախկին բնակիչ, ներկայումս Ռ-Ռ քաղաքացի Արկադի Պատվականի Պապյանը 2005թ. օգոստոսի 6-ին ժամը 19³⁰-ի սահմաններում, նախկին համագյուղացի, ներկայումս դարձյալ Ռ-Ռ քաղաքացի Բորիս Իլյայի Հակոբյանին սպանելու դիտավորությամբ, իր կողմից վարվող «ՎԱԶ 2121» մակնիշի, առանց պետհամարանիշի ավտոմեքենայով գնացել է Ոսկեպար գյուղի կենտրոնական հրապարակ, որտեղ շուրջ 20 րոպե սպասել է վերջինիս, և, երբ Հակոբյանը հրապարակ է եկել, Պապյանը, ավտոմեքենայից հանելով ապօրինի ձեռք բերված, հրազեն հանդիսացող ատրճանակը, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 4 անգամ կրակել է նրա վրա և պատճառել մարմնական վնասվածքներ» (տե՛ս Քրեական գործ, 1-ին հատոր, էջ 66):

8. 2009 թվականի ապրիլի 22-ին քննիչը որոշում է կայացրել Ա.Պապյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու և լրացնելու, Ա.Պապյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Պապյանը ներգրավվել է որպես մեղադրյալ: Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշված է. «Տավուշի մարզի Ոսկեպար գյուղի բնակիչ Արկադի Պատվականի Պապյանը 2005թ. օգոստոսի 6-ին ժամը 19-30-ի սահմաններում համագյուղացի Բորիս Իլյայի Հակոբյանին սպանելու դիտավորությամբ գնացել է գյուղի կենտրոնական հրապարակ, որտեղ իր կողմից վարվող «ՎԱԶ 2121» մակնիշի, առանց պետհամարանիշի ավտոմեքենայից հանելով ապօրինի կերպով ձեռք բերված և պահվող հրազեն հանդիսացող ատրճանակը, մի քանի անգամ կրակել է Բ.Հակոբյանի վրա՝ վերջինիս պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: (...)» (տե՛ս Քրեական գործ, 2-րդ հատոր, 150-152 էջեր):

9. 2009 թվականի օգոստոսի 25-ին հաստատված մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում նշված է. Ա.Պապյանը «մեղադրվում է նրանում, որ նա 2005թ. օգոստոսի 6-ին ժամը 19-30-ի սահմաններում, համագյուղացի Բորիս Իլյայի Հակոբյանին սպանելու դիտավորությամբ գնացել է գյուղի կենտրոնական հրապարակ, որտեղ իր կողմից վարվող «ՎԱԶ 2121» մակնիշի, առանց պետհամարանիշի ավտոմեքենայից հանելով ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող «KM-1797» տեսակի ատրճանակը, 5 (հինգ) անգամ դիտավորությամբ կրակել է Բորիս Հակոբյանի վրա՝ վերջինիս պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին

վտանգ սպառնացող: (...)» (տե՛ս Զրեական գործ, 2-րդ հատոր, էջ 294):

Ա.Պապյանի արարքի նույնական նկարագրություն է տրվել նաև մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում (տե՛ս Զրեական գործ, 2-րդ հատոր, էջ 280):

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ Առաջին բողոքաբերը նշել է, որ շատերի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությունը կամ սպանության փորձը դրսևորվում է նրանով, որ հանցագործությունը կատարվում է հանրության համար վտանգավոր ձևով: Այսինքն՝ հանցագործության կատարման եղանակն իր բնույթով վտանգավոր է շատերի համար, ընդ որում, հանցագործություն կատարող անձը պետք է գիտակցի, որ սպանությունը կատարում է այնպիսի եղանակով, որը վտանգավոր է շրջապատում գտնվող անձանց համար: Մինչդեռ, ըստ Առաջին բողոքաբերի, սույն քրեական գործով կազմված մեղադրական եզրակացության նկարագրական և եզրափակիչ մասերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ չնայած Ա.Պապյանը մեղադրվել է այն բանի համար, որ 2005 թվականի օգոստոսի 6-ին՝ ժամը 19³⁰-ի սահմաններում, Ռսկեպար գյուղի կենտրոնական հրապարակում 2-3 մետր հեռավորությունից կրակել է իր համագյուղացի Բ.Հակոբյանի վրա և նրա առողջությանը պատճառել ծանր վնաս, սակայն Ա.Պապյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով: Դատարաններն էլ մեղադրանքի նույն ձևակերպմամբ կայացրել են դատական ակտեր:

Վերոգրյալից Առաջին բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Ա.Պապյանին առաջադրված մեղադրանքում բացակայում է շատերի համար վտանգավոր եղանակով սպանության փորձի հատկանիշը, բացի այդ՝ քրեական գործում չկան այդ հանգամանքը հիմնավորող ապացույցներ: Հետևաբար, Ա.Պապյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

Անդրադառնալով Ա.Պապյանի անձը բնութագրող տվյալներին և նրա նկատ-

մամբ նշանակված պատժին՝ Առաջին բողոքաբերը գտել է, որ արարքի սխալ որակման արդյունքում Ա.Պապյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ:

11. Վերոգրյալի հիման վրա՝ ամբաստանյալ Ա.Պապյանի պաշտպան Կ.Աղաջանյանը խնդրել է բեկանել և փոփոխել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 8-ի որոշումը կամ նշված դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

12. Տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունած որոշումներին:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ Երկրորդ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի և 393-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, որի հետևանքով սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ և 62-րդ հոդվածները, չի կիրառել նույն օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:

Ըստ Երկրորդ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը չի ստուգել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի կիրառման ճշտությունը և հաշվի չի առել, որ ստորադաս դատարանը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է նշել այնպիսի հանգամանքներ, որոնք ոչ միայն նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասով, այլև դրանց մի մասը չի համապատասխանում իրականությանը:

Երկրորդ բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանն անհիմն կերպով արձանագրել է, որ Ա.Պապյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան, Վերաքննիչ դատարանն էլ անտեսել է այդ, մինչդեռ պարտավոր էր կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, որի համաձայն՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը: Վերլուծելով գործի փաստական տվյալները՝ Երկրորդ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, «հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը» նույնացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված՝ «սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով» կատարելու հետ, թույլ են տվել կոպիտ խախտում: Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ Երկրորդ բողոքաբերը պնդում է, որ՝ քանի որ նշված հանգամանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ

կետով նախատեսված հանցագործության հատկանիշ չէ, հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանն իրավունք չունի ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով:

Երկրորդ բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, առանց ստուգելու գործով հավաքված ապացույցները, գտել է, որ Ա.Պապյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը համաչափ է: Մինչդեռ, ըստ Երկրորդ բողոքաբերի, Ա.Պապյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով պետք է նշանակվեր առավելագույն պատժաչափը:

13. Վերոգրյալի հիման վրա տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 8-ի որոշումը, Ա.Պապյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նշանակել 11 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկում, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 տարի ժամկետով ազատազրկում, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 տարի ժամկետով ազատազրկում, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ Ա.Պապյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 15 տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ա.Պապյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ ստորադաս դատարանները պահպանե՞լ են արդյոք դատական քննության սահմաններն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

15. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: (...)»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

(...)»:

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

(...):»:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

(...) »:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

(...)

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են (...), մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը: (...) »:

ՀՀ քրեական դատավարության 270-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները (...):

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը»:

(...) »:

ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

(...):»:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

19. Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր (արարքի փաստական նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, դատակոչի ենթակա անձանց շրջանակը և այլն) էական նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար:

20. Պաշտպանության իրավունքի իրականացման համար մեղադրական եզրակացության նշանակության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Նարթանդյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության

իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում» (տե՛ս *Մուրեն Նալբանդյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԶԲԴ-2/0144/01/09 որոշման 24-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սկզբնական մեղադրանքի փոփոխման դեպքում մեղադրանքի վերջնական և ամբողջական ձևակերպումը պարունակող փաստաթղթի՝ մեղադրական եզրակացության կազմումը կվերացնի անփոփոխ թողնված մեղադրանքից և փոփոխված մեղադրանքից պաշտպանվող անձանց միջև առկա անհավասար իրավական վիճակը:

21. Պաշտպանության իրավունքի իրականացման համար մեղադրանքի ձևակերպման կարևորության հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Մասնավորապես, *Կամասինսկիի* վերաբերյալ գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները թելադրում են շահագրգռված անձին «մեղադրանքի» մասին տեղեկացնելու հարցում ցուցաբերել ծայրահեղ զգուշավոր մոտեցում: Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ. դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված (տե՛ս *Kamasinski v. Austria*, 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 9783/82, կետ 79):

Վերոգրյալից բացի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները մեղադրյալին իրավունք են վերապահում տեղեկացված լինելու ոչ միայն մեղադրանքի համար առիթ հանդիսացած նյութական փաստերի մասին, այլ նաև այդ փաստերի մանրամասն իրավական որակման մասին (տե՛ս *Pelissier and Sassi v. France*, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 51):

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ ներկայացված մեղադրանքի, հետևաբար՝ դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում արդար փաստաբանության էական նախապայման է (տե՛ս *Pelissier and Sassi v. France*, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 52): Եվ ի վերջո, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («բ») ենթակետի մասով բերված բողոքի վերաբերյալ Եվրոպական դատարանը գտել է, որ («ա») և («բ») ենթակետերը կապված են միմյանց հետ, և որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո (տե՛ս *Pelissier and Sassi v. France*, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 54):

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստան-

յալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Դատական քննության սահմանների հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սերոբյանի* վերաբերյալ որոշման մեջ և իրավական դիրքորոշում հայտնել այն մասին, որ «(...) Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուկ «քրեաիրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայազուրկ է:

Մինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող վերացական լինել:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (*Artico v. Italy*, 13.05.1980թ., կետ 33):

Այսպիսով, դատարանը գտնում է, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը (...)» (տե՛ս *Արթուր Սերոբյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը):

23. Վերոգրյալ օրենսդրական կարգավորումների, Մարդու իրավունքների եվրո-

պական դատարանի նախադեպային իրավունքի և Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներում արտահայտած իրավական դիքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր այն մոտեցումը, որ գործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է, մի կողմից, մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից, այն հանգամանքով, որ դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: Ընդ որում, դատական քննության սահմաններն ընդգծելու և մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է, որ «մեղադրանք» եզրույթը հասկացվի որպես արարքի քրեաիրավական որակման և դրա հիմքում ընկած փաստական հանգամանքների ամբողջություն: Դրա հետ մեկտեղ, մեղադրանքի բովանդակությունը կազմող փաստական և իրավական հիմքերը պետք է լինեն հստակ և համաձայնեցված, չհակասեն միմյանց:

24. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության համար: Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանությունը բնութագրվում է կատարման այնպիսի եղանակով, որի հետևանքով որոշակի անձի կյանքից զրկելով՝ հանցավորը միաժամանակ գիտակցաբար իրական վտանգի տակ է դնում նաև այլ անձանց կյանքը: Այսինքն՝ արարքը որպես շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն որակելու համար անհրաժեշտ է, որ արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած լինեն որոշակի փաստական հանգամանքներ, որոնք կվկայեն հանցավորի գործողությունների կամ անգործության՝ այլ անձանց կյանքն իրական վտանգի տակ դնելու մասին:

25. Քննության առարկա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2005 թվականի օգոստոսի 8-ի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ Ա.Պապյանին մեղսագրվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձի հատկանիշը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ըստ Ա.Պապյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու և լրացնելու մասին որոշման, ինչպես նաև Ա.Պապյանի նկատմամբ հաստատված և դատարան ուղարկված մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերի՝ «Ա.Պապյանը (...) համագյուղացի Բ.Հակոբյանին սպանելու դիտավորությամբ գնացել է գյուղի կենտրոնական հրապարակ, որտեղ իր կողմից վարվող «ՎԱԶ 2121» մակնիշի, առանց պետհամարանիշի ավտոմեքենայից հանելով ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող «KM-1797» տեսակի ատրճանակը, հինգ անգամ դիտավորությամբ կրակել է Բ.Հակոբյանի վրա (...)» (տե՛ս սույն որոշման 8-րդ, 9-րդ կետերը):

Այսինքն՝ Ա.Պապյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու և լրացնելու արդյունքում, չնայած նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձի համար), սակայն նրան մեղսագրվել է միայն ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող ատրճանակից սպանելու դիտավորությամբ Բ.Հակոբյանի վրա հինգ անգամ կրակելու հանգամանքը: «Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի» հատկանիշը բնութագրող և այդ հատկանիշի առկայությունը հաստատող որևէ փաստական տվյալ Ա.Պապյանին առաջադրված մեղադրանքում չի նկարագրվել, հետևապես և Ա.Պապյանին չի մեղսագրվել:

Մինչդեռ Ա.Պապյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով որակելու համար տվյալ հանցակազմի պարտադիր տարր հանդիսացող՝ «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի» հատկանիշը պետք է մեղսագրվեր նրան և հաստատվեր արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած որոշակի փաստերով:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 18-24-րդ կետերում շարադրված հիմնավորումները և սույն որոշման 25-րդ կետում շարադրված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ա.Պապյանին «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի» հատկանիշը չմեղսագրելու պայմաններում Ա.Պապյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, ստորադաս դատարանները դուրս են եկել նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից, ինչի արդյունքում խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Դատարանների կողմից թույլ տրված սխալի հետևանքով խախտվել է նաև ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

27. Քննարկման առարկա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ենթադրյալ խախտման վերաբերյալ հարցը պաշտպան Կ.Աղաջանյանը բարձրացրել է նաև վերաքննիչ բողոքում, սակայն Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջները, նշված հարցին չի անդրադարձել, որի արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

28. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է և ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների

խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

29. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի վճռաբեկ բողոքում բարձրացված՝ պատիժ նշանակելու հարցում նյութական իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկները՝ բավարարելով միայն Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու վերաբերյալ վերջինիս խնդրանքը: Նույն պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում նաև Կ.Աղաջանյանի բողոքում բարձրացված՝ գործում առկա ապացույցները չգնահատելու և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի հարցերին. նշված հարցերին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ փոխկապակցված պաշտպանության իրավունքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պաշտպան Կ.Աղաջանյանի և տուժողի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արկադի Պատվականի Պապյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 15-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հուլիսի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՍԳ/0085/01/10
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Ա.Պետրոսյան

ՍԳ/0085/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ս.ԱՍԼԱՆՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Վոլոդյայի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Ս.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հունվարի 13-ին հարուցվել է թիվ 41100210 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2010 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ Ա.Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2010 թվականի ապրիլի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 20-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Արթուր Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 20-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Ս.Ասլանյանը:

2010 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Ս.Ասլանյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Լ.Հայրապետյանը՝ ըստ էության խնդրելով վճռաբեկ բողոքը բավարարել՝ ամբաստանյալ Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ պատճառաբանելով, որ Ա.Ստեփանյանը, մնալով ազատության մեջ, կօգնի իր ընտանիքին, որով կվերականգնվի սոցիալական արդարությունը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Ստեփանյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար:

Աշխատելով Կապանի «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ում՝ որպես մեքենավար, 2009 թվականի նոյեմբերի 14-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, վարելով նույն ընկերության «ՄՈՒԱԶ» մակնիշի N1 ինքնաթափը, Շահումյանի անվան ստորերկրյա հանքում խախտել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետը, այն է՝ «Վարորդին արգելվում է ... լքել իր տեղը կամ թողնել տրանսպորտային միջոցը, եթե նրա կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բացառում են տրանսպորտային միջոցի ինքնաբերաբար շարժումը ...» պահանջները, վայրէջքային տեղամասում բեռնատարը կանգնեցնելուց հետո, անիվները չի թեքել դեպի հանքուղու կողապատը, իսկ վարորդի տեղը թողնելուց առաջ ինքնաարգելակումը միացնելու

համար կառավարման վահանակի վրայի հատուկ սեղմակով չի գրոյացրել հիդրավ-լիկ համակարգի ճնշումը, այսինքն՝ չի ապահովել կանգառի անվտանգությունն ու չի բացառել մեքենայի ինքնաբերաբար շարժումը, որի արդյունքում ինքնաթափն ինքնաբերաբար ընթացել է ցած, առաջամասով ընդհարվել այնտեղ կայանած «Տոյոտա Լենդ Կրաուզեր» մակնիշի ավտոմեքենային, որն էլ առաջ հրվելով վրաերթի է ենթարկել ապարաբարձիչ մեքենայի մեքենավար Արա Գարեգինի Պողոսյանին: Վերջինս ստացած մարմնական վնասվածքներից «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2009 թվականի նոյեմբերի 16-ին մահացել է:

6. Առաջին ատյանի դատարանը Ա.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, զղջացել է կատարածի համար, աշխատանքի վայրից և բնակության վայրի համատիրության կողմից տրված բնութագրերի համաձայն բնութագրվում է դրական:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ Ա.Ստեփանյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է նաև, որ «Ամբաստանյալի նկատմամբ պատժաչափ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ա.Ստեփանյանը հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, կինը 3-րդ կարգի հաշմանդամ է, տուժողի իրավահաջորդ Լ. Հայրապետյանը դատարանին հայտնել է, որ պարտք ու պահանջ չունի, և խնդրել է որքան հնարավոր է մեղմ պատիժ նշանակել» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 31):

7. Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Ա.Ստեփանյանի պատժի հարցը, հանգել է հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, ամբաստանյալի նկատմամբ նշանակել է պատիժ, որը համապատասխանում է հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, և որ բողոքում մատնանշված փաստարկները նշանակված պատիժը մեղմացնելու հիմք չեն:

Անդրադառնալով Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին՝ Վերաքննիչ դատարանը, գործի կոնկրետ հանգամանքների մատնանշմամբ, հանգել է հետևության, որ ամբաստանյալը ենթակա է պատժի իր կատարած հանցանքի համար, նա պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, և որ, բացառվում է նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջեր 78-80):

8. Ա.Ստեփանյանը գործի քննության ընթացքում տվել է ճշմարտացի, խոստովանական ցուցմունքներ, ընդունել է հանցանքը և զղջացել կատարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ընտանիքի միակ կերակրողն է, կինը 3-րդ կարգի հաշմանդամ է: Տուժողի իրավահաջորդ Լ.Հայրապետյանը ստորադաս դատարաններին հայտնել է, որ ամբաստանյալից պարտք ու պահանջ չունի, և խնդրել է Ա.Ստեփանյանի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական

օրենսգրքի 70-րդ հոդվածը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 142-146, ինչպես նաև հատոր 3, էջեր 29, 59):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև՝ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ՝ նյութական օրենքի էական խախտում, որը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Ա.Ստեփանյանի համար:

10. Բողոքի հեղինակը, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61- 63-րդ հոդվածների և գործի հանգամանքների վերլուծության համատեքստում նշել է, որ ստորադաս դատարանների կողմից Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով, չի համապատասխանում ամբաստանյալին վերագրվող հանցագործության ծանրությանն ու անձին:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ իր պաշտպանյալի արարքը դրսևորվել է անզգուշությամբ, առկա են նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ և բացակայում են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները և, գնահատելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես՝ ընտանիքի միակ կերակրողը լինելը, խնամքին 3-րդ կարգի հաշմանդամ կին ունենալը, կատարածի համար զոջալն ու պատճառված վնասը հարթելը, ինչպես նաև՝ տուժողի իրավահաջորդի խնդրանքը՝ ամբաստանյալի նկատմամբ հնարավոր մեղմ պատիժ նշանակելու մասին, անհասկանալիորեն եզրահանգել է, որ նման պայմաններում բացառվում է Ա.Ստեփանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

Բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի նախադեպային ՎԲ-01/08, ԵԱԶԳ/0078/01/09 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշման և սույն գործի փաստական հանգամանքների համեմատական վերլուծության արդյունքում գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը կհամապատասխաներ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջներին և այն ամբողջությամբ կբխեր Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումների պահանջներից:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, գտնելով, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտումներն ազդել են իր պաշտպանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու հարցում ճիշտ որոշում

կայացնելու վրա, խնդրել է մասնակիորեն՝ Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատժի մասով, բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 20-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումը, փոփոխել այն՝ նշանակված պատիժը՝ 1 տարի ժամկետով ազատազրկումը, մեղմացնել, պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղադրամասերից է, ուստի օրենսդրի կողմից մեծապես կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքների պահպանումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները :

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնա-

րավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

14. Պատիժ նշանակելու և այն կրելու նպատակահարմարության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09, ԼԳ-2/0019/01/09 և այլ որոշումներում ու դիրքորոշում հայտնել այն մասին, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության վտանգավորության վրա՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս *Գարուշ Մադաթյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

«Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված չէ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ ասանմանակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով չէ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս, *Գավիթ Հովհաննիսյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը):

«Նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների,

հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս, Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված օրենսդրական կարգավորումները և դրանց հիման վրա Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար, որի արդյունքում մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանն անգույշությամբ հասցվել է վնաս:

17. *Ա.Սահակյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը հետևյալ իրավական դիրքորոշումն է արտահայտել. «ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ գործերով դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: (...) Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը կարևոր նշանակություն ունի նաև հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

(...)

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ

հողվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման տեսանկյունից կարևոր է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումից հետո անձի դրսևորած վարքագծի գնահատումը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևորում է հանցագործության կատարումից անմիջապես հետո հանցանք կատարած անձի վարքագիծը, ինչպես նաև նրա վարքագիծը հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը պետք է գնահատի այն հանգամանքը, թե անմիջապես հանցագործության կատարումից հետո ամբաստանյալն արդյոք անհրաժեշտ օգնություն է ցուցաբերել տուժողին, թե, թողնելով դեպքի վայրը, դիմել է փախուստի: Հետագա վարքագծի գնահատման համար դատարանը պետք է ուշադրության արժանացնի նաև այն, թե քրեական գործի քննության ընթացքում ամբաստանյալն արդյոք ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, դեպքի վերաբերյալ տվել ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ, արդյոք որոշակի քայլեր է ձեռնարկել տուժողի կամ նրա հարազատների հետ հաշտվելու ուղղությամբ կամ ինքնակամ հատուցել է հանցագործության արդյունքում տուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը» (տե՛ս *Արամ Սահակյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ-1/0003/01/10 որոշման 20-րդ և 22-րդ կետերը):

18. Զննության առարկա գործի նյութերով հիմնավորվել է, որ Ա.Ստեփանյանը, վարելով «ՄՈՒԱԶ» մակնիշի ինքնաթափ, խախտել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, որի արդյունքում ինքնաթափն ինքնաբերաբար ընթացել է ցած, առաջամասով ընդհարվել այնտեղ կայանած՝ «Տոյոտա Լենդ Կրաուզեր» ավտոմեքենային, որն էլ, առաջ հրվելով, վրաերթի է ենթարկել ապարաբարձիչ մեքենայի մեքենավար Ա.Պողոսյանին, ով, ստացած մարմնական վնասվածքներից, 2009 թվականի նոյեմբերի 16-ին մահացել է (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն Ա.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, զոջացել է կատարածի համար, աշխատանքի վայրից և բնակության վայրի համատիրության կողմից տրված բնութագրերի համաձայն բնութագրվում է դրական:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ Ա.Ստեփանյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս հաշվի է առել նաև, որ ամբաստանյալ Ա.Ստեփանյանը ընտանիքի միակ կերակրողն է, կինը 3-րդ կարգի հաշմանդամ է, տուժողի իրավահաջորդ Լ.Հայրապետյանը դատարանին հայտնել է, որ պարտք ու պահանջ չունի և խնդրել է որքան հնարավոր է մեղմ պատիժ նշա-

նակել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու, այն պայմանականորեն չկիրառելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգել է հետևության, որ վերաքննիչ բողոքում մատնանշված փաստարկները նշանակված պատիժը մեղմացնելու հիմք չեն, և որ՝ բացառվում է ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Փաստորեն, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունն արդյո՞ք համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու պատժի արդարացիության քրեաիրավական սկզբունքին:

19. Այս առումով հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, արարքի կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը գնահատելու տեսանկյունից չի անդրադարձել ամբաստանյալ Ա.Ստեփանյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանին: Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ Ա.Ստեփանյանը կատարել է անգույշ հանցագործություն, ընդունել է հանցանքը և զղջացել կատարածի համար, տվել է ճշմարտացի, խոստովանական ցուցմունքներ (տե՛ս սույն որոշման 5-րդ և 9-րդ կետերը):

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել տուժողի իրավահաջորդի կողմից ամբաստանյալի հետ հաշտվելու և ամբաստանյալի կողմից հանցագործության հետևանքով պատճառված վնասները հարթելու հանգամանքներին, ինչպես նաև ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ տուժողի իրավահաջորդի խնդրանքին, որը վերջինս ներկայացրել էր՝ հիմք ընդունելով այն, որ ազատության մեջ մնալու դեպքում ամբաստանյալը նյութապես կօժանդակի իր ընտանիքին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները ևս ենթակա են քննարկման Ա.Ստեփանյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման տեսանկյունից (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

20. Հիմք ընդունելով սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ստեփանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման ընթացքում Վերաքննիչ դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել սույն որոշման 18-19-րդ կետերում նշված հանգամանքները, ինչի արդյունքում ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ կայացրել

է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշում:

21. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են ամբաստանյալ Ա.Ստեփանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու կապակցությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Ա.Ստեփանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել, գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, ինչը պայմանավորված է վերոհիշյալ հանգամանքների պատշաճ քննարկման և գնահատման անհրաժեշտությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության ապահովման տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Վոլոդյայի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 20-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԱԶԳ/0195/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Համբարձումյան

ԵԱԶԳ/0195/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ԼՅՈՒԳՎԻԳՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Հրանտ Արմենի Խաչատրյանի և Վահարշակ Ռուբենի Մինասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման դեմ մեղադրող Գ.Լյուդվիգյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի մայիսի 12-ին:

2009 թվականի նոյեմբերի 14-ին Հրանտ Արմենի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2009 թվականի դեկտեմբերի 2-ին Վաղարշակ Ռուբենի Մինասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2009 թվականի դեկտեմբերի 17-ին Հ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

2009 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատավճռով Հ.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով Հ.Խաչատրյանը դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Հ.Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Նույն դատավճռով Վաղարշակ Ռուբենի Մինասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Վ.Մինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանը և ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանը:

3. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ պատժի մասով դատավճիռը փոփոխվել է:

Վերաքննիչ դատարանի հիշյալ դատական ակտով Հրանտ Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Հ.Խաչատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Հ.Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2 (երկու) տարի ժամկետով և տուգանք 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Վերաքննիչ դատարանի նույն դատական ակտով Վաղարշակ Մինասյանը

մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ու դատապարտվել տուգանքի 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

4. Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ, գործով մեղադրող Գ.Լյուդվիգյանը Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Պաշտպանների կողմից ներկայացվել են վճռաբեկ բողոքի պատասխաններ, որտեղ վերջիններս իրենց անհամաձայնությունն են հայտնել մեղադրող Գ.Լյուդվիգյանի վճռաբեկ բողոքի կապակցությամբ:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Հրանտ Խաչատրյանը և Վաղարշակ Սինասյանը մեղավոր են ճանաչվել ու դատապարտվել հետևյալ արարքների կատարման համար.

Հ.Խաչատրյանը և Վ.Սինասյանը 2009 թվականի փետրվարի 7-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Կոմիտաս 52 հասցեում գտնվող «ՍԱՍ» սուպերմարկետում վիճաբանության մեջ են մտել ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու պատճառով իրենց դիտողություն արած նույն սուպերմարկետի անվտանգության աշխատակից Էդգար Մարկոսյանի հետ, շուրջ 40 րոպե, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով սուպերմարկետի աշխատակիցների, հաճախորդների, շենքի բնակիչների, փողոցի անցորդների նկատմամբ, Է.Մարկոսյանի հասցեին բարձրաձայն հայհոյանքներ են տվել: Դրսևորելով ագրեսիվ վարքագիծ՝ քաշքշել են Է.Մարկոսյանի հագուստներից, նրան դուրս են բերել սուպերմարկետի մուտքի դիմաց և բռունցքներով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Է.Մարկոսյանը, կորցնելով հավասարակշռությունը, ընկել է գետնին, իսկ Վ.Սինասյանն ու Հ.Խաչատրյանը շարունակել են ոտքերով ծեծի ենթարկել նրան: Այդ ընթացքում Հ.Խաչատրյանը, գոտկատեղից դուրս բերելով իր մոտ ապօրինի կերպով կրած և քննությամբ չհայտնաբերված գազային ատրճանակը, կրակել է Է.Մարկոսյանի ուղղությամբ: Կրակոցից և իր նկատմամբ գործադրված բռնությունից վախեցած՝ Է.Մարկոսյանը փախել-մտել է սուպերմարկետի նկուղ: Դրանից հետո Հ.Խաչատրյանը, ատրճանակը ձեռքին, Վ.Սինասյանի հետ մտել է սուպերմարկետ և փնտրել Է.Մարկոսյանին, սակայն չգտնելով նրան՝ գնել են մեկ շիշ օղի և դուրս եկել խանութից: Հ.Խաչատրյանի և Վ.Սինասյանի խուլիգանական գործողություններով խափանվել է սուպերմարկետի բնականոն աշխատանքը:

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը Հ.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել, որ նա բա-

րեխղճորեն ծառայել է ՀՀ ՌԶ թիվ 1032 զորամասում, հրամանատարության կողմից բնութագրվել է դրական, հայրը մահացել է, հիվանդ մոր և չաշխատող քրոջ խնամքը մնացել է նրա վրա, երիտասարդ է, գղջացել է կատարած արարքի համար, հաշտվել է տուժողի հետ, որը որևէ պահանջ չի ներկայացրել, դատաբժշկական փորձաքննությամբ վերջինիս մոտ վնասվածքներ չեն հայտնաբերվել, նա օրենքով սահմանված կարգով ձևակերպված չի եղել տվյալ օբյեկտում աշխատելու համար:

Վերոշարադրյալից ելնելով, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով այդ բացառիկ հանգամանքները՝ պատիժ նշանակելիս չի անդրադարձել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Հ.Խաչատրյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու հարցին (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 135-140 էջեր):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ Է.Մարկոսյանը պահնորդային ծառայություն է մատուցել Երևան քաղաքի Կոմիտաս 52 հասցեում գտնվող «ՄԱՍ» սուպերմարկետում, նրա՝ որպես պահնորդի, պարտականությունն է եղել «ՄԱՍ» սուպերմարկետում պահպանել հասարակական կարգը: Իսկ 2009 թվականի փետրվարի 7-ին Է.Մարկոսյանը պահնորդի համար նախատեսված համազգեստով ծառայություն է իրականացրել «ՄԱՍ» սուպերմարկետում (տե՛ս Քրեական գործ, հատոր 5, 106-130 էջեր):

8. «Պանտեռա սիքյուրիթի» ՍՊ ընկերության տնօրեն Վահե Դարբինյանի 2009 թվականի մայիսի 26-ի թիվ 001/Ռ-001 գրության համաձայն՝ Էդգար Մարկոսյանը 2009 թվականի փետրվարի 1-ից մինչև 2009 թվականի փետրվարի 15-ն ընկած փորձաշրջանի ժամանակահատվածում աշխատել է «Պանտեռա սիքյուրիթի» ՍՊ ընկերությունում որպես պահնորդ:

9. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Մինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանը վերաքննիչ բողոք է բերել 2010 թվականի հունիսի 1-ին, իսկ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանը՝ 2010 թվականի հունիսի 14-ին:

Ներկայացված վերաքննիչ բողոքում Վ.Մինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանը խնդրել է դատավճիռն իր պաշտպանյալի մասով բեկանել և հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 2-13 էջեր):

Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանը խնդրել է դատավճիռն իր պաշտպանյալի մասով բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում նրան ճանաչել արդարացված՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ քրեական գործի վարույթը կարճել՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 5-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 15-23 էջեր):

Պաշտպանների վերաքննիչ բողոքների կապակցությամբ մեղադրողը ներկայացրել է առարկություններ, որոնք Վերաքննիչ դատարանում ստացվել են 2010 թվականի հունիսի 22-ին (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 63-71, 73-81 էջեր):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշմամբ պաշտպանների վերաքննիչ բողոքներն ընդունվել են վարույթ և դատական նիստում քննության նշանակվել 2010 թվականի հուլիսի 14-ին (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 84-85 էջեր):

10. 2010 թվականի հուլիսի 13-ին Վերաքննիչ դատարանում ստացվել են սույն գործով վերաքննիչ բողոքների հեղինակների դիմումներն այն մասին, որ առողջական խնդիրներ ունենալու պատճառով չեն կարող մասնակցել 2010 թվականի հուլիսի 14-ին նշանակված դատական նիստին և խնդրում են գործի դատական քննությունը հետաձգել 20 օրով:

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը դատական նիստը վերանշանակել է 2010 թվականի օգոստոսի 17-ին և այդ մասին տեղեկացրել դատավարության մասնակիցներին (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, էջ 102):

11. 2010 թվականի օգոստոսի 12-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է ամբաստանյալ Վ.Սինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանի կողմից ստորագրված փաստաթուղթ, որը վերնագրված է «Լրացուցիչ վերաքննիչ բողոք», և որով նա խնդրել է իր պաշտպանյալի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելը հնարավոր չհամարելու դեպքում՝ մեղմացնել վերջինիս նկատմամբ նշանակված պատժաչափը (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, էջ 115):

2010 թվականի օգոստոսի 13-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանի կողմից ստորագրված փաստաթուղթ, որը վերնագրված է «Լրացուցիչ վերաքննիչ բողոք», և որով նա խնդրել է իր պաշտպանյալի նկատմամբ արդարացման և «քրեական գործի վարույթը կարճելու դատավճիռ» կայացնելը հնարավոր չհամարելու դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ մեղմացնել վերջինիս նկատմամբ նշանակված պատժաչափը (տե՛ս Քրեական գործ, հատոր 6, 117-118 էջեր):

Սույն գործով Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներում առկա չէ որևէ նշում այն մասին, որ «Լրացուցիչ վերաքննիչ բողոքներով» բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվում է կամ հարգելի է ճանաչվում:

12. Վերաքննիչ դատարանը, վճռաբեկության կարգով քննելով գործը, 2010 թվականի սեպտեմբերի 3-ին կայացրել է որոշում, որում առկա է թե՛ վերաքննիչ բողոքների և թե՛ ի լրումն դրանց ներկայացված՝ «լրացուցիչ վերաքննիչ բողոքների» բովանդակության շարադրանքը:

Ավելին, Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ վերջինս, փաստորեն, բավարարել է «լրացուցիչ վերաքննիչ բողոքները» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, 135-140 էջեր):

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

13. Վճռաբեկ բողոք բերած անձը գտել է, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ ստուգման և գնահատման չի ենթարկել Հ.Խաչատրյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները, և այդ ամենի արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, և 61-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտմամբ, Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով:

14. Բողոքաբերը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ և 382-րդ հոդվածների պահանջները: Ի հիմնավորումն իր այդ պնդման՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճռի կայացման օրվանից 2 ամիս անց ընդունել է պաշտպանության կողմի ներկայացրած ժամկետանց, այսպես կոչված «Լրացուցիչ վերաքննիչ բողոքները», որոնք՝ այլ հիմքով ու պահանջով բերված նախկին վերաքննիչ բողոքների հետ համատեղ, քննության է առել և քավարարել:

15. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը, օրինական ուժի մեջ թողնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ առկա են ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը հիմնավորող բացառիկ հանգամանքներ:

17. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու հետ կապված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ «Օրենքում օգտագործված «բացառիկ» բառը ենթադրում է, որ տվյալ փաստական հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս են գալիս սովորականի շրջանակներից: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը պետք է այն աստիճան առանձնահատուկ լինեն, որ վերածվեն բացառության» (տե՛ս Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ

դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-13/08 որոշումը):

Վ.Մնացականյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը`

1. գործի բացառիկ հանգամանքները.

2. խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Ինչպես նշված է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում, բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի` հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի` հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա» (տե՛ս Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-25/08 որոշման 21-րդ կետը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ` սույն գործով առկա են մի շարք բացառիկ հանգամանքներ, մասնավորապես` ամբաստանյալ Հ.Խաչատրյանի բարեխիղճ ծառայությունը ՀՀ ՌՉ թիվ 1032 գործամասում, հրամանատարության կողմից դրական բնութագրվելը, հոր մահացած լինելը, նրա խնամքին հիվանդ մոր և չաշխատող քրոջ առկայությունը, բացի այդ` այն, որ ամբաստանյալը երիտասարդ է, գղջացել է կատարած արարքի համար, հաշտվել է տուժողի հետ, որը որևէ պահանջ չի ներկայացրել, դատաբժշկական փորձաքննությամբ վերջինիս մոտ վնասվածքներ չեն հայտնաբերվել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

19. Սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար նաև Հ.Հովհաննիսյանի և Վ.Մնացականյանի վերաբերյալ որոշումներում սահմանված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները` Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքները էականորեն չեն նվազեցնում նրա կատարած հանցանքի` հանրության համար վտանգավորության աստիճանը, և այդ հանգամանքներն այն աստիճան առանձնահատուկ չեն, որ տվյալ գործը վերածեն բացառության:

Հետևաբար` Հ.Խաչատրյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը որպես բացառիկ գնահատելով` Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Վերաքննիչ

դատարանը որպես բացառիկ է դիտել այն հանգամանքը, որ տուժող Է.Մարկոսյանն օրենքով սահմանված կարգով ձևակերպված չի եղել տվյալ օբյեկտում աշխատելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված է, որ 2009 թվականի փետրվարի 7-ին Է.Մարկոսյանը պահնողի համար նախատեսված համազգեստով ծառայություն է իրականացրել «ՍԱՍ» սուպերմարկետում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված են գործով ձեռք բերված տվյալների վրա: Մասնավորապես՝ «Պանտեռա սիքյուրիթի» ՍՊ ընկերության տնօրեն Վահե Դարբինյանի 2009 թվականի մայիսի 26-ի թիվ 001/Ռ-001 գրության համաձայն՝ Էդգար Մարկոսյանը 2009 թվականի փետրվարի 1-ից մինչև 2009 թվականի փետրվարի 15-ն ընկած փորձաշրջանի ժամանակահատվածում աշխատել է «Պանտեռա սիքյուրիթի» ՍՊ ընկերությունում որպես պահնորդ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված ճանաչված վերոհիշյալ հանգամանքների վերաբերյալ որևէ հերքող պատճառաբանություն Վերաքննիչ դատարանի դատական ակտը չի բովանդակում: Վերաքննիչ դատարանն անգամ չի պատճառաբանել, թե տուժող Է.Մարկոսյանի՝ տվյալ կազմակերպությունում աշխատելու համար օրենքով սահմանված կարգով ձևակերպված չլինելու հանգամանքը ինչպես է էականորեն նվազեցնում Հ.Խաչատրյանի կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

Մինչդեռ Հ.Հովհաննիսյանի և Վ.Մնացականյանի վերաբերյալ որոշումներում սահմանված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգամ եթե տուժող Է.Մարկոսյանը տվյալ կազմակերպությունում աշխատելու համար օրենքով սահմանված կարգով ձևակերպված չի եղել, ապա սույն գործով դա չի կարող դիտվել որպես բացառիկ հանգամանք ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 17-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ առկա են ամբաստանյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը հիմնավորող բացառիկ հանգամանքներ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն առանց բավարար հիմքերի է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, ինչի արդյունքում թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության ու պատասխանատվու-

քյան անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում և Հ.Խաչատրյանի նկատմամբ նշանակել է ակնհայտ մեղմ պատիժ:

23. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ կիրառել է քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման: Դա հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացման: Նշված հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս Հ.Խաչատրյանի մասով բեկանելու Վերաքննիչ դատարանի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալու Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

II. «Լրացուցիչ վերաքննիչ բողոքները» քննության ընդունելու իրավաչափությունը

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք քննության առնել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո կողմի բերած այն փաստաթուղթը, որը վերնագրված է «Լրացուցիչ վերաքննիչ բողոք»:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան, իսկ դրա պատճենը՝ դատական ակտ կայացրած դատարան՝ սույն օրենսգրքի 382 հոդվածի և 383 հոդվածի երկրորդ մասի պահանջները կատարելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում է Առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում»:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...)»

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված

ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

27. Շարադրված քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում «Լրացուցիչ վերաքննիչ բողոք» դատավարական փաստաթղթի տեսակ, որպես վերաքննիչ բողոքից իր իրավական ռեժիմով տարբերվող փաստաթուղթ, և, համապատասխանաբար, չի սահմանում նաև «Լրացուցիչ վերաքննիչ բողոք» քննելու՝ Վերաքննիչ դատարանի ինքնուրույն լիազորությունը: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարությունում «Լրացուցիչ վերաքննիչ բողոքի» համար սովորական վերաքննիչ բողոքից տարբերվող, ինքնուրույն դատավարական ռեժիմ չի սահմանվում: Ուստի «Լրացուցիչ վերաքննիչ բողոք» վերնագրված փաստաթղթին անհրաժեշտ է վերաբերել այնպես, ինչպես «սովորական» վերաքննիչ բողոքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգն ու ժամկետները, ինչպես նաև այդ բողոքի քննության կապակցությամբ Վերաքննիչ դատարանի լիազորությունները: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը մեկ ամիս է, և այս ժամկետն անցնելուց հետո բերված բողոքները թողնվում են առանց քննության, եթե վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա չի վերականգնում վերաքննիչ բողոքարկման ժամկետը: Ընդ որում, իրավական որոշակիության սկզբունքի ներքո, վերաքննիչ դատարանը իրավասու է վերաքննիչ բողոքարկման ժամկետից դուրս ներկայացրած բողոքը քննության առնել միայն այն դեպքում, եթե դատավարական որոշմամբ վերականգնի բողոքարկման ժամկետը:

Բացի այդ, վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանն իրավունք չունի դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից:

28. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը Վճռաբեկ դատարանին թույլ է տալիս եզրակացնել, որ վերաքննության կարգով գործի վերանայման հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով սահմանված ժամկետների սահմաններում ներկայացված վերաքննիչ բողոքն է կամ վերոնշյալ ժամկետային սահմաններից դուրս ներկայացված բողոքը, եթե պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում (ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 380-րդ հոդված կամ 174-րդ հոդվածի 4-րդ մաս) վերաքննիչ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվել: Քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված յուրաքանչյուր բողոք պետք է թողնվի առանց քննության, եթե պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում վերաքննիչ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի չի ճանաչվել:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Սինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանը վերաքննիչ բողոք է բերել 2010 թվականի հունիսի 1-ին, իսկ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանը՝ 2010 թվականի հունիսի 14-ին: Պաշտպանների վերաքննիչ բողոքների կապակցությամբ մեղադրողը ներկայացրել է առարկություններ:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 28-ի որոշմամբ պաշտպանների վերաքննիչ բողոքներն ընդունվել են վարույթ և դատական նիստում քննության նշանակվել 2010 թվականի հուլիսի 14-ին, սակայն պաշտպանների դիմումների հիման վրա Վերաքննիչ դատարանի նիստը վերանշանակվել է 2010 թվականի օգոստոսի 17-ին (տե՛ս սույն որոշման 9-10-րդ կետերը):

2010 թվականի օգոստոսի 12-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է ամբաստանյալ Վ.Սինասյանի պաշտպան Ռ.Պողոսյանի կողմից ստորագրված փաստաթուղթ, որը վերնագրված է՝ «Լրացուցիչ վերաքննիչ բողոք»:

2010 թվականի օգոստոսի 13-ին Վերաքննիչ դատարանում ստացվել է ամբաստանյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Ռ.Գրիգորյանի կողմից ստորագրված փաստաթուղթ, որը վերնագրված է՝ «Լրացուցիչ վերաքննիչ բողոք»:

Ներկայացված «լրացուցիչ վերաքննիչ բողոքներում» փոփոխված են օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում բերված վերաքննիչ բողոքների հիմքերը և պահանջը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը որևէ դատավարական որոշմամբ չի անդրադարձել ներկայացված «լրացուցիչ վերաքննիչ բողոքներով» բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ դրանում առկա է թե՛ վերաքննիչ բողոքների և թե՛ ի լրումն դրանց ներկայացված՝ «լրացուցիչ վերաքննիչ բողոքների» բովանդակության շարադրանքը: Ավելին, Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ վերջինս, փաստորեն, բավարարել է «լրացուցիչ վերաքննիչ բողոքները» (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Սեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ սույն գործով բողոքաբերները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացրել են նշված օրենսգրքով չնախատեսված փաստաթուղթ՝ «Լրացուցիչ վերաքննիչ բողոք», որը բավարարվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

30. Սույն որոշման 27-28-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 29-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելուց հետո՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետներից դուրս, հավելյալ վերաքննիչ բողոք ներկայացնելու պարագայում (անկախ այն հանգամանքից, որ փաստաթուղթն ունեն օրենքով չնախատեսված անվանում՝ «Լրացուցիչ վերաքննիչ բողոք») Վերաքննիչ դատարանն իրավասու չէր քննության առնել դրանք, եթե դատավարական որոշմամբ չէր վերականգնել բողոքարկման բաց թողնված ժամկետը:

31. Հիմք ընդունելով սույն որոշման 27-30-րդ կետերում շարադրված հիմնավորումները և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

32. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ «Լրացուցիչ վերաքննիչ բողոքի» վերաբերյալ՝ սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումը հավասարապես վերաբերում է թե՛ ամբաստանյալ Հ.Խաչատրյանի և թե՛ ամբաստանյալ Վ.Սինասյանի պաշտպանների բերած «լրացուցիչ վերաքննիչ բողոքներին»: Սակայն, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի հեղինակը դատական ակտը Վ.Սինասյանի մասով չի բողոքարկել և պահանջել է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել մասնակիորեն, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե գործով դատապարտված են մի քանի անձ, իսկ բողոքը բերված է դատապարտյալներից միայն մեկի կամ մի քանիսի նկատմամբ, դատարանը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում պարտավոր է գործն ստուգել միայն տվյալ դատապարտյալների վերաբերյալ», հետևաբար՝ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է միայն Վերաքննիչ դատարանի դատական ակտի՝ Հ.Խաչատրյանին վերաբերող մասին:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը Հ.Խաչատրյանին վերաբերող մասով և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հրանտ Արմենի Խաչատրյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵՄԴ/0086/01/10
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Մ.Արդամանյան

ԵՄԴ/0086/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Խորենի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 165-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ մեղադրող Գ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի փետրվարի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 17106310 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ Արսեն Խորենի Ամիրխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի 2010 թվականի ապրիլի 1-ի որոշումներով ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ են ներգրավվել Սևակ Արսենի Ամիրխանյանը և Վարդան Յուրիի Մանուկյանը, և նրանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2010 թվականի ապրիլի 1-ի որոշումներով Ջոհրաբ Կալինոսի Գալստյանը ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով և 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2010 թվականի մայիսի 20-ի որոշմամբ Ա.Ամիրխանյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով:

2010 թվականի հունիսի 2-ի որոշմամբ թիվ 17106310 քրեական գործից անջատվել է Ջ.Գալստյանի, Ա.Ամիրխանյանի և ինքնությունը չպարզված մյուս երկու անձանց վերաբերյալ մասը, և անջատված մասին տրվել է թիվ 171006310/1 համարը:

2010 թվականի հունիսի 24-ին Ա.Ամիրխանյանի և Վ.Մանուկյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Ամիրխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ազատազրկման 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Ամիրխանյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Վ.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալներ Ա.Ամիրխանյանի և Վ.Մանուկյանի պաշտպան Մ.Ղազարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն. բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, ճանաչել և հռչակել է ամբաստանյալ Ա.Ամիրխանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադր-

ված մեղադրանքում և այդ մասով նրան արդարացրել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղավոր է ճանաչել և դատապարտել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Վ.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ա.Ամիրխանյանը և մեղադրող Գ.Հովհաննիսյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ մեղադրող Գ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ամիրխանյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

Գատավարության մասնակից, ամբաստանյալ Ա.Ամիրխանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով թողնել անփոփոխ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ բեկանել ու փոփոխել և գործի վարույթը կարճել կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածների հիման վրա՝ սահմանել ավելի մեղմ պատիժ:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն, որ Ա.Ամիրխանյանը Վ.Մանուկյանի միջոցով ծանոթացել է Երևան քաղաքի Նոր Նորքի 1-ին զանգվածի Ջուղայի փողոցի 5 շենքի թիվ 50 բնակարանի բնակիչ, տուժող Հովհաննես Շանոյի Վիրաբյանի հետ, որը ցանկացել է ավտոմեքենա գնել:

2009 թվականի նոյեմբեր ամսին Ա.Ամիրխանյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «Գրանդ Չերոկի» մակնիշի 55 ՍՕ 800 պետհամարանիշի ավտոմեքենան բանավոր պայմանավորվածությամբ 6000 ԱՄՆ դոլարով վաճառել է Հ.Վիրաբյանին: Պայմանավորվածության համաձայն Հ.Վիրաբյանը 1000 ԱՄՆ դոլար պետք է վճարեր 2009 թվականի նոյեմբերի 15-ին, 500 ԱՄՆ դոլար՝ 2009 թվականի նոյեմբերի վերջին, իսկ մնացած՝ 4500 ԱՄՆ դոլարը՝ 1000 ԱՄՆ դոլարով յուրաքանչյուր ամսվա վերջին՝ մինչև 2010 թվականի ապրիլ ամիսը:

2009 թվականի նոյեմբերի 15-ին Հ.Վիրաբյանն Ա.Ամիրխանյանին տվել է 500 ԱՄՆ դոլար, իսկ 2009 թվականի դեկտեմբերի 5-ին նշված ավտոմեքենան վթարի է ենթարկել, կորցրել է աշխատանքը, ինչի մասին նա տեղյակ է պահել Ա.Ամիրխանյանին: Վերջինս, տեղեկանալով, որ Հ.Վիրաբյանը նշված ավտոմեքենան վթարի է ենթարկել և ի վիճակի չէ պայմանավորված գումարը վճարել, որոշել է նրան առևանգել ու այդ միջոցով ստիպել, որպեսզի գումարը վճարի: Այդ նպատակով Ա. Ամիր-

խանյանը վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը հետ ստանալու շահադիտական ձգտումներ առաջացնելու եղանակով որդուն՝ 1992 թվականի օգոստոսի 1-ին ծնված անչափահաս Ս.Ամիրխանյանին, ներգրավել է ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցագործության կատարման մեջ: Ա.Ամիրխանյանը որդու և ընկերոջ՝ Վ.Մանուկյանի հետ նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

2009 թվականի դեկտեմբերի կեսերին՝ ժամը 08³⁰-ի սահմաններում, Ա.Ամիրխանյանը, Վ.Մանուկյանը և Ս.Ամիրխանյանը, նախնական համաձայնությամբ, Ա.Ամիրխանյանի կողմից վարվող «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայով ուղևորվել են Հ.Վիրաբյանի տուն՝ Երևան քաղաքի Նոր Նորքի 1-ին զանգվածի Ջուղայի փողոցի 5 շենքի թիվ 50 բնակարան: Հ.Վիրաբյանի ընտանիքի անդամների ներկայությամբ Ս.Ամիրխանյանը հոր՝ Ա.Ամիրխանյանի հանձնարարությամբ թափանցիկ, կաչուն ժապավենով թիկունքի կողմից կապել է Հ.Վիրաբյանի ձեռքերը, որից հետո, տուժողի կամքին հակառակ, երեքով ստիպողաբար նրան նստեցրել են նշված ավտոմեքենան և Հ.Վիրաբյանին բացահայտ առևանգելով՝ նրա բնակավայրից տեղափոխել են Ա.Ամիրխանյանի՝ Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 7-րդ փողոցի թիվ 33 տուն: Այնտեղ նրանք արձակել են Հ.Վիրաբյանի ձեռքերը, սակայն զրույցի ընթացքում համոզվելով, որ նա ի վիճակի չէ ավտոմեքենայի արժեքը վճարել՝ Ս.Ամիրխանյանը թափանցիկ, կաչուն ժապավենով վերստին կապել է Հ.Վիրաբյանի ձեռքերն ու ոտքերը, Վ.Մանուկյանի հետ նրան բռնությամբ տեղափոխել են հյուրասենյակ, որտեղ էլ Ա.Ամիրխանյանն իրենց միացած հարևանի՝ Ջոհրաբ Գալստյանի հետ ծեծի են ենթարկել Հ.Վիրաբյանին: Իսկ այն բանից հետո, երբ Հ.Վիրաբյանի առաջարկով այնտեղ է ժամանել իրեն գումարային պարտք ունեցող ընկերը՝ Աշխարհագոր Ռ-ազմիկի Բաբայանը և իրավիճակը տեսնելով՝ խոստացել է տուժողին պարտք եղած 3000 ԱՄՆ դոլարը հանձնել Ա.Ամիրխանյանին, Ա.Ամիրխանյանը և մյուսները Հ.Վիրաբյանին շուրջ վեց ժամ պահելուց հետո ազատ են արձակել:

Հետագայում Հ.Վիրաբյանը, հասկանալով, որ հնարավորություն չունի պարտքն ամբողջությամբ վերադարձնել, Ա.Ամիրխանյանից խուսափելով, անջատել է իր բջջային հեռախոսը: Կռահելով նրա մտադրության մասին՝ Ա.Ամիրխանյանն այս անգամ նախնական հանցավոր համաձայնության է եկել Վ.Մանուկյանի, Ջ.Գալստյանի, բռնությամբ չպարզված «ԳԱԶ-2410» մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր ոմն Գոռի և ինքնությունը չպարզված մեկ այլ անձի հետ և 2010 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, նախապես տեղեկանալով, որ Հ.Վիրաբյանը գտնվում է Աբովյան քաղաքում, նշված ավտոմեքենայով ուղևորվել են այնտեղ: Նույն քաղաքի Երևանյան փողոցի թիվ 1/7 հասցեին հարող տարածքում, նկատելով իրենցից փախչող Հ.Վիրաբյանին, Ա.Ամիրխանյանն ու վերոնշյալ անձինք հետապնդել են նրան, բռնելուց հետո հինգ հոգով ծեծի ենթարկել և բռնու-

թյուն գործադրելով, ստիպողաբար նստեցրել են «Գ-ԱԶ-2410» մակնիշի ավտոմեքենան, Հ.Վիրաբյանին կրկին առևանգելով՝ տեղափոխել են Ա.Ամիրխանյանի՝ Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 7-րդ փողոցի թիվ 33 տուն, որտեղ նրան պահել են Ա.Ամիրխանյանի ննջասենյակին կից՝ առանց պատուհանների, մութ, 1,5-2 քմ մակերեսով թաքստոցում:

Շուրջ երկու օր անազատության մեջ պահելով՝ Ա.Ամիրխանյանը, Ջ.Գալստյանը և Վ.Մանուկյանը տարբեր օրերի և ժամերի պարբերաբար թաքստոցից դուրս են բերել Հ.Վիրաբյանին, ծեծի ենթարկել ու նորից պահել այնտեղ: Վերջում Ա.Ամիրխանյանը Հ.Վիրաբյանից գրավոր պարտավորագիր է վերցրել այն մասին, որ վերջինս իրեն 6000 ԱՄՆ դոլար է պարտք, որից հետո 2010 թվականի փետրվարի 2-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Հ.Վիրաբյանն ազատ է արձակվել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջեր 63-65):

6. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Ամբաստանյալ Ա.Ամիրխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մեղադրանքում բացակայում են հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի հատկանիշները, թե նախաքննության և թե դատաքննության ընթացքում չի հիմնավորվել Ա.Ամիրխանյանի կողմից անչափահաս որդուն հանցագործության մեջ ներգրավելը: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվող հանցագործության որպես օբյեկտիվ հատկանիշ նշված՝ վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը հետ ստանալու շահադիտական ձգտումներ առաջացնելու և հանցանքը համատեղ կատարելու պայմանավորվածությունը՝ որպես հանցակազմի տարր, բացակայում է, հետևաբար՝ բացակայում է Արսեն Ամիրխանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով կատարված հանցագործությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 142):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքաբերը փաստարկել է, որ նախաքննության ընթացքում Ա.Ամիրխանյանը հրաժարվել է ցուցմունք տալուց, իսկ դատաքննության ընթացքում, պատասխանատվությունից խուսափելու նպատակով տեղի ունեցած դեպքի հանգամանքների կապակցությամբ տվել է ոչ ճիշտ ցուցմունքներ՝ ժխտելով ինչպես Հ.Վիրաբյանին առևանգելու, այնպես էլ որևէ անձի հետ նախնական համաձայնությամբ հանցագործություն կատարելու փաստը:

8. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ տուժող Հ.Վիրաբյանը, վերջինիս կինը՝ Գայանե Հարությունյանն ու նրա մայրը՝ Հռոմնսիմ Թադևոսյանը, իրենց ցուցմունքներում մանրամասն նկարագրել են, թե ինչպես Ա.Ամիրխանյանը, նրա անչափահաս որդին և Վ.Մանուկյանը եկել են իրենց բնակարան, Ա.Ամիրխանյանի հանձնարարությամբ վերջինիս անչափահաս

որդին, բերելով թափանցիկ կաշուն ժապավենը, կապել է տուժող Հ.Վիրաբյանի ձեռքերը և մյուսների հետ միասին տուժողին դուրս բերել սննդ:

9. Անդրադառնալով անչափահասին հանցագործության կատարմանը ներգրավելուն, բողոք բերած անձը փաստարկել է, որ Ա.Ամիրխանյանի կողմից իր որդուն հանցագործության կատարման մեջ ներգրավելը տեղի է ունեցել վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը հետ ստանալու շահադիտական ձգտումներ, տուժողի անձի նկատմամբ ատելություն առաջացնելու միջոցով: Բացի այդ, Ա.Ամիրխանյանը գիտակցել է, որ անչափահաս որդուն ներգրավում է ծանր հանցագործության կատարման մեջ:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Ա.Ամիրխանյանի արարքում առկա են հանցագործության թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ կողմերը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, Ա.Ամիրխանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով արդարացման դատավճիռ կայացնելով, թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, չի կիրառել այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման և կիրառել է այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման:

10. Հիմք ընդունելով իր վերոշարադրյալ փաստարկները՝ բողոք բերած անձը խնդրել է Ա.Ամիրխանյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Ամիրխանյանի արարքում բացակայում են անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի պարտադիր հատկանիշները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տասնութ տարին լրացած անձի կողմից տվյալ հանցագործության համար սույն օրենսգրքով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելը պատժվում է [համապատասխան պատժով]:

2. Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության պարտականություն, պատժվում է [համապատասխան պատժով]:

(...)

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ (...) մասով նախատեսված արարքները՝ զուգորդված՝ անչափահասին կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն ներգրավելով, պատժվում են [համապատասխան պատժով]:

13. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ակտիվ գործողություններով, որոնք ուղղված են անչափահասի մոտ մեկ կամ մի քանի հանցագործություն կատարելու կամ դրա(նց) կատարմանը մասնակից լինելու ցանկություն առաջացնելուն: Այս հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է հանցագործությանը և ցանկանում է դա:

Վերոնշյալ ակտիվ գործողությունները կարող են դրսևորվել տարբեր եղանակներով: Մասնավորապես,

ա) խոստումներ տալով (օրինակ՝ վարձատրելու, նվերներ տալու, զվարճանքներով ապահովելու և այլն)։

բ) խաբեությամբ, երբ ներգրավողի քողարկված խնդրանքը կամ հանձնարարությունը կատարելով՝ անչափահասը հայտնվում է մոլորության մեջ և չի գիտակցում կատարվելիք արարքի հանցավոր բնույթը։

գ) այլ եղանակով, որը ենթադրում է բռնության հետ չկապված տարաբնույթ դիտավորյալ հոգեբանական ազդեցություն՝ ուղղված անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելուն, այդ թվում՝ նյութական վնաս պատճառելու, հասակակիցների կամ ընկերների ներկայությամբ նվաստացնելու և նման այլ սպառնալիքներ, համոզում, կաշառում, հանցագործության կատարման մասին անչափահասի հետ նպատակաուղղված գրույցների վարում, որոշակի անձանց նկատմամբ թշնամանքի, ատելության, նախանձի ձևավորում, դաժանության սերմանում, շահադիտական ձգտումների առաջացում, շողոքորթում և այլն:

Վերը նշված գործողությունների նկատմամբ ներգրավողը պետք է դրսևորի ուղղակի դիտավորություն: Այսինքն՝ պետք է գիտակցի խոստումներ տալով, խաբեությամբ կամ այլ եղանակով անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանրային վտանգավորությունը և ցանկանում է վերը նշված որևէ միջոցով անչափահասին ներգրավել հանցանքի կատարմանը:

14. Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքերը, մասնավորապես՝ (ա) այն, թե ինչ նպատակներ է հետապնդում անձն անչափահասին հանցանքի կատարման մեջ ենթադրաբար ներգրավելով, (բ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի անձի առանձնահատկությունները, (գ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի փոխհարաբերությունների բնույթը, (դ) ներգրավող անձի կողմից անչափահասի նկատմամբ ակտիվ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության առկայությունը կամ բացակայությունը և այդ ներգործության կոնկրետ դրսևորումը, (ե) անչափահասի մոտ տվյալ հանցագործության կապակցությամբ սեփական շահի առկայությունը կամ բացակայությունը:

15. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցագործությունն ավարտված է անչափահասին հանցագործությանը ներգրավելու պահից՝ անկախ նրա կողմից տվյալ հանցանքը կամ որևէ հանցանք կատարելու հանգամանքից: Այլ կերպ՝ եթե համապատասխան ներգործության արդյունքում անչափահասի մոտ հանցանք կատարելու դիտավորություն է առաջանում, ներգրավումն ավարտված է:

16. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի՝ սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն փաստը, որ կատարված հանցագործությանը մասնակից է եղել նաև անչափահասը, ինքնին բավարար չէ եզրահանգելու, որ առկա է անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմը:

Բացի այդ, անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի առկայությունը հիմնավորելու համար բավարար չէ ներգրավման այս կամ այն եղանակի կամ եղանակների շարադրումը. անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների միջոցով հիմնավորել ներգրավման տվյալ եղանակի կամ եղանակների առկայությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն, որ Ա.Ամիրխանյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «Գրանդ Չերոկի» մակնիշի ավտոմեքենան բանավոր պայմանավորվածությամբ 6000 ԱՄՆ դոլարով վաճառել է Հ.Վիրաբյանին, վերջինս պարտավորվել է մինչև 2010 թվականի ապրիլ ամիսը վճարել ողջ գումարը: 2009 թվականի դեկտեմբերի 5-ին Հ.Վիրաբյանը նշված ավտոմեքենան վթարի է ենթարկել, կորցրել է աշխատանքը և ի վիճակի չի եղել պայմանավորված գումարը վճարել: Հ.Վիրաբյանին վերոնշյալ գումարը վճարելուն հարկադրելու նպատակով Ա.Ամիրխանյանն առևանգել է վերջինիս: Բացի այդ, Ա.Ամիրխանյանը, վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը հետ ստանալու շահադիտական ձգտումներ առաջացնելու եղանակով որդուն՝ 1992 թվականի օգոստոսի 1-ին ծնված անչափահաս Ս.Ամիրխանյանին, ներգրավել է ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցագործության կատարման մեջ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Ամիրխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ ամբաստանյալ Ա.Ամիրխանյանի արարքում բացակայում են անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, քանի որ չի հիմնավորվել, որ Ա.Ամիրխանյանն իր անչափահաս որդուն ներգրավել է հանցագործության կատարման մեջ:

Իր այս դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է նրանով, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ նշված՝ վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը հետ ստանալու շահադիտական ձգտումներ առաջացնելու և հանցանքը համատեղ կատարելու պայմանավորվածությունը բացակայում է, հետևաբար՝ Ա.Ամիրխանյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով կատարված հանցագործությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

18. Հիմք ընդունելով սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված հիմնավորումները և դրանք համադրելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Ամիրխանյանի արարքում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի պարտադիր հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված է:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հիմնված է հետևյալ հանգամանքի վրա. ճիշտ է, անչափահասին հանցանքի կատարման ներգրավելը կարող է արտահայտվել նաև անչափահասի մոտ շահադիտական շարժառիթների առաջացնելով (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը), սակայն Ա.Ամիրխանյանի դիտավորությունը հիմնված չի եղել շահադիտական շարժառիթի վրա, իսկ անչափահաս Ս.Ամիրխանյանը հանցանքի կատարմանը մասնակցել է իրենց վաճառված ավտոմեքենայի չվճարված գումարը ստանալու նպատակով, այսինքն՝ որևէ այլ նյութական արժեքներ ձեռք բերելու կամ որևէ այլ նյութական օգուտ քաղելու ձգտում չի հետապնդվել: Մինչդեռ շահադիտական շարժառիթը ենթադրում է շահ ստանալու, որոշակի նյութական արժեքներ ձեռք բերելու կամ որևէ այլ նյութական օգուտ քաղելու ձգտում: Հետևաբար, անհիմն է բողոքաբերի այն պնդումը, որ Ա.Ամիրխանյանն իր անչափահաս որդուն հանցանքի կատարմանը ներգրավել է շահադիտական ձգտումներ առաջացնելով:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 11-18-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերով սույն գործով նյութական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

20. Բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշների մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապա-

հովման խնդիր: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արսեն Խորենի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0002/11/10
նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան

ԵԷԴ/0002/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ տուժողի իրավահաջորդ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ՄԿՐՏՉՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Գեորգի Էդիկի Սկրտչյանի և նրա ներկայացուցիչ Հ.Տիգրանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում 2009 թվականի մայիսի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12117809 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել և Կ.Փափազյանին բուժօգնություն ցուցաբերելու ընթացքում «Էրեբունի» ԲԿ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոհիշյալ որոշման բողոքարկման արդյունքում Երևան քաղաքի դատախազի տեղակալ Ա.Զաքարյանը 2010 թվականի փետրվարի 5-ին գրությամբ տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանին հայտնել է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական է, հիմնավորված և այն վերացնելու հիմքեր չկան:

2. Տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2009 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2010 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանի բողոքը մերժվել է:

3. Տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանի և նրա ներկայացուցիչ Հ.Տիգրանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը և նրա ներկայացուցիչ Հ.Տիգրանյանը:

2010 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 10-օրյա ժամկետ:

Տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը և նրա ներկայացուցիչ Հ.Տիգրանյանը 2010 թվականի նոյեմբերի 30-ին կրկին ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. 2008 թվականի սեպտեմբերի 3-ին Երևան քաղաքի Լև Տոլստոյ փողոցի 40

տան բնակչուհի Սուսաննա Ալեքսանի Փափազյանը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ «Էրեբունի» ԲԿ վերակենդանացման բաժանմունքի բժիշկ Արմեն Մուրադյանի սխալ ախտորոշման և սխալ դեղորայքի ներարկման պատճառով, 2008 թվականի օգոստոսի 2-ին մահացել է իր դուստրը՝ Կարինե Ռ-ազմիկի Փափազյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 2):

6. «Էրեբունի» ԲԿ-ի ախտաբանական բաժնում կատարված՝ Կ.Փափազյանի դիակի պաթոլոգիական հետազոտության թիվ 314 եզրակացության մեջ նշված է հետևյալ ախտորոշումը՝ «Երկկողմանի արսցեսով թոքաբորբ՝ թոքային հյուսվածքի գերարյունություն ֆոնի վրա, թոքային զարկերակի մանր ճյուղերի խցանումով և գույգ թոքերի բազմաթիվ հեմոռագիկ ինֆարկտներով», «Քրոնիկական հեպատիտ», «Հեպատոմեգալիա» և «Ներքին օրգանների ծանր սպիտակուցային հիստոբիա, գերարյունություն և օջախային արյունազեղումներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 129):

7. Նախաքննության մարմնի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ԳԲԳ-Գ կենտրոնի փորձագետներին (տե՛ս քրեական գործ հատոր 1-ին, էջեր 106-107):

Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության արդյունքում 2008 թվականի նոյեմբերի 28-ին կազմված թիվ 106 եզրակացության համաձայն՝ Կ.Փափազյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից երկկողմանի կրուպոզ թոքաբորբի հետևանքով (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 132):

8. Նախաքննության մարմնի 2008 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ նշանակվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 137):

Կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության արդյունքում 2009 թվականի մարտի 30-ին կազմված թիվ 08-1657 եզրակացության համաձայն՝ «Կ.Փափազյանը «երկկողմանի կրուպոզ թոքաբորբով» չի տառապել: Այդ իսկ պատճառով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 106 եզրակացության մի շարք հետևություններ, կապված Կ.Փափազյանի մահվան պատճառի ճիշտ պարզաբանման հետ, բավականաչափ հիմնավորված չէ: Կ.Փափազյանի մահվան անմիջական պատճառ հանդիսացել է թոքային զարկերակի միջին և մանր ճյուղերի թրոմբոէմբոլիան» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 161):

9. 2009 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական լրացուցիչ հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին: Փորձաքննության արդյունքում կազմվել է թիվ 09-0653 եզրակացությունը կազմվել է 2009 թվականի մայիսի 8-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 193 և 201-205):

10. Նկատի ունենալով, որ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքն-

նության ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնի թիվ 106 եզրակացության և կրկնակի ու լրացուցիչ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունների ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի թիվ 08-1657 և 09-0653 եզրակացությունների մեջ առկա են էական հակասություններ՝ 2009 թվականի սեպտեմբերի 30-ին նախաքննության մարմնի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հարձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 307):

Վերոնշյալ հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի եզրակացության համաձայն՝ «Կ.Փափազյանի մահվան պատճառ է հանդիսացել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան, որը պայմանավորված է սուր երկկողմանի ինտերստիցիալ թոքաբորբով, սուր թթվածնային քաղցով, շճային տրախեիտով, լյարդի մուսկատային ֆիբրոզով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 359):

11. Գործի նյութերում առկա է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովի եզրակացությանը տուժողի իրավահաջորդին ծանոթացնելու մասին 2009 թվականի նոյեմբերի 27-ի արձանագրությունը, որում նշված է, որ տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը, ծանոթանալով վերոնշյալ եզրակացության 4 էջերին, հրաժարվեց հետագա ծանոթացումից և հեռացավ քննիչի աշխատասենյակից (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 360):

12. 2009 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել և Կ.Փափազյանին բուժօգնություն ցուցաբերելու ընթացքում «Էրեբունի» ԲԿ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 375-388):

13. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի խախտել տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանի իրավունքներն և ազատությունները, վերջինիս չի զրկել ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից, իսկ վերջինիս կողմից դատարան ներկայացված բողոքն անհիմն է, բողոքում չկան համապատասխան ապացույցներ, որոնք կարող են հիմնավորել, որ իրոք խախտվել են վերջինիս պատկանող իրավունքներն ու ազատությունները, իսկ բողոքում նշված այն պնդումը, որ քննիչը կայացրել է անհիմն որոշումներ, որով խախտվել են իր իրավունքները, չի բխում քրեական դատավարության նորմերից և այդ որոշումները հիմնավոր են կայացվել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 118):

14. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Առաջին ատյանի դատարանը որոշում կայացնելիս դատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտումներ թույլ չի տվել, իսկ բողոք բերողների կողմից վկայակոչված իրավանորմերի պահանջների խախտումների վերաբերյալ փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան և Գ.Սկրտչյանի իրավունքները և ազատությունները խախտված չեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 46):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոք բերած անձանց պնդմամբ, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 125-րդ և 127-րդ հոդվածները:

Մասնավորապես, բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել և չի հետազոտել դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունների արդյունքում կազմված եզրակացություններում և հարցաքննված վկանների ցուցմունքներում, ինչպես նաև կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 08-1657 եզրակացության, թիվ 4318/1268 բժշկական քարտի տվյալների և Ա.Մուրադյանի բացատրության միջև առկա հակասությունները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի չի հետազոտել սույն գործով նշանակված դատաբժշկական չորս փորձաքննությունների արդյունքում կազմված եզրակացություններում առկա հակասությունները, որտեղ մահվան պատճառի վերաբերյալ տրվել են իրար հակասող և ոչ միանշանակ եզրահանգումներ:

16. Ըստ բողոք բերած անձանց, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն փաստը, որ նախաքննության մարմինը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ տուժողի իրավահաջորդի իրավունքը և նրան չի ծանոթացրել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը:

Բողոքաբերների պնդմամբ, նախաքննության մարմինը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 262-րդ հոդվածով սահմանված՝ նախաքննության ավարտման պահից գործի բոլոր նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավահաջորդի իրավունքը, քանի որ տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը գործի նյութերին ծանոթացել է Առաջին ատյանի դատարանում՝ միջնորդության բավարարման արդյունքում:

17. Բողոքաբերները նշել են նաև, որ նախաքննության մարմնի կողմից որպես վկա չեն հարցաքննվել անձինք, ովքեր կարող էին գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հաղորդել:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վե-րաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը և վերացնել քրեա-կան գործի վարույթը կարճելու մասին 2009 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

1. Կ.Փափազյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննությունը

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրա-վական հարցը հետևյալն է. Կ.Փափազյանի մահվան փաստի առթիվ իրականաց-վե՞լ է արդյոք արդյունավետ քրեադատավարական քննություն:

20. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանու-թյան մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել հավաստել, որ «Մարդու իրա-վունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքա-յին են, այլ գործնական են և արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստերում սահմանվել են դատավարական պարտականու-թյուններ (տե՛ս, օրինակ, *B. v. the United Kingdom*, 1987 թվականի հուլիսի 8-ի վճի-ռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, *M.C. v. Bulgaria*, 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, 148-153 կետերը և *Cyprus v. Turkey*, 2001 թվակա-նի մայիսի 10-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա-յի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրա-կանացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առ-նելով այս իրավունքների հիմնարար բնույթը (տե՛ս *McCann and Others v. The United Kingdom*, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, 157-164 կետերը, *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82 և *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, 101-106 կետերը):

21. Մասնավորապես, սույն գործին վերաբերելի մասով «Մարդու իրավունք-ների և հիմնարար ազատությունների պաշտպանության» մասին եվրոպական կոն-վենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված՝ կյանքի իրավունքի շրջանակներում արդ-յունավետ քննություն իրականացնելու պարտականությունը (կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը) բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատա-րանի նախադեպային իրավունքում հաստատված այն իրավական դիրքորոշմամբ,

որ դատարանի կողմից 2-րդ հոդվածով նախատեսված դատավարական պարտականությունը պահանջում է պետությունից ձևավորել արդյունավետ, անկախ դատական համակարգ, որպեսզի հնարավոր լինի պարզել պետական կամ մասնավոր ոլորտում աշխատող բժշկի հսկողության տակ գտնվող հիվանդի մահվան պատճառը և պատժվեն դրա համար պատասխանատու անձինք: Դատարանը կրկնում է, որ այս դատավարական պարտականությունը վերաբերում է ոչ միայն արդյունքներին, այլ նաև միջոցներին (տե՛ս *Silih v. Slovenia*, 2009 թվականի ապրիլի 9, գանգատ թիվ 71463/01, 183-184 կետերը):

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անգոյշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Գործի նախաքննության ընթացքում նշանակվել են չորս դատաբժշկական փորձաքննություններ: Դրանք են՝ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ Դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետներին, կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին, դատաբժշկական լրացուցիչ հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին և դատաբժշկական կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին:

Վերոնշյալ դատաբժշկական փորձաքննությունների արդյունքներով կազմվել է չորս եզրակացություն, որոնցով Կ.Փափազյանի մահվան պատճառի վերաբերյալ տրվել են տարբեր, իրար հակասող եզրահանգումներ (տե՛ս սույն որոշման 7-10-րդ կետերը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Կ.Փափազյանի մահվան պատճառի վերաբերյալ տարբեր, իրար հակասող եզրահանգումների առկայության պարագայում վարույթն իրականացնող մարմինը 2009 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ կարճել է քրեական գործի վարույթը, և Կ.Փափազյանին բուժօգնություն ցուցաբերելու ընթացքում «Էրեբունի» ԲԿ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Ստուգելով սույն քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը չի խախտել տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանի իրավունքներն և ազատությունները, վերջինիս չի զրկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը): Վերաքննիչ դատարանն էլ, իր հերթին, արձանագրել է, որ սույն գործով որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտումներ թույլ չի տվել (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

23. Սույն որոշման 22-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 20-21-րդ կետերում մեջբերված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կ.Փափազյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել:

24. Քննության արդյունավետության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի գնահատականը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն գործով նշանակված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների միջև առկա հակասությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները ներկա չեն գտնվել կրկնակի փորձաքննությանը և պարզաբանումներ չեն տվել:

Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետների՝ կրկնակի փորձաքննությանը ներկա գտնվելու և պարզաբանումներ տալու հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ «(...) Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում»:

25. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու իրավունքների գերակայության ու անմիջական գործողության սկզբունքներով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նշանակված չորս դատաբժշկական փորձաքննությունների արդյունքում կազմված եզրակացություններում առկա հակասությունների պայմաններում մարդու իրավունքների գերակայության և անմիջական գործողության սահմանադրական արժեքները թելադրում էին միջոցներ ձեռնարկել վերջին՝ դատաբժշկական կրկնակի հանձնաժողովային փորձաքննությանը ներգրավելու և մասնակից դարձնելու նախորդ փորձագետներին և նրանց հնարավորություն ընձեռնելու անհրաժեշտության դեպքում տալ պարզաբանումներ:

26. Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վարույթը կարճելու մասին որոշման դատական ստուգման ընթացքում անհրաժեշտ էր պարզաբանել գործի քննության համար ուղղորդող նշանակություն ունեցող հետևյալ հարցերը.

ա) սույն գործով իրականացված վերջին դատաբժշկական փորձաքննությանն արդյո՞ք անհրաժեշտ էր նախկին փորձաքննություններն իրականացրած փորձագետների մասնակցությունը,

բ) արդյո՞ք նպատակահարմար էր սույն գործով վերջին դատաբժշկական փորձաքննության կատարումը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հարցերի պարզաբանումից հետո միայն Առաջին ատյանի դատարանը հնարավորություն կունենար հիմնավոր եզրակացություն անել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ:

II. Նախաքննության մարմնի կողմից տուժողի իրավահաջորդի իրավունքների խախտումը

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու և դրա կատարումը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին հանձնարարելու վերաբերյալ որոշմանը տուժողի իրավահաջորդ Գ.Մկրտչյանին չծանոթացնելը չի՞ հանգեցրել արդյոք վերջինիս իրավունքների խախտմանը:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական հետապնդման մարմինը փորձաքննություն նշանակելու մասին կայացնում է որոշում, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փորձաքննություն նշանակելիս և կատարելիս կասկածյալը, մեղադրյալը և տուժողն իրավունք ունեն՝

1. մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանում. այդ մասին կազմվում է արձանագրություն.

2. բացարկ հայտնել փորձագետին

3. միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշված անձանց թվից

4. փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել,

որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն

5. փորձագետին առաջադրել լրացուցիչ հարցեր

6. քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը

7. բացատրություններ տալ փորձագետին

8. քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը

9. մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետի հարցաքննությանը»:

29. Վերը շարադրված քրեադատավարական նորմերի վերլուծությունից երևում է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փորձաքննության կատարման միակ դատավարական հիմքն է: Ուստի, փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ նաև տուժողի իրավահաջորդին ծանոթացնելն անհրաժեշտ է վերջիններիս կողմից իրենց իրավունքներն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Մասնավորապես, փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը ծանոթանալուց հետո կասկածյալը, մեղադրյալը, տուժողը, տուժողի իրավահաջորդը կարող են բացարկ հայտնել փորձագետներին, միջնորդել նոր փորձագետ նշանակել, փորձագետներին առաջադրել լրացուցիչ հարցեր, քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը և այլն:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանցում խնդրո առարկայի վերաբերյալ առկա է միայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովի եզրակացությանը տուժողի իրավահաջորդին ծանոթացնելու մասին 2009 թվականի նոյեմբերի 27-ի արձանագրություն, որի համաձայն՝ տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը, ծանոթանալով վերոնշյալ եզրակացության չորս էջերին, հրաժարվեց հետագա ծանոթացումից և հեռացավ քննիչի աշխատասենյակից (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Այսինքն, կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու և դրա կատարումը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին հանձնարարելու վերաբերյալ որոշմանը տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանը չի ծանոթացվել:

31. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալների նկատմամբ կիրառելով սույն որոշման 29-րդ կետում շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու և դրա կատարումը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմված փորձագիտական հանձնաժողովին հանձնարարելու վերաբերյալ որոշմանը տուժողի իրավահաջորդ Գ.Սկրտչյանին չծանոթացնելը հանգեցրել է վերջինիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտմանը:

32. Հիմք ընդունելով սույն որոշման 19-31-րդ կետերում շարադրված վերլու-

ծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումները և գործն ուղարկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Տուժողի իրավահաջորդ Գերոզի Էդիկի Սկրտչյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԱՎԳ-1/0063/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԱՎԳ-1/0063/01/09
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Մ.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող՝ Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
տուժող՝ Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
տուժողի ներկայացուցիչ՝ Զ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 23-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարդան Միշիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ մեղադրող Հ.Հակոբյանի և տուժող Ն.Հովհաննիսյանի ու նրա ներկայացուցիչ Զ.Հակոբյանի վճռաբեկ բողոքները,

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի օգոստոսի 4-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 26108209 քրեական գործը՝ Վ.Պետրոսյանի կողմից ինքնիրավշություն կատարելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի 2009 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ Վ.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը մեղադրյալ Վ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2009 թվականի նոյեմբերի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 20-ի դատավճռով Վ.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի 400.000 ՀՀ դրամի չափով:

Ամբաստանյալ Վ.Պետրոսյանից հօգուտ տուժող Ն.Հովհաննիսյանի բռնագանձվել է 2.876.547,61 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

Ամբաստանյալ Վ.Պետրոսյանից հօգուտ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության բռնագանձվել է 96.180 ՀՀ դրամ՝ որպես դատաապրանքագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննության համար վճարման ենթակա գումար:

3. Ամբաստանյալ Վ.Պետրոսյանի և տուժող Ն.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Չ.Հակոբյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 10-ին որոշում է կայացրել տուժողի ներկայացուցիչ Չ.Հակոբյանի բողոքը մերժելու, ամբաստանյալ Վ.Պետրոսյանի բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 20-ի դատավճիռը բեկանելու մասին: Քրեական գործի վարույթը կարճվել է, և Վ.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Տուժող Ն.Հովհաննիսյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել մեղադրող Հ.Հակոբյանը (այսուհետ նաև՝ առաջին բողոքի հեղինակ) և տուժող Ն.Հովհաննիսյանն ու նրա ներկայացուցիչ Չ.Հակոբյանը (այսուհետ նաև՝ երկրորդ բողոքի հեղինակներ):

2010 թվականի նոյեմբերի 2-ին վճռաբեկ բողոքների պատասխան է ներ-

կայացրել ամբաստանյալ Վ.Պետրոսյանը՝ խնդրելով մեղադրողի, տուժողի և նրա ներկայացուցչի վճռաբեկ բողոքները վերադարձնել, իսկ վարույթ ընդունելու դեպքում՝ մերժել:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները վարույթ են ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանը, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իր ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելով և էական վնաս պատճառելով տուժողի իրավունքներին ու օրինական շահերին, կատարել է ինքնիրավչություն:

Մասնավորապես, 2008 թվականի հուլիս ամսին Նունե Հովհաննիսյանը Միշա Պետրոսյանից բանավոր համաձայնությամբ վարձակալել է վերջինիս պատկանող, Վեդի քաղաքի նախկին հանրախանութի առաջին հարկում գտնվող տարածքն ու զբաղվել ոչ պարենային ապրանքների առևտրով: Առևտրի ծավալներն ընդլայնելու նպատակով Ն.Հովհաննիսյանն ու նրա ամուսինը՝ Ս.Սարգսյանը, 2008 թվականի հոկտեմբերի 30-ին նոտարական կարգով կնքված փոխառության պայմանագրով, մեկ տարի ժամկետով, 2009 թվականի հոկտեմբերի 30-ին գումարն ամբողջությամբ վերադարձնելու պայմանով Մ.Պետրոսյանի որդի Վ.Պետրոսյանից և նրա կին Ն.Պետրոսյանից պարտքով, անտոկոս վերցրել են 7.470.000 ՀՀ դրամին համարժեք 24.500 ԱՄՆ դոլար:

Քանի որ 2009 թվականի հունվար ամսին հաշվիչ դրամարկղային մեքենա տեղադրելու համար անհրաժեշտ է եղել հարկային տեսչություն ներկայացնել Ն.Հովհաննիսյանի կողմից տարածքը վարձակալելու վերաբերյալ պայմանագիրը, այդ պատճառով 2009 թվականի հունվարի 9-ին Ն.Հովհաննիսյանի և Մ.Պետրոսյանի միջև գրավոր համաձայնագիր է կնքվել այն մասին, որ Մ.Պետրոսյանն իրեն պատկանող առևտրի սրահը առևտուր կազմակերպելու նպատակով հինգ տարի ժամկետով, ամսական 25.000 ՀՀ դրամ վարձավճարով վարձակալությամբ տրամադրել է Ն.Հովհաննիսյանին:

2009 թվականի հունիս ամսին Վ.Պետրոսյանը, պարզելով, որ Ն.Հովհաննիսյանը և Ս.Սարգսյանը խոշոր գումարներ են պարտք նաև «Ակբա-Կրեդիտ-Ագրիկուլ-Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը, Ալբերտ Պապոյանին և Արայիկ Օհանյանին, ու պարտքերը վերադարձնել չկարողանալու պատճառով Ս.Սարգսյանը 2009 թվականի հունիսի 6-ին ինքնասպանության փորձ է կատարել, ինչպես նաև ենթադրելով, որ նրանք չեն կարողանա պայմանագրում նշված ժամկետում վերադարձնել իրենից ու կնոջից փոխառությամբ վերցված գումարը, փոխառության պայմանագրում նշված ժամկետից՝ 2009 թվականի հոկտեմբերի 30-ից, շուրջ չորս ամիս

առաջ, առանց օրենքով սահմանված կարգով փոխառության պայմանագիրն անվավեր ճանաչելու, Ն.Հովհաննիսյանից և Ս.Սարգսյանից պահանջել է վերադարձնել ամբողջ պարտք-գումարը, սակայն վերջիններս ասել են, որ գումարն ամբողջությամբ կարող են վերադարձնել օգոստոս-սեպտեմբեր ամիսներին առևտուր իրականացնելուց հետո:

Դրանից հետո Վ.Պետրոսյանը, ենթադրելով, որ Ս.Սարգսյանի մյուս պարտատերերը կարող են պարտքի դիմաց խանութի ապրանքը վերցնել, 2009 թվականի հունիսի 22-ին, Ս.Սարգսյանի համաձայնությամբ, առանց Ն.Հովհաննիսյանի համաձայնության, խանութի դռանը փական է ավելացրել՝ պայմանով, որ ամեն օր առավոտյան միասին բացելու են խանութը, իսկ երեկոյան փակելու են այն:

2009 թվականի հունիսի 27-ին Վ.Պետրոսյանը չի բացել խանութի դռանն ավելացրած փականը՝ գրկելով Ն.Հովհաննիսյանին առևտուր կատարելու հնարավորությունից: 2009 թվականի հունիսի 29-ին Ս.Սարգսյանը փոխառությամբ վերցված գումարից 2.000 ԱՄՆ դոլար է վերադարձրել Վ.Պետրոսյանին, որից հետո միայն վերջինս բացել է խանութը: 2009 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Վ.Պետրոսյանը զանգահարել է Ս.Սարգսյանին, պայմանավորվել են խանութի մոտ հանդիպել, որտեղ Վ.Պետրոսյանը Ս.Սարգսյանից 5.000 ԱՄՆ դոլար գումար է պահանջել, իսկ երբ վերջինս ասել է, որ այդքան գումար չունի, խանութում 26.374.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքների առկայության պայմաններում Վ.Պետրոսյանը կրկին փական ավելացնելու միջոցով մինչ օրս փակել է հոր՝ Ս.Պետրոսյանի կողմից վարձակալությամբ Ն.Հովհաննիսյանին տրված խանութը՝ որպես վերջինիս և նրա ամուսնու կողմից իրեն ու իր կնոջը պարտք եղած գումարը վերադարձնելու երաշխիք՝ գրկելով Ն.Հովհաննիսյանին առևտուր կատարելու հնարավորությունից, ինչի հետևանքով էական վնաս է պատճառել վերջինիս իրավունքներին ու օրինական շահերին:

6. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքի ինքնապաշտպանության իրավունք»:

Տվյալ դեպքում Վ.Պետրոսյանը, 2009թ. հուլիսի 5-ից 20-ը ինքնական փակելով խանութը, իրականացրել է օրենքով սահմանված իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունքը՝ որպես պարտատեր կատարելով փոխառության պայմանագրով պարտք տված գումարը հետ ստանալու նպատակով պարտապանի գույքի հնարավոր օտարումը կանխելուն ուղղված գործողություններ (...):

Բացի այդ, Վ.Պետրոսյանին ինքնիրավության համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որ վերջինս իր գործողություններով էական վնաս պատճառած լինի տուժող Ն.Հովհաննիսյանի իրավունքներին և օրինական շահերին (...):

Տուժող Ն.Հովհաննիսյանի և ամբաստանյալի հոր՝ Սիշա Պետրոսյանի (խա-

նութի սեփականատիրոջ) միջև խանութի վարձակալության նոտարական վավերացված գրավոր պայմանագիր չի կնքվել, դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում: Հետևաբար, այդ գործարքն առոչինչ է, որն իրավական հետևանքներ չի առաջացնում, և այն անվավեր է ի սկզբանե:

Սրանից բխում է, որ տուժող Ն.Հովհաննիսյանն իր կողմից փաստացիորեն վարձակալած խանութի տարածքի նկատմամբ վարձակալի՝ օրենքով պաշտպանվող իրավունքներ չի ունեցել: Հետևաբար, չի կարող խախտվել մի իրավունք, որը գոյություն չունի և այլ իրավական պաշտպանության ենթակա չէ:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանի արարքում բացակայում են վերջինիս վերագրվող հանցագործության՝ ինքնիրավչության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները՝ իր իրավական իրավունքի ինքնական իրականացնելը օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ինչպես նաև անձանց՝ իրապես ունեցած իրավունքներին էական վնաս պատճառելը (...))» (տե՛ս քրեական գործ, 378-383-րդ էջեր):

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Մեղադրող Հ.Հակոբյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն արտահայտվել է նյութական իրավունքի նորմերի խախտման ձևով և ազդել է գործի ելքի վրա:

Իր բողոքում շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները՝ առաջին բողոքի հեղինակը եզրակացություն է արել այն մասին, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանի արարքում ինքնիրավչության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնազուրկ են:

Ըստ մեղադրողի՝ ամբաստանյալ Վ.Պետրոսյանը, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացնելով իր ենթադրյալ իրավունքները, կատարել է ինքնիրավչության օբյեկտիվ կողմին բնորոշ գործողություններ, որպիսի հանգամանքը հաստատվել է Առաջին ատյանի դատարանի դատաքննությանը հետագուղված ապացույցներով:

8. Տուժող Ն.Հովհաննիսյանը և նրա ներկայացուցիչ Չ.Հակոբյանն իրենց բողոքում փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ: Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 17-րդ, 25-րդ, 126-րդ, 127-րդ, 358-րդ, 398-րդ հոդվածների պահանջները:

Երկրորդ բողոքի հեղինակները, վերլուծելով գործի փաստական հանգամանքները, հետևություն են արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի

զնահատել գործով հավաքված ապացույցները, ինչի արդյունքում անհիմն որոշում է կայացրել ամբաստանյալ Վ.Պետրոսյանին արդարացնելու մասին:

Ըստ երկրորդ բողոքի հեղինակների՝ քրեական գործում առկա ապացույցներով հաստատված է, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, այն է՝ ինքնակամ, առանց համապատասխան մարմինների կամ անձանց կողմից որևէ լիազորություն ունենալու, փակել է Ն.Հովհաննիսյանի խամուքը, ինչի հետևանքով վերջինիս պատճառվել է էական վնաս:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջին և երկրորդ բողոքների հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 20-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Վ.Պետրոսյանի արարքում ինքնիրավչության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ինքնիրավչությունը օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնել[ն] [է], որն էական վնաս է պատճառել անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին (...):»:

12. Ինքնիրավչությունը դասվում է կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքին և բնութագրվում որպես կառավարման սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից պետական կառավարման նորմալ գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ ոտնձգող հանցագործություն: Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ ինքնիրավչության տեսակային օբյեկտ են պետական կառավարման նորմալ գործունեության ապահովմանն ուղղված այն հասարակական հարաբերությունները, որոնք ծավալվում են իշխանության մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև:

Ինքնիրավչության հիմնական անմիջական օբյեկտն անձանց կողմից իրենց իրավունքների ու ազատությունների իրականացման՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգն է, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

13. Նշված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ակտիվ վարքագծով՝ գործողությամբ: Ընդ որում, անհրաժեշտ է, որ այդ գործողության իրա-

վաչափությունը վիճարկվի անձի (կազմակերպության) կողմից: Տվյալ դեպքում որպես վիճարկում հարկ է հասկանալ շահագրգիռ անձի կողմից իրավապահ մարմիններին համապատասխան հայտարարություն (դիմում, բողոք) ներկայացնելը՝ ինքնիրավ գործողությունների արդյունքում իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ:

Ինքնիրավչության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է գործողության կատարման եղանակը. հանցավորը գործում է ինքնական, ինքնագլուխ կերպով, իրավունքի իրականացման՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ: Ընդ որում, արարքը որպես ինքնիրավչություն որակելու համար որևէ նշանակություն չունի, թե հանցավորի գործողություններն ուղղված են եղել իրական, թե ենթադրյալ իրավունքի իրականացմանը:

Ինքնիրավչության հանցակազմը նյութական է, այսինքն՝ հանցագործությունն ավարտված է համարվում այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին էական, իսկ պետության ու հասարակության շահերին՝ խոշոր վնաս պատճառելու դեպքում: Ինքնիրավչությունը, որի արդյունքում էական վնաս չի պատճառվել, քրեորեն հետապնդելի արարք չէ:

Վնասը կարող է դրսևորվել ինչպես նյութական, այնպես էլ անձի սահմանադրական և այլ իրավունքների խախտման տեսքով, կարևորն այն է, որ ինքնիրավ գործողության և առաջացած վնասի միջև լինի պատճառահետևանքային կապ: Պատճառված վնասի էական լինելը պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքում՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից:

14. Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ. հանցավորը կարծում է, որ ինքն ունի որոշակի իրավունք, գիտակցում է, որ այդ իրավունքը վիճարկվում է այլ անձի կամ կազմակերպության կողմից, և ինքն իրականացնում է այդ իրավունքը օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ: Հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի վերաբերմունքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Ինքնիրավչության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

15. Զննության առարկա գործի նյութերով հաստատված է, որ Վ.Պետրոսյանը, 2009 թվականի հունիս ամսին պարզելով, որ Ն.Հովհաննիսյանն ու Ս.Սարգսյանն իրենից և կնոջից փոխառությամբ վերցրած 24.500 ԱՄՆ դոլար գումարից բացի խոշոր գումարներ են պարտք նաև այլ անձանց, ենթադրելով, որ նրանք չեն կարողանա պայմանագրում նշված ժամկետում վերադարձնել պարտքը, փոխառության պայմանագրում նշված ժամկետից շուրջ չորս ամիս առաջ Ն.Հովհաննիսյանից և Ս.Սարգսյանից պահանջել է վերադարձնել ամբողջ գումարը, իսկ այնուհետև Վ.Պետրոսյանն իր հորից Ն.Հովհաննիսյանի վարձակալած խանութի դռանն, առանց վերջինիս համաձայնության, փական է ավելացրել: Մի քանի օր անց Վ.

Պետրոսյանը չի բացել խանութի դռանն իր կողմից ավելացրած փականը՝ գրկելով Ն.Հովհաննիսյանին առևտուր կատարելու հնարավորությունից: Փոխառությամբ տված գումարից 2.000 ԱՄՆ դոլարը հետ ստանալուց հետո միայն Վ.Պետրոսյանը բացել է խանութը: Մի քանի օր անց Վ.Պետրոսյանը Ս.Սարգսյանից պահանջել է ևս 5.000 ԱՄՆ դոլար վերադարձնել և մերժում ստանալով՝ կրկին փական է ավելացրել խանութին՝ որպես իրեն ու իր կնոջը պարտք եղած գումարը վերադարձնելու երաշխիք՝ գրկելով Ն.Հովհաննիսյանին ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և օրինական եկամուտ ստանալու հնարավորությունից այն պայմաններում, երբ խանութում առկա էր 26.374.000 ՀՀ դրամի ոչ պարենային ապրանք (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

16. Ն.Հովհաննիսյանի հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործ, և Վ.Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով՝ ինքնիրավչություն կատարելու համար: Առաջին ատյանի դատարանը Վ.Պետրոսյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել վերը նշված հոդվածով (տե՛ս սույն որոշման 1-ին և 2-րդ կետերը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Վ.Պետրոսյանի արարքում բացակայում են ինքնիրավչության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները՝ իր իրավունքի ինքնական իրականացնելն օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ինչպես նաև անձանց՝ իրապես ունեցած իրավունքներին էական վնաս պատճառելը: Վերաքննիչ դատարանը դա հիմնավորել է նրանով, որ Վ.Պետրոսյանը, փակելով խանութը, իրականացրել է օրենքով սահմանված իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն՝ որպես պարտատեր կատարելով փոխառության պայմանագրով պարտք տված գումարը հետ ստանալու նպատակով պարտապանի գույքի հնարավոր օտարումը կանխելուն ուղղված գործողություններ: Բացի այդ, տուժող Ն.Հովհաննիսյանի և խանութի սեփականատիրոջ՝ Մ.Պետրոսյանի միջև խանութի վարձակալության վերաբերյալ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագիր չի կնքվել, դրանից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում, հետևաբար՝ Ն.Հովհաննիսյանը խանութի տարածքի նկատմամբ վարձակալի՝ օրենքով պաշտպանվող իրավունքներ չի ունեցել, ուստի չի կարող խախտվել մի իրավունք, որը գոյություն չունի և իրավական պաշտպանության ենթակա չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

17. Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ խանութի սեփականատեր հանդիսացող Մ.Պետրոսյանի և անհատ ձեռներեց Ն.Հովհաննիսյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր և չնայած նրան, որ նշված վարձակալության պայմանագիրը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չի ստացել, այնուամենայնիվ, Ն.Հովհաննիսյանը նշված տարածքում զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, գրանցված է եղել համապատասխան հարկային մարմնում, իսկ նշված խանութում առկա են եղել

26.374.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքներ:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանի դիտավորությունն ուղղված է եղել Ն.Հովհաննիսյանին զրկելու խանութում առկա գույքը տնօրինելու, տիրապետելու հնարավորությունից՝ նպատակ ունենալով այդ գույքն օգտագործել որպես տուժողի և նրա ամուսնու կողմից իրեն ու իր կնոջը պարտք եղած գումարը վերադարձնելու երաշխիք, ինչի արդյունքում Ն.Հովհաննիսյանը զրկվել է իր ձեռնարկատիրական գործունեությունը շարունակելու և օրինական եկամուտ ստանալու հնարավորությունից:

18. Սույն որոշման 12-14-րդ կետերում առկա իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի՝ սույն որոշման 16-րդ կետում շարադրված հետևությունները հիմնված չեն գործի հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատման վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանի հանցավոր ոտնձգությունն ուղղված է եղել ոչ թե տուժող Ն.Հովհաննիսյանի՝ որպես վարձակալի՝ օրենքով պաշտպանվող իրավունքների դեմ, այլ վարձակալած տարածքում գտնվող գույքի նկատմամբ վերջինիս իրավունքների, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և օրինական եկամուտ ստանալու իրավունքների դեմ: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Վ.Պետրոսյանի գործողության արդյունքում Ն.Հովհաննիսյանի իրապես ունեցած իրավունքներին էական վնաս չի պատճառվել, քանի որ վերջինս խանութի տարածքի նկատմամբ վարձակալի՝ օրենքով պաշտպանվող իրավունքներ չի ունեցել, հիմնագուրկ է:

19. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանն իրականացրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իրավանորնը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ Վ.Պետրոսյանն իր քաղաքացիական իրավունքի ինքնապաշտպանության իրավունքը փորձել է իրականացնել ՀՀ քրեական օրենքով արգելված արարք կատարելու եղանակով, ինչն անթույլատրելի է:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 12-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Պետրոսյանը, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իր ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելով և էական վնաս պատճառելով տուժող Ն.Հովհաննիսյանի իրավունքներին ու օրինական շահերին, կատարել է ինքնիրավչություն, իսկ նրա արարքում ինքնիրավչության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն անհիմն են և հերքվում են քրեական գործի նյութերով:

21. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույ-

քը կարճելու և Վ.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել սույն գործի փաստական հանգամանքները: Արդյունքում՝ չի կիրառվել քրեական օրենսգրքի հոդվածը, որը ենթակա էր կիրառման, ինչի հետևանքով թույլ է տրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված՝ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի խախտում:

22. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված ինքնիրավչության հանցակազմի պարտադիր հատկանիշների մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վարդան Միշիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԴ/0082/13/09
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան
դատավորներ՝ Մ.Արղամանյան, Մ.Ռեհանյան

ԼԴ/0082/13/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Վոլոդյայի Դալլաքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

1. 1998թ. դեկտեմբերի 25-ին Արմեն Վոլոդյայի Դալլաքյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը

կարճվել է համաներման ակտով:

2. 2003թ. հունվարի 15-ին ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից Ա.Գալլաքյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար կիրառվել է համաներում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիման վրա մերժվել է քրեական գործի հարուցումը:

3. ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. մարտի 10-ի դատավճռով Արմեն Գալլաքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Գալլաքյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 տարի 6 ամիս ժամկետով:

4. Ա.Գալլաքյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

2007թ. հոկտեմբերի 5-ին, առանց համապատասխան թույլտվության՝ ապօրինի, Տաշիր քաղաքի թիվ 14 թաղամասով անցնող ջրահեռացման խողովակաշարերից ապամոնտաժել և 2007թ. հոկտեմբերի 6-ին գողության եղանակով հափշտակել է խոշոր չափի՝ 1.530.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության խողովակներ և նույն օրը 1.125.000 ՀՀ դրամով դրանք վաճառել Հրանտ Շահինյանին: Վերջինս, չիմանալով, որ խողովակները գողացված են, բեռնատար ավտոմեքենայով ցանկացել է դրանք տեղափոխել Իջևան քաղաք, սակայն ճանապարհին խողովակները հայտնաբերվել և առգրավվել են ոստիկանության աշխատակիցների կողմից:

5. 2009թ. սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱՆ ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնի Լոռու բաժանմունքի պետի կողմից միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև՝ Առաջին ատյանի դատարան) «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման հիման վրա՝ Արմեն Գալլաքյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանը վերացնելու և նրան պատժից ազատելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշմամբ դատապարտյալ Արմեն Գալլաքյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, և նա ազատվել է պատժից:

6. Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշման դեմ 2009թ. նոյեմբերի 6-ին վերաքննիչ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

7. Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2010թ. մարտի 3-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ:

2010թ. հունիսի 8-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին:

2010թ. հոկտեմբերի 19-ին Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

2010թ. նոյեմբերի 8-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

8. Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշմամբ դատապարտյալ Արմեն Դալլաքյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը. ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. մարտի 10-ի դատավճռով Արմեն Դալլաքյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը և սահմանված փորձաշրջանը վերացվել է, և նա ազատվել է պատժից:

9. 2009թ. նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել, որտեղ, հենվելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի վրա, նշել է, որ «ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը Արմեն Դալլաքյանի նկատմամբ անհիմն, առանց օբյեկտիվ հիմքերի կիրառել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2009 թվականի հունիսի 19-ին ընդունած «Համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, խաթարել արդարադատության բուն էությունը»:

10. Վերաքննիչ դատարանը 2009թ. դեկտեմբերի 3-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը դատարանի վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին:

11. Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 18-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

12. 2010թ. հունվարի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

13. Վճռաբեկ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումն անհիմն է և անօրինական:

Բողոքաբերը վկայակոչել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգա-

յին ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը, որի համաձայն՝ համաներումը չպետք է կիրառել այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ նշանակված պատժաչափը կրճատվել է, կամ որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատիժը կրելուց ազատվել են ներում շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, կամ որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, և կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ 2003թ. հունվարի 15-ին ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից Արմեն Դալլաքյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար կիրառվել է համաներում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիման վրա մերժվել է քրեական գործի հարուցումը:

14. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, կայացրել է ոչ ճիշտ որոշում, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ սխալ է մեկնաբանել օրենքը: Արդյունքում, բողոքաբերի պնդմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սկզբունքները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների 1-ին մասերով, ինչի արդյունքում սույն գործով ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

15. Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը խնդրել է «բեկանել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը Արմեն Վոլոդյայի Դալլաքյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ ԱԺ «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը կիրառելու մասին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի օգոստոսի 18-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին»:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

1. Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործը վարույթ ընդունելը

16. Սույն գործը Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու որոշումը

կայացվել է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանին վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության կենսագործման գերակա իրավական անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանավորված սույն գործի փաստական հանգամանքներով և իրավական առանձնահատկությամբ:

Մասնավորապես, այդ գերակա իրավական անհրաժեշտությունը կազմող հանգամանքները երկուսն են.

ա. Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով կիրառման ենթակա նորմատիվ ակտի կապակցությամբ առերևույթ առկա է սահմանադրականության խնդիր, և ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով ստուգել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Այս հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2010թ. հոկտեմբերի 19-ի ՄՂ-Ո-921 որոշմամբ (կետ 5) արձանագրել է, որ «ՀՀ վճռաբեկ դատարանի մտահոգությունը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի առկա ձևակերպման, հատկապես բացառության մասին, առնչությամբ՝ հիմնավոր է, և նման ձևով այն կիրառելու պարագայում կարող է խտրական իրավիճակ ստեղծվել»: Միաժամանակ նշելով, որ քննության առարկա գործով խնդիրը վերաբերում է կոնկրետ քրեական գործերի լուծմանը և դրանց շրջանակներում կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հարց առաջադրելուն, այս համատեքստում Սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճել է:

բ. Սույն գործով թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանի որոշումների նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա է համաներում կիրառելու վերաբերյալ դատական ակտերի իրավական բնույթի, դրանց բողոքարկման պայմանների կապակցությամբ միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտություն:

Նշված հանգամանքների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որոշել է վերականգնել սույն գործով բաց թողնված բողոքարկման 15-օրյա ժամկետը:

II. Սույն գործով դատական բողոքարկման ժամկետները

17. Սույն գործի առնչությամբ Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ իրավական հարցերին՝ համաներում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումն ի՞նչ ժամկետում կարող էր բողոքարկվել Վերաքննիչ դատարան, և այն ենթակա՞ էր արդյոք վերաքննիչ բողոքարկման՝ արդարադատության բուն էությունը խաթարող հիմնարար խախտման հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետ):

18. Դատավարական ժամկետներն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում: Դատավարական ժամկետը դատավարական

գործողություններ կատարելու և դատավարական որոշումներ ընդունելու համար օրենքով սահմանված ժամանակահատվածն է: Դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության և առանձին դատավարական գործողությունների օրինականության ապահովման տեսանկյունից ժամկետներն ունեն կարևոր նշանակություն: Դրանք ապահովում են դատավարական գործողությունների արագ և ժամանակին կատարումը, ինչն էլ իր հերթին նպաստում է քրեական գործի արագ և արդյունավետ քննությանը: Այսպիսով, դատավարական ժամկետների պահպանումը քրեական դատավարությունում օրինականության ապահովման կարևոր երաշխիքներից մեկն է:

Դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (6-րդ հոդված) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (9-րդ հոդված):

Դատավարական ժամկետների պահպանումը կարևորվում է նաև իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ իրավական որոշակիությունը ենթադրում է նաև, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի տրված լուծումը դարձել է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել (տե՛ս, օրինակ՝ *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* գործով (Brumărescu v. Romania) Մեծ պալատի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճռի 61-րդ կետը, *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* գործով (Ryabykh v. Russia) Պալատի 2003թ. հուլիսի 24-ի վճռի 51-րդ կետը, *Չեհենտներն ընդդեմ Ավստրիայի* գործով (Zehentner v. Austria) Պալատի 2009թ. հուլիսի 16-ի վճիռը):

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ (...) վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը իր վարույթում գտնվող գործով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

(...)

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական

իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն են առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող հետևյալ դատական ակտերը. դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը:

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի բովանդակությունից, համաներում կիրառելու մասին որոշումը նշված սպառիչ ցանկում ներառված չէ, ուստի այն գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ:

20. Վերը նշված դրույթների տառացի մեկնաբանությունից բխում է, որ հիմնարար խախտումների հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման կառուցակարգը վերաբերում է միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Ուստի, այս հարցի կապակցությամբ օրենսդրի կամքն այն է, որ վերաքննիչ բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո գործն ըստ էության չլուծող դատական ակտերը հիմնարար խախտումների հիմքով բողոքարկման ենթակա չլինեն:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի այս մոտեցումն իրավաչափ է և ողջամտորեն հիմնավորված, քանի որ նյութական և դատավարական իրավունքի խախտումների հիմնարար, արդարադատության բուն էությունը խաթարող, սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը խաթարող բնույթ ունենալու չափանիշը խիստ բարձր է, և այն չի կարող բավարարվել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի պարագայում:

22. Հետևաբար, Համաներում կիրառելու մասին որոշման նկատմամբ գործում է վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետի կանոնը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Մինևույն ժամանակ, այդ որոշումը չի կարող բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի կարգով:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում», վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և քննել (տե՛ս սույն որոշման 9-11-րդ կետերը): Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը պետք է բեկանել և վերաքննիչ վարույթը կարճել:

III. Սույն որոշման իրավական արժեքը

23. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ սույն

գործով վճռաբեկ բողոքի հիմնավորումներին, քանի որ սույն գործով վերաքննիչ վերանայումն ի սկզբանե եղել է ոչ իրավաչափ: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավասու չէ էությունը վերաբերող հիմքերով բեկանել սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը: Իսկ խնդրո առարկա իրավանորմի միատեսակ կիրառության հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը համաձայն է Սահմանադրական դատարանի ՄԳ-Ո-921 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը և գտնում է, որ այն բավարար է խնդրո առարկայի կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշման կայացումը պայմանավորված է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի՝ ընդհանրապես, և համաներում կիրառելու մասին որոշման՝ մասնավորապես, բողոքարկման իրավական ընթացակարգի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու անհրաժեշտությամբ:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Արմեն Վոլոդյայի Դալլաքյանի նկատմամբ համաներում կիրառելու մասին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի օգոստոսի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բեկանել և վերաքննիչ վարույթը կարճել:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ Գ-Դ-1/0012/13/09
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան
դատավորներ՝ Մ.Արղամանյան, Մ.Ռեհանյան

Գ-Դ-1/0012/13/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

քարտուղարությամբ՝

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

23 դեկտեմբերի 2010 թվական

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Ռոբերտի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

1. 2006թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիման վրա (համաներման ակտ) Արմեն Ռոբերտի

Միմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը կարճելու մասին:

2. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009թ. մարտի 24-ի դատավճռով Ա.Միմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 137-րդ հոդվածի 1-ին մասով. ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Միմոնյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Միմոնյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամկետով:

3. Ա.Միմոնյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

2008թ. ապրիլի 14-ին՝ ժամը 20³⁰-ի սահմաններում, Վարդենիս քաղաքի բնակիչ Ա.Միմոնյանը, կարտոֆիլի պարկը ուսին, անչափահաս երկու երեխաների հետ բարձրացել է նույն քաղաքի Երիտասարդության փողոցի 16-րդ շենքի 5-րդ հարկ և թակել իրենց բնակարանի դուռը, սակայն կինը՝ Սոնա Աղաջանյանը, զբաղված լինելով տնային գործերով, չի լսել դռան թակոցի ձայնը: Ա.Միմոնյանն իր մոտ եղած բանալիով բացել է դուռը և ներս մտել: Բնակարանի մուտքի դուռը չբացելու պատճառով բնակարանի ներսում վիճաբանել է կնոջ հետ, խուլիգանական դրդումներով կնոջ մազերից բռնած նրան քաշել, դուրս է բերել աստիճանավանդակի վրա, ձեռքում պահած դանակը պահել է կնոջ պարանոցի շրջանին, հայիոյել և սպանության սպառնալիքներ տվել նրան: Այդ ընթացքում դիտավորությամբ ձեռքերով և ոտքերով հարվածել է կնոջ մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով առողջության միջին վնաս՝ առողջության տևական քայքայումով:

4. 2009թ. հուլիսի 1-ին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Գեղարքունիքի բաժանմունքի պետի կողմից միջնորդություն է ներկայացվել Առաջին ատյանի դատարան՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման հիման վրա Արմեն Միմոնյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանը վերացնելու և նրան պատժից ազատելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Միմոնյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, 12-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետը, և նա ազատվել է պատժից:

5. Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշման դեմ 2009թ.

նոյեմբերի 26-ին վերաքննիչ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2010թ. մարտի 3-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ:

2010թ. հունիսի 8-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին:

2010թ. հոկտեմբերի 19-ին Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

2010թ. նոյեմբերի 8-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

7. Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Միմոնյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, 12-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետը. Առաջին ատյանի դատարանի 2009թ. մարտի 24-ի դատավճռով Ա.Միմոնյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը և սահմանված փորձաշրջանը վերացվել է, և նա ազատվել է պատժից:

8. 2009թ. նոյեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել, որտեղ, հենվելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի վրա, նշել է, որ «ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Արմեն Միմոնյանի նկատմամբ անհիմն, առանց օբյեկտիվ հիմքերի կիրառել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2009 թվականի հունիսի 19-ին ընդունված «Համանաբերում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, արդյունքում թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, խաթարել արդարադատության բուն էությունը»:

9. Վերաքննիչ դատարանը 2009թ. դեկտեմբերի 2-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը դատարանի վարույթ ընդունելու և դատական նիստում քննության նշանակելու մասին:

10. Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

11. 2010թ. հունվարի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

12. Վճռաբեկ բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումն անհիմն է և անօրինական:

Բողոք բերած անձը վկայակոչել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը, որի համաձայն՝ համաներումը չպետք է կիրառել այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ նշանակված պատժաչափը կրճատվել է, կամ որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատիժը կրելուց ազատվել են ներում շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, կամ որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաներման մասին որոշումներով, և կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հանցագործությունների համար դատվածությունը մարելուց հետո անցել է 10 տարի:

Նա նշել է նաև, որ 2006թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԱԾ-ի կողմից Արմեն Ռոբերտի Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար կիրառվել է համաներում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով հարուցված քրեական գործը կարճվել է:

13. Վերոշարադրյալ մեջբերումների հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, կայացրել է ոչ ճիշտ որոշում, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ սխալ է մեկնաբանել օրենքը: Արդյունքում, բողոքաբերի պնդմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սկզբունքները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների 1-ին մասերով, ինչի արդյունքում սույն գործով ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

14. Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝

բողոք բերած անձը խնդրել է «բեկանել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը Արմեն Ռոբերտի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 137-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ ԱԺ «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը կիրառելու մասին ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հուլիսի 21-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին»:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

1. Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործը վարույթ ընդունելը

15. Սույն գործը Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանին վերապահված օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի կենսագործման գերակա իրավական անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանավորված սույն գործի փաստական հանգամանքներով և իրավական առանձնահատկությամբ:

Մասնավորապես, այդ գերակա իրավական անհրաժեշտությունը կազմող հանգամանքները երկուսն են.

ա. Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով կիրառման ենթակա նորմատիվ ակտի կապակցությամբ առերևույթ առկա է սահմանադրականության խնդիր, և ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով ստուգել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Այս հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2010թ. հոկտեմբերի 19-ի ՄԳ-Ո-921 որոշմամբ (կետ 5) արձանագրել է, որ «ՀՀ վճռաբեկ դատարանի մտահոգությունը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի առկա ձևակերպման, հատկապես բացառության մասին, առնչությամբ՝ հիմնավոր է, և նման ձևով այն կիրառելու պարագայում կարող է խտրական իրավիճակ ստեղծվել»: Միաժամանակ նշելով, որ քննության առարկա գործով խնդիրը վերաբերում է կոնկրետ քրեական գործերի լուծմանը և դրանց շրջանակներում կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հարց առաջադրելուն, այս համատեքստում Սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճել է:

բ. Սույն գործով թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանի որոշումների նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա է համաներում կիրառելու վերաբերյալ դատական ակտերի իրավական բնույթի, դրանց բողոքարկման պայմանների կապակցությամբ միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտություն:

Նշված հանգամանքների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա որոշել է վերականգնել սույն գործով բաց թողնված բողոքարկման 15-օրյա ժամկետը:

II. Սույն գործով դատական բողոքարկման ժամկետները

16. Սույն գործի առնչությամբ Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ իրավական հարցերին՝ համաներում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումն ի՞նչ ժամկետում կարող էր բողոքարկվել Վերաքննիչ դատարան, և այն ենթակա՞ էր արդյոք վերաքննիչ բողոքարկման՝ արդարադատության բուն էությունը խաթարող հիմնարար խախտման հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետ):

17. Դատավարական ժամկետներն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում: Դատավարական ժամկետը դատավարական գործողություններ կատարելու և դատավարական որոշումներ ընդունելու համար օրենքով սահմանված ժամանակահատվածն է: Դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության և առանձին դատավարական գործողությունների օրինականության ապահովման տեսանկյունից ժամկետներն ունեն կարևոր նշանակություն: Դրանք ապահովում են դատավարական գործողությունների արագ և ժամանակին կատարումը, ինչն էլ իր հերթին նպաստում է քրեական գործի արագ և արդյունավետ քննությանը: Այսպիսով, դատավարական ժամկետների պահպանումը քրեական դատավարությունում օրինականության ապահովման կարևոր երաշխիքներից մեկն է:

Դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (6-րդ հոդված) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (9-րդ հոդված):

Դատավարական ժամկետների պահպանումը կարևորվում է նաև իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ իրավական որոշակիությունը ենթադրում է նաև, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի տրված լուծումը դարձել է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել (տե՛ս, օրինակ՝ *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* գործով (Brumărescu v. Romania) Մեծ պալատի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճռի 61-րդ կետը, *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* գործով (Ryabykh v. Russia) Պալատի 2003թ. հուլիսի 24-ի վճռի 51-րդ կետը, *Չեհենտներն ընդդեմ Ավստրիայի* գործով (Zehentner v. Austria) Պալատի 2009թ. հուլիսի 16-ի վճիռը):

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ (...) վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը իր վարությամբ գտնվող գործով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝
(...)

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն են առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող հետևյալ դատական ակտերը. դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը:

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի բովանդակությունից, համաներում կիրառելու մասին որոշումը նշված սպառնիչ ցանկում ներառված չէ, ուստի այն գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ:

19. Վերը նշված դրույթների տառացի մեկնաբանությունից բխում է, որ հիմնարար խախտումների հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման կառուցակարգը վերաբերում է միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերին: Ուստի, այս հարցի կապակցությամբ օրենսդրի կամքն այն է, որ վերաքննիչ բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո գործն ըստ էության չլուծող դատական ակտերը հիմնարար խախտումների հիմքով բողոքարկման ենթակա չլինեն:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի այս մոտեցումն իրավաչափ է և ողջամտորեն հիմնավորված, քանի որ նյութական և դատավարական իրավունքի խախտումների հիմնարար, արդարադատության բուն էությունը խաթարող, սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը խաթարող բնույթ ունենալու չափանիշը խիստ բարձր է, և այն չի կարող բավարարվել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի պարագայում:

21. Հետևաբար, Համաներում կիրառելու մասին որոշման նկատմամբ գործում է վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետի կանոնը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Միևնույն ժամանակ, այդ որոշումը չի կարող բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի կարգով:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում», վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և քննել (տե՛ս սույն որոշման 8-10-րդ կետերը): Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը պետք է բեկանել և վերաքննիչ վարույթը կարճել:

III. Սույն որոշման իրավական արժեքը

22. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ սույն գործով վճռաբեկ բողոքի հիմնավորումներին, քանի որ սույն գործով վերաքննիչ վերանայումն ի սկզբանե եղել է ոչ իրավաչափ: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավասու չէ էությանը վերաբերող հիմքերով բեկանել սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը: Իսկ խնդրո առարկա իրավանորմի միատեսակ կիրառության հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը համաձայն է Սահմանադրական դատարանի ՄԳՈ-921 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը և գտնում է, որ այն բավարար է խնդրո առարկայի կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշման կայացումը պայմանավորված է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի՝ ընդհանրապես, և համաներում կիրառելու մասին որոշման՝ մասնավորապես, բողոքարկման իրավական ընթացակարգի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու անհրաժեշտությամբ:

23. Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Արմեն Ռոբերտի Սիմոնյանի նկատմամբ համաներում կիրառելու մասին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 21-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բեկանել և վերաքննիչ վարույթը կարճել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0125/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Մ.Արղամանյան

ԵԷԴ/0125/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Անդրանիկ Սարգսի Ասլանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշման դեմ մեղադրողի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

1. 2009թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է քրեական գործ:

2009թ. սեպտեմբերի 28-ին Անդրանիկ Ասլանյանը ձերբակալվել է:

2009թ. հոկտեմբերի 1-ին Անդրանիկ Ասլանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն բանի համար, որ նա, աշխատելով որպես ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ, 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ վարձավճար ստանալու պայմանով նախնական համաձայնության է եկել նույն քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Կարեն Պետրոսյանի հետ և վերջինիս, թմրամիջոց իրացնելու նպատակով, 2009թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Կարեն Շահբազյանից ապօրինի ձեռք է բերել և իր մոտ պահել զգալի չափերի հասնող՝ 0,008 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ, որը հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին՝ ժամը 9⁰⁰-ի սահմաններում, իրացնելու նպատակով փոխադրել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի տարածք, սակայն քրեակատարողական հիմնարկի հսկիչ-անցագրային կետում ենթարկվել է անձնական խուզարկության, որի ժամանակ թմրանյութը հայտնաբերվել և առգրավվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ բավարարվել է Ա.Ասլանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը:

2009թ. նոյեմբերի 5-ի որոշմամբ Ա.Ասլանյանին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2. 2010թ. նոյեմբերի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2010թ. հունիսի 15-ի դատավճռով Ա.Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով, և նա դատապարտվել է ազատազրկման 10 (տասը) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Կարեն Բախշիի Շահբազյանը և Կարեն Նորիկի Պետրոսյանը:

3. Ամբաստանյալ Կ.Շահբազյանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի 2010թ. հունիսի 15-ի դատավճիռը:

4. 2010թ. հոկտեմբերի 8-ին մեղադրողը Վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

Սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն ստորադաս դատարանների դատական ակտերով հաստատված հետևյալ փաստական հանգամանքները.

5. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալ Կարեն Պետրոսյանը ցանկացել է առանց իրացնելու նպատակի, իր գործածման համար ձեռք բերել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ:

Այդ նպատակով Կ.Պետրոսյանը նախնական համաձայնության է եկել իր ծանոթ Կարեն Շահբազյանի հետ՝ խնդրելով իրեն իրացնել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ:

6. Կ.Պետրոսյանին թմրամիջոց իրացնելու համար Կ.Շահբազյանը քննությանմբ չպարզված անձից ապօրինի ձեռք է բերել և պահել զգալի չափերի՝ 0,008 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ:

7. Կ.Պետրոսյանը խնդրել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի անվտանգության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Անդրանիկ Ասլանյանին հանդիպել Կ.Շահբազյանին, նրանից վերցնել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբը և փոխանցել իրեն: Ա.Ասլանյանը խոստացել է կատարել Կ.Պետրոսյանի խնդրանքը:

8. 2009թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Ա.Ասլանյանը Կ.Պետրոսյանի խնդրանքով հանդիպել է Կ.Շահբազյանին, որին չի ճանաչել, նրանից վերցրել է Կ.Պետրոսյանի գործածման համար նախատեսված «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբը: Սակայն Ա.Ասլանյանին չի հաջողվել դեղահաբը հանձնել Կ.Պետրոսյանին, քանի որ հաջորդ օրը՝ ժամը 9-ի սահմաններում, ՔԿՀ-ի հսկիչ անցագրային կետում անձնական խուզարկության ժամանակ այն հայտնաբերվել է և առգրավվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշումն անհիմն է և ենթակա է բեկանման, քանի որ ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը, թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

10. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են կատարված հանցանքի առանձնահատկությունները, հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը: Ա.Ասլանյանի գործողությունների նպատակը եղել է թմրամիջոց տարածելը՝ այն ձեռք բերելու, պահելու, փոխադրելու միջոցով, այլ ոչ թե թմրամիջոց ձեռք բերելու հարցում Կ.Պետրոսյանին օժանդակելը:

Տվյալ դեպքում Ա.Ասլանյանը թմրամիջոցը ձեռք է բերել Կ.Պետրոսյանին իրացնելու նպատակով: Ա.Ասլանյանը գիտակցել է իր գործողությունների՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացումը և ցանկացել է դրանց վրա հասնելը: Թմրամիջոցը Կ.Պետրոսյանին իրացնելու նպատակով Ա.Ասլանյանի կողմից ձեռք բերելու պահն արդեն իսկ համարվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն և որևէ կերպ չի կարող որակվել որպես թմրամիջոց ձեռք բերելուն օժանդակելու հանցավոր գործողություն:

Կ.Շահբազյանի և Ա.Ասլանյանի՝ նախկինում միմյանց չճանաչելու, որևէ կերպ իրար հետ չհամագործակցելու, վերջիններիս կապը Կ.Պետրոսյանի կողմից՝ հեռախոսակապի միջոցով պահպանվելու, Ա.Ասլանյանի կողմից հանցագործությունը Կ.Պետրոսյանի նախաձեռնությամբ կատարելու հանգամանքների վերաբերյալ ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանների եզրահանգումներն ինքնին չեն կարող Ա.Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու հիմք հանդիսանալ, և այդպիսիք չեն բացառում Ա.Ասլանյանի կողմից Կ.Պետրոսյանին իրացնելու նպատակով թմրամիջոցն ապօրինի ձեռք բերելու հանգամանքը:

11. Բողոք բերած անձը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա դատարանների կողմից բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված գործերով միասնական պատժողական քաղաքականություն ձևավորելու, օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը գտնում է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված 2007թ. օգոստոսի 30-ի ՎԲ-135/07 որոշմանը:

Բողոքաբերը միաժամանակ փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանք: Մասնավորապես, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերով կարող է ձևավորվել այնպիսի դատական պրակտիկա, որն անարդյունավետ կդարձնի ազատագրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու կամ կալանավորվածներին պահելու վայրերում թմրամիջոցների կամ հոգեմեղդործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը:

12. Այսպիսով, բողոքաբերը գտնում է, որ Ա.Ասլանյանը կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով էլ նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության և պատժի՝ ապահովելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների լիակատար իրագործումը: Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններն օբյեկտիվ, իրավաչափ և համարժեք չեն գնահատել կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատկությունները և դրանց հետևանքները, որոնք բարձրացնում են կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հաշվի չեն առել պաշտպանվող հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Ա.Ասլանյանի մասով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2010թ. սեպտեմբերի 10-ի որոշումը, Ա.Ասլանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նշված հոդվածի սանկցիայով դատապարտել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ի՞նչ քրեաիրավական գնահատական պետք է տալ Ա.Ասլանյանի արարքներին, ով թմրամիջոց սպառողի խնդրանքով նրա նշած անձից թմրամիջոց է ձեռք բերել՝ թմրամիջոց սպառողին փոխանցելու նպատակով. արդյո՞ք նշված արարքներում առկա է (ա) իրացնելու նպատակով թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման, փոխադրման և ապօրինի իրացման հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված), (բ) թմրամիջոցի ապօրինի իրացման օժանդակության հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մաս և 266-րդ հոդված), թե (գ) թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման օժանդակության հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մաս և 268-րդ հոդված):

15. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածն ամրագրում է իրացման նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությանը կամ դրանց ապօրինի իրացմանը վերաբերող հանցակազմեր: Այդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում «իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստել[ու], վերամշակել[ու], ձեռք բերել[ու], պահել[ու], փոխադրել[ու], առաքել[ու] կամ դրանք ապօրինի իրացնել[ու]» համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում «Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ

նյութեր ապօրինի պատրաստել[ու], վերամշակել[ու], ձեռք բերել[ու], պահել[ու], փոխադրել[ու] կամ առաքել[ու]» համար:

16. Օբյեկտով, առարկայով, օբյեկտիվ կողմի հատկանիշներով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերն ըստ էության նույնանուն են: Դրանց տարբերությունը միայն հանցակազմի սուբյեկտիվ կողմի, մասնավորապես՝ հանցագործության նպատակի մեջ է: Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում բացակայում է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի իրացման նպատակը:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի հատկանիշ իրացման նպատակի, ինչպես նաև իրացման վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն է արտահայտել *Մ.Բոլյանի* վերաբերյալ գործով որոշմամբ: Ըստ այդ որոշման՝ «Իրացման նպատակի տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութերի տարածման ցանկացած եղանակ, այդ թվում նաև նախնական պատվերով: Իրացման նպատակի մասին կարող է վկայել ինչպես ձեռք բերողի (ստացողի, սպառողի) հետ համապատասխան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները. թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստինքյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց չէ. դա պետք է զնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ: Ինչ վերաբերում է ապօրինի իրացմանը, ապա այն թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի ցանկացած եղանակով օտարումն է: Ապօրինի իրացման տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի՝ հատուցմամբ կամ անհատույց այլ անձանց հանձնելու, փոխանցելու ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրատվություն, փոխանակում, փոխատվություն, պարտքի մարում, ուրիշի ներարկում և այլն: Իրացման առանձնահատկությունն այն է, որ նշված գործողությունների հետևանքով թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրանում է մեկ այլ անձ, որն այս դեպքում հանդես է գալիս որպես ձեռք բերող, ստացող կամ զնորդ, սպառող: Ապօրինի իրացումը համարվում է ավարտված, երբ մեկ այլ անձ տիրանում է թմրամիջոցին կամ հոգեմետ նյութին: Մեկ ուրիշ անձին փոխանցելու եղանակը կարող է տարբեր լինել, սակայն դա արարքի որակման համար նշանակություն չունի: Ապօրինի իրացման հանցակազմի համար նշանակություն չունի, թե թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրացած անձն ինչպես է այն տնօրինելու, դրա հետ վարվելու» (տե՛ս Մ.Բոլյանի վերաբերյալ ՎԲ 135/07 գործով 2007թ. օգոստոսի 30-ի՝ Վճռաբեկ դատարանի որոշումը):

18. Չարգացնելով նախորդ կետում վկայակոչված և շարադրված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից

ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

- ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,
- բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,
- գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,
- դ) միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն

աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ ո՞ր դերակատարի՝ իրացնողի թե ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն:

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հաստատված են հետևյալ փաստերը.

ա) Կ.Պետրոսյանն Ա.Ասլանյանին խնդրել է իր անձնական գործածման համար Կ.Շահբազյանից վերցնել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ: Ա.Ասլանյանը խոստացել է կատարել Կ.Պետրոսյանի խնդրանքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը),

բ) Ա.Ասլանյանը թմրամիջոց իրացնող Կ.Շահբազյանին ընդհանրապես չի ճանաչել և վերջինիս հանդիպել ու նշված թմրամիջոցը վերցրել է Կ.Պետրոսյանի խնդրանքով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը),

գ) Իրացնող Կ.Շահբազյանից Ա.Ասլանյանը վերցրել է «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ, որը համապատասխանում է Կ.Պետրոսյանի անձնական գործածման քանակին,

դ) Վերցրած դեղահաբի նկատմամբ Ա.Ասլանյանը տնօրինման իրավունք չի ունեցել,

ե) Ա.Ասլանյանը դիտավորությունն ընդգրկել է միայն թմրամիջոցի ձեռքբերմանն աջակցելը:

20. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումները կիրառելով 19-րդ կետում շարադրված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ասլանյանի արարքներում բացակայում են թմրամիջոցի իրացման նպատակի և իրացման հատկանիշները: Ուստի, նրա գործողությունները չեն կարող որակվել որպես իրացնելու նպատակով թմրամիջոցի ապօրինի ձեռքբերում, փոխադրում և ապօրինի իրացում (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված):

21. Վճռաբեկ դատարանի առջև սույն գործով բարձրացված և սույն որոշման 14-րդ կետում շարադրված իրավական հարցին լիարժեք պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում զարգացնել իր իրավական դիրքորոշումները հանցակցության և մասնավորապես օժանդակության վերաբերյալ:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

Հանցակցության հատկանիշների մասին Վճռաբեկ դատարանն իրավական

դիրքորոշում է արտահայտել *Ա.Մաթևոսյանի* և *Ռ.Հարությունյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ: Ըստ այդ որոշման՝

«Հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ.

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից
2. գործողությունների համատեղությունը
3. հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ մեղքով և միայն դիտավորյալ հանցագործություններում» (տե՛ս *Ա.Մաթևոսյանի* և *Ռ.Հարությունյանի* վերաբերյալ 48/08 գործով 2008թ. հուլիսի 25-ի որոշման 28-րդ կետը):

23. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:

2. Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգոչությամբ:

(...)

5. Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գոր-

ծիրքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:

24. Եթե հանցակիցներից երկուսը կամ ավելին անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կամ դրանց մի մասը, ապա հանցակցությունը դրսևորվում է համակատարման ձևով:

Համակատարում չէ հանցագործությանն այնպիսի մասնակցությունը, երբ հանցակիցներից մեկը տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող ոչ մի գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը, այսինքն՝ եղել է օժանդակող ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով:

Այսպիսով, օժանդակողը կատարողից տարբերվում է նրանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ՝ կամ հանցագործությունը նախապատրաստելու ընթացքում կամ դրա ավարտման փուլում աջակցություն է ցույց տալիս կատարողին՝ ստեղծելով հանցագործության ավարտման իրական հնարավորություններ:

25. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում սպառնիչ թվարկված են այն եղանակները և միջոցները, որոնցով օժանդակողը, չկատարելով տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն, մասնակցում է հանցագործությանը: Օրենքում չնշված այլ եղանակներով օժանդակությունը բացառվում է: Մասնավորապես, օժանդակող է այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է.

ա) Միջոցներ կամ գործիքներ տրամադրելով (ֆիզիկական օժանդակություն): Օժանդակության այս տեսակն արտահայտվում է այնպիսի գործողություններով, որոնք ուղղված են հանցագործության միջոցներ և գործիքներ տրամադրելու, խոչընդոտներ վերացնելու միջոցով կատարողի կողմից հանցակազմի օբյեկտիվ կողմի իրականացումը հեշտացնելուն:

բ) Խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն տրամադրելով (ինտելեկտուալ օժանդակություն): Այն արտահայտվում է արարքի հոգեբանական կողմին վերաբերող գործողություններով, որոնք ուղղված են կատարողի մոտ հանցագործության կատարման վճռականությունն ամրապնդելուն, առավել արդյունավետ գործողություններ կատարելու ուղիներ գտնելուն և այլն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարտակման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների ձեռք բերման կամ իրացման նախապես խոստումը ոչ թե ֆիզիկական, այլ ինտելեկտուալ օժանդակություն է: Այլ կերպ՝ արարքն օժանդակություն որակելու համար այս դեպքերում չի պահանջվում խոստման ռեալ (իրական) կատարում և նույնիսկ այն կատարելու մտադրություն:

գ) Խոչընդոտները վերացնելով (կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ ինտելեկտուալ):

26. Մուրյեկտիվ կողմից օժանդակությունը դրսևորվում է ուղղակի դիտավորու-

թյամբ. հանցավորը գիտակցում է, որ ինքը մասնակցում է կատարողի կողմից իրականացվող հանցագործությանը և ցանկանում է մասնակցել: Ինչ վերաբերում է հանցագործության վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող մեղքի ձևին, ապա դրանց նկատմամբ կարող է դրսևորվել և՛ ուղղակի, և՛ անուղղակի դիտավորություն:

27. Մույն որոշման 24-26-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները կիրառելով 19-րդ կետում շարադրված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ասլանյանը, գործելով թմրամիջոց սպառողի՝ Կ.Պետրոսյանի շահերից ելնելով, նրան խոստացել է ձեռք բերել հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկա՝ թմրամիջոց: Այսինքն՝ առկա է թմրամիջոցի ձեռքբերման հանցակցություն՝ ինտելեկտուալ օժանդակության ձևով: Ավելին, նա փաստացի ձեռք է բերել այն և փորձել է փոխանցել սպառողին՝ Կ.Պետրոսյանին:

28. Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ Առաջին ատյանի դատարանն Ա.Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից իրավացիորեն վերադրակել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Այս առումով անհիմն է բողոքի այն փաստարկը, թե Առաջին ատյանի դատարանը, Ա.Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով, ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, թույլ է տվել գործի ելքի վրա ազդած նյութական իրավունքի խախտում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով ճիշտ է որակվել, ստորադաս դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում թույլ չի տրվել, ուստի վճռաբեկ բողոքում հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հանգամանքը:

29. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը՝ Մարտիկ Բոլյանի վերաբերյալ ՎԲ-135/07 գործով 2007թ. օգոստոսի 30-ի որոշմանը:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների նախադեպային կիրառելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Ա.Այվազյանի վերաբերյալ ՎԲ-17/08 գործով 2008թ. մայիսի 23-ի որոշման մեջ:

Այդ դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև Վճռաբեկ դատարանի

որոշումների նախադեպային կիրառելիության հարցում:

Համաձայն նշված որոշման 26-րդ կետի՝ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը, եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն»:

30. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքում պատշաճորեն փաստարկված չէ, թե որոնք են սույն գործի և *Մ.Բոլյանի* վերաբերյալ գործի այն էական մանուկությունները, որոնք կարող են անհրաժեշտ փաստական հիմք լինել *Մ.Բոլյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշման հիմնավորումները սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելու համար:

Այդպիսի պատշաճ փաստարկումը պետք է հիմնված լինի Ս.Այվազյանի վերաբերյալ գործով սահմանված և սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական չափանիշների վրա: Իսկ նման փաստարկման բացակայությունն ինքնին բավարար է վճռաբեկ բողոքի քննարկվող պնդումը չհիմնավորված համարելու համար:

31. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների՝ թմրամիջոցների ապօրինի իրացման և առանց իրացման նպատակի դրանց ապօրինի շրջանառության հանցակցության ձևերի հետ կապված օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Սույն գործով բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և

ՀՀ դատական օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

32. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Անդրանիկ Սարգսի Ասլանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

42.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0126/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Մ.Պետրոսյան

ԵԿԴ/0126/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 23-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գրիգոր Վարազդատի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պաշտպան Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի մարտի 26-ին հարուցվել է թիվ 13116510 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2010 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Գ.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի մայիսի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 17-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Գ.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրան կատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պաշտպան Ս.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 17-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պաշտպան Ս.Հարությունյանը:

2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պաշտպան Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Գ.Պետրոսյանը դատապարտվել է այն արարքի համար, որ նա 2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնվսերվատորիայի մի խումբ ուսանողների և աշխատակիցների վստահությունը, Կանադայի Հանրապետությունում կայանալիք հյուրախաղերին վերջիններիս մասնակցությունն ապահովելու պատրվակով, մեկ միասնական հանցավոր մտադրությամբ, շարունակաբար խաբեությամբ հափշտակել է խոշոր չափի՝ 1.380.800 ՀՀ դրամ գումարներ, այն է՝

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնվսերվատորիայի վոկալ բաժնի 4-րդ կուրսի ուսանող Նարեկ Գավթյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ն.Գավթյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնվսերվատորիայի լարային բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գավթյանի Գա-

բոյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ղ.Գաբրյանին պատկանող զգալի չափի՝ 180.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Հայաստանի պետական երգչախմբի երգիչ Ռուբեն Կարասեֆերյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ռ.Կարասեֆերյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նվագակցող Աննա Ջալադյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ա.Ջալադյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների բաժնի 3-րդ կուրսի ուսանող Արշալույս Թադևոսյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ա.Թադևոսյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալի ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Մարինե Խաչատրյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Մ.Խաչատրյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոնցերտմայստեր Նվարդ Մարուխյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ ստացել և խարդախությամբ հափշտակել է Ն.Մարուխյանին պատկանող՝ 288.000 ՀՀ դրամին համարժեք 750 ԱՄՆ դոլար գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ջութակահար Արսեն Մուրադյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ա.Մուրադյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Արտավազ Համբարյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ա.Համբարյանին պատկանող զգալի չափի՝ 180.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան

պետական կոնսերվատորիայի վոկալի բաժնի ամբիոնի վարիչ Սուսաննա Մարտիրոսյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ա.Մարտիրոսյանին պատկանող զգալի չափի՝ 96.000 ՀՀ դրամին համարժեք 250 ԱՄՆ դոլար գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երգչուհի Լուսինե Սկրտչյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Լ.Սկրտչյանին պատկանող զգալի չափի՝ 80.000 ՀՀ դրամ գումարը:

2010 թվականի փետրվար ամսին, չարաշահելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի լարային բաժնի 3-րդ կուրսի ուսանող Ռուբեն Դավթյանի վստահությունը, Կանադայում կայանալիք հյուրախաղերին մասնակցելու պատրվակով, խաբեությամբ վերջինիցս ստացել և խարդախությամբ հափշտակել է Ռ.Դավթյանին պատկանող զգալի չափի՝ 76.800 ՀՀ դրամին համարժեք 200 ԱՄՆ դոլար գումարը:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է. «Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այն, որ Գրիգոր Պետրոսյանի հանցանքն ունի հանրության համար վտանգավորության բարձր աստիճան, քանի որ հանցանքի արդյունքում տուժել են 12 քաղաքացիներ, այնպես էլ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրականորեն, նախկինում դատված ու արատավորված չի եղել:

Որպես ամբաստանյալ Գրիգոր Պետրոսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ պատիժ նշանակելու պահին ամբաստանյալի խնամքին է գտնվում հաշմանդամ մայրը և այն, որ ամբաստանյալը, բացառությամբ տուժողներ Նարեկ Դավթյանին, Արշալույս Թադևոսյանին, Սուսաննա Մարտիրոսյանին և Ռուբեն Դավթյանին պատճառված վնասներից, կամովին հատուցել է Արսեն Մուրադյանին, Արտավազ Համբարյանին, Մարինե Խաչատրյանին, Լուսինե Սկրտչյանին, Ռուբեն Կարասեֆեյանին և Աննա Ջալադյանին պատճառված գույքային վնասն ամբողջությամբ, իսկ Դավիթ Գաբրյանին, Նվարդ Մարուխյանին պատճառված վնասը՝ մասնակիորեն:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում» (տե՛ս, քրեական գործ, 331-րդ էջ):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռի եզրափակիչ մասում նշել է. «(...) Գրիգոր Պետրոսյանի պատժի սկիզբը հաշվել դատավճռն ի կատար ածելու պահից, որը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Գրիգոր Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝

չհեռանալու մասին ստորագրությունը փոխել կալանավորմամբ» (տե՛ս քրեական գործ, 332-րդ էջ):

8. Պաշտպան Ս.Հարությունյանն իր բողոքին կից Վերաքննիչ դատարանին է ներկայացրել թվով 5 ստացական, որոնց համաձայն՝ տուժողներ Ն.Մարտիսյանին, Դ.Գ.արքյանին, Ռ.Դավթյանին, Ն.Դավթյանին և Ա.Թադևոսյանին պատճառված գույքային վնասն ամբողջությամբ հատուցվել է ամբաստանյալ Գ.Պետրոսյանի կողմից (տե՛ս քրեական գործ, 401-405-րդ էջեր):

9. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի դատական նիստին մասնակցել են նաև տուժողներ Ս.Մարտիրոսյանը, Ն.Մարտիսյանը, Ն.Դավթյանը և Ա.Թադևոսյանը, որոնք հայտարարել են, որ հանցագործության արդյունքում իրենց պատճառված գույքային վնասն ամբողջությամբ հատուցվել է, և իրենք որևէ պահանջ ամբաստանյալ Գ.Պետրոսյանից չունեն (տե՛ս քրեական գործ, դատական նիստի արձանագրության համառոտագրում և դատական նիստի ձայնագրառման լագերային սկավառակ, 434-րդ, 437-րդ էջեր):

10. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է. «Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ պաշտպան Ս.Հարությունյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ դատարանի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը /կատարվածը ծանր հանցագործություն է/, հանցավորի անձը՝ նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դիտելով այն, որ խնամքին է գտնվում հաշմանդամ մայրը, ինչպես նաև պատճառված գույքային վնասը մասնակիորեն հատուցելը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում վերջինիս նկատմամբ նշանակել է համաչափ պատիժ:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով պաշտպան Ս.Հարությունյանի վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանություններն ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ, հաշվի առնելով վերջինիս վերագրվող հանցանքի բնույթը և վտանգավորության աստիճանը՝ այն, որ նրա հանցավոր գործողությունների հետևանքով տուժել են 12 քաղաքացիներ, հանգում է այն հետևության, որ վերջինիս ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու և միայն այդ ձևով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (...)» (տե՛ս քրեական գործ, 444-րդ էջ):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոքի հեղինակը նշել է, որ վիճարկվող դատական ակտը նշանակված պատժի մասով ակնհայտ անարդարացի է, ոչ օբյեկտիվ, ոչ մարդասիրական:

Համաձայն բողոքի՝ Վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքը, նշել է, որ ամբաստանյալը մասնակիորեն է հատուցել պատճառված վնասը: Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալը նախաքննության ընթացքում հատուցել է տուժողներ Ա.Մուրադյանին, Ա.Համբարյանին, Ն.Մարությանին և Ս.Մարտիրոսյանին պատճառված, ընդհանուրը՝ 328.000 ՀՀ դրամի և 1.000 ԱՄՆ դոլարի վնասը, Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում՝ տուժողներ Մ.Խաչատրյանին, Լ.Սկրտչյանին, Ռ.Կարասեֆերյանին, Ա.Ջալալյանին, Գ.Գաբրյանին պատճառված, ընդհանուրը՝ 432.000 ՀՀ դրամի վնասը, Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելուց հետո՝ Ռ.Գավթյանին, Ն.Գավթյանին, Ա.Թադևոսյանին պատճառված, ընդհանուրը՝ 160.000 ՀՀ դրամի և 200 ԱՄՆ դոլարի վնասը: Այսինքն՝ ամբաստանյալն ամբողջությամբ հատուցել է տուժողներին պատճառված 1.380.800 ՀՀ դրամի վնասը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը գործի քննությունը հետաձգել է, պահանջելով ներկայացնել պատճառված վնասը հատուցելը հաստատող ապացույցներ, որոնք ներկայացվել են: Բացի այդ, Վերաքննիչ դատարան ներկայացած տուժողներ Ն.Մարությանը, Ն.Գավթյանը, Ա.Թադևոսյանը և Ս.Մարտիրոսյանը հայտնել են, որ Գ.Պետրոսյանը վերադարձրել է իրենց գումարները, իրենք նրանից պարտք ու պահանջ չունեն: Վերաքննիչ դատարանը, սակայն, անտեսել է վերոնշյալ՝ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը, այդ մասին չի նշել իր որոշման մեջ և հաշվի չի առել, որով թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտում:

Բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի նախադեպային՝ ՎԲ-124/07, ՎԲ-192/07 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշման և սույն գործի փաստական հանգամանքների համեմատական վերլուծության արդյունքում գտել է, որ պատճառված վնասն ամբողջովին հարթելու պայմաններում սույն գործով վերականգնվել է սոցիալական արդարությունը, վերացել է հանրության համար վտանգավորությունը, հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով այդ հանգամանքը, կայացրել է Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներին հակասող որոշում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը կհամապատասխաներ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջներին և ամբողջ

ջությամբ կրխեր Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումների պահանջներից:

Բողոքաբերը նշել է նաև, որ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի չի առել նաև Գ.Պետրոսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այն հանգամանքը, որ նա հանցանքը կատարել է կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով, անհիմն կերպով նշելով, որ այդ փաստը հիմնավորող ապացույցներ չեն ներկայացվել այն դեպքում, երբ գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալը հանցանքը կատարել է հաշմանդամ մորը բուժելու, որդեգրված հոգեկան հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու նպատակով: Բացի այդ, Գ.Պետրոսյանը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, զղջացել է կատարածի համար, խնամքին է գտնվում հաշմանդամ մայրը, բացակայում են նրա պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով ամբաստանյալի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը փոխարինվել է կալանավորմամբ, և Գ.Պետրոսյանը դատարանի դահլիճում կալանավորվել է, սակայն դատավճռով Գ.Պետրոսյանի պատժի սկիզբը հաշվվել է ոչ թե դատավճռի հրապարակման պահից, այլ՝ դատավճիռն ի կատարածելու պահից: Նշված հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, որով թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը, գտնելով, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումներն ազդել են իր պաշտպանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու հարցում ճիշտ որոշում կայացնելու վրա, խնդրել է Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 17-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը, և նրա նկատմամբ նշանակված պատիժը՝ 2 տարի ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Գ.Պետրոսյանի կատարած հանցագործության արդյունքում պատճառված գույքային վնասի հատուցված լինելը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նախ պետք է պատասխանի հետևյալ հարցին. իրավաչափ է արդյոք հանցագործությամբ տուժողներին պատճառված գույքային վնասը Գ.Պետրոսյանի կողմից մասնակի հատուցած լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. Դատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Պ.Բայրամյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պա-

տասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս, դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը (...)» (տե՛ս Պ.Բայրամյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի ՎԲ-84/07 որոշումը):

14. Սույն գործով Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն, որ ամբաստանյալ Գ.Պետրոսյանը, բացառությամբ տուժողներ Ն.Գավթյանին, Ա.Թադևոսյանին, Ս.Մարտիրոսյանին և Ռ.Գավթյանին պատճառված վնասներից, կամովին հատուցել է վեց տուժողներին պատճառված գույքային վնասն ամբողջությամբ, իսկ Գ.Գաբրյանին և Ն.Մարտիրոսյանին պատճառված վնասը՝ մասնակիորեն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Պաշտպանության կողմը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է թվով 5 ստացական, որոնք վկայում են այն մասին, որ տուժողներ Ն.Մարտիրոսյանին, Գ.Գաբրյանին, Ռ.Գավթյանին, Ն.Գավթյանին և Ա.Թադևոսյանին պատճառված նյութական վնասն ամբողջությամբ հատուցվել է ամբաստանյալ Գ.Պետրոսյանի կողմից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Բացի այդ, Վերաքննիչ դատարանի դատական նիստի ժամանակ տուժողներ Ս.Մարտիրոսյանը, Ն.Մարտիրոսյանը, Ն.Գավթյանը և Ա.Թադևոսյանը հայտարարել են, որ հանցագործության արդյունքում իրենց պատճառված վնասն ամբողջությամբ հատուցված է և իրենք ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ որևէ պահանջ չունեն (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 14-րդ կետում նշված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում պաշտպանի բողոքում առկա պնդումն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Պետրոսյանի կողմից կատարված հանցագործության արդյունքում տուժողներին պատճառված նյութական վնասը հատուցվել է ամբողջությամբ: Նշված հանգամանքը Պ.Բայրամյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման իմաստով իրական է, այսինքն՝ հաստատված է գործով ձեռք բերված ապացույցներով:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոգրյալը, իր դատական ակտում հաստատված է համարել այն, որ պատճառված գույքային վնասը հատուցվել է մասնակիորեն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), այսինքն՝ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, որը կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

II. Ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանն արդյոք պահպանե՞լ է արդարության և պատասխանատվության անհատականացման քրեադատավարական սկզբունքները:

17. Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր և պատասխանատու բաղադրամասերից է, ուստի օրենսդրի կողմից մեծապես կարևորվում է յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելիս քրեաիրավական նորմերով ամրագրված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքների պահպանումը:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...):»:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակի և չափի որոշման ժամանակ հաշվի առնվող հանգամանքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ.Մաղաթյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ «Արարքի հանրային

վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Մադաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

20. Անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-124/07, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09 և այլ որոշումներում:

Մասնավորապես, *Գ. Հովհաննիսյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս Գավիթ Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը):

Թ. Տեր-Գրիգորյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս

պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

21. Հիմք ընդունելով սույն որոշման 17-20-րդ կետերում վկայակոչված օրենսդրական կարգավորումները և դրանց հիման վրա Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարված հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքն ընդգրկված է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, ուստի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար էական նշանակություն ունի պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքը:

Գործի տվյալներով հիմնավորված է, որ Գ.Պետրոսյանն ամբողջությամբ կանոնադրաբար հատուցել է տուժողներին հանցագործությամբ պատճառված գույքային վնասը (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը), ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը:

23. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը Գ.Պետրոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել ինչպես այն, որ Գ.Պետրոսյանի հանցանքն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ հանցանքի արդյունքում տուժել են 12 քաղաքացիներ, այնպես էլ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ բնութագրվում է դրական, նախ-

կինում դատված ու արատավորված չի եղել: Որպես ամբաստանյալ Գ.Պետրոսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ վերջինիս խնամքին է գտնվում հաշմանդամ մայրը: Գ.Պետրոսյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

24. Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հաշվի առնելով Գ.Պետրոսյանին վերագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ այն, որ նրա հանցավոր գործողությունների հետևանքով տուժել են 12 քաղաքացիներ, հանգել է հետևության, որ պատժի տեսակի և չափի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր են, և գործով բավարար հիմքեր չկան ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելու համար (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

25. Փաստորեն, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունն արդյոք համապատասխանում է գործի փաստական հանգամանքներին ու պատժի արդարացիության քրեաիրավական սկզբունքին:

Այս առումով հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել ամբաստանյալ Գ.Պետրոսյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանին՝ հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունների վերաբերյալ գործի նյութերում առկա ապացույցները գնահատելու տեսանկյունից, որի արդյունքում հանգել է հանցագործությամբ պատճառված վնասը մասնակի հատուցված լինելու մասին՝ գործի նյութերից չբխող հետևության (տե՛ս սույն որոշման 14-15-րդ կետերը):

26. Այսպիսով՝ ամբաստանյալ Գ.Պետրոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռի վերանայման ընթացքում Վերաքննիչ դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել սույն որոշման 22-րդ և 23-րդ կետերում նշված հանգամանքները, ինչի արդյունքում նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցով կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշում:

III. Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի սկիզբը դատավճիռն ի կատար ածելու պահից հաշվելու իրավաչափությունը

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի որո-

շումը ամբաստանյալ Գ. Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի սկիզբը դատավճիռն ի կատար ածելու պահից հաշվելու մասին:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրվման (...) ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի համաձայն՝

«Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի համաձայն՝

«1. Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել (...):»:

2. Օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 428-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Դատարանի որոշումը կատարելու մասին դատավորի կարգադրությունը, որոշման պատճենի հետ, իսկ վերաքննության կարգով որոշման փոփոխման դեպքում՝ նաև վերաքննիչ դատարանի որոշման պատճենի հետ, ուղարկվում է այն անձանց կամ մարմնին, որոնց վրա դրված է դատարանի որոշումն ի կատար ածելու պարտականությունը:

(...)

3. Դատական որոշումն ի կատար ածող մարմինները դատական որոշումը կայացրած դատարանին անհապաղ հաղորդում են այն ի կատար ածելու մասին: Զրեական պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմը պետք է դատական որոշումը կայացրած դատարանին և դատապարտյալի ընտանիքին հայտնի դատապարտյալի կողմից պատիժը կրելու վայրի, նրան տեղափոխելու և ազատելու մասին:

(...):»:

29. Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը հանձնվում է կատարման միայն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Ընդ որում՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում, համապատասխանաբար, վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման համար սահմանված ժամկետներն անցնելուց հետո, եթե դրանք բողոքարկված չեն եղել, իսկ վճռաբեկ դատարանի դատական ակտը՝

հրապարակման պահից: Այն դեպքում, երբ դատական ակտը բողոքարկվել է, այն օրինական ուժի մեջ չի մտնում և կատարման չի հանձնվում:

30. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի նշանակումը և դատական որոշումների կատարումն իրենցից ներկայացնում են տարբեր իրավական ինստիտուտներ: Այսպես, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները և կարգը սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով, իսկ դատական ակտերի կատարման կանոնները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Միևնույն ժամանակ, նշանակված պատժի ժամկետի սկիզբը որոշելը պատիժ նշանակելու կարևոր տարրերից մեկն է, քանի որ այն ճիշտ չորոշելու հետևանքով կարող են վրա հասնել դատապարտյալի համար անբարենպաստ և նրա վիճակը վատթարացնող իրավական հետևանքներ:

31. Սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճռի եզրափակիչ մասի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը փոխվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Առաջին ատյանի դատարանը որոշել է Գ.Պետրոսյանի պատժի սկիզբը հաշվել դատավճիռն ի կատար ածելու պահից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Ամբաստանյալ Գ.Պետրոսյանը կալանքի է վերցվել դատական նիստի դահլիճում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտել, քանի որ այն բողոքարկվել է վերաքննության կարգով, իսկ այնուհետև նաև՝ վճռաբեկության կարգով:

32. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձի՝ կալանքի տակ գտնված ժամանակահատվածն ամբողջությամբ հաշվակցվում է ազատագրկման ժամկետի մեջ: Մինչդեռ, Գ.Պետրոսյանին կալանքի վերցնելով դատական նիստի դահլիճում, Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատժի սկիզբը հաշվվել է դատավճիռն ի կատար ածելու պահից, ըստ էության անտեսելով այն ողջ ժամանակահատվածը, որը Գ.Պետրոսյանը պետք է անցկացնի կալանքի տակ մինչև դատավճռի օրինական ուժ ստանալը, իսկ այնուհետև նաև՝ այն ի կատար ածելու պահը:

Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում մնան մոտեցումը, քանի որ դրա արդյունքում ամբաստանյալ Գ.Պետրոսյանի համար վրա կհասնեն նրա վիճակը վատթարացնող իրավական հետևանքներ, այն է՝ մինչև Առաջին ատյանի դատարանի դատավճռի ի կատար ածելու պահը Գ.Պետրոսյանի կալանքի տակ գտնված ժամկետը չի հաշվակցվի նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժի ժամկետի մեջ, այսինքն՝ տեղի կունենա ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտում:

33. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Պետրոսյանին դատական նիստի դահլիճում կալանքի վերցնելով հանդերձ նրա նկատմամբ նշանակված պատժի սկիզբը դատա-

վճիռն ի կատար ածելու պահից հաշվելով, Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների ակնհայտ և կոպիտ խախտում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, որևէ իրավական գնահատական չի տվել Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի վերոգրյալ խախտմանը:

34. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են ամբաստանյալ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի սկիզբը ճիշտ հաշվելու, ինչպես նաև նշանակված պատժի լրելու կապակցությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում:

Միևնույն ժամանակ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Գ.Պետրոսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել՝ գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, ինչը պայմանավորված է վերոհիշյալ հանգամանքների պատշաճ քննարկման և գնահատման անհրաժեշտությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացվելիության ապահովման, ինչպես նաև՝ Գ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի սկիզբը որոշելու տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գրիգոր Վարազդատի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԿԴ/0282/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0282/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ **Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ տուժող՝ **Ն.ՄՈՎՍԻՍՅԱՆԻ**

2011 թվականի փետրվարի 24-ին **ք. Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մարատ Արամայիսի և Կարեն Կառլենի Սարգսյանների վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշման դեմ դիմող Վարդան Օհանյանի, դիմող Կարեն Միրզոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանի և տուժող Նվեր Մովսիսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի մարտի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13114309 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Մարատ Արամայիսի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ նույն թվականի մայիսի 5-ի որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2009 թվականի մայիսի 20-ին Մ.Սարգսյանը հայտնաբերվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Մ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը մի քանի անգամ փոփոխվել է, և վերջնական արդյունքում նախաքննության մարմնի 2009 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 200-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 38-325-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Կարեն Կառլենի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի նոյեմբերի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճռով ամբաստանյալ Մարատ Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 200-րդ հոդվածի 1-ին մասով, 38-325-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 26.300.000 (քսանվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամից, ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-

ին մասով՝ տուգանքի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Մ.Սարգսյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 11 (տասնմեկ) տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 26.300.000 (քսանվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամից և տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Ամբաստանյալ Կարեն Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Քաղաքացիական հայցվոր «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության հայցը բավարարվել է՝ ամբաստանյալ Մ.Սարգսյանից հօգուտ տուժող «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի բռնագանձվել է 17.333.393 (տասնյոթ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում: Քաղաքացիական հայցվոր Ն.Նավոյանի քաղաքացիական հայցը բավարարվել է և ամբաստանյալ Մ.Սարգսյանից հօգուտ տուժող Ն.Նավոյանի բռնագանձվել է 2500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում: Քաղաքացիական հայցվոր Ն.Մովսիսյանի և Մ.Վարոսյանի քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:

2009 թվականի մայիսի 19-ի, մայիսի 21-ի, մայիսի 27-ի և հոկտեմբերի 9-ի որոշումներով «Տոյոտա Լենդ Կրուիզեր» մակնիշի 15 UL 637 պետհամարանիշի ավտոմեքենայի, «Մերսեդես-Բենց Էմ Էլ 55 Էյ Էմ Ջի (ML 55 AMG)» մակնիշի 15 SL 166 պետհամարանիշի ավտոմեքենայի, «Տոյոտա Քամրի 2.4 Ջի Էյ Էս (GAS)» մակնիշի ավտոմեքենայի, «Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350» մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա դրված կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 2009 թվականի օգոստոսի 1-ի, 2009 թվականի հոկտեմբերի 2-ի և 2009 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումներով իրեն են ապացույց ճանաչված «Տոյոտա Լենդ Կրուիզեր» մակնիշի 15 UL 637 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության տիրապետմանը, «Մերսեդես Բենց Էմ Էլ 55 Էյ Էմ Ջի (ML 55 AMG)» մակնիշի 15 UL 166 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնվել է այդ ավտոմեքենայի սեփականատեր Գրիգոր Ավետիսյանին, «Տոյոտա Քամրի 2.4 Ջի Էյ Էս (GAS)» մակնիշի ավտոմեքենան հանձնվել է «Յունիբանկ» ՓԲ ընկերության տիրապետմանը, «Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350» մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնվել է այդ ավտոմեքենայի սեփականատեր Արմեն Թոռչյանին:

3. Ամբաստանյալներ Մարատ և Կարեն Սարգսյանների, ամբաստանյալ Կ.Սարգսյանի պաշտպան Ի.Հակոբյանի, դիմող Վարդան Օհանյանի ներկայացուցիչ Տ.Փոլադյանի, վկա Ջատուր Արամյանի ներկայացուցիչ Ն.Բարսեղյանի և դիմող Կարեն Սիրգոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ վկա Ջ.Արամյանի ներկայացուցիչ Ն.Բարսեղյանի վերաքննիչ բողոքը բավարարել է, իրեղեն ապացույց ճանաչված «Մերսեդես Բենց Էմ Էլ 55 Էյ Էմ Ջի (ML 55 AMG)» մակնիշի 15 ՍԼ 166 պետհամարանիշի ավտոմեքենան սեփականատեր Գրիգոր Ավետիսյանին հանձնելու մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճիռը և այդ մասով գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության, իսկ ամբաստանյալների, պաշտպանի, դիմող Վ.Օհանյանի ներկայացուցիչ Տ.Փոլադյանի և դիմող Կ.Սիրգոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանի վերաքննիչ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճիռը մնացած մասերով թողնելով անփոփոխ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել տուժող Ն.Մովսիսյանը (այսուհետև՝ նաև առաջին բողոքաբեր), դիմող Կ.Սիրգոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանը (այսուհետև՝ նաև երկրորդ բողոքաբեր) և դիմող Վ.Օհանյանը (այսուհետև՝ նաև երրորդ բողոքաբեր), որոնք Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Մ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ չարաշահելով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի վստահությունը՝ պատրաստել է կեղծ տեղեկանք այն մասին, որ աշխատում է Լ.Գ.Հ Ստեփանակերտ քաղաքի «Ծիածան» ԱԶ-ում՝ որպես փոխտնօրեն՝ ստանում 450.000 ՀՀ դրամ աշխատավարձ, որը 2008 թվականի հոկտեմբերի 18-ին ներկայացրել է Երևանի Պուշկինի 21/1 հասցեում գտնվող, նույն բանկի «Կենտրոն» մասնաճյուղին: Վերոնշյալ տեղեկանքի հիման վրա Մ.Սարգսյանը 2008 թվականի հոկտեմբերի 18-ին կնքել է թիվ ԵԱՎ 0737 սպառողական վարկային պայմանագիրը, այնուհետև «Տոյոտա Լանդ Կրաուզեր» մակնիշի 05 ՍԼ 550 պ/հ ավտոմեքենան քաղաքացի Վարդան Ջհանգիրյանից գնելու նպատակով ստացել 7.800.000 ՀՀ դրամ՝ 36 ամիս մարման ժամկետով, որի դիմաց՝ որպես նյութական երաշխիք գրավադրել է իր «Տոյոտա Լենդ Կրուիզեր» մակնիշի 05 ՍԼ 550 պետհամարանիշի ավտոմեքենան: Չկատարելով նշված պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, չվճարելով գումարները՝ Մ.Սարգսյանը բանկում գրա-

վաղրված, իր անվամբ հաշվառված 22 OS 033 պետհամարանիշի ավտոմեքենան 2009 թվականի մարտի 26-ին հանել է հաշվառումից, նույն օրը 11.000.000 ՀՀ դրամով վաճառել է քաղաքացի Վարդան Օհանյանին՝ խաբեությամբ տիրացել է բանկին պատկանող, առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 7.800.000 ՀՀ դրամին:

Այնուհետև Մ.Սարգսյանը «Տոյոտա Լենդ Կրուիզեր» մակնիշի 22 OS 033 պետհամարանիշի ավտոմեքենան հաշվառումից հանելու նպատակով «Արդշինին-վեստրանկ» ՓԲԸ-ի Կենտրոն մասնաճյուղի ռեկվիզիտներով պատրաստել է կեղծ տեղեկանք այն մասին, որ նշված ավտոմեքենան բանկում արգելանքի տակ չի գտնվում, և այն 2008 թվականի մարտի 26-ին ներկայացրել է ԼՂՀ-ի ՃՈ վարչության հաշվառման քննչական բաժին:

Բացի այդ, Մ.Սարգսյանը 2008 թվականի ապրիլ ամսին իր ծանոթ Նաիրա Նավոյանի պարանոցից և ձեռքից բացահայտ հափշտակել է խոշոր չափերի հասնող ընդհանուր 772.500 ՀՀ դրամին համարժեք 2.500 ԱՄՆ դոլար արժողությամբ 1 հատ ոսկյա շղթա՝ կարիճ տեսակի կազմազարդով, և մեկ հատ ոսկյա ապարանջան:

Այնուհետև Մ.Սարգսյանը, կրկին ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու նպատակով չարաշահելով «Յունիբանկ» ՓԲԸ-ի Ամիրյան մասնաճյուղի վստահությունը, իր բարեկամ Կարեն Սարգսյանի անունով վարկ ձևակերպելու պատրվակով բանկ է ներկայացրել կեղծ տեղեկանքներ այն մասին, որ Կ.Սարգսյանն աշխատում է «Արսեն Պետրոսյան» ԱԶ-ում որպես օպերատոր՝ ամսական ստանում է 320.000 ՀՀ դրամ աշխատավարձ՝ որպես փոխտնօրեն՝ ամսական 420.000 ՀՀ դրամ աշխատավարձ: Ստանալով 7.400.000 ՀՀ դրամի վարկ՝ գնել է 2007 թվականի արտադրության «Տոյոտա Քենրի 2.4 Ջի Էյ Էս GAS» մակնիշի 10 ԼՍ 439 պ/հ ավտոմեքենա: 2009 թվականի մայիսի 29-ին ԼՂՀ ճանապարհային ոստիկանության հաշվառման քննչական բաժնից ստացված կեղծ ժամանակավոր հաշվառման վկայագիրն օգտագործելով՝ Մ.Սարգսյանը վերոնշյալ մեքենան 2009 թվականի հունիսի 4-ին վաճառել է Վ.Օհանյանին՝ խաբեությամբ տիրացել «Յունիբանկ» ՓԲԸ-ի՝ առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 7.400.000 ՀՀ դրամին:

Բացի այդ, Մ.Սարգսյանը «Յունիբանկ» ՓԲԸ-ի Ամիրյան մասնաճյուղում Կ.Սարգսյանի անվամբ վարկ ստանալու համար բանկի պահանջով Կ.Սարգսյանի անվամբ աշխատանքի մասին տեղեկանքներ ներկայացնելու նպատակով 2009 թվականի մայիսի 20-ին դիմել է Արսեն Պետրոսյանին: Վերջինս չի մերժել Մ.Սարգսյանի խնդրանքը: Մ.Սարգսյանը դրդել է Արսեն Պետրոսյանին պատրաստել տեղեկանքներ այն մասին, որ Կ.Սարգսյանն աշխատում է «Արսեն Պետրոսյան» ԱԶ-ում որպես օպերատոր և ամսական ստանում է 320.000 ՀՀ դրամ աշխատավարձ և որպես փոխտնօրեն՝ ամսական 420.000 ՀՀ դրամ աշխատավարձ, որոնք Մ.Սարգսյանը ներկայացրել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի Ամիրյան մասնաճյուղ:

Մ.Սարգսյանը «Յունիբանկ» ՓԲԸ-ի Ամիրյան մասնաճյուղից 7.400.000 ՀՀ դրամի վարկ ստանալուց երկու օր անց նույն մասնաճյուղի վարկային բաժնի պետ Բենիամին Սեյրանյանին իր տուն՝ Աբովյան քաղաք ուղեկցելիս Կ.Սարգսյանի

ներկայությամբ 740.000 ՀՀ դրամի չափով կաշառք է տվել՝ Կ.Սարգսյանի օգտին գործողություններ կատարելու համար:

Այնուհետև Մ.Սարգսյանը «Տոյոտա Քենրի 2.4 GAS» մակնիշի 14 ՍԼ 437 պետհամարանիշի ավտոմեքենան հաշվառումից հանելու նպատակով «Յունիքանկ» ՓԲԸ-ի Ամիրյան մասնաճյուղի ռեկվիզիտներով 2008 թվականի հունիսի 2-ին թիվ 297 թվագրմամբ պատրաստել է կեղծ գրություն այն մասին, որ նշված ավտոմեքենան բանկում արգելանքի տակ չի գտնվում, և այն 2008 թվականի հունիսի 3-ին ներկայացրել է ԼՂՀ-ի ՃՈ վարչության հաշվառման քննչական բաժին:

Բացի այդ, Մ.Սարգսյանը, կրկին ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու դիտավորությամբ չարաշահելով Մուշեղ Վարոսյանի վստահությունը, հանդես գալով որպես միջնորդ՝ 2008 թվականի օգոստոսի 16-ին վերջինիս պատկանող՝ Երևան քաղաքի Տիչինայի 1/10 տունը 12.000.000 ՀՀ դրամով Մասիսի շրջանի Դուկասավան գյուղի բնակիչ Հակոբ Շամոյանին վաճառելու պատրվակով, Հ.Շամոյանի և Մ.Վարոսյանի միջև առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո մի քանի օր անց՝ 2008 թվականի օգոստոսի 16-ին, Հ.Շամոյանից վերցրել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 11.449.400 ՀՀ դրամին համարժեք 38.000 ԱՄՆ դոլար և տիրացել այդ գումարին:

Մ.Սարգսյանը, կրկին չարաշահելով Մ.Վարոսյանի վստահությունը, ավտոմեքենան վերանորոգելու պատրվակով 2008 թվականի օգոստոսի 16-ին 2 օր ժամանակով նրանից վերցրել է առանձնապես խոշոր չափերի հասնող 3.010.000 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար և խաբեությամբ տիրացել այդ գումարին:

Բացի այդ, Մ.Սարգսյանը, կրկին ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու դիտավորությամբ չարաշահելով Գրիգոր Ավետիսյանի վստահությունը, վերջինիս անունով ձևակերպված՝ իր փեսա Նվեր Մովսիսյանին պատկանող Մերսեդես-Բենց ML 55 AMG 15 SL 166 պետհամարանիշի ավտոմեքենան իբր բանկում գրավ դնելու՝ վարկ ստանալու պատրվակով, 2009 թվականի մարտի 9-ին Գ.Ավետիսյանի հետ կնքել է առուվաճառքի պայմանագիր, խաբեությամբ տիրացել է առանձնապես խոշոր չափերի հասնող 8.395.000 ՀՀ դրամին համարժեք 23.000 ԱՄՆ դոլար արժողությամբ հիշյալ ավտոմեքենային, որից հետո այն վաճառել ԼՂՀ բնակիչ Ջատր Արամյանին:

Այնուհետև Մ.Սարգսյանն իրեն պատկանող սպիտակ գույնի Նիվա մակնիշի 05 ՕՕ 045 պետհամարանիշի ավտոմեքենան 2009 թվականի մայիսի 4-ի առուվաճառքի պայմանագրով փոխանցել է Ալիկ Լևոնյանին և նույն օրը, առանց հափշտակելու նպատակի, ապօրինաբար տիրացել այդ ավտոմեքենային՝ Ա.Լևոնյանին հրել և դուրս է գցել մեքենայից ու վարելով այն՝ հեռացել:

Բացի այդ, Մ.Սարգսյանը, ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու նպատակով, Ա.Լևոնյանին պատկանող սպիտակ գույնի Նիվա մակնիշի 05 ՕՕ 045 պետհամարանիշի ավտոմեքենան 2009 թվականի մայիսի 4-ն ապօրինաբար տիրապետելու ընթացքում ավտոմեքենայի շարժիչի մեջ ավազ է լցրել, որի հետևանքով

Ա.Լևոնյանին հասցրել է զգալի չափերի հասնող՝ 155.000 ՀՀ դրամի վնաս:

Այնուհետև Մ.Սարգսյանը, գտնվելով կալանքի տակ, կրկին ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու դիտավորությամբ, չարաշահելով Արմեն Թոռչյանի վստահությունը, վերջինիս պատկանող Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350 մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենան իբր բանկում գրավ դնելու՝ վարկ ստանալու պատրվակով 2009 թվականի հուլիսի 28-ին հանձնարարել է Կ.Սարգսյանին իր փոխարեն Ա.Թոռչյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր՝ փորձել է խաբեությամբ տիրանալ առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 13.870.000 ՀՀ դրամին համարժեք 38.000 ԱՄՆ դոլար արժողությամբ հիշյալ ավտոմեքենային, սակայն արարքն ավարտին չի հասցվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ նշված ավտոմեքենան հաշվառումից հանելու պահին Կ.Սարգսյանը ձերբակալվել է:

6. Կ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա, 2009 թվականի հուլիս ամսվա վերջին համաձայնության գալով կալանքի տակ գտնվող Մ.Սարգսյանի հետ, օժանդակել է վերջինիս կողմից խարդախությամբ, Ա.Թոռչյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 13.870.000 ՀՀ դրամին համարժեք 38.000 ԱՄՆ դոլար արժողությամբ Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350 մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենան հափշտակելու հանցագործությանը: Կ.Սարգսյանը Մ.Սարգսյանին օժանդակելու վերաբերյալ պայմանավորվածության համաձայն՝ հանդիպել է Ա.Թոռչյանին և խաբեությամբ Մ.Սարգսյանին ներկայացրել է որպես գործունյա, պարտաճանաչ անձնավորություն: Մ.Սարգսյանի հանձնարարությամբ, չարաշահելով Ա.Թոռչյանի վստահությունը վերջինիս պատկանող Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350 մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենան բանկում գրավ դնելու և վարկ ստանալու պատրվակով 2009 թվականի հուլիսի 28-ին Մ.Սարգսյանի փոխարեն Ա.Թոռչյանի հետ կնքել է առուվաճառքի պայմանագիր, որից հետո մեկնել է ԼՂՀ նշված ավտոմեքենան հաշվառումից հանելու և Կ.Միրզոյանին վաճառելու նպատակով, սակայն արարքն ավարտին չի հասցվել իր և Մ.Սարգսյանի կամքից անկախ հանգամանքներով, քանի որ խաբեությունը բացահայտվելու պատճառով նշված ավտոմեքենան հաշվառումից հանելու պահին Կ.Սարգսյանը բերման է ենթարկվել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության բաժին:

7. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Քննարկելով քաղաքացիական հայցվոր Նվեր Մովսիսյանի քաղաքացիական հայցը և հաշվի առնելով, որ հայցվոր կողմը խնդրել է չքննել հայցը՝ հետագայում քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նպատակով, դատարանը գտնում է, որ հայցը պետք է թողնել առանց քննության» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, էջ 229):

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Վարդան Օհանյանը, նրա ներկայացուցիչ Տ.Փոլադյանը, Կարեն Միրզոյանը և նրա ներկայացուցիչ Վ.Քոսյանը դատավարության մասնակից և ներ-

կայացուցիչ ճանաչելու մասին պահանջով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական վարույթն իրականացնող մարմնին չեն դիմել, քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում չի կայացրել նրանց դատավարության մասնակից և ներկայացուցիչ ճանաչելու մասին, ուստի սույն գործով վերջիններս դատավարության մասնակից չեն հանդիսանում, հետևաբար՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը նրանց բողոքների շրջանակներում նշված պատճառաբանությունները հիմք չեն կարող ծառայել նրանց պահանջները բավարարելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 246):

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ բավարարելով վկա Ջատուր Արամյանի ներկայացուցիչ Նվեր Բարսեղյանի վերաքննիչ բողոքը, այն պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանն անդրադառնալով Ջատուր Արամյանի ներկայացուցիչ Նվեր Բարսեղյանի վերաքննիչ բողոքին, արձանագրում է, որ վերջինիս կողմից պատշաճ կարգով ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել դիմում՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի մասին, սակայն ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, քննության չի առնվել ներկայացված միջնորդությունը: Ընդհանուր իրավասության դատարանի կողմից վերոհիշյալ միջնորդությունը քննության չառնելով՝ խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 246):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբեր, տուժող Ն.Մովսիսյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի պահանջը: Մասնավորապես, առաջին բողոքաբերը նշել է, որ վեճի առարկա հանդիսացող ավտոմեքենայի վերաբերյալ ստորադաս դատարաններում սույն քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայց հարուցված չի եղել, իսկ Ջատուր Արամյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով իրեն քաղաքացիական հայցվոր ճանաչելու պահանջ դատարանին չի ներկայացրել, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով քաղաքացիական հայց չի ներկայացրել: Վերոշարադրյալից առաջին բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Ջ.Արամյանը քրեական գործի քննության ընթացքում չի օգտվել իր՝ վերը նշված դատավարական իրավունքից, հետևաբար անհիմն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները պահպանված չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պնդումը: Առաջին բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ

հողվածը, որը կիրառվել էր ստորադաս դատարանի կողմից:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ առաջին բողոքաբերը խնդրել է մասնակիորեն՝ Չ.Արամյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճիռն:

12. Բողոքաբեր Կ.Միրզոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի, 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 158-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի և 164-րդ հոդվածի պահանջները, ինչի արդյունքում անտեսել է Կ.Միրզոյանին գործով տուժող ճանաչելու մասին դիմումը:

Երկրորդ բողոքաբերի պնդմամբ, ստորադաս դատարանները չեն կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի, 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, 155-րդ հոդվածի 2-րդ մասի և 358-րդ հոդվածի պահանջները, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները: Ի հիմնավորումն իր փաստարկի՝ երկրորդ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են օրենքի պահանջների խախտմամբ, դատարանները չեն հիմնվել դատաքննությամբ հետազոտված ապացույցների վրա և չեն պատճառաբանել դատավճիռն ու որոշումը:

13. Ելնելով վերոգրյալից՝ Կ.Միրզոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանը խնդրել է մասնակիորեն՝ իրենց վերաքննիչ բողոքը մերժելու մասով բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը և «Մերսեդես-Բենց» մակնիշի 20 LL 014 պետհամարանիշի ավտոմեքենան վերադարձնել օրինական տիրոջը՝ Կ.Միրզոյանին:

14. Բողոքաբեր Վ.Օհանյանն իր վճռաբեկ բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի պահանջները: Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանն իր բողոքի մասով չի իրականացրել դատավարական նորմերի պահպանման խնդրի ստուգում, այլ եզրահանգել է, որ Վ.Օհանյանի բողոքները չեն կարող հիմք հանդիսանալ նրա պահանջները բավարարելու համար, քանի որ վերջինս Առաջին ատյանի դատարանում չի եղել դատավարության մասնակից:

Ըստ երրորդ բողոքաբերի՝ խախտվել են նաև ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի պահանջները:

15. Վերոգրյալի հիման վրա՝ դիմող Վ.Օհանյանը խնդրել է մասնակիորեն փո-

փոխել ստորադաս դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճիռը և իր սեփականությունը հանդիսացող՝ «Տոյոտա Քամրի 2.4 ՋԻ Էյ ԷՍ» մակնիշի 14 ՍԼ 437 պետհամարանիշի ավտոմեքենան հանձնել իր տիրապետմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Քրեական դատավարության մասնակից շահողիսացող անձի կողմից բողոք քերելու իրավունքը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասո՞ւ էր արդյոք Վ.Օհանյանի և Կ.Միրզոյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքները մերժել այն պատճառաբանությամբ, որ վերջիններս դատավարության մասնակից չեն հանդիսանում:

17. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև (...) հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է նաև դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե

անձը գրկված է դատարանի մատչելիության իրավունքից, ուրեմն իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս *Golder v. The United Kingdom*, 1975թ. փետրվարի 21, գանգատ թիվ 4451/70, 28 և 36 կետեր):

Էյրիս ընդդեմ Իռլանդիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուղղված է ոչ թե նրան, որ երաշխավորի տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ որ երաշխավորի կենսագործելի ու արդյունավետ իրավունքներ: Մասնավորապես դա վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով այն կարևոր տեղը, որը ժողովրդավարական հասարակությունում ունի արդար դատաքննության իրավունքը (տե՛ս *Airey v. Ireland*, 1979թ. հոկտեմբերի 9, գանգատ թիվ 6289/73, կետ 24):

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է [Եվրոպական] Դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումներն անձին վերապահված դիմելու իրավունքն այնպես չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*Hirschhorn v. Romania*, 2007թ. հուլիսի 26, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

19. Վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ դատական պաշտպանության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնա-

րար իրավունք է:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ «Գատավարության մասնակիցներ են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմիններին իր խախտված իրավունքների պաշտպանության համար համարվում է դիմող»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Քաղաքացիական հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև տվյալ գործով կողմեր չհանդիսացող անձինք, եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին (...)»:

21. Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հնարավորություն է տալիս նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձին մասնակցել քրեադատավարական իրավահարաբերություններին, եթե վերջիններս առնչվում են այդ անձի իրավունքներին և օրինական շահերին (mutatis mutandis, տե՛ս Ստեփան Սահակյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԳ-0059/11/10 որոշումը):

22. Սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն իրավունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները:

23. Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճռաբեկ դատարանն անձանագրում է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական

հնարավորություն ունենա:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Վ.Օհանյանի ներկայացուցիչ Տ.Փոլադյանի և Կ.Սիրզոյանի ներկայացուցիչ Վ.Քոսյանի վերաքննիչ բողոքները մերժել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս դատավարության մասնակից և ներկայացուցիչ ճանաչելու մասին պահանջով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական վարույթն իրականացնող մարմնին չեն դիմել, քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում չի կայացրել նրանց դատավարության մասնակից և ներկայացուցիչ ճանաչելու մասին, ուստի սույն գործով վերջիններս դատավարության մասնակից չեն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Սեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը մերժել է դատավարության մասնակից չհանդիսացող անձի կողմից ներկայացված բողոքը:

25. Սույն որոշման 17-23 կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 24-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Վ.Օհանյանը և Կ.Սիրզոյանը սույն գործով չեն հանդիսացել դատավարության մասնակիցներ, սակայն Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռն առնչվել է նրանց իրավունքներին և օրինական շահերին, մասնավորապես՝ սեփականության իրավունքին:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Վ.Օհանյանի և Կ.Սիրզոյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքները մերժել այն պատճառաբանությամբ, որ վերջիններս դատավարության մասնակից չեն:

II. Իրեղեն ապացույցների տնօրինումը քրեական դատավարությունում

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանն իրավասո՞ւ էր արդյոք իրեղեն ապացույցների տնօրինման հարցը լուծել քրեական դատավարության ընթացակարգով՝ այն դեպքում, երբ դրանց վերաբերյալ առկա էր վեճ:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝

(...)

3. Դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ»:

28. Նախորդ կետում մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է հանցագործության գույքային հետևանքները վերացնելու տարբեր իրավական մեխանիզմներ, մասնավորապես՝

1) իրեղեն ապացույցները՝ դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին վերադարձնելը կամ քրեադատավարական ռեստիտուցիան: Ընդ որում, սա հանդիսանում է հանցագործության ուղղակի հետևանք, ուստի դատարանի կողմից իրեղեն ապացույցի մասով որոշումը կայացվում է հանրայնության կարգով, ի պաշտոն (ex officio)՝ առանց որևէ մեկի պահանջի կամ դիմումի: Տվյալ մեխանիզմը վերաբերում է *status quo* գույքային դրությունը վերականգնելուն՝ պայմանով, որ տվյալ գույքի պատկանելության վերաբերյալ վեճ չկա:

2) քաղաքացիական հայցի միջոցով քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված գույքային վնասների հատուցման ինստիտուտը, որի դեպքում հայցի հարուցումը պարտադիր է, սակայն բացառիկ դեպքերում, երբ քաղաքացին զրկված է իր գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից, դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության գույքային հետևանքները վերացնելուն ուղղված վերոնշյալ դատավարական ինստիտուտները փոխկապակցված դատավարական մեխանիզմներ են և լրացնում են մեկը մյուսին: Կոնկրետ հանցագործության հանգամանքներով պայմանավորված՝ վերոնշյալ մեխանիզմներից մեկի կիրառումը կանխորոշում է մյուսի կիրառումը: Մասնավորապես, եթե հանցագործության հետևանքով գույքային վնաս է պատճառվել երկու և ավելի անձանց, սակայն պարզ չէ, թե նրանցից որ մեկին է վնասը պատճառվել բնեղենով և որն ունի պատճառված գույքային վնասը հատուցելու պահանջի իրավունք, ապա անհրաժեշտ է այդ կապակցությամբ բազմակողմանի քննություն իրականացնել, ինչպես հայցի, այնպես էլ իրեղեն ապացույցների տնօրինման մասով օրինական և հիմնավորված որոշում կայացնելու համար:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե գործին որպես իրեղեն ապացույց կցված առարկայի նկատմամբ իրավունքի մասին վեճը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, տվյալ առարկան պահվում է մինչև քաղաքացիական գործով վճիռն ուժի մեջ մտնելը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի

116-րդ հոդվածի իրավական արժեքն այն է, որ քրեական վարույթի ընթացքում չլուծվեն անձանց սեփականության իրավունքին վերաբերող այնպիսի հարցեր, որոնց լուծումը դուրս է քրեական գործի առարկայի շրջանակներից: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ իրեղեն ապացույց ճանաչված առարկայի վերաբերյալ առկա է գույքային վեճ, որը ենթակա է լուծման քաղաքացիական դատավարության կարգով, քրեական գործը քննող դատարանը պետք է այդ գույքային վեճը թողնի առանց քննության, իսկ իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահի քրեական գործում՝ մինչև քաղաքացիական դատավարության կարգով այդ վեճի լուծումը:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է, որ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույցներ ճանաչված «Մերսեդես Բենց Էմ Էլ 55 Էյ Էմ Ջի» մակնիշի 15 ՍԼ 166 պետհամարանիշի ավտոմեքենան պետք է հանձնվի ավտոմեքենայի սեփականատեր Գրիգոր Ավետիսյանին, «Տոյոտա Քամրի 2.4 Ջի Էյ Էս» մակնիշի ավտոմեքենան՝ «Յունիբանկ» ՓԲ ընկերության տիրապետմանը, իսկ «Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս 350» մակնիշի 02 LO 101 պետհամարանիշի ավտոմեքենան՝ ավտոմեքենայի սեփականատեր Արմեն Թոռչյանին (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Մինչդեռ Մարատ և Կարեն Սարգսյանների կատարած հանցագործության հետևանքով վնաս էր պատճառվել ոչ միայն Առաջին ատյանի դատարանի դատավճռում նշված անձանց, այլ նաև այլ անձանց, և սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված ավտոմեքենաների վերաբերյալ վերոնշյալ անձանց միջև առկա էր գույքային վեճ:

31. Սույն որոշման 27-29-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումները համադրելով սույն որոշման 30-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր իրեղեն ապացույցների տնօրինման հարցը լուծել քրեական դատավարության ընթացակարգով այն դեպքում, երբ դրանց վերաբերյալ առկա էր վեճ:

32. Հիմք ընդունելով սույն որոշման 16-31-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ:

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Դատարանների կողմից թույլ տված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով էական են և հիմք են հանդիսանում իրեղեն ապացույցների տնօրինման մասով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատա-

րանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Բեկանումը պայմանավորված է իրեղեն ապացույցների տնօրինման հարցն օրենքի պահանջներին համապատասխան լուծելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՎՃՈՒԱՐԵԿ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՎՃՈՒԱՐԵԿ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Մարատ Արամայիսի Սարգսյանի և Կարեն Կառլենի Սարգսյանի վերաբերյալ քրեական գործով իրեղեն ապացույցներ հանդիսացող՝ «Մերսեդես Բենց Էմ Էլ 55Էյ Էմ Ջի» (ML55 AMG) մակնիշի 15 ՍԼ 166 պետհամարանիշի ավտոմեքենան սեփականատեր Գրիգոր Ավետիսյանին հանձնելու մասով, «Տոյոտա Քամրի 2.4 Ջի Էյ Էս (GAS)» մակնիշի 14 ՍԼ 437 պետհամարանիշի ավտոմեքենան «Յունիքանկ» փակ բաժնետիրական ընկերության տիրապետմանը հանձնելու մասով և «Մերսեդես-Բենց Ջի Էլ Էս (GLS) 350» մակնիշի 02 ԼՕ101 պետհամարանիշի ավտոմեքենան սեփականատեր Արմեն Թոռչյանին հանձնելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 2-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը բեկանել և այդ իրեղեն ապացույցները տնօրինելու մասով գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱԴԴ/0009/11/10
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան

ԵԱԴԴ/0009/11/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմող՝</i>	Հ.ՄԵԼԻՔՆՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ դատախազ Ա.Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2005 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16212105 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և Մերյոժա ու Հռիփսիմե Մելքոնյանների նկատ-

մամբ քրեական հետապնդում չի իրականացվել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու և վերջիններիս մահվան հիմքերով, իսկ Գոհար Մելքոնյանի և Խաչատուր Շահինյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ապացույցների անբավարարության հիմքով:

Վերոհիշյալ որոշումը բողոքարկվել է դիմող Հայկ Մելքոնյանի կողմից: Բողոքարկման արդյունքում Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ Լ.Հովհաննիսյանը 2010 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ նշված բողոքը մերժել է:

Երևան քաղաքի դատախազ Հ.Բադալյանի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ դիմող Հ.Մելքոնյանի բողոքը մերժվել է:

2. 2010 թվականի սեպտեմբերի 30-ին դիմող Հ.Մելքոնյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ դիմող Հ.Մելքոնյանի բողոքը մերժվել է:

3. Դիմող Հ.Մելքոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, այն է՝ բեկանել է դիմող Հ.Մելքոնյանի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը և գործը վերադարձրել նույն դատարան՝ նոր քննության՝ բողոքում բերված հարցերն ըստ էության քննության առնելու և համապատասխան որոշում կայացնելու համար:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Մաթևոսյանը:

2011 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանելով 10-օրյա ժամկետ:

Դատախազ Ա.Մաթևոսյանը 2011 թվականի փետրվարի 8-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ դիմող Հ.Մելքոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դատախազ Ա.Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը կամ կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2010 թվականի օգոստոսի 10-ի որոշումը՝ Գոհար Մելքոնյանի և Խաչատուր Շահինյանի մատվ նախաքննություն կատարելու և համապատասխան որոշում կայացնելու համար:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտը վերնագրել է հետևյալ կերպ. «Քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը քննելու վերաբերյալ որոշում» (տե՛ս նյութեր, էջ 68):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Այսպիսով, դատարանը գտնում է, որ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված Հ.Մելքոնյանի բողոքը՝ 2010 թվականի օգոստոսի 10-ի քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ, ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, 71-72 էջեր):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Ընդհանուր իրավասության դատարանը չնայած որոշում է կայացրել ներկայացված բողոքը քննելու վերաբերյալ, բայց ըստ էության այն քննարկման առարկա չի դարձրել և բողոքը մերժել է՝ ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել բերված բողոքը քննելու վերաբերյալ, բայց էստ էության քննության չի առել, այլ որոշել է այն մերժել՝ ժամկետանց լինելու պատճառով, ինչը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածների պահանջներից» (տե՛ս նյութեր, էջ 97):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշման հետևությունները և հիմնավորումները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ, 263-րդ և 290-րդ հոդվածների պահանջներից:

Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նշված դրույթների իմաստով Առաջին ատյանի դատարանն իրավասու չէ ըստ էության քննության առնել Հ.Մելքոնյանի ժամկետանց բողոքը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա մեկնաբանություններից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը կարող է դուրս գալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային շրջանակներից և քննության առնել ժամկետանց բողոք:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական

հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, իր ակտը վերնագրելով «Քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը քննելու վերաբերյալ որոշում», պարտավոր էր ըստ էության քննության առնել դիմող Հ.Մելքոնյանի բողոքը, այլ ոչ թե ժամկետանց լինելու հիմքով մերժել այն:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին (...): Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրաներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում: (...)»:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...)»:

Մեջբերված դրույթներից բխում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հստակ սահմանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան, այսինքն՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների այն որոշումների և գործողությունների (անգործության) շրջանակը, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով: Բացի այդ, սահմանվում են վերջիններիս բողոքարկման կարգը և այն ժամկետները, որոնց ընթացքում դատավարությանը մասնակցող անձինք կարող են դիմել դատարան՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար:

12. Մույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե՝

ա) բողոքարկված որոշումը կամ գործողությունը (անգործությունը) մտնու՞մ են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայի մեջ,

բ) բողոքաբերի կողմից պահպանվե՞լ են արդյոք այդ որոշման կամ գործողության (անգործության) բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը,

գ) բողոքաբերի կողմից պահպանվե՞լ են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային սահմանները,

դ) բողոքաբերն արդյո՞ք ուներ բողոք բերելու իրավասություն,

ե) առկա՞ է արդյոք բողոքին կցվող նյութերի ցանկը (դատավարական փաստաթղթերի պատճեններ, փորձագետի եզրակացություն, տեղեկանք և այլն),

զ) ստորագրվա՞ծ է արդյոք բողոքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո միայն դատարանը կարող է անդրադառնալ ներկայացված բողոքի հիմքերին, այն է՝ բողոքարկող անձի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթներով հիմնավորված փաստարկներին: Ուստի, եթե դատարանը պարզում է, որ բողոքաբերի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վերոնշյալ պահանջները, ապա,

առանց անդրադառնալու բողոքի հիմքերին, դատարանը պետք է մերժի այն:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը քննիչի որոշման դեմ Հ.Մելքոնյանի բողոքը մերժել է դրա ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը, կայացնելով ներկայացված բողոքը քննելու վերաբերյալ որոշում, ըստ էության այն քննարկման առարկա չի դարձրել և բողոքը մերժել է՝ ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Սույն որոշման 11-12-րդ կետում շարադրված վերլուծությունը համադրելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, իր ակտը վերնագրելով «Քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը քննելու վերաբերյալ որոշում» և պահպանելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային շրջանակները, իրավացիորեն մերժել է այն՝ առանց ըստ էության անդրադառնալու բողոքի հիմքերին:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Իրավական ակտի (...) վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի (...) մեկնաբանման համար»:

15. Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, իր ակտը վերնագրելով «Քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը քննելու վերաբերյալ որոշում», պարտավոր էր ըստ էության քննության առնել դիմող Հ.Մելքոնյանի բողոքը, այլ ոչ թե ժամկետանց լինելու հիմքով մերժել այն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվել է ըստ էության ճիշտ դատական ակտ, որը Վերաքննիչ դատարանի կողմից բեկանվել է միայն ձևական նկատառումներով:

16. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմանը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Հայկ Մելքոնյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը քեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ/0008/11/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԳ/0008/11/10
նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ դիմող Էրիկ Իգորի Եղիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի մայիսի 14-ին Է.Եղիսյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանին՝ Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Ասատրյանի և ոստիկանության Ստեփանավանի քննչական բաժանմունքի պետ Ա.Գալստյանի կողմից իր նկատմամբ հանցավոր գործողություններ կատարելու մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ.Հովակիմյանի 2010 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ Է.Եղիսյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության

պատճառաբանությամբ:

ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանին հասցեագրված՝ 2010 թվականի հուլիսի 27-ի դիմումով Է.Եղիմյանը բացարկ է հայտնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ.Հովակիմյանին:

2010 թվականի օգոստոսի 10-ի գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանը Է.Եղիմյանին հայտնել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի հուլիսի 16-ի որոշումն օրինական է, այն վերացնելու հիմքեր չկան:

2. 2010 թվականի օգոստոսի 23-ին Է.Եղիմյանը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ.Հովակիմյանի 2010 թվականի հուլիսի 16-ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Է.Եղիմյանի բողոքը մերժվել է:

3. Է.Եղիմյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Է.Եղիմյանը:

2010 թվականի դեկտեմբեր 27-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը Է.Եղիմյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը Է.Եղիմյանի բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) բողոքաբերն առանց դատախազին բողոքարկելու դատարան բողոք է ներկայացրել ոչ թե քրեական վարույթն իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործության դեմ, այլ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի 2010 թվականի հուլիսի 16-ի որոշման դեմ, հետևաբար՝ Է.Եղիմյանի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները» (տե՛ս Նյութեր, էջ 57):

6. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ. «(...) Է.Եղիմյանը ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի 16.07.2010թ. որոշումը վերադաս դատախազին իրականում չի բողոքարկել, ինչով անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների դրույթները: (...) ՀՀ գլխավոր դատախազին 27.07.2010թ. հասցեագրված

դիմումի բովանդակությունից հետևում է, որ Է.Եղիմյանը ոչ թե քննիչի 16.07.2010թ. որոշումն է բողոքարկել, այլ ընդհակառակը, քննիչ Գ.Հովակիմյանի նկատմամբ բացարկ է հայտնել (...): Դեռ ավելին, Է.Եղիմյանը նշված օրը չէր էլ կարող բողոքարկել քննիչի որոշումը, քանի որ նյութերում առկա տվյալների համաձայն, քննիչի 16.07.2010թ. որոշման մասին նա իմացել է 2010 թվականի օգոստոսի 18-ին, որից հետո 21.08.2010թ. դիմել է Առաջին ատյանի դատարան: (...) Ինչ վերաբերում է Է.Եղիմյանի 27.07.2010թ. դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 10.08.2010թ. գրությանը, որում նշված է, որ Է.Եղիմյանի դիմումի կապակցությամբ ստուգվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նրա հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը, այն օրինական է և վերացնելու հիմքեր չկան, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քննիչ Գ.Հովակիմյանի 16.07.2010թ. որոշման օրինականությունը ստուգելու կապակցությամբ Է.Եղիմյանը վերադաս դատախազին ընդհանրապես չի դիմել: (...)» (տե՛ս Նյութեր, էջ 133):

7. Ի պատասխան Է.Եղիմյանի՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանին հասցեագրված 2010 թվականի հուլիսի 27-ի դիմումի՝ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանը 2010 թվականի օգոստոսի 10-ի թիվ 33-88-10 գրությամբ Է.Եղիմյանին հայտնել է, որ. «ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր 2010 թվականի հուլիսի 27-ի դիմումի կապակցությամբ ստուգվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում Ձեր հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը: Որոշումն օրինական է և այն վերացնելու հիմքեր չկան» (տե՛ս Նյութեր, էջ 100):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

9. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ, կայացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և քրեադատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Վերաքննիչ դատա-

րանը բողոքի մերժումը պատճառաբանել է այն հանգամանքով, որ դիմողը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության 290-րդ հոդվածի պահանջները՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի բողոքարկել վերադաս դատախազին, սակայն Վերաքննիչ դատարանն անտեսել և քննության առարկա չի դարձրել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի թիվ 33-80-10 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը ստուգված է, այն վերացնելու հիմքեր չկան:

10. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, մանրակրկիտ չքննելով գործի հանգամանքները և չառաջնորդվելով արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով, թույլ է տվել դատական սխալ, որի արդյունքում ոտնահարվել են իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված՝ արդար դատական քննության իրավունքները:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված՞ է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ սույն գործով դիմողը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը՝ այն դեպքում, երբ քննիչի նկատմամբ բացարկյր քննելիս դատախազն ըստ էության անդրադարձել է քննիչի վիճարկվող որոշման օրինականությանը:

13. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև (...) հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և

անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է նաև դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը զրկված է դատարանի մատչելիության իրավունքից, ուրեմն իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ *Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության* վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս *Golder v. The United Kingdom*, 1975թ. փետրվարի 21, զանգատ թիվ 4451/70, 28 և 36 կետեր):

Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուղղված է նրան, որ երաշխավորի ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքներ: Մասնավորապես դա վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով այն կարևոր տեղը, որը ժողովրդավարական հասարակությունում ունի արդար դատաքննության իրավունքը (տե՛ս *Airey v. Ireland*, 1979թ. հոկտեմբերի 9, զանգատ թիվ 6289/73, կետ 24):

Հիրշորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կա-

րող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով, Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է [Եվրոպական] Դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումներն անձին վերապահված դիմելու իրավունքն այնպես չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Hirschhorn v. Romania, 2007թ. հուլիսի 26, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

15. Վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ դատական պաշտպանության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունք է:

16. Զրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով իրացվող դատական պաշտպանության իրավունքի նշանակության և արժեքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Ն.Միսակյանի* գործով որոշման մեջ, որի համաձայն.

«Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և

ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:» (տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԳ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

17. Հիմք ընդունելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այլ ոչ թե պատրանքային, այսինքն՝ անձն իր իրավունքների և ազատությունների, օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների շրջանակներում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Ընդ որում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է բացառապես ձևական բնույթ ունենան, որպեսզի դիմողը հնարավորություն ունենա իրացնել Սահմանադրությամբ ամրագրված՝ հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Բացի այդ, դատարանի մատչելիության սահմանափակումը պետք է օրինական նպատակ հետապնդի, և գործադրված միջոցի (այսինքն՝ սահմանափակման) և սահմանափակմամբ հետապնդված նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանը լիազորված է իր նիստերում քննել և լուծել ստացված գործերը և նյութերը: Արդարադատություն իրականացնելուց հրաժարվելն անթույլատրելի է:

2. Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝

1) (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները: (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան: (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերա-

տիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բողոքը կարող է ներկայացվել (...) այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետ մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

19. Նախորդ կետում նշված դրույթների վերլուծությունից բխում է, որ օրենքով նախատեսված դեպքերում դատարանը լիազորված է քննել և լուծել քննիչի որոշումների և գործողությունների դեմ բողոքները, սակայն դատական պաշտպանության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որպեսզի բավարարվի օրենքով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը: Ընդ որում՝ նշված որոշումների և գործողությունների դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան, եթե տեղեկություն է ստացվել դատախազի կողմից բողոքը մերժելու մասին, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Է.Եղիմյանի՝ իր նկատմամբ կատարված ենթադրյալ հանցագործությունների մասին ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված հաղորդման կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Ի պատասխան Է.Եղիմյանի դիմումի, որով բացարկ էր հայտնվել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչին՝ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանը 2010 թվականի օգոստոսի 10-ի թիվ 33-88-10 գրությամբ Է.Եղիմյանին հայտնել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրինական է և այն վերացնելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Է.Եղիմյանի բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ բողոքաբերը քննիչի որոշումը չի բողոքարկել դատախազին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ Է.Եղիմյանը ոչ թե քննիչի որոշումն է բողոքարկել, այլ ընդհակառակը՝ քննիչին բացարկ է հայտնել, և քննիչի 2010 թվականի հուլիսի 16-ի որոշման օրինականությունը ստուգելու կապակցությամբ նա վերադաս դատախազին ընդհանրապես չի դիմել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ

ստորադաս դատարաններն անտեսել են ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 2010 թվականի օգոստոսի 10-ի թիվ 33-88-10 գրության բովանդակությունը, որով Է.Եղիմյանին հայտնվել է, որ ստուգվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում վերջինիս հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը, այն օրինական է և վերացնելու հիմքեր չկան: Այսինքն, ստորադաս դատական ատյանները դիմող Է.Եղիմյանի բողոքը մերժել են, ըստ էության, բացառապես ձևական նկատառումներով:

21. Սույն որոշման 13-19-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված և պատճառաբանված չեն ստորադաս դատական ատյանների հետևություններն այն մասին, որ սույն գործով դիմողը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը: Անկախ Է.Եղիմյանի դիմումի բովանդակությունից, դատախազի կողմից ըստ էության ստուգվել է քննիչի որոշման օրինականությունը, հետևաբար ստորադաս դատարանների պատճառաբանությունը՝ քննիչի որոշումը դատախազին չբողոքարկելու վերաբերյալ, բացառապես ձևական բնույթ ունի, քանի որ դատախազական հսկողության այն գործառույթը, որը պետք է իրականացվեր քննիչի որոշման բողոքարկման դեպքում, տվյալ պարագայում իրականացվել է բացարկ հայտնելու մասին Է.Եղիմյանի դիմումի քննության արդյունքում:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատական ատյանները, բացառապես ձևական նկատառումներով մերժելով դիմող Է.Եղիմյանի բողոքը, սահմանափակել են վերջինիս՝ արդար դատական քննության և դատարանի մատչելիության իրավունքները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատարանների կողմից Է.Եղիմյանի իրավունքների սահմանափակման ու այդ սահմանափակման նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

22. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատական ատյանները Է.Եղիմյանի դիմումի կապակցությամբ կայացրել են չհիմնավորված որոշում՝ թույլ տալով դատավարական իրավունքի այնպիսի էական խախտում, որն ազդել է Է.Եղիմյանի դիմումի կապակցությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա ստորադաս դատական ատյանների որոշումները րեկանելու հիմք է հանդիսանում:

Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Է.Եղիմյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է րեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ քննիչի 2010 թվականի հուլիսի 16-ի որոշման դեմ դիմող Էրիկ Իգորի Եղինյանի բողոքը մերժելու մասին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0678/06/10
նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան

ԵԿԴ/0678/06/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

2011 թվականի փետրվարի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վահրամ Ռուդիկի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշման դեմ մեղադրյալ Վ.Գևորգյանի պաշտպան Հ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի օգոստոսի 9-ին հարուցվել է թիվ 13139710 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ Վահրամ Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. 2010 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի ՔՎ Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Հ.Մարգարյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Վ.Գևորգյանի նկատմամբ երկու ամիս ժամկետով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը մերժվել է:

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ս.Աբրահամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը և մեղադրյալ Վ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Վ.Գևորգյանի պաշտպան Հ.Հովհաննիսյանը:

2011 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրյալ Վ.Գևորգյանի պաշտպան Հ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վ.Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նախնական համաձայնության գալով Մամիկոն և Յուրի Մարտիրոսյանների հետ, չարաշահելով Արսեն Շալիկոյի Բալայանի վստահությունը, ներկայանալով որպես ավտոմեքենաների առուվաճառքով զբաղվող, 2010 թվականի փետրվարի 15-ին վերջինիս «Ֆոլքսվագեն» մակնիշի 77 ՕՕ 999 պ/հ ավտոմեքենան գնելու պատրվակով այն գրավադրել է Երևանի Ամիրյան 4/6 հասցեում գործող «Վեմ և Վիզ» ՍՊԸ-ին պատկանող գրավատանը, ստացել առանձնապես խոշոր չափերի՝ 5.388.800 ՀՀ դրամ և չարաշահելով Ա.Բալայանի վստահությունը՝ տիրացել այդ գումարին (տե՛ս Նյութեր, էջ 28):

6. Առաջին ատյանի դատարանը մերժել է մեղադրյալ Վ.Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ «միջնորդություն հարուցած անձի կողմից ներկայացրած հիմնավորումներն անհիմն են և չեն բխում քրեական գործի փաստական տվյալներից: Այսինքն՝ քննիչի կողմից Վ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու բավարար հիմքեր չեն ներկայացվել

դատարան» (տե՛ս Նյութեր, էջ 36):

7. Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել և մեղադրյալ Վ.Գ.Լորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով կալանավորում է ընտրել հետևյալ պատճառաբանությամբ. «Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը մերժել է այն հիմնավորմամբ, որ նրա կողմից Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու բավարար հիմքեր չեն ներկայացվել:

Մինչդեռ, ըստ ներկայացված նյութերի, առկա է հիմնավոր կասկած, որ Վ.Գ.Լորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը:

Առաջին ատյանի դատարանում 10.11.2010թ-ին միջնորդության քննության ընթացքում քննիչ Հ.Սարգսյանը հայտնել է, որ տուժողն իրեն բանավոր ասել է, որ մեղադրյալ Վահրամ Գ.Լորգյանը զանգահարել և անհանգստացրել է իրեն, ինչը սակայն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից որևէ կերպ չի գնահատվել: Միջնորդության քննությունից հետո տուժող Արսեն Բալայանն ու նրա կինը՝ գործով վկա Լուսինե Կարապետյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ Վահրամ Գ.Լորգյանը մշտապես զանգահարում է և ասում, որ իրեն հանի այս պատմությունից, ուրիշ ցուցմունք տա, առաջարկում է հանդիպել, այդ ձևով ճնշում գործադրում ու անհանգստացնում:

Տուժող Ա.Բալայանը վերաքննիչ դատարանում տված իր բացատրությամբ հաստատեց վերոգրյալը:

Բացի այդ, մեղադրյալ Վահրամ Գ.Լորգյանը խուսափեց վերաքննիչ դատարանի դատական նիստերին մասնակցելուց, ըստ քննիչի հայտարարության՝ իրեն նույնպես չի հաջողվել կապ հաստատել նրա հետ, քանի որ հեռախոսազանգերին չի պատասխանում, ինչը որոշակիորեն վկայում է մեղադրյալ Գ.Լորգյանի կողմից քննությունից խուսափելու ու թաքնվելու մասին:

Սույն գործով նախաքննական մարմնի կողմից որոշումներ են կայացվել նաև Մամիկոն և Յուրի Մարտիրոսյաններին ՀՀ քր. օր. 178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն նրանք թաքնվել են և նրանց հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

Առաջադրված մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու պայմաններում ավելանում է նաև Վահրամ Գ.Լորգյանի կողմից գործով մյուս մեղադրյալներ Մամիկոն և Յուրի Մարտիրոսյանների վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով քննությանը խոչընդոտելու հավանականությունը» (տե՛ս Նյութեր, էջեր 58-59):

8. Գործի նյութերում առկա են 2010 թվականի նոյեմբերի 25-ին կայանալիք դատական նիստի տեղի և ժամանակի մասին մեղադրյալ Վ.Գ.Լորգյանին և նրա պաշտպան Հ.Հովհաննիսյանին ծանուցող գրություններ, որոնք թվագրված են 2010 թվականի նոյեմբերի 23-ով, սակայն այդ գրությունները նշված ամսաթվին մեղադրյալին և նրա պաշտպանին ուղարկելու մասին համապատասխան փոստային ան-

դորրագրերը բացակայում են (տե՛ս Նյութեր էջեր 45-46):

Համաձայն պաշտպան Հ.Հովհաննիսյանի կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված փոստային ծրարի՝ վերոնշյալ գրությունը փոստին է հանձնվել 2010 թվականի նոյեմբերի 25-ին, որը պաշտպանի կողմից ստացվել է 2010 թվականի նոյեմբերի 27-ին:

Գործի նյութերում առկա են նաև 2010 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք դատական նիստի տեղի և ժամանակի մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությանը և մեղադրյալ Վ.Գևորգյանին ծանուցող գրություններ, որոնք թվագրված են 2010 թվականի նոյեմբերի 25-ով, սակայն այդ գրությունները նշված ամսաթվին դատախազություն և մեղադրյալին ուղարկելու մասին համապատասխան փոստային անդորրագրերը ևս բացակայում են (տե՛ս Նյութեր, էջեր 47-48):

2010 թվականի նոյեմբերի 30-ին կայանալիք նիստի մասին Վ.Գևորգյանին և նրա պաշտպան Հ.Հովհաննիսյանին ծանուցելու մասին ապացույցներ գործի նյութերում չկան:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքը բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև՝ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին:

10. Իր վերոշարադրյալ փաստարկները հիմնավորելու նպատակով բողոքի հեղինակը վերլուծել է ՀՀ Սահմանադրության 21-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածները, ինչպես նաև Տ.Վահրադյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը, և արդյունքում եզրահանգել, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ առկա է հիմնավոր կասկած, որ Վ.Գևորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը: Բողոքաբերի գնահատմամբ, այն խախտում է Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով ամրագրված՝ անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, քանի որ Վ.Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նրա հանցանքը հիմնավորված ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը խափանման միջոցին հաղորդել է պատժի տարրեր:

11. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Վ.Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքում դրվել է Առա-

ջին ատյանի դատարանում միջնորդության քննության ժամանակ գոյություն չունեցած մի հանգամանք, այն է՝ Առաջին ատյանի դատարանում կալանքի միջնորդության քննությունից հետո տուժողի և նրա կնոջ ցուցմունքներն այն մասին, որ Վ.Գ.Լորգյանը զանգահարել և ճնշումներ է գործադրել տուժող Ա.Բալայանի նկատմամբ: Բողոքաբերի գնահատմամբ, վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր իրավասության սահմաններից, քանի որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը չի ենթադրում Առաջին ատյանի դատարանում չներկայացված և չգնահատված ապացույցների քննարկում: Ըստ բողոքաբերի, այդ պարագայում առկա է միջնորդության նոր քննություն, որի իրավասությամբ վերաքննիչ դատարանն օժտված չէ:

12. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Վ.Գ.Լորգյանը խուսափել է Վերաքննիչ դատարանի դատական նիստերին մասնակցելուց: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական ստուգումը կատարվում է դատախազի և պաշտպանի մասնակցությամբ, ուստի՝ մեղադրյալի չմասնակցությունը չի կարող օգտագործվել իր դեմ: Բացի այդ, բողոք բերած անձը փաստարկել է, որ դատական ծանուցագրերը շատ ուշ են հասել մեղադրյալին և նրա պաշտպանին. նիստը նշանակված է եղել 2010 թվականի նոյեմբերի 25-ին, իսկ մեղադրյալը և նրա պաշտպանը նիստի ժամանակի մասին ծանուցումն ստացել են 2010 թվականի նոյեմբերի 27-ին: Ինչ վերաբերում է 2010 թվականի նոյեմբերի 30-ին նշանակված և կայացված նիստին, ապա վերջինիս վերաբերյալ մեղադրյալը և նրա պաշտպանն ընդհանրապես չեն ծանուցվել:

Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ չծանուցելով ու չլսելով պաշտպանության կողմի կարծիքը և Վ.Գ.Լորգյանին կալանավորելու վերաբերյալ որոշում կայացնելով, թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածից բխող՝ «առաջին անգամ» կալանավորում կիրառելիս մեղադրյալին պարտադիր լսելու սկզբունքի խախտում, ինչպես նաև՝ պաշտպանության կողմին զրկել է կալանքը գրավով փոխարինելու միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

13. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս հաշվի է առնվում մեղադրյալի անձը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը: Ընդ որում, այդ հանգամանքները յուրաքանչյուր անձի համար տարբեր են, և սխալ է նույն գործով բոլոր մեղադրյալների վարքագծերն ընդհանրացնել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ սույն գործով որոշումներ են կայացվել Մամիկոն և Յուրի

Մարտիրոսյաններին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն նրանք թաքնվել են և նրանց հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Վ.Գևորգյանը բնութագրվում է դրական, աշխատում է, ամուսնացած է, խնամքին է անչափահաս երեխան, նախկին սպա է, սույն գործով հանդես է գալիս նաև որպես տուժող, իր պաշտպանից տեղեկանալով իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին՝ փախուստի չի դիմել, առաջին իսկ կանչով ներկայացել է ոստիկանություն, որտեղ 2010 թվականի դեկտեմբերի 7-ին կալանավորվել է:

14. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը Վ. Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ առաջադրված մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու պայմաններում ավելանում է Վ.Գևորգյանի կողմից գործով մյուս մեղադրյալներ Մամիկոն և Յուրի Մարտիրոսյանների վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Մինչդեռ, համաձայն բողոքի փաստարկների՝ առաջադրված մեղադրանքը չընդունելը, իր անմեղության մասին հայտարարելը, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սահմանված մեղադրյալի իրավունքն է, որը, սակայն, Վերաքննիչ դատարանը դիտել է որպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմք այն դեպքում, երբ նման հիմք օրենքով նախատեսված չէ, ավելին՝ Վերաքննիչ դատարանը մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը օգտագործել է վերջինիս դեմ և գնահատել որպես հավանական անօրինական արարք կատարելու հիմնավորում:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին, կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ նաև գրավի հարցը քննարկելու համար:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Հիմնավոր կասկած

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյո՞ք հիմնավորված և պատճառաբանված է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Վ.Գևորգյանն առնչություն ունի իրեն մեղագրված արարքին:

17. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝ (...)

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ

երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. (...):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...) »

Վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից բխում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքներից է, այս իրավունքի նշանակության և արժեքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է սահմանել *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ որոշման մեջ: Վկայակոչված որոշման համաձայն՝ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրվելու անթույլատրելիության սկզբունքներից:

(...)

[Դ-]ատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

Ընդ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության

ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից» (տե՛ս Ասլան Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 18-րդ և 22-րդ կետերը):

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝ (...)

2. կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց (այդ թվում՝ կալանավորումը) կարող է կիրառվել «միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակված հիմքերը սահմանող՝ վերևում մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառնիչ է, հետևաբար՝ անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է և անօրինական: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, որի համա-

ծայն՝ անձի ազատության իրավունքի երաշխավորման նպատակ է համարվում ազատությունից կամայականորեն զրկելուց անձի իրավական պաշտպանությունը (տե՛ս *Թիմուրտաշն ընդդեմ Թուրքիայի* (TIMURTAŞ v. TURKEY) գործով 2000թ. հունիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 23531/94, կետ 103, *Բազորկինան ընդդեմ Ռուսաստանի* (BAZORKINA v. RUSSIA) 2006թ. հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 69481/01, կետ 146, *Կլիֆտն ընդդեմ Միացյալ Թագավորության* (CLIFT v. THE UNITED KINGDOM) գործով 2010թ. հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 7205/07, կետ 62):

19. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի

ա) անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Գագիկ Միքայելյանի* վերաբերյալ ԵԱԳԴ/0085/06/09 գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի որոշման 32-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը:

Ձարգացնելով այդ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը:

20. Մեկնաբանելով անձի ազատության սահմանափակման համար անհրաժեշտ պայմանը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին ազատությունից զրկելու համար

անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը (տե՛ս *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* (MURRAY v. THE UNITED KINGDOM) 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ քիվ 14310/88, կետ 61):

21. Գիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

Վճռաբեկ դատարանը հատուկ ընդգծում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող վերոնշյալ տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները պետք է հետազոտվեն մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ այդ տեղեկություններին, տվյալներին կամ ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանության կողմը:

22. Ընդհանրացնելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրա-

կանացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, սպա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանի այս մոտեցումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների վրա, որոնց համաձայն՝ կալանավորման ժամանակ հարցաքննության նպատակը, համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի, համարվում է քննության ընթացքի հետագա շարունակությունը՝ կասկածի հաստատման կամ հերքման նպատակով, որն այս փուլում, անկասկած, չի կարող համոզիչ լինել: Բայց և այնպես, կասկածը պետք է ունենա որևէ հիմնավորում (տե՛ս *Բրոգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության* (BROGAN AND OTHERS v. THE UNITED KINGDOM) գործով 1988թ. նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 11209/84, 11234/84, 11266/84, 11386/85, կետ 53, և *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* (MURRAY v. THE UNITED KINGDOM) գործով 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 55):

Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն (տե՛ս *Ֆոկսը, Զեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության* (FOX, CAMPBELL AND HARTLEY v. THE UNITED KINGDOM) գործով 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է «փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում» (տե՛ս *Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի* (K.-F. v. GERMANY) գործով 1997թ. նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57):

23. Ընդհանրացնելով սույն որոշման 17-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հան-

ցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Գատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշման պատճառաբանական մասում հիմնավոր կասկածի հիմնավորվածության մասին հարցին որևէ անդրադարձ չի կատարել: Վերաքննիչ դատարանը Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշման մեջ նշել է, որ ըստ ներկայացված նյութերի՝ առկա է հիմնավոր կասկած, որ Վ.Գ.Լորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, սակայն, բավարարվելով հանցանքի կատարման մեջ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ օրենսդրական պայմանի պարզ շարադրանքով, իր որոշման մեջ չի նշել գործով ձեռք բերված որևէ փաստական տվյալ, որն ուղղակիորեն կմատնանշեր Վ.Գ.Լորգյանի առնչությունը կատարված իրավախախտմանը, ինչպես նաև չի պատճառաբանել հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ իր հետևությունը: Վերաքննիչ դատարանը չի մատնանշել նաև բավարար հիմքեր (փաստեր)՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն հանցանքին, որի կատարման մեջ Վ.Գ.Լորգյանը կասկածվում է:

25. Սույն որոշման 17-23-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 24-րդ կետում շարադրված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված և պատճառաբանված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Վ.Գ.Լորգյանն առնչություն ունի իրեն մեղսագրված արարքին:

II. Պաշտպանության կողմի ծանուցումը

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալը խուսափել է մասնակցել դատական նիստին այն դեպքում, երբ վերջինս և նրա պաշտպանը պատշաճ կերպով ծանուցված չեն եղել Վերաքննիչ դատարանի նիստի վերաբերյալ:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: (...)»:

Վերոգրյալ նորմի վերլուծությունից բխում է, որ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինակականության և հիմնավորվածության դատական ստուգմանը դատախազի և պաշտպանի պարտադիր ներկայություն սահմանված չէ, սակայն Վերաքննիչ դատարանը պարտավոր է բողոքը քննելու օրվա և ժամի մասին նախապես իրազեկել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերին:

28. Զննարկման ենթակա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2010 թվականի նոյեմբերի 25-ին կայանալիք դատական նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցումները, համաձայն պաշտպան Հ.Հովհաննիսյանի Վճռաբեկ դատարան ներկայացված փոստային ծրարի՝ փոստին են հանձնվել 2010 թվականի նոյեմբերի 25-ին և հասցեատերերի կողմից ստացվել են 2010 թվականի նոյեմբերի 27-ին:

2010 թվականի նոյեմբերի 29-ին նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին մեղադրյալի և նրա պաշտպանի ծանուցումը հավաստող պատշաճ փաստաթղթեր գործի նյութերում առկա չեն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Ավելին, 2010 թվականի նոյեմբերի 29-ին դատարանը որոշել է դատական նիստը հետաձգել և նշանակել նոյեմբերի 30-ին՝ բացատրություն տալու համար դատարան հրավիրելով տուժողին, սակայն մեղադրյալը կամ պաշտպանը դարձյալ դատական հաջորդ նիստի մասին չեն ծանուցվել:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը քննելու օրվա և ժամի մասին մեղադրյալ Վ.Գևորգյանը և նրա պաշտպանը պատշաճ չեն ծանուցվել:

Այնուամենայնիվ, հաշվի չառնելով վերևում շարադրված հանգամանքները, Վերաքննիչ դատարանը, մեղադրյալի բացակայությունը դիտել է որպես Վերաքննիչ դատարանի դատական նիստերին մասնակցելուց խուսափում և անհիմն կերպով գնահատել է որպես նրա կողմից քննությունից խուսափելու ու թաքնվելու մասին որոշակիորեն վկայող հանգամանք (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

29. Հիմք ընդունելով սույն որոշման 27-28-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալը խուսափել է մասնակցել դատական նիստին այն դեպքում, երբ վերջինս և նրա պաշտպանը պատշաճ կերպով ծանուցված չեն եղել Վերաքննիչ դատարանի նիստի վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստին մասնակցելը մեղադրյալի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, հետևաբար՝ անգամ պատշաճ ծանուցված մեղադրյալի բացակայությունը՝ որպես օրենքով տրված իրավունքից չօգտվելու դրսևորում, չէր կարող դրվել կալանավորման հիմքում:

III. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշման հիմքում դրվող հանգամանքները

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավա-

կան հարցը հետևյալն է. իրավաչափի է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում վերջինիս կողմից մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու, ինչպես նաև գործով այլ մեղադրյալների նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու հանգամանքները դնելը:

31. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա. (...)

է/ չպարտադրվի իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի մասի համաձայն՝

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի «հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին»:

Փաստորեն, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում որպես հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիք նշվում է, որ ոչ ոք չի կարելի պարտադրել իր դեմ ցուցմունք տալ կամ իրեն մեղավոր ճանաչել: Նշված իրավադրույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոսքը վերաբերում է գոր-

ծի քննության ինչպես մինչդատական, այնպես էլ դատական փուլերին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետից բխում է, որ իր մեղավորության կամ անմեղության մասին հայտարարելը մեղադրյալի իրավունքն է, որն իր հերթին բխում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքից: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասն ուղղակի ամրագրում է, որ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը սպառնիչ սահմանում է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու թույլատրելի հիմքերը (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում դրել է նաև վերջինիս կողմից իրեն առաջադրված մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու փաստը (տես սույն որոշման 7-րդ կետը):

33. Սույն որոշման 31-րդ կետում շարադրված իրավադրույթների և դրանց լույսի ներքո վերլուծելով սույն որոշման 32-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով մեղադրյալի պաշտպանության իրավունքը, անմեղության կանխավարկածի սկզբունքը, ինչպես նաև միջազգային պայմանագրով նրան տրված երաշխիքները, մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքից օգտվելը գնահատել է որպես նրա հավանական անօրինական արարք կատարելու հիմնավորում, որպես այդպիսին գնահատելով նաև սույն գործով մյուս մեղադրյալների վարքագիծը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, նման հիմնավորումն ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության իրավունքին, ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքին, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված երաշխիքներին:

34. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրյալի կողմից իր անմեղության մասին հայտարարելը, ինչը տվյալ դեպքում դրսևորվել է մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմք դիտարկելու և մեղադրյալի կողմից մեղադրանքը չընդունելով պայմանավորված վերջինին ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքից զրկելն իրավաչափ չէ: Նշված փաստարկումը սկզբունքորեն չի կարող դրվել անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հիմքում:

Փաստորեն, մեղադրյալ Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանքը որպես խափան-

ման միջոց կիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր և օրինական չէ, քանի որ այդ որոշման հիմքում դրված հիմնավորումները ոչ միայն չեն բխում կալանավորման թույլատրելի հիմքերը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, այլև խախտում են մեղադրյալի պաշտպանության իրավունքը, անմեղության կանխավարկածը և միջազգային պայմանագրով երաշխավորված այլ իրավունքներ:

35. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Վ.Գ.Լորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու քննիչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված, չպատճառաբանված և ոչ իրավաչափ որոշման կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Վահրամ Ռուդիկի Գ.Լորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով ընտրելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Վահրամ Ռուդիկի Գ.Լորգյանին անհապաղ ազատել կալանքից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԿԳ/0090/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵԿԳ/0090/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Գանիելյան, Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ **Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ պաշտպան՝ **Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**

2011 թվականի փետրվարի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի փետրվարի 2-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային

անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 58201209 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի՝ 12.808.000 ՀՀ դրամի գողություն կատարելու, ապա հանցավոր ճանապարհով ստացված նշված գումարից խոշոր չափի 5.892.000 ՀՀ դրամը օրինականացնելու, ինչպես նաև հափշտակված գումարի տարբերություն կազմող 6.916.000 ՀՀ դրամն օրինականացնելու փորձ կատարելու դեպքերի առթիվ:

2009 թվականի փետրվարի 10-ին Արսեն Հայկի Սարգսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Ա.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2009 թվականի մայիսի 7-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «ԷյԹիԷյ մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «ԷյԹիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք

գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ այն տարածելով նաև «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

3. Ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ստյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

5. Ա.Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի միակ հիմնադիր և Երևանի Թումանյան 27 հասցեում նշված կազմակերպության կողմից վարձակալված «Գլոբալ մոբայլ» վաճառասրահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում նշված սարքը «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի միջև 2008 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրի համաձայն տեղադրվել է վաճառասրահում: Այնուհետև, Ա.Սարգսյանը քննությանը չպարզված անձանցից ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում այդ քարտերը գործածելով նշված Pos-տերմինալում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառասրահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափի, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Նշված գումարի մի մասը Ա.Սարգսյանը ելքագրել է «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարից և տնօրինել իր հայեցողությամբ:

Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 29-ին Ա.Սարգսյանն իբրև

վաճառված ապրանքի դիմաց վճարում «Գլոբալ մոբայլ» վաճառատարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 5466264001383577 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «CHASE MANHATTAN BANK USA NA» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 4001383577 հաշվեհամարից 427.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին նույն եղանակով 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված գործարքի արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 8311026349 հաշվեհամարից գողացված 982.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին նույն եղանակով 5490999370256355 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 3 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 9370256355 հաշվեհամարից գողացված 2.946.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 17-ին նույն եղանակով 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 6 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0213934498 հաշվեհամարից գողացված 5.892.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին և անձամբ ամբողջությամբ կանխիկացրել է նշված գումարը:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին նույն եղանակով 5490990089627168 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով կատարված 7 գործարքների արդյունքում «MBNA AMERICA BANK» ամերիկյան կազմակերպության հաճախորդի 0089627168 հաշվեհամարից գողացված 6.916.000 ՀՀ դրամին համարժեք գումարը փոխանցել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին, սակայն գողոնը չի հասցրել կանխիկացնել՝ հանցագործության բացահայտման պատճառով:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Ա.Սարգսյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտում-

ներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ, 190-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 23-րդ, 25-րդ, 107-րդ, 108-րդ, 127-րդ, 216-րդ, 353-րդ, 358-րդ, 360-րդ և 365-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը շարադրել և վերլուծել է սույն գործի փաստական հանգամանքները, այնուհետև՝ եզրակացություն արել առ այն, որ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքն անհիմն և ապօրինի է: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտում շարադրված՝ ամբաստանյալի մեղավորության մասին հետևությունները հիմնված են միայն ենթադրությունների վրա և հաստատված չեն գործին վերաբերող, փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմի հատկանիշների ճիշտ մեկնաբանման կապակցությամբ:

Դրանից ելնելով՝ նախքան բողոքում բարձրացված հարցին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քրեաիրավական վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմը՝ նպատակ ունենալով նշված հանցագործության համար քրեական պատասխանատվության ոլորտում ապահովել օրենքի միատեսակ կիրառություն:

1. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմի հատկանիշները

8. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դասվում է անդրազգային (տրանսնացիոնալ) բնույթ կրող այնպիսի հանցագործությունների շարքին, ինչպիսիք են ահաբեկչությունը, մարդկանց առևտուրը, թմրաբիզնեսը և այլն:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանրային բարձր վտանգավորությամբ է պայմանավորված դրա դեմ պայքարին նվիրված միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի առկայությունը: Այսպես՝ միջազգային իրավական համակարգում հանցավոր ճանապարհով ստացված եկա-

մուտների օրինականացում («լվացում») հասկացությունը սահմանվել է «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» Միացյալ ազգերի կազմակերպության 1988 թվականի Վիեննայի կոնվենցիայով (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականին: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով Վիեննայի կոնվենցիան նախատեսում է միջազգային-իրավական համալիր միջոցառումների անցկացում և որպես նշված միջոցառումների բաղկացուցիչ մաս միջազգային մակարդակում առաջին անգամ ճանաչում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Վիեննայի կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն սահմանել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը միջազգային իրավական համակարգում իր զարգացումն է ստացել Եվրախորհրդի 1990 թվականի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Ստրասբուրգի կոնվենցիայում (այսուհետ՝ Ստրասբուրգի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Ստրասբուրգի կոնվենցիան առաջին միջազգային-իրավական փաստաթուղթն է, որն ամբողջությամբ նվիրված է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարին: Ստրասբուրգի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ներպետական մակարդակում քրեաիրավական միջոցներ ձեռնարկել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ:

Վիեննայի և Ստրասբուրգի կոնվենցիաները պետությունների համար անկյունաքար են հանդիսացել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի բնագավառում ներպետական օրենսդրությունները մշակելու համար:

1989 թվականին Փարիզում հիմնադրվել է «Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը» (այսուհետ՝ ՖԱԹՖ), որն ի սկզբանե նպատակ է հետապնդել համակարգելու փողերի լվացման ուղղությամբ միջազգային գործունեությունը: ՖԱԹՖ-ի կողմից տարբեր տարիների ընթացքում մշակված հանձնարարականները Եվրախորհրդի անդամ պետությունների համար նախատեսում են քրեական արդարադատության ոլորտի և իրավական կարգավորման համակարգի միջոցառումներ, որոնցով պետք է հակազդել փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը: Հանձնարարականները ներառում են նաև միջազգային համագործակցության և կանխարգելման միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև

այլ կազմակերպությունների և անձանց կողմից: ՖԱԹՖ-ի հանձնարարականները լայն տարածում են գտել՝ վերածվելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համաշխարհային չափանիշների:

Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 2000 թվականին ընդունվել է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիան (այսուհետ՝ Պալերմոյի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Պալերմոյի կոնվենցիան, մասնակից պետություններին պարտավորեցնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դիտարկել որպես հանցագործություն, միաժամանակ որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Պալերմոյի կոնվենցիան անդրադառնում է նաև դատական համագործակցության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման հարցերին:

Եվրոպայի խորհրդի կողմից 2005 թվականին ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարշավայի կոնվենցիան (այսուհետ՝ Վարշավայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008 թվականին: Վարշավայի կոնվենցիան, ըստ էության, Ստրասբուրգի կոնվենցիայի կատարելագործված խմբագրությունն է: Այն Ստրասբուրգի կոնվենցիայի առումով ավելի է զարգացնում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի քրեաիրավական կանխարգելիչ միջոցները: Վարշավայի կոնվենցիան կարգավորում է ահաբեկչության ֆինանսավորման, ներպետական մակարդակում ձեռնարկվող միջոցառումների, միջազգային համագործակցության, մոնիտորինգի մեխանիզմների, վեճերի լուծման հետ կապված հարցեր:

ՀՀ տարածքում փողերի լվացմանը հակազդելու իրավական կառուցակարգերի սահմանման նպատակով 2008 թվականի մայիսի 26-ին ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը:

9. ՀՀ օրենսդրության մեջ փողերի լվացման հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում, որի համաձայն՝

«1. [Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումն է] [հ]անցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեու-

թյան արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) (...):

5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է հանդիսանում ցանկացած գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել են սույն օրենսգրքի 104-րդ, 112-113-րդ, 117-րդ, 122-րդ, 131-134-րդ, 166-րդ, 168-րդ, 175-224-րդ, 233-235-րդ, 238-րդ, 261-270-րդ, 281-րդ, 284-րդ, 286-289-րդ, 291-292-րդ, 295-րդ, 297-298-րդ, 308-313-րդ, 329-րդ, 352-րդ, 375-րդ, 383-րդ, 388-րդ և 389-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

Քննարկվող հանցագործությունը դասվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, ուստի նշված քրեաիրավական արգելքի հիմնական նպատակն է հանցավոր ճանապարհով ստացված դրամական միջոցների կամ այլ գույքի չվերահսկվող շրջանառությունից պաշտպանել պետության տնտեսական համակարգը, ինչպես նաև պայքարել ոչ օրինաչափ եղանակով դրամական միջոցների (գույքի) ձեռքբերմանն ու դրանց օրինական (լեգալ) տեսք հարդելուն ուղղված հանցագործությունների դեմ:

10. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման տեսակային օբյեկտն է բնականոն տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակցությունը: Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտն է օրինական գույքային և դրամավարկային շրջանառության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Քննարկվող հանցագործության լրացուցիչ օբյեկտները բազմատեսակ են: Այդպիսիք կարող են լինել հասարակական անվտանգության շահերը (եթե հանցավոր եկամուտների օրինականացումը կապված է կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության հետ), բնակչության առողջությունը (եթե հանցագործության առարկա են զենքը, թմրանյութերը և այլն), պետական ծառայության շահերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները (եթե առկա է պաշտոնեական դիրքի օգտագործում) և այլն:

11. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում հանցագործության առարկա կարող են լինել դրամական միջոցները, արժեթղթերը, ցանկացած գույք կամ գույքային իրավունք, որը ձեռք է բերվել ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է գույքի ստացման եղանակը՝ հանցավոր ճանապարհով, այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման արդյունքում: Ընդ որում, հոդվածի 5-րդ մասը սպառնիչ

թվարկում է այն հանցագործությունները, որոնց կատարման արդյունքում ձեռք բերված գույքը կամ գույքային իրավունքը կարող է հանդիսանալ փողերի լվացման հանցակազմի առարկա:

Հետևաբար, արարքը կարող է որակվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված հանցագործություններից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, վերջինս պետք է ժամանակային առումով նախորդի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ տվյալ դեպքում պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը:

12. «Գույքի բռնագրավումը» վերտառությունը կրող ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված օրենսդրական կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա հանդի-

սացող գույքը, ինչպես նաև այդ գույքի օգտագործումից ստացված օգուտները ենթակա են բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում սեփականությունն են հանդիսանում կամ ում կողմից են տիրապետվում:

14. Զննարկվող հանցակազմն ունի բարդ և այլընտրանքային օբյեկտիվ կողմ: Արարքը որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում որակելու հիմքում ընկած է այն նախապայմանը, որ գույքի և գույքային իրավունքների հետ կապված գործողությունները կատարվում են՝ գիտակցելով դրանց՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը և հետապնդելով հատուկ նպատակ՝ թաքցնել կամ քողարկել գույքի (գույքային իրավունքի) հանցավոր ծագումը կամ օժանդակել հանցակցին խուսափելու իրավական հետևանքներից:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողություններով.

ա) հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկում (կոնվերտացում) կամ փոխանցում (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից,

բ) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնել կամ խեղաթյուրել (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),

գ) գույք ձեռք բերել կամ տիրապետել կամ օգտագործել կամ տնօրինել (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Փողերի լվացման հանցակազմը ձևական է, այն ավարտված է համարվում վերը նշված գործողություններից որևէ մեկի կատարման պահից:

15. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմը գնահատելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա ոչ հստակ ձևակերպումը որոշ դեպքերում կարող է դժվարություններ առաջացնել հանցակազմի կիրառման, ինչպես նաև հարակից հանցակազմներից սահմանազատման առումով:

Խոսքը մասնավորապես վերաբերում է հետևյալ ձևակերպմանը. «(...) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)», որի տառացի մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ եթե անձը հանցագործության արդյունքում ստացված միջոցները ձեռք է բերում և օգտագործում է իր անձնական կարիքները բավարարելու համար, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի վերոնշյալ պայմանի ուժով մեխանիկորեն դառնում է

քննարկվող հանցագործության սուբյեկտ: Նման մոտեցումը չի համապատասխանում գույքի օրինականացման էությանը, քանի որ տվյալ պարագայում բացակայում է այն «լվանալուն» ուղղված դիտավորությունը: Այլ կերպ՝ անձը դիտավորություն չի ունեցել օրինական շրջանառության մեջ դնել հանցավոր ճանապարհով ստացված միջոցները, այլ ընդամենը ցանկացել է օգտվել դրանցից, քանի որ ի վերջո հանցագործությունը կատարվել է հենց այդ միջոցները ձեռք բերելու և դրանցից օգտվելու նպատակով:

Այս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիան օբյեկտիվ կողմից կարող է համընկնել հանցագործության օժանդակության հետ, եթե գույքի ձեռքբերումը եղել է նախապես խոստացված, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետ, եթե գույքի ձեռքբերումը նախապես խոստացված չի եղել:

Մինչդեռ, տվյալ դեպքում անձը հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի հետ կապված բոլոր գործողությունները կատարում է մեկ դիտավորությամբ, այն է՝ համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրը քողարկել կամ խեղաթյուրել և դրանց հաղորդել օրինական տեսք:

16. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում լիարժեք հստակեցված չէ այս հանցագործության սուբյեկտիվ կողմի գլխավոր, էական հատկանիշը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նկարագրված գործողությունների արդյունքում համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրի քողարկման կամ խեղաթյուրման նպատակը:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի գործնական կիրառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն իրենում պարունակում է հատուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկել, թաքցնել և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավել: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է այս հանցագործության հանցակազմի առկայությունը:

17. Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն իր կողմից օրինականացնելու փաստը և ցանկանում է դա:

Փողերի լվացման սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ է կատարում կամ տվյալ նյութական արժեքները օգտագործում է ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության համար (ընդհանուր սուբյեկտ): Որպես նշված հանցակազմի հատուկ սուբյեկտ կարող է հանդես գալ միայն պաշտոնատար անձը (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

II. Առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն օրինականացնելու մեջ ամբաստանյալ Ա. Սարգսյանի մեղավորության հաստատված լինելը

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքների կատարման մեջ ամբաստանյալ Ա. Սարգսյանի մեղավորությունը հաստատված է արդյոք գործին վերաբերող, փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

19. Վճռաբեկ դատարանը, ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Ա. Սարգսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Ա. Սարգսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքներում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Ա. Պողոսյանի, Ա. Օկիշորի, Հ. Կտիկյանի, Գ. Մերոբյանի ցուցմունքներով, «Իրեղեն ապացույց ճանաչելու մասին» և «Այլ փաստաթղթերն ապացույց ճանաչելու և քրեական գործին կցելու մասին» նախաքննության մարմնի 2009 թվականի մայիսի 7-ի որոշումներով ապացույց ճանաչված և սույն գործով դատական ակտերում շարադրված փաստաթղթերով, դատահաշվապահական փորձաքննությունների թիվ 09-0361 և թիվ 09-0779 եզրակացություններով:

20. Վերը նշված ապացույցներն իրենց համակցության մեջ բավարար են հաստատված համարելու, որ ամբաստանյալ Ա. Սարգսյանը քննությամբ չպարզված անձանցից ձեռք բերված բանկային քարտերի կեղծ կրկնօրինակների գործածմամբ, իրեն պատկանող՝ բջջային հեռախոսների մանրածախ առևտրի վաճառարահում տեղադրված Pos-տերմինալի միջոցով 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար: Այսինքն՝

կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

Բացի այդ, քրեական գործում առկա ապացույցներով հաստատված է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը գողացված գումարը փոխանցել է «ԷյԹիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին՝ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառարահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի գողոնի իրական բնույթը, ծագման աղբյուրը և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներին հաղորդելով օրինական տեսք:

Վերը նշված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 8-17-րդ կետերում առկա իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում նաև այն, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

21. Այսպիսով, առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու և նշված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն օրինականացնելու մեջ ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանի հետևությունները հետագոտված ապացույցներին չհամապատասխանելու և ամբաստանյալին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար՝ հիմք չեն կարող հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

22. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0209/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Չիչյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

ԵԿԴ/0209/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ՖԱՐՄԱՆՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Գառնիկ Մարտինի Ֆարմանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի պաշտպանի և ամբաստանյալ Գ.Ֆարմանյանի վճռաբեկ բողոքները,

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի հոկտեմբերի 9-ին Մասիսի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 44114109 քրեական գործը՝ Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի կողմից խարդախությամբ Սարգիս Վանիկի Եփրեմյանի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 4.645.200 ՀՀ դրամին համարժեք 15.000 ԱՄՆ դոլար արժեքով «Օպել-Օմեգա» մակնիշի ավտոմեքենան հափշտակելու դեպքի առթիվ:

ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի ավագ հետաքննիչ Ս.Պողոսյանի 2009 թվականի մայիսի 14-ի որոշմամբ Ս.Մելքունյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ գլխավոր դատախազի 2009 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին վերոնշյալ որոշումը վերացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61204209 քրեական գործը:

2009 թվականի նոյեմբերի 5-ին Շողակաթ Ամիրխանյանը թիվ 44114109 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրվա որոշմամբ մեղադրյալ Շ.Ամիրխանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ մեղադրյալ Շ.Ամիրխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանք 2 ամիս ժամկետով:

2010 թվականի հունվարի 30-ին Շ.Ամիրխանյանը ձերբակալվել է:

2010 թվականի հունվարի 31-ին թիվ 61204209 քրեական գործով Շ.Ամիրխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ թիվ 44114109 քրեական գործը միացվել է թիվ 61204209 քրեական գործին:

2010 թվականի հուլիսի 22-ին Շ.Ամիրխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

2010 թվականի հուլիսի 24-ին թիվ 61204209 քրեական գործով Գառնիկ Մարտինի Ֆարմանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2010 թվականի օգոստոսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացու-
թյամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաննե-
րի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առա-
ջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 30-ի դատավճռով,
դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Շողակաթ Ամիրխանյանը
մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կե-
տով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ
մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝
առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մա-
սով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ
հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով,
Շ.Ամիրխանյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի 6
(վեց) ամիս ժամկետով:

Գառնիկ Ֆարմանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տա-
րի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի, Գ.Ֆարմանյանի պաշտպանի, մեղադրո-
ղի և տուժող Ս.Եփրեմյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքների հիման վրա քն-
նության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի նոյեմ-
բերի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի, Գ.Ֆարմանյանի պաշտպա-
նի վերաքննիչ բողոքները մերժել է, մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է
ամբողջությամբ, իսկ տուժողի ներկայացուցչի բողոքը՝ մասնակիորեն. այն է՝ Շողա-
կաթ Ամիրխանյանի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի
2010 թվականի օգոստոսի 30-ի դատավճիռը, իսկ Գառնիկ Ֆարմանյանի մասով՝ թո-
ղել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ Շ.Ամիրխանյանը մեղավոր է ճանաչվել
ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի
2-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա
դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով՝
առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մա-
սով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ
հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով,
Շ.Ամիրխանյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 7 (յոթ) տարի
ժամկետով:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշ-
ման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի պաշտպան
Ա.Ջուվանովան (այսուհետ նաև՝ առաջին բողոքաբեր) և ամբաստանյալ Գ.Ֆար-
մանյանը (այսուհետ նաև՝ երկրորդ բողոքաբեր):

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ բողոքները վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ուղարկվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալներ Շ.Ամիրխանյանը և Գ.Ֆարմանյանը դատապարտվել են հետևյալ արարքների համար. 2008 թվականի ապրիլ ամսից մինչև 2009 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Շ.Ամիրխանյանն ինչպես միայնակ, այնպես էլ որդու՝ Գառնիկ Ֆարմանյանի հետ նախնական համաձայնությամբ, վտահոտությունը չարաշահելու և խաբեության եղանակով, կրկին անգամ, հափշտակել է Սերիկ Մելքումյանի, Աշոտ Սարգսյանի, Գայանե Աբրահամյանի, Ամասիա Բարսեղյանի, Նելա Սարգսյանի, Արտակ Հովակիմյանի, Սարգիս Եփրեմյանի, «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի «Շենգավիթ» մասնաճյուղի, «Գարանտ Պլյուս» ՓԲԸ-ի՝ ընդհանուր առմամբ, առանձնապես խոշոր չափերի՝ 149.589.234 ՀՀ դրամ արժողությամբ գույքն ու գումարները:

Բացի այդ, Գոհար Վարդանյանի հետ նախնական համաձայնությամբ Շ. Ամիրխանյանը կեղծել և Գառնիկ Ֆարմանյանի հետ նախնական համաձայնությամբ օգտագործել է իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր:

6. Ըստ 2010թ. հունվարի 30-ի ձեռքակալման մասին արձանագրության՝ Շ. Ամիրխանյանը պաշտպան ունենալ չի ցանկացել (տե՛ս Քրեական գործ, հատոր 4-րդ, էջեր 120-122):

Կասկածյալի իրավունքները բացատրելու մասին արձանագրության համաձայն՝ Շ.Ամիրխանյանը պաշտպան ունենալ չի ցանկացել (տե՛ս Քրեական գործ, հատոր 4-րդ, էջ 124):

Ըստ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելու մասին 2010 թվականի հունվարի 31-ի արձանագրության՝ Շ.Ամիրխանյանը պաշտպան ունենալ չի ցանկացել (տե՛ս Քրեական գործ, հատոր 4-րդ, էջ 136):

2010 թվականի հունիսի 24-ին որպես մեղադրյալ լրացուցիչ հարցաքննության ժամանակ Շ.Ամիրխանյանը հայտնել է, որ պաշտպան ունենալ չի ցանկանում (տե՛ս Քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 114):

Մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին 2010 թվականի հուլիսի 23-ի արձանագրության համաձայն՝ Շ.Ամիրխանյանը պաշտպան ունենալ չի ցանկացել (տե՛ս Քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 204):

7. Ըստ քրեական գործի նյութերին ծանոթանալու արձանագրության՝ մեղադրյալ Շ.Ամիրխանյանը, չցանկանալով պաշտպան ունենալ, իրեն լիովին մեղավոր է ճանաչել և խնդրել է իր «նկատմամբ կիրառել արագացված դատաքննություն» (տե՛ս Քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 285):

8. 2010 թվականի օգոստոսի 18-ին Շ.Ամիրխանյանը «Արովյան» քրեակատարողական հիմնարկից դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Կ.Դազարյանին և խնդրել իրեն տրամադրել հանրային պաշտպան: Նա ցանկություն է հայտնել, որ իր շահերը պաշտպանի փաստաբան Աննա Ջուվանովան: Դիմումը դատարանում ստացվել է 2010 թվականի օգոստոսի 25-ին (տե՛ս Քրեական գործ, հատոր 8-րդ, էջ 46):

Առաջին ատյանի դատարանի դատական նիստի նախապատրաստական մասում նույնպես ամբաստանյալ Շ.Ամիրխանյանը դիմել է հանրային պաշտպան ունենալու խնդրանքով և ցանկացել է անվճար նշանակված պաշտպան: Դատարանը որպես պաշտպան երաշխավորել է Անահիտ Հովհաննիսյանին, որը մինչ այդ որևէ առնչություն չի ունեցել տվյալ քրեական գործի հետ, իսկ ամբաստանյալներ Շ.Ամիրխանյանը և Գ.Ֆարմանյանը նրան ընդհանրապես չեն ճանաչել: Երբ նա որպես պաշտպան ներկայացել է ամբաստանյալներին, Շ.Ամիրխանյանը հայտնել է, որ նրան առաջին անգամ է տեսնում և խնդրել է դատարանին, որ Ա.Հովհաննիսյանն անպայման ծանոթանա գործի նյութերին: Այս պայմաններում Ա.Հովհաննիսյանն ստանձնել է Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպանությունը: Ընդ որում, անտեսվել է պաշտպանի՝ գործի նյութերին ծանոթանալու մասին ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի խնդրանքը և առանց 7 հատորանոց գործի նյութերին ծանոթանալու, համոզված չլինելով, որ իր պաշտպանյալների մեղադրանքը գործի նյութերով հաստատված է, առանց նրանց հետ խորհրդակցելու, Ա.Հովհաննիսյանը միջնորդել է կիրառել դատական քննության արագացված կարգ (տե՛ս Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնագրային արձանագրության լազերային կրիչը և դատական նիստի արձանագրման համառոտագրումը, Քրեական գործ, հատոր 8-րդ, էջեր 49-52, 53-57, 58):

9. Մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին 2010 թվականի հուլիսի 24-ի արձանագրության համաձայն՝ Գ.Ֆարմանյանը հայտնել է, որ պաշտպան ունենալ չի ցանկանում (տե՛ս Քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 222):

Քրեական գործի նյութերին ծանոթանալու արձանագրությունից երևում է, որ մեղադրյալ Գ.Ֆարմանյանը, չցանկանալով պաշտպան ունենալ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և խնդրել է իր «նկատմամբ կիրառել արագացված դատաքննություն» (տե՛ս Քրեական գործ, հատոր 7-րդ, էջ 284):

10. 2010 թվականի օգոստոսի 24-ին Առաջին ատյանի դատարանի դատական նիստի նախապատրաստական մասում դատական նիստի քարտուղարը, դատարանին զեկուցելով կողմերի՝ դատարան ներկայանալու մասին, ներկայացած անձանց մեջ նշել է նաև պաշտպան Անահիտ Հովհաննիսյանին: Վերջինս արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդություն է ներկայացրել, ինչից հետո նման միջնորդություններ են արվել ամբաստանյալների կողմից (տե՛ս Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնագրային արձանագրության

լազերային կրիչը և դատական նիստի արձանագրման համառոտագրումը, Քրեական գործ, հատոր 8-րդ, էջեր 53, 58):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է սակայն, որ դրանցում բացակայում են պաշտպան Անահիտ Հովհաննիսյանի իրավավիճակը հաստատելու համար ներկայացվող՝ անձը հաստատող փաստաթուղթը, փաստաբանների պալատի կողմից տրված՝ նրա փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ ամբաստանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:

Գործի նյութերում բացակայում է նաև որևէ տվյալ այն մասին, որ պաշտպան Ա.Հովհաննիսյանը ծանոթացել է քրեական գործի նյութերին (7 հատոր), իսկ ամբաստանյալներ Շ.Ամիրխանյանն ու Գ.Ֆարմանյանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը ներկայացրել են պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

11. Առաջին ատյանի դատարանի դատավճռում արձանագրվել է. «Մինչև դատաքննությունն սկսվելը ամբաստանյալներ Շողակաթ Ամիրխանյանն ու Գառնիկ Ֆարմանյանը միջնորդեցին դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեցին, որ առաջադրված մեղադրանքն իրենց պարզ է, համաձայն են մեղադրանքի հետ, միջնորդությունը ներկայացրել են կամավոր, խորհրդակցել են պաշտպանի հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները» (տե՛ս Քրեական գործ, հատոր 8-րդ, էջեր 75-89):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի պաշտպանն իր բողոքում նշել է, որ ամբողջ քրեական գործի վարույթի ընթացքում խախտվել է Շ.Ամիրխանյանի պաշտպանության իրավունքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

13. Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ առաջին բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում Շ.Ամիրխանյանի շահերը պաշտպանել է փաստաբան Ա.Հովհաննիսյանը, որի հետ, սակայն, ո՛չ Շ.Ամիրխանյանը, ո՛չ Գ.Ֆարմանյանը և ո՛չ էլ նրանց հարազատները պայմանագիր չեն կնքել և չեն դիմել նրան իրավաբանական օգնություն ցույց տալու խնդրանքով: Փաստաբանը նախապես չի խորհրդակցել ամբաստանյալների հետ, չի ծանոթացել քրեական գործի նյութերին և չի կնքել իրավաբանական ծառայությունների մատուցման վճարովի կամ անվճար պայմանագիր:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը սեփական նախաձեռնությամբ երաշխավորել է փաստաբանին հանդես գալու որպես ամբաստանյալների պաշտպան՝ դրանով իսկ խախտելով ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 70-րդ հոդվածի պահանջները:

14. Պաշտպանը փաստարկել է նաև, որ խախտվել են դատական քննության արագացված կարգ կիրառելու նորմերը, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375²-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Ի հիմնավորումն իր պնդման՝ առաջին բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում իրականացվել է դատաքննության արագացված կարգ, սակայն Շ.Ամիրխանյանը չի ընկալել դատական քննության արագացված կարգ կիրառելու հետևանքները, չի խորհրդակցել պաշտպանի հետ: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը պետք է համոզվեր, թե արդյո՞ք պահպանվել են արագացված դատական քննություն իրականացնելու բոլոր նախադրյալները, մասնավորապես՝ ամբաստանյալներն ունեցե՞լ են արդյոք իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու, պաշտպանի հետ ազատորեն շփվելու և բազմադրվագ քրեական գործի բոլոր հանգամանքները քննարկելու հնարավորություն:

15. Ուստի, գտնելով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ քրեական դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, Շ.Ամիրխանյանի պաշտպանը խնդրել է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 30-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

16. Ամբաստանյալ Գ.Ֆարմանյանն իր բողոքում նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք նորմեր:

17. Ի հիմնավորումն իր փաստարկի՝ երկրորդ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում ինքն ընդունել է մեղքը, զղջացել է կատարած արարքի համար և խնդրել է գործը քննել արագացված դատական քննության կարգով՝ չնայած որ չի հասկացել արագացված դատաքննության հետևանքները, քանի որ իր պաշտպանի հետ չի խորհրդակցել և չի գիտակցել դրա էությունը: Վերաքննիչ դատարանում ինքը պնդել է վերաքննիչ բողոքի փաստարկները և խնդրել է իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

18. Երկրորդ բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանում չի կարողացել վիճարկել Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված որևէ փաստական հանգամանք, որովհետև գործը քննվել է արագացված դատաքննության կարգով, սակայն գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածների պա-

հանջները, ապացույցները չի ենթարկել բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման, յուրաքանչյուր ապացույց չի գնահատել վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Դատարանը մանրամասն չի ուսումնասիրել և ճիշտ չի գնահատել գործում առկա փաստարկները:

19. Գտնելով, որ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և առաջացրել են ծանր հետևանքներ՝ Գ.Ֆարմանյանը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանել, փոփոխել և իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է արագացված կարգով դատական քննություն անցկացնելու կարգի ու պայմանների, արագացված դատաքննության կարգով գործի քննության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու, ինչպես նաև գործով վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերի հետ կապված օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ վճռաբեկ բողոքներում վկայակոչված՝ դատավարական իրավունքի ենթադրյալ խախտումները փոխկապակցված են. ամբաստանյալների պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտումը հետևանք է Առաջին ատյանի դատարանի կողմից արագացված դատական քննություն անցկացնելու կարգի ու պայմանների ենթադրյալ խախտման: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել Առաջին ատյանի դատարանի կողմից արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս թույլ տված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

1. Արագացված կարգով գործի քննությունը

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի վերաբերյալ գործն արագացված դատական քննության կարգով քննելիս Առաջին ատյանի դատարանը թո՞ւյլ է տվել արդյոք դատավարական իրավունքի խախտում:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 (տաս) տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

«Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին»:

Մեջբերված հոդվածի բովանդակության վերլուծությունից երևում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ համաձայնվելն է: Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը միաժամանակ կարգավորել է այն դեպքերը, երբ ամբաստանյալը կամ մեղադրյալը համաձայն է առաջադրված մեղադրանքին, սակայն միևնույն ժամանակ հարուցված է քաղաքացիական հայց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը»:

24. Հիմք ընդունելով սույն որոշման 22-23-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառման համար, ի թիվս այլոց, անհրաժեշտ են

հետևյալ պայմանները.

1) ամբաստանյալը կամ մեղադրյալն իր միջնորդության մեջ հայտարարել է առաջադրված մեղադրանքի հետ համաձայն լինելու և արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին,

2) ամբաստանյալը կամ մեղադրյալը գիտակցում է իր ներկայացրած միջնորդության բնույթն ու հետևանքները,

3) միջնորդությունը ներկայացված է կամավոր, պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3752 -րդ հոդվածով նախատեսված ժամանակահատվածում, այն է՝ քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը,

4) մեղադրողը չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ,

5) անձը մեղադրվում է այնպիսի հանցանք գործելու մեջ, որի համար նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը շարադրված պայմանների հետ մեկտեղ, դատական քննության արագացված կարգի կիրառման համար անհրաժեշտ է նաև հետևյալ պայմանների առկայությունը.

1) դատարանը ճշտել է դատական քննության արագացված կարգի կիրառման կապակցությամբ տուժողի դիրքորոշումը (տե՛ս Տիգրան Քամալյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵՇԴ/0097/01/09 որոշման 19-րդ կետը):

2) ամբաստանյալը կամ մեղադրյալը անչափահաս չէ և ենթադրյալ հանցանքը կատարելու պահին նրա տասնութ տարին լրացած է եղել,

3) բացակայում են քրեական գործը կարճելու հիմքերը:

26. Սույն որոշման 24-25-րդ կետերում թվարկված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դատական քննության արագացված կարգի կիրառումն անթույլատրելի է: Այլ կերպ՝ միայն նշված բոլոր պայմանների համակցությունն է դատարանին իրավունք տալիս դատավճիռ կայացնել՝ առանց ընդհանուր կարգով դատական քննություն անցկացնելու: Ուստի, դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու հիմք են՝

1) մեղադրողի համաձայնության բացակայությունը,

2) առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի մասնակի համաձայնությունը,

3) ամբաստանյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցագործության՝ առանձնապես ծանր լինելը,

4) ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից միջնորդությունը ներկայացվել է ճնշման տակ, այսինքն՝ հարկադրաբար,

5) ամբաստանյալը կամ մեղադրյալը չի գիտակցում ներկայացված միջնորդության բնույթն ու հետևանքները:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 22-26-րդ կետերում շարադրված իրավա-

կան դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված և սույն որոշման 23-րդ կետում թվարկված պայմաններից որևէ մեկը չի պահպանվել, ապա դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3752-րդ հոդվածի ամրագրել է միջնորդությունը ներկայացնելու կարգը: Նշված հոդվածի համաձայն՝

«1. Ամբաստանյալը (մեղադրյալը) դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:

2. Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ անհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական միտքը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգն ամրագրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3753-րդ հոդվածը սահմանում է՝

«(...)

2. Դատական քննությունն արագացված կարգով անցկացնելու մասին ամբաստանյալի միջնորդության քննությունն սկսվում է մեղադրողի կողմից ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ներկայացմամբ:

3. Դատավորը հարցեր է տալիս ամբաստանյալին համոզվելու համար՝ պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելն արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի այդպիսին), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:

4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են սույն օրենսգրքի 3751-րդ հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

(...)»:

29. Դատական քննության արագացված կարգի կիրառումը կանոնակարգող՝

վերը շարադրված նորմերի բովանդակությունից երևում է, որ արագացված կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը վերապահված է ամբաստանյալին (մեղադրյալին), այն էլ՝ միայն պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո: Բացի այդ, մինչև միջնորդությունը ներկայացնելը պաշտպանի հետ խորհրդակցելը չպետք է կրի ձևական բնույթ. խորհրդակցելու նպատակն այն է, որպեսզի ամբաստանյալին (մեղադրյալին) հանգամանորեն պարզաբանվի արագացված կարգով դատաքննություն անցկացնելու էությունը, հետևանքները, դատավճիռ կայացնելու և այն բողոքարկելու կարգը: Ընդ որում, մինչև խորհրդակցելը պաշտպանը պետք է ծանոթանա գործի նյութերին և համոզված լինի, որ իր պաշտպանյալի մեղադրանքը հիմնավորված է և հաստատվում է գործով հավաքված ապացույցներով:

30. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության ընթացքում Շ.Ամիրխանյանը և Գ.Ֆարմանյանը պաշտպան չեն ունեցել: Քրեական գործի նյութերին ծանոթանալիս նույնպես նրանք պաշտպան ունենալ չեն ցանկացել և իրենց մեղավոր ճանաչելով՝ խնդրել են կիրառել արագացված դատաքննություն (տե՛ս սույն որոշման 6-րդ և 9-րդ կետերը): Հետևաբար, այս պարագայում խոսք չէր կարող լինել պաշտպանի հետ խորհրդակցելու մասին:

Առաջին ատյանի դատարանում որպես ամբաստանյալներ Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպան է ներկայացվել Անահիտ Հովհաննիսյանը, ով արագացված կարգի կիրառման միջնորդություն է ներկայացրել, ինչից հետո նման միջնորդություններ են արվել ամբաստանյալների կողմից: Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ Առաջին ատյանի դատարանը դատավճռում նշել է, որ ամբաստանյալները խորհրդակցել են պաշտպանի հետ և գիտակցում են արագացված դատական քննություն անցկացնելու հետևանքները (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը):

31. Սույն որոշման 21-29-րդ կետերում շարադրված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 30-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի վերաբերյալ գործն արագացված դատական քննության կարգով քննելիս Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որը դրսևորվում է արագացված կարգով դատական քննություն անցկացնելու կարգի ու պայմանների, արագացված դատաքննության կարգով գործի քննության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու, ինչպես նաև գործով վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերի վերաբերյալ ՀՀ քրեատատվարական օրենսդրությամբ սահմանված պահանջների անտեսման ձևով:

II. Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտումը

32. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է՝ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում խախտվե՞լ է արդյոք Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպա-

նության իրավունքը:

33. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...)

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

(...):»:

Պաշտպանության իրավունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում հայտնել այն մասին, որ «(...) ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Կասկածյալի պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքը, որպես կասկածյալին վերապահված իրավունքների համակցություն, կասկածյալին հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նշանակված պաշտպանի միջոցով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի այդ, այն հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդ-

րությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք» (տե՛ս Նորիկ Պողոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՅԲԲԴ-2/0153/01/08 որոշման 25-րդ կետը):

34. *Ն. Պողոսյանի* վերաբերյալ որոշման մեջ անդրադառնալով քրեական վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության խնդրին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) վարույթն իրականացնող մարմինը կասկածյալի ընտրած փաստաբանին ներգրավում է որպես պաշտպան: Այս դեպքում պաշտպանին վարույթ ներգրավելու հիմքը կասկածյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումն է: Եթե կասկածյալը չունի պաշտպան և վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացնում որևէ փաստաբանի, ապա այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է որևէ փաստաբանի նշանակել պաշտպան. պաշտպանի ընտրության և նշանակման իրավասություն քննիչը չունի: ՀՀ փաստաբանների պալատի նշանակումից հետո պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը:

ՀՀ քրեադատավարական օրենքում նման պահանջի և ընթացակարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել կասկածյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ դրանով իսկ նպաստելով քրեական գործի արդարացի քննությանն ու լուծմանը, ինչպես նաև բացառել վարույթն իրականացնող մարմնի կողմից իր նախաձեռնությամբ որևէ մեկին որպես պաշտպան երաշխավորելը» (տե՛ս Նորիկ Պողոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման 27-րդ կետը):

35. Չարգացնելով *Ն. Պողոսյանի* վերաբերյալ որոշման մեջ շարադրված վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալին և մեղադրյալին պաշտպան ընտրելու, հրավիրելու իրավունքի ընձեռումն ամենից առաջ նպատակ է հետապնդում ապահովել վերջիններիս պաշտպանության իրավունքի իրացումը: Ընդ որում, պաշտպանի ընտրությունը ոչ միայն իրավաբանական նշանակություն ունեցող ակտ է, այլ նաև ունի բարոյական նշանակություն, որի էությունը պաշտպանի և պաշտպանյալի միջև վստահության անհրաժեշտ մթնոլորտի ստեղծումն է:

Այսպիսով, ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված է «պաշտպանի անհատական հրավիրման սկզբունքը», որի խախտումը պետք է դիտել որպես կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ռոնահարում:

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Շ.Ամիրխանյանը խնդրել է դատարանին իրեն տրամադրել հանրային պաշտպան (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատական նիստի նախապատրաստական մասում նույնպես ամբաստանյալ Շ.Ամիրխանյանը դիմել է հանրային պաշտպան

ունենալու խնդրանքով և ցանկացել է անվճար նշանակված պաշտպան: Գատարանը որպես պաշտպան երաշխավորել է Անահիտ Հովհաննիսյանին, որը մինչ այդ որևէ առնչություն չի ունեցել տվյալ քրեական գործի հետ, իսկ ամբաստանյալներ Շ.Ամիրխանյանը և Գ.Ֆարմանյանը նրան ընդհանրապես չեն ճանաչել: Երբ նա որպես պաշտպան ներկայացել է ամբաստանյալներին, Շ.Ամիրխանյանը հայտնել է, որ նրան առաջին անգամ է տեսնում և խնդրել է դատարանին, որ Ա.Հովհաննիսյանն անպայման ծանոթանա գործի նյութերին: Այս պայմաններում Ա.Հովհաննիսյանն ստանձնել է Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպանությունը: Ընդ որում, անտեսվել է պաշտպանի՝ գործի նյութերին ծանոթանալու մասին ամբաստանյալ Շ.Ամիրխանյանի խնդրանքը և առանց 7 հատորանոց գործի նյութերին ծանոթանալու, համոզված չլինելով, որ իր պաշտպանյալների մեղադրանքը գործի նյութերով հաստատված է, առանց նրանց հետ խորհրդակցելու, Ա.Հովհաննիսյանը միջնորդել է կիրառել դատական քննության արագացված կարգ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

37. Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշման մեջ սահմանված և սույն որոշման 33-35-րդ կետերում վերահաստատված իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 33-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում խախտվել է Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպանության իրավունքը: Մասնավորապես, վերջիններս ոչ միայն գրկվել են իրենց ընտրած պաշտպանի միջոցով իրենց պաշտպանելու կամ անվճար պաշտպան ունենալու իրավունքից, այլև նրանց բավարար ժամանակ և հնարավորություն չի տրվել իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար:

38. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբան Ա.Հովհաննիսյանն ապօրինի է ներգրավվել սույն գործով վարույթին: Ինչպես երևում է դատական նիստի ձայնագրառումից և արձանագրման համառոտագրումից, դատական նիստի նախապատրաստական մասում դատական նիստի քարտուղարը կողմերի՝ դատարան ներկայանալու մասին զեկուցելիս ներկայացած անձանց մեջ նշել է նաև պաշտպան Անահիտ Հովհաննիսյանին: Սակայն, դատարան չեն ներկայացվել և գործի նյութերում չկան Ա.Հովհաննիսյանի անձը հաստատող փաստաթուղթը և փաստաբանների պալատի կողմից տրված՝ նրա փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը: Բացակայում են նաև որպես պաշտպան հանդես գալու՝ ամբաստանյալների ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

39. Հիմք ընդունելով սույն որոշման 32-38-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում խախտվել է Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի պաշտպանության իրավունքը: Սույն գործով փաստաբան Ա.Հովհաննիսյանի մաս-

նակցությունը կրել է անօրինական բնույթ, քանի որ նա քրեական գործով վարույթին մասնակցել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգի խախտմամբ:

40. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից անտեսվել են դատական քննության արագացված կարգի կիրառման պայմանները, միջնորդություն ներկայացնելու և արագացված կարգով դատական քննություն անցկացնելու կարգը սահմանած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ, 375²-րդ և 375³-րդ հոդվածների, պաշտպանի՝ վարույթին մասնակցելու հիմքերը, պաշտպանի կողմից իր իրավավիճակի հաստատումը կարգավորող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ և 71-րդ հոդվածների, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքն ամրագրած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնք հանգեցրել են ամբաստանյալների պաշտպանության իրավունքի խախտման:

41. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 37-րդ և 38-րդ կետերում արձանագրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտումներ են, որոնք կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե (...) այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը»: Ուստի, սույն գործով դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

42. Ինչ վերաբերում է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ամբաստանյալ Գ.Ֆարմանյանի բողոքում առկա պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 40-րդ կետում արձանագրված դատավարական և կոնվենցիոն խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պաշտպան Ա.Ջուվանովայի վճռաբեկ բողոքը բավարարել ամբողջությամբ, իսկ ամբաստանյալ Գ.Ֆարմանյանի վճռաբեկ բողոքը՝ մասնակիորեն: Ամբաստանյալ Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և ամբաստանյալ Գառնիկ Մարտինի Ֆարմանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 30-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԱՎԴ/0002/11/10**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԱՎԴ/0002/11/10
Նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ **Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատախազ՝ **Ս.ՄԱԼԻԱՍՅԱՆԻ**

2011 թվականի փետրվարի 24-ին **ք. Երևանում**

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի նոյեմբերի 18-ի որոշման դեմ դատախազի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

1. 2010 թվականի հուլիսի 20-ին Վայոց ձորի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 37104210 քրեական գործը:

2010 թվականի հուլիսի 20-ին Կարեն Սահակյանը ձերբակալվել է:

2010 թվականի հուլիսի 23-ին Կ.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2010 թվականի սեպտեմբերի 24-ին Կ.Սահակյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով նոր մեղադրանք է առաջադրվել:

2. 2010 թվականի հոկտեմբերի 1-ին մեղադրյալ Կ.Սահակյանի պաշտպանը մեղադրյալ Կ.Սահակյանի 2010 թվականի հուլիսի 20-ի խոստովանական բացատրությունը, 2010 թվականի հուլիսի 20-ի և հուլիսի 23-ի ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու, ինչպես նաև անհիմն լինելու պատճառաբանությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերացնելու մասին միջնորդություն է ներկայացրել քննիչին: Պաշտպանը միջնորդել է նաև վերացնել Կ.Սահակյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը, իսկ նշված միջնորդությունները չբավարարելու դեպքում նախաքննությունը վերսկսել և կատարել որոշակի քննչական գործողություններ:

2010 թվականի հոկտեմբերի 5-ին Արարատի մարզային քննչական բաժնի ավագ քննիչի որոշմամբ Կ.Սահակյանի պաշտպանի միջնորդությունը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2010 թվականի հոկտեմբերի 11-ին Արարատի մարզի դատախազության կողմից մերժվել է քննիչի որոշման դեմ մեղադրյալ Կ.Սահակյանի պաշտպանի բողոքը անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է ՀՀ ռստիկանության Արարատի մարզային քննչական բաժնի ավագ քննիչի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը վերացնելու, նախաքննությունը վերսկսելու և լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու մասին պաշտպանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի բողոքը:

4. Մեղադրյալ Կ.Սահակյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, այն է՝ բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշումը, բողոքը մասնակիորեն ճանաչել է հիմնավորված և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել մեղադրյալ Կ.Սահակյանի իրավունքների և ազատությունների՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված խախտումները:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հունվարի 20-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

6. Մեղադրյալ Կ.Սահակյանի պաշտպանը վճռաբեկ բողոքի պատասխան է ուղարկել՝ խնդրելով դատախազի կողմից ներկայացված բողոքը թողնել առանց քննության, վերը նշված խնդրանքը չբավարարելու դեպքում բողոքը մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ և Վերաքննիչ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշման համաձայն՝ «Դատարանը գտնում է, որ Արարատի մարզային քննիչ Կ.Մելքոնյանի 05.10.2010թ. որոշման դեմ բերված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 63):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի որոշման դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և բեկանելով դատարանի որոշումը՝ պաշտպան Լ.Մարտիրոսյանի բողոքը ճանաչել հիմնավորված՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնելու մեղադրյալ Կ.Սահակյանի իրավունքների և ազատությունների վերոնշյալ խախտումները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 150):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ, որն արտահայտվել է դատավարական իրավունքի խախտումների ձևով և կարող է ազդել գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, չուսումնասիրելով քրեական գործի նյութերը, մեղադրյալ Կ.Սահակյանի նկատմամբ դատաբժշկական լրացուցիչ փորձաքննություն նշանակելու պաշտպանի միջնորդությունը համարել է հիմնավորված, մինչդեռ պաշտպանի կողմից առաջ քաշված հարցերն արդեն իսկ առաջադրված են եղել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին 2010 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Կ.Սահակյանի նկատմամբ դատաբժշկական լրացուցիչ փորձաքննություն նշանակելու պաշտպանի միջնորդության մերժումը համարել է չհիմնավորված, քանի որ Կ.Սահակյանը շարունակում է բողոքել իր առողջական վիճակից, մինչդեռ բողոքաբերը նշել է, որ դատաբժիշկ-փորձագետի կողմից եզրակացություն է տրվել, որի համաձայն՝ կենտրոնական նյարդային համակարգի տրավմատիկ փոփոխությունները կլինիկորեն և պարակլինիկորեն հիմնավորված չեն, հետևաբար՝ Կ.Սահակյանի

զանգատներն անհիմն են:

10. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, առերես հարցաքննությունները պարտադիր համարելով, անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Բողոքաբերը մասնավորապես փաստարկել է, որ առերես հարցաքննություններ կատարելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելու քննիչի որոշումն Առաջին ատյանի դատարանի կողմից հիմնավոր է համարվել և մանրամասն պատճառաբանվել է, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը և 216-րդ հոդվածի 1-ին մասը, համարել է, որ այդ դրվագով միջնորդության մերժումն անհիմն է, քանի որ քննիչը ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, որպիսի հանգամանքները տվյալ դեպքում առկա չեն եղել:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունն անհիմն է, քանի որ եթե տուժողը ֆիզիկապես ի վիճակի չէ մասնակցել այդ գործողությանը, ինչպես պետք է այն կատարվեր: Բացի այդ, տվյալ դեպքում կխախտվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջը: Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, առերես հարցաքննությունները պարտադիր համարելով, անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

11. Բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը քննչական փորձարարություն կատարելու պաշտպանի միջնորդությունը մերժելն անհիմն է համարել՝ առանց գործի նյութերին ծանոթանալու և ստուգելու՝ պարզապես վկայակոչելով պաշտպանի մատնանշած անձանց ցուցմունքները: Նույն կերպ՝ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ մեղադրյալի նկատմամբ դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու միջնորդության մերժումն անհիմն է:

12. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել մեղադրյալ Կ.Սահակյանին ճանաչման համար տուժող Ռ.Եղիզարյանին ներկայացնելու պաշտպանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, այն դեպքում, երբ և՛ տուժողը, և՛ մեղադրյալ Կ.Սահակյանը ցուցմունքներ են տվել, որ իրար մինչև դեպքը ճանաչել են, ավելին՝ տուժողն աշխատում է Կ.Սահակյանի հոր տան հարևանությամբ գտնվող խանութում:

13. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները և նկատի ունենալով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ ամբողջությամբ մերժելով Կ.Սահակյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավա-

կան հարցը հետևյալն է. սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը հետագա դատական վերահսկողության հնարավորության մասով համապատասխանո՞ւմ է արդյոք Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով սահմանված այն չափանիշին, որ հետագա դատական վերահսկողության ենթակա չեն այն որոշումները, որոնցում ենթադրաբար առկա խախտումները դատաքննության ընթացում հնարավոր է վերացնել:

15. Մինչդատական վարույթում անձի խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Նարեկ» ՍՊԸ-ի, Վ. Գրիգորյանի, Վ. Մանուկյանի և Ա. Ղավալյանի վերաբերյալ գործերով կայացված որոշումներում:

«Նարեկ» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատական կարգով բողոքարկման ենթակա են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները և որոշումները, որոնք կայացվել են մինչև գործն ըստ էության լուծելու համար դատարան ուղարկելը: Սահմանելով հետագա դատական վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նախաքննության ավարտված լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման համար: (...)» (տե՛ս «Նարեկ» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0050/11/08 որոշման 22-րդ կետը):

Վ. Գրիգորյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: Անձի իրավունքները և օրինական շահերը խախտելու դեպքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները դատական բողոքարկման առարկա լինելու հանգամանքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքից, (...):

(...) Եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման» (տե՛ս Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԳ-0031/11/08 որոշման 12-րդ կետը):

Վ. Գրիգորյանի վերաբերյալ գործով ձևավորված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը զարգացրել է *Վ. Մանուկյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ, որտեղ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման» (տե՛ս Վարուժան Մանուկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշման 16-րդ կետը):

16. Մեջբերված որոշումներում արտահայտված դիրքորոշումների վերլուծությունից երևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով կարող են բողոքարկվել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բերված այն բողոքները, որոնք շոշափում են անձի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով քննության ենթակա են այն բողոքները, որոնցում վկայակոչված որոշումների և գործողությունների (անգործության) հետևանքով թույլ տրված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան, չեն կարող վերացվել քրեական գործը դատարանում քննելիս՝ գործի դատական քննության փուլում, այդ

թվում՝ վերաքննության կամ վճռաբեկության կարգով: Նշված կանոնից բացառությամբ են կազմում, թերևս, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները, որոնց բողոքարկման իրավունքը չի կարող սահմանափակվել նախաքննության ավարտման պատճառաբանությամբ (տե՛ս Անուշ Գավալյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ Ե-ԶԲԳ/0299/01/08 որոշման 20-րդ կետը):

17. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մերժել է ՀՀ ոստիկանության Արարատի մարզային քննչական բաժնի ավագ քննիչի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը վերացնելու, նախաքննությունը վերսկսելու և լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու մասին պաշտպանի բողոքը:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, մասնակիորեն բավարարել է պաշտպան Լ.Մարտիրոսյանի բողոքը՝ այն ճանաչելով հիմնավորված և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնելու մեղադրյալ Կ.Սահակյանի իրավունքների և ազատությունների խախտումները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով տուժողի նկատմամբ դատաբժշկական հանձնաժողովային լրացուցիչ փորձաքննություն նշանակելու, մեղադրյալի նկատմամբ դատաբժշկական լրացուցիչ փորձաքննություն նշանակելու, վկաների և տուժողի հետ առերես հարցաքննություններ կատարելու, Կ.Սահակյանի նկատմամբ դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու, քննչական փորձարարություն կատարելու, մեղադրյալ Կ.Սահակյանին ճանաչման համար տուժող Ռ.Եղիզարյանին ներկայացնելու միջնորդությունների մերժման արդյունքում նախաքննության մարմնի կողմից թույլ չեն տրվել մեղադրյալի իրավունքների և ազատությունների այնպիսի խախտումներ, որոնք հնարավոր չէ վերացնել դատաքննության ընթացում:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ եթե նախաքննության ժամանակ փորձաքննություն չի նշանակվել, դատական քննության ժամանակ կողմերն իրավունք ունեն միջնորդել այն նշանակելու: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 351-րդ հոդվածից բխում է, որ ճանաչման ներկայացնելը և քննչական փորձարությունը կարող են կատարվել դատական քննության ժամանակ:

19. Հիմք ընդունելով նախորդ կետում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով կայացված որոշումը հիմնավորված չէ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և

օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմանը:

20. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի պատասխանում շարադրված այն փաստարկմանը, որ դատախազի վճռաբեկ բողոքը պետք է առանց քննության թողնվի, քանի որ դատախազը վճռաբեկ բողոքարկման իրավասություն չունի:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նախատեսելով դատավարության մասնակիցների վճռաբեկ բողոքարկման իրավունքը, միաժամանակ բացառում է քրեական հետապնդման մարմինների կողմից վճռաբեկ բողոքարկումը: Իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ կետի՝ դատախազը (մեղադրողը) քրեական հետապնդման մարմին է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա (...)

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: (...)

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի կարգավորումից բխում է, որ կողմերի մրցակցային իրավունքների, իրենց դիրքորոշումը պաշտպանելու հնարավորությունների սահմանափակումները կարող են հիմնավորվել բացառապես ողջամիտ իրավական շահերով: Մինչդեռ՝ մրցակցային դատավարությունում մեղադրանքի կողմը ներկայացնող հիմնական սուբյեկտին, դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունքով չօժտելը պաշտպանության կողմի բոլոր սուբյեկտներին այդ իրավունքով օժտելու պայմաններում որևէ ողջամիտ իրավական շահով չի հիմնավորվում: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունք չտրամադրելու մասով հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածին:

23. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ « (...) Նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները»:

Քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը ամրագրված է օրենսգրքի ընդհանուր մասում, իսկ 404-րդ հոդվածը՝ հատուկ մասում, ուստի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ գործում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված դրույթը:

Հետևաբար՝ դատախազի կողմից վճռաբեկ բողոքարկումն իրավաչափ է, և սույն բողոքը այդ հիմքով չի կարող առանց քննության թողնվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԿԴ/0176/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿԴ/0176/01/09 որոշում
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՋԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ **Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ պաշտպան՝ **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**
տուժող՝ **Հ.ԳՈՒԲԳԱՐՅԱՆԻ**

2011 թվականի փետրվարի 24-ին **ք. Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննելով Լիա Արտյոմի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշման դեմ ամբաստանյալ Լ.Ավետիսյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2008 թվականի դեկտեմբերի 19-ին:
2009 թվականի հունիսի 18-ին Լիա Արտյոմի Ավետիսյանին մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

2009 թվականի հուլիսի 10-ին Լ.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի օգոստոսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությունը ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Դատարան):

2. Դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճռով Լիա Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ 26.273.520 (քսանվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ:

Վերոհիշյալ դատավճռով որոշվել է Լ.Ավետիսյանից հօգուտ տուժող Հասմիկ Գուրգարյանի բռնագանձել 26.273.520 (քսանվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

3. Դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Լ.Ավետիսյանը և նրա պաշտպան Ա.Գրիգորյանը:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

4. Ամբաստանյալ Լ.Ավետիսյանի պաշտպան Ա.Գրիգորյանը Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. 2007 թվականի հունիսի 14-ին երեք տարի ժամկետով տրված լիազորագրով Հասմիկ Գուրգարյանը Լիա Ավետիսյանին լիազորել է՝ վաճառելու Երևանի Թումանյան փողոցի 28/20 շենքի 27-րդ բնակարանը, Հ.Գուրգարյանի անվամբ ՀՀ տարածքում գնելու անշարժ գույք, ստորագրելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, այն գրանցելու Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումում, ստանալու Հ.Գուրգարյանի անվամբ գնված անշարժ գույքի սեփականության վկայականը (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 7):

6. 2007 թվականի օգոստոսի 13-ին կնքված՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի բովանդակությունից երևում է, որ Երևանի Թումանյան փողոցի 28/20 շենքի 27-րդ բնակարանի համասեփականատերեր Ն.Գուրգարյանը և Հ.Կյուրեղյանը հիշյալ բնակարանը վաճառել են Սմբատ Գասպարյանին, որի անունից համապատասխան լիազորագրի հիման վրա հանդես է եկել և պայմանագիրը ստորագրել Գուրգեն Գավթյանը (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 224):

7. 2007 թվականի օգոստոսի 20-ին կնքված՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի բովանդակությունից երևում է, որ Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանի սեփականատերեր Աշոտ Տեր-Գրիգորյանը և Վարվարա Դարագյոզյանը, որոնք հանդես են եկել որպես վաճառողներ, վերոհիշյալ բնակարանը վաճառել են Լիա Ավետիսյանին, որը հանդես է եկել որպես գնորդ: Ըստ հիշյալ պայմանագրի՝ անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմել է 23.450.000 դրամ և գնորդի կողմից ենթակա է եղել վճարման պայմանագրի կնքման պահին (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 8):

8. 2007 թվականի սեպտեմբերի 6-ին Լ.Ավետիսյանին տրված՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի բովանդակությունից երևում է, որ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է Լիա Արտյոմի Ավետիսյանի անվամբ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 9-11 էջեր):

9. Լիա Ավետիսյանը գործի քննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանը գնել է իր համար՝ իր իսկ կողմից որպես վարկ վերցված գումարով (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 211-215 էջեր, ինչպես նաև հատոր 3, 136-140 էջեր՝ դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները):

10. 2007 թվականի մայիսի 8-ին «Կասկադ-Կրեդիտ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար Սոնա Իշխանյանի (վարկատու) և «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» Հայ-Ամերիկյան ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լիա Ավետիսյանի (փոխառու), կնքել են թիվ 00078 վարկային պայմանագիրը, համաձայն որի՝ վարկատուն փոխառուին տրամադրում է կտորներով վարկ, որի ընդհանուր գումարն է 19.000.000 ՀՀ դրամ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 243-248 էջեր):

11. 2009 թվականի մայիսի 15-ին «Կասկադ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության հաճախորդների սպասարկման վարչության պետ Ա.Խիտարովայի կողմից ստորագրված տեղեկանքի համաձայն՝ Չավեն Կիրակոսյանը 2007 թվականի հոկտեմբերի 8-ին «Կասկադ Բանկում» իր հաշվեհամարից 19.934.274.40 ՀՀ դրամ գումարի փոխանցում է կատարել «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ի հաշվեհամարին և նույն օրը հիշյալ գումարը «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ի կողմից փոխանցվել է «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲ ընկերությանը՝ վարկային պարտավորությունների մարման նպատակով (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 161):

12. «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲ ընկերության կողմից 2009 թվականի մայիսի 15-ին տրված տեղեկանքի համաձայն՝ «ԱՐԵՎ-ՍԵՏԱՂ» ՓԲԸ-ն և «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 2007 թվականի մայիսի 8-ին կնքել են թիվ 00078 վարկային պայմանագիրը, ըստ որի՝ «ԱՐԵՎ-ՍԵՏԱՂ» ՓԲԸ-ին տրամադրվել է 17.565.000 ՀՀ դրամ վարկ: 2007 թվականի հոկտեմբերի 8-ին կատարելով 19.934.274.4 ՀՀ դրամ գումարի վերջնական վճարում՝ «ԱՐԵՎ-ՍԵՏԱՂ» ՓԲԸ-ն ամբողջովին կատարել է վերը նշված վարկային պարտավորությունները «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 162):

13. Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանի նախկին սեփականատեր, գործով վկա Աշոտ Տեր-Գրիգորյանը ցուցմունք է տվել, որ հիշյալ բնակարանը գնելու համար պայմանավորված գումարը Լ.Ավետիսյանը նրան է փոխանցել իր բնակարանում, առանց վկաների: Հ.Դուրգարյանը գումարի փոխանցման ժամանակ ներկա չի գտնվել, և ինքը չի կարող վստահորեն պնդել, որ գումարը պատկանում է Հ.Դուրգարյանին (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 185-187 էջեր):

14. Հ. Դուրգարյանը ցուցմունք է տվել, որ վստահելով իր քրոջ դուստր Լ.Ավետիսյանին՝ իր բնակարանը վաճառելու և իր համար նոր բնակարան գնելու համար լիազորագիր է տվել նրան: Ապա Լ.Ավետիսյանի ներկայությամբ կատարված գործարքով 120.000 ԱՄՆ դոլարով վաճառել է Թումանյան փողոցի վրա գտնվող իր բնակարանը: Այդ գումարի մի մասով Լիա Ավետիսյանը նրա համար գնել է Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանը, որի պետական գրանցման հարցերով ևս զբաղվել է Լ.Ավետիսյանը: Մոտ մեկ տարի անց պարզել է, որ Լ.Ավետիսյանը բնակարանը ձևակերպել է իր անվամբ և դրանից զայրացած՝ դիմել է Լ.Ավետիսյանին, որը, սակայն, հրաժարվել է բնակարանը վերադարձնել (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 44- 47 էջեր, ինչպես նաև 3-րդ հատորի 136-140 էջերում գտնվող դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները):

15. «ՌՎ Ռիելթի» ՍՊԸ-ի աշխատակից, անշարժ գույքի գործակալ Գ.Դավթյանը որպես վկա ցուցմունք է տվել, որ 2007 թվականի ամռանը Երևանի Թումանյան փողոցի 28/20 շենքի 27-րդ բնակարանի առուվաճառքի գործարքը կատարվել է «Կենտրոն» նոտարական գրասենյակում, որտեղ գնորդի կողմից լիազորագրով հանդես է եկել ինքը, իսկ վաճառողները եղել են Հ.Դուրգարյանը և նրա որդին: Առուվաճառքի պայմանագրի կնքմանը ներկա է եղել նաև Լ.Ավետիսյանը: Բնակարանի համար վճարված 120.000 ԱՄՆ դոլարի մի մասը՝ 40.000 ԱՄՆ դոլարը, տրվել է Հ.Դուրգարյանի որդուն, 2.000 ԱՄՆ դոլարը՝ որպես վերջնավճարի գումար, պահվել է և հետագայում՝ բնակարանն ազատելուց հետո, տրվել է Հ.Դուրգարյանին, իսկ մնացած գումարը Հ.Դուրգարյանի խնդրանքով տրվել է Լ.Ավետիսյանին: Վերջինս ասել է, որ այդ գումարը Հ.Դուրգարյանի համար նոր բնակարան գնելու համար է (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, 53- 55, 75-77, 240-241 էջեր, ինչպես նաև հատոր 3, 136-140 էջեր՝ դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչներ):

16. Վկաներ Արմեն Ոսկանյանը, Միշա Իսոյանը, Միշա Դալիբալյանը, Անա-

հիտ Մադաթյանը, Անժելո Դուրգարյանը և Ռիմա Առաքելյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ անմիջականորեն չեն առնչվել Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանը գնելու գործընթացին, սակայն հետագայում իրենց հայտնի է դարձել, որ Հ.Դուրգարյանն իր համար բնակարան գնելու նպատակով գումար է տվել Լ.Ավետիսյանին, իսկ վերջինս գնված բնակարանը գաղտնի ձևակերպել է իր անվամբ:

Քրեական գործում առկա չէ որևէ գրավոր ապացույց, որը, համապատասխանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևին, կհավաստեր իր համար բնակարան գնելու նպատակով Հ.Դուրգարյանի կողմից Լ.Ավետիսյանին գումար փոխանցելու փաստը:

17. Տուժող Հ.Դուրգարյանը Վճռաբեկ դատարանի դատական նիստում հայտարարեց, որ չի ցանկանում, որ Լ.Ավետիսյանին բանտարկեն, այլ ընդամենն ուզում է, որ նա վերադարձնի իր բնակարանը: Տուժողը հայտարարեց, որ իրենց միջև առկա է գույքային վեճ (տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը):

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

18. Վճռաբեկ բողոք բերած անձի պնդմամբ բողոքարկվող որոշումը կայացնելիս թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, դատական ակտն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, Վերաքննիչ դատարանը չի կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, իսկ հետագոտված ապացույցներն էլ չեն արժանացել ճիշտ գնահատման:

19. Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ մեղադրանքը հիմնավորող ութ վկաներից յոթը հանդիսանում են տուժողի և նրա հանգուցյալ ամուսնու ազգականները, որոնց ցուցմունքները չեն կարող արժանահավատ լինել այն պատճառով, որ նրանք նպատակ ունեն օժանդակել տուժողին: Այդ վկաներն անձամբ մասնակից չեն եղել երկու բնակարանների առուվաճառքի գործարքների նախապատրաստմանը և կնքմանը, նրանց ցուցմունքները հիմնված են տուժողից ստացված տեղեկությունների և ամբաստանյալի մոր հետ ունեցած խոսակցություններից արված իրենց ենթադրությունների վրա:

Բողոքի հեղինակը շեշտել է, որ իր պաշտպանյալ Լ.Ավետիսյանը չի չարաշահել մորաքրոջ վստահությունը, չի տիրացել նրա գույքին: Իսկ առաջադրված մեղադրանքի կապակցությամբ Լ.Ավետիսյանը բազմիցս հայտարարել է, որ իր մորաքույրը զրպարտում է իրեն, իր համար նյութական արժեքները ոչինչ են իր պատվի և արժանապատվության համեմատ:

20. Բողոքաբերի պնդմամբ՝ քրեական գործի նյութերի մանրամասն ուսումնասիրության և տրամաբանական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ առկա են քաղաքացիաիրավական հարաբերություններ, քաղաքացիական վեճ, որը

ենթակա է լուծման քաղաքացիական դատավարության կարգով:

21. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, փոփոխել այն, Լիա Արտյոմի Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով քննվող բողոքի կապակցությամբ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ խարդախության հանցակազմի քրեաիրավական բնութագրին, նախ՝ դիտարկված ինքնին, ապա քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ (մասնավոր-իրավական պարտավորությունների հետ) հարաբերակցության մեջ:

1. Խարդախության հանցակազմը՝ դիտարկված ինքնին

22. Խարդախությունը դասվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ հափշտակությունների շարքին: Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի բովանդակությունից, խարդախությունը «խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերել[ն]» է:

Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան համոզելու և հորդորելու արդյունքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Ասինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով:

23. Խաբեությունը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը: Այսպիսով, խաբեությունը դրսևորվում է հետևյալ երկու եղանակով՝

ա) իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրում,

բ) ճշմարտության մասին լռել:

23.1. Իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրման դեպքում հանցավորը գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի մոտ սխալ պատկերացում է ստեղծում գույքը նրա տնօրինությանն անցնելու օրինական հիմքերի մասին և առաջ բերում գույքի հանձնման օրինականության պատրանք (ակտիվ խաբեություն): Իրական, ճշմարիտ փաստերի խեղաթյուրումը կարող է իրականացվել կամ բանավոր խոսքի միջոցով կամ դրսևորվել որոշակի գործողություններով: Գործողությունների միջոցով փաստերի խեղաթյուրումը, սակայն, ենթադրում է տուժողի վրա հանցագործի առավել ակտիվ ներգործություն:

23.2. Ճշմարտության մասին լռելու դեպքում հանցավորը դիտավորյալ լռում է իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների մասին, որի արդյունքում գույքի սեփականատերը կամ գույքը տիրապետողը մոլորության մեջ են ընկնում գույքը հանցավորին հանձնելու օրինական հիմքերի առկայության հարցում (պասիվ խաբեություն): Ճշմարտության մասին լռելը, սակայն, քրեորեն պատժելի է այն դեպքերում, երբ հանցագործը պարտավոր էր տուժողին իրազեկել այնպիսի հանգամանքների մասին, որոնց իմացության արդյունքում տուժողը մոլորության մեջ չէր ընկնի:

24. Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները:

Հանցագործի նկատմամբ տուժողի վստահությունը կարող է ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքեր ունենալ: Այլ կերպ՝ հանցավորի և տուժողի միջև առկա՝ վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են բխել ինչպես նրանց միջև առկա պայմանագրից, լիազորագրից և այլն, այնպես էլ առաջանալ հանցավորի և գույքը հանձնողի անձնական հարաբերություններից, հանցավորի կողմից նախկինում դրսևորած վարքագծից, հանցավորի անձնավորությունից և այլն:

25. Ամփոփելով սույն որոշման 22-24-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

26. Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավոր-

րությամբ և շահադիտական նպատակով:

26.1. Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

26.2. Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է:

26.3. Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցության վրա:

Նշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը, և եթե ապացուցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն առկա է:

26.4. Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում, որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմն առկա չէ:

II. Խարդախության հանցակազմը՝ դիտարկված մասնավոր-իրավական պարտավորությունների հետ հարաբերակցության մեջ

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ հատկանիշների հիման վրա է սահմանազատվում խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից:

28. Տարբեր տեսակի գործարքների (առուվաճառք, գրավ, փոխառություն, այդ թվում՝ վարկային պայմանագիր և այլն) կատարման ժամանակ ծագող քաղաքացիական իրավահարաբերություններից խարդախության հանցակազմի սահմանազատման հիմնախնդրին Վճռաբեկ դատարանն անդրադառնում է՝ ելնելով այն հանգամանքից, որ անձի կողմից իր գույքային պարտավորությունների չկատարումը դեռևս չի վկայում անձի մոտ հանցանքի կատարման դիտավորության առկայության մասին: Այլ կերպ՝ անձի կողմից քաղաքացիաիրավական պարտավորության

չկատարումը դեռևս չի վկայում վերջինիս արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի և, հետևաբար, խարդախության հանցակազմի առկայության մասին (տե՛ս սույն որոշման 26-րդ կետը):

29. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

30. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ:

31. Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը:

Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրություն և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն:

Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրությամբ՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

32. Հիմք ընդունելով սույն որոշման 27-31-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության անձեռնմխելիությունը հիմնարար սահմանադրական արժեք է, ուստի խարդախության վերաբերյալ դատական քաղաքականության համար պետք է անկյունաքարային նշանակություն ունենա սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը:

III. Լիա Ավետիսյանին վերագրվող արարքում խարդախության հանցակազմի առկայությունը

33. Սույն որոշման 22-32-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անդրադառնում է սույն գործով իր առջև բարձրացված հիմնական իրավական հարցին, այն է՝ Լ.Ավետիսյանի արարքում առկա⁶ է արդյոք խարդախության հանցակազմ:

34. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

34.1. (ա) 2007թ. հունիսին տրված լիազորագրով Հ.Դուրգարյանը Լ.Ավետիսյանին լիազորել է վաճառել Երևանի Թումանյան փողոցում գտնվող իր բնակարանը, Հ.Դուրգարյանի անվամբ ՀՀ տարածքում գնելու անշարժ գույք, ստորագրել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, այն գրանցել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումում, ստանալ Հ.Դուրգարյանի անվամբ գնված անշարժ գույքի սեփականության վկայականը:

(բ) 2007թ. օգոստոսի 13-ի՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի բովանդակությունից երևում է, որ Երևանի Թումանյան փողոցում գտնվող նշված բնակարանի համասեփականատերեր Հ.Դուրգարյանը և Հ.Կյուրեղյանը անձամբ հիշյալ բնակարանը վաճառել են Սմբատ Գասպարյանին:

(գ) 2007թ. օգոստոսի 20-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի բովանդակությունից երևում է, որ Լ.Ավետիսյանը Ա.Տեր-Գրիգորյանից և Վ.Լարազյոզյանից գնել է Երևանի Դեմիրճյան փողոցում գտնվող բնակարանը: Ըստ հիշյալ պայմանագրի՝ անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմել է 23.450.000 դրամ և գնորդի կողմից ենթակա է եղել վճարման պայմանագրի կնքման պահին:

(դ) 2007թ. սեպտեմբերի 6-ին Լ.Ավետիսյանին տրված՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի բովանդակությունից երևում է, որ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Դեմիրճյան փողոցում գտնվող նշված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է Լ.Ավետիսյանի անվամբ (տե՛ս սույն որոշման 5-8-րդ կետերը):

34.2. (ա) Լ.Ավետիսյանը գործի քննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Երևանի Դեմիրճյան փողոցի նշված բնակարանը գնել է իր համար՝ իր իսկ կողմից որպես վարկ վերցված գումարով:

(բ) 2007 թվականի մայիսի 8-ին «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն, ի դեմս Սո-

նա Իշխանյանի (վարկատու) և «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Ավետիսյանի (փոխառու), կնքել են վարկային պայմանագիր, համաձայն որի՝ վարկատուն փոխառուին տրամադրում է կտորներով վարկ, որի ընդհանուր գումարն է 19.000.000 ՀՀ դրամ:

(գ) 2009թ. մայիսի 15-ին «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի տված տեղեկանքի համաձայն՝ Չավեն Կիրակոսյանը 2007 թվականի հոկտեմբերի 8-ին «Կասկադ Բանկում» իր հաշվեհամարից 19.934.274.40 ՀՀ դրամ գումարի փոխանցում է կատարել «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ի հաշվեհամարին և նույն օրը հիշյալ գումարը «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ն փոխանցել է «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ին՝ վարկային պարտավորությունների մարման նպատակով:

(դ) «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 2009թ. մայիսի 15-ին տրված տեղեկանքի համաձայն՝ «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ն և «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 2007 թվականի մայիսի 8-ին կնքել են վարկային պայմանագիր, ըստ որի՝ «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ին տրամադրվել է 17.565.000 ՀՀ դրամ վարկ: 2007 թվականի հոկտեմբերի 8-ին կատարելով 19.934.274.4 ՀՀ դրամ գումարի վերջնական վճարում՝ «ԱՐԵՎ-ՄԵՏԱՂ» ՓԲԸ-ն ամբողջովին կատարել է վերը նշված վարկային պարտավորությունները «Կասկադ-Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ:

(ե) Երևանի Դեմիրճյան փողոցի նշված բնակարանի նախկին սեփականատեր, գործով վկա Տեր-Գրիգորյանը ցուցմունք է տվել, որ հիշյալ բնակարանը գնելու համար պայմանավորված գումարը Լ.Ավետիսյանը նրան է փոխանցել իր բնակարանում, առանց վկաների: Հ.Դուրգարյանը գումարի փոխանցման ժամանակ ներկա չի գտնվել, և ինքը չի կարող վստահորեն պնդել, որ գումարը պատկանում է Հ.Դուրգարյանին (տե՛ս սույն որոշման 9-13-րդ կետերը):

34.3. (ա) Հ.Դուրգարյանը ցուցմունք է տվել, որ վստահելով իր քրոջ դուստր Լ.Ավետիսյանին՝ իր բնակարանը վաճառելու և իր համար նոր բնակարան գնելու համար լիազորագիր է տվել նրան: Այս Լ.Ավետիսյանի ներկայությամբ կատարված գործարքով 120.000 ԱՄՆ դոլարով վաճառել է Թումանյան փողոցի վրա գտնվող իր բնակարանը: Այդ գումարի մի մասով Լ.Ավետիսյանը նրա համար գնել է Երևանի Դեմիրճյան փողոցի նշված բնակարանը, որի պետական գրանցման հարցերով ևս զբաղվել է Լ.Ավետիսյանը: Մոտ մեկ տարի անց պարզել է, որ Լ.Ավետիսյանը բնակարանը ձևակերպել է իր անվամբ և դրանից զայրացած՝ դիմել է Լ.Ավետիսյանին, որը, սակայն, հրաժարվել է բնակարանը վերադարձնել:

(բ) Անշարժ գույքի գործակալ Գ.Դավթյանը որպես վկա ցուցմունք է տվել, որ 2007թ. ամռանը Երևանի Թումանյան փողոցի նշված բնակարանի առուվաճառքի գործարքը կատարվել է «Կենտրոն» նոտարական գրասենյակում, որտեղ գնորդի կողմից լիազորագրով հանդես է եկել ինքը, իսկ վաճառողները եղել են Հ.Դուրգարյանը և նրա որդին: Առուվաճառքի պայմանագրի կնքմանը ներկա է եղել նաև Լ.Ավետիսյանը: Բնակարանի համար վճարված 120.000 ԱՄՆ դոլարի մի մասը՝ 40.000 ԱՄՆ դոլարը, տրվել է Հ.Դուրգարյանի որդուն, 2.000 ԱՄՆ դոլարը՝ որպես վերջնա-

վճարի գումար, պահվել է և հետագայում՝ բնակարանն ազատելուց հետո, տրվել է Հ.Գուրգարյանին, իսկ մնացած գումարը Հ.Գուրգարյանի խնդրանքով տրվել է Լ.Ավետիսյանին: Վերջինս ասել է, որ այդ գումարը Հ.Գուրգարյանի համար նոր բնակարան գնելու համար է:

(գ) Վկաներ Ա.Ոսկանյանը, Մ.Իսոյանը, Մ.Գալիբալթյանը, Ա.Մադաթյանը, Ա.Գուրգարյանը և Ռ.Առաքելյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ անմիջականորեն չեն առնչվել Երևանի Դեմիրճյան փողոցի նշված բնակարանը գնելու գործընթացին, սակայն հետագայում իրենց հայտնի է դարձել, որ Հ.Գուրգարյանն իր համար բնակարան գնելու նպատակով գումար է տվել Լ.Ավետիսյանին, իսկ վերջինս գնված բնակարանը գաղտնի ձևակերպել է իր անվամբ:

(ե) Գործում առկա չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևին համապատասխան որևէ գրավոր ապացույց, որը կհավաստեր Հ.Գուրգարյանի կողմից Լ.Ավետիսյանին գումարի փոխանցման փաստը:

(դ) Տուժող Հ.Գուրգարյանը Վճռաբեկ դատարանի դատական նիստում հայտարարել է, որ չի ցանկանում, որ Լիա Ավետիսյանին բանտարկեն, այլ ընդամենը ուզում է, որ նա վերադարձնի իր բնակարանը: Տուժողը հայտարարեց, որ իրենց միջև առկա է գույքային վեճ (տե՛ս սույն որոշման 14-17-րդ կետերը):

35. Հիմք ընդունելով սույն որոշման 34.1-34.3-րդ ենթակետերում մեջբերված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լ.Ավետիսյանը, որպես գնորդ կնքելով անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, ձեռք է բերել Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանը, որի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է նրա անվամբ: Գործի նյութերից երևում է նաև, որ Լ.Ավետիսյանի մորաքույր Հ.Գուրգարյանը դիմել է քրեական վարույթ իրականացնող մարմին՝ հայտնելով, որ Երևանի Դեմիրճյան փողոցի 38-րդ շենքի թիվ 5 բնակարանը գնելու գումարը Լ.Ավետիսյանին ինքն է տվել, սակայն վերջինս իրենից գաղտնի բնակարանը ձևակերպել է իր անվամբ:

36. Նախորդ կետում նշված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Գուրգարյանի կողմից Լ.Ավետիսյանին բնակարան գնելու համար գումար տալու փաստի ապացուցման հիմնախնդիրը վերաբերում է մասնավոր իրավունքի ոլորտին, և այդ հարցով հանրային շահը չի գերակայում մասնավոր շահի նկատմամբ:

Փաստորեն, Հ.Գուրգարյանի և Լ.Ավետիսյանի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի վեճ այն հարցի շուրջ, թե արդյոք Հ.Գուրգարյանը Լ.Ավետիսյանին տվել է գումար: Սույն գործի փաստերի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Գուրգարյանի և Լ.Ավետիսյանի միջև առկա վեճը ենթակա է լուծման քաղաքացիական իրավունքի նորմերին համապատասխան և քաղաքացիական դատավարության կարգով: Հետևաբար, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է բացառապես Լ.Ավետիսյանին վերագրվող արարքին քրեաիրա-

վական գնահատական տալու խնդրին և գտնում է, որ նախաքննական մարմինը և ստորադաս դատարանները հանգել են սխալ հետևության այն մասին, որ Լ.Ավետիսյանի արարքում առկա է խարդախության հանցակազմ:

37. Սույն որոշման նախորդ կետում առկա իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի հիմքում դրված և մեղադրական դատավճռում շարադրված ապացույցների շարքում առկա չէ ոչ մի փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Լ.Ավետիսյանը, որով ներգործել է Հ.Դուրգարյանի գիտակցության և կամքի վրա, որի արդյունքում վերջինս, ընկնելով մոլորության մեջ, անձամբ գույք է հանձնել Լ.Ավետիսյանին (տե՛ս սույն որոշման 23-25-րդ կետերը): Այսինքն՝ գործի նյութերով հիմնավորված չէ Լ.Ավետիսյանի կողմից այնպիսի արարքի կատարում, որը կգնահատվեր որպես խարդախություն:

Հետևաբար, բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

38. Ինչ վերաբերում է խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրանքի կողմը չի ներկայացրել որևէ պաշտոնական վարկած Լ.Ավետիսյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ մինչև Հ.Դուրգարյանի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը Լ.Ավետիսյանը դրսևորել է գույքի հափշտակման ուղղակի դիտավորություն և ունեցել է այն հափշտակելու նպատակ: Սույն որոշման 26-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա՝ այդ դեպքում խարդախությունը բացակայում է:

39. Հիմք ընդունելով սույն որոշման 22-38-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Ավետիսյանի արարքում բացակայում է խարդախության հանցակազմի թե՛ օբյեկտիվ կողմը և թե՛ սուբյեկտիվ կողմը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարում Լ.Ավետիսյանի կողմից Հ.Դուրգարյանի վստահությունը չարաշահելու միջոցով վերջինիս գույքը հափշտակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Ավետիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը բացակայում է:

40. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

Հիմք ընդունելով քրեադատավարական վերոնշյալ դրույթը, ինչպես նաև սույն որոշման մեջ առկա վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Ավետիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով: Այսինքն՝ Լ.Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և քրեական գործի վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Լիա Արտյոմի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. դեկտեմբերի 23-ի որոշումը բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և Լիա Արտյոմի Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԳ/0281/01/10
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Մ.Միմոնյան, Ա.Գանիեյան

ԵԿԳ/0281/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սվետլանա Մեդրակի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հուլիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13134310 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ Սվետլանա

Սեդրակի Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի հոկտեմբերի 25-ին Ս.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճռով ամբաստանյալ Ս.Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել է ազատազրկման 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ս.Գրիգորյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Գրիգորյանը, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ս.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ խարդախության եղանակով ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2008 թվականի սեպտեմբերի 12-ին չարաշահել է Սվետլանա Նիազյանի վստահությունը, վերջինիս որդուն՝ Սարգիս Ասատրյանին, պատժի կրումից ազատելու պատրվակով Երևան քաղաքում գործող «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Վարդանանց մասնաճյուղում խաբեությամբ նրանից վերցրել է 900.000 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար և խարդախությամբ հափշտակել այն՝ վերջինիս պատճառելով խոշոր չափերի՝ 900.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

6. Քրեական գործում առկա է քննիչ Գ.Գևորգյանի կողմից կազմված տեղեկանքը հետևյալ բովանդակությամբ. «(...) թիվ 1314310 քրեական գործով կասկածյալ Սվետլանա Գրիգորյանը հայտարարեց, որ աջ ձեռքը վնասված է և բոլոր իրեն վերաբերող փաստաթղթերում ստորագրեց ձախ ձեռքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 39):

7. Քրեական գործում առկա է նաև քննիչ Գ.Գևորգյանի կողմից կազմված տեղեկանքը հետևյալ բովանդակությամբ. «(...) թիվ 1314310 քրեական գործով կասկածյալ Սվետլանա Գրիգորյանի փաստաբանի, պաշտպանի՝ Սուսաննա Հարու-

թյունյանի կանչով Կենտրոնի քննչական բաժին են ժամանել 1-03-ի բուժօգնության աշխատակիցները և Ս.Գրիգորյանին զննելուց հետո բժիշկ Վլադիմիր Բարխուդարյանը հայտարարեց, որ վերջինիս տեղափոխում են Երևանի թիվ 2 կլինիկական հիվանդանոց՝ ռենտգեն հետազոտության նպատակով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 40):

8. Ոստկանության մայր Ա.Վարդանյանի զեկուցագրի համաձայն. «(...) Շտապ օգնությունը բուժօգնության է տեղափոխել Սվետլանա Գրիգորյանին՝ 52 տարեկան, աջ արմունկի հողի սալջարդ վերքով, վերջույթների բազմաթիվ կապտուկներով, որը հիվանդանոցում հայտարարել է, որ իրեն վնասվածքը հասցրել են ոստիկանության աշխատակիցները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 43):

9. Բժիշկ-վնասվածքաբան Է.Պատվականյանի կողմից տրված տեղեկանքի համաձայն. «(...) Կլինիկա-ռենտգենաբանական հետազոտությունից հետո ախտորոշվել է՝ աջ արմնկահողի սալջարդ, վերջույթների և մեջքի շրջանի բազմաթիվ կապտուկներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 45):

10. Նախաքննության մարմնի 2010 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 52):

Դատաբժշկական փորձաքննության արդյունքում կազմված թիվ 1740 եզրակացության համաձայն. «Ս.Գրիգորյանի ստացած մարմնական վնասվածքները՝ (...), հասցվել են բութ, կոշտ առարկաններով, հնարավոր է նշված ժամկետում, որոնք ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին-առանձին առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 110):

11. 2010 թվականի հուլիսի 21-ին Ս.Գրիգորյանը ՀՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական ծառայության պետ Ա.Միրզոյանին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ «2010 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը 11.30-ի սահմաններում, Երևան քաղաքի ոստիկանության քաղաքային վարչության աշխատակիցներ Բաբկեն Հովհաննիսյանը, Աշոտ Հարությունյանը և մյուսները, (...) ծեծի և խոշտանգման արդյունքում մարմնական վնասվածքներ պատճառելով, ապօրինի կերպով, առանց պատշաճ ծանուցագրի, հիմքերի, տնային հագուստով և ոտաբոբիկ, բռնի կերպով բերման ենթարկելու միջոցով բերել են քաղաքային վարչություն (...): Ի դեպ, ինձ վրա հարձակումը կատարվել է Բաբկեն Հովհաննիսյանի կողմից, երբ ես գտնվել եմ հայրական տան բակում գտնվող փակ դռնով լոգարանում, դուռը ջարդելու, 2 աշխատակիցների հետ վայրագ ձևով թևերս ոլորելու, քաշքշելու, ջարդոտելու, վնասվածքներ պատճառելու, գլխիս հարվածելու և հետևից կոպտորեն հրելու, ոտքերիս հարվածելու միջոցով բակում գտնվող ողջ ժողովրդի աչքի առաջ տանից 50 մետր հեռավորության վրա գտնվող մեքենան քարշ տալու միջոցով (...): Եվ որ կարևորն է, նրանց էր միացել երիտասարդ մի կին, որը աշխատակիցների թողստությամբ և ողջ ժողովրդի աչքի առաջ, ինձ մեքենա նստեցնելու պահին, ձեռքի պայուսակով երկու անգամ գլխիս հարվածելով: (...) Մինչև ժամը 18.00-ին քաղաքային վարչությունում գտնվելու ժամանակ ինձ է մոտեցել գլխիս հարվածող կինը (...), որից հետո նույն

Բարկեն Հովհաննիսյանը կրկին գլխիս (գանգի ստորին մասը) և թևերիս ձեռքերով հարվածելու, ոլորելու, սեղմելու, հրելու, վերելակի մոտ ընկնելուս պահին, ոտքերով մերկ ոտքերիս թաթերին հարվածելու միջոցով, քարշ տալով նստեցրել է իր մեքենան և բերել Կենտրոն քննչական բաժին: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 95):

12. Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ Ս.Գրիգորյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նյութերն անջատվել են թիվ 13134310 քրեական գործից և հանձնվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը՝ ըստ ենթակայության (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 145):

13. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Դատարանը պատիժ սահմանելիս հաշվի է առնում նրա կատարած հանցանքի խոշոր չափերով կատարված խարդախության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը ու ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները: Դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու անձը բնութագրող հանգամանքներ դիտում է այն, որ ամբաստանյալ Սվետլանա Գրիգորյանը հանցանքը կատարում է առաջին անգամ, ընդունում է կատարած հանցանքը և զղջում դրա համար, մասնակի վերականգնել է տուժողին պատճառված նյութական վնասը: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան: Կատարած արարքի համար ամբաստանյալ Սվետլանա Գրիգորյանը ենթակա է պատժի՝ ազատագրկման ձևով, նկատի ունենալով նրա արարքի կատարման վտանգավորությունը՝ այն, որ իր գործողություններով խաթարել է նաև արդարադատության հեղինակությունը, դատարանը գտավ, որ ամբաստանյալը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 83):

14. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում Ս.Գրիգորյանի շահերի պաշտպանը խնդրել է «[Ս.Գրիգորյանի] նկատմամբ նշանակել պատիժ ազատագրկման ձևով երկու տարի ժամկետով և ՀՀ ԱԺ-ի կողմից 19.06.2009թ.-ին ընդունված համաներում հայտարարելու մասին որոշման համաձայն ազատել պատժի կրումից» կամ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ [Ս.Գրիգորյանի] նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 98):

15. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Բողոք բերած անձը վերաքննիչ դատարանին է ներկայացրել տուժող Կարինե Ասատրյանի կողմից տրված ստացականը, ըստ որի՝ ամբաստանյալի կողմից ամբողջությամբ արդեն իսկ վերականգնվել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ և 70-րդ հոդվածների համատեքստում քննության առնելով ամբաստանյալ Սվետլանա Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատժի հարցը, հանգում է այն հետևության, որ դատարանը, պահպանելով օրենսդրի՝ վերը նշված հոդվածների պահանջները,

ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի և համաչափ պատիժ, և այն մեղմացման առումով փոփոխելու հիմքեր չկան: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանը սույն գործի շրջանակներում հանգել է այն ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալն իր նկատմամբ նշանակված պատիժը պետք է կրի և կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, և այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 118):

16. Վճռաբեկ բողոքին կից ներկայացվել է թվով տասը լուսանկար՝ կոտրված դռան փակամի և Ս.Գրիգորյանի նկատմամբ կիրառված բռնության հետքերի պատկերներով:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

17. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ, 70-րդ հոդվածների պահանջները և նշանակել են ակնհայտ խիստ պատիժ, ինչպես նաև խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 399-րդ հոդվածների պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը տարածվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, ուստի իր նկատմամբ վերոնշյալ համաներման ակտը չկիրառելու և իրեն պատժի կրումից չազատելու նպատակով դատարանները սահմանել են 3 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում, մինչդեռ համաներման ակտ չընդունվելու պարագայում իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի շրջանակներում կնշանակվեր համաչափ և արդարացի պատիժ:

Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ, պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել իր պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նախաքննության ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը, առաջին իսկ կանչով ներկայանալը և այլն:

18. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմանը՝ բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չի անդրադարձել իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման նպատակահարմարության հարցին, իսկ Վերաքննիչ դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել օրենքով ամրագրված հիմնարար սկզբունքները:

19. Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարաններն անտեսել են գործում առկա բժշկական և այլ տվյալները, որոնցով հաստատվել է իր նկատմամբ բռնություններ և այլ մեթոդներ կիրառելու հանգամանքը, բացի այդ, նախաքննության մարմինն իր դիմումների և բողոքների վերաբերյալ օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի իրականացրել: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ոստիկանության

բռնությունների հետևանքով ինքն ստացել է մի շարք մարմնական վնասվածքներ, ծեծի միջոցով իրեն հարկադրել են ստորագրել ինչ-որ ցուցմունքների տակ: Արդյունքում բռնության ազդեցության տակ կորզվել են ցուցմունքներ, և կազմվել են հարցաքննության ոչ օբյեկտիվ արձանագրություններ, որոնք չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության կամ իր նկատմամբ նշանակել այլ պատժաչափ, կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը և իրեն ազատել պատժի կրումից կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերն ըստ էության երկու իրավական հարց է բարձրացրել, որոնցից առաջինն առնչվում է իր նկատմամբ նշանակված պատժի արդարացիությանը, երկրորդը՝ իրեն բերման ենթարկելու ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ կիրառված բռնությանը և վատ վերաբերմունքին: Այլ կերպ՝ բողոքաբերի առաջին հարցն առնչվում է նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ, 70-րդ հոդվածների պահանջների չկիրառմամբ, իսկ երկրորդը՝ դատավարական իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածներից, ՀՀ Սահմանադրության 17-րդ և 22-րդ հոդվածներից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից բխող պահանջների չպահպանմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ դատավարական խախտումը հաստատված ճանաչելու պարագայում այն կարող է ազդեցություն ունենար բողոքաբերին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության, և հետևաբար՝ նաև նրա նկատմամբ նշանակված պատժի վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքում որևէ փաստարկ չկա ամբաստանյալի նկատմամբ կիրառված խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ: Այսինքն՝ վերոնշյալ դատավարական իրավունքի խախտման հանգամանքը վերաքն-

նիչ դատարան չի բողոքարկվել (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Հաշվի առնելով, սակայն, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի բացարձակ բնույթը և այն հանգամանքը, որ պետական մարմինները պարտավոր են քննության առնել վատ վերաբերմունքի վերաբերյալ վստահելի հայտարարությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարական իրավունքի խախտման մասով բողոքաբերի բողոքը ենթակա է քննության: Այլ կերպ՝ ենթադրյալ խոշտանգումների վերաբերյալ պատշաճ քննություն իրականացնելու պահանջն ավելի բարձր իրավական արժեք ունի, քան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատավարական արգելքը, պայմանով, որ խոշտանգման վերաբերյալ հայտարարությունը համապատասխանում է վստահելիության չափանիշին: Սույն գործով Ս.Գրիգորյանի հայտարարության վստահելի լինելը հիմնավորվում է ինչպես սույն գործի նյութերով (տե՛ս սույն որոշման 6-12-րդ կետերը), այնպես էլ վճռաբեկ բողոքին կից ներկայացված լուսանկարներով (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

23. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդման առկայության պայմաններում արագացված դատական քննություն կիրառելու իրավական ընթացակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանն արդյո՞ք կարող էր կիրառել դատական քննության արագացված կարգ այն դեպքում, երբ ամբաստանյալը հաղորդում էր ներկայացրել իր նկատմամբ կիրառված վատ վերաբերմունքի վերաբերյալ:

25. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»:

Մեջբերված դրույթից բխում է, որ խոշտանգումը վատ վերաբերմունքի այլ

ձևերից՝ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից, տարբերվում է նրանով, որ ունի կոնկրետ նպատակներ, որոնցից մեկը ցուցմունք ստանալն է: Այսինքն՝ այն բռնությունը, որը վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառվում է անձից ցուցմունքներ կորզելու նպատակով, պետք է բնորոշվի որպես խոշտանգում:

26. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

27. ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատա-

վարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

29. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (վատ վերաբերմունքի) արգելքի բացարձակ բնույթի և այդ կապակցությամբ պետության պոզիտիվ պարտականությունների հարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս. Գոյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ. «(...) խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում: (...):

Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պահանջից, (...):

[Վերոնշյալ] հոդվածում կիրառվող «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն: (...)» (տե՛ս Արայիկ Գոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԶԳ/0049/01/09 որոշման 22-րդ և 23-րդ կետերը):

30. Սույն որոշման նախորդ կետում շարադրված հանգամանքից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման արդյունքում լուրջ կասկածի տակ է դրվում նման վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Սարգսյանի* վերաբերյալ որոշման մեջ և իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը,

ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի՝ ԵԶՐԳ /0295/01/08 որոշման 15-րդ կետը):

31. Սույն որոշման 25-30-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումներից հետևում է, որ քրեական դատավարությունում որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ, մասնավորապես՝ անձի նկատմամբ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառմամբ ձեռք բերված փաստական տվյալները:

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործով նախաքննության ընթացքում Ս.Գրիգորյանը հայտարարել է, որ աջ ձեռքը վնասված է, և բոլոր իրեն վերաբերող փաստաթղթերում ստորագրել է ձախ ձեռքով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Բացի այդ, գործով նախաքննության ընթացքում Ս.Գրիգորյանը ռենտգեն հետազոտության նպատակով տեղափոխվել է Երևանի թիվ 2 կլինիկական հիվանդանոց, որտեղ հայտարարել է, որ իրեն վնասվածքը հասցրել են ոստիկանության աշխատակիցները (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Ս.Գրիգորյանի հետազոտության արդյունքում պարզվել է, որ նրա մոտ առկա են աջ արմնկահողի սալջարդ, վերջույթների և մեջքի շրջանի բազմաթիվ կապտուկներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Նախաքննության մարմնի որոշմամբ նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Ս.Գրիգորյանի ստացած մարմնական վնասվածքները հասցվել են բութ, կոշտ առարկաններով, հնարավոր է նշված ժամկետում, և, ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին-առանձին, առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Ս.Գրիգորյանն իր նկատմամբ կիրառված վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական ծառայությանը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ Ս.Գրիգորյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նյութերն անջատվել են թիվ 13134310 քրեական գործից և ըստ ենթակայության հանձնվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ սույն գործով նախաքննության ընթացքում Ս.Գրիգորյանը հայտնել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ կիրառված բռնության մասին: Ս.Գրիգորյանի այս հաղորդման վերաբերյալ նյութերն անջատվել են առանձին վարույթում:

33. Սույն որոշման 31-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների

լույսի ներքո գնահատելով սույն որոշման 32-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր նկատմամբ խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ վստահելի հայտարարություն անելով՝ Ս.Գրիգորյանն ըստ էության կասկածի տակ է դրել սույն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված որոշակի ապացույցների թույլատրելիությունը: Դրա հետ մեկտեղ, սակայն, Ս.Գրիգորյանին խոշտանգելու և հետևաբար նաև այդ խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցի կապակցությամբ վերջնական որոշում չի կայացվել:

34. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

- 1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և
- 2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և
- 3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, գտնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին: (...)»:

35. Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ մի շարք հանգամանքների առկայության դեպքում դատարանը չի կարող կիրառել դատական քննության արագացված կարգ: Այդպիսի հանգամանքների թվին է դասվում այն դեպքը, երբ միջնորդությունը կամավոր չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արագացված դատական քննություն կիրառելու միջնորդության կամավորությունը ենթադրում է, որ առկա չեն ողջամիտ հիմքեր կասկածի տակ դնելու ամբաստանյալի կամարտահայտության համապատասխանությունը նրա բուն կամքին:

Որպես ընդհանուր կանոն, կանխավարկածն այն է, որ ամբաստանյալի կամարտահայտությունը համապատասխանում է նրա բուն կամքին: Սակայն այս կանխավարկածը կարող է հաղթահարվել մեծ կարևորության իրավական արժեքի առկայության դեպքում, մասնավորապես՝ նախկինում խոշտանգված լինելու չփարատված կասկածի առկայության դեպքում:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խոշտանգման արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է նաև, որ ենթադրյալ խոշտանգման փաստով պատշաճ քննության իրականացումը, որպես մարդու հիմնարար իրավունք, անօտարելի հանրային-իրավական արժեք է, և անձը չի կարող իր կամարտահայտությամբ դրանից հրաժարվել: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը հիմնված է Մար-

դու իրավունքների եվրոպական դատարանի այն հաստատուն մոտեցման վրա, որ ենթադրյալ խոշտանգման փաստի առիթով պատշաճ քննության իրավական պահանջի բացակայության պայմաններում խոշտանգման և վատ վերաբերմունքի իրավական արգելքը գործնականում արդյունավետ չի կարող լինել (Տես, օրինակ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով Մեծ պալատի վճիռը, կետ 131, Գիկմեն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, կետ 101):

36. Նշվածի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խոշտանգման մասին մեղադրյալի կողմից նախկինում արված վստահելի հայտարարության փաստն ինքնին ողջամտորեն կասկածի տակ է դնում արագացված դատական քննություն կիրառելու միջնորդության համապատասխանությունը նրա բուն կամքին: Ուստի, մնան դեպքերում դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով մերժի արագացված դատական քննություն կիրառելու վերաբերյալ մեղադրյալի միջնորդությունը և գործի քննությունն իրականացնի ընդհանուր կարգով:

37. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ, Ս.Գրիգորյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նյութերը հանձնվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը՝ ըստ ենթակայության (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը կիրառել է դատական քննության արագացված կարգ, այսինքն՝ չի իրականացրել գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն, այլ միայն քննարկել է Ս.Գրիգորյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և չի անդրադարձել Ս.Գրիգորյանի նկատմամբ վատ վերաբերմունք կիրառելու հարցին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 13-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, և այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ո՛չ Առաջին ատյանի, ո՛չ Վերաքննիչ դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Ս.Գրիգորյանն իր նկատմամբ կիրառված խոշտանգումների վերաբերյալ հաղորդում է ներկայացրել: Դատարանները հաշվի չեն առել նաև այն, որ այդ հաղորդումը գտնվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում, և վերջինս դեռևս որոշում չի կայացրել Ս.Գրիգորյանի նկատմամբ խոշտանգումներ կիրառելու փաստի հաստատման կամ մերժման վերաբերյալ:

38. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 35-36-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առա-

ջին ատյանի դատարանը իրավասու չէր արագացված կարգ կիրառելու միջնորդությունը ճանաչել կամավոր ու բավարարել այն պայմաններում, երբ ամբաստանյալը վստահելի հաղորդում էր ներկայացրել իր նկատմամբ կիրառված խոշտանգման վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա դատական ակտը բեկանելու հիմք է հանդիսանում:

39. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին, որը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ, 70-րդ հոդվածների պահանջների չկիրառման և արդյունքում Ս.Գ.րիգորյանի նկատմամբ ակնհայտ խիստ պատիժ նշանակելու ձևով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 35-րդ կետում արձանագրված դատավարական խախտումն ուղղակի ազդեցություն է ունեցել բողոքաբերին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության և արդյունքում նաև բողոքաբերի նկատմամբ նշանակված պատժի վրա, ուստի անհնար է անդրադառնալ բողոքաբերի կողմից բարձրացված նյութական իրավունքի խախտման հարցին: Վերջինիս հնարավոր է անդրադառնալ միայն սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից թույլ տրված դատավարական խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սվետլանա Մեդրակի Գ.րիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԿԳ/0003/11/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԿԳ/0003/11/10
նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝ Վ.ԵՆՈՔՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ «Արցախբանկ» ՓԲԸ-ի Սայաթ-Նովա մասնաճյուղի կառավարիչ Ջ.Ավետիքյանի և ներկայացուցիչ Վ.Ենոքյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ «Արցախբանկ» ՓԲԸ-ի «Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Ջ.Ավետիքյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ջ.Ավետիքյանը բողոք է ներկայացրել ՀՀ

զլխավոր դատախազին:

Կոտայքի մարզի դատախազ Է.Անդրիկյանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի գրությամբ դիմողին հայտնվել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշումն օրինական է և հիմնավորված:

2. «Արցախբանկ» ՓԲԸ-ի «Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Տոնոյանը 2010 թվականի նոյեմբերի 19-ին բողոք է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ բողոքը բավարարել է, արձանագրել է անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը և վերացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

3. Դատախազ Է.Անդրիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է և բեկանել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշումը վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել «Արցախբանկ» ՓԲԸ-ի կառավարիչ Ջ.Ավետիքյանը և ներկայացուցիչ Վ.Ենոքյանը:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ.

«1. Վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնի հետաքննիչ Հ.Սեհրաբյանի կողմից 19.08.2010թ. կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին 07.12.2010թ. որոշումը բեկանել:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում» (տե՛ս Նյութեր, հատոր 2, էջ 46):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակները նշել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ, 126-րդ, 127-րդ և 394-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իրենց վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից և անդրադարձել դատավարության մասնակցի իրավունքների ենթադրյալ խախտմանը, որի վերաբերյալ վերաքննիչ բողոք չի բերվել:

Բողոքաբերները նշել են նաև, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Կոտայքի մարզի ոստիկանությունը, կատարելով քրեադատավարական գործողություններ, գրկել է «Արցախբանկ» ՓԲԸ-ին իր շահերը պաշտպանելու իրավունքից, բացատրություններ տալու, հակափաստարկներ և այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, որի արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված մրցակցության սկզբունքը:

Բացի այդ, բողոքաբերների պնդմամբ, Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի դատական ակտի եզրափակիչ մասից անհասկանալի է, թե Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատական ակտը և գործն ուղարկել է նոր քննության, թե օրինական ուժ է տվել նախաքննության մարմնի որոշմանը:

Բողոքաբերները նշել են նաև, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի դիսպոզիցիան, որի արդյունքում փոխվել է հոդվածի իմաստը:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

8. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող ակտերի շրջանակի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու վե-

րաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 9-ի որոշումն արդյունք անորոշ է:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար, ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները մանրամասն օրենսդրական կարգավորում են ստացել: Մինչդեռ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի կայացմանը վերաբերող օրենսդրական ձևակերպումն անորոշ է, քրեադատավարական օրենքը չի հասակեցնում «նոր դատական ակտ»

հասկացությունը և չի սահմանում, թե վերաքննիչ դատարանի որ որոշումներն են համարվում «նոր դատական ակտ»:

11. Նախորդ կետում նշված օրենսդրական անորոշությունից խոսափելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված վերաքննիչ դատարանի լիազորությունները պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի նկատմամբ: Այլ կերպ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու արդյունքում վերաքննիչ դատարանը բեկանել է այն՝ առանց մանրամասնելու գործի հետագա ընթացքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

13. Սույն որոշման 11-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն անորոշ է:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը (...) արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անորոշ դատական ակտ կայացնելու պարագայում դատարանը խախտում է իրավունքի շահը արտահայտելու իրավական պահանջը:

15. Ելնելով սույն որոշման 10-14-րդ կետերում շարադրված հիմնավորումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Զրեական գործի հարուցումը՝ մերժելու մասին ՀՀ ռստիկանության Կոտայքի բաժնի հետաքննիչ Հ.Սեհրաբյանի 2010 թվականի օգոստոսի 19-ի որոշումը վերացնելու վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի փետրվարի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԼԳ/0136/01/10**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԳ/0136/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան
դատավորներ՝ Մ.Միմոնյան, Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին ք. Երևանում

դմբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի փետրվարի 21-ի որոշման դեմ Լոռու մարզի դատախազության դատախազ Ս.Փիլոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 19136409 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Հասմիկ Ժորայի Մալխասյանը, Հակոբ Հայկի Սարգսյանը, Գառնիկ Արթուրի Բաղայանը, Գավիթ Աշոտի Պողոսյանը, Էմանուել Վաչիկի Հարությունյանը և Արթուր

Գառնիկի Գասպարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ներգրավվել են որպես մեղադրյալներ:

2010 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Բաղայանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

2010 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Մալխասյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի ապրիլի 29-ին մեղադրյալ Է.Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2010 թվականի ապրիլի 29-ին մեղադրյալ Գ.Պողոսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի ապրիլի 29-ին մեղադրյալ Ա.Գասպարյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

2010 թվականի մայիսի 3-ին մեղադրյալ Հ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի մայիսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Հ.Մալխասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Գ.Բաղայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Բաղայանը վերջնական դա-

տապարտվել է ազատագրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Ա.Գ.ասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատագրկման 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատագրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Գ.ասպարյանը վերջնական դատապարտվել է ազատագրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Գ.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել է ազատագրկման 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Է.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով և դատապարտվել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Մեղադրող Ս.Տոնոյանի, ամբաստանյալներ Ա.Գ.ասպարյանի, Գ.Բադալյանի, Է.Հարությունյանի, պաշտպաններ՝ Գ.Հարությունյանի, Լ.Գոգինյանի, Կ.Գ.ասպարյանի, Լ.Սիմոնյանի և Ռ.Հակոբյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ մեղադրող Ս.Տոնոյանի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ ամբաստանյալներ Ա.Գ.ասպարյանի, Գ.Բադալյանի, Է.Հարությունյանի, պաշտպաններ՝ Գ.Հարությունյանի, Լ.Գոգինյանի, Կ.Գ.ասպարյանի, Լ.Սիմոնյանի և Ռ.Հակոբյանի վերաքննիչ բողոքները բավարարել մասնակիորեն, այն է՝ բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճիռը, ամբաստանյալ Հ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով և դատապարտել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ամբաստանյալ Հ.Մալխասյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով և դատապարտել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ամբաստանյալ Է.Հարությունյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և դատապարտել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ամբաստանյալ Գ.Պողոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով և դատապարտել է ազատագրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ամբաստանյալ Գ.Բադալյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով, 324-րդ հոդվածի 2-րդ մասով և դատա-

պարտել է ազատագրկման` ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով` 7 (յոթ) տարի ժամկետով` առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով` 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա` նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Բաղալյանը վերջնական դատապարտվել է ազատագրկման 8 (ութ) տարի ժամկետով` առանց գույքի բռնագրավման: Իսկ ամբաստանյալ Ա.Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով, 324-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատագրկման` ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով` 7 (յոթ) տարի ժամկետով` առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով` 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա` նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Գասպարյանը վերջնական դատապարտվել է ազատագրկման 8 (ութ) տարի ժամկետով` առանց գույքի բռնագրավման:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Լուռու մարզի դատախազության դատախազ Ս.Փիլոյանը, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ Հասմիկ Մալխասյանը և Հակոբ Սարգսյանը ստեղծել են կազմակերպված խումբ, որի կազմում ընդգրկվել են Արթուր Գասպարյանը, Գառնիկ Բաղալյանը, Գավիթ Պողոսյանը, ովքեր կայուն խմբի կազմում նախապես միավորվել են Անահիտ Աղայանի նկատմամբ ավագակային հարձակում կատարելու համար: 2009 թվականի ամռանը Ալավերդի քաղաքի բնակիչ Հակոբ Սարգսյանը վերադարձել է Ռուսաստանի Դաշնությունից, բնակվել Վանաձոր քաղաքում և մտերիմ հարաբերությունների մեջ գտնվել իր բարեկամ Հասմիկ Մալխասյանի հետ: Հակոբ Սարգսյանը և Հասմիկ Մալխասյանը զբաղվել են մանրածախ առևտրով, որի ընթացքում Հակոբ Սարգսյանն օգտագործել է Հասմիկ Մալխասյանի անձնական օգտագործման «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենան: Օգոստոս-նոյեմբեր ամիսներին Հասմիկ Մալխասյանը Հակոբ Սարգսյանին հայտնել է իր վաղեմի ծանոթ Անահիտ Աղայանի կողմից առևտրով զբաղվելու, մեծ գումարներ աշխատելու, Անահիտ Աղայանի և նրա քույր Վալյա Հարությունյանի հետ նախկինում ունեցած խնդիրների և նրանց պատճառով իր դատապարտվելու մասին և, նպատակ ունենալով վերջինիցս վրեժխնդիր լինել, առաջարկել է Անահիտ Աղայանի նկատմամբ կատարել ավագակային հարձակում: Իրականացնելով իրենց հանցավոր մտադրությունը` Հասմիկ Մալխասյանը և Հակոբ

Սարգսյանն ստեղծել են կայուն խումբ, որի կազմում, Հասմիկ Մալխասյանի համաձայնությամբ, Հակոբ Սարգսյանն ընդգրկել է Դավիթ Պողոսյանին, Արթուր Գասպարյանին, Գառնիկ Բաղալյանին, և նախապես պայմանավորվել հափշտակված գումարի բաժանման վերաբերյալ: Հասմիկ Մալխասյանը, Հակոբ Սարգսյանը, Դավիթ Պողոսյանը, Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բաղալյանը հանդիպել են Հասմիկ Մալխասյանին պատկանող, Վանաձոր քաղաքի Տերյան փողոցի 14բ հասցեում գտնվող խանութում, պայմանավորվել կատարվելիք ավազակային հարձակման մանրամասների մասին, լուծել դերերի բաշխման հարցը: Արթուր Գասպարյանն ավազակային հարձակման համար օգտագործելու նպատակով պահանջել և Հակոբ Սարգսյանից ստացել է արցունքաբեր գազի գլանակը, որը հանձնվել է Դավիթ Պողոսյանին, իսկ Հասմիկ Մալխասյանից Արթուր Գասպարյանը պահանջել և ստացել է սպորտային գլխարկ: Հասմիկ Մալխասյանը խմբի անդամներին տեղեկացրել է Անահիտ Աղայանի բնակության վայրի, նրա կողմից վարած ավտոմեքենայի, երեկոյան տուն գնալու ժամի և նրա մոտ հնարավոր մեծ գումարների մասին, այնուհետև Հակոբ Սարգսյանին և Արթուր Գասպարյանին իր ավտոմեքենայով տարել և ցույց է տվել Անահիտ Աղայանի բնակության վայրը:

2009 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 19⁰⁰-ի սահմաններում Հակոբ Սարգսյանը, Դավիթ Պողոսյանը, Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բաղալյանը Դավիթ Պողոսյանի կողմից վարած «ՎԱԶ 21099» մակնիշի ՄԴՄ 983 պետհամարանիշի ավտոմեքենայով գնացել են Վանաձոր քաղաքի Երևան խճուղի թիվ 109 շենքի մոտ, որտեղ բնակվել է Անահիտ Աղայանը: Պայմանավորվածության համաձայն՝ Հակոբ Սարգսյանը և Գառնիկ Բաղալյանը մնացել են շենքի մոտ, իսկ Դավիթ Պողոսյանը և Արթուր Գասպարյանը, հասնելով շքամուտքին, սպասել են Անահիտ Աղայանի տուն վերադառնալուն: Արթուր Գասպարյանը, Հասմիկ Մալխասյանից հեռախոսազանգով տեղեկանալով Անահիտ Աղայանի տուն վերադառնալու մասին, Դավիթ Պողոսյանի հետ պատրաստվել են ավազակային հարձակում կատարելուն: Անահիտ Աղայանը կանգնեցրել է ավտոմեքենան և մոտեցել շքամուտքին: Այդ ժամանակ Արթուր Գասպարյանը և Դավիթ Պողոսյանը Անահիտ Աղայանի գույքը հափշտակելու նպատակով հարձակվել են վերջինիս վրա և նրա առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ Դավիթ Պողոսյանը որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ՝ արցունքաբեր գազով կուրացրել է վերջինիս, պատճառել առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, իսկ Արթուր Գասպարյանը փորձել է հափշտակել վերջինիս՝ 5.000 ՀՀ դրամ արժողության ձեռքի պայուսակը, սակայն, հանդիպելով Անահիտ Աղայանի դիմադրությանը, դիմել են փախուստի, որի ժամանակ Արթուր Գասպարյանի գլխից ընկել է Հասմիկ Մալխասյանի կողմից տրամադրված գլխարկը: Այնուհետև Դավիթ Պողոսյանը և Արթուր Գասպարյանը հանդիպել են Գառնիկ Բաղալյանին, Հակոբ Սարգսյանին, Հասմիկ Մալխասյանին ու տեղեկացրել, որ չեն կարողացել պայուսակը հափշտակել: Նպատակ ունենալով վերջնականապես իրականացնել իրենց հանցավոր նպատակը,

Հակոբ Սարգսյանը կատարվելիք ավագակային հարձակման վերաբերյալ հայտնել է իր ծանոթ Էմանուել Հարությունյանին՝ խոստանալով նրան հափշտակված գումարից մասնաբաժին:

2009 թվականի նոյեմբերի 29-ին Հակոբ Սարգսյանը, Արթուր Գասպարյանը, Գառնիկ Բադալյանը, Հասմիկ Մալխասյանը և Էմանուել Հարությունյանը գտնվելով Հասմիկ Մալխասյանին պատկանող խանութում, պայմանավորվել են Անահիտ Աղայանի նկատմամբ կրկին կատարել ավագակային հարձակում: Այնուհետև, Հակոբ Սարգսյանը կանչել է Դավիթ Պողոսյանին և ժամը 19⁰⁰-ի սահմաններում Հակոբ Սարգսյանը Էմանուել Հարությունյանի, Դավիթ Պողոսյանի, Արթուր Գասպարյանի և Գառնիկ Բադալյանի հետ, Դավիթ Պողոսյանի կողմից վարած «ՎԱԶ 21099» մակնիշի ՄԴԱ 983 պետհամարանիշի ավտոմեքենայով գնացել են Չուխաջյան թաղամաս՝ նախօրոք իրենց հետ վերցնելով ոստիկանության նախկին ծառայող Հակոբ Սարգսյանի ոստիկանի համազգեստը: Հակոբ Սարգսյանն ավտոմեքենայից իջել է Ջորավար Անդրանիկի և Նաիրի փողոցների խաչմերուկում, նախապես պայմանավորվածության համաձայն, ավագակային հարձակումից հետո իր ընկերներին և Հասմիկ Մալխասյանին դիմավորելու համար, իսկ Էմանուել Հարությունյանը, Դավիթ Պողոսյանը, Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բադալյանը հիշյալ ավտոմեքենայով գնացել են Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 109 շենքի բակ: Դավիթ Պողոսյանը մնացել է ավտոմեքենայում, խմբի արագ հեռացումն ապահովելու նպատակով Էմանուել Հարությունյանն ապասել է շենքի մոտ՝ տարածքը հսկելու համար, իսկ Արթուր Գասպարյանը, կրելով ոստիկանի գլխարկ, Գառնիկ Բադալյանի հետ մոտեցել են Անահիտ Աղայանին: Նախ Արթուր Գասպարյանը ներկայացել է ոստիկանության աշխատակից, ապա վերջինիս գույքը կրկին անգամ հափշտակելու նպատակով նրա առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ՝ նույն արցունքաբեր գազով կուրացրել վերջինիս: Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բադալյանը հարձակվել են նրա վրա, ապա գետնին գցելով՝ ձեռքերով և ոտքերով դիտավորությանը բազմաթիվ հարվածներ են հասցրել Անահիտ Աղայանի մարմնի տարբեր մասերին, պատճառել առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, որից հետո հափշտակել վերջինիս՝ 5.000 ՀՀ դրամ արժողության ձեռքի պայուսակը, որի մեջ եղել են Անահիտ Աղայանի անվամբ փաստաթղթեր, անձնագիր, կանացի հարդարման առարկաներ և դիմել փախուստի: Այնուհետև Էմանուել Հարությունյանը, Դավիթ Պողոսյանը, Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բադալյանը նույն ավտոմեքենայով հեռացել են դեպքի վայրից և, պայմանավորվածության համաձայն՝ Հասմիկ Մալխասյանի և Հակոբ Սարգսյանի հետ հանդիպել Գուգարք համայնքի «Ասատուրի Աղբյուր» կոչվող վայրում և հայտնել, որ պայուսակում գումար չի եղել: Որից հետո, Արթուր Գասպարյանը և Գառնիկ Բադալյանը, հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով, այրել են Անահիտ Աղայանի իրերը, անձնագիրը, ոչնչացրել այն:

6. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը.

«(...) հանցակցության դեպքում, յուրաքանչյուր քրեական գործով, ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատարանը, պարտավոր են հիմնավորել և հստակ սահմանազատել հանցակցության մի ձևը մյուս ձևից, մինչդեռ, (...) ոչ միայն նախաքննական մարմինը, այլ նաև Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը տվյալ հարցին չեն անդրադարձել, ինչը հանգեցրել է դատական սխալի, այն է՝ կիրառվել է «կազմակերպված խումբ» առանձնապես որակյալ հատկանիշը, որը չի հաստատվել: (...) չնայած նրան, որ առաջին ատյանի դատարանը տվյալ հարցին չի անդրադարձել, այնուամենայնիվ հետազոտված ապացույցները և հաստատված փաստական հանգամանքները վերաքննիչ դատարանին հնարավորություն են տալիս առանց նոր փաստական տվյալներ հաստատելու գալ հետևության, որ սույն քրեական գործի շրջանակներում ավագակալին հարձակումը կատարվել է նախնական համաձայնության գալով մի խումբ անձանց կողմից, այլ ոչ թե կազմակերպված կայուն խմբի կողմից»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբեկը նշել է, որ դատական ակտում շարադրված հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին և գործով ձեռք բերված ապացույցներին:

Ըստ նրա՝ սույն գործով կազմակերպված խմբի առկայությունը հաստատվել է մի շարք հանգամանքներով, մասնավորապես նրանով, որ Հ.Մավխասյանը տեղեկություններ է ունեցել տուժող Ա.Աղայանի կողմից գումար վաստակելու վերաբերյալ, նախկինում նրա հետ ունեցել է անախորժություններ, իր հանցավոր մտադրության մասին տեղյակ է պահել ամբաստանյալ Հ.Մարգարյանին, իսկ հետագայում ընդգրկել է նաև մյուս ամբաստանյալներին, նրանց միջև դերերի բաշխում իրականացրել, բացի այդ՝ նախապես ձեռք է բերվել արցունքաբեր գլանակ, նախապես պայմանավորվածություն է եղել հափշտակված գումարը միմյանց մեջ բաժանելու շուրջ:

Բողոքաբեկը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի քննարկել համաձայնության և կայունության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը, այնինչ, խմբի անդամների միջև առկա է եղել կայուն կապ, նախապես պայմանավորվածություն և առավել ծանր հանցագործություններ կատարելու վերաբերյալ համաձայնություն: Բացի այդ, հանցավոր խմբի կայունության մասին է վկայում նաև անձանց կողմից համատեղ գործելու՝ համեմատաբար տևական ժամանակը, այն, որ առաջին անգամ տուժող Ա.Աղայանի նկատմամբ ավագակալին հարձակում կատարելուց և իրենց ակնկալված արդյունքին չհասնելուց հետո հանցավոր խումբը չի կազմալուծվել, այլ համարվել է նոր անդամներով՝ հանցագործու-

թյան կատարումն առավել դյուրին դարձնելու նպատակով:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 21-ի որոշումը, Հ.Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, Հ.Մալխասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, Գ.Բադալյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ դատապարտելով ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Բադալյանին վերջնական դատապարտել ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, Ա.Գասպարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ դատապարտելով ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Գասպարյանին վերջնական դատապարտել ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, Գ.Պողոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, Է.Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ արարքների որակման մասով օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակցության ձևերի պարտադիր և այլընտրանքային հատկանիշների մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալների արարքները պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, այլ ոչ կազմակերպված խմբի կողմից կատարված հանցագործություն:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

2. Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործության սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

3. Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար: (...):»

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է հանցակցության ձևը, այն է՝ հանցակիցների միջև գոյություն ունեցող համաձայնության բնույթը և հանցանքը համատեղ կատարելու եղանակը (հանցակցության և հանցակիցների մեկնաբանությունը տե՛ս *mutatis mutandis* Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-30-րդ կետերը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համեմատական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակցության վերոնշյալ երկու ձևերը՝ նախնական համաձայնությամբ գործող անձանց խումբը և կազմակերպված խումբը, միմյանցից տարբերակելու համար էական նշանակություն ունեն հետևյալ երեք չափանիշները՝

ա) կայունությունը,

բ) միավորվածությունը,

գ) մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելը:

13. Կայունության հատկանիշն արարքը կազմակերպված խմբի կողմից որակելու համար անհրաժեշտ, հիմնական չափանիշն է:

Կազմակերպված խմբի կայունությունը դրսևորվում է խմբի ամբողջամբ, անդամների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությամբ, խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից մյուսներին ղեկավարելով, հատուկ, խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմբային նորմերի առկայությամբ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում կայունությունը բնութագրող վերոնշյալ հատկանիշները պետք է գնահատվեն գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

14. Կազմակերպված խմբի միավորվածության չափանիշը ենթադրում է մեկ կամ մի քանի հանցագործություններ կատարելու մշակված ծրագրերի առկայու-

թյուն, այդ ծրագրերի ակտիվ իրականացում, ուսնձգությունը համատեղ կատարելու մշակված եղանակների առկայություն, դերերի՝ մշակված տեխնիկական բաշխում, հանցանքի կատարումը դյուրին դարձնելուն ուղղված՝ նախապես պայմանավորված գործողությունների կատարում, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

15. Կազմակերպված խումբն ստեղծվում է տևական ժամանակ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով, դրա ստեղծման նպատակը, որպես կանոն, մի շարք հանցանքներ, այդ թվում՝ համասեռ հանցագործություններ կատարելն է: ՀՀ քրեական օրենսդրությունը չի բացառել, սակայն, որ խումբը կարող է ստեղծվել մեկ, սակայն երկարատև և մանրակրկիտ պլանավորված հանցագործություն կատարելու նպատակով: Այս առումով կարևորվում են կազմակերպված խմբին բնորոշ վերոնշյալ երկու չափանիշները՝ կայունությունը և միավորվածությունը, քանի որ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ կայուն և միավորված խմբի կազմի մեջ է մտնում, մասնակցում է խմբի անդամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքներին կամ դրանց մի մասին:

16. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն որոշման 12-15-րդ կետերում նշված և վերլուծված չափանիշների հետ մեկտեղ առկա են նաև նախնական համաձայնությամբ գործող անձանց և կազմակերպված խմբի տարբերակման լրացուցիչ չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն հիմնական չափանիշները գնահատելիս: Դրանք են՝ կազմակերպված խմբի կողմից կատարվող հանցագործության երկարատև պլանավորումը, տևական ժամանակով հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակը, խմբի նյութատեխնիկական հագեցվածությունը, ընդհանուր ֆինանսական միջոցների առկայությունը և այլն:

17. Այսպիսով՝ կազմակերպված խմբին բնորոշ հիմնական առանձնահատկություններն են՝

- ա) հանցանքի կատարմանը երկու կամ ավելի անձանց մասնակցությունը,
- բ) մասնակից անձանց միջև առկա ամուր սուբյեկտիվ կապը, հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ նախապես ձեռք բերված համաձայնությունը,
- գ) հանցանքի կատարումը խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից՝ այն պայմաններում, երբ խմբի մյուս անդամները կազմակերպել, դրդել կամ օժանդակել են հանցանքի կատարումը,
- դ) հանցանքը համատեղ, միասնական ջանքերով կատարելը,
- ե) յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորությունը,
- զ) յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությունը մյուսի գործողության հետ, ինչն արտացոլում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությունը:

18. Նախնական համաձայնությամբ գործող անձանց պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործության մասնակիցները

մինչև հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններն սկսելը պայմանավորվում են հանցանքը համատեղ կատարելու մասին: Ընդ որում, համաձայնությունը ձեռք է բերվում խմբի անդամների կողմից գործողությունների համատեղ կատարման ուղղվածության, հանցագործության կատարման տեղի, ժամանակի, եղանակի և միջոցների, ինչպես նաև խմբի անդամների միջև դերաբաշխման շուրջ: Հանցակցության այս ձևում հանցագործության կատարման մեխանիզմների կոնկրետացումը թերի է և ոչ լիարժեք, թերի են նաև հանցակիցների միջև դերակատարման բաշխումը և պայմանները:

Ի համեմատ նախնական համաձայնությամբ խմբի՝ կազմակերպված խմբի պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մաս) առկա է կազմակերպվածության առավել բարձր աստիճան: Հանցակցության այս ձևը բնութագրվում է պլանավորվածությամբ, մանրակրկիտ նախապատրաստվածությամբ, ինչպես նաև հանցակիցների միջև դերերի բաշխմամբ ու անդամների մասնագիտացվածությամբ: Կազմակերպված խմբի անդամները ոչ թե պարզապես համաձայնության են գալիս հանցանքը համատեղ կատարելու մասին, ինչպես դա առկա է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանք կատարելու դեպքում, այլ համաձայնություն են ձեռք բերում մեկ կամ մի քանի հանցագործություն համատեղ կատարելու շուրջ:

19. Սույն գործի նյութերից երևում է, որ տուժողի նկատմամբ ավազակային հարձակում կատարելու մտադրությունը ծագել է ամբաստանյալ Հ.Մալխասյանի մոտ, իր այդ մտադրության մասին նա հայտնել է Հակոբ Սարգսյանին: Վերջիններս հանցանքի կատարմանը ներգրավել են Գ.Պողոսյանին, Ա.Գասպարյանին, Գ.Բադալյանին և նախապես պայմանավորվել հափշտակված գումարի բաժանման վերաբերյալ: Ավազակային հարձակման առաջին փորձն անհաջողությամբ ավարտվելուց հետո իրենց հանցավոր մտադրությունը վերջնականապես իրականացնելու նպատակով, Հակոբ Սարգսյանն ավազակային հարձակմանը մասնակից է դարձրել իր ծանոթ Է.Հարությունյանին՝ խոստանալով նրան հափշտակված գումարից մասնաբաժին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերլուծելով վերոնշյալ անձանց կողմից հանցանքի կատարման առանձնահատկությունները՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «(...) սույն քրեական գործի շրջանակներում ավազակային հարձակումը կատարվել է նախնական համաձայնության գալով մի խումբ անձանց կողմից, այլ ոչ թե կազմակերպված կայուն խմբի կողմից» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

20. Մեջբերված փաստական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալները նախնական համաձայնություն են ունեցել ընդամենը մեկ հանցագործություն կատարելու վերաբերյալ, որը չի ենթադրել երկարատև ու բարդ նախապատրաստական աշխատանք: Նրանք այլ հանցագործություն չեն կատարել և այդ կապակցությամբ պայմանավորվածություն չեն ունեցել: Բացի այդ, ամբաստանյալների կողմից կատարված հանցագործությունը մանրամասն մշակված չի

եղել, ինչի մասին է վկայում, մասնավորապես, ավագակային հարձակման առաջին փորձն անհաջողությամբ ավարտվելը: Էական է նաև այն հանգամանքը, որ խմբում հեշտությամբ նոր անդամ է ներգրավվել:

Այսպիսով, սույն գործով առկա չէ «կազմակերպված խմբի» կայունության հատկանիշը, որը դրսևո՞վել է հետևյալում. բացակայել են խմբի անդամների ամուր և մշտական կապը, հանցագործության նախապատրաստության կամ կատարման առանձնահատուկ մեթոդների կիրառումը, խմբի անդամների անխախտ համաձայնությունը, կազմակերպվածության բարձր աստիճանը, հանցավոր գործունեությամբ տևական ժամանակով զբաղվելու նպատակը, հնարավոր է եղել խմբի կազմից դուրս գալ և խումբը համալրել նոր անդամներով:

21. Սույն որոշման 10-18-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 19-20-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալների արարքները պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, այլ ոչ կազմակերպված խմբի կողմից կատարված հանցագործություն:

22. Սույն որոշման մեջ վկայակոչված հանցակցության ձևերի վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակցության ձևերից ամենավտանգավորին՝ հանցավոր համագործակցությանը և ընդգծել այն առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս այն տարբերել կազմակերպված խմբից:

23. Հասարակության և պետության համար առավել վտանգ ներկայացնող հանցակցության ձևը՝ հանցավոր համագործակցությունը, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ «Հանցանքը համարվում է հանցավոր համագործակցության կողմից կատարված, եթե դա կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար ստեղծված, համախմբված, կազմակերպված խմբի կողմից կամ մույն նպատակներով ստեղծված կազմակերպված խմբերի միավորմամբ, ինչպես նաև եթե դա կատարվել է այդպիսի համագործակցության անդամի (անդամների) կողմից ի կատարումն դրա հանցավոր նպատակների, ինչպես նաև հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ հանցավոր համագործակցության բնութագրական առանձնահատկություններն են.

1. խմբի առավել մեծ կայունությունը և համախմբվածությունը,
2. առավել բարդ ներքին կառուցվածքը,
3. ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու հատուկ նպատակը:

24. Համախմբվածությունը հանցավոր համագործակցության սոցիալ-հոգեբանական բնութագիրն է, որն արտացոլում է հանցավոր նպատակների իրականաց-

ման համար մասնակիցների ընդհանրությունը:

Հանցավոր համագործակցության կայունությունը և համախմբվածությունը որոշվում է առավել երկար տևողությամբ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով և այն հանցագործությունների ծանրությամբ, որոնք նպատակ ունեն կատարել համագործակցության անդամները: Համախմբվածությունը, որով հանցավոր համագործակցությունը տարբերվում է կազմակերպված խմբից, բնութագրվում է նաև համագործակցության բարդ կառուցվածքով և առավել բարձր աստիճանի կազմակերպվածությամբ: Հանցավոր համագործակցությունը բնութագրվում է հիերարխիկ կառուցվածքով: Որպես կանոն, հանցավոր համագործակցությունն ունի ոչ թե մեկ հեղինակավոր կազմակերպիչ կամ ղեկավար, այլ կառավարվում է մի քանի անձանց կողմից, որոնցից մեկը, այնուամենայնիվ, համագործակցության պարագլուխն է: Բացի այդ, հանցավոր համագործակցությունն իր մեջ կարող է ընդգրկել մի քանի կազմակերպված խմբեր և հանդես գալ որպես դրանց միավորում, որը ղեկավարվում է մեկ ընդհանուր կենտրոնից:

25. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերով սույն գործով նյութական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի չ՛չ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Հակոբ Հայկի Սարգսյանի, Հասմիկ Ժորայի Մալխասյանի, Էմանուել Վաչիկի Հարությունյանի, Գավիթ Աշոտի Պողոսյանի, Գառնիկ Արթուրի Բադալյանի և Արթուր Գառնիկի Գասպարյանի վերաբերյալ չ՛չ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի փետրվարի 21-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ՇԳ/0008/11/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՇԳ/0008/11/10
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ դիմող Էրիկ Իգորի Եղիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հուլիսի 14-ին ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Է.Եղիսյանը դիմում է ներկայացրել Շիրակի մարզի դատախազին այն մասին, որ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու ընթացքում՝ 2010 թվականի ապրիլի 9-ից 12-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես խցում, այնպես էլ զբոսանքի ժամանակ դաժան ծեծի, բռնությունների է ենթարկվել դատապարտյալներ Հ.Հակոբյանի, Ս.Գասպարյանի և Ա.Սելբոնյանի կողմից, որոնք, իր կարծիքով, թմրամիջոց օգտա-

գործած վիճակում են եղել:

Շիրակի մարզի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Բ.Պողոսյանի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Է.Եղիմյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ որոշման դեմ Է.Եղիմյանը 2010 թվականի հոկտեմբերի 19-ին բողոք է ներկայացրել Շիրակի մարզի դատախազություն, որը Շիրակի մարզի դատախազ Գ.Սարգսյանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ մերժվել է:

2. 2010 թվականի նոյեմբերի 25-ին Է.Եղիմյանը Շիրակի մարզի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Բ.Պողոսյանի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի և Շիրակի մարզի դատախազ Գ.Սարգսյանի 2010 թվականի նոյեմբերի 1-ի որոշումների դեմ բողոք է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Է.Եղիմյանի բողոքը մերժվել է:

3. Է.Եղիմյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Է.Եղիմյանը:

2011 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը Է.Եղիմյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Դիմող Է.Եղիմյանը պատիժ է կրում ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում (տե՛ս Նյութեր, էջ 1):

6. Առաջին ատյանի դատարանը Է.Եղիմյանի բողոքով որոշում է կայացրել 2011 թվականի հունվարի 26-ին (տե՛ս Նյութեր, էջ 57):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Է.Եղիմյանի վերաքննիչ բողոքը, որը թվագրված է 2011 թվականի հունվարի 31-ով, Վերաքննիչ դատարանում մուտք է եղել 2011 թվականի փետրվարի 11-ին (տե՛ս Նյութեր, էջ 71-80):

8. Վերաքննիչ դատարանը Է.Եղիմյանի բողոքը թողել է առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ. «Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.01.2011թ. որոշման դեմ դատապարտյալ Է.Եղիմյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել 2011թ. փետրվարի 11-ին՝

ընդհանուր իրավասության դատարանի որոշման հրապարակման պահից հետո՝ տասնվեցերորդ օրը, հետևաբար՝ այն ժամկետանց է և պետք է թողնվի առանց քննության» (տե՛ս Նյութեր, էջ 82):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Բողոքաբերը, մասնավորապես, նշել է, որ իր բողոքը Վերաքննիչ դատարանն առանց քննության է թողել ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով՝ ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի 2011 թվականի փետրվարի 24-ի տեղեկանքը, որի համաձայն. «ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Էրիկ Իգորի Եղիմյանը 31.01.2011թ. օրվա պատասխանատու հերթապահին է հանձնել երկու փակ ծրար, որոնք նույն օրը գրանցվել են համապատասխան մատյանում: Ծրարներից մեկը հասցեագրված էր ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանին, մյուսը՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանին: Ծրարները առաքվել են հասցեստերերին»:

Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, դրա արդյունքում ոստիաակարվել են իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված՝ արդար դատական քննության իրավունքները:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, մանրակրկիտ չքննելով գործի հանգամանքները և չառաջնորդվելով արդարադատության մատչելիության սկզբունքով, թույլ է տվել դատական սխալ, որն էականորեն ազդել է գործի ելքի վրա:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ

դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է քրեակատարողական հիմնարկում պահվող անձի բողոքի քրեադատավարական ժամկետների հաշվարկման վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործով դիմողի բողոքը ժամկետանց է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: (...):

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով: (...):»

13. Նախորդ կետում մեջբերված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեադատավարական ժամկետները քրեական վարույթի պատշաճ ընթացքն ապահովող կարևոր նախադրյալներից են: Դրանք իրենցից ներկայացնում են օրենքով սահմանված որոշակի ժամանակահատված, որի ընթացքում դատավարությանը ներգրավված անձինք իրավունք ունեն կամ պարտավոր են կատարել որոշակի քրեադատավարական գործողություն:

Հաշվի առնելով բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու առանձնահատկությունները՝ օրենսդիրը սահմանել է, որ ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին են հանձնված մինչև ժամկետը լրանալը: Ընդ որում, ժամկետի հաշվարկման այս կանոնի կապակցությամբ օրենքը որևէ տարբերակում չի դնում այն դեպքերի միջև, երբ բողոքաբերն անազատության

մեջ է պահվում տվյալ քրեական վարույթի շրջանակում, թե դրանից դուրս: Այդպիսի տարբերակումը չի կարող իրավաչափ լինել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ժամկետի հաշվարկման հատուկ կարգը նպատակ է հետապնդում հարթել այն անհավասարությունը, որը փաստացի առկա է գործողությունների լիակատար ազատություն ունեցող և այդ ազատությունը չունեցող (կալանքի տակ կամ բժշկական հաստատությունում լինելու պատճառով) անձանց միջև՝ անկախ այդ անձանց դատավարական կարգավիճակից:

14. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատապարտյալն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատերերին»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Դատախազին, դատավորին, մարդու իրավունքների պաշտպանին, պաշտպանին, ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը: (...)»:

Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ դրանք առնչվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ազատությունից զրկված անձանց բողոքների և այլ փաստաթղթերի ժամկետների հաշվարկման կարգին, քանի որ սահմանում են դրանց ուղարկման ժամկետը: Նշված օրենսդրական դրույթների տրամաբանությունից բխում է, որ ազատությունից զրկված անձանց բողոքները և այլ փաստաթղթերը համապատասխան հիմնարկներից հասցեատիրոջն ուղարկվում են ամենաուշն այդ բողոքների և այլ փաստաթղթերի ներկայացման օրվան հաջորդող օրը՝ այդ մասին համապատասխան նշագրում կատարելով ուղարկվող բողոքի, այլ փաստաթղթի կամ ծրարի վրա: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ նշագրման բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ճշտել բողոքի կամ այլ փաստաթղթի ուղարկման ժամկետը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝
«1. Վերաքննիչ բողոք բերվում են՝ (...)

3) (...), իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելուց հետո տասնօրյա ժամկետում:

2. Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ

բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375⁴-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Վերոգրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ գործն ըստ էության չլուծող ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել դրանք հրապարակվելուց հետո տասնօրյա ժամկետում, և որ սահմանված ժամկետի չպահպանման դեպքում ենթակա է կիրառման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասով և 381-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Է.Եղինյանը պատիժ է կրում ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Է.Եղինյանի բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2011 թվականի հունվարի 26-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Է.Եղինյանի վերաքննիչ բողոքը, որը թվագրված է 2011 թվականի հունվարի 31-ով, Վերաքննիչ դատարանում մուտք է եղել 2011 թվականի փետրվարի 11-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Է.Եղինյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում մուտք լինելու օրը՝ 2011 թվականի փետրվարի 11-ը, դիտելով որպես բողոքը ներկայացնելու օր, գտել է, որ այն ժամկետանց է և թողել է առանց քննության (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է դիմող Է.Եղինյանի՝ այլ գործով դատապարտյալ լինելու և ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրելու հանգամանքը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը չի ստուգել վերաքննիչ բողոքը քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հանձնելու ժամկետը, ավելին, վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում մուտք լինելու օրը դիտել է որպես բողոք ներկայացնելու օր և սխալ հետևության հանգել դիմողի կողմից վերաքննիչ բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու վերաբերյալ:

18. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործով դիմողի բողոքը ժամկետանց է:

19. Ելնելով սույն որոշման 12-18-րդ կետերում շարադրված վերլուծությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ

խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում սահմանափակվել է դիմողի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011 թվականի հունվարի 26-ի որոշման դեմ դիմող Էրիկ Իգորի Եղինյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵՇԴ/0090/01/10
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ա.Խաչատրյան

ԵՇԴ/0090/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ժ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Երվանդ Ռաֆիկի Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի մարտի 1-ի որոշման դեմ մեղադրող Ժ.Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հունիսի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11116910 քրեական գործը:

2010 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Երվանդ Ռաֆիկի Մելքոնյանը ներ-

գրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի սեպտեմբերի 1-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Երվանդ Մելքոնյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, և Ե.Մելքոնյանն արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

3. Մեղադրող Ժ.Սահակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի մարտի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մարտի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ժ.Սահակյանը:

2011 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրող Ժ.Սահակյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ե.Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար.

Ե.Մելքոնյանը, աշխատելով «Թագուհի» տաքսի ծառայությունում որպես վարորդ, 2010 թվականի հունիսի 20-ին Արագածոտնի մարզի Ոսկևազ գյուղ ուղևոր տեղափոխելուց հետո Երևան վերադառնալիս՝ ժամը 22-ի սահմաններում, Երևան-Գյումրի ճանապարհի 25-26 կմ հատվածում ճանապարհից ոչ հեռու՝ դաշտում գտնելու միջոցով, ապօրինի կերպով ձեռք է բերել գործարանային արտադրության 12մմ տրամաչափի «Իժ-43Ե» տեսակի 9358665 համարի հրազեն հանդիսացող որսորդական ողորկափող հրացանից փողերի կարճեցմամբ կարճափողի վերափոխված հրացանը, որն իր հետ բերել է Երևան և պահել իրեն վստահված «Ուենո» մականիշի S 3039 պետհամարանիշի տաքսի մեքենայի մեջ: 2010 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 5³⁰-ի սահմաններում, Երևանի Բագրատունյաց պողոտայի 16/1 շենքի մոտ ոստիկանության աշխատակիցների կողմից հրացանը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի բեռնախցիկից և առգրավվել:

6. Համաձայն թիվ 1609 փորձագետի եզրակացության՝ «Ներկայացված կարճեցված փողերով հրացանը հանդիսանում է գործարանային արտադրության 12

տրամաչափի «ԻԺ-43Ե» մոդելի «9358665» համարի որսորդական ողորկափող հրացանից փողերի կարճեցմամբ կարճափողի վերափոխված հրացան /աբրեզ/, որը պիտանի է կրակոցներ կատարելու համար և հանդիսանում է հրազեն» (տե՛ս Քրեական գործ, էջ 21):

7. Առաջին ատյանի դատավճռի համաձայն՝ «Փորձագետ Ուդումյանն իր ցուցմունքներում հաստատելով եզրակացության ճշտությունը, հայտնեց, որ փորձաքննությանը ներկայացված՝ փողերը կարճեցված ողորկափող հրացանը և դրա զարկիչ մեխանիզմը գործարանային արտադրության են, դետալները չեն փոխվել, այլ միայն կարճեցվել են փողերը, որը հանդիսանում է հրազեն: Բացի այդ, փորձագետ Ուդումյանը նշեց նաև, որ տվյալ դեպքում, հրազեն հանդիսացող հրացանը, փողերը կարճեցնելու դեպքում, չի դադարում ողորկափող լինելուց» (տե՛ս Քրեական գործ, էջ 195):

8. Առաջին ատյանի դատարանը, Ե.Մելքոնյանի նկատմամբ կայացնելով արդարացման դատավճիռ, պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում ամբաստանյալ Մելքոնյանը գտնելու եղանակով ապօրինի ձեռք է բերել ողորկափող հրազեն, այսինքն, ողորկափող հրացանի փողերը կարճեցնելու դեպքում այն մնում է հրազեն, սակայն չի դադարում ողորկափող լինելուց, իսկ օրենքի տառացի մեկնաբանմամբ ողորկափող հրազենի ձեռք բերելը, պահելը, իրացնելը կամ փոխադրելը քրեորեն պատժելի չէ (տե՛ս Քրեական գործ, էջ 196):

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, պատճառաբանել է, որ «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն չի նախատեսում ապօրինի կերպով ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավացիորեն գտել է, որ Ե.Մելքոնյանի արարքում բացակայում է հանցակազմը և ճանաչել ու հռչակել է Ե.Մելքոնյանի անմեղությունը ու կայացրել է արդարացման դատավճիռ» (տե՛ս Քրեական գործ, էջ 229):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է և այլ

նմանատիպ գործերով նույնպես կարող է առաջացնել ծանր հետևանքներ, քանի որ հանցանք կատարած անձը խուսափել է քրեական պատասխանատվությունից:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը հիմնավորված և օրինական չեն, կայացվել են նյութական իրավունքի նորմերի խախտումներով: Ե.Սելքոնյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելով՝ դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ դատարաններն արդարացման դատավճռի հիմքում դրել են հանցագործության առարկայի՝ ողորկափող հրազեն լինելու հանգամանքը, որի համար ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվություն նախատեսված չէ: Դրանով դատարաններն անտեսել են այդ առարկայի մեջ կատարված կառուցվածքային փոփոխությունները, ինչի արդյունքում որսորդական ողորկափող հրազենը կորցրել է գործարանային արտադրությամբ այդ նպատակի համար նախատեսված համապատասխան տեխնիկական հատկանիշները ու դառնալով սովորական հրազեն՝ ձեռք է բերել մարտական հատկություններ: Կառուցվածքային փոփոխությունների շնորհիվ կարճափող հրացանը հեշտությամբ կարելի է քողարկել և թաքցնել հագուստի տակ:

Ըստ բողոքաբերի՝ դատարաններն անտեսել են նաև նմանատիպ հանգամանքներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն բազմաթիվ դատական ակտերը, որոնցով նույնատիպ հրազենը դիտվել է որպես հանցագործության առարկա և այն ապօրինի կերպով պատրաստող, ձեռք բերող և պահող անձինք մեղավոր են ճանաչվել ու դատապարտվել են:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մարտի 1-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափի է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն չի նախատեսում ապօրինի կերպով ողորկափող հրազեն և դրա փամփուշտները ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

13. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: (...)»

14. Վերոգրյալ իրավանորմների վերլուծությունից հետևում է, որ անձին հանցագործություն կատարելու մեջ մեղավոր ճանաչելու միակ հիմքը կատարման պահին նրա արարքի՝ օրենքով սահմանված կարգով հանցագործություն համարվելն է: Այսինքն՝ արարքը կարող է որպես հանցագործություն նախատեսվել միայն քրեական օրենքով, և ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան քրեական օրենքով ուղղակիորեն նախատեսված հանցանք կատարելու համար: Այսպիսով՝ չկա հանցագործություն, չկա պատիժ, եթե արարքն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով (*nullum crimen, nulla poena sine lege*):

15. Վերոնշյալ սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որի համաձայն՝ բացառապես օրենքի հիման վրա կարող է որոշվել հանցագործության առկայությունը և դրա համար պատիժ սահմանվել (*nullum crimen, nulla poena sine lege*): Մասնավորապես, արգելելով նախատեսված հանցագործությունների սահմանների ընդլայնումն ի հաշիվ այն գործողությունների, որոնք նախկինում հանցագործություն չեն համարվել՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածը նաև սահմանում է, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանվի, օրինակ՝ մեկնաբանվի անալոգիայի կիրառմամբ (տե՛ս Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի գործով (KAFKARIS v. CYPRUS) 2008 թվականի փետրվարի 12-ի

վճիռը, գանգատ թիվ 21906/04, կետ 138):

16. Սույն որոշման 13-15-րդ կետերում մեջբերված սահմանադրական, կոնվենցիոն և օրենսդրական դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ այդ դրույթներով սահմանված երաշխիքը (*nullum crimen, nulla poena sine lege*), հանդիսանալով օրենքի գերակայության անքակտելի տարր, առաջնային տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության համակարգում, որից որևէ շեղում չի թույլատրվում: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքից հետևում է, որ ցանկացած հանցագործություն և պատիժ պետք է հստակ ամրագրված լինի օրենքով: Այդ օրենքը չի կարող տարածական մեկնաբանվել, և այն չի կարող կիրառվել անալոգիայով:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պատժվում է [համապատասխան պատժով]:

(...):»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: (...):»:

18. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի կանոններով մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար: Հոդվածի դիսպոզիցիան բացառություն է նախատեսում ողորկափող հրազենի և դրա փամփուշտների ձեռքբերման, իրացման, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասում առկա այս բացառության տառացի մեկնաբանությունից Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ այն հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պատասխանատվության ենթարկել ընդհանրապես ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ողորկափող հրազենի փողերը կարճեցված են, թե ոչ: Բանն այն է, որ փողերը կարճեցված դրսորդական հրացանը չի դադարում ողորկափող հրազեն լինելուց և դարձյալ հանդիսանում է աշդպիսին: Իսկ եթե անտեսվի օրենսդրորեն ամրագրված բացառության՝ բառերի տառացի նշանակությունը և օրենքը մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի տառացի նշանակությունից ավելի լայն, անձը քրեական պատասխանատվու-

թյան կենթարկվի քրեական օրենքով չնախատեսված հանցանքի համար: Նման մեկնաբանությունն անթույլատրելի է, քանի որ այդ դեպքում կխախտվեն ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և ՀՀ քրեական օրենսգրքի՝ սույն որոշման 13-րդ կետում շարադրված դրույթները:

19. Սույն որոշման նախորդ կետում շարադրված՝ Վճռաբեկ դատարանի հետևությունը հիմնավորվում է նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և նախկին՝ 1961 թվականի մարտի 7-ի քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերի համեմատական վերլուծությամբ:

Այսպես՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց համապատասխան թույլտվության հրազեն (բացի ողորկափող որսորդականից), ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, ձեռք բերելը, պատրաստելը կամ վաճառելը՝ պատժվում է [համապատասխան պատժով] (...):»:

Սեջբերված դրույթի վերլուծությունից երևում է, որ նախկին օրենսգրքով քրեական պատասխանատվություն էր սահմանվում առանց համապատասխան թույլտվության զենք, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելու, պահելու, ձեռք բերելու, պատրաստելու կամ վաճառելու համար՝ բացառությամբ ողորկափող որսորդականից:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համեմատական վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը նախկին օրենսգրքում սահմանած բացառությունը՝ «բացի ողորկափող որսորդականից», գործող օրենսգրքում սահմանել է այլ կերպ՝ «բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից»: Այսինքն, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ որսորդական ողորկափող հրացանի փողերի կարճեցման հետևանքով այն դադարում էր ողորկափող որսորդական հրացան լինելուց և վերածվում էր հրազենի, որի կրելը, պահելը, ձեռք բերելը, պատրաստելը կամ վաճառելը հանգեցնում էր քրեական պատասխանատվության: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ որսորդական ողորկափող հրացանի փողերի կարճեցման հետևանքով այն չի դադարում ողորկափող հրազեն լինելուց, որի կրելու, պահելու, ձեռք բերելու, պատրաստելու կամ վաճառելու համար քրեական պատասխանատվություն չի նախատեսվում: Ուստի, տրամաբանական է, որ նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում, հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունը, իրավակիրառ մարմիններն արձանագրում էին, որ փողերը կարճեցրած հրացանն այլևս գուտ որսորդական հրացան չէ, և փողերը կարճեցրած հրացան կրելու, պահելու, ձեռք բերելու, պատրաստելու կամ վաճառելու դեպքում անձին քրեական պատասխանատվության էին ենթարկում:

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապօրինի կերպով զենք,

ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար քրեական պատասխանատվություն սահմանող՝ ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածների ձևակերպումներում ողորկափող հրազենի վերաբերյալ բացառության առումով առկա է էական բովանդակային տարբերություն: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի հիման վրա անձը ենթակա էր քրեական պատասխանատվության կարճեցրած փողերով որսորդական ողորկափող հրացան կրելու, պահելու, ձեռք բերելու, պատրաստելու կամ վաճառելու համար, մինչդեռ գործող քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը ողորկափող հրազենի դեպքում նմանատիպ գործողությունների համար քրեական պատասխանատվություն չի սահմանում:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ե.Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել հրազեն հանդիսացող որսորդական ողորկափող, փողեր կարճեցված հրացան պահելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Փորձագետի եզրակացության և փորձագետի՝ Առաջին ատյանի դատարանում տրված ցուցմունքի համաձայն՝ Ե.Մելքոնյանի մոտից հայտնաբերված կարճեցված փողերով հրացանը հանդիսանում է հրազեն, այն և դրա զարկիչ մեխանիզմը գործարանային արտադրության են, դետալները չեն փոխվել, այլ միայն կարճեցվել են փողերը: Հրազեն հանդիսացող հրացանը փողերը կարճեցնելու դեպքում չի դադարում ողորկափող լինելուց (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը Ե.Մելքոնյանի նկատմամբ կայացրել է արդարացման դատավճիռ՝ պատճառաբանելով, որ օրենքի տառացի մեկնաբանմամբ ողորկափող հրազեն ձեռք բերելը, պահելը, իրացնելը կամ փոխադրելը քրեորեն պատժելի չէ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն գտել է, որ Ե.Մելքոնյանի արարքում բացակայում է հանցակազմը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

22. Սույն որոշման 13-20-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 21-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն չի նախատեսում ապօրինի կերպով ողորկափող հրազեն և դրա փամփուշտները ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

23. Ելնելով սույն որոշման 13-22-րդ կետերում շարադրված հիմնավորումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհրաժեշտ է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Երվանդ Ռ-աֆիկի Սեյբունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի արդարացման դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մարտի 1-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*
Դատավորներ՝ *ստորագրություններ*

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԵԿԳ/0744/06/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԳ/0744/06/10
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ՝</i>	Զ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

1. Անհայտ անձի կողմից ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ-ի դատապարտյալ Հրաչիկ Աղեկյանին զգալի չափերի բուլդոզերով տեսակի թմրամիջոց իրացնելու և վերջինիս կողմից առանց իրացնելու նպատակի զգալի

չափերի թմրամիջոց պահելու փորձի փաստի առթիվ 2010 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 15103810 քրեական գործը:

2. 2010 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ, Հ.Ադեկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 17-ի դատավճռով դատապարտված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով և պատիժը կրելով ՀՀ ԱՆ «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում՝ կրկին անգամ, առանց իրացնելու նպատակի, փորձել է իրականացնել բուարենորֆին տեսակի թմրամիջոցի ապօրինի շրջանառություն:

3. 2010 թվականի դեկտեմբերի 6-ին վարույթն իրականացնող մարմինը, նկատի ունենալով, որ Հ.Ադեկյանը կատարել է հանցավոր արարք, որի համար նախատեսված է պատիժ ազատազրկման ձևով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, և այն, որ նա ՀՀ ԱՆ «Գատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից ազատվելու է 2011 թվականի մարտի 19-ին և մնալով ազատության մեջ, կարող է խուսափել քննությունից, թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, կատարել նոր հանցագործություն, համապատասխան միջնորդություն է հարուցել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ մերժել է մեղադրյալ Հ.Ադեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը:

4. Առաջին ատյանի դատարանի հիշյալ որոշման դեմ 2010 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազը վերաքննիչ բողոք է բերել:

Գատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով մեղադրյալ Հ.Ադեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի վերը նշված որոշումը:

5. 2011 թվականի հունվարի 18-ին դատախազը Վերաքննիչ դատարանի 2010

թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ վերոնշյալ բողոքը վարույթ է ընդունվել: Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

6. Հ.Աղեկյանն Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 17-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա վերջնական դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով և տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի մարտի 19-ից (տե՛ս նյութեր, 8-11 էջեր):

7. Հ.Աղեկյանը պետք է պատժից ազատվեր 2011 թվականի մարտի 19-ին, իսկ քննիչը նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է հարուցել 2010 թվականի դեկտեմբերի 6-ին, այսինքն՝ պատժից ազատվելուց 3 ամիս 13 օր առաջ (տե՛ս նյութեր, 2-3 էջեր):

8. Հ.Աղեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու պահին վերջինս ազատազրկման ձևով պատիժ է կրել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում (տե՛ս նյութեր, էջ 6):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումն անհիմն է և ենթակա է բեկանման, քանի որ դրանում առկա են նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ եթե մեղադրյալ Հ.Աղեկյանը, դատապարտված լինելով և գտնվելով անազատության մեջ, կարողացել է իրականացնել թմրամիջոցի ապօրինի ձեռքբերմանն ուղղված գործողություններ, ապա նույն հաջողությամբ կարող է խոչընդոտել թմրամիջոց իրացրած անձին հայտնաբերելուն: Բացի այդ, դատապարտյալն ու կալանավորված անձն իրենց պահման վայրերում տարբեր կարգավիճակներ ունեն. դատապարտյալի կարգավիճակն էապես տարբերվում է կալանավորված անձի կարգավիճակից:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը կիսաբաց ուղղիչ հիմնարկ է, և դատապարտ-

յալը կարող է ազատ շփումներ ունենալ ինչպես մյուս դատապարտյալների, այնպես էլ տեսակցությունների միջոցով այլ անձանց հետ, մինչդեռ, քրեական գործի շահերից ելնելով, անհրաժեշտ է սահմանափակել կալանավորված անձի տեղաշարժման, տեսակցությունների հնարավորությունները:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ստյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը և բավարարել Հ.Ադեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատարանի կողմից ազատագրվման ձևով նշանակված պատիժը փաստացի կրող դատապարտյալի նկատմամբ խափանման միջոց կալանքի կիրառումը:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո, (...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար, (...):»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից, (...)

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կա-

տարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. (...):

14. Նախորդ կետում մեջբերված իրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ ինչպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, այնպես էլ ՀՀ Սահմանադրությունը մեղադրական դատավճռով նշանակված պատիժը կրելու համար անձին անազատության մեջ պահելը, և անձի ձերբակալումն ու կալանավորումը հավասարապես դիտում են անձին ազատությունից զրկելու հիմքեր:

Միևնույն ժամանակ, թե՛ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում, թե՛ ՀՀ Սահմանադրության մեջ կիրառված «ազատությունից զրկում» արտահայտությունը, որպես կանոն, ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ անձը նախապես ազատության մեջ է և իրավաչափ հիմքերի պայմաններում ու օրինական ընթացակարգի արդյունքում դադարում է ազատության մեջ լինելուց: Այլ կերպ՝ ազատությունից զրկումը ենթադրում է անձի վիճակի փոփոխություն:

15. Նշված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաքեկ դատարանը գտնում է, որ որևէ իրավաչափ հիմքով (օրինակ՝ հանցագործության համար ազատագրվում պատժատեսակը փաստացի կրելու հիմքով) ազատությունից զրկված վիճակում գտնվող անձը չի կարող վերստին «զրկվել ազատությունից» հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի, նրա կողմից նոր հանցագործության կատարումը կամ փախուստը կանխելու հիմքերով:

16. Նախորդ կետում Վճռաքեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը հիմնվում է նաև ազատությունից զրկելու հիմքերի, ինչպես նաև կառուցակարգերի (կալանավորում՝ որպես խափանման միջոց, ու ազատագրվում՝ որպես պատժատեսակ) համեմատական բովանդակային վերլուծության վրա:

17. Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը տարբերակում են այն դեպքերը, երբ անձին, պատժի կրման համար նախատեսված համապատասխան վայրում պահելով, ազատությունից զրկում են մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո, և երբ անձին ազատությունից զրկում են՝ ձերբակալելով կամ նախնական կալանքի վերցնելով: Ընդ որում, ձերբակալման կամ կալանավորման պարագայում կոնվենցիոն և սահմանադրական երաշխիքները գործում են այն իրավիճակներում, երբ ազատությունից զրկումը տեղի է ունենում անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Բոլոր դեպքերում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված ազատության սահմանափակումները՝ ձերբակալումը կամ կալանավոր-

րումը, ի տարբերություն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից նշանակված ազատագրկման, ունեն պայմանական ու վարութային բնույթ:

18. Խափանման միջոց, այդ թվում՝ կալանավորում կիրառելու հիմքերն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառի չներկայանալու կամ այլ ճանապարհով,

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք,

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց,

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

19. Ինչպես բազմիցս ընդգծվել է Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներում, կալանավորումը քրեական գործերի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է (տե՛ս Արամ Ծուղուրյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը, Աղասի Հովսեփյանի վերաբերյալ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0633/06/09 որոշման 10-րդ կետը): Այն առավելագույն չափով սահմանափակում է մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ այնպիսի կարևոր իրավունք, ինչպիսին ազատության և անձեռնմխելիության իրավունքն է: Կալանավորման էությունն անձին հասարակությունից մեկուսացնելն է: Ինչպես ցանկացած այլ խափանման միջոց, կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կիրառվում է քրեական գործի քննության ընթացքում նրա ոչ պատշաճ վարքագիծը (այսինքն՝ այն գործողությունները, որոնք ուղղված են քննությունից և դատից թաքնվելուն, գործով ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելուն, ինչպես նաև՝ հանցավոր գործունեությունը շարունակելուն) կանխելու նպատակով: Փաստորեն, կալանավորման կիրառումը նպատակ է հետապնդում քրեական գործով վարույթի ընթացքում կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը:

Կալանավորումը նաև խափանման բացառիկ միջոց է, քանի որ դրա կիրառման հետևանքով ազատությունից զրկվում է դատարանի դատավճռով դեռևս մեղա-

վոր չճանաչված անձը: Ուստի, վերոնշյալ բացառիկության չափանիշից բխում է, որ անձը պետք է ենթարկվի նախնական կալանքի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. առկա է ողջամիտ կասկած, որ անձը կատարել է իրավախախտում, և

2. առկա են հիմնավոր պատճառներ՝ կարծելու, որ ազատության մեջ գտնվելով նա կարող է

ա) դիմել փախուստի, կամ

բ) կատարել նոր հանցագործություն, կամ

գ) խոչընդոտել արդարադատության իրականացմանը, կամ

դ) լուրջ վտանգ ներկայացնել հանրային կարգին:

20. Ինչ վերաբերում է դատարանի դատավճռով անձի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իմաստով «ազատագրկում» հասկացության բովանդակությունը բացահայտվում է ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասում: Նշված հոդվածի համաձայն՝ «Ազատագրկումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է»:

Ազատագրկման ինքնուրույն տեսակ է նաև ցմահ ազատագրկումը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում: Նշված հոդվածի համաձայն՝ «Ցմահ ազատագրկումը դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը (...) կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ «Որոշակի ժամկետով (...) ազատագրկման կատարումն ապահովում է ուղղիչ հիմնարկը»:

21. Ազատագրկման՝ որպես պատժի, էությունը դատապարտյալին արտաքին աշխարհից մեկուսացնելն է, որն իրականացվում է նրան հատուկ ազատագրկման վայրերում՝ ուղղիչ հիմնարկներում տեղավորելու միջոցով, ինչը փաստորեն դատապարտյալի ֆիզիկական մեկուսացումն է:

Ազատագրկումը և ցմահ ազատագրկումը հանդիսանում են առավել խիստ քրեական պատիժներ, քանի որ դրանց կրումն ուղեկցվում է դատապարտյալի վրա դրված իրավական սահմանափակումների առավել մեծ ծավալով: Ազատագրկման կատարման դեպքում դատապարտյալի իրավական դրությունը հասարակության այլ անդամների համեմատությամբ խիստ սահմանափակվում է: Մասնավորապես, սահմանադրական, քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան, ընտրական իրավունքներում և իրավունքի այլ ճյուղերում նրանց նկատմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, կիրառվում են հատուկ սահմանափակումներ: Դա առաջին հերթին վերաբերում է անձնական ազատությանը, մամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության, անձնական կյանքի և բնակարանի անձեռնմխելիության, տեղա-

շարժման ազատության և այլ սահմանադրական իրավունքներին: Գատապարտ-
յալը զրկվում է ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքից, աշ-
խատանքի ազատ ընտրության, հանգստի իրավունքից, հարազատների և այլ ան-
ձանց հետ ազատորեն շփվելու իրավունքից և այլն:

22. Ավելին, օրենսդիրը նախատեսել է նոր հանցագործության համար մե-
ղադրվող դատապարտյալի իրավունքների սահմանափակման հատուկ արտադա-
տական կառուցակարգ: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պա-
հելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Նոր հանցանք կատարելու մեջ
կասկածվող կամ մեղադրվող՝ ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող դատապարտ-
յալները կարող են պահվել նույն հիմնարկների հատուկ սարքավորված տեղամասե-
րում՝ այլ դատապարտյալներից մեկուսացված»:

23. Սույն որոշման 16-22-րդ կետերում շարադրված վերլուծությունից հետևում
է, որ և՛ ազատագրկման ձևով պատիժ կրող, և՛ կալանքի տակ գտնվող անձը մեկու-
սացված է հասարակությունից, նրա որոշակի իրավունքներ սահմանափակված են,
ինչը հնարավորություն է տալիս կանխել քրեական գործի քննության ընթացքում
նրա ոչ պատշաճ վարքագիծը: Այս պարագայում նվազում են մեղադրյալի՝ դատա-
կան քննությանը չներկայանալու, արդարադատության իրականացմանը խոչընդո-
տելու և հետագայում իրավախախտումներ կատարելու ռիսկերը: Այլ կերպ՝ եթե ան-
ձը ազատագրկման ձևով պատիժ է կրում, ապա, ի տարբերություն ազատության
մեջ գտնվող անձի, քննությունից և դատից խուսափելու, գործի պատշաճ քննությա-
նը խոչընդոտելու կամ հանցավոր գործունեությունը շարունակելու նրա հնարավո-
րությունները առավելագույն հնարավոր չափով սահմանափակված են:

Հետևաբար, ազատագրկում պատժատեսակը կրող անձին կալանավորելու
միջնորդությունը առարկայագուրկ է, քանի որ հայցվող խափանման ծավալն արդեն
իսկ առկա է:

24. Սույն գործի նյութերից երևում է, որ երբ 2010 թվականի դեկտեմբերի 6-ին քն-
նիչը միջնորդություն է հարուցել Հ.Ադեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց
կալանավորում կիրառելու մասին, վերջինս պատիժ է կրել «Գատապարտյալների հի-
վանդանոց» քրեակատարողական հիմնարկում և պատժից պետք է ազատվեր 2011
թվականի մարտի 19-ին: Փաստորեն, միջնորդություն հարուցելու պահին Հ.Ադեկյանը
գտնվել է ուղղիչ հիմնարկում՝ անազատության մեջ, արտաքին աշխարհից մեկուսաց-
ված, զրկված ազատ տեղաշարժման, հարազատների և այլ անձանց հետ ազատորեն
շփվելու իրավունքից և այլն (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Այս իրավիճակում Հ.Ադեկյանը չէր կարող կատարել ՀՀ քրեական դատավա-
րության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողություննե-
րը, որոնց դեպքում նրա նկատմամբ կարող էր կիրառվել խափանման միջոց ընդ-
հանրապես և կալանավորում՝ մասնավորապես: Մասնավանդ, որ՝ «Ձերբակալված և
կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հնարավորու-
թյուն է տալիս նոր հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ուղղիչ

հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալներին պահել նույն հիմնարկների հատուկ սարքավորված տեղամասերում՝ այլ դատապարտյալներից մեկուսացված (տե՛ս սույն որոշման 22-րդ կետը):

Այս պայմաններում Առաջին ատյանի դատարանը մերժել է Հ.Աղեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ Հ.Աղեկյանը տվյալ պահին գտնվում է անազատության մեջ, կրում է դատարանի կողմից իր նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը, և բավարար հիմքեր չկան ենթադրելու, որ նա կարող է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

25. Սույն որոշման 13-23-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 24-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անազատության մեջ գտնվող և դատարանի կողմից ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրող դատապարտյալ Հ.Աղեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը հիմնավորված չէ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհրաժեշտ է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

26. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Հրաչիկ Մերգեյի Աղեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0211/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Չիչոյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

ԵԿԴ/0211/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ**

քարտուղարությամբ՝

2011 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի մարտի 30-ի որոշման դեմ մեղադրող Հ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի ապրիլի 17-ին ՀՀ ոստիկանության ԲԳՎ ՀԿԳ քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 69102210 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից բռնության գործադրմամբ խուլիգանություն կատարելու, ինչպես նաև գործով չպարզված անձանց կողմից սպօրինի կերպով

հրագեն հանդիսացող ատրճանակներ ձեռք բերելու և կրելու դեպքերի առթիվ:

2010 թվականի ապրիլի 20-ին թիվ 69102210 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 69103410 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից ապօրինի կերպով զենք և ռազմամթերք իրացնելու դեպքի առթիվ, և այն միացվել է թիվ 69102210 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2010 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ, Գևորգ Շահենի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, Արթուր Բորիկի Հարությունյանը, Գարեգին Մարտինի Համբարձումյանը, Մխիթար Միհրանի Էլոյանը, Միեր Հակոբի Նշանյանը, Հարություն Անդրանիկի Քոչոյանը, Միսակ Ռաֆիկի Ստեփանյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի օգոստոսի 2-ին թիվ 69102210 քրեական գործից անջատվել է մեղադրյալներ Գ.Հարությունյանի, Ա.Հարությունյանի, Գ.Համբարձումյանի, Մ.Էլոյանի, Մ.Նշանյանի, Հ.Քոչոյանի, Մ.Ստեփանյանի վերաբերյալ մասը, այն առանձնացվել է առանձին վարույթում, և դրան շնորհվել է թիվ 69102210/6 համարը:

2010 թվականի օգոստոսի 5-ին թիվ 69102210/6 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 9 (ինը) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Հարությունյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով:

Ամբաստանյալներ Գ.Համբարձումյանը, Մ.Էլոյանը, Մ.Նշանյանը, Հ.Քոչոյանը, Մ.Ստեփանյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել են ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով, իսկ Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 9 (ինը) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալներ Գ.Համբարձումյանի, Մ.Էլոյանի, Մ.Նշանյանի, Մ.Ստեփանյանի, Հ.Քոչոյանի և նրա պաշտպան Վ.Էլբակյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի մարտի 30-ի

որոշմամբ Գ.Համբարձումյանի, Մ.Էլոյանի, Մ.Նշանյանի, Մ.Ստեփանյանի վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ Հ.Քոչոյանի և նրա պաշտպան Վ.Էլբակյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը, ամբաստանյալներ Գ.Համբարձումյանին, Մ.Էլոյանին, Մ.Նշանյանին, Մ.Ստեփանյանին, Հ.Քոչոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մարտի 30-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել մեղադրող Հ.Մարտիրոսյանը, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներ՝ ամբաստանյալներ Գ.Համբարձումյանը և Մ.Նշանյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ քրեական գործի վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել և իրենց ազատել նշանակված պատժից:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. 2010 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 17.50-ի սահմաններում, Գ.Հարությունյանը, Ա.Հարությունյանը, Գ.Համբարձումյանը, Մ.Էլոյանը, Մ.Նշանյանը, Հ.Քոչոյանը, Մ.Ստեփանյանն այլ անձանց հետ հավաքվել են Երևան քաղաքի Դավիթ Բեկի 186/2 հասցեում գործող «Քրեյզի հորս» սրճարանի մոտ, որտեղ իրենց ավտոմեքենաներն անկանոն կերպով կայանել են Դավիթ Բեկ փողոցի մայթերից քիչ հեռու՝ երթևեկելի մասում, որով խոչընդոտներ են ստեղծել նշված փողոցով ընթացող բազմաթիվ տրանսպորտային միջոցների համար: Այնուհետև, անտեսելով այն հանգամանքը, որ դեպքի վայրում գործում են հասարակական սննդի կետ, սրճարան, ավտովագման, ավտոտեխսպասարկման կետեր, քիչ հեռվում գտնվում են գործող եկեղեցի, բազմահարկ, բազմաբնակարան շենքեր, իսկ «Քրեյզի հորս» սրճարանից ոչ հեռու գտնվում է հոծ երթևեկությամբ փողոց, մոտ 10 բուսե շարունակ վիճաբանել, ապա քաշքշել և հարվածել են միմյանց, տվել փոխադարձ հայհոյանքներ: Իրենց այդ գործողություններով նրանք ակնհայտորեն խախտել են հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերը, խուլիգանական մղումներով, հասարակության և բարոյականության նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, բացահայտորեն ցույց տալով իրենց արհամարհական վերաբերմունքը հասարակության նկատմամբ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք են արտահայտել հասարակության՝ դեպքի վայրում աշխատող անձանց, անցորդների, ինչպես նաև վիճաբանության և

կռվին ականատես դարձած բազմաթիվ անձանց նկատմամբ (տե՛ս Քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 430):

6. Գավիթ Բեկի 186/2 հասցեն գտնվում է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում (տե՛ս Երևանի քաղաքապետարանի պաշտոնական վեբ-կայքը՝ http://www.yerevan.am/cdfiles/files/map/map_yerevan.pdf):

7. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով մեղադրյալները տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն չեն տվել, ինչպես նաև բացակայում է ընդդատությունը փոխելու մասին գործը քննող դատարանի որոշումը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ ստուգման և գնահատման չի ենթարկել ամբաստանյալներ Գ.Համբարձումյանի, Մ.Էլոյանի, Մ.Նշանյանի, Հ.Քոչոյանի և Մ.Ստեփանյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, բնույթը, որոնք բարձրացրել են ամբաստանյալների կատարած հանցագործության վտանգավորության աստիճանը:

9. Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, ճիշտ քրեաիրավական գնահատական տալով ամբաստանյալների կողմից կատարված խուլիգանական գործողություններին, սահմանել է ակնհայտ մեղմ պատիժ: Ուստի, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մարտի 30-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ ամբաստանյալներ Գ.Համբարձումյանի, Մ.Էլոյանի, Մ.Նշանյանի, Հ.Քոչոյանի և Մ.Ստեփանյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու համար:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

1. Վճռաբեկության սահմանները և ընդդատության կանոնների խախտման հայտնաբերումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված հարցը վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատժին: Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դա-

տարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցից բացի, սույն գործով առկա է իրավական խնդիր՝ կապված սույն գործի ընդդատության հետ, և առանց ընդդատության հարցի քննարկման Վճռաբեկ դատարանը չի կարող անդրադառնալ սույն գործի ըստ էության քննությանը վերաբերող այլ, այդ թվում՝ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատժի հարցերին:

Վերը նշված հիմնավորմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործերի ընդդատության կանոնների կապակցությամբ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

11. Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով քննարկման ենթակա առաջին իրավական հարցը հետևյալն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածում շարադրված բեկանման հիմքի՝ գործի քննության ընդդատության խախտումը ստորադաս դատարաններում քննարկման և հետագայում բողոքարկման առարկա չհանդիսանալու դեպքում Վճռաբեկ դատարանն արդյոք կարո՞ղ է այդ հարցը քննարկման առարկա դարձնել:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Մինչև սույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ «Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե (...) խախտվել է գործի քննության ընդդատությունը»:

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված շլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»։ Նշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին:

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախորդ կետում տրված օրենքի մեկնաբանությունները ոչ միայն պայմանավորված են օրենքի իմաստի տառացի

ընկալմամբ, այլև արտահայտում են քրեական դատավարությունում իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասում և 415-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավանորմերն ըստ էության ամրագրում են Վճռաբեկ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը և հետապնդում են իրավաչափ նպատակ. ապահովել կողմերի հետևողականությունն իրենց նյութաիրավական ու դատավարական շահերի պաշտպանության գործում:

Այնուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները:

Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասում և 415-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանորմերի համատեքստում, օրինակ՝ անվերապահ դատավարական խախտումների պարագայում դատական ակտի բեկանում նախատեսող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս), քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում:

15. Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան(6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես

սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, կենսագործելով պատշաճ ընդդատության հիմնարար իրավական արժեքը, սահմանում է, որ «Ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով» (24-րդ հոդվածի, 5-րդ մաս):

16. Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայակայությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար:

17. Սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անգամ գործի քննության ընդդատության խախտումը ստորադաս դատարաններում բողոքարկման առարկա չհանդիսանալու դեպքում վերադաս դատարանը պարտավոր է այդ հարցը քննարկման առարկա դարձնել:

II. Սույն քրեական գործի ընդդատությունը

18. Ընդդատության կանոնները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի քանի հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝

«1. Առաջին ատյանի դատարաններին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:

2. Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

2. Եթե սույն օրենսգրքի 44-րդ, 47-րդ կամ 48-րդ հոդվածով նախատեսված

ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործի ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

2. Ընդդատությունը փոխելու որոշումը համապատասխան դեպքում ընդունում է գործը քննող դատարանը»:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է քրեական գործի տարածքային ընդդատության որոշման հիմնական կանոնը, որի համաձայն՝ այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք ավարտվել են որևէ դատական տարածքի սահմաններում (մերառյալ տևող հանցագործությունները), ընդդատյա են տվյալ առաջին ատյանի դատարանին՝ անկախ հանցանքը սկսվելու վայրից և մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրից:

20. Նշված կանոնից օրենսդիրը բացառություն է նախատեսում միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,

բ) տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն են տվել բոլոր մեղադրյալները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընդ որում, վերոնշյալ դեպքերում ընդդատությունը փոխելու մասին որոշումն ընդունում է գործը քննող դատարանը:

21. Իսկ եթե ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվել է դատական քննության ժամանակ, և կողմերը չեն առարկում, որ գործի քննությունը շարունակվի այդ դատարանում, դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այս կանոնը պետք է մեկնաբանվի ընդդատության հիմնարար արժեքի իրավական նշանակությանը համապատասխան. այն չպետք է հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար: Այսինքն՝ այս կանոնը պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ տվյալ գործն իրեն ընդդատյա չէ: Դա վերաբերում է միայն այն դեպքերին, երբ սխալ ընդդատության մասին վկայող հանգամանքն ի հայտ է եկել դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման արդյունքում: Իսկ եթե սխալ ընդդատության մասին վկայող հանգամանք-

ները քրեական գործը դատարան ուղարկելիս արդեն իսկ եղել են գործի նյութերում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել: Դրա փոխարեն պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասը և գործն ուղարկվի ըստ ընդդատության:

Եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասն ավելի լայն մեկնաբանվի, ապա դատարանին հնարավորություն կտրվի առանց իրավական հիմքի վարույթ իրականացնել, որից հետո փորձել օրինականացնել այդ առանց իրավական հիմքի վարույթը:

Ուստի, երբ ընդդատության խախտումն ի սկզբանե ակնհայտ է, ապա վարույթն իրականացնող դատարանը պարտավոր է գործն ուղարկել ըստ ընդդատության: Իսկ երբ ընդդատության սխալ լինելու փաստն ի հայտ է եկել ապացույցների դատական հետազոտման արդյունքում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված ընթացակարգի գործադրմամբ գործը կարող է մնալ այն քննող դատարանի վարույթում:

Ընդ որում, գործն ըստ ընդդատության ուղարկվելու փաստը խոչընդոտ չէ, որպեսզի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի կիրառմամբ, պատշաճ դատարանը գործը փոխանցի այլ, այդ թվում՝ վարույթն ընդդատության խախտումով սկսած դատարան:

22. Սույն գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալներ Մ.Ստեփանյանին, Մ.Էլոյանին, Մ.Նշանյանին, Գ.Համբարձումյանին և Հ.Քոչոյանին մեղսագրվող հանցագործություններն սկսվել և ավարտվել են Երևան քաղաքի Գավիթ Բեկի 186/2 հասցեում գործող «Քրեյզի հորս» սրճարանի մոտ, որը գտնվում է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում (տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը):

Մինչդեռ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով մեղադրյալները տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն չեն տվել, ինչպես նաև բացակայում է ընդդատությունը փոխելու մասին գործը քննող դատարանի որոշումը:

23. Սույն որոշման 21-րդ կետի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե անգամ բոլոր մեղադրյալները տարածքային ընդդատության փոփոխման համաձայնություն տված լինեին և առկա լինեք ընդդատությունը փոխելու մասին գործը քննող դատարանի որոշումը, ապա ընդդատության փոխումն իրավաչափ համարվել չէր կարող, քանի որ ընդդատության խախտումն ի սկզբանե ակնհայտ էր:

24. Սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 22-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի քննությունը չի իրականացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախա-

տեսված ընդդատության կանոնների պահպանմամբ: Ստորադաս դատարաններն անտեսել են տարածքային հատկանիշներով քրեական գործի ընդդատության որոշման կանոնները, չեն պարզել, թե որ դատարանին է ընդդատյա գործը:

25. Հիմք ընդունելով սույն որոշման մեջ առկա հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում չի պահպանվել քրեական գործերի ընդդատության կարգը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է կայացված դատական ակտերը բեկանելու և գործն ըստ ընդդատության ուղարկելու համար:

26. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին, որը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջների չկիրառման և արդյունքում ամբաստանյալների նկատմամբ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելու ձևով, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արձանագրված դատավարական խախտումն ազդեցություն է ունեցել ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության և արդյունքում նաև նրանց նկատմամբ նշանակված պատժի վրա, ուստի մինչև վերը նշված դատավարական իրավունքի խախտման վերացումն անհնար է անդրադառնալ բողոքաբերի կողմից բարձրացված նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406 հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Միսակ Ռաֆիկի Ստեփանյանի, Մխիթար Միհրանի Էլոյանի, Սիեր Հակոբի Նշանյանի, Գարեգին Մարտինի Համբարձումյանի, Հարություն Անդրանիկի Քոչոյանի մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մարտի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

58.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵՄԴ/0055/01/10
նախագահող դատավոր՝ Ս.Զիշոյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

ԵՄԴ/0055/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2011 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արշակ Մանուկի Սվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի մարտի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58202910 քրեական գործը՝ Արշակ Մանուկի Սվազյանի կողմից 2010 թվականի մարտի 17-ին ՀՀ մաքսային սահմանով մաքսային հսկողությունից թաքցված խոշոր չափերով՝ շուրջ 45.300.000 ՀՀ դրամ

արժողությամբ աղամանդյա քարեր Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի 2010 թվականի մարտի 26-ի որոշմամբ Ա.Սվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի մայիսի 3-ին Ա.Սվազյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր ծավալով մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի մայիսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճռով Ա.Սվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով՝ գույքի՝ մաքսանենգության առարկաների բռնագրավմամբ:

3. Ամբաստանյալ Ա.Սվազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ ամբաստանյալ Ա.Սվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Մարգարյանը, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճռի եզրափակիչ մասում նշված է. «Իրեղեն ապացույց ճանաչված ՀՀ ԱԱԾ ֆինանսաբյուջետային վարչությունում պահվող, մաքսանենգության առարկա հանդիսացող, 68.859.000 (վաթսուներե միլիոն ութ հարյուր հիսունհինը հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ աղամանդյա քարերը (1. 8,12 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 90-60 հատ չափսային խմբի աղամանդյա քարեր, 2. 6,13 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 120-90 հատ չափսային խմբի աղամանդյա քարեր, 3. 5,30 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին

400-200 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 4. 5,01 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 200-120 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 5. 34,14 կարատ ընդհանուր քաշով, 1/2, 1/3 որակի, 1 կարատին 200-120 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 6. 5,19 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 400-200 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 7. 5,46 կարատ ընդհանուր քաշով, 1/2 որակի, 1 կարատին 400-200 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 8. 35,37 կարատ ընդհանուր քաշով, 5/2, 6/2 որակի, 1 կարատին 200-120 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 9. 4,98 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 200-120 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 10. 8,15 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 200-120 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 11. 24,11 կարատ ընդհանուր քաշով, 1/2, 1/3 որակի, 1 կարատին 90-60 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 12. 9,16 կարատ ընդհանուր քաշով, 3/4, 3/5 որակի, 1 կարատին 90-60 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 13. 15,11 կարատ ընդհանուր քաշով, 2/3, 2/4 որակի, 1 կարատին 60-40 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 14. 25,64 կարատ ընդհանուր քաշով, 6/2, 6/3 որակի, 1 կարատին 40-30 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 15. 50,43 կարատ ընդհանուր քաշով, 3/2, 3/3 որակի, 1 կարատին 10-7 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 16. 35,12 կարատ ընդհանուր քաշով, 6/4, 6/5, 6/8 որակի, 1 կարատին 7-6 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 17. 45,98 կարատ ընդհանուր քաշով, 3/3, 3/4, 3/5 որակի, 1 կարատին 7-6 հատ չափսային խմբի ադամանդյա քարեր, 18. 5,01 կարատ քաշով, 6/6 որակի ադամանդյա 1 քար, 19. 1,08 կարատ քաշով, 6/6 որակի ադամանդյա 1 քար, 20. 1,07 կարատ քաշով, 6/6 ադամանդյա 1 քար) բռնագրավել հոգուտ պետության» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 214):

6. Սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացնելուց հետո, սակայն, մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է համաներման ակտ, որը կիրառելի է Ա.Սվազյանի նկատմամբ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, Ա.Սվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 55-րդ, 61-րդ, 62-րդ հոդվածների, 50-րդ հոդվածի 5-րդ կետի, 70-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերի, 215-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ, 360-րդ, 395-398-րդ հոդվածների պահանջները:

Ըստ բողոքի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ամբաստանյալ Ա.Սվազ-

յանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով, լիարժեք չի պահպանել ՀՀ քրեական օրենսդրության ընդհանուր մասով ամրագրված պատժի նշանակումը, ինչպես նաև մաքսանենգության առարկայի տնօրինումը կանոնակարգող իրավադրույթները: Բացի այդ, անտեսվել և չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, ըստ որի՝ մաքսանենգության առարկաների վրա չի կարող կիրառվել լրացուցիչ պատիժ հանդիսացող գույքի բռնագրավումը:

8. Բողոք բերած անձը նշում է, որ սույն քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված ադամանդները, մաքսային օրենսդրության և ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հանդիսանում են մաքսանենգության առարկաներ և չեն թվարկվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածում, մասնավորապես, մաքսանենգության առարկաները հանցագործության գործիք, շրջանառությունից հանված առարկա չեն հանդիսանում, դրանք հանցագործությամբ կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով որևէ մեկի օրինական տիրապետումից դուրս չեն եկել, հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամ, այլ արժեքներ կամ մյուս առարկաներ չեն և միևնույն ժամանակ փաստաթուղթ չեն հանդիսանում, հետևաբար՝ մաքսանենգության առարկա հանդիսացող իրեղեն ապացույցների սեփականատերը հայտնի է, որպիսի պայմաններում դատական ակտ կայացնելիս չպետք է կիրառվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը, այլ պետք է մաքսանենգության առարկաները տնօրինվելին գործող քրեական օրենսդրության ընդհանուր մասի դրույթներով, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասով, 50-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերով:

9. Բողոքում փաստարկվել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել ամբաստանյալ Ա.Սվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը, չի նշել, թե ինչու է դատապարտյալի ուղղվելը հնարավոր առանց պատիժը կրելու, հատկապես ո՞ր հանգամանքներն են հիմք տվել հանգելու նման հետևության, չի հիմնավորել, թե նշված նորմի կիրառումն արդյո՞ք արդարացի է, համապատասխանո՞ւմ է այն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարարո՞ր է լինելու նրան ուղղելու, նոր հանցագործությունները կանխելու համար և ինչու՞մ է արտահայտվել պատժի նպատակը սոցիալական արդարությունը վերականգնելու հարցում, ինչով է այն արդարացի և արդյո՞ք ամբաստանյալի մեղքը հիմնավորված համարելով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը համաչափ է հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանին և բնույթին, մինչդեռ Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը օբյեկտիվորեն հիշատակված հանգամանքները հաշվի առնելով՝ սահմանել է պատժի տեսակը և չափը՝ պատճառաբանելով դրանք:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 15-ի որոշումը և օրինա-

կան ուժ տալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ մաքսանենգության առարկա հանդիսացող 68.859.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ադամանդյա քարերն արդյոք տնօրինվե՞լ են որպես իրեղեն ապացույց, թե բռնագրավման օբյեկտ են հանդիսացել որպես լրացուցիչ պատիժ:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝

«3. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, ինչպես նաև գույքի բռնագրավումը կիրառվում են միայն որպես լրացուցիչ պատիժներ: (...):

5. Գույքի բռնագրավումը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժներ կարող են նշանակվել միայն սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության:

2. Գույքի բռնագրավման չափը դատարանը որոշում է՝ նկատի ունենալով հանցագործությամբ հասցված գույքային վնասի, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի չափը: Գույքի բռնագրավման չափը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

3. Գույքի բռնագրավումը կարող է նշանակվել շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ, ինչպես նաև 5.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

4. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է

բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:

(...)

5.1. Սույն օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաների, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ դրանց արժեքի բռնագրավումը պարտադիր է:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել»:

13. Վերը շարադրված նորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ օրենսդրության մեջ «գույքի բռնագրավում» եզրույթն արտահայտում է իրավական ներգործության երկու տարբեր միջոց. քրեական պատժատեսակ (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-3-րդ մասեր) և հանցավոր ճանապարհով ստացված գույքի հարկադրական վերցնում (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ և 5.1 մասեր):

Գույքի բռնագրավումը՝ որպես պատժատեսակ, բացառապես լրացուցիչ պատիժ է, այն միայն տարածվում է դատապարտյալի սեփականությունը հանդիսացող գույքի վրա, իսկ գույքի բռնագրավման չափը որոշակիորեն սահմանափակված է՝ կախված հանցագործությամբ հասցված գույքային վնասից, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի չափից: Գույքի բռնագրավումը որպես լրացուցիչ պատժատեսակ կարող է կիրառվել միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքների դեպքում (օրենսդրությամբ նախատեսված է նաև բացառություն): Որպես պատժատեսակ՝ գույքի բռնագրավման առարկան, որպես կանոն, քրեադատավարական իմաստով իրեղեն ապացույց չէ:

Մինչդեռ, գույքի բռնագրավումը՝ որպես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հարկադրական վերցնում, տարածվում է այն գույքի վրա, որի նկատմամբ հանցանք կատարած անձը սեփականության իրավունք չունի, քանի որ այն ստացվել է հանցագործության հետևանքով: Իրավական ներգործության այս միջոցը կիրառելի է, անկախ հանցագործության ծանրության աստիճանից: Որպես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հարկադրական վերցնում՝ գույքի բռնագրավման առարկան այն քրեադատավարական իմաստով իրեղեն ապացույց է, որի վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված են պահպանման և տնօրինման յուրահատուկ կարգավորումներ:

14. Նախորդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները համահունչ են ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳ-Ո-953 որոշմամբ՝ լրացուցիչ պատժատեսակ գույքի բռնագրավման և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման հարաբերակցության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշմանը: Համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի այդ իրավական դիրքորոշման՝ «(...) գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն իրենց սահմանադրական բովանդակությամբ տարբեր ինստիտուտներ են՝ տարբեր խնդիրներով և նպատակներով: Բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի ինստիտուտը, որն անմիջականորեն ուղղված է դատապարտյալի սեփականության իրավունքի դեմ, բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից, քանզի այս դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավումը հանդես է գալիս որպես պատասխանատվությունից բխող հարկադրանքի միջոց՝ իրավաչափորեն սահմանափակելով դատապարտյալի սեփականության իրավունքը: Մինչդեռ, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում»:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մաքսանենգության առարկա հանդիսացող 68.859.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ադամանդյա քարերը հանդիսացել են իրեղեն ապացույց, դրանք ի պահ են հանձնված եղել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ դրանք տնօրինվել են որպես իրեղեն ապացույցներ:

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսանենգության առարկա հանդիսացող 68.859.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ադամանդյա քարերը տնօրինվել են որպես իրեղեն ապացույց, և դրանք բռնագրավվել են ոչ թե որպես լրացուցիչ պատժատեսակ, այլ որպես հանցավոր ճանապարհով ստացված գույք:

17. Սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոք բերած անձի այն պնդումը, որ մաքսանենգության առարկա հանդիսացող իրեղեն ապացույցների նկատմամբ չպետք է կիրառվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը, այլ պետք է մաքսանենգության առարկաները տնօրինվեին գործող քրեական օրենսդրության ընդհանուր մասի դրույթներով, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասով, 50-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերով:

18. Սույն որոշման 6-րդ կետում նշված փաստի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ իրավական հարցին՝ «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ԱԺ որոշման ընդունման պայմաններում սույն գործով կարո՞ղ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և դրա հիման վրա ամբաստանյալ Ա.Սվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվել:

19. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձինք ազատվում են նշանակված պատժից:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճռով Ա.Սվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով՝ գույքի՝ մաքսանենգության առարկաների բռնագրավմամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Ա.Սվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

21. Այսպիսով, Վերաքննիչ դատարանի դատական ակտի կայացումից հետո ընդունվել է համաներման ակտ, և այդ ակտի ուժով նշանակված պատժից ազատվում են առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձինք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքների պայմաններում իրավաչափ չէ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Սվազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, այլ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով Ա.Սվազյանը ենթակա է նշանակված պատժից ազատման:

22. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճռին: Միաժամանակ, անհրաժեշտ է Ա.Սվազյանի

նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և վերջինիս ազատել Առաջին ատյանի դատարանի դատավճռով ազատագրկման ձևով նշանակված պատժից՝ 3 տարի ժամկետով ազատագրկումից:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արշակ Մանուկի Սվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 15-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 24-ի դատավճին:

2. Արշակ Մանուկի Սվազյանի նկատմամբ կիրառել «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ԱԺ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել ազատագրկման ձևով նշանակված պատժից՝ 3 տարի ազատագրկումից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

59.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԱԶԳ/0157/01/10 որոշում
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան
դատավորներ՝ Ռ.Ազարյան, Ա.Պետրոսյան

ԵԱԶԳ/0157/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

**Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Է.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

2011 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Աշոտ Սիմոնի Բաբայանի վերաբերյալ
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011
թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ մեղադրող Է.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2010 թվականի օգոստոսի 12-ին:

Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ Անմար
Անուշավանի Գասպարյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ Աշոտ

Սիմոնի Բաբայանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի հոկտեմբերի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Աշոտ Սիմոնի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու պատճառաբանությամբ:

Վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ամբաստանյալի պաշտպան Ա.Սաղաթեյանը:

3. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Վերաքննիչ դատարանի որոշմամբ, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 11-ի որոշումն ամբողջությամբ բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, գործով մեղադրող Է.Պետրոսյանը Վերաքննիչ դատարանի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հունիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխաններ չեն ներկայացվել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5. Նախաքննության մարմնի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ Աշոտ Սիմոնի Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2010 թվականի հուլիսի 11-ին դիտավորությամբ քանդել ու վնասել է Երևանի Այգեկցի 30 տուն հասցեում գտնվող, Երևանի Ա.Խաչատրյան փողոցի 13 շենքի 35 բնակարանի բնակիչ Անմար Անուշավանի Գասպարյանին պատկանող ավտոտնակի կողային քարե պատի հատվածը, որով Ա.Գասպարյանին պատճառել է 27.000 ՀՀ դրամի նյութական վնաս (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 119):

6. Գործի նյութերից երևում է, որ Ա.Բաբայանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել՝ նշելով, որ ինքն Անմար Գասպարյանի ավտոտնակը որևէ կերպ երբևէ չի վնասել:

7. Տուժող ճանաչելու վերաբերյալ որոշմամբ Անմար Գասպարյանին պարզաբանվել են նրա իրավունքները, մասնավորապես՝ պատճառված վնասի փոխհա-

տուցում ստանալու վերաբերյալ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջեր 84-85):

Որպես տուժող հարցաքննվելիս, Ա.Գ-ասպարյանը հայտնել է, որ, համաձայն դատաստանալիս քրեական փորձաքննության եզրակացության, իրեն պատճառվել է 27.000 ՀՀ դրամի վնաս, սակայն նա այդ գումարը չի պահանջում, քանի որ համարում է, որ իր արդարացի բողոքը նյութականի հետ կախված չէ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջեր 86-88):

Տուժող Ա.Գ-ասպարյանը դիմել է Առաջին ատյանի դատարան՝ հայտնելով, որ իր ցուցմունքում հրաժարվել է 27.000 ՀՀ դրամից: Գատարանին խնդրում է, որ դատական ակտում նախատեսվի, որ իր միջոցներով ավտոտնակի վերականգնման աշխատանքները կատարելու ընթացքում Բաբայանները չխոչընդոտեն իրեն (տե՛ս Քրեական գործ, հատոր 2, էջ 20):

8. Առաջին ատյանի դատարանը Աշոտ Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2011 թվականի փետրվարի 11-ի որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Գատական քննության ընթացքում տուժող Անմար Գ-ասպարյանը և ամբաստանյալ Աշոտ Բաբայանը հայտնեցին, որ հաշտվել են միմյանց հետ, որևէ բողոք կամ պահանջ չունեն միմյանց նկատմամբ և խնդրեցին քրեական գործի վարույթը կարճել: Մեղադրողը և պաշտպանը չառարկեցին միջնորդության դեմ: (...)»:

Առաջին ատյանի դատարանը, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 36-րդ հոդվածի, 183-րդ հոդվածի 1-ին մասի և 313-րդ հոդվածի վրա, որոշել է. «Աշոտ Սիմոնի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու պատճառաբանությամբ» (տե՛ս Քրեական գործ, հատոր 2, էջ 125):

9. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության ունկնդրմամբ պարզ է դառնում հետևյալը.

ա) դատական նիստում տուժող Ա.Գ-ասպարյանը հայտարարում է, որ հաշտվում է և խնդրում է գործը կարճել:

բ) տուժողի հայտարարության կապակցությամբ մեղադրողը հայտնում է, որ չի առարկում, քանի որ դա տուժողի իրավունքն է:

գ) պաշտպան Անահիտ Սաղաթելյանը հայտարարում է, որ պաշտպանական կողմը հակված է նրան, որ դատաքննությունն ընթանա բնական հունով: Այնուհետև ավելացնում է, որ եթե միայն տուժողի հաշտությունը բավարար է, ապա՝ «մեռնեն օրենքին»:

դ) Առաջին ատյանի դատարանը հայտարարում է, որ հեռանում է խորհրդակցական սենյակ՝ տուժողի ներկայացրած միջնորդությունը քննարկելու համար: Դրան արձագանքում է պաշտպանը՝ հուշելով, որ դատարանը չի պարզել ամբաս-

տանյալի դիրքորոշումը տուժողի հայտարարության վերաբերյալ: Ապա հետևում են դատավորի հետևյալ հարցադրումները՝ «ամբաստանյալն ա՞յլ կարծիք ունի», «համամի՞տ չէիք Ձեր պաշտպանի հետ», «ո՞ւմ հետ էիք համամիտ՝ տուժողի՞, թե՞ պաշտպանի»: Ամբաստանյալը պատասխանում է՝ «պաշտպանի»: Գատավորը հարցնում է՝ «տուժողի հետ հեչ կապ չունի՞», իսկ ամբաստանյալը պատասխանում է՝ «չէ, բացառված է»:

ե) Առաջին ատյանի դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ և երբ վերադառնում է, հրապարակում է որոշում՝ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, Քրեական գործ, հատոր 2, էջ 124):

10. Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Ա.Բաբայանի պաշտպանի վերաքննիչ բողոքը, 2011 թվականի ապրիլի 26-ին կայացրած դատական ակտի պատճառաբանական մասում նշել է հետևյալը. «Գործի նյութերի ուսումնասիրությունից, մասնավորապես՝ դատական նիստի ձայնային արձանագրությունից երևում է, որ դատաքննության ընթացքում ամբաստանյալը և պաշտպանը հստակ հայտնել են իրենց դիրքորոշումը տուժողի հետ չհաշտվելու վերաբերյալ և խնդրել դատական քննությունն անցկացնել ընդհանուր կարգով: (...) առաջին ատյանի դատարանի նշված որոշումը կայացվել է՝ ելնելով ձևական նկատառումներից և դրա արդյունքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ տուժողի հետ ամբաստանյալի հաշտության բացակայության պայմաններում դադարեցվել է քրեական հետապնդումը և կարճվել է քրեական գործի վարույթը»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշել է. «Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 11-ի որոշումը՝ Աշոտ Միմոնի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության» (տե՛ս Քրեական գործ, հատոր 3, էջեր 29-36):

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

11. Ըստ վճռաբեկ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 36-րդ, 183-րդ հոդվածների բովանդակությունից և իրավական վերլուծությունից բխում է, որ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար ամբաստանյալի դիրքորոշումը

կամ առարկությունները հաշվի չեն առնվում, մինչդեռ Վերաքննիչ դատարանն իր որոշումը հիմնավորելու համար վկայակոչել է Ա.Բաբայանի դիրքորոշումը՝ տուժողի հետ չհաշտվելու վերաբերյալ: Այս կապակցությամբ բողոք բերած անձը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանում դատական քննության ժամանակ թե՛ ամբաստանյալը, թե՛ վերջինիս պաշտպանը չեն առարկել տուժողի միջնորդության դեմ:

Արդյունքում բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ է մեկնաբանել հաշտության վերաբերյալ քրեադատավարական նորմը և կայացրել է օրենքից բխող որոշում, իսկ Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ և 37-րդ հոդվածներին հակասող դատական ակտ:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 11-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքով սահմանված՝ իրավունքի զարգացման գործառնության իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողի հետ հանցանք կատարած անձի հաշտվելու հիմքով վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք հաշտության հիմքով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարանի կողմից բեկանելը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...) տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

Սեջբերված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տուժողի

և հանցանք կատարած անձի հաշտության վերաբերյալ դրանցում առկա ձևակերպումները տարբեր են: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ որպես հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու նախապայման, նշում է հանցանք կատարած անձի հետ տուժողի հաշտվելը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածն ընդհակառակը՝ տուժողի հետ հանցանք կատարած անձի հաշտվելը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով հաշտության փաստի հաստատման համար բավարար է արձանագրել, որ հաշտվել է տուժողը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի իմաստով՝ հանցանք կատարած անձը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ իրավական կարգավորումները հստակ չեն, և դրանցից յուրաքանչյուրը հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին միակողմանի մոտեցում է դրսևորում:

16. Սույն որոշման նախորդ կետում նշված իրավական անհստակությունը հարթելու նպատակով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունն է, որի իրացումը ենթադրում է որոշակի նախապայմանների առկայություն: Դրանք են՝

- 1) անձի կողմից ոչ մեծ ծանրության հանցանք կատարած լինելը,
- 2) տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությունը,
- 3) պատճառված վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը:

Միևնույն ժամանակ, վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել իր լիազորությունն իրացնելուց այն դեպքում, երբ բացակայում է նշված երեք նախապայմաններից (իրավաչափության պայմաններից) մեկը կամ մի քանիսը:

17. Անձին քրեական պատասխանատվության ենթարկելուց վարույթն իրականացնող մարմնի հրաժարման իրավաչափության առաջին պայմանն անձի կողմից ոչ մեծ ծանրության հանցանք կատարած լինելն է: Ոչ մեծ ծանրության հանցանքի հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը»:

18. Սույն որոշման 16-րդ կետում նշված իրավաչափության պայմաններից երկրորդը տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությունն է: Հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճա-

նաչելն է, այդ արարքի համար զոչալը, ավստասանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին:

Հաշտության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում է: Նույն կերպ, հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության:

19. Անդրադառնալով սույն որոշման 16-րդ կետում նշված երրորդ իրավաչափության պայմանին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն մեկնաբանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում «պատճառված վնաս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի իմաստով տուժող է այն անձը, ում հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է ֆիզիկական, բարոյական կամ գույքային վնաս: Այս իրավական սահմանման լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իրավաչափության այս պայմանի իմաստով պատճառված վնասը հանցագործությամբ անմիջականորեն պատճառված ֆիզիկական, գույքային և բարոյական վնասն է:

Հետևաբար հանցանք կատարած անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա չի հատուցել կամ այլ կերպ չի հարթել տուժողին հանցագործությամբ անմիջականորեն պատճառված ֆիզիկական, գույքային և բարոյական վնասը:

Դրա հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե տուժողն իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ չի ներկայացնում, կամ տուժողն ու հանցանք կատարած անձը համաձայնության են գալիս վնասն ապագայում հա-

տուցելու մասին, կամ տուժողը զիջում է պարտքը, կամ պարզապես չի ցանկանում ստանալ իրեն պատճառված վնասի փոխհատուցում, ապա այդ հանգամանքը չի կարող խոչընդոտել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից հաշտության հիմքով ազատելուն:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.

ա) Ամբաստանյալ Ա.Բաբայանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության վերձանման համաձայն՝ ո՛չ ամբաստանյալ Ա.Բաբայանը, ո՛չ նրա պաշտպանը չեն հայտարարել տուժողի հետ հաշտվելու մասին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

գ) Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ հաստատված է համարել, որ տուժողն ու ամբաստանյալը հաշտվել են, որևէ բողոք կամ պահանջ չունեն միմյանց նկատմամբ և խնդրել են քրեական գործի վարույթը կարճել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

դ) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալի պաշտպանի վերաքննիչ բողոքը, գտել է, որ հաշտության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվել է ձևական նկատառումներից ելնելով, և դրա արդյունքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ տուժողի հետ ամբաստանյալի հաշտության բացակայության պայմաններում դադարեցվել է քրեական հետապնդումը և կարճվել է քրեական գործի վարույթը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կարճել է քրեական գործի վարույթը և դադարեցրել քրեական հետապնդումն ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու պատճառաբանությամբ, մինչդեռ իրականում հաշտություն տեղի չի ունեցել: Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը, իրավացիորեն գտել է, որ դատական ակտն օրինական չէ, ըստ այդմ որոշել է այն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

21. Սույն որոշման 15-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշտության հիմքով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման՝ Վերաքննիչ դատարանի կողմից բեկանելը հիմնավորված է, քանի որ իրականում ամբաստանյալի և տուժողի միջև կամավոր և փոխադարձ հաշտություն չի եղել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ հիմնավորված չէ բողոքի հեղինակի փաստարկն այն մասին, որ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելիս և

քրեական հետապնդումը դադարեցնելիս ամբաստանյալի դիրքորոշումը կամ առարկությունները հաշվի չեն առնվում:

Հետևաբար, սույն գործի քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի խախտում թույլ չի տվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Աշոտ Միմոնի Բաբայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

60.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱՆԳ/0091/01/09
նախագահող դատավոր՝ Ս.Զիչյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

ԵԱՆԳ/0091/01/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2011 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դմբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի մարտի 1-ի որոշման դեմ մեղադրողի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Անհայտ անձի կողմից Մերգեյ Ռ-ոլանդի Այվազյանին դիտավորությամբ որովայնի շրջանի թափանցող վերք պատճառելու փաստի առթիվ 2009 թվականի ապրիլի 27-ին Նոր Նորքի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 17110409 քրեական գործը:

2009 թվականի ապրիլի 28-ին Անդրանիկ Ավետիսյանը ձերբակալվել է:

2009 թվականի ապրիլի 30-ին Անդրանիկ Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Արա Սաֆարյանին և Սերգեյ Այվազյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. 2009 թվականի օգոստոսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճռով Անդրանիկ Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով: Նշանակված պատժի մեջ հաշվակցվել է նրա կալանքի տակ գտնվելու 2 (երկու) ամիս 18 (տասնութ) օր ժամկետը, և նա վերջնական դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի 9 (ինն) ամիս 12 (տասներկու) օր ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Արա Սաֆարյանը և Սերգեյ Այվազյանը:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Ավետիսյանի պաշտպանը:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժվել է. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 28-ի դատավճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրողը:

Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

5. Նոր քննության արդյունքում կայացված Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռով Անդրանիկ Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով: Նշանակված պատժի մեջ հաշվակցվել է նրա կալանքի տակ գտնվելու երկու ամիս տասնութ օր ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2 (երկու) տարի 9 (ինն) ամիս 12 (տասներկու) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Արա Սաֆարյանը և Սերգեյ Այվազյանը, որոնց վերաբերյալ դատավճիռը չի բողոքարկվել:

6. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի մարտի 1-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

7. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրողը:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունվել:

2011 թվականի մայիսի 16-ին ամբաստանյալ Ա.Ավետիսյանի պաշտպանը վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել և խնդրել է մեղադրողի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ ստորադաս դատարանների դատական ակտերը՝ թողնել անփոփոխ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

8. Անհայտ անձի կողմից Սերգեյ Այվազյանին դիտավորությամբ որովայնի շրջանի թափանցող վերք պատճառելու փաստի առթիվ 2009 թվականի ապրիլի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 1):

9. 2009 թվականի ապրիլի 27-ին Սերգեյ Այվազյանը հաղորդում է ներկայացրել ոստիկանության Նոր Նորքի բաժին՝ անհայտ անձի կողմից դանակով իր որովայնի շրջանին հարվածելու և մարմնական վնասվածք պատճառելու մասին (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 3):

10. 2009 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Սերգեյ Այվազյանը ճանաչվել է տուժող (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 12):

Որպես տուժող հարցաքննվելիս Ս.Այվազյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ավան, Դուրյան թաղամասի 38 շենքի մոտ տեղի ունեցած վիճաբանության ընթացքում անհայտ անձը հարվածել և մարմնական վնասվածք է պատճառել իրեն (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջեր 13-15):

11. Ոստիկանության Նոր Նորքի բաժնի պետին հասցեագրված՝ Նոր Նորքի քննչական բաժնի պետի գրությունից երևում է, որ վերջինս խնդրել է հանձնարարել ձեռնարկելու անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հանցագործություն կատարած անձին հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 16):

12. 2009 թվականի ապրիլի 28-ին դեպքի վայրի զննություն կատարելու ժամանակ Անդրանիկ Ավետիսյանը հայտարարել է, որ 2009 թվականի ապրիլի 27-ին՝ ժամը 01:00-ից 01:30-ի սահմաններում, Ավան, Չարենցի թաղամասի 12-րդ շենքի բակում իրեն անծանոթ տղաների հետ կռվի ընթացքում իր մոտ եղած դանակով հարվածել է նրանցից մեկին (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջեր 26-27):

13. Վերաքննիչ դատարանը Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ նշել է նաև, որ նա հանրորեն վտանգավոր արարքը կատարել է

առաջին անգամ հանգամանքների պատահական գուգորդմամբ, հանցագործությունը բացահայտվել է նրա խոստովանական ցուցմունքների միջոցով, օգնել է նախաքննության մարմնին հանցագործության մանրամասները բացահայտելուն, գտնվում է զորակոչային տարիքում և դատարանում պատրաստակամություն է հայտնել մեկնելու ժամկետային զինվորական ծառայության (տե՛ս Քրեական գործ, հատոր 2, էջ 46):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

14. Ըստ բողոքի հեղինակի՝ Ա.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը թույլատրելի համարելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ 3 տարի ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այն պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ ստուգման ու գնահատման չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագող տվյալները, հաշվի չի առել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, բնույթը, որոնք բարձրացնում են ամբաստանյալի կատարած հանցագործության վտանգավորության աստիճանը: Բողոքաբերը նշել է նաև, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նրա՝ ժամկետային զինվորական ծառայության մեկնելու նպատակահարմարությունը:

Արդյունքում, բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում ամբաստանյալի կատարած հանցագործության ծանրությանը, չի նպաստում սոցիալական արդարության վերականգնմանը, հանցագործությունների կանխմանն ու պատժի ենթարկված անձի ուղղվելուն:

15. Ելնելով վերոգրյալից բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մարտի 1-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական

հարցը հետևյալն է՝ Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը պատշա՞ճ է արդյոք գնահատել գործի փաստական հանգամանքները:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գուժարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել մի շարք որոշումներում: Մասնավորապես, Հ.Բաղդասարյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրվել է, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)» (տե՛ս Հուսիկ Մուրեմի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ-2/0059/01/08 որոշման 24-րդ կետը):

Սեկ այլ՝ Դ.Հովհաննիսյանի վերաբերյալ գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն

վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը: (...)» (տե՛ս Դ-ավիթ Ռ-ոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը, ինչպես նաև *mutatis mutandis*, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-124/07, ԵԱԶԳ/0078/01/09, ԵԱԶԳ/0120/01/09 և մի շարք այլ որոշումներ):

20. Հիմք ընդունելով նախորդ կետում և համապատասխանաբար նաև վկայակոչված որոշումներում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ միաժամանակ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

21. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առել ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ, մասնավորապես.

ա) Ա.Ավետիսյանի կողմից հանրորեն վտանգավոր արարքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելը,

բ) հանցագործությունը Ա.Ավետիսյանի խոստովանական ցուցմունքների միջոցով բացահայտելը,

գ) Ա.Ավետիսյանի՝ գորակոչային տարիքում գտնվելը և ժամկետային զինվորական ծառայության մեկնելու պատրաստակամություն հայտնելը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

22. Նախորդ կետում թվարկված հանգամանքներից առաջինի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «հանցանքների պատահական զուգորդում» հասկացությունը գնահատողական կատեգորիա է և որոշվում է միայն դատարանի կողմից՝ գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հետազոտելու արդյունքում: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ

է համարում նշել, որ, ի թիվս այլոց, հանգամանքների պատահական գուգորդում կարող են լինել.

1. իր կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ անձի մոլորությունը,

2. հանցավոր արարքներ կատարող անձանց խմբում մեկ անգամ պատահական գտնվելն ու այդ խմբի կողմից կատարված հանցագործությանը մեկ անգամ մասնակցելը,

3. մեղսագրվող հանցանքի կատարումն անձին ակնհայտորեն բնորոշ չլինելը,

4. հանցանքի կատարումը հոգեճնշող վիճակում, արտակարգ կամ այլ հանգամանքների ազդեցության տակ:

23. Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքներից երկրորդի, այն է՝ հանցագործությունը Ա.Ավետիսյանի խոստովանական ցուցմունքների միջոցով բացահայտելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են մեղայականով ներկայանալը (...):»:

Մեղայականով ներկայանալը նշանակում է, որ անձը կամավոր ներկայանում է իրավապահ մարմիններին (ուստիկանություն, դատախազություն և այլն) և հայտնում է իր կողմից միանձնյա կամ այլ անձի հետ կատարած հանցագործության մասին: Այլ կերպ՝ մեղայականով ներկայացած անձը կամավոր, անկեղծ խոստովանություն է անում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին բանավոր կամ գրավոր կերպով հայտնում իր կողմից կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության մասին: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործություն կատարած անձը չի կարող անձամբ ներկայանալ և հայտնել հանցագործության մասին, և Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում հեռախոսով կամ փոստով հաղորդումները ևս պետք է դիտվեն որպես մեղայականով ներկայանալ:

Շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե կատարված հանցագործության փաստով հարուցված քրեական գործով այդ հանցանքը կատարած անձը պարզված չէ, ապա հանցանք կատարած անձի կողմից դրա մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնելը ևս պետք է դիտվի որպես մեղայականով ներկայանալ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական գործը հարուցվել է անհայտ անձի կողմից Ս.Այվազյանին մարմնական վնասվածք պատճառելու փաստի առթիվ, որպես տուժող հարցաքննվելիս Ս.Այվազյանը չի նշել, թե ով է իրեն մարմնական վնասվածք պատճառել: Գործի նյութերից երևում է նաև, որ հանցանք կատարած անձին հայտնաբերելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնար-

կել (տե՛ս սույն որոշման 8-11-րդ կետերը): Մինչդեռ ամբաստանյալ Ա.Ավետիսյանն ինքը կամավոր հայտնել է վարույթն իրականացնող մարմնին, որ Ավան, Չարենցի քաղամասի 12-րդ շենքի բակում իրեն անձանոթ տղաների հետ կռվի ընթացքում իր մոտ եղած դանակով հարվածել է նրանցից մեկին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ Ա.Ավետիսյանն ըստ էության ներկայացել է մեղայականով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով:

24. Սույն որոշման 18-23-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, իր որոշման մեջ շարադրված հետևությունները Վերաքննիչ դատարանը պարտավոր էր հիմնավորել կոնկրետ ապացույցներով, մինչդեռ Ա.Ավետիսյանի կողմից արարքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելը հիմնավորող փաստական տվյալները դատարանի որոշման մեջ բացակայում են: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի նշել, թե գործում առկա ինչ հանգամանքների հետագոտման արդյունքում է հանգել այն հետևության, որ իրեն մեղսագրվող արարքը Ա.Ավետիսյանը կատարել է հանգամանքների պատահական զուգորդմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննելիս անտեսել է հանցանք կատարելուց հետո նրա վարքագծին վերաբերող, օբյեկտիվորեն գոյություն ունեցող և սույն որոշման 23-րդ կետում նշված հանգամանքները: Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող՝ մեղայականով ներկայանալու հանգամանքը քննության առարկա դարձնելու փոխարեն Վերաքննիչ դատարանը որոշման մեջ նշել է՝ «հանցագործությունը բացահայտվել է հենց նրա խոստովանական ցուցմունքների միջոցով, օգնել է նախաքննության մարմնին հանցագործության մանրամասները բացահայտելուն»:

Վերը նշված հարցերի քննարկումը և պարզաբանումն էական նշանակություն կարող է ունենալ Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս:

25. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից որպես Ա.Ավետիսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հաշվի առնված այն հանգամանքին, որ վերջինս գտնվում է գորակոչային տարիքում և պատրաստակամություն է հայտնել մեկնել ժամկետային զինվորական ծառայության, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն պետք է քննության առնվի Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշման 18-24-րդ կետերում շարադրված և վերլուծված հանգամանքների ընդհանուր համատեքստում:

26. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ հարցը քննելիս և լուծելիս Վերաքննիչ դատարանը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում չի կատարել, չի վերլուծել և չի գնահատել գործում առկա, օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստական տվյալները: Ուստի Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշման կայացման: Դա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված դատավարական իրավունքի խախտումը, որն ազդել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, դատական ակտը բեկանելու հիմք է: Ուստի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մարտի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

61.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0004/11/11
նախագահող դատավոր՝ Ռ.Ազարյան

ԵԿԴ/0004/11/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

2011 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Համբարձում Հարությունյանի և նրա ներկայացուցիչ Անահիտ Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ Հովհաննես Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի հուլիսի 7-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնում ստացվել է «Բրավո-Բետո» ՍՊԸ-ի նախկին տնօրեն Համբարձում Հարությունյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումն այն մասին, որ Հովհաննես Ալեքսանյանի հետ համատեղ հիմնադրել են «Բրավո-Բետո» ՍՊԸ-ն, որը պետության

հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների հետևանքով սնանկ է ճանաչվել, և սկսվել է ընկերության լուծարման գործընթացը: Այդ ժամանակ տեղեկացել է, որ ընկերության գործունեության ընթացքում Հ.Ալեքսանյանը բազմաթիվ անգամ կեղծել է իր ստորագրությունը և գործարքներ կնքել, վաճառել ընկերության գույքը և յուրացրել գումարները:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Հ.Ենոքյանի 2008 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Հ.Հարությունյանի դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

2. 2009 թվականի օգոստոսի 21-ին Հ.Հարությունյանը հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին այն մասին, որ 2007 թվականի հունիսի 8-ին Հ.Ալեքսանյանը կեղծ լիազորագրի հիման վրա վաճառել է «Բրավո-Բետո» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող «Մագդա-626» մակնիշի ավտոմեքենան և վաճառքից առաջացած գումարը յուրացրել է՝ ընկերությանը պատճառելով 4.500.000 ՀՀ դրամի վնաս:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Դ.Վարդանյանի 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Հ.Հարությունյանի հաղորդման հիման վրա նախապատրաստած նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությունում «Բրավո-Բետո» ՍՊԸ-ի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Հ.Հարությունյանը դիմում է ներկայացրել կոմիտեի նախագահին, ինչպես նաև հետաքննության վարչությունում բացատրություն է տվել այն մասին, որ 2006 թվականի ընթացքում Հ.Ալեքսանյանի և նրա հարազատների կողմից կանխամտածված ստեղծվել են անվճարունակության հատկանիշներ, յուրացվել են դրամական և հիմնական միջոցներ, որի հետևանքով ընկերությունը ճանաչվել է սնանկ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Հ.Հարությունյանի դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, քանի որ նույն անձի նկատմամբ առկա է նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին չվերացված որոշում:

4. Դիմող Հ.Հարությունյանը և նրա ներկայացուցիչ Ա.Հակոբյանը բողոք են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը և հարու-

ցել քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Գ.Նավասարդյանը 2011 թվականի հունվարի 12-ի գրությամբ Հ.Հարությունյանին հայտնել է, որ նշված որոշումը հիմնավոր է, և այն վերացնելու հիմքեր չկան:

5. 2011 թվականի հունվարի 20-ին դիմող Հ.Հարությունյանը և նրա ներկայացուցիչ Ա.Հակոբյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որը դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ մերժվել է:

6. Նույն անձանց վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի մայիսի 3-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշումը բեկանելու մասին: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը վերացվել է, և վարույթն իրականացնող մարմնի համար պարտավորություն է սահմանվել վերացնելու դիմող Հ.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

7. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հ.Ալեքսանյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Հ.Ալեքսանյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դիմող Հ.Հարությունյանը 2011 թվականի հունիսի 21-ին ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ փաստարկելով, որ վերանայվող դատական ակտն օրինական է և հիմնավորված, ուստի այն բեկանելու հիմքեր չկան:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

8. Դիմող Հ.Հարությունյանի և նրա ներկայացուցիչ Ա.Հակոբյանի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքի խնդրանքը շարադրված է հետևյալ կերպ. «Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 103-րդ, 175-րդ, 176-րդ, 185-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթներով խնդրում եմ վերացնել ՊԵԿ հետաքննչական վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 29.11.2010թ. որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և պարտավորեցնել հարուցել քրեական գործ» (տե՛ս Նյութեր, էջ 4):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ և 379-րդ հոդվածներով՝ Դատարանը որոշեց

Համբարձում Հարությունյանի կողմից ներկայացված բողոքը՝ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը վերացնելու վերաբերյալ, մերժել (...)» (տե՛ս Նյութեր, էջ 38):

10. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 13-րդ մասերով, 394-րդ հոդվածի 2-րդ մասով, 395-րդ հոդվածի 3-րդ կետով, 398-րդ հոդվածի 1-ին մասով, 402-րդ, 404-րդ հոդվածներով, 412-րդ հոդվածի 1-ին մասով Վերաքննիչ դատարանը որոշեց.

1. Վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի (...) որոշումը բեկանել:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Կ.Խանջյանի 2010 թվականի նոյեմբերի 29-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնել:

4. Վարույթն իրականացնող մարմնին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությանը, պարտավորեցնել վերացնելու դիմող Համբարձում Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումը: (...)» (տե՛ս Նյութեր, 109-110 էջեր):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 17-րդ, 175-րդ, 176-րդ, 180-րդ, 181-րդ, 185-րդ, 290-րդ, 395-րդ և 398-րդ հոդվածների պահանջները:

12. Վերոնշյալ դատավարական խախտումներից բացի, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի դատախազի չվերացված որոշում»: Այլ կերպ ասած, անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական հե-

տապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշման առկայությունը բացառում է նույն անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդման իրականացումը:

Վերոշարադրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, իսկ քրեական գործի հարուցումն անհնարին, քանի որ առկա են Հ.Ալեքսանյանի կողմից տարբեր փաստաթղթերում ՀՀ արությունյանի ստորագրությունը կեղծելու մեղադրանքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2008 թվականի սեպտեմբերի 26-ի և 2009 թվականի նոյեմբերի 18-ի որոշումները, որոնք վերացված չեն:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի մայիսի 3-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից ըստ էության երկու հարց է բարձրացվել, որոնցից առաջինը վերաբերում է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք դրույթների ենթադրյալ խախտման հանգամանքին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), իսկ երկրորդը՝ ի խախտումն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ իր նկատմամբ քրեական գործ հարուցելուն (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված ենթադրյալ խախտումներից երկրորդը կարող է հետևանք լինել սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ տրված սահմանադրական և քրեադատավարական դրույթների ենթադրյալ խախտման, ուստի անհրաժեշտ է համարում առաջին հերթին քննության առնել նշված ենթադրյալ խախտումների հարցը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական կառուցակարգերի ճիշտ տարանջատման հարցում սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

16. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ սույն գործով որոշումներ կայացնելիս ստորադաս դատարանները պահպանե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու դեպքում կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (...):

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին

հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով (...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները և ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից երևում է, որ այն նպատակ է հետապնդում սահմանել քրեական դատավարության համակարգում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրավական կառուցակարգը: Ընդ որում, այդ իրավանորմն ընդհանրական է. այն չի սահմանում վերահսկողության կոնկրետ օբյեկտները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը նույնպես ամրագրում է ընդհանուր նորմ: Այն սահմանում է մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բերված բողոքների քննության արդյունքում կայացվող որոշումների շրջանակը: Մասնավորապես, եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Իսկ եթե դատարանը գտնում է, որ բողոքարկված գործողությունները և որոշումները հիմնավորված են և օրինական, հետևաբար անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, ապա որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ նորմ, որը հատակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները: Մասնավոր-

րապես, հիշատակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ:

20. Սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված հիմնավորումները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Հ.Հարությունյանը և նրա ներկայացուցիչ Ա.Հակոբյանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջներով, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոք են ներկայացրել դատարան և խնդրել են վերացնել վիճարկվող որոշումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը բողոքի քննությունն իրականացրել է և համապատասխան որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով դիմողի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարե-

լու և Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու մասին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջներով, որոշում է կայացրել վիճարկվող որոշումը վերացնելու մասին: Սակայն, միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է դիմող Հ.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտավորություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կառուցակարգ), այլ ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով դատախազին պարտավորեցրել է քրեական գործ հարուցել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում կիրառել են ոչ թե դրա համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը:

23. Սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 22-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով որոշումներ կայացնելիս ստորադաս դատարանները չեն պահպանել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը: Ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրենց լիազորությունների շրջանակներից, ինչի արդյունքում թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի խախտումներ:

24. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանում բողոքաբերը մասնակից չի դարձվել Հ.Հարությունյանի կողմից ներկայացված բողոքի քննությանը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քննվող բողոքն անմիջականորեն առնչվում է անձի իրավունքներին և օրինական շահերին, ապա վերջինս պետք է տեղեկացվի այդ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցելու նշված բողոքի քննությանը:

Սույն գործով Հ.Հարությունյանի կողմից ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվում էր Հ.Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին, քանի որ վերաբերում էր նրա կողմից ենթադրաբար կեղծիք կատարելու վերաբերյալ հաղորդման կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմանը: Ուստի, բողոքի քննության կապակցությամբ բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննու-

թյուն կատարելու նպատակով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից Հ.Ալեքսանյանը պետք է տեղեկացվեր վերոնշյալ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվեր մասնակցելու դրա քննությանը:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 17-25-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առանց ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումները վերացնելու հնարավոր չէ քննության առնել բողոքաբերի կողմից բարձրացված երկրորդ հարցը, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի ենթադրյալ խախտմամբ նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու հարցը: Ուստի սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցին չի անդրադառնում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշումը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

62.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԿԴ/0090/01/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵԿԴ/0090/01/09
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Մ.Արղամանյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին

ք . Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժող՝ «Ինեկորբանկ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի փետրվարի 2-ին:

Նախաքննության մարմնի 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Ա. Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 34-190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

2009 թվականի մայիսի 7-ին Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2009 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությունը ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Արսեն Հայկի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այն տարածելով նաև «Ինտելոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում «ԷյթիԷյ մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի փոխհատուցում «Ինտելոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 տարի ժամկետով՝ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գույքի և հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 17.163.000 ՀՀ դրամի բռնագրավմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այն տարածելով նաև «Ինտելոբանկ» ՓԲ ընկերությունում «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության ունեցած հաշվեհամարում առկա գումարների և Ա.Սարգսյանի միջոցով «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում «Ինտելոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա:

3. Տուժողի և ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, իսկ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժողի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ վերադարձվել է՝ բողոքում ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայու-

թյունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ, իսկ ամբաստանյալ Ա. Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳ-Ո-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը մասնակի ճանաչել է հակասահմանադրական և անվավեր:

Գործով տուժողը՝ «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությունը, հիմնվելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-983 որոշման վրա, 2011 թվականի օգոստոսի 3-ին վճռաբեկ բողոք է բերել՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու խնդրանքով:

2011 թվականի օգոստոսի 26-ին Վճռաբեկ դատարանը ստացել է տուժողի դիմումը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքում «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով դատական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, քանի որ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից իրականացվում են կատարողական գործողություններ:

Վճռաբեկ դատարանը, գտնելով, որ «Ինեկորբանկ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին, 2011 թվականի սեպտեմբերի 7-ին որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու մասին:

Նույն օրը Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել «Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման կատարումը՝ «Ինեկորբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասով, կասեցնել մինչև Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի վերանայման արդյունքում որոշում կայացնելը»:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

5. Ա.Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության միակ հիմնադիր և Երևանի Թումանյան 27

հասցեում գտնվող «Գլոբալ մոբայլ» վաճառասրահում իրականացնելով բջջային հեռախոսների մանրածախ առևտուր՝ միջոցներ է ձեռնարկել բանկային քարտերով ապրանքների վաճառք իրականացնելու համար նախատեսված Pos-տերմինալ ձեռք բերելու համար, որի արդյունքում, նշված սարքը, «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ Ընկերության և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության միջև 2008 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրի համաձայն. տեղադրվել է վաճառասրահում: Այնուհետև, Ա. Սարգսյանը, քննությամբ չպարզված անձանցից, ձեռք է բերել բանկային քարտերի կեղծ կրկնօրինակներ և 2008 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում այդ քարտերը գործածելով նշված POS-տերմինալում՝ 18 գործարքով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել է «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառասրահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով 17.163.000 ՀՀ դրամի չափով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը, այսինքն՝ օրինականացրել է առանձնապես խոշոր չափի, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Նշված գումարի մի մասը Ա.Սարգսյանը ելքագրել է «ԷյթիԷյ մոբայլ» ՍՊ ընկերության հաշվեհամարից և տնօրինել իր հայեցողությամբ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ առկա է դատական ակտը վերանայելու հիմք հանդիսացող նոր հանգամանք, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԳ-Ո-983 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

7. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը՝ չեղյալ համարելով «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

8. Սույն գործը վարույթ է ընդունվել այն հիմքով, որ առկա է նոր հանգամանք՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում:

9. ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳ-Ո-983 որոշման եզրափակիչ մասում սահմանել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի

կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր»:

10. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳ-Ո-983 որոշումը սույն գործով նոր հանգամանք է, քանի որ կիրառվել է ՍԳ-Ո-983 որոշման եզրափակիչ մասում մասնակի հակասահմանադրական ճանաչված իրավանորմը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, իսկ սույն բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան պահանջների պահպանմամբ:

11. Հաստատելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-983 որոշումը սույն գործով նոր հանգամանք է՝ Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ հարցը. ՍԳ-Ո-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի հակասահմանադրական ճանաչումն ըստ էության ազդու՞մ է արդյոք սույն գործի ելքի վրա, ուստի՝ հի՞մք է արդյոք սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բեկանման համար, թե դա ըստ էության չի ազդում սույն գործի ելքի վրա:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արսեն Հայկի Սարգսյանը վերականգնել է տուժող՝ «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը պատճառված վնասը, սակայն Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով որոշել է բռնագրավումը տարածել նաև Ա.Սարգսյանի միջոցով «ԷյՖԻԷյ մոբայլ» ՍՊ ընկերության կողմից որպես վնասի հատուցում «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությանը վճարված 6.585.294 ՀՀ դրամի վրա (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-983 որոշման լույսի ներքո գնահատելով բողոքարկված դատական ակտի իրավաչափության հարցը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի ապրիլի 14-ի դատավճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ տուժողի օրինական շահերին վերաբերող հարցի՝ տուժողին վճարված 6.585.294 ՀՀ դրամի իրավական ճակատագրի հարցի լուծումը բացառապես պայմանավորված է եղել ՍԳ-Ո-983 որոշմամբ՝ վերաբերելի մասով հակասահմանադրական ճանաչված ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ: Մասնավորապես, սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման արդյունքում չի երաշխավորվել տուժող «Ինեկոբանկ» ՓԲ ընկերության գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանությունը:

12. Հիմք ընդունելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված հիմնա-

վորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինեկորանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը պետք է բեկանել և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը: Դատապարտյալ Արսեն Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման՝ «Ինեկորանկ» ՓԲ ընկերությունից 6.585.294 ՀՀ դրամ գումարի բռնագրավման մասը բեկանել, և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

63.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԱՆԳ/0007/11/09**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱՆԳ/0007/11/09
նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմող՝</i>	Ա.ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին **ք. Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հետևանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ դիմող Ալբերտ Անդրանիկի Իսկանդարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի հունվարի 24-ին Ալբերտ Անդրանիկի Իսկանդարյանը ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին հաղորդում է ներկայացրել Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի 16 տունը Ֆեդյա Իսկանդարյանի անվամբ սեփականաշնորհելու վերաբերյալ Էրեբունու շրջխորհրդի գործկոմի որոշումը կեղծ փաստաթղթերի հիման վրա կայացված լինելու, ինչպես նաև Ֆ.Իսկանդարյանի ժառանգների՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի և նույն տան սեփականության իրավունքի վկայականի ձևակերպումները ևս կեղծ փաստաթղթերի հիման վրա տրված լինելու մասին:

Հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով 2008 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

2. Դիմող Ա.Իսկանդարյանը նշված որոշումը բողոքարկել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 20-ի որոշմամբ դիմող Ա.Իսկանդարյանի բողոքը բավարարվել է, և վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2008 թվականի ապրիլի 4-ի որոշումը:

3. Վերոգրյալ որոշումը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ թողել է անփոփոխ, դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

4. 2008 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12121708 քրեական գործը, և կատարվել նախաքննություն:

ՀՀ ոստիկանության Երևանի Նոր Նորքի քննչական բաժնի ավագ քննիչ Է.Սիրականյանի 2009 թվականի հունիսի 19-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է:

Քրեական գործի վարույթը կարճելու մասին 2009 թվականի հունիսի 19-ի որոշման դեմ Ա.Իսկանդարյանի և Ռ.Գևորգյանի բողոքը Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ Մ.Ենգիբադյանի 2009 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ մերժվել է:

5. 2009 թվականի օգոստոսի 18-ին դիմողներ Ալբերտ Իսկանդարյանը, Ռոզա Գևորգյանը և նրանց ներկայացուցիչ Սուսաննա Հարությունյանը բողոք են ներկայացրել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հարգելի համարել բողոքարկման ժամկետը բաց թողնելու հանգամանքը, վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը և կայացնել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին որոշում:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

6. Դիմողներ Ա.Իսկանդարյանի, Ռ.Գևորգյանի և նրանց ներկայացուցիչ Ս.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը:

7. Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ դիմող Ա.Իսկանդարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Հարությունյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ վերադարձվել է:

8. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի

2-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմող Ա.Իսկանդարյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳ-Ո-930 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել է մի մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Նույն որոշմամբ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանվել 2011 թվականի հունիսի 30-ը:

9. 2011 թվականի հուլիսի 13-ին դիմող Ա.Իսկանդարյանը, որպես նոր հանգամանք մատնանշելով ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳ-Ո-930 որոշումը, ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2011 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն Ա.Իսկանդարյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

11. Առաջին ատյանի դատարանն Ա.Իսկանդարյանի, Ռ.Գևորգյանի և նրանց ներկայացուցիչ Ս.Հարությունյանի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ նրանց կողմից բաց է թողնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բողոքարկման ժամկետը, և բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար դատարանին հիմնավոր ապացույցներ չեն ներկայացվել (տե՛ս Նյութեր, էջ 85):

12. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ՝ օրինական և հիմնավորված համարելով Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ պատճառաբանությունը (տե՛ս Նյութեր, էջ 127):

13. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳ-Ո-930 որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

14. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ առկա է նոր հանգամանք:

Բողոքաբերը, մասնավորապես, նշել է, որ Առաջին ատյանի դատարան է բողոքարկել քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը, որը դատարանի կողմից մերժվել է՝ բողոքարկման ժամկետը բաց թողնված լինելու պատճառաբանությամբ: Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժվել է նույն պատճառաբանությամբ, իսկ Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքը՝ վերադարձվել: Գրանից հետո դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու խնդրանքով: ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳՈ-930 որոշմամբ իր խնդրանքը բավարարվել է, և նշված դրույթը ճանաչվել է հակասահմանադրական: Նշված հանգամանքը, ըստ բողոքաբերի, հանդիսանում է նոր հանգամանք, քանի որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը քննիչի որոշման դեմ բերված իր բողոքի քննարկումը մերժել են օրենքով սահմանված ժամկետը բաց թողնված լինելու պատճառաբանությամբ:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳՈ-930 որոշումը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը հակասահմանադրական է ճանաչվել, արդյո՞ք նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը վերանայելու համար:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մեր-

ժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, մինչդեռ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է բողոքարկման մեկամսյա ընդհանուր ժամկետ:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների միջև առկա նմանատիպ հակասությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Աթոյանի բողոքի կապակցությամբ կայացված որոշման մեջ և դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը գործում է օրենսգրքի սկզբնական խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ին), մինչդեռ 185-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-93-Ն օրենքի խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2007թ. ապրիլի 7-ին):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կոլիզիոն կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ:

(...) Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կոլիզիոն կանոնից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բողոքարկման մեկամսյա ժամկետը քաղաքացիների համար ավելի նախընտրելի է, քան 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված յոթնօրյա ժամկետը» (mutatis mutandis, տե՛ս Հայաստանի Աթոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԳԳ/0014/11/09 որոշման 28-29-րդ կետերը):

19. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳՈ-930 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ

անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ «(...) եթե օրենսգիրքը նախատեսում է 290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ընդհանուր կարգից շեղում այլ իրավադրույթներում, ապա իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ էր թեկուզ հավելել՝ «... եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ» բառակապակցությունը: Առկա խմբագրությունը և նշված երկու հոդվածներում ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, որը, ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրավունքների խախտման իրական վտանգ են բովանդակում: (...)

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի և 290-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ որպես մասնակիի և ընդհանուրի հարաբերակցում, հստակ չեն փոխհամաձայնեցված, ինչպես նաև դատական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի, 185-րդ հոդվածի 3-րդ մասի և 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համակարգային ամբողջականության մեջ մեկնաբանման այնպիսի նախադեպ չի ձևավորվել, որպեսզի անձի համար գործնականում ապահովվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության և իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք իրականացումը»:

20. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը դիմողների բողոքը մերժել է՝ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն այն թողել է անփոփոխ՝ նույն պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ դիմող Ա.Իսկանդարյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Գրանից հետո, դիմող Ա.Իսկանդարյանի դիմումի հիման վրա, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳՈ-930 որոշմամբ սույն գործով կիրառված օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը, ճանաչել է մի մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ

քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել ամբողջությամբ կամ մի մասով. (...)

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված նոր հանգամանքները հաստատված են համարվում, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու պահից: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4269-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: (...):»:

22. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՄԴՈ-930 որոշումը, որով սույն գործով կիրառված օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը, ճանաչվել է մի մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, հիմք է Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը վերանայելու, Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 8-ի, Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի դատական ակտերը բեկանելու և գործը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

23. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը: Դիմող Ա.Իսկանդարյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 8-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

64.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ/0009/11/11
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԳ/0009/11/11
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ՆԱԳԴԱԼՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հուլիսի 7-ի որոշման դեմ Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Նաղդալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի նոյեմբերի 30-ին Լոռու մարզի քննչական բաժնի Գ-ուգարքի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 33107210 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Վարույթն իրականացնող մարմնի 2011 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ Արամայիս Յուրիկի Ղալաչյանը և Յուրի Արամայիսի Ղալաչյանը ներգրավվել են որպես մեղադրյալ և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Վերգուշ Խաչատրյանը ճանաչվել է տուժող:

2. Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանի 2011 թվականի մարտի 24-ի՝ «Քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոցը վերացնելու մասին» որոշմամբ խմբի կազմում բռնություն գործադրելով և գույքը վնասելով խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ Յուրի Արամայիսի Ղալաչյանի նկատմամբ թիվ 33107210 գործով քրեական հետապնդումը դադարեցվել է իրադրության փոփոխման հիմքով:

Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանի 2011 թվականի մարտի 24-ի որոշման դեմ տուժող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Նաղդալյանի 2011 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Տուժող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը 2011 թվականի ապրիլի 29-ին բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանի 2011 թվականի մարտի 24-ի որոշումը վերացնելու խնդրանքով:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 16-ի որոշմամբ տուժող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժվել է:

4. Տուժող Վ.Խաչատրյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ բողոքը բավարարել է. բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 16-ի որոշումը՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել գործով տուժող Վ.Խաչատրյանի իրավունքների խախտումը:

5. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Նաղդալյանը:

2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը դատախազ Ա.Նաղդալյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Արամայիս և Յուրի Ղալաչյաններին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2010 թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 00.30-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի բնակիչ Արամայիս Յուրիկի Ղալաչյանը Արջուտ գյուղում գտնվող իր ամառանոցի հարևանությամբ բնակվող Ռոբերտ Մանուկյանից հարևանի հողամասից իր տուն խո-

ղովակներով ջուր անցկացնելու հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար իր որդիներ Յուրի Ղալաչյանի և Արտյոմ Մայիլյանի հետ գնացել են Ռոբերտ Մանուկյանի տան մոտ, գիշերվա ուշ ժամին արթնացրել նրան և կնոջը՝ Վերգուշ Խաչատրյանին, խախտել նրանց անդորրը, պահանջել բացել տան դարպասները:

Մերժում ստանալուց հետո Արամայիս Ղալաչյանն անհիմն վիճաբանել է Ռ.Մանուկյանի և Վ.Խաչատրյանի հետ, սեռական բնույթի հայհոյանքներ տվել նրանց հասցեին, իսկ Յուրի Ղալաչյանը քարերով հարվածել է դարպասների և տան պատերին, ծեծի ենթարկել Վ.Խաչատրյանին՝ շուրջ 10-15 բուպե խախտելով հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ (տե՛ս Նյութեր, էջեր 6-7, 66-67):

7. Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանի 2011 թվականի մարտի 24-ի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Նկատի ունենալով, որ Յուրի Արամայիսի Ղալաչյանն առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցագործություն, բնութագրվում է դրական, նպատակահարմար չէ քրեական պատասխանատվության ենթարկել միաժամանակ և հորը, և որդուն, իրադրության փոփոխման հետևանքով նրա անձը և կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց, ուստի նրա ուղղումը հնարավոր է առանց քրեական պատասխանատվության ենթարկելու» (տե՛ս Նյութեր, էջեր 14-15):

8. Առաջին ատյանի դատարանը, Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանի՝ «Քրեական հետապնդումը դադարեցնելու և խափանման միջոցը վերացնելու մասին» որոշման դեմ տուժողի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «Քրեական գործն ըստ մեղադրանքի Արամայիս Յուրիկի Ղալաչյանի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: (...) Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժանմունքի պետ Կ.Սահակյանը հայտնել է, որ Յուրի Ղալաչյանը միացել է հոր կողմից արդեն սկսած խուլիգանությանը, փորձել է հարթել վեճը, ինչպես միջադեպի, այնպես էլ նախաքննության ընթացքում, որը դիտվել է իրադրության փոփոխում: Արամայիս Յուրիկի Ղալաչյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մուտք է եղել դատարան և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 291-293-րդ հոդվածներով նախատեսված կարգով կայացվել են քրեական գործը վարույթ ընդունելու և դատական քննության նշանակելու վերաբերյալ որոշումներ: Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե գործի նյութերում բացակայում է վարույթը կարճելու մասին հանգամանքները, ինչպես նաև մինչդատական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների» (տե՛ս Նյութեր, էջ 25):

9. Առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարանը բեկանել է հետևյալ պատճառաբանությամբ. «Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Յուրի Ղալաչյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Այսպես՝ որոշման մեջ նշված Յուրի Ղալաչյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերից մեկը՝ «միաժամանակ և հորը, և որդուն քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունը», չի տեղավորվում ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված պայմանների մեջ: Քրեական հետապնդման մարմինը անձին քրեական պատասխանատվությունից ազատելու այդպիսի հայեցողությամբ օժտված չէ: Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ որոշման մեջ նախաքննության մարմնի կողմից որևէ կերպ չի պատճառաբանվել իրադրության փոփոխման և դրա արդյունքում՝ Յու.Ղալաչյանի և նրա արարքի հանրորեն վտանգավոր լինելը դադարելու մասին հետևությունը: Նշված որոշմամբ չի հիմնավորվել, թե կոնկրետ ինչ իրադրություն է փոփոխվել և ինչու է դրսևորվել դրա արդյունքում Յու.Ղալաչյանի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը դադարելը: (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը ներկայացված բողոքը բավարարելու հիմքերի բացակայության մասին հետևության հիմքում դրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, (...) Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Արամայիս Յուրիկի Ղալաչյանի վերաբերյալ քրեական գործն արդեն իսկ ուղարկվել է դատարան և ընդունվել դատարանի վարույթ, ու նշանակվել դատական քննության: Այսինքն՝ առաջին ատյանի դատարանը, առանց ներկայացված բողոքի փաստարկների վերլուծություն կատարելու, բողոքարկված որոշման օրինականության վերաբերյալ իր հետևությունն ըստ էության հիմնավորել է նրանով, որ քրեական գործն ըստ մեղադրանքի Ա.Ղալաչյանի ուղարկվել է դատարան, որն էլ չհայտնաբերելով մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտում՝ այն նշանակել է դատական քննության: Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Այսինքն՝ դատարանը նաև դատական քննության նախապատրաստական փուլում չէր կարող անդրադառնալ տվյալ գործով այլևս չմեղադրվող անձի մասով քննության օրինականությանը և գործը չնշանակել դատական քննության այն պատճառաբանությամբ, որ տվյալ գործով մեղադրյալներից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է օրենքի խախտմամբ» (տե՛ս Նյութեր, էջեր 70-71):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

11. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և ոչ օբյեկտիվ, դրանում սխալ են մեկնաբանված և ճիշտ չեն կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածները:

Մասնավորապես, իրադրության փոփոխում հասկացությունը պարզաբանելիս Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ իրադրության փոփոխում կարող է դիտվել միայն այն իրավիճակը, երբ պետության ամբողջ տարածքում կամ դրա մի մասում տեղի են ունեցել հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական կամ հոգևոր պայմանների փոփոխություններ: Մինչդեռ, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանի վերոնշյալ սահմանափակ ձևակերպումը չի բխում օրենքի տառացի մեկնաբանությունից և սահմանափակում է քրեական հետապնդման մարմնի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լիազորությունները:

12. Ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունը հետևյալն է. իրադրության փոփոխման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար անհրաժեշտ է, որպեսզի քննիչը (դատախազը) հանգի ողջամիտ հետևության առ այն, որ՝

ա) տվյալ քրեական գործի կապակցությամբ փաստերի և հանգամանքների մի համակցություն փոփոխվել է և վերածվել է մեկ այլ համակցության,

բ) քրեական գործի քննության ընթացքում առաջացել են (ի հայտ են եկել) գործին վերաբերող նոր իրադրություն կամ նոր փաստեր, կամ առկա փաստերին տրվել են նոր գնահատականներ: Նշված նոր իրադրության պայմաններում նպատակահարմար չէ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել:

Մեջբերված դատողության հիման վրա բողոք բերած անձը եզրահանգել է, որ իրադրության փոփոխման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելն իրավաչափ է, եթե քննիչը, դատախազը ողջամտորեն համոզված են, որ վերը նշված պայմաններն առկա են: Ըստ բողոքաբերի՝ նշված երկու պայմանն էլ սույն գործով առկա են, հետևաբար՝ քննիչը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով, պահպանել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջները:

13. Ուստի, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 16-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրադրության փոփոխման դեպքում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը ճիշտ է մեկնաբանել ու կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներով նախատեսված՝ իրադրության փոփոխման դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ դրույթները:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 74-րդ հոդված[ով] նախատեսված դեպք[ում]»:

Մեջբերված նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառման հիմքն արդեն փոփոխված իրադրությունում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունն է:

17. Վկայակոչված քրեաիրավական դրույթի իմաստով իրադրությունը քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների այն վիճակն է, որոնց անձը ներգրավված է եղել հանցանքի կատարման պահին: Ուստի, իրադրության փոփոխությունը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, հասարակական հարաբերությունների այդ վիճակի որակական, կայուն փոփոխությունն է, որը տեղի է ունեցել որևէ իրադարձության հետևանքով:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է իրադրության փոփոխման դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու երկու ինքնուրույն տեսակ՝

1. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վտանգավոր

լինելուց դադարել է անձը,

2. իրադրության փոփոխման հետևանքով հանրության համար վտանգավոր լինելուց դադարել է արարքը:

Ընդ որում, իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերոնշյալ տեսակներից յուրաքանչյուրի կիրառումը թույլատրելի է, եթե անձին մեղսագրվող հանցանքը ոչ մեծ կամ միջին ծանրության է և կատարվել է առաջին անգամ:

19. Իրադրության փոփոխման հետևանքով անձի՝ հանրության համար վտանգավորության կորուստը ենթադրում է այնպիսի փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցանք կատարած անձը դադարում է հանրության համար վտանգավոր լինելուց: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործությունից հետո անձի կյանքի և գործունեության պայմաններում կատարված փոփոխությունները զրկում են նրան հասարակական հարաբերություններին այնպիսի վնաս պատճառելու հնարավորությունից, ինչպիսին նա պատճառել է նախքան այդ փոփոխությունները: Այլ կերպ՝ կատարված փոփոխությունները պետք է էականորեն նվազեցնեն նոր հանցանք կատարելու՝ անձի օբյեկտիվ հնարավորությունը:

Իրադրության փոփոխման հետևանքով հանցավոր արարքի հանրային վտանգավորության կորուստը ենթադրում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում այնպիսի էական փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցավորի արարքը դադարում է հանրության համար վտանգ ներկայացնելուց՝ անկախ այն բանից, որ տվյալ պահին գործող քրեական օրենսգրքով այդ արարքը դեռևս համարվում է հանցավոր:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ իրադրության փոփոխման հետևանքով անձի կամ արարքի հասարակական վտանգավորության դադարման հիմքը չի կարող կիրառվել այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը գործուն գոյում է կամ որևէ ձևով հարթում է պատճառած վնասը, քանի որ դրանք քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմքեր են:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրադրության փոփոխման հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարագայում դատարանը, դատախազը և քննիչը պետք է հաջորդաբար քննության առնեն և համապատասխան որոշմամբ հստակորեն պարզաբանեն հետևյալ հարցերը՝

1. հանցանքի կատարման պահին առկա իրադրությունը,
2. նոր (փոփոխված) իրադրությունը,
3. իրադարձությունը, որի հետևանքով տեղի է ունեցել իրադրության փոփոխությունը,
4. հանցանք կատարած անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորստի կոնկրետ դրսևորումը,
5. պատճառական կապը նոր (փոփոխված) իրադրության և հանցանք կատարման միջև:

րած անձի կամ արարքի հանրային վտանգավորության կորստի միջև:

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված են իրադրության փոփոխման հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի կիրառման բովանդակային երաշխիքները, իսկ սույն կետում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ հիմքի կիրառման ընթացակարգային երաշխիքներին: ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատարանը, դատախազը և քննիչը կարող են և ոչ թե պարտավոր են իրադրության փոփոխման հետևանքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից: Այլ կերպ՝ իրադրության փոփոխման հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը թողնված է դատարանի, դատախազի և քննիչի հայեցողությանը: Վճռաբեկ դատարանն այդուհանդերձ գտնում է, որ իրադրության փոփոխման հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշումը չի կարող դուրս լինել դատական վերահսկողությունից (դատարանի կողմից կայացված լինելու պարագայում՝ վերադաս դատական վերահսկողությունից), քանի որ հայեցողության կամայական գործադրումն իրավական պետությունում չի կարող իրավաչափ համարվել:

22. Սույն որոշման 20-21-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը չափազանց լայն և անընդունելի է համարում խնդր առարկա իրավանորմերի՝ բողոքի հեղինակի փաստարկած մեկնաբանությունը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Այդպիսի մեկնաբանման պարագայում իրադրության փոփոխման հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի կիրառումն ապահովված չէր լինի բովանդակային երաշխիքներով:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արամայիս և Յուրի Ղալաչյաններին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Իրադրության փոփոխման հիմքով Յուրի Ղալաչյանին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին քննիչի որոշումը պատճառաբանված է այն հանգամանքով, որ նա առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցագործություն, բնութագրվում է դրական, ինչպես նաև նպատակահարմար չէ քրեական պատասխանատվության ենթարկել միաժամանակ և հորը, և որդուն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Տուժողի ներկայացուցչի բողոքի հիման վրա քննության առնելով նախաքննության մարմնի վերոնշյալ որոշումը՝ Առաջին ատյանի դատարանը բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ գործը գտնվում է դատաքննության փուլում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե գործի նյութե-

րում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները, ինչպես նաև մինչդաստական վարույթը կատարված է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը՝ պատճառաբանելով, որ Յուրի Ղալաչյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, նրան քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ նախաքննության մարմնի որոշման մեջ նշված հիմքերից մեկը՝ «միաժամանակ և հորը, և որդուն քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունը», չի տեղավորվում ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված պայմանների մեջ: Բացի այդ, նախաքննության մարմնի կողմից չի պատճառաբանվել իրադրության փոփոխման և դրա արդյունքում՝ Յու.Ղալաչյանի և նրա արարքի հանրային վտանգավորության դադարման վերաբերյալ հետևությունը: Մասնավորապես, չի հիմնավորվել, թե կոնկրետ ինչ իրադրություն է փոփոխվել, և ինչու է դրսևորվել դրա արդյունքում Յու.Ղալաչյանի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության դադարումը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

24. Սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հանցանք կատարած անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորստի կոնկրետ դրսևորումը հիմնավորված չէ, քանզի այն պատճառաբանությունը, որ «միաժամանակ և հորը, և որդուն քրեական պատասխանատվության ենթարկ[ելը] նպատակահարմար չէ», անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորստի կոնկրետ դրսևորում չէ: Այսպիսով, Վերաքննիչ դատարանն ըստ էության ճիշտ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներով նախատեսված՝ իրադրության փոփոխման դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ դրույթները:

25. Հետևաբար, սույն գործի քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի խախտում թույլ չի տվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Լռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 16-ի որոշումը բեկանելու և վարույթն իրականացնող մարմնին տուժող Վ.Խաչատրյանի իրավունքների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

65.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ/0327/01/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԼԳ/0327/01/10
նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան
դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան, Մ.Պետրոսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Գ.ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալվարդ Չուբարի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Գ.Նալբանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի մարտի 3-ին հարուցվել է թիվ 53101910 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2010 թվականի մարտի 19-ի որոշմամբ, Ալվարդ Չուբարի Ստեփանյանը ներ-

գրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի նոյեմբերի 30-ի որոշումներով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքը լրացվել և փոփոխվել է, Ա.Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2010 թվականի դեկտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռով Ալվարդ Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Դատավճռով որոշվել է նաև Ա.Ստեփանյանից հոգուտ տուժող Գ.Ջիլավյանի բռնազանձել 5.448.052 ՀՀ դրամ, հոգուտ տուժող Մ.Շահվերդյանի՝ 2.579.988 ՀՀ դրամ, հոգուտ Լ.Ջինչենկոյի՝ 196.000 ՀՀ դրամ, հոգուտ Մ.Ալեքսանյանի՝ 17.200 ՀՀ դրամ, հոգուտ Ս.Խեչումյանի՝ 14.200 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում: Տուժող Լ.Անդրիասյանի կողմից ներկայացված 1.211.830 ՀՀ դրամի հայցը մերժվել է:

3. Ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Գ.Նալբանդյանի, մեղադրող Գ.Սաֆարյանի և տուժող Լ.Անդրիասյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճիռը փոփոխել է, կիրառել է «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և ամբաստանյալ Ա.Ստեփանյանին ազատել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռով նշանակված պատժից՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքից: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Գ.Նալբանդյանը:

2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Գ.Նալբանդյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել տուժող Գ-ոհարիկ Ջիլավյանը: Պնդելով, որ բողոքում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, և Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված՝ վճռաբեկ բողոքի պատասխանի հեղինակը խնդրել է պաշտպան Գ.Նալբանդյանի վճռաբեկ բողոքը մերժել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ա.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար.

«2000 թվականի ապրիլ-մայիս ամիսներին, Ստեփանավան քաղաքում, նույն քաղաքի բնակչուհի Գ-հարիկ Գ-տրզի Ջիլավյանին պարտք տված ընդհանուր 1.215.182 ՀՀ դրամին համարժեք 2300 ԱՄՆ դոլարի համար մինչև 2007 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ: Մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարեկան 25-26 տոկոս սահմանված լինելու պայմաններում պահանջել և ստացել է ամսական միջինը 6 տոկոս՝ 65000-70000 ՀՀ դրամ, կամ տարեկան 72 տոկոս հաշվարկով՝ 39 ամիսների համար ընդհանուր 2.512.267 ՀՀ դրամ: Իսկ հիշյալ օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլ ամիսը ներառյալ, պահանջել և ստացել է այդ տարիներին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 17-19 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով ամսական 6 տոկոս՝ 65000-70000 հազար ՀՀ դրամ, կամ տարեկան 72 տոկոս հաշվարկով ընդհանուր 33 ամիսների համար՝ 2.145.000 ՀՀ դրամ: Այնուհետև, 2006 թվականի գարնան ընթացքում, ստանալով պարտք տված մայր գումարի՝ 579.728 ՀՀ դրամին համարժեք 1600 ԱՄՆ դոլարը, որից հետո 2007 թվականի դեկտեմբերին նաև մնացած՝ 211.057 ՀՀ դրամին համարժեք 700 ԱՄՆ դոլարը, այն հաշվարկել է որպես 2006 թվականի ապրիլից մինչև 2007 թվականի դեկտեմբեր ամիսներին Գ.Ջիլավյանի կողմից չվճարված տոկոսներ:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ Ա.Ստեփանյանը 2004 թվականի դեկտեմբերի կեսերին, Ստեփանավան քաղաքում, նույն քաղաքի բնակչուհի Մարինե Շահվերդյանին պարտք տված 1.912.000 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլարի համար մինչև 2007 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում պահանջել և ստացել է այդ տարիներին ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 13-17 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով ամսական 5 տոկոս՝ 95.600 ՀՀ դրամին համարժեք 200 ԱՄՆ դոլար, կամ տարեկան 60 տոկոսի հաշվարկով ընդհանուր 35 ամիսների համար՝ 3.346.000 ՀՀ դրամին համարժեք 7.000 ԱՄՆ դոլար, ապա 2007 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2008 թվականի դեկտեմբերը ներառյալ, պահանջել և ստացել է այդ ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 11-13 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով ամսական 4 տոկոս՝ 70.000 ՀՀ դրամ կամ տարեկան 48 տոկոս, ընդհանուր 13 ամիսների համար՝ 930.000 ՀՀ դրամ: Իսկ 2009 թվականի հունիսի 28-ին պահանջել և ստացել է ևս 215.988 ՀՀ դրամին համարժեք 600 ԱՄՆ դոլար՝ որպես

2009 թվականի հունվար-մարտ ամիսներին չվճարված տոկոսադրույքներ: Ընդհանուր առմամբ, նա 2004 թվականի դեկտեմբերին Մ.Շահվերդյանին պարտք տված 1.912.000 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլարի համար մինչև 2009 թվականի հունիսը որպես տոկոսներ պահանջել և ստացել է 4.491.988 ՀՀ դրամ:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ Ա.Ատեփանյանը 2005 թվականի օգոստոսի կեսերին Ատեփանավան քաղաքում Լոռու մարզի Հոբարձի գյուղի բնակչուհի Լիլիթ Անդրիասյանին 10 կտոր ոսկյա զարդերի գրավադրմամբ, պարտքով տված 245.943 ՀՀ դրամին համարժեք 550 ԱՄՆ դոլարի համար մինչև 2007 թվականի հունիս-հուլիս ամիսը պահանջել և ստացել է այդ տարիներին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 13-17 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով ամսական 10 տոկոս՝ 24.594 ՀՀ դրամին համարժեք 55 ԱՄՆ դոլար, կամ տարեկան 120 տոկոս հաշվարկով 22 ամիսների համար՝ ընդհանուր 541.075 ՀՀ դրամին համարժեք 1210 ԱՄՆ դոլար: Այնուհետև 2-3 ամիս անց Լ.Անդրիասյանից ստանալով պարտք տված 550 ԱՄՆ դոլարը՝ վերջին 2-3 ամիսներին նրա կողմից չվճարված տոկոսների փոխարեն վերջինիս չի վերադարձրել 670.755 ՀՀ դրամ արժողությամբ վերոհիշյալ ոսկյա զարդերը, այսինքն՝ Լ.Անդրիասյանին պարտք տված 550 ԱՄՆ դոլարի համար որպես տոկոս ընդհանուր առմամբ ստացել է 1.457.773 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ և ոսկյա զարդեր:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ Ա.Ատեփանյանը 2005 թվականի սեպտեմբերին Ստեփանավան քաղաքում նույն քաղաքի բնակչուհի Լենա Սերյոժայի Ղարիբյանին պարտք տված 88.842 ՀՀ դրամին համարժեք 200 ԱՄՆ դոլարի համար մինչև 2005 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 17 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով ամսական 5 տոկոս՝ 10 ԱՄՆ դոլար կամ տարեկան 60 տոկոս հաշվարկով ընդհանուր 3 ամիսների համար 13.326 ՀՀ դրամին համարժեք 30 ԱՄՆ դոլար:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ Ա.Ստեփանյանը 2007 թվականի ապրիլին Ստեփանավան քաղաքում նույն քաղաքի բնակչուհի Լյուբով Ռազմիկի Զինչենկոյին պարտք տված 71.394 ՀՀ դրամին համարժեք 200 ԱՄՆ դոլարի համար մինչև 2009 թվականի օգոստոս ամիսը ներառյալ պահանջել և ստացել է այդ ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 11-13 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով, ամսական 10 տոկոս՝ 7000 ՀՀ դրամ կամ տարեկան 120 տոկոս հաշվարկով ընդհանուր 28 ամիսների համար 196.000 ՀՀ դրամ:

Շարունակելով հանցավոր գործունեությունը՝ Ալվարդ Ստեփանյանը 2007 թվականի սեպտեմբերին Ստեփանավան քաղաքում, նույն քաղաքի բնակչուհի Մարինե Հնայակի Ալեքսանյանին պարտք տված 134.316 ՀՀ դրամին համարժեք 400 ԱՄՆ դոլարի և 78.000 ՀՀ դրամի համար մինչև 2009 թվականի փետրվար ամիսը նե-

րառչյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 12 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով՝ ամսական 6,5 տոկոս՝ 13.500 ՀՀ դրամ կամ տարեկան 78 տոկոս հաշվարկով ընդհանուր 17 ամիսների համար 229.500 ՀՀ դրամ:

Բացի այդ, Ա.Ստեփանյանը 2007 թվականի սեպտեմբեր ամսին Ստեփանավան քաղաքում համաքաղաքացի Մ.Ալեքսանյանի միջոցով վերջինիս հարևան Սվետլանա Խալաթի Խեչումյանին պարտք տված 67.158 ՀՀ դրամին համարժեք 200 ԱՄՆ դոլարի համար մինչև 2009 թվականի փետրվար ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 12 տոկոսի կրկնապատիկը գերազանցող չափով՝ ամսական 7 տոկոս՝ 5000 ՀՀ դրամ, կամ տարեկան 84 տոկոս հաշվարկով ընդհանուր 17 ամիսների համար՝ 85000 ՀՀ դրամ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջեր 211-213):

6. Գատաքնության արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ տուժողներ Լ.Անդրիասյանի և Լ.Ղարիբյանի դրվագներով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքն անհիմն է, չի հաստատվել գործով ձեռք բերված ապացույցներով, ուստի դրանք հանել է Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի ընդհանուր ծավալից՝ Ա.Ստեփանյանին մեղավոր ճանաչելով մյուս հինգ դրվագներով առաջադրված մեղադրանքում (տե՛ս քրեական գործ, հատոր 4, էջեր 302-315):

7. Տուժող Գ.Ջիլավյանն ամբաստանյալ Ա.Ստեփանյանի դեմ 5.448.052 ՀՀ դրամի քաղաքացիական հայց է ներկայացրել և վարույթն իրականացնող մարմնի 2010 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ ճանաչվել է քաղաքացիական հայցվոր (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջեր 136, 139):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռով տուժող Գ.Ջիլավյանի քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ՝ վճռվել է Ա.Ստեփանյանից հօգուտ տուժող Գ.Ջիլավյանի բռնագանձել 5.448.052 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում (տե՛ս քրեական գործ, հատոր 4, էջ 315):

8. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում տուժող Լ.Անդրիասյանը վիճարկել է իր նկատմամբ վաշխառություն կատարելու դրվագով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքն անհիմն լինելու և ընդհանուր մեղադրանքի ծավալից հանելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 5, էջեր 25-29):

Վերաքննիչ դատարանում գործի քննությունը կատարվել է Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կանոններով լրացուցիչ ապացույցներ չի հետազոտել: Նշված կարգով քննելով տուժող Լ.Անդրիասյանի բողոքի փաստարկները՝ Վերաքննիչ դատարանը

գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, Լ.Անդրիասյանի դրվագով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքը հանելով մեղադրանքի ընդհանուր ծավալից, հանգել է ճիշտ հետևության: Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ այդ դրվագով առաջադրված մեղադրանքն անհիմն է և պետք է հանվի մեղադրանքի ընդհանուր ծավալից (տե՛ս քրեական գործ, հատոր 5, էջեր 42-45, 71-74, 102-107):

Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի որոշման մեջ՝ գործի փաստական հանգամանքների նկարագրության մասում, արձանագրվել է, որ Ա.Ստեփանյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել նախաքննության մարմնի կողմից նրան մեղաազրված բոլոր յոթ, այդ թվում՝ տուժողներ Լ.Անդրիասյանի և Լ.Ղարիբյանի դրվագներով (տե՛ս քրեական գործ, հատոր 5, էջեր 96-98):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

10. Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 127-րդ, 154-րդ հոդվածների պահանջերը, քանի որ դատավճռի հիմքում դրվել են տուժողների և վկաների հակասական և իրարամերժ ցուցմունքները, որոնք ուղղակի չեն ապացուցում Ա.Ստեփանյանի մեղքը և բխում են մտացածին հիմքերից:

Անդրադառնալով հայցապահանջներին՝ բողոքաբերը նշել է, որ տուժող Գ.Ջիլավյանի 5.448.052 ՀՀ դրամի հայցապահանջն անհիմն է բավարարվել, քանի որ դրանում ներառվել է նաև մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում վճարված 2.512.267 ՀՀ դրամը, մինչդեռ այն չպետք է հաշվարկվեր, որովհետև մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը վաշխառությունը քրեորեն պատժելի արարք չի հանդիսացել:

Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը՝ բողոքաբերը նշել է, որ 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլ ամիսը ներառյալ 33 ամիսների համար որպես տոկոս ստացված գումարը՝ 2.145.000 ՀՀ դրամը, ամբողջությամբ դիտվել է որպես պատճառված վնաս և ներառվել բավարարված քաղա-

քացիական հայցի մեջ: Մինչդեռ, ըստ բողոք բերած անձի, որպես պատճառված վնաս պետք է հաշվարկվեր դրա կեսը, քանի որ ըստ մեղադրանքի՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է տարեկան 17-19 տոկոս, որի կրկնապատիկը կազմում է 34-38 տոկոս, իսկ նշված ժամանակահատվածում ամբաստանյալը տուժողներից պահանջել և ստացել է տարեկան 72 տոկոս: Այսինքն՝ ամբաստանյալի խախտումը կազմում է բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափը, ինչը ստացված գումարների կեսն է:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի որոշումը բեկանել և փոփոխել: Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ ամբաստանյալ Ա.Ստեփանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ բավարար ապացույցներ չլինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

1. Մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը կատարած արարքը վաշխառություն որակելու իրավաչափությունը

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. վաշխառության հանցակազմը 2003 թվականի օգոստոսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված լինելու պայմաններում իրավաչափ է արդյոք Ա.Ստեփանյանի կողմից մինչ 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված արարքը վաշխառություն որակելը:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական

այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: (...)»

Մեջբերված իրավանորմերը Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ե.Մելքոնյանի* վերաբերյալ որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «Անձին հանցագործություն կատարելու մեջ մեղավոր ճանաչելու միակ հիմքը կատարման պահին նրա արարքի՝ օրենքով սահմանված կարգով հանցագործություն համարվելն է: Այսինքն՝ արարքը կարող է որպես հանցագործություն նախատեսվել միայն քրեական օրենքով, և ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան քրեական օրենքով ուղղակիորեն նախատեսված հանցանք կատարելու համար: Այսպիսով՝ չկա հանցագործություն, չկա պատիժ, եթե արարքն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով (*nullum crimen, nulla poena sine lege*):

(...) [նշված] երաշխիքը (*nullum crimen, nulla poena sine lege*), հանդիսանալով օրենքի գերակայության անքակտելի տարր, առաջնային տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության համակարգում, որից որևէ շեղում չի թույլատրվում: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքից հետևում է, որ ցանկացած հանցագործություն և պատիժ պետք է հստակ ամրագրված լինի օրենքով: Այդ օրենքը չի կարող տարածական մեկնաբանվել, և այն չի կարող կիրառվել անալոգիայով» (տե՛ս Երվանոյ Մելքոնյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԳ/0090/01/10 որոշման 14-րդ և 16-րդ կետերը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող օրենքով: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: (...)»:

Վերոգրյալ նորմերի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են հանցանքի կատարման ժամանակ գործող օրենքով: Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը չի կարող կիրառվել այն հանցագործությունների կապակցությամբ, որոնք կատարվել են մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է: (...)

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են (...), մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը: (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները (...):

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը»:

(...)»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից համակարգային վերլուծության են ենթարկվել *Ա. Պասյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է նաև «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը: Նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ «(...) «մեղադրանքի ձևակերպում» եզրույթ[ի] կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար՝ պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատաս-

խան իրավաբանական գնահատական տալուն:

Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը» (տե՛ս Արկադի Պասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 18-19-րդ կետերը):

16. Մույն որոշման 14-րդ կետում շարադրված հիմնավորումները, ինչպես նաև Ա. Պասյանի վերաբերյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը կարող է որպես հանցագործություն նախատեսվել միայն քրեական օրենքով, և անձը ենթակա է պատասխանատվության ու պատժի միայն քրեական օրենքով ուղղակիորեն նախատեսված հանցանքի կատարման համար: Հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը չի կարող կիրառվել այն հանցագործությունների կապակցությամբ, որոնք կատարվել են մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը:

Քրեական օրենքով նախատեսված՝ անձին մեղսագրվող արարքը պետք է արտացոլվի անձին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ: Վերջինս պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, ինչպես նաև դրանում պետք է նշվի քրեական այն օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները:

17. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն՝ վաշխառություն կատարելու համար: Համաձայն առաջադրված մեղադրանքի՝ «Ա.Ստեփանյանը 2000 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Գ.Ջիլավյանին պարտք տված ընդհանուր 1.215.182 ՀՀ դրամին համարժեք 2300 ԱՄՆ դոլարի համար մինչև 2007 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ պահանջել և ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ: Ընդ որում, մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարեկան 25-26 տոկոս սահմանված լինելու պայմաններում պահանջել և ստացել է ամսական միջինը 6 տոկոս՝ 65000-70000 դրամ, կամ տարեկան 72 տոկոս հաշվարկով՝ 39 ամիսների համար ընդհանուր 2.512.267 ՀՀ դրամ: Իսկ հիշյալ օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլ ամիսը ներառյալ, պահանջել և ստացել է այդ տարիներից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի՝ տարեկան 17-19 տոկոսի կրկնապատիկը գերա-

զանցող չափով ամսական 6 տոկոս՝ 65000-70000 հազար ՀՀ դրամ, կամ տարեկան 72 տոկոս հաշվարկով ընդհանուր 33 ամիսների համար՝ 2.145.000 ՀՀ դրամ» (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեղադրանքի մեջբերված ձևակերպումից հետևում է, որ Ա.Ստեփանյանին, ի թիվս այլ արարքների, մեղսագրվել է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարեկան 25-26 տոկոս սահմանված լինելու պայմաններում, մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում ամսական միջինը 6 տոկոս՝ 65000-70000 դրամ, կամ տարեկան 72 տոկոս հաշվարկով՝ 39 ամիսների համար ընդհանուր 2.512.267 ՀՀ դրամ պահանջել և ստանալը:

18. Սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում շարադրված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նկարագրված դրվագով Ա.Ստեփանյանի նկատմամբ կիրառվել է այն քրեական օրենքը, որն արարքի կատարման պահին գոյություն չի ունեցել: Այսինքն՝ հետադարձ ուժ է տրվել արարքը քրեականացնող օրենքին, ինչի հետևանքով էականորեն վատթարացել է ամբաստանյալի վիճակը: Ստորադաս դատարաններն էլ, իրենց հերթին, անտեսել են այս հանգամանքը և ճիշտ իրավական գնահատական չեն տվել Ա.Ստեփանյանի կողմից մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը կատարված արարքին: Դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վաշխառությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, նախատեսվել է 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով, իսկ քրեական օրենքի հետադարձ ուժի և *nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքների համաձայն՝ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով այն արարքների համար, որոնք կատարել է մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաշխառության հանցակազմը 2003 թվականի օգոստոսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված լինելու պայմաններում իրավաչափ չէ վաշխառություն որակել Ա.Ստեփանյանի կողմից մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված արարքը, այն է՝ տուժող Գ.Ջիլավյանից նրան տրված գումարի դիմաց ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը:

II. Քաղաքացիական հայցի լուծման իրավաչափությունը

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ճիշտ է լուծվել տուժող Գ.Ջիլավյանի ներկայացրած քաղաքացիական հայցը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ըն-

թացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը կարող է հարուցվել ցանկացած պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

2. Քաղաքացիական հայցը հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն մեղադրյալի գործողությունների համար: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝ (...)

10) քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության»:

21. Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարությունում մեղադրյալի կամ մեղադրյալի գործողությունների համար պատասխանատվություն կրող անձի դեմ քաղաքացիական հայց կարող է ներկայացվել և, համապատասխանաբար, դատարանում քննության առարկա լինել բացառապես հանցագործությամբ պատճառված և քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի առկայության պարագայում: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության հիմքում ընկած է միասնական իրավաբանական փաստը՝ հանցագործությունը, որի կատարման համար անձը ենթարկվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության այն դեպքերում, երբ առկա է հանցագործությամբ պատճառված գույքային վնաս: Միևույն ժամանակ, եթե չկա հանցագործություն, ապա չի կարող լինել նաև քրեական դատավարությունում քաղաքացիաիրավական պատասխանատվություն:

Շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը, ապացուցված համարելով հանցագործության մեջ մեղադր-

վող անձի մեղքը, ինչպես նաև հանցավոր արարքի և հասցված վնասի միջև պատճառական կապը, լուծում է նաև քաղաքացիական հայցը՝ գնահատելով ներկայացված հայցադիմումի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքը:

22. Սույն գործի նյութերից երևում է, որ Գ.Ջիլավյանը Ա.Ստեփանյանի դեմ 5.448.052 ՀՀ դրամի քաղաքացիական հայց է ներկայացրել, որն Առաջին ատյանի դատարանի դատավճռով բավարարվել է ամբողջությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանը, ամբողջովին բավարարելով տուժող Գ.Ջիլավյանի ներկայացրած քաղաքացիական հայցը, այդ գումարի մեջ ներառել է նաև Ա.Ստեփանյանի կողմից մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը որպես տոկոսներ ստացած 2.512.267 ՀՀ դրամը:

23. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված եզրակացության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 22-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը քրեական գործի շրջանակներում Ա.Ստեփանյանի վրա գույքային վնասի հատուցման պարտականություն է դրել այնպիսի արարքի համար, որը կատարման պահին հանցագործություն չի եղել: Մինչդեռ, ինչպես բխում է սույն որոշման 21-րդ կետում շարադրված վերլուծությունից, քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասն է, հետևաբար՝ հանցագործություն չհամարվող արարքի համար չէր կարող առաջանալ քաղաքացիաիրավական պատասխանատվություն:

24. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժող Գ.Ջիլավյանի ներկայացրած քաղաքացիական հայցը ճիշտ չի լուծվել: Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ որպես պատճառված վնաս պետք է հաշվարկվեր 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլ ամիսը ներառյալ 33 ամիսների համար որպես տոկոս ստացված գումարի կեսը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրան հնարավոր կլինի անդրադառնալ միայն վերոնշյալ նյութական և դատավարական իրավունքի էական խախտումները վերացնելուց հետո:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ գործի նոր քննության ընթացքում անհրաժեշտ կլինի նաև անդրադառնալ այն հարցին, թե վերոնշյալ քաղաքացիական հայցը պետք է լուծվի և, համապատասխանաբար, պատճառված վնասի չափի հաշվարկը պետք է կատարվի քրեական վարույթում հարուցված քաղաքացիական հայցի շրջանակներում, թե ինքնուրույն քաղաքացիական վարույթի կարգով:

III. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների իրավաչափությունը

25. Որպես վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերի հետ անմիջականորեն

փոխկապակցված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև հետևյալ իրավական հարցին. Առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Ստեփանյանի մեղադրանքի ծավալից երկու դրվագ հանելու պարագայում իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունը նշված դրվագներով ևս Ա.Ստեփանյանին դատապարտելու վերաբերյալ:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝
«1. Գատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

2. Գատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս Առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382-րդ հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության»:

27. Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել նոր փաստական հանգամանք հաստատված համարել հետևյալ երկու դեպքում՝

1) երբ դա հնարավոր է առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա,

2) երբ հետազոտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների պահպանմամբ վերաքննիչ դատարան ներկայացված լրացուցիչ ապացույցներ:

Ընդ որում, վերոնշյալ դեպքերից առաջինի վրա հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի՝

1) վերաքննիչ բողոքում վիճարկվի որևէ փաստական հանգամանք, և

2) վերաքննիչ դատարանը հանգի եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս Առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ տուժողներ Լ.Անդրիասյանի և Լ.Գարիբյանի դրվագներով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքն անհիմն է, չի հաստատվել գոր-

ծով ձեռք բերված ապացույցներով, դրանք հանել է Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի ընդհանուր ծավալից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սույն գործի նյութերից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել տուժող Լ.Անդրիասյանը, ով վիճարկել է իր նկատմամբ վաշխառություն կատարելու դրվագով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքն անհիմն լինելու և ընդհանուր մեղադրանքի ծավալից հանելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը: Տուժող Լ.Ղարիբյանը վերաքննիչ բողոք չի բերել (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, քննելով տուժող Լ.Անդրիասյանի բողոքի փաստարկները, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, Լ.Անդրիասյանի դրվագով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքը հանելով մեղադրանքի ընդհանուր ծավալից, հանգել է ճիշտ հետևության: Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ այդ դրվագով առաջադրված մեղադրանքն անհիմն է և պետք է հանվի մեղադրանքի ընդհանուր ծավալից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանում գործի քննությունը կատարվել է Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կանոններով լրացուցիչ ապացույցներ չի հետազոտել, տուժող Լ.Անդրիասյանի դրվագով Ա.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի կապակցությամբ նոր փաստական հանգամանք չի հաստատել և եզրահանգել է, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը ճիշտ է: Ինչ վերաբերում է տուժող Լ.Ղարիբյանին, ապա վերջինս ընդհանրապես վերաքննիչ բողոք չի բերել և իր նկատմամբ վաշխառություն կատարելու դրվագով Ա.Ստեփանյանի մեղադրանքը մեղադրանքի ընդհանուր ծավալից հանելու փաստը չի վիճարկել:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 8-ի որոշման մեջ՝ գործի փաստական հանգամանքների նկարագրության մասում, արձանագրվել է, որ Ա.Ստեփանյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել նախաքննության մարմնի կողմից նրան մեղսագրված բոլոր յոթ, այդ թվում՝ տուժողներ Լ.Անդրիասյանի և Լ.Ղարիբյանի դրվագներով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

29. Հիմք ընդունելով 27-28-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը նշված երկու դրվագներով Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հիմք չընդունելու որևէ հիմնավորում չի ունեցել: Ուստի, Առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Ստեփանյանի մեղադրանքի ծավալից երկու դրվագ հանելու պարագայում իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունը նշված դրվագներով ևս Ա.Ստեփանյանին դատապարտելու վերաբերյալ: Այս առումով՝ Վերաքննիչ դա-

66.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՍԳ-3/0013/01/11
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Մ.Միմոնյան, Ս.Ավետիսյան

ՍԳ-3/0013/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

քարտուղարությամբ՝

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարուժան Գազիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հուլիսի 15-ի որոշումների դեմ մեղադրող Ս.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի սեպտեմբերի 27-ին հարուցվել է թիվ 91257010 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ Վարուժան Գազիկի Ավետիսյանը

ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2010 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումներով Վ.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել և փոփոխվել է, Վ.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի դեկտեմբերի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճռով Վարուժան Գագիկի Ավետիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 364-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոններով նշանակված պատիժի մեջ հաշվակցվել է Վ.Ավետիսյանի՝ նախնական կալանքի տակ գտնվելու երեք օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

3. Ամբաստանյալ Վ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, թողել է օրինական ուժի մեջ: Կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 1-ին ենթակետը, և ամբաստանյալ Վ.Ավետիսյանին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժից:

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի մեկ այլ որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել է: Կիրառել է Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը և Վ.Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մա-

սով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթն այդ մասով կարճել է և Վ.Ավետիսյանի նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի որոշումների դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ս.Խաչատրյանը:

2011 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրող Ս.Խաչատրյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Վ.Ավետիսյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

«Ամբաստանյալ Վ.Ավետիսյանը, հանդիսանալով թիվ 38401 գորամասի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2010 թվականի սեպտեմբերի 23-ին ստանձնելով օրվա վերակարգի պարտականությունները որպես օրապահ, զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումից հրաժարվելով, որը գուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, նույն օրը՝ ժամը 19.30-ի սահմաններում, սվին դանակը թողնելով օրապահի պահարանի վրա, դադարեցնելով օրապահի պարտականությունները, ինքնակամ թողել է գորամասը:

2010 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 13-ի սահմաններում, գտնվելով փախուստի մեջ, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու նպատակով Վ.Ավետիսյանն ապօրինի մուտք է գործել Հաղրուքի շրջանի Նորաշեն գյուղի բնակիչ Վ.Կարապետյանի տուն և գողացել «Նոկիա» տեսակի մեկ բջջային հեռախոս իր լիցքավորիչով ու մարտկոցով, 9.900 ՀՀ դրամ գումար, հինգ տուփ «Նոյ» տեսակի ծխախոտ, մեկ մոխրագույն անդրավարտիք, մեկ ամառային և մեկ ձմեռային վերնաշապիկ, մեկ գույգ կոշիկ՝ Վ.Կարապետյանին պատճառելով 36.900 ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, 2010 թվականի դեկտեմբերի 13-ին թիվ 38401 գորամասի հրամանատար, փոխգնդապետ Մ.Ջհանգիրյանը շարքային Վ.Ավետիսյանին որպես կարգապահական տույժ 10 օր կալանք է հայտարարել, որի կապակցությամբ Վ.Ավետիսյանը վրեժխնդիր լինելու նպատակով քար է նետել նրան պատկանող անձնական օգտագործման «Նիսսան» մակնիշի 17 OS 617 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղղությամբ՝ Մ.Ջհանգիրյանին դիտավորությամբ պատճառելով 56.000 ՀՀ դրամի զգալի չափով նյութական վնաս»:

6. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճռով վարուստան Գագիկի Ավետիսյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքների համակցության կանոնները, արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին

մասով և 364-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ է սահմանվել ազատագրելու՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս Քրեական գործ, էջ 262):

7. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, թողել է օրինական ուժի մեջ: Կիրառել է Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետը, և ամբաստանյալ Վ.Ավետիսյանին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժից (տե՛ս Քրեական գործ, էջ 347-349):

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի մեկ այլ որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել է, կիրառել է Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը և Վ.Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթն այդ մասով կարճել է և Վ.Ավետիսյանի նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը (տե՛ս Քրեական գործ, էջ 350-352):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Համաձայն բողոքի՝ Վերաքննիչ դատարանում ամբաստանյալ Վ.Ավետիսյանը հայտնել է, որ չի առարկում, որպեսզի իր նկատմամբ կիրառվի Համաներման ակտը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով համաներման որոշումը չկիրառելու հիմքեր չկան:

Առաջին ատյանի դատարանի դատավճռով Վ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 364-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով պատիժ է նշանակվել ազատագրելու՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է թողներ անփոփոխ, քանի որ ճիշտ էր կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, բեկանելով Վ.Ավետիսյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի

դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 364-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև ամբողջովին չկիրառելով Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջը: Հանցագործությունների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելով՝ նշանակված պատիժները լրիվ կամ մասնակի գումարելու միջոցով պետք է վերջնական պատիժ նշանակվեր, և եթե նշանակված պատիժը չի գերազանցում 3 տարի ժամկետով ազատազրկումը, կիրառվեր համաներման որոշումը, և ամբաստանյալն ազատվեր պատժից:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Վ.Ավետիսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով բեկանելու և այդ հոդվածներով ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել: Վ.Ավետիսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը թողնել անփոփոխ, կիրառել Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետը և ամբաստանյալ Վ.Ավետիսյանին ազատել պատժի կրումից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երկու կամ ավելի հանցանք կատարելու դեպքում Համաներման ակտի և հանցագործությունների համակցության կանոնների կիրառման և դրա հետ փոխկապակցված այլ հարցերի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելու դեպքում համաներումը ենթակա է կիրառման հանցագործությունների համակցության կանոնները կիրառելուց հետո⁶, թե յուրաքանչյուր հանցագործության համար առանձին:

12. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝

«(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով (...)»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որոնք կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չեն համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ թողտվության հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները (...)»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Անձինք կարող են ենթարկվել պատասխանավորության միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և չափով»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

13. Նախորդ կետում շարադրված միջազգային և ներպետական իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ անձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պա-

հին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով: Անձը չի կարող ենթարկվել նաև այնպիսի պատժի, որը նախատեսված չէ գործող օրենքով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար՝ նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է:

14. Վերոնշյալ սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, որի համաձայն՝ հանցագործության առկայությունը կարող է որոշվել և դրա համար պատժի նշանակումը կարող է կատարվել բացառապես օրենքի հիման վրա: Մասնավորապես, *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ միայն այն բանի համար, որ ի վնաս մեղադրյալի հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումն արգելվի: Այն ընդհանուր առմամբ ամրագրում է նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (*nullum crimen, nulla poena sine lege*), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով (տե՛ս *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի* գործով (*KOKKINAKIS v. GREECE*), 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 14307/88, կետ 52):

Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ միայն օրենքով կարող է սահմանվել, թե որ արարքներն են համարվում հանցագործություն, և ինչ պատիժներ են նախատեսվում դրանց կատարման համար, (տե՛ս *Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործով (*G. v FRANCE*), 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 15312/89, կետ 24):

Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության և Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները, լինելով օրենքի գերակայության էական տարրեր, Կոնվենցիայի պաշտպանության համակարգում կայուն տեղ ունեն, և դա հատկապես ընդգծվում է այն փաստով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ անգամ պատերազմի կամ արտակարգ

դրության ժամանակ 7-րդ հոդվածից որևէ շեղում չի թույլատրվում: Վերջինս, ելնելով իր առարկայից և նպատակից, պետք է այնպես մեկնաբանվի ու կիրառվի, որպեսզի նախատեսի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիքներ (տե՛ս Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (C.R. v. THE UNITED KINGDOM), 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 20190/92, կետ 32, Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (S.W. v. THE UNITED KINGDOM), 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 20166/92, կետ 34):

15. *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև *Երվանդ Մելքոնյանի* վերաբերյալ 2011 թվականի մայիսի 11-ի որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «(...) սահմանադրական, կոնվենցիոն և օրենսդրական դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ այդ դրույթներով սահմանված երաշխիքը (*nullum crimen, nulla poena sine lege*), հանդիսանալով օրենքի գերակայության անբակտելի տարր, առաջնային տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության համակարգում, որից որևէ շեղում չի թույլատրվում: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքից հետևում է, որ ցանկացած հանցագործություն և պատիժ պետք է հստակ ամրագրված լինի օրենքով: Այդ օրենքը չի կարող տարածական մեկնաբանվել, և այն չի կարող կիրառվել անալոգիայով (տե՛ս Երվանդ Ռ-աֆիկի Մելքոնյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԸԳ-0090/01/10 որոշումը, կետ 16):

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում *nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքի համատեքստում վերլուծել համաներման ինստիտուտը՝ ընդհանրապես, և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման որոշ դրույթներ՝ մասնավորապես:

Համաներումն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ՝ վերացվել դատվածությունը: Առանց Համաներման ակտի գոյության, օրենսգրքերի համապատասխան դրույթներն իրացվել չեն կարող:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը սահմանում է. «Հանցանք

կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը Համաներման ակտի ընդունումը դիտում է որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք: Նշված հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են Համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն Համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն:

17. Խնդրո առարկա Համաներման ակտի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

1. Պատժից ազատել (...) առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձանց:»

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ « (...) կարճել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) դատարանի վարույթում գտնվող քրեական գործերը, (...) որոնցով (...) անձինք մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում (...)»:

18. Համաներման ակտի ուսումնասիրությունից երևում է, որ համաներման կիրառելիությունը և համաներման կիրառման արդյունքում վրա հասնող իրավական

հետևանքը (քրեական գործի կարճում, պատժից ազատում, պատժաչափի չկրած մասի կրճատում և այլն) օրենսդիրը կատարած հանցագործությունների քանակից կախվածության մեջ չի դրել: Այլ կերպ՝ եթե Համաներման ակտի համապատասխան դրույթներից բխում է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդում չպետք է հարուցել կամ իրականացնել, կամ անձը ենթակա է պատժից ազատման, ապա կատարած արարքների թվաքանակն ինքնին որևէ կերպ չի կարող խոչընդոտել համաներումը տառացի նշանակությամբ մեկնաբանելու և կիրառելու համար:

Համաներման ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների համակցության դեպքին է վերաբերում միայն 9-րդ կետի 8-րդ ենթակետը, որի համաձայն՝ համաներումը չի կիրառվում «մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի կիրառվում»:

Փաստորեն, հանցագործությունների համակցության դեպքում համաներման կիրառման սահմանափակումն օրենսդիրը նախատեսել է միայն մեկ դեպքում՝ համաներման չկիրառման հիմքում դնելով ոչ թե հանցանքների քանակական, այլ որակական կողմը՝ առկա է թեկուզ մեկ այնպիսի հանցագործություն, որի նկատմամբ համաներումը կիրառելի չէ: Ընդ որում, այս կանոնը վերաբերում է միայն կոնկրետ հանցագործությունների համար համաներման չկիրառման դեպքերին, այլ ոչ թե համաներման կիրառման ենթակա հոդվածներով սահմանված պատժաչափերին:

Համաներման կիրառման մյուս սահմանափակումները հանցագործությունների գուտ թվաքանակով պայմանավորված չեն:

Ավելին, Համաներման ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ դրանում առկա չէ այնպիսի կարգավորում, որն անձի կողմից մի քանի հանցագործություններ կատարած լինելու դեպքում հանցանքների համակցության կանոնների կիրառության համար կսահմաներ առաջնահերթություն համաներման ակտի կիրառության նկատմամբ՝ կպարտադրեր սկզբից կիրառել հանցանքների համակցության կանոնները և դրանից հետո միայն քննարկել Համաներման ակտի կիրառելիության հարցը:

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսի կարգավորում չկա նաև ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել. (...)

2. Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝

1. Գատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝ (...)

7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը. (...)

2. Ամբաստանյալին մի քանի հանցանքներ կատարելու մեջ մեղադրելիս դատարանը սույն հոդվածի առաջին մասի 1-8-րդ կետերում նշված հարցերը լուծում է յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին: (...):»

20. Նախորդ կետում մեջբերված հոդվածների վերլուծությունը վկայում է այն մասին, որ երկու կամ ավելի հանցանք կատարելու դեպքում անձը պատասխանատվություն պետք է կրի յուրաքանչյուր հանցագործության համար՝ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանը պարտավոր է յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին պատիժ նշանակել, ապա քննարկել, թե ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի այդ պատիժը: Նշանակված յուրաքանչյուր պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ հետևության հանգելուց հետո միայն դատարանը կարող է կիրառել հանցանքների համակցության կանոնները և որոշել անձի նկատմամբ նշանակվող վերջնական պատիժը՝ պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոնները: Իսկ եթե դատարանը հանգի հետևության, որ անձը չպետք է կրի առանձին հանցագործության համար նշանակված պատիժը, ապա այս դեպքում դատարանն այլևս չի կարող կրման ոչ ենթակա պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով լրիվ կամ մասնակիորեն գումարելու-համակցել մյուս պատժի կամ պատիժների հետ, քանի որ այս պարագայում վերանում է հանցանքների համակցության կանոնները կիրառելու թե՛ փաստական և թե՛ իրավական հիմքը: Այլապես՝ անձը ստիպված է լինելու գումարման հետևանքով կրելու այնպիսի պատիժ, որը ենթակա չէր կրման:

Համաներման կիրառման արդյունքում նույնպես հնարավոր է վերանա ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառման փաստական հիմքը, այն է՝ մի քանի հանցագործությունների համակցությունը, որոնց համար նշանակված է պատիժ: Այլ կերպ՝ առանձին պատիժներից անձին ազատելու հետևանքով այլևս վերանում է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառման ոչ միայն անհրաժեշտությունը, այլ նաև հնարավորությունը: Այս պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը ոչ թե անտեսվում է, ինչպես նշված է վճռաբեկ բողոքում, այլ իրավաչափորեն չի կիրառվում, քանի որ ընթացակարգը «չի հասնում» այդ հոդվածի կիրառմանը:

Դրա վկայությունն է, օրինակ, այն դեպքը, երբ հանցագործությունների համակցության մեջ ընդգրկված երկու կամ ավելի հանցանքներից մեկով վաղեմության ժամկետն անցել է, սակայն այդ հիմքով քրեական հետապնդման դադարեցման դեմ ամբաստանյալն առարկում է, կամ վաղեմության ժամկետն անցնում է դատարանի՝ խորհրդակցական սենյակում եղած ժամանակ: Կամ դատարանը հանցանքների համակցության մեջ ընդգրկված հանցանքներից մեկով նշանակում է տուգանք, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կարգով, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետը, անձին ազատում պատիժը կրելուց: Վկայակոչված դեպքերում ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքների համակցության կանոնները կիրառելու թե՛ փաստական և թե՛ իրավական հիմքը վերանում է:

Ներկայացված մոտեցումը, որպես կայուն ընթացակարգ, գործնականում կիրառվում է նաև այն դեպքում, երբ դատարանը հանգում է հետևության, որ մի քանի հանցագործությունների մեջ մեղադրվող անձի նկատմամբ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժը: Այս դեպքում դատարանը հանցանքների համակցություն կազմող մեկ հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ համապատասխան պատիժ է նշանակում, որից հետո միայն լուծում է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքների համակցության կանոնները կիրառելու հարցը:

21. Բացի վերոգրյալից, Համաներման ակտի 1-ին կետում տրված է «պատժից ազատել» և ոչ թե «վերջնական պատժից ազատել» ձևակերպումը: Մինչդեռ, «պատիժ» է նաև յուրաքանչյուր հանցագործության համար առանձին նշանակվող հարկադրանքի միջոցը, ինչի մասին է վկայում ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքը. «Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով»:

22. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների համակցության այն դեպքերում, երբ համաներմունք բոլոր հանցանքների նկատմամբ կիրառելի է, ապա դատարանը պարտավորեցված է համաներման ակտը (տվյալ դեպքում՝ խնդրո առարկա Համաներման ակտը) կիրառել յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին: Այդ առումով էական նշանակություն չունի, թե համաներման կիրառման արդյունքում անձի նկատմամբ պետք է դադարեցվի քրեական հետապնդումը, թե նա պետք է ազատվի նշանակված պատժից:

Այսպես՝ եթե հանցագործությունների համակցության մեջ ընդգրկված հան-

ցանքներից մեկով կամ մի քանիսով Համաներման ակտի 6-րդ կետի որևէ ենթակետ կիրառելի է, և մյուս հանցանքներով համաներման կիրառման սահմանափակումները բացակայում են, ապա դատարանը մեղադրանքի տվյալ մասով (մասերով) պետք է դադարեցնի քրեական հետապնդումը, այլ ոչ թե նշանակի պատիժ և կիրառի հանցանքների համակցության կանոնները: Նույն կերպ, եթե դատարանը յուրաքանչյուր հանցագործության համար նշանակում է այնպիսի պատժաչափ, որից համաներման ուժով անձը ենթակա է ազատման, ապա դատարանը չպետք է անցնի վերջնական պատժի որոշման փուլ, և պետք է լուծի համաներման կիրառման հարցը, քանի որ տվյալ դեպքում նույնպես բացակայում է համաներում կիրառելու՝ օրենքով սանձարկված որևէ սահմանափակում:

Հակառակ պարագայում, կարող է տեղի ունենալ անձի նյութական իրավունքի խախտում, այն է՝ Համաներման ակտի կիրառման սահմանափակման բացակայության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով կարող է սահմանվել վերջնական այնպիսի պատիժ, որից ազատելու հնարավորություն համաներումը չի նախատեսում, այլ՝ անձը կարող է միայն ակնկալել պատժաչափի չկրած մասը կրճատելու հնարավորություն: Արդյունքում կստացվի, որ համաներումը նրա նկատմամբ չկիրառվեց այնպես, ինչպես նախատեսում էր օրենքը: Այլ կերպ ասած՝ անձը կենթարկվի պատժի՝ առանց օրենքի, ինչը «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) սկզբունքի խախտում է:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 10-22-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում համաներման ակտի կիրառումը հանցագործությունների համակցություն կազմող յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին:

24. Որպես վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն իրավական հարցին, թե արդյո՞ք վերոշարադրյալ մոտեցումը կիրառելի է նաև հանցանքների համակցության կանոններով դատապարտված անձանց վրա, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտում ուղղակիորեն տարանջատված են համաներման կիրառման կանոնները՝ կապված ինչպես հանցագործության տեսակից, այնպես էլ հանցավորի իրավական կարգավիճակից՝ կասկածյալ, մեղադրյալ, դատապարտյալ: Յուրաքանչյուր անձի համար, ելնելով նրա կարգավիճակից, կարող է առաջանալ միայն այնպիսի իրավական հետևանք, որը կբխի Համաներման ակտի տառացի մեկնաբանությունից:

Մասնավորապես, դատապարտյալներին վերաբերող դրույթները պատժից ազատելու կամ պատժաչափի չկրած մասը կրճատելու հնարավորություն են նախատեսում: Իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պայմաններում

այդպիսի «պատիժ» է հանդիսանում անձի նկատմամբ նշանակված վերջնական պատիժը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառման գործընթացն ավարտված է, իսկ Համաներման ակտի տառացի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով շրջադարձային դատավարական գործողություն կատարելու որևէ լիազորություն կամ հնարավորություն նախատեսված չէ: Այլ կերպ՝ դատապարտյալներն իրավական որևէ հիմք չունեն պահանջելու իրենց նկատմամբ կիրառել համաներման ակտի այն կանոնները, որոնք կիրառելի են դեռևս չդատապարտված անձանց նկատմամբ:

25. Վերոգրյալից հետևում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա դատապարտված և պատիժ կրող անձանց նկատմամբ կիրառելի չէ սույն որոշման 23-րդ կետով սահմանված այն կանոնը, որ հանցագործությունների համակցության դեպքում Համաներման ակտի կիրառման հարցը պետք է քննարկվի յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին:

26. Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ Համաներման ակտի 8-րդ կետի միատեսակ կիրառման հետ կապված հետևյալ հարցին. պատժաչափի չկրած մասի կրճատման դեպքում ո՞ր մարմինն է իրականացնում Համաներման ակտի կիրառումը և կրճատման ենթակա պատժաչափի հաշվարկը:

Համաներման ակտի 8-րդ կետի համաձայն՝

«Պատժաչափի չկրած մասը կրճատել՝

1) երկու երրորդով՝ անգոգուշությամբ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, բացառությամբ սույն կետի 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերի.

2) կիսով չափ՝ սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց նկատմամբ, բացառությամբ սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի.

3) մեկ երրորդով՝ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ, բացառությամբ սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի.

4) մեկ քառորդով՝ սույն որոշման 9-րդ կետի 7-րդ ենթակետում նշված հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն են.

5) մեկ քառորդով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 3-րդ մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասով, 179-րդ հոդվածի 3-րդ մասով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 183-րդ հոդվածի 3-րդ մասով, 185-րդ հոդվածի 3-րդ մասով, 227-րդ հոդվածի 2-րդ մասով, 228-րդ հոդվածի 2-րդ մասով, 229-րդ հոդվածի 2-րդ մասով, 230-րդ հոդվածի 2-րդ մասով, 231-րդ հոդվածի 2-րդ մասով, 233-րդ հոդվածի 3-րդ մասով, 237-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործու-

թյունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ»:

Համաներման ակտի 13-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև Համաներման ակտի ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ քննվել են, քայքայ դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել, համաներման որոշման պահանջների կատարումը վերապահված է դատարաններին: Իսկ նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց նկատմամբ համաներման կատարումը վերապահված է տվյալ հիմնարկների պետերին:

Համաներման ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 8-րդ կետում, ի տարբերություն նույն որոշման 1-5-րդ կետերի, որտեղ օրենսդիրն օգտագործել է «պատիժ» հասկացությունը, սահմանված է, որ կրճատման է ենթակա ոչ թե հանցավորի նկատմամբ նշանակված պատիժը, այլ պատժաչափի չկրած մասը: Այսինքն՝ օրենսդիրը հստակ տարբերակում է դնում «պատիժ» և «պատժաչափի չկրած մաս» հասկացությունների միջև, ուստի դրանք ոչ մի պարագայում չեն կարող նույնացվել: Հետևաբար, համաներման որոշման հիման վրա կրճատման է ենթակա ոչ թե անձի նկատմամբ նշանակված պատիժը, այլ՝ նշանակված պատժի միայն չկրած մասը:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրվման (...) ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց, (...)»:

ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի վերը նշված դրույթներից բխում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձը պատիժ պետք է կրի, երբ նրա մեղավորությունն ապացուցված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ընդ որում, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ գտնվելու դեպքում այդ ժամկետը հաշվակցվում է ազատագրվման ձևով նշանակված պատժին՝ դառնալով պատժի կրած մաս:

Վերոգրյալից հետևում է, որ Համաներման ակտի 8-րդ կետի կիրառման արդյունքում կրճատվում է այն անձանց նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը, որոնց վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, քանի որ պատժաչափի չկրած մասի հաշվարկը, ուստիև այդ չկրած մասի փաստացի կրճատումը, հնարավոր է կատարել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի

առկայության պայմաններում՝ Համաներման ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված իրավագործության սահմաններում և ընթացակարգով:

Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ եթե անգամ դատարանը անձի նկատմամբ դատավճիռ կայացնելիս կիրառի Համաներման ակտի 8-րդ կետի որևէ ենթակետ, ապա կարող է արձանագրել միայն համաներման կիրառմամբ պատժի չկրած մասի կրճատման փաստը՝ դրա հաշվարկի կատարումը թողնելով համապատասխան քրեակատարողական հիմնարկին՝ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաներման որոշման 8-րդ կետի լիարժեք կիրառումն իրագործելի է բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Բացի այդ, որոշման 8-րդ կետի կիրառումը քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից արդարացված է նաև այն առումով, որ, հակառակ դեպքում, կարող է հակասություն առաջանալ համաներման կիրառելիության և 9-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված սահմանափակման միջև, այն է՝ համաներմումը չի կիրառվում «սույն որոշման կիրառման օրվա դրությամբ պատիժը կրելու սահմանված կարգը չարամիտ խախտողների նկատմամբ», քանի որ դատարանը կարող է պարզապես տեղեկացված չլինել որոշման կիրառման օրվա դրությամբ առկա՝ պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների մասին:

27. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 364-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքների համակցության կանոններով, նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ կիրառել է Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետը և ամբաստանյալ Վ.Ավետիսյանին ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժից՝ 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումից: Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի մեկ այլ որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել է, դարձյալ կիրառել է Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը և Վ.Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթն այդ մասերով կարճել է և Վ.Ավետիսյանի նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

28. Սույն որոշման 10-22-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը Համաներման ակտն ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ իրավացիորեն կիրառել է յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին՝ արդյունքում նրան ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժից և՛ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով կարճելով քրեական գործի վարույթը և դադարեցնելով Վ.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը:

29. Ելնելով սույն որոշման 28-րդ կետում առկա հետևությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումներն անհրաժեշտ է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Վարուժան Գազիկի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 364-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի որոշումները թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

67.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԳԴ-1/0013/01/11**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԳԴ-1/0013/01/11
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան,
Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին **ք. Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գասպար Արամի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հունիսի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Պողոսյանի պաշտպան Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հունվարի 5-ին ՀՀ ռստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 26100211 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-

րդ կետերի հատկանիշներով՝ անհայտ անձի կողմից Լ.Հռոչկյանի բնակարան ապօրինի մուտք գործելու և խոշոր չափի գույք գաղտնի հափշտակելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Գասպար Պողոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով ներգրավվել է որպես մեղադրյալ:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Գ.Պողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն օրը Գ.Պողոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2011 թվականի հունվարի 26-ին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնում հարուցվել է թիվ 43150411 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով՝ Ա.Ադասյանի բնակարանից կատարված գողության դեպքի առթիվ:

2011 թվականի հունվարի 26-ին Գ.Պողոսյանն արգելանքի է վերցվել:

2011 թվականի փետրվարի 21-ին որոշում է կայացվել թիվ 26100211 քրեական գործը թիվ 43150411 քրեական գործին միացնելու մասին:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 16-ի որոշմամբ Գ.Պողոսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով նոր մեղադրանք է առաջադրվել:

2011 թվականի մարտի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճռով Գ.Պողոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 4 տարի ժամկետով:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հունիսի 16-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 20-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին: Ամբաստանյալ Գ.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի և մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հունիսի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Պողոսյանի պաշտպան Լ.Միմոնյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

2011 թվականի օգոստոսի 25-ին մեղադրող Ա.Ստեփանյանը ներկայացրել է

վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել, իսկ վերանայվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. Գ.Պողոսյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2011 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 15-ի սահմաններում, պատուհանը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել Արարատի մարզի Ոսկեստափ գյուղի բնակիչ Լևիկ Հոռիկյանի բնակարան, որտեղից գաղտնի հափշտակել է գումար և կենցաղային տեխնիկա՝ Լ.Հոռիկյանին պատճառելով խոշոր չափի՝ 676.440 ՀՀ դրամի վնաս:

Բացի այդ, Գ.Պողոսյանը 2011 թվականի հունվարի 26-ին՝ ժամը 15-ի սահմաններում, օգտվելով Գեղարքունիքի մարզի Ջուլաքար գյուղի բնակիչ Աշոտ Աղասյանի և նրա ընտանիքի անդամների բացակայությունից, պատուհանի փեղկը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել վերջինիս բնակարան և գաղտնի հափշտակել մեկ հատ ոսկյա մատանի՝ Ա.Աղասյանին պատճառելով 19.600 ՀՀ դրամի վնաս:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Պողոսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման մեջ թեև հիմնավորված ու հաստատված է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 23.05.2011թ. ընդունված ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել, գտնում է, որ վերջինիս պետք է մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

Վերաքննիչ դատարանն՝ անդրադառնալով ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, հանգում է այն հետևության, որ վերջինիս նկատմամբ պետք է պատիժ նշանակել 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի սանկցիայի շրջանակներում հետևյալ պատճառաբանությամբ.

(...) Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում տեղի ունեցած փոփոխության հետևանքով պահեստարան և շինություն մուտք գործելու եղանակով գողություն կատարելու համար մատնանշված հոդվածի սանկցիան փոփոխվել է մեղմացման առումով, այն է՝ հոդվածն ըստ բնույթի դասակարգվել է միջին ծանրության հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է պատիժ տուգանքի ձևով կամ ազատազրկման ձևով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, իսկ բնակարան մուտք գործելու եղանակով գողություն կատարելու համար հոդվածի սանկցիան փոփոխվել է խստացման առումով, այն է՝ արարքն ըստ բնույթի դասակարգվել է ծանր հանցագործությունների շարքին /177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ/, որի համար որպես պատիժ է նախատեսված ազատազրկում՝

չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով, հանգում է այն հետևության, որ սույն քրեական գործով ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ կիրառելի է հանցավորի համար առավել բարենպաստ քրեական օրենքը, որը տվյալ դեպքում 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետն է» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, էջեր 39-40):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ նշանակված պատիժը թողնելով անփոփոխ, թույլ է տվել քրեական օրենքի և միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածները, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածը:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործի քննությունն Առաջին ատյանի դատարանում իրականացվել է արագացված կարգով, որի պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ամբաստանյալի նկատմամբ չէր կարող նշանակվել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը գերազանցող պատիժ: Առաջին ատյանի դատարանում գործի քննության պահին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի համար առավել խիստ պատժ է սահմանված եղել 6 տարի ժամկետով ազատազրկումը, որի երկու երրորդը կազմում է 4 տարին, ինչպիսի պատիժ էլ նշանակվել է ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ:

Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելուց հետո Գ.Պողոսյանին մեղազարկող հանցանքի համար պատասխանատվություն սահմանող օրենքը փոփոխվել է մեղմացման առումով: Մասնավորապես, 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի համար առավել խիստ պատժ է սահմանվել 5 տարի ժամկետով ազատազրկումը, որի երկու երրորդը կազմում է 3 տարի 4 ամիսը, հետևաբար՝ Գ.Պողոսյանի նկատմամբ 3 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումից ավելի խիստ պատժ չէր կարող նշանակվել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, պատիժը մեղմացնող նշված օրենքին հետադարձ ուժ չտալով, ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 4 տարի ժամկետով

ազատագրկումը, թողել է անփոփոխ՝ դրանով իսկ խախտելով քրեական օրենքի և միջազգային պայմանագրի հիշատակված նորմերի պահանջները:

9. Բացի այդ, բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանների կողմից հաշվի չեն առնվել ամբաստանյալ Գ.Պողոսյանի անձը բնութագրող և նրա պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ, ինչի հետևանքով վերջինիս նկատմամբ նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հունիսի 16-ի որոշումը, ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ նշանակել մեղմ պատիժ և կիրառելով «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը՝ նրան ազատել պատժի կրումից:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերի կողմից բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Այսպես՝ սույն գործով պաշտպանի կողմից ըստ էության երկու հարց է բարձրացվել, որոնցից առաջինը վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից քրեական օրենքով և միջազգային պայմանագրով նախատեսված մի շարք դրույթների ենթադրյալ խախտմանը, որի արդյունքում Գ.Պողոսյանի վիճակը բարելավող օրենքին հետադարձ ուժ չի տրվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), իսկ երկրորդը՝ Գ.Պողոսյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիությանը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված ենթադրյալ խախտումները փոխկապակցված են, դրանցից երկրորդը կարող է հետևանք լինել Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված քրեաիրավական և միջազգային նորմերի ենթադրյալ խախտման, ուստի՝ անհրաժեշտ է համարում առաջին հերթին քննության առնել նյութական իրավունքի վերոնշյալ խախտման հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված՝ «քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում» և «քրեական օրենքի հետադարձ ուժը» հասկացությունների ճիշտ մեկնաբանման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ իրավաչափ է արդյոք հանցանքների կատարման պահի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ պատիժ նշանակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

13. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով: Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ «1. Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում»:

Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

2. Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ

բան նախատեսված չէ (...):»:

14. Արարքը քրեականացնող կամ հանցագործության համար պատասխանատվությունը խստացնող, ինչպես նաև անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիությունը և հակառակ դրան՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին հետադարձ ուժ տալու պարտադիրությունը բխում է նաև մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային-իրավական ակտերի պահանջներից:

Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որոնք կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չեն համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ թողտվության հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

15. Վերը նշված իրավանորմների էությունը բացահայտող, ելակետային նշանակություն ունեցող մեկնաբանություններ տվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում: Մասնավորապես, *Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ միայն օրենքով կարող է սահմանվել, թե որ արարքներն են համարվում հանցագործություն, և ինչ պատիժներ են նախատեսվում դրանց կատարման համար, ինչպես նաև արգելում է, ի վնաս մեղադրյալի՝ հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառու-

մը (տե՛ս G. v France, գանգատ թիվ 15312/89, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ, կետ 24):

Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վկայակոչել է իր մեկ այլ՝ *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի* գործով վճիռը, որտեղ Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ միայն այն բանի համար, որ ի վնաս մեղադրյալի հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումն արգելվի: Այն ընդհանուր առմամբ ամրագրում է նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (nullum crimen, nulla poena sine lege), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով: Դրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակորեն սահմանված լինի օրենքում, իսկ այս պայմանն ապահովված է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում՝ դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես ո՞ր գործողության ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության (տե՛ս Kokkinakis v. Greece, գանգատ թիվ 14307/88, 1993 թվականի մայիսի 25-ի վճիռ, կետ 52):

Երկու այլ՝ *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* և *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները, լինելով օրենքի գերակայության էական տարրեր, Կոնվենցիայի պաշտպանության համակարգում կայուն տեղ ունեն, և դա հատկապես ընդգծվում է այն փաստով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ անգամ պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ 7-րդ հոդվածից որևէ շեղում չի թույլատրվում: Վերջինս, ելնելով իր առարկայից և նպատակից, պետք է այնպես մեկնաբանվի ու կիրառվի, որպեսզի նախատեսի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիքներ (տե՛ս C.R. v. The United Kingdom, գանգատ թիվ 20190/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 32 և S.W. v. The United Kingdom, գանգատ թիվ 20166/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 34):

16. Սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված ներպետական և միջազգային իրավադրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն

տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար՝ նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Սա նշանակում է, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել, ինչպես նաև՝ հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն օրենքով, որը գործել է նրա կողմից արարքը կատարելու ժամանակ: Nullum crimen, nulla poena sine lege սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

17. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),

2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,

3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառնիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ. Պողոսյանի կողմից հանցանքների կատարման, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի կայացման պահի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրված է եղել հետևյալ բովանդակությամբ՝

«Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

4) կրկին անգամ,

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով»:

2011 թվականի մայիսի 23-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 16-րդ հոդվածը սահմանում է՝

«Օրենսգրքի 177-րդ հոդվածում՝ (...)

2) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,».

3) 2-րդ մասի 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

4) 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:» (...)

6) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,» (...):»

19. Նախորդ կետում շարադրված իրավանորմերի համեմատական վերլուծությունից ակնհայտ է, որ սույն գործով առկա է մի իրավիճակ, երբ հանցանքի կատարումից և Առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտ կայացնելուց հետո ամբաստանյալ Գ.Պողոսյանին մեղսագրվող հանցանքների համար պատասխանատվություն սահմանող քրեական օրենքը փոփոխվել է և՛ մեղմացման, և՛ խստացման առումով: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված որակյալ հատկանիշներից առանձնացվել է բնակարան ապօրինի մուտք գործելը և շարադրվել է նույն հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետում, որի համար ավելի խիստ պատիժ է սահմանված: Այսինքն՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել քրեական օրենքի փոփոխություն, որով խստացվել է պատիժը, հետևաբար՝ նշված փոփոխությունը հետադարձ ուժ չունի և չի կարող կիրառվել ամբաստանյալ Գ.Պողոսյանի կողմից մինչ օրենքի փոփոխությունը կատարված հանցավոր արարքները որակելիս, ինչպես նաև դրանց համար պատիժ սահմանելիս:

Միննույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որը սահմանում էր կրկնակիության որակյալ հատկանիշը, ճանաչվել է ուժը կորցրած, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան, որը նախկինում նախատեսում էր միայն ազատազրկման ձևով պատիժ (երկուսից վեց տարի ժամկետով), փոփոխվել է և դրանում նախատեսվել է պատիժ ինչպես տուգանքի ձևով (նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով), այնպես էլ ազատազրկման ձևով (երկուսից հինգ տարի ժամկետով): Այլ կերպ՝ օրենքի փոփոխությամբ վերացվել է արարքի հանցավորությունը, այսինքն՝ տեղի է ունեցել ապաքրեականացում, ինչպես նաև մեղմացվել է համապատասխան հանցավոր արարքի համար սահմանված պատիժը: Նշված փոփոխությունները համընկնում են քրեական օրենքին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ՝ սույն որոշման 17-րդ կետում շարադրված պայմաններին, հետևաբար՝

ՀՀ քրեական օրենսգրքի՝ վերը նշված փոփոխություններին պետք է տրվեր հետադարձ ուժ, և դրանց գործողությունը պետք է տարածվեր մինչ փոփոխության ընդունումը հանցանք կատարած անձի՝ Գ.Պողոսյանի արարքների որակման և դրանց համար պատժի սահմանման վրա:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգի կիրառմամբ ամբաստանյալ Գ.Պողոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 4 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և ամբաստանյալ Գ.Պողոսյանի մեղադրանքի ծավալից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը հանելու մասին: Իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով թողնվել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտում վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունը, հանգել է այն եզրակացության, որ ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակվի հանցավոր արարքների կատարման պահի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

21. Սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ Գ.Պողոսյանին մեղսագրվող հանցավոր արարքների կրկնակիության որակյալ հատկանիշը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչվել է ուժը կորցրած, այսինքն՝ տեղի է ունեցել ապաքրեականացում, իրավացիորեն որոշում է կայացրել այն ամբաստանյալի մեղադրանքի ծավալից հանելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ, քննարկելով պատժի փոփոխություն սահմանող օրենքի կիրառելիության հարցը, Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել հանցանքների կատարման պահի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում Գ.Պողոսյանի նկատմամբ պատիժ նշանակելու անհրաժեշտության հարցում:

Ուստի, հանցավոր արարքի համար սահմանված պատիժը մեղմացնող օրենքին հետադարձ ուժ չտալով, դրա գործողությունը չտարածելով մինչև փոփոխության ընդունումը հանցանք կատարած անձի նկատմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի, ինչպես նաև սույն որոշման 14-րդ կետում շարադրված միջազգային-իրավական ակտերի համապատասխան նորմերի պահանջների խախտում:

22. Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ հանցանքների կատարման պահի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում պատիժ նշանակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

23. Սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ պատիժ է սահմանվել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու պայմաններում պատիժ նշանակելու կանոնների խախտմամբ:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխված սանկցիայով որպես տվյալ հանցագործության համար առավել խիստ պատիժ է սահմանվել 5 տարի ժամկետով ազատազրկումը: Վերջինիս երկու երրորդը կազմում է 3 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումը, որից ավելի խիստ պատիժ համապատասխան օրենքի փոփոխությունից հետո ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ չէր կարող նշանակվել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Գ.Պողոսյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը՝ 4 տարի ժամկետով ազատազրկումը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

24. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Գ.Պողոսյանի կատարած հանցավոր արարքների համար սահմանված պատիժը մեղմացնող օրենքին հետադարձ ուժ չտալով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի և միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

25. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ առանց Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու հնարավոր չէ քննության առնել բողոքաբերի կողմից բարձրացված երկրորդ հարցը, այն է՝ ամբաստանյալ Գ.Պողոսյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիությունը: Ուստի, սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցին չի անդրադառնում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հա-

յաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գասպար Արամի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

68.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ Գ-Գ-5/0022/01/10
նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
դատավորներ՝ Ա.Գանիեյան, Մ.Արդամանյան

Գ-Գ-5/0022/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝
պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՍԱԳԱԹԵԼՅԱՆԻ
Ռ.ՌԵՎԱԶՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անահիտ Հայկի Սաղաթելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սաղաթելյանի և նրա պաշտպան Ռ.Ռևազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ գլխավոր դատախազի 2000 թվականի մարտի 1-ի որոշմամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր

Անահիտ Սաղաթեյանի կողմից կաշառք ստանալու վերաբերյալ նյութերով հարուցվել է թիվ 62201100 քրեական գործը՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

2000 թվականի հունիսի 22-ին ՀՀ գլխավոր դատախազը միջնորդություն է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով քննության առնել Ա.Սաղաթեյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու համար Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու հարցը:

ՀՀ արդարադատության խորհրդի 2000 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը մերժվել է:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմինը 2000 թվականի սեպտեմբերի 1-ին որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին:

2. Հանրապետության Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթեյանի լիազորությունները դադարեցվել են:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2008 թվականի հոկտեմբերի 1-ին հարուցվել է թիվ 62216908 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 34-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Սինասյանը որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսելու մասին: Նույն օրը որոշում է կայացվել թիվ 62201100 քրեական գործը թիվ 62216908 քրեական գործին միացնելու մասին:

3. Նախաքննության մարմնի 2008 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Սաղաթեյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 38-312-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի դեկտեմբերի 29-ին որոշում է կայացվել թիվ 62216908 քրեական գործի վարույթը կարճելու և Ա.Սաղաթեյանի, Մ.Ավետիսյանի, Ջ.Զարոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ նրանց մեղսագրված հանցանքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

4. 2009 թվականի մարտի 4-ին Ա.Սաղաթեյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ա.Սաղաթելյանի բողոքը մերժվել է:

Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի հունիսի 15-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Սաղաթելյանը, որի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու մասին: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի և Վերաքննիչ դատարանի 2009 թվականի հունիսի 15-ի որոշումները բեկանվել են, և գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

5. Նոր քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել Ա.Սաղաթելյանի բողոքը բավարարելու մասին: Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչ Ա.Մինասյանի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը վերացվել է:

2009 թվականի դեկտեմբերի 23-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմինը 2010 թվականի մայիսի 3-ին որոշում է կայացրել Ա.Սաղաթելյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացնելու, փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

2010 թվականի հունիսի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

6. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի մայիսի 17-ին որոշում է կայացրել Ա.Սաղաթելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

7. Ամբաստանյալի և պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 9-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 17-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

8. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ա.Սաղաթելյանը և նրա պաշտպան Ռ.Ռ.Լազյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ

բողոքը վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

9. Ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերով հաստատված են համարել այն, որ Ա.Սաղաթեյանը, 1996-2004 թվականների ընթացքում հանդիսանալով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր և պաշտոնատար անձ, կատարել է պաշտոնական կեղծիք, ինչպես նաև խաբեությամբ ու վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է ուրիշի զգալի չափերով գույքը, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում:

1999 թվականի սեպտեմբերի 28-ին Ա.Սաղաթեյանը քննության է առել Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի բնակիչ Ինվիա Յակուբովի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112¹-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննվող քրեական գործով նրա նկատմամբ խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին քննիչի միջնորդությունը, նույն օրը, որոշմամբ, այն մերժել է: Մեղադրյալ Ի.Յակուբովին արգելանքից ազատելուց հետո Ա.Սաղաթեյանը վերջինիս հրավիրել է իր աշխատասենյակ և, նրանից գումար հափշտակելու դիտավորությամբ, Ի.Յակուբովի մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու պատրվակով առաջարկել է իր միջոցով 400 ԱՄՆ դոլար կաշառք տալ մարզի դատախազին: 1999 թվականի հոկտեմբերին, պայմանավորվածության համաձայն, Ի.Յակուբովը ներկայացել է դատարան և Ա.Սաղաթեյանի աշխատասենյակում անձամբ նրան է տվել պահանջված զգալի չափի՝ 209.032 ՀՀ դրամին համարժեք 400 ԱՄՆ դոլարը, որին Ա.Սաղաթեյանը խաբեությամբ և Ի.Յակուբովի վստահությունը չարաշահելու եղանակով տիրացել է:

Բացի այդ, Ա.Սաղաթեյանը 2001 թվականի օգոստոսի 27-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Վարդենիսի նստավայրում, առանց երրորդ անձ Սոս Մելքոնյանի մասնակցության, քննության է առել քաղաքացիական գործն ըստ հայցի Խանում Սարգսյանի՝ Կամո Սիրեկանյանի և Սոս Մելքոնյանի միջև տան առուվաճառքի մասին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ և բավարարել է հայցը: Ա.Սաղաթեյանը քաղաքացիական գործի քննությունը տվյալ օրն ավարտելու անձնական դրդումներով պաշտոնական փաստաթղթեր հանդիսացող դատական նիստի արձանագրության մեջ և վճռում ակնհայտ կեղծ տեղեկություններ է մտցրել ինքնուրույն պահանջ ներկայացրած երրորդ անձ Ս.Մելքոնյանի՝ դատական նիստին մասնակցելու և ցուցմունք տալու մասին:

10. ՀՀ գլխավոր դատախազը 2000 թվականի հունիսի 22-ին միջնորդություն է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով քննության առնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթեյանին

քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու համար Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու հարցը (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, էջեր 328-329):

11. ՀՀ արդարադատության խորհուրդը 2000 թվականի օգոստոսի 21-ին որոշում է կայացրել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթելյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը մերժելու մասին (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, էջեր 70-72):

12. ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Թարվերդյանը 2000 թվականի սեպտեմբերի 1-ին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 4-րդ մասով և 257-րդ հոդվածով, որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ մինչև կասեցման հիմքի վերացումը (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, էջեր 73-75):

13. Հանրապետության Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթելյանի լիազորությունները դադարեցվել են:

14. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Մինասյանի 2008 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62216908 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 38-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Որոշման նկարագրական մասում նշվել է. «Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր, պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձ հանդիսացող Անահիտ Սաղաթելյանը և դատական նիստերի քարտուղար Ջաբելլա Ջարոյանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2001 թվականի օգոստոսի 27-ի դատական նիստի արձանագրության մեջ անձնական դրոշմներով ակնհայտ կեղծ տեղեկություններ են մտցրել այդ դատական նիստին Սոս Մելքոնյանի մասնակցության և ցուցմունք տալու վերաբերյալ, իսկ Գ-ԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման հարկադիր կատարող Մյասնիկ Ավետիսյանն օժանդակել է պաշտոնեական կեղծիք կատարելուն և Սոս Մելքոնյանի անունից դիմում է գրել ու ներկայացրել դատարան՝ Ս.Մելքոնյանին որպես ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ ճանաչելու խնդրանքով» (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, էջ 88):

15. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Մինասյանի 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ թիվ 62201100 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է: Նույն օրը որոշում է կայացվել թիվ 62216908 և 62201100 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու մասին (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, էջեր 114, 116-117):

16. Նախաքննության մարմնի 2008 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Սաղաթելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առա-

ջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 38-312-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 2-րդ մասով: Որոշման նկարագրական մասում նշվել է. «Անահիտ Հայկի Սաղաթելյանը, 1999 թվականի դրությամբ հանդիսանալով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր, 1999 թվականի սեպտեմբերի 28-ին քննության է առել Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի բնակիչ Ինվիա Միխայիլի Յակուբովի վերաբերյալ ՀՀ քր. օր-ի 1121 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննվող քրեական գործով նրա նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին քննիչի միջնորդությունը և նույն օրը որոշում կայացրել այն մերժելու մասին: Մեղադրյալ Ի.Յակուբովի՝ արգելանքից ազատ արձակելուց հետո Անահիտ Սաղաթելյանը նրան հրավիրել է իր աշխատասենյակ և, դատավորի իր պաշտոնական դիրքը շահադիտական դրդումներով ծառայության շահերին հակառակ օգտագործելով, Ի.Յակուբովի մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար դրդել է նրան իր միջոցով 400 ԱՄՆ դոլար կաշառք տալ մարզի դատախազին: 1999 թվականի հոկտեմբերին, պայմանավորվածության համաձայն, Ի.Յակուբովը ներկայացել է դատարան և Ա.Սաղաթելյանի աշխատասենյակում անձամբ նրան է տվել պահանջված 400 ԱՄՆ դոլարը, որին վերջինս խաբեությամբ տիրացել է: Հետագայում Ի.Յակուբովն Անահիտ Սաղաթելյանի տուն է տարել ու նրան տվել նաև 54.000 ՀՀ դրամի գյուղ-թերքներ՝ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն և հարուցված քրեական գործի վարույթը կարճելուն նպաստելու համար: Հիշյալ արարքով Անահիտ Սաղաթելյանը էական վնաս է պատճառել պետությանը, որը դրսևորվել է դատական իշխանության հեղինակազրկմամբ:

Բացի այդ, Անահիտ Սաղաթելյանը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, քրեական գործի դատական քննությունն ավարտելու համար 1998 թվականի հուլիսի 17-ին, պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի գյուղապետարանի շենքում, առանց դատախազի, տուժող Մերժիկ Գրիգորյանի, վկա Արամայիս Բոյախչյանի և ՀՀ քր. օր-ի 109 հոդվածի 1-ին մասով դատի տրված ամբաստանյալ Ինվիա Յակուբովի, քննության է առել քրեական գործը և Ինվիա Յակուբովին դատապարտել ուղղիչ աշխատանքների՝ 6 ամիս ժամանակով՝ աշխատավարձի 15 տոկոսի բռնագանձմամբ: Դատավճռում Ա.Սաղաթելյանն ակնհայտ կեղծ տվյալներ է մտցրել դատական քննությանը դատախազ Արսեն Աղաբեկյանի, տուժող Մերժիկ Գրիգորյանի, վկա Արամայիս Բոյախչյանի և ամբաստանյալ Ինվիա Յակուբովի մասնակցության, վերջինիս՝ իրեն մեղավոր ճանաչելու և ինքնախոստովանական ցուցմունք տալու վերաբերյալ, իսկ դատավճռի կայացման վայր է նշել Վարդենիս քաղաքը:

Բացի այդ, 2001 թվականի օգոստոսի 27-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի Վարդենիսի նստավայրում Անահիտ Սաղաթելյանն առանց երրորդ անձ Սոս Լավուրի Մելքոնյանի մասնակցության քննության է առել քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Խանում Բադալի Սարգսյանի՝ Կամո Ազատի Սիրե-

կանյանի և Սոս Լավուրի Մելքոնյանի միջև տան առուվաճառքի մասին կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ և բավարարելով հայցը՝ անվավեր է ճանաչել հիշյալ պայմանագիրը: Դատական նիստի արձանագրության մեջ և վճռում Անահիտ Սաղաթելյանն անձնական դրդումներով ակնհայտ կեղծ տեղեկություններ է մտցրել դատական նիստին ինքնուրույն պահանջ ներկայացրած երրորդ անձ Սոս Մելքոնյանի մասնակցության և ցուցմունք տալու մասին» (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, էջեր 184-185):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

17. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ սույն քրեական գործն ի սկզբանե հարուցվել և հետագա բոլոր դատավարական գործողությունները կատարվել են ապօրինի, իսկ ստորադաս դատարաններն անտեսել են նշվածը:

Բողոքաբերները նշել են, որ ամբաստանյալ Ա.Սաղաթելյանին առաջադրված մեղադրանքները դասվում են միջին ծանրության հանցագործությունների շարքին, դրանց կատարման պահից անցել է 5 տարուց ավել ժամանակ, և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված չի եղել, հետևաբար՝ Ա.Սաղաթելյանի նկատմամբ քրեական գործի հարուցման պահին ակնհայտ էր, որ անցած են քրեական պատասխանատվության ենթարկելու ժամկետները, ուստի՝ նշված հողվածներով չէր կարող քրեական գործ հարուցվել:

18. Բողոքի հեղինակները, վկայակոչելով Սոնյա Բալաբեկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2005 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, համաձայն որի՝ «գործի ելքով շահագրգռված անձի ցուցմունքները, առանց դրանք հաստատող օբյեկտիվ ապացույցների առկայության, բավարար չեն հանգելու այն հետևության, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել», այնուհետև փաստարկել են, որ սույն գործով տուժող Ի.Յակուբովի ցուցմունքները բավարար չեն ապացուցված համարելու, որ տեղի է ունեցել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության դեպք, քանի որ այդ ցուցմունքները որևէ այլ ապացույցով չեն հաստատվում:

Բացի այդ, բողոքաբերները, վերլուծելով Ա.Սաղաթելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցագործության՝ պաշտոնեական կեղծիքի հատկանիշները, փաստարկել են, որ տվյալ դեպքում բացակայում են նշված հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները՝ շարժառիթը և նպատակը:

19. Բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ սույն գործի քննության ընթացքում տեղի են ունեցել ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված մի շարք իրավունք-

ների խախտումներ: Մասնավորապես՝ խախտվել են քրեական գործի քննության ողջամիտ ժամկետները, ինչպես նաև արդար դատաքննության, իր դեմ ցուցմունք տվող վկաներին հարցաքննելու, իր վկաներին կանչելու և մինևույն պայմաններում հարցաքննելու, իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու ամբաստանյալի իրավունքները:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 17-ի և Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 9-ի որոշումները և կայացնել նոր դատական ակտ կամ քրեական գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքի ճիշտ մեկնաբանման և կիրառման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության, ինչպես նաև իրավունքի զարգացման ապահովման խնդիր:

Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում նախ անդրադառնալ բողոքաբերների բարձրացրած իրավական հարցին:

1. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

22. Սույն գործով բողոքաբերները Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել են հետևյալ իրավական հարցը. թիվ 62216908 քրեական գործը հարուցելու և Ա.Սաղաթելյանին մեղադրանք առաջադրելու պահին անցած են եղել արդյոք քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և եթե այո, ապա իրավաչափ էին արդյո՞ք քրեական գործ հարուցելու և քրեական հետապնդում իրականացնելու մասին մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումները:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: (...)

3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորյալ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները (...)

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից (...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

4. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

24. Նախորդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական օրենսդրությամբ, կապված արարքի բնույթից և հանրության համար վտանգավորության աստիճանից, նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու տարբեր ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր վտանգավորությունը, և անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Վերոգրյալի հիման վրա քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Սիևնույն ժամանակ, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Ինչպես երևում է նշված արգելքը սահմանող իրավանորմի վերլուծությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառման համար ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ քրեական գործն արդեն իսկ հարուցված է, և անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, այսինքն՝ նրա նկատմամբ սկսվել է քրեական հետապնդում:

Բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործը դեռ հարուցված չէ, կամ քրեական

գործը հարուցվել է, սակայն որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել, և անցել են վաղեմության ժամկետները, ապա ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ չէ, և մինչդաստական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ հրաժարվել քրեական գործ հարուցելուց կամ որոշում կայացնել հարուցված քրեական գործի վարույթը կարճելու մասին: Այլ կերպ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու ժամկետներն անցած լինելն ինքնին բացառում է քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը՝ անկախ ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունից կամ առարկությունից. համաձայնության հարցն առաջ է գալիս միայն կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդում սկսելուց՝ նրան մեղադրանք առաջադրելուց հետո:

25. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մինչդաստական վարույթն իրականացնող մարմինը 2008 թվականի հոկտեմբերի 1-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 34-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով թիվ 62216908 քրեական գործը հարուցելու մասին՝ պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձի՝ Ա.Սաղաթեյանի կողմից անձնական դրդումներով 2001 թվականի օգոստոսի 27-ի դաստական նիստի արձանագրության մեջ ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու և հարկադիր կատարող Մ.Ավետիսյանի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելուն օժանդակելու դեպքերի առթիվ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Նախաքննության մարմնի 2008 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Սաղաթեյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 38-312-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա 1998-2001 թվականների ընթացքում՝ դատավոր եղած ժամանակ, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, քաղաքացուն դրդել է կաշառք տալ և, հանդիսանալով պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձ՝ անձնական դրդումներով պաշտոնական փաստաթղթերում՝ դատական նիստերի արձանագրություններում, դատավճռում և վճռում ակնհայտ կեղծ տեղեկություններ է մտցրել (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

26. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի, 312-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիաների վերլուծությունից բխում է, որ դրանք նկարագրում են դիտավորյալ հանցագործություններ, իսկ հոդվածների սանկցիաներով նախատեսված ազատագրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 5 տարին, ուստի տվյալ հոդվածներով նախատեսված հանցավոր արարքները դասվում են միջին ծանրության հանցագործությունների թվին, հետևաբար՝ դրանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է հինգ տարի:

Ինչպես երևում է սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից, Ա.Սաղաթեյանին մեղազարկող հանցա-

վոր արարքներից վերջինն ավարտվել է 2001 թվականի օգոստոսի 27-ին, հետևաբար՝ հենց այդ պահից սկսվում է վաղեմության ժամկետի հաշվարկը: Ընդ որում, սույն գործով վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված չի եղել, Ա.Սաղաթելյանը քննությունից կամ դատից չի խուսափել:

Մինչդեռ, սույն գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինը միջին ծանրության հանցագործությունների հատկանիշներով թիվ 62216908 քրեական գործը հարուցել է 2008 թվականի հոկտեմբերի 1-ին, իսկ այնուհետև 2008 թվականի նոյեմբերի 14-ին Ա.Սաղաթելյանին մեղադրանք է առաջադրել նույնպես միջին ծանրության հանցագործությունների կատարման համար: Այսինքն՝ նշված քրեական գործը հարուցվել է, և Ա.Սաղաթելյանին մեղադրանք է առաջադրվել մեղաագրվող հանցավոր արարքներից վերջինն ավարտված համարվելու պահից մոտ 7 տարի հետո:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 23-26-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես թիվ 62216908 քրեական գործը հարուցելու, այնպես էլ Ա.Սաղաթելյանին մեղադրանք առաջադրելու պահին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած են եղել, հետևաբար՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործ հարուցելու, իսկ այնուհետև նաև քրեական հետապնդում սկսելու մասին որոշումները եղել են ոչ իրավաչափ և կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների խախտմամբ:

28. Նախորդ կետում նշված խախտումներն ինքնին բավարար են սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Այնուհանդերձ, նկատի ունենալով այն, որ Ա.Սաղաթելյանին առաջադրված մեղադրանքը վերաբերում է նրա՝ դատավորի կարգավիճակ ունեցած ժամանակ ենթադրաբար թույլ տրված իրավախախտումներին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով անդրադառնալ նաև դատավորի անձեռնմխելիության հիմնարար երաշխիքների մեկնաբանմանը՝ դրանց միատեսակ կիրառության ապահովման համար:

II. Դատավորի անձեռնմխելիության հիմնարար երաշխիքները և դրանց սահմանները

29. Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ իրավական հարցը՝ Ա.Սաղաթելյանի նկատմամբ դատավորի կարգավիճակ ունեցած ժամանակ ենթադրաբար թույլ տրված իրավախախտման համար քրեական հետապնդում սկսելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պահպանե՞լ է արդյոք դատավորի անձեռնմխելիության հիմնարար երաշխիքները:

30. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքների համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասար

րակշռման հիման վրա (...)»:

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան (...)»:

ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ «Գատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով (...)»:

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորը (...) անկախ [է], ենթարկվում [է] միայն Սահմանադրությանը և օրենքին (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: (...)»

3. Արդարադատությունն իրականացվում է դատավորների նկատմամբ կողմնակի ներգործությունը բացառող պայմաններում:

4. Գատավորների նկատմամբ ապօրինի ներգործություն դրսևորելու, ինչպես նաև դատարանի կողմից քրեական դատավարության իրականացմանը այլ միջամտության համար մեղավոր անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն»:

ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է:

2. Արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Գատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է: Նման արարքը քրեորեն հետապնդելի է (...)»:

31. Գատավորի անկախության հիմնարար արժեքը երաշխավորող՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված սահմանադրաիրավական դրույթների հիմքում ընկած են բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթեր: Մասնավորապես, առանցքային նշանակություն ունեն Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Գատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Գատավորների վարքագծի բանադրյան սկզբունքները», «Գատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիան, եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի՝ «Գատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարագիրը:

Հիշյալ փաստաթղթերի համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու դատավորի կարգավիճակի առնչությամբ հետևյալ հիմնադրույթները՝

ա) դատավորի կարգավիճակը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիարժեք երաշխավորվի նրա իրավասությունը, անկախությունը և անաչառությունը, նպաստի նրա նկատմամբ հանրության վստահության ձևավորմանը,

բ) դատավորի կարգավիճակին առնչվող դրույթները պետք է ամրագրված լինեն տվյալ երկրի Սահմանադրությամբ կամ նվազագույնը՝ օրենքներով,

գ) պետությունները պարտավոր են դատարանի անկախության սկզբունքի ապահովման համար նախատեսել երաշխիքների գործուն համակարգ, որը պետք է պայմաններ ստեղծի, որպեսզի դատարաններն իրենց հանձնված գործերը քննեն անաչառ, փաստերի հիման վրա և օրենքին համապատասխան, առանց որևէ սահմանափակման՝ ամեն կերպ բացառելով որևէ ոչ իրավաչափ ազդեցության, հարկադրանքի, սպառնալիքի, ուղղակի կամ անուղղակի ճնշման կամ միջամտության հնարավորություն՝ անկախ այն բանից, թե ում կողմից և ինչ պատճառով է դա կատարվում,

դ) դատավորների կարգավիճակի, նրանց նշանակման կամ լիազորությունների դադարեցման հարցեր քննարկող ցանկացած մարմին պետք է օժտված լինի անհրաժեշտ անկախությամբ, իսկ դրա կազմում պետք է ապահովված լինի դատավորների առնվազն 50 տոկոս մասնակցություն,

ե) յուրաքանչյուր դատավոր, որը գտնում է, որ լիազորություններն իրականացնելիս խախտվել են իր իրավունքները, պետք է ունենա այդպիսի անկախ մարմնի դիմելու հնարավորություն,

զ) դատավորի պատասխանատվության համար համաձայնություն տվող կառույցներում պետք է ապահովվի կազմի առնվազն 50 տոկոս մրցութային հիմունքներով ընտրված դատավորների մասնակցություն,

է) անօրինական դատական ակտի կամ դատավորի վարքագծի հետևանքով պատճառված վնասը պետք է հատուցվի պետության կողմից:

32. Դատավորների անկախության չափանիշներին է անդրադարձել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումների համաձայն՝ դատարանի անկախության համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

ա) դատավորների նշանակման իրավասություն ունեցող սուբյեկտը և նշանակման ընթացակարգը,

բ) դատավորի պաշտոնավարման տևողությունը,

գ) դատարանի վրա արտաքին ներգործությունը և ճնշումները չեզոքացնելու կամ էապես նվազեցնելու նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների առկայությունը (*տե՛ս Capmbell and Fell v The United Kingdom*, 1984թ., զանգատեր N 7819/77, 7878/77, կետ 78):

33. Գատարանի անկախության սկզբունքի վերաբերյալ բազմակողմանի մեկնաբանություններ է տվել նաև Եվրոպայի խորհրդի համակարգում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդը, որը, հիմնավորելով դատական իշխանության անկախության սկզբունքը խատորեն պահպանելու անհրաժեշտությունը, շեշտել է, որ դա անհրաժեշտ պահանջ է՝ իրավունքի գերակայությունն ապահովելու և արդար դատավարություն երաշխավորելու համար: Ըստ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի՝ դատավորների անկախության արտոնությունը կոչված է ապահովել ոչ թե նրանց սեփական շահերը, այլ իրավունքի գերակայության շահը, արդարադատություն որոնողների ու ակնկալողների շահերը (տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, Կարծիք թիվ 1(2001), 2001թ. նոյեմբերի 23, կետ 10):

34. Հիմք ընդունելով սույն որոշման 30-33-րդ կետերում շարադրված իրավանորմերը և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որն իրականացվում է բացառապես պետական հատուկ մարմինների՝ դատարանների կողմից: Գատական իշխանության հիմնական խնդիրներն են՝ քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովումը, հնարավոր բոլոր խախտումներից դրանց պաշտպանությունը, իրավական վեճերի և իրավական նշանակություն ունեցող այլ հարցերի լուծումը, իշխանության մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ վերահսկողությունը, իրավախախտումների դեպքում պատասխանատվության միջոցների կիրառումը, այլ կերպ՝ արդարադատության իրականացումը:

Գատական իշխանությանը վերապահված այդ գործառնությունների արդյունավետ և իրավաչափ կենսագործումը հնարավոր է միայն անկախ դատական իշխանության առկայության պայմաններում, ինչը ենթադրում է, որ դատարանները պետք է գործեն արտաքին ներգործությունը և ճնշումները բացառող նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների պայմաններում, օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա, որոնք անհրաժեշտ և բավարար են դատական իշխանության առջև դրված խնդիրներն իրականացնելու համար: Գատավորի անկախությունը, լինելով դատավորի սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու դատական իշխանության ինքնուրույնությունը, այն հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահերի պաշտպանության կարևորագույն նախապայման է:

35. Արդարադատության շահով պայմանավորված՝ դատական իշխանության անկախությունը, ինչպես նաև դրանից ածանցված՝ դատավորի անկախությունը կենսագործելու համար ՀՀ Սահմանադրությունը և օրենքները սահմանում են այդ որակն ապահովող բազմաթիվ երաշխիքներ և ինստիտուտներ, որոնց թվում իր առանձնահատուկ տեղն ունի դատավորի անձեռնմխելիության սկզբունքը:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝

«(...) Գատավորի (...) գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Գատավորը (...) [չի] կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև [մրա] նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի (...) համաձայնության: Գատավորը (...) [չի] կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և (...) վճռաբեկ դատարանի նախագահը (...):»

ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատավորն անձեռնմխելի է:

2. Գատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Գատավորի ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և վճռաբեկ դատարանի նախագահը (...):

3. Գատավորին չի կարելի կալանավորել, մրան որպես մեղադրյալ ներգրավվել, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկել՝ առանց Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության:

4. Գատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից տվյալ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Գատավորին չի կարելի բերման ենթարկել: Առանց փաստաթղթերի բերման ենթարկված գատավորի ինքնությունը պարզելուց հետո իրավասու պետական մարմինը պետք է անմիջապես ազատ արձակի նրան:

6. Գատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ (...):

9. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը չի վերացնում սույն հոդվածում ամրագրված անձեռնմխելիության երաշխիքները:»

36. Ինչպես երևում է նախորդ կետում շարադրված իրավադրույթների համալիր վերլուծությունից՝ դատական իշխանության անկախության հիմնարար արժեքի ապահովմանն ուղղված երաշխիքների շարքում դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքն ունի առանձնահատուկ տեղ: Գատավորի անձեռնմխելիությունը, ըստ էության, շեղում է օրենքի առջև բոլորի հավասարության հիմնարար սկզբունքից (ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդված), քանի որ դատավորների համար ընդարձակում է անձի ազատության և անձեռնմխելիության

իրավունքի ապահովման սահմանադրական երաշխիքների ընդհանուր համակարգը (ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված): Սակայն՝ նշված շեղումն իրավաչափ է, քանի որ դատավորին անձեռնմխելիության ավելի բարձր մակարդակով օժտող սահմանադրական նորմերը հետապնդում են գերակա իրավական նպատակ՝ բացառել արդարադատության իրականացման ընթացքում դատավորի որոշումների վրա ներազդելու նպատակ ունեցող ցանկացած ոչ իրավաչափ ազդեցության, սպառնալիքի, ճնշման կամ այլ միջամտության հնարավորությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավորի անձեռնմխելիությունը՝ իրավունքի գերակայությանն ու դատավարության արդարացիությանն ուղղված նրա մասնագիտական գործունեության ապահովման կարևորագույն միջոց է: Հետևաբար, դատավորի անձեռնմխելիությունը ոչ թե նշված պաշտոնը զբաղեցնող քաղաքացու անձնական, մասնավոր առավելություն է, այլ՝ դատական իշխանության անկախության հանրային երաշխիք է: Այլ կերպ՝ դատավորի անձեռնմխելիությունն անկողմնակալ, արդար և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության հիմնարար իրավունքի բաղադրատարր է, ուստի՝ այդ բաղադրյալ իրավունքի յուրաքանչյուր կրողի առանձին իրավունք-երաշխիք:

37. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքի լիարժեք ապահովումն անհնար կլինի այն դեպքում, եթե դատավորի համար չապահովվի լիազորությունները դադարեցնելուց և դատավորի կարգավիճակը կորցնելուց հետո անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքներ: Գործող դատավորին տրամադրվող և պաշտոնաթողությունից հետո կիրարկվող այդ երաշխիքները կոչված են ապահովել գործող դատավորի և հանրության (արդար դատաքննության իրավունքի կրողների) այն համոզմունքը, որ պաշտոնավարման ավարտից հետո դատավորը չի հետապնդվի իր մասնագիտական գործունեության համար: Միայն այդպիսի երաշխիքների առկայության պայմաններում է հնարավոր բարձր պահանջներ ներկայացնել դատավորի մասնագիտական գործունեությանը և հանրության մոտ ձևավորել գործող դատավորի անկախության և անաչառության նկատմամբ վստահություն:

38. Այս առումով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատավորի անձեռնմխելիության սկզբունքը և դրանից ածանցյալ՝ դատավորին պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգը սահմանող իրավադրույթների մեջ օգտագործվող «դատավոր» հասկացության մեկնաբանությանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված իրավանորմերում օգտագործվող «դատավոր» եզրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձեռնմխելիության երաշխիքի ու պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգի գործադրման համար անհրաժեշտ լինի, որ քրեական հետապնդման հարուցման պահին կամ հարուցված քրեական հետապնդման ողջ ընթացքում անձը լինի գործող դատավոր: Նման մեկնաբանությունը հնարավորություն է տալիս իրավասու մարմնին՝ դատավորի կողմից ենթադրյալ իրավախախտում կատարած լինելու մասին տվյալներ ստանալով, սպա-

սել մինչև նրա լիազորությունների ավարտը և նրան պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել դատավորին պատասխանատվության ենթարկելու սահմանադրական ընթացակարգի շրջանցմամբ: Այդ պայմաններում հնարավոր չէ բացառել դատավորի մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում ճնշումներ գործադրելու հնարավորությունը, ինչն ինքնին իմաստագրկում է դատավորի անձեռնմխելիության սկզբունքի էությունն ու նպատակները՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով ողջ դատական իշխանության անկախության հիմնարար արժեքը:

Հետևաբար՝ դատավորի անձեռնմխելիության սկզբունքը սահմանող իրավա-նորմերում օգտագործվող «դատավոր» եզրույթը պետք է մեկնաբանվի «վերագրվող ենթադրյալ իրավախախտման, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործության պահին գործող դատավորի կարգավիճակ ունեցող անձ» իմաստով: Այլ կերպ՝ բոլոր այն դեպքերում, երբ դատավորին վերագրվող իրավախախտումը վերաբերում է նրա պաշտոնավարման ժամկետին, գործում է դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը, հետևաբար իրավասու մարմինը դատավորին պատասխանատվության ենթարկելու հարց կարող է հարուցել միայն օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահանջների պահպանմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ պահին ենթադրաբար իրավախախտում կատարած անձը դեռևս գտնվում է դատավորի կարգավիճակում, թե արդեն պաշտոնաթող է եղել:

Դատավորի անձեռնմխելիության միայն այսպիսի մեկնաբանության դեպքում է հնարավոր ապահովել այդ սկզբունքի նպատակային, իմաստային կենսագործումը, ինչպես նաև երաշխավորել դատական իշխանության գործառույթների բնականոն իրականացումը:

39. Հիմք ընդունելով սույն որոշման 30-38-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը չի սահմանափակվում միայն դատավորի պաշտոնավարման ժամկետով և գործում է նաև դատավորի լիազորությունների դադարեցումից հետո այնքանով, որքանով վերագրվող իրավախախտումը վերաբերում է դատավորի պաշտոնավարման ժամկետին:

40. Դատավորի անձեռնմխելիության հիմնարար երաշխիքի ժամանակային սահմանների վերաբերյալ իրավական հարցին անդրադառնալու հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այդ երաշխիքի բովանդակային սահմաններին՝ պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգի առումով:

41. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ (...) համաձայնություն է տալիս [դատավորներին]՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ (...)»:

ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝ (...) առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին (...) դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին»:

ՀՀ դատական օրենսգրքի 168-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցով Արդարադատության խորհուրդ է դիմում գլխավոր դատախազը, իսկ տվյալ դատավորի նկատմամբ գործը դատական քննության փուլում գտնվելու դեպքում նրան կալանավորելու համաձայնություն տալու մասին առաջարկ ներկայացնելու հարցով՝ գործը քննող դատարանը:

2. Գլխավոր դատախազը կամ գործը քննող դատարանը Արդարադատության խորհրդին են ներկայացնում դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող նյութերը:

3. Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին ներկայացված Արդարադատության խորհրդի առաջարկը Հանրապետության Նախագահը քննում և որոշում է կայացնում երկօրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն չտալու դեպքում դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի առաջարկը համարվում է մերժված:

4. Դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին ներկայացված Արդարադատության խորհրդի առաջարկը և դրա հիման վրա տրված Հանրապետության Նախագահի համաձայնությունը չեն նշանակում դատավորին կալանավորելու, նրան դատական կարգով քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության հաստատում և չեն կաշկանդում իրավասու դատարանին համապատասխան հարցը օրենքով սահմանված կարգով լուծելիս:

5. Երկրորդ անգամ նույն հիմքով դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առաջարկություն չի կարող արվել:

6. Եթե դատավորին որպես մեղադրյալ ներգրավելու մասին Արդարադատության խորհրդի կողմից համաձայնությունը ստանալուց հետո մեղադրանքի ծավալի այնպիսի փոփոխման անհրաժեշտություն է առաջացել, որը վատթարացնում է կամ

կարող է վատթարացնել դատավորի վիճակը, ապա դա կարող է իրականացվել միայն սույն հոդվածով նախատեսված ընթացակարգի պահպանմամբ (...):»:

42. Ինչպես երևում է սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավանորմների վերլուծությունից, դատավորի անձեռնմխելիության սկզբունքը բացարձակ բնույթ չի կրում և ներառում է իրավախախտում կատարած դատավորին պատասխանատվության կանչելու հատուկ ընթացակարգեր: Ընդ որում, ենթադրաբար իրավախախտում կատարած դատավորի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու և նրան պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգերը տարբերվում են համանման սովորական ընթացակարգերից: Այլ կերպ՝ դատավորի անձեռնմխելիության սկզբունքը ներառում է դատական իշխանության անկախության պաշտպանության ընթացակարգային երաշխիքների համակարգ, այլ ոչ թե դատավորին ազատում է քրեական կամ այլ պատասխանատվությունից: Բավարար հիմքերի առկայության պայմաններում և օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ դատավորն իր կողմից թույլ տված իրավախախտման, այդ թվում՝ հանցագործության համար կարող է ենթարկվել պատասխանատվության:

43. Դատավորի անձեռնմխելիության ընթացակարգային երաշխիքների համակարգը սահմանող սահմանադրական և օրենսդրական նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ այդ երաշխիքները երկու տեսակի են. առաջին՝ դատավորի ձեռքակալմանը վերաբերող երաշխիքներ, և երկրորդ՝ դատավորի կալանավորմանը, որպես մեղադրյալ ներգրավելուն, նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի հարուցմանը վերաբերող երաշխիքներ:

44. Առաջին տեսակի երաշխիքներն արտահայտվում են նրանում, որ դատավորին կարելի է ձերբակալել միայն բացառիկ դեպքերում, այն է՝ երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Ընդ որում՝ այս բացառիկ դեպքերում դատավորի ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և վճռաբեկ դատարանի նախագահը: Բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվելուց հետո միայն որոշ ժամանակ անց են ի հայտ եկել բավարար հիմքեր դատավորին արգելանքի վերցնելու համար, քրեական հետապնդումն իրականացնող մարմինն իրավասու չէ ձերբակալումը որպես դատավարական հարկադրանքի միջոց կիրառել դատավորի նկատմամբ:

45. Երկրորդ տեսակի երաշխիքներն արտահայտվում են նրանում, որ բացառում են դատավորին կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու և դատական կարգով վարչական պատասխանատվության հարց հարուցելու հնարավորությունը՝ առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության: Ընդ որում, ՀՀ արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ, իրավասու մարմնի ներկայացրած միջնորդության հիման վրա նախապես ստուգելով դատա-

վորին կալանավորելու, քրեական կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունը, համապատասխանաբար որոշում է կայացնում համաձայնություն տալու խնդրանքով Հանրապետության Նախագահին դիմելու մասին կամ մերժում է ներկայացված միջնորդությունը: Իսկ Հանրապետության Նախագահի լիազորությունն այս հարցում համաձայնություն տալն է, որ հետապնդումն իրականացնող մարմինը կարողանա գործի դնել ենթադրյալ իրավախախտ դատավորի կալանավորման և որպես մեղադրյալ ներգրավելու քրեադատավարական ընթացակարգերը կամ վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը:

Ինչպես հետևում է վերոգրյալից, Հանրապետության Նախագահը և ՀՀ արդարադատության խորհուրդը տվյալ պարագայում հանդես են գալիս որպես դատավորի անկախության և անձեռնմխելիության ապահովման երաշխավորներ: Սահմանված կարգի պահպանմամբ ՀՀ արդարադատության խորհրդի արված առաջարկության հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնությունն անհրաժեշտ իրավական պայման է ընդհանուր ընթացակարգերի գործողության հիման վրա, դրանցով նախատեսված կարգով դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության հարց հարուցելու իրավունքի իրականացման համար: Միևնույն ժամանակ, Հանրապետության Նախագահի համաձայնությունը դեռևս չի նշանակում դատավորին կալանավորելու, նրան քրեական կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության հաստատում և չի կաշկանդում իրավասու մարմնին համապատասխան հարցը օրենքով սահմանված կարգով լուծելիս:

Այսպիսով, դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը բացառում է առանց քննարկված ընթացակարգի պահպանման դատավորին կալանավորելու, քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը. ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածը հստակորեն սահմանում են, որ դատավորին չի կարելի կալանավորել, նրան որպես մեղադրյալ ներգրավել, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկել՝ առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության:

46. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած ՀՀ Սահմանադրության և ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան իրավանորմերը հստակորեն բացառում են դատավորին կալանավորելու կամ քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն առանց Հանրապետության Նախագահի համաձայնության, այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավական մեխանիզմը, որը վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդի կողմից համապատասխան միջնորդությունը մերժելու կամ Հանրապետու-

քյան Նախագահի կողմից համաձայնություն չտալու դեպքում արդեն իսկ հարուցված քրեական գործի հետագա ընթացքին, հստակ ու համարժեք չէ:

Խնդրո առարկա հարցի որոշակի կարգավորում սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որի համաձայն՝ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթի կասեցումը, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, գործի վարույթի ժամանակավոր ընդմիջումն է: Գործով վարույթը կասեցվում է, եթե գործի քննության ընթացքում առաջ են գալիս նախաքննությունը շարունակելուն խոչընդոտող այնպիսի հանգամանքներ, որոնք սպառնիչ թվարկված են օրենքով և որոնց վերացման ուղղությամբ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի:

Քրեական գործով վարույթի կասեցման իրավական հետևանքները գնահատելով դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործով վարույթը կարող է կասեցվել մինչև օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձին պատասխանատվության ենթարկելու համաձայնության ստացման հարցի լուծումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի լայն մեկնաբանությունը (այն, որ դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին միջնորդության մերժվելուց հետո մինչդատական վարույթն իրականացնող մարմինն իրավասու է կասեցված պահել քրեական գործով վարույթը և առանց որևէ միջոց ձեռնարկելու սպասել մինչև դատավորի լիազորությունները դադարեն) կիմաստագրկեր դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքը և դրանով կվտանգեր դատական իշխանության անկախությունը:

47. Հետևաբար, հիմնվելով սույն որոշման մեջ շարադրված դատական իշխանության անկախության և անձեռնմխելիության հիմնարար սկզբունքները երաշխավորող սահմանադրաիրավական և միջազգային-իրավական նորմերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով նշված իրավանորմերով սահմանված այն իմպերատիվ պահանջը, համաձայն որի՝ դատավորը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին իրավասու մարմնի միջնորդության մերժման դեպքում մինչդատական վարույթն

իրականացնող մարմինը պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը:

48. Սույն որոշման 29-47-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ գլխավոր դատախազը 2000 թվականի հունիսի 22-ին թիվ 62201100 քրեական գործի շրջանակներում միջնորդություն է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ խնդրելով քննության առնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթեյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու համար Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու հարցը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

ՀՀ արդարադատության խորհրդի 2000 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթեյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը մերժվել է (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

2000 թվականի սեպտեմբերի 1-ին մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որոշում է կայացրել թիվ 62201100 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ մինչև կասեցման հիմքի վերացումը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Հանրապետության Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Սաղաթեյանի լիազորությունները դադարեցվել են (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ թիվ 62201100 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Նախաքննության մարմնի 2008 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ա.Սաղաթեյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել դատավորի պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածում ենթադրաբար կատարած հանցագործությունների համար (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

49. Այսպիսով, մինչդատական վարույթն իրականացնող մարմինը թույլ է տվել դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքի խախտում, քանի որ (ա) դատավոր Ա.Սաղաթեյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու համար Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու մասին ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը ՀՀ արդարադատության խորհրդի կողմից մերժվելուց հետո թիվ 62201100 քրեական գործի վարույթը կասեցրել է, իսկ դատավոր Ա.Սաղաթեյանի լիազորությունները դադարեցնելուց հետո նշված քրեական գործի վարույթը վերսկսել է, ինչպես նաև (բ) առանց դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու հատուկ ընթացակարգի պահպանման Ա.Սաղաթեյանին՝ դատավոր եղած

ժամանակահատվածում ենթադրաբար կատարված հանցավոր արարքների համար մեղադրանք է առաջադրել:

50. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները սույն որոշման 27-րդ և 49-րդ կետերում շարադրված, մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված խախտումների լույսի ներքո չեն գնահատել ամբաստանյալ Ա.Սաղաթելյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման օրինականությունը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

51. Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից բարձրացված մյուս հարցերին (տե՛ս սույն որոշման 18-19-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման մեջ արձանագրված խախտումների առկայության պայմաններում դրանց իրավական նշանակությունը բացակայում է, ուստի սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցերին չի անդրադառնում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Անահիտ Հայկի Սաղաթելյանի վերաբերյալ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մայիսի 17-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 9-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

69.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԿԳ/0008/06/11
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԿԳ/0008/06/11
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Տ.ՍԱՖԱՐՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի օգոստոսի 6-ի որոշման դեմ մեղադրյալ Ամալյա Մերժիկի Գևորգյանի պաշտպան Տ.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի ապրիլի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Նաիրիի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 46103911 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2011 թվականի ապրիլի 23-ին Ամալյա Գևորգյանը ձերբակալվել է:

2. Նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ Ա.Գա-

րիբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը մեղադրյալ Ա.Ղարիբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի հունիսի 15-ի որոշմամբ Ա.Ղարիբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մեկ ամսով:

3. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Ղարիբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս երկու ամսով՝ մինչև 2011 թվականի սեպտեմբերի 23-ը:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 6-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 20-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ա.Ղարիբյանի պաշտպան Տ.Սաֆարյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

6. Ա.Ղարիբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2011 թվականի ապրիլի 14-ին իր ծանոթ, Ֆրանսիայի Հանրապետությունում բնակվող Գալուստ Ղազարյանի կողմից առաքված ծանրոցով, Գոհար Բաբասյանի միջոցով, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ մոտ 1,044 գրամ բուպրենորֆին տեսակի 88 ամբողջական և 4 ոչ ամբողջական դեղահաբ, որոնցից առանձնապես խոշոր չափի՝ մոտ 0,972 գրամ քաշով 81 հատ դեղահաբը, 1 դեղահաբը 20.000 ՀՀ դրամով վաճառելու եղանակով, 2011 թվականի ապրիլի 14-ից մինչև ապրիլի 22-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար իրացրել է Երևան քաղաքի բնակիչ Հայկազ Գևորգյանին, իսկ մնացած խոշոր չափի՝ 0,088 գրամ քաշով դեղահաբերը ոստիկանության աշխատակիցների կողմից 2011 թվականի ապրիլի 22-ին իրականացված անձնական զննության ընթացքում հայտնաբերվել են նրա մոտից (տե՛ս Նյութեր, 17-18-րդ էջեր):

7. Մեղադրյալ Ա.Ղարիբյանի պաշտպան Տ.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ ընդունվել է դատարանի վարույթ և նշանակվել քննության դռնփակ դատական նիստում 2011

թվականի օգոստոսի 6-ին՝ ժամը 13-ին (տե՛ս Նյութեր, 174-րդ էջ):

8. Ըստ Նյութերում առկա փոստային անդորրագրերի՝ Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցագրերը դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ բողոք բերած անձին՝ պաշտպան Տ.Սաֆարյանին, ուղարկվել են 2011 թվականի օգոստոսի 6-ին (տե՛ս Նյութեր, 75-80-րդ էջեր):

Նյութերում բացակայում է որևէ ապացույց առ այն, որ դատավարության մասնակիցներն այլ կերպ ծանուցվել են դատական նիստի տեղի և ժամանակի մասին:

9. Սույն գործով Վերաքննիչ դատարանում 2011 թվականի օգոստոսի 6-ին տեղի ունեցած դատական նիստին մասնակցել է քննիչ Ա.Շախիկյանը. պաշտպան Տ.Սաֆարյանը և դատախազը դատական նիստին չեն մասնակցել (տե՛ս դատական նիստի արձանագրության համառոտագրում, Նյութեր, 81-րդ էջ):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղկացուցիչը կազմող «զեների հավասարության» սկզբունքը:

Ի հիմնավորումն այդ պնդման՝ պաշտպանը նշել է, որ պատշաճ կարգով ծանուցված չլինելու պատճառով զրկված լինելով կալանավորման օրինականության ստուգման դատական նիստին մասնակցելու հնարավորությունից՝ քրեական հետապնդման մարմնի համեմատությամբ հայտնվել է խիստ անբարենպաստ վիճակում, քանի որ իրեն ոչ միայն հնարավորություն չի ընձեռվել ներկայացնելու կալանավորման ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկները, այլև զրկված է եղել նախաքննության մարմնի ներկայացուցչի բացատրությունները լսելու, դրանց վերաբերյալ առարկություններ, հակափաստարկներ կամ կարծիք արտահայտելու հնարավորությունից:

11. Բացի այդ, բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմանները կանոնակարգող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը: Վերաքննիչ դատարանը չի կիրառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի՝ կալանքի իրավաչափության խնդիրների վերաբերյալ նախա-

դեպային որոշումները, ինչի արդյունքում մեղադրյալ Ա.Ղարիբջանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

12. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և մերժել մեղադրյալ Ա.Ղարիբջանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը՝ նրան անհապաղ ազատ արձակելով կալանքից:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով բողոքաբերն ըստ էության անդրադարձել է երկու հարցի. ա) նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին իրեն պատշաճ չժամուցելու արդյունքում ենթադրաբար տեղի ունեցած արդար դատաքննության իրավունքի խախտմանը, բ) մեղադրյալ Ա.Ղարիբջանին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման օրինականությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից՝ «մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում» և «դատավարության կողմերի իրավահավասարությունը» հասկացությունների ճիշտ մեկնաբանման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում նախ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած առաջին իրավական հարցին:

1. Դատական նիստի տեղի և ժամանակի մասին դատավարության մասնակիցներին պատշաճ ծանուցելու իրավական պահանջը

14. Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը՝ Վերաքննիչ դատարանն արդյո՞ք պաշտպանին պատշաճ կերպով ծանուցել է սույն գործով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «Պաշտպանը (...) իրավունք ունի մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը, (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննարկման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝

միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննարկմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: (...)

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի կամ պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին: (...):»

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են»:

16. Շարադրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական քննությանը մասնակցելը կողմերի՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքն է, իսկ նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը: Գործի քննությանը մասնակցելու կողմերի իրավունքը, ի թիվս այլոց, դատարանն ապահովում է գործի քննության տեղի և ժամանակի մասին նրանց ծանուցելու միջոցով, ուստի կարևոր իրավական նշանակություն ունի այն, որ այդ ծանուցումը կրի պատշաճ բնույթ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ա.Ղարիբյանի պաշտպան Տ.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում քննության է նշանակվել 2011 թվականի օգոստոսի 6-ին՝ ժամը 13-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցագրերը դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ պաշտպան Տ.Սաֆարյանին, փոստի միջոցով ուղարկվել են նիստի օրը՝ 2011 թվականի օգոստոսի 6-ին: Գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ դատական նիստի տեղի և ժամանակի մասին դատավարության մասնակիցները վաղօրոք այլ կերպ ծանուցված են եղել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, անտեսելով սույն որոշման 15-րդ կետում մեջբեր-

ված իրավանորմների պահանջները, դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ պաշտպանին պատշաճ կերպով չի ծանուցել գործի քննության տեղի և ժամանակի մասին, ինչի արդյունքում վերջիններս զրկվել են գործի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից: Արդյունքում խախտվել է դատական քննությանը մասնակցելու պաշտպանի իրավունքը:

II. Արդար դատական քննության իրավունքը

19. Սույն որոշման 18-րդ կետում արձանագրված խախտումը հիմք ընդունելով՝ ՎՃՌԱՔԵԿ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե Վերաքննիչ դատարանում մեղադրյալ Ա.Ղարիբյանի կալանավորման օրինականության ստուգման դատական նիստին պաշտպանության կողմի չմասնակցելը հանգեցրե՞լ է արդյոք արդար դատական քննության իրավունքի խախտման:

20. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք (...):

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավա-

րական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...):»:

21. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատական քննության երաշխիքը, որը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակն է, նշված կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է (տե՛ս *Capmbell and Fell v The United Kingdom*, 1984 թվականի հունիսի 28, գանգատներ թիվ 7819/77 և 7878/77, կետ 69):

Փելադոան ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ցանկացած անձ, ով մեղադրվում է քրեական հանցանք կատարելու համար, ունի պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունք: Որպեսզի այս իրավունքը լինի գործուն և արդյունավետ, այլ ոչ գուտ տեսական, դրա կիրառումը չպետք է կախված լինի ոչ պատշաճ ձևական պայմանների կատարումից. դատարանները պետք է ապահովեն, որ դատավարությունը լինի արդար և, համապատասխանաբար, այն դատապաշտպանին, ով դատավարությանը ներկայանում է մեղադրյալի բացակայությամբ նրան պաշտպանելու ակնհայտ նպատակով, նշվածը իրականացնելու հնարավորություն տրվի (տե՛ս *Pelladoah v Netherlands*, 1994 թվականի սեպտեմբերի 22, գանգատ թիվ 16737/90, կետ 41):

Օջալանն ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այն դիրքորոշումն է հայտնել, որ զենքերի հավասարության սկզբունքն արդարացի դատաքննության լայն հասկացության հատկանիշներից մեկն է, որն ընդգրկում է նաև այն հիմնարար իրավունքը, որ քրեական վարույթը պետք է մրցակցային լինի: Քրեական գործով մրցակցային դատավարության իրավունքը նշանակում է, որ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի տեղեկանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին, ինչպես նաև մեկնաբանելու դրանք: Հնարավոր են տարբեր եղանակներ, որոնցով ներպետական իրավունքը կարող է երաշխավորել այս պահանջի բավարարումը: Սակայն, անկախ նրանից, թե ինչպիսի միջոց է ընտրվել, պետք է ապահովվի փաստարկների ներկայացման վերաբերյալ մյուս կողմի իրազեկումը, ինչպես նաև վերջինիս պետք է իրական հնարավորություն տրվի մեկնաբանելու դրանք (տե՛ս *Ocalan v Turkey*, 2003 թվականի մարտի 12, գանգատ թիվ 46221/99, կետ 166):

22. Վերը շարադրված իրավանորմերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է: Այս սկզբունքի իմաստով, դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավո-

րությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսպիսով՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության սկզբունքի հետ միասնության մեջ:

Կողմերի հավասարությունը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ մի կողմը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ առանց կողմերի հավասար տեղեկացվածության՝ դատական քննարկումը նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների անհամաչափ ձևականացում և առարկայազրկում:

23. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում առկա մոտեցման համաձայն՝ հաշվի առնելով այն լուրջ ազդեցությունը, որն ունի ազատությունից զրկելը մարդու հիմնարար իրավունքների վրա՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա իրականացվող վարույթների ժամանակ ևս սկզբունքորեն պետք է պահպանվեն արդար դատական քննության հիմնարար պահանջները, այդ թվում՝ միցակցային դատավարության իրավունքը (ի թիվս այլ վճիռների, տե՛ս *Garcia Alva v. Germany*, 2001 թվականի փետրվարի 13, գանգատ թիվ 23541/94, կետ 39, *Lietzow v. Germany*, 2001 թվականի փետրվարի 13, գանգատ թիվ 24479/94, կետ 44):

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդար դատական քննություն իրականացնելու պահանջը ՀՀ ներպետական իրավունքի իմաստով ևս հավասարապես վերաբերելի է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: Սեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառման, կալանքի ժամկետի երկարացման հարցերի քննարկման, ինչպես նաև վերաքննության կարգով դրանց օրինականության դատական ստուգման ընթացքում դատարանը համապատասխան որոշում է կայացնում քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունների, փաստերի կամ ապացույցների հետազոտման արդյունքում (տե՛ս *Վահրամ Գևորգյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24 թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 21-րդ կետը):

24. Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված հարցերի քննարկման ընթացքում դատական քննությունը զրկված է միայն գործի հրապարակային քննության երաշխիքից: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից առավել կարևոր է դառնում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքների ապահովումը դատարանի կողմից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին նախա-

քննության մարմնի միջնորդությունը քննելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ ստորադաս դատարանի կողմից կայացրած որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս, պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով, դատարանները, ի թիվս այլ գործողությունների, պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին ծանուցելու և վերջիններին՝ դատական քննությանը մասնակցելու իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ այն դեպքում, երբ մեղադրյալն ապահովված չէ պաշտպանով, ստորադաս դատարանները պետք է միջոցներ ձեռնարկեն դատական քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու համար՝ վերջինիս տրամադրելով ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր շահերն այնպիսի պայմաններում, որոնք նրա համար չեն ստեղծում անբարենպաստ վիճակ՝ ի համեմատ մրցակից կողմի: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը պայմանավորված է պաշտպանությունն անձամբ իրականացնող մեղադրյալի համար մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների իրավաչափ կենսագործման անհրաժեշտությամբ. եթե նշված դեպքերում մեղադրյալի մասնակցությունը չապահովվի, ապա այդ սկզբունքներն անհամաչափ կձևականացվեն և կառարկայագրկվեն:

26. Սույն որոշման 20-25-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 7-8-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պաշտպան Տ.Սաֆարյանին պատշաճ կերպով չի ծանուցել նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին, ինչի արդյունքում նա գրկված է եղել մեղադրյալ Ա.Դարիբյանին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման օրինականության ստուգման դատական նիստին մասնակցելու հնարավորությունից (տե՛ս նաև սույն որոշման 18-րդ կետը), մինչդեռ քրեական հետապնդումն իրականացնող մարմնի ներկայացուցիչը մասնակցել է Վերաքննիչ դատարանի նիստին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

27. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանում մեղադրյալ Ա.Դարիբյանի կալանավորման օրինականության ստուգման դատական նիստին պաշտպանության կողմի չմասնակցելը հանգեցրել է արդար դատական քննության իրավունքի խախտման: Պաշտպանության կողմը գրկվել է դատական քննությանը մասնակցելու իրավունքից, հետևաբար՝ հնարավորություն չի ունեցել տեղեկանալու և մեկնաբանելու քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները, այսինքն՝ մեղադրող կողմի համեմատությամբ հայտնվել է խիստ անբարենպաստ վիճակում:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքների խախտում, ինչն էլ իր հերթին հանգեց-

րել է ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

29. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ առանց Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու հնարավոր չէ քննության առնել բողոքաբերի կողմից բարձրացված երկրորդ հարցը, այն է՝ մեղադրյալ Ա.Գարիբյանին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման օրինականությունը: Ուստի, սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ամալյա Մերժիկի Գարիբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

70.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԼԳ/0212/01/10
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԼԳ/0212/01/10
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ե.Գարբինյան, Ս.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 20-ին ք. Երևանում

դմբաց դատական նիստում, քննության առնելով Համայակ Ջալիկոյի Սահակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Սահակյանի պաշտպան Ա.Ոսկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի օգոստոսի 16-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լռոու մարզի քննչական բաժնի Սպիտակի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 52105109 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով՝ անհայտ անձի կողմից շինություն ապօրինի մուտք գործելով առանձնապես խոշոր չափի գույք գաղտնի հափշտա-

կելու դեպքի առթիվ:

2009 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 39105209 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի հատկանիշներով՝ անհայտ անձանց կողմից Գուրգեն և Հոռոմ Ավդալյանների նկատմամբ ավազակային հարձակում գործելու դեպքի առթիվ:

2009 թվականի հոկտեմբերի 1-ին Համայակ Սահակյանը ձերբակալվել է:

2009 թվականի հոկտեմբերի 2-ին որոշում է կայացվել թիվ 52105109 քրեական գործը թիվ 39105209 քրեական գործին միացնելու մասին:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Հ.Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ Հ.Սահակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Հ.Սահակյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով նոր մեղադրանք է առաջադրվել:

2010 թվականի օգոստոսի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 22-ի դատավճռով ճանաչվել է հոչակվել է ամբաստանյալ Հ.Սահակյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում: Հ.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ազատազրկման 10 տարի ժամկետով՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափով գույքի բռնագրավմամբ, 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Հ.Սահակյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 13 տարի ժամկետով՝ հանցագործությամբ պատճառված վնասի չափով գույքի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կարգով նշանակված պատժին գումարելով Հ. Սահակյանի նկատմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 12-ի դատավճռով նշանակված պատժի չկրած

մասից 6 ամիս ժամկետով ազատագրվումը՝ ամբաստանյալ Հ.Սահակյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատագրվում 13 տարի 6 ամիս ժամկետով՝ հանցագործությանը պատճառված վնասի չափով գույքի բռնագրավմամբ՝ պատժի սկիզբը հաշվելով 2009 թվականի հոկտեմբերի 1-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Գոռ Աջամյանը, Ռոման Մելոյանը, Լևոն Եղիյանը, Արթուր Յարմալոյանը, Վահե Յարմալոյանը, Երեմ Կիրակոսյանը, Արման Օհանյանը, Սաշա Վարդանյանը, Վիգեն Աբրահամյանը և Ռոման Հակոբյանը:

Վճռվել է նաև ամբաստանյալներ Հ.Սահակյանից, Գ.Աջամյանից, Ռ.Մելոյանից, Լ.Եղիյանից և Ա.Յարմալոյանից համապարտության կարգով բռնագանձել 5.000.000 ՀՀ դրամ՝ հօգուտ տուժող Գ.Ավդալյանի:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հուլիսի 21-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Սահակյանի պաշտպան Ա.Ոսկանյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Հ.Սահակյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

2009 թվականի օգոստոսի կեսերին Հ.Սահակյանը պլանավորել և իրագործել է Սպիտակ քաղաքի բնակիչ Գ.Կարոյանի խանութից առանձնապես խոշոր չափերով ոսկյա զարդերի և այլ ապրանքների գողությունը: Որպես այդ հանցագործության կատարող ընտրել է Գ.Աջամյանին, ով իրագործելով Հ.Սահակյանի հանցավոր մտադրությունը՝ գողություն կատարելու նպատակով 2009 թվականի օգոստոսի 15-ի լույս 16-ի գիշերն ապօրինի մուտք է գործել Սպիտակ քաղաքում գտնվող, Գ.Կարոյանին պատկանող խանութ-սրահ և այնտեղից գաղտնի հափշտակել առանձնապես խոշոր չափի՝ 5.151.480 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույք և գումար: Նույն օրը՝ գողությունից մի քանի ժամ հետո, Հ.Սահակյանը, իրագործելով Գ.Աջամյանին տրված խոստումը, քրեակատարողական հիմնարկից զանգահարել է Արարատի մարզի Ավշար գյուղի բնակիչ Ռ.Հակոբյանին և խնդրել, որ օգնի Գ.Աջամյանին վաճառել նրա մոտ եղած ոսկյա զարդերը: Ռ.Հակոբյանը 2009 թվականի օգոստոսի 18-ին Գ.Աջամյանից գնել է գողացված ոսկյա զարդերի մի մասը՝

310 գրամ քաշով տարբեր տեսակի ոսկյա զարդեր: Գողացված ապրանքների վաճառքից գոյացած գումարների մեծ մասը Գ.Աջամյանն ուղարկել է Հ.Սահակյանին:

Շարունակելով իր հանցավոր գործունեությունը՝ Հ.Սահակյանը, գտնվելով «Սևան» քրեակատարողական հիմնարկում, 2009 թվականի սեպտեմբերի վերջերին որոշել է կրկին կազմակերպել հափշտակություն և Գ.Աջամյանին հանձնարարել է, որ իրեն հայտնի է ինչ-որ տան կամ խանութի մասին, որտեղից կարելի է հափշտակություն կատարել: Գ.Աջամյանն այդ մասին հայտնել է ընկերներին՝ Ռ.Մելոյանին, Ա.Յարմալոյանին և Լ.Եղիյանին, վերջինս տեղեկացրել է Գ.Ավդալյանի՝ Տաշիր քաղաքի Լենինի 77 հասցեում գտնվող առանձնատան մասին, որից հետո Գ.Աջամյանն այդ մասին հայտնել է Հ.Սահակյանին: Հ.Սահակյանը քրեակատարողական հիմնարկում պլանավորել է Գ.Ավդալյանի բնակարանից զենքի գործադրմամբ ավազակության եղանակով առանձնապես խոշոր չափի գույքի հափշտակությունը և որոշել, որ այն կատարի Գ.Աջամյանը, սակայն այս անգամ, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում: Միաժամանակ, իմանալով, որ 2009 թվականի սեպտեմբերի կեսերից Գ.Աջամյանը սկսել է շփվել Ռ.Մելոյանի, Լ.Եղիյանի, Ա.Յարմալոյանի և Վ.Յարմալոյանի հետ, խորհրդակցել է Գ.Աջամյանի հետ ու, որպես նրա հետ ավազակության համակատարողներ, ընտրել Ռ.Մելոյանին, Լ.Եղիյանին և Ա.Յարմալոյանին: Գրանից հետո Հ.Սահակյանն անձամբ զանգահարել է վերջիններին՝ համոզելով, որ Գ.Աջամյանի հետ կատարեն զենքի գործադրմամբ ավազակություն՝ խոստանալով, որ հակառակ դեպքում, եթե հանցագործությունը բացահայտվի, կկազմակերպի նաև նրանց պարտակումը, նրանք էլ տվել են իրենց համաձայնությունը: Այնուհետև, Հ.Սահակյանը սեպտեմբերի 28-ին կրկին զանգահարել է նրանց՝ տալով հրահանգներ և ցուցումներ, որ զիջերը կատարեն պլանավորված հանցագործությունը: Նույն օրը զիջերը Գ.Աջամյանը, Ռ.Մելոյանը, Լ.Եղիյանը, Ա.Յարմալոյանը և նրա եղբայրը՝ Վ.Յարմալոյանը, զնացել են Տաշիր քաղաք, սակայն վերջինիս չեն հայտնել այնտեղ գնալու իրենց իրական նպատակի մասին, նրան թողել են Տաշիր քաղաքի հրապարակի մոտ, իսկ իրենք, ղեկավարվելով Հ.Սահակյանի կողմից հեռախոսակապի միջոցով տրված ցուցումներով, 2009 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 1-ի սահմաններում, Ավդալյանների նկատմամբ ավազակային հարձակում կատարելու նպատակով Տաշիր քաղաքի նախկին մշակույթի տան մոտ հագել են նախապես իրենց հետ բերված դիմակները, Գ.Աջամյանը վերցրել է ապօրինի պահվող, հրազեն հանդիսացող 16 մմ տրամաչափի որսորդական ողորկափող ձևափոխված հրացանը՝ լիցքավորված 1 փամփուշտով, և մոտեցել են Գ.Ավդալյանի՝ Տաշիր քաղաքի Լենինի փողոցի 77 հասցեում գտնվող առանձնատանը: Այդ պահին Լ.Եղիյանը կտրել է նշված առանձնատան մուտքի դուռը և Գ.Աջամյանի, Ռ.Մելոյանի ու Ա.Յարմալոյանի հետ ապօրինի մուտք են գործել բնակարան, հարձակվել են Գուրգեն և Հռոմ Ավդալյանների վրա, ովքեր գտնվել են անկողնում՝ քնած վիճակում, կայուն ժապավենով կապել նրանց, ապա ձեռքերով, ոտքերով ու հրացանի բռնակով դիտավորությամբ հարվածներ են հասցրել

Գ.Ավդալյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով նրա առողջությանը պատճառվել է առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս, իսկ Հ.Ավդալյանին պատճառել են մարմնական վնասվածքներ, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում: Միաժամանակ, Ավդալյաններին տվել են կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքներ, որի ընթացքում ավագակությանը նրանց առանձնատնից հավիշտակել են առանձնապես խոշոր չափի՝ 3.118.153 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույք և գումար, բացի այդ, հանցագործության կազմակերպչի՝ Հ.Սահակյանի դիտավորությունից դուրս հավիշտակել են Գ.Ավդալյանին պատկանող, պետական պարգևներ հանդիսացող թվով 2 «Լենինի» ու թվով 1 «Մուրճ և մանգաղ» շքանշաններ և հրազեն հանդիսացող գործարանային արտադրության «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգ, ռազմամթերք հանդիսացող 150 հատ 5,45 մմ տրամաչափի մարտական փամփուշտ՝ լիցքավորված 5 հատ պահունակում: Այնուհետև, երբ դուրս են եկել Ավդալյանների առանձնատնից և մոտեցել Վ.Յարմալյանին, տարածքում ծառայություն իրականացնող, ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժնի երեք աշխատակիցները փորձել են պարզել նրանց այդ վայրում գտնվելու պատճառը, սակայն Լ.Եղիյանը, ճանաչելով ոստիկաններին, այդ մասին բարձրաձայն հայտնել է ընկերներին ու դիմել են փախուստի: Ռ.Մելոյանը, Լ.Եղիյանը, Ա.Յարմալյանը և Վ.Յարմալյանը փախել են Լոռու մարզի Մեղովկա գյուղ, իսկ Գ.Աջամյանը հեռացել է անհայտ ուղղությամբ: Մեղովկա գյուղում Ռ.Մելոյանը զանգահարել է Հ.Սահակյանին և տեղեկացրել ավագակության հաջող կատարման և դրանից հետո ոստիկանների հետ տեղի ունեցած ընդհարման մասին՝ հայտնելով իրենց գտնվելու վայրը, իսկ Հ.Սահակյանը, կատարելով նրանց նախօրոք տված իր խոստումը, ցուցում է տվել որպեսզի մնան տեղում, մինչև ինքը կկազմակերպի նրանց փախուստը: Գրանից հետո Հ.Սահակյանը զանգահարել է իր վաղեմի ծանոթ Կ.Գասպարյանին՝ ասելով, թե իբր ընկերները կռիվ են արել և հետապնդվում են ոստիկանների կողմից ու խնդրել է, որ նրանց գիշերելու տեղ տա: Կ.Գասպարյանը, հանդիպելով նրանց, տեղավորել է նույն գյուղում գտնվող մի անասնագոմում, որտեղ վերջիններս գիշերել են: Գիշերը Հ.Սահակյանը զանգահարել է Ռ.Մելոյանին ու մյուսներին և ցուցում տվել, որ այդ տեղից առավոտյան ինքնուրույն գնան տարբեր ուղղություններով, որից հետո նրանք սկզբից միասին մեկնել են քաղաք Գավառ, իսկ հաջորդ օրը՝ գնացել տարբեր ուղղություններով:

6. Վկաներ Անատոլի Մերոբի Անանյանի, Հարություն Նիկողայի Նիկողոսյանի և Քերոբ Հայկազի Մեժլումյանի նկատմամբ կիրառվել են պաշտպանության միջոցներ, և նրանց նախաքննական ցուցմունքների բովանդակությունը պաշտպանության կողմի համար մատչելի չի եղել:

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռում մասնավորապես նշվել է. «Գոռ Աջամյանի, Ռոման Մելոյանի, Լևոն Եղիյանի, Արթուր Յարմալյանի կողմից, նախնական համաձայնության խմբի կազմում, զենքի գործադրմամբ կատարված ավա-

զակությունը և Գռռ Աջամյանի կողմից կատարված գողությունները Համայակ Սահակյանի կողմից կազմակերպված լինելն արդեն իսկ վերը նշված ապացույցներով հիմնավորված է, սակայն, ի լրումն այդ ապացույցների, Համայակ Սահակյանի մեղքը հիմնավորվում է նաև քրեական գործում առկա պաշտպանության միջոցներ կիրառած անձանց՝ Անատոլի Սերոբի Անանյանի, Հարություն Նիկոլայի Նիկողոսյանի և Քերոբ Հայկազի Մեժումյանի ցուցմունքներով: Պաշտպանվող անձինք դատարան են ուղարկել համապատասխան դիմումներ, որոնցով հաստատել են իրենց կողմից նախկինում տրված ցուցմունքները» (տե՛ս քրեական գործ, 14-րդ հատոր, էջ 275):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 38-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 18-րդ, 19-րդ, 23-րդ, 90-րդ, 102-րդ, 104-րդ, 110-րդ, 121-րդ, 126-րդ, 127-րդ, 154-րդ, 158-րդ, 218-րդ, 309-րդ, 358-րդ, 371-րդ, 385-րդ, 390-րդ հոդվածների պահանջները:

9. Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով պաշտպանության միջոցներ կիրառած և անունները, հայրանուններն ու ազգանունները փոխված անձանց՝ Անատոլի Սերոբի Անանյանի, Հարություն Նիկոլայի Նիկողոսյանի և Քերոբ Հայկազի Մեժումյանի ցուցմունքները դատարանում չեն հետազոտվել, պաշտպանության կողմն անգամ տեղյակ չի պահվել, թե ում և ինչ հանգամանքների մասին են տրված այդ ցուցմունքները: Այդ կապակցությամբ ներկայացրել են բազմաթիվ միջնորդություններ, որոնք բոլորն էլ դատարանի կողմից մերժվել են: Այս պայմաններում Առաջին ատյանի դատարանը Հ.Սահակյանին առաջադրված մեղադրանքում մեղավոր է ճանաչել՝ հիմք ընդունելով նաև նշված անձանց ցուցմունքները, իսկ Վերաքննիչ դատարանն այն իրավաչափ է համարել, որով կոպտորեն խախտվել է կողմերի իրավահավասարությունը:

Բողոքի հեղինակը, շարադրելով և վերլուծելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ և Վճռաբեկ դատարանի որոշումներ, այնուհետև եզրակացություն է արել առ այն, որ նշված անանուն վկաների ցուցմունքների չիրապարակվելու և դրանց բովանդակությանը չծանոթանալու հետևանքով պաշտպանության կողմը գրկված է եղել դրանց՝ որպես ապացույցի օգտագործման թույլատրելիությունը վիճարկելու հնարավորությունից, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

10. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ ամբաստանյալ Հ.Սահակյանի

մեղադրանքի հիմքում դրված ապացույցների զանգվածում առկա են մի շարք ապացույցներ, որոնք ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի նորմերի խախտմամբ, հետևաբար՝ հանդիսանում են անթույլատրելի: Ըստ բողոքաբերի՝ նշված ապացույցների թույլատրելիության հարցը բարձրացվել է իր վերաքննիչ բողոքում, սակայն Վերաքննիչ դատարանն առանց որևէ պատճառաբանության նշել է, թե նշված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքեր չկան:

11. Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի քննության ընթացքում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով իր վերաքննիչ բողոքը քննել է վճռաբեկության կարգով, որպիսի հանգամանքը գրկել է պաշտպանության կողմին նյութական իրավունքի խախտումների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու, դատավարական իրավունքի խախտումները հիմնավորելու նպատակով այլ միջնորդություններ հարուցելու, ինչպես նաև դատական կազմին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից: Ըստ բողոքաբերի՝ տեղի է ունեցել նաև պաշտպանության իրավունքի խախտում:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է ամբաստանյալ Հ.Սահակյանի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով բողոքաբերն ըստ էության անդրադարձել է երեք հարցի. ա) պաշտպանության միջոցների ներքո գտնվող երեք վկաների՝ չբացահայտված բովանդակությամբ ցուցմունքների օգտագործման իրավաչափությունը, բ) մի շարք ապացույցների թույլատրելիությունը, գ) վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վճռաբեկության կարգով քննության առնելու իրավաչափությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանության միջոցներով ապահովված անձանց ցուցմունքների դատական կիրառելիության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում նախ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած առաջին իրավական հարցին:

14. Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ իրավական հարցը՝

անանուն վկաների չհրապարակված ցուցմունքները կարող էին արդյոք որպես ապացույց օգտագործվել Հ.Սահակյանի նկատմամբ մեղադրական դատավճիռը պատճառաբանելիս:

15. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից (...) իր գործի (...) քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից (...) արդարացի (...) դատաքննության իրավունք (...):

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...),

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (...),

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարությունում արդար դատաքննության հիմնարար իրավական արժեքի բաղադրատարրերից է պաշտպանության կողմի իրավունքը տեղեկացված լինելու գործում եղած ապացույցների, հատկապես՝ մեղադրական ապացույցների մասին: Այդ իրավունքը ծագում է մինչդատական վարույթի եզրափակիչ ընթացաշրջանում՝ գործի նյութերին ծանոթանալիս, և տարածվում է դատական վարույթների վրա:

Ապացույցների մասին տեղեկացված լինելու՝ պաշտպանության կողմի իրավունքը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից և 3 (բ) ենթակետից՝ որպես հավասար պայմանների իրավունքի և պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար հնարավորություն ունենալու իրավունքի կենսագործման նախապայման: Եթե այդ նախապայմանը բացակայի, ապա կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը՝ ընդհանրապես, 6-րդ հոդվածի 1-ին կետով («զենքերի հավասարության» տարր) և 3(բ) ենթակետով երաշխավորված իրավունքը՝ մասնավորապես, կվերածվեն վերացական և պատրանքային իրավունքների:

17. Նախորդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախա-

դեպային իրավունքին: Մասնավորապես, *Օջալանն ընդդեմ Թուրքիայի* գործով Եվրոպական դատարանը, հիմնվելով պաշտպանության կողմի իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքի վրա, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի մատչելիության սահմանափակումը չպետք է խոչընդոտի նախքան դատական քննությունը մեղադրյալի կողմից գործով ապացույցներին ծանոթանալու և այդ ապացույցների վերաբերյալ մեկնաբանություն կատարելու հնարավորությանը: Նույն գործով դատարանը նաև եզրահանգել է, որ պաշտպանության կողմի համար գործով ապացույցներին ծանոթանալու արդյունավետ հնարավորության բացակայությունը հակասում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին (տե՛ս Օջալանն ընդդեմ Թուրքիայի գործով Մեծ պալատի 2005 թվականի մայիսի 12-ի վճռի 140-144-րդ և 148-149-րդ կետերը, ինչպես նաև նույն գործով Պալատի 2003 թվականի մարտի 12-ի վճռի 160-րդ կետը, զանգատ թիվ 46221/99):

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին ընդհանուր առմամբ բովանդակում է սույն որոշման 16-րդ կետում մատնանշված հիմնարար իրավական արժեքները կենսագործելու համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ «Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը:

2. Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխա-

նողին քննիչը ծանոթանալու համար գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Երբ ապացույցները հետազոտված են, նախագահողը՝

1) կողմերին բացատրում է, որ նրանք դատական վիճաբանությունների փուլում, իսկ դատարանը՝ դատավճիռ կայացնելիս, իրավունք ունեն հիմնվել միայն այն ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դատաքննության ժամանակ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ «Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը» «ապացուցված» համարվելու համար *inter alia* անհրաժեշտ է, որ դատարանը բացառապես «[հիմնվի] պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա» և «դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների» վրա:

19. Նախորդ կետում մեջբերված իրավադրույթներից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա՝ (ա) մեղադրյալին և նրա պաշտպանին օրենքի ուժով տրվում է քրեական գործի նյութերին, այդ թվում՝ ապացույցներին ծանոթանալու հնարավորություն, (բ) դատավճռի հիմքում չեն կարող դրվել այնպիսի ապացույցներ, որոնք չեն հետազոտվել դատաքննության ընթացքում, (գ) մեղադրական դատավճռի հիմքում չեն կարող դրվել այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտումը չի կատարվել պատշաճ իրավական ընթացակարգով:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ոչ միայն բովանդակում է սույն որոշման 16-րդ կետում մատնանշված հիմնարար իրավական արժեքները կենսագործելու համար անհրաժեշտ միջոցներ, այլև սահմանում է այնպիսի իրավական մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել այդ արժեքներին հակակշռող հանրային շահերի, մասնավորապես՝ անձին, հասարակությանն ու պետությանը հանցագործություններից պաշտպանության, հանցագործությունների արդյունավետ բացահայտման կենսագործումը:

Այդպիսի հակակշռող իրավական ինստիտուտներից է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության կառուցակարգը, որն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխում (98-րդ, 98.1-98.13, 99-րդ, 99.1 հոդվածներ):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.1-րդ հոդվածի համաձայն՝

«Պաշտպանության միջոցներն են՝ (...)

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.3-րդ հոդվածի համաձայն՝ «Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահվում վարույթն իրականացնող մարմնի մոտ:

Հիմնական վարույթից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն դատարանին և քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար (...):»

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Սակայն, հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի, խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Այս առումով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում: Այլ կերպ՝ չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա

անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից: Այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով:

22. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները պարզաբանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավական դիրքորոշումներ հայտնել այն դեպքերի կապակցությամբ, երբ անձը դատապարտվում է բացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա, որի կապակցությամբ սակայն հնարավորություն չի ստացել իրացնել հակընդդեմ հարցման (*կոնֆրոնտացիայի*) իրավունքը («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(դ) ենթակետ):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(դ) ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից (տե՛ս Ունտերայերտինգերն ընդդեմ Ավատրիայի, զանգատ թիվ 9120/80, 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33-րդ կետեր): Իսկ *Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)* գործով վճռում Եվրոպական դատարանը զարգացրել է *Ունտերայերտինգերի* գործով ամրագրված իրավական դիրքորոշումը և սահմանել, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (տե՛ս Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1), զանգատներ թիվ 29900/96 և այլն, 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռ, 65-րդ կետ):

Ունտերայերտինգերի և Սադակի գործերով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններ են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն: Դրա մասին է վկայում այն, որ նշված իրավական դիրքորոշումները հետագայում բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են, մասնավորապես, հետևյալ գործերով. *Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի*, զանգատ թիվ 28490/95, 2003 թվականի հունիսի 19-ի վճիռ, 53-54-րդ կետեր, *Գոսսան ընդդեմ Լեհաստանի*, զանգատ թիվ 47986/99, 2007 թվականի հունվարի 9-ի վճիռ, 54-55-րդ կետեր, *Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի*, զանգատ թիվ 72596/01, 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռ, 86-րդ կետ, *Չական ընդդեմ Ալբանիայի*, զանգատ թիվ 44023/02, 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռ, 102-րդ կետ, *Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի*, զանգատ թիվ 18487/03, 2010 թվականի մարտի 4-ի վճիռ, 32-րդ կետ, *Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, զանգատ թիվ 40156/07, 2010 թվա-

կանի սեպտեմբերի 28-ի վճիռ, 62-րդ կետ, և այլն:

23. Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հարցման (*կոնֆրոնտացիայի*) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ կերպ՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում: Ուստի, այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ:

24. Զննության առարկա գործի փաստերը սույն որոշման 15-23-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Սահակյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքում չբացահայտված բովանդակությամբ ապացույցներ դնելով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի խախտում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն էական չի համարում Առաջին ատյանի դատարանի այն հիմնավորումը, որ գործով մնացած ապացույցները բավարար են Հ.Սահակյանի մեղքը հիմնավորելու համար, և այն փաստը, որ նշված երեք ապացույցներն Առաջին ատյանի դատարանում օգտագործվել են միայն ի լրումն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

25. Վերոգրյալն ինքնին բավարար է սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի որոշումը Հ.Սահակյանի մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բարձրացրած երկրորդ հարցին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա դրան պետք է պատասխան տրվի գործի նոր քննության արդյունքում: Իսկ բողոքաբերի բարձրացրած երրորդ հարցի կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման հետևանքով այդ հարցի իրավական նշանակությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Համայակ Ջալիկոյի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

71.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0136/11/11
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

ԵԿԴ/0136/11/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝
դիմողի ներկայացուցիչ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Լ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱԼՈՒՄՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ մաս՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ դիմող Լ.Պողոսյանի և ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հուլիսի 21-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի որոշմամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 62205611 քրեական գործը:

«Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշումը Լևիկ Պողոսյանի կողմից բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Լ.Պողոսյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 2011 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ մերժվել է:

2011 թվականի օգոստոսի 11-ին Լ.Պողոսյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ դիմող Լ.Պողոսյանի բողոքը բավարարվել է մասնակիորեն, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել «Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ թույլ տրված և Առաջին ատյանի դատարանի որոշմամբ արձանագրված՝ դիմող Լ.Պողոսյանի իրավունքների խախտումը:

3. Դիմող Լ.Պողոսյանի և ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 29-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել դիմող Լ.Պողոսյանը և ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանը:

2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը դիմող Լ.Պողոսյանի և ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանի վճռաբեկ բողոքներն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Դիմող Լևիկ Պողոսյանը մինչև 2011 թվականի հոկտեմբերի 16-ը Արարատի

և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր է եղել:

6. «Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշման համաձայն՝ «(...) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանը վարույթ է ընդունել նույն դատարանի 2010թ. հոկտեմբերի 22-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով պատիժը պայմանական կրող, փորձաշրջանի մեջ գտնվող Յուրա Հարությունյանի միջնորդությունը՝ բնակության վայրը փոխելու, ՀՀ Վայք քաղաքից ՌԳՍ Սանկտ-Պետերբուրգ՝ ընտանիքի անդամների մոտ, տեղափոխվելու մասին, որի կապակցությամբ դատարանի 2011 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ ներկայացված որոշումը բավարարվել է:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ չնայած Յուրա Հարությունյանի կինը և երեխան իրականում հանդիսանում են ՌԳՍ քաղաքացիներ, սակայն 2007թ. մշտապես բնակվել են վերջինիս հետ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում և իրենց բնակության վայրից երբևիցե չեն բացակայել:

Սինչդեռ, Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանը դատական ակտի ի կատար ածելու հետ կապված հարցերի լուծման մասին որոշում կայացնելիս, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները և կատարելով պաշտոնեական կեղծիք, հիմք է ընդունել և անառարկելիորեն հաստատված է համարել իրականությանը չհամապատասխանող այն հանգամանքը, որ Յուրա Հարությունյանի ընտանիքի անդամները բնակվում են Սանկտ-Պետերբուրգ քաղաքի Պրիմորսկի շրջանի Ավիակոնստրուկտորների նրբանցքի թիվ 36 շենքի 100-րդ բնակարում, իսկ դատապարտյալը դատապարտվելու կապակցությամբ շուրջ 6-7 ամիս է ապրում է Վայք քաղաքում՝ ընտանիքից առանձին:

Բացի այդ, նույն որոշման մեջ արձանագրվել է, որ, իբր, Յուրա Հարությունյանը և ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Վայոց ձորի բաժանմունքի պետ Ռաֆիկ Գևորգյանը մասնակցել են դատական նիստին»:

Վերոգրյալի հիման վրա քննիչը որոշել է՝ «Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (...)» (տե՛ս նյութեր, էջ 25):

7. ՀՀ հատուկ քննչական ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում () 2011 թվականի հուլիսի 21-ին հրապարակվել է հետևյալ տեղեկատվությունը. «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում 2011թ.

հուլիսի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 314-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ: Կատարվում է նախաքննություն»:

8. Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Դեկվարվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս)՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով առկա են ծանրակշիռ փաստարկներ՝ քրեական գործի հարուցման մասին որոշումը բողոքարկելու հարցում ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները չկիրառելու և ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա ակտ ճանաչելու համար:

Նշված ծանրակշիռ փաստարկները հանգում են հետևյալին. քրեական գործ հարուցելու մասին որոշումը սկզբունքային նշանակություն ունի ողջ քրեական դատավարության համար, քանի որ այդ դատավարական փաստաթղթում ամփոփվում են նախապատրաստական ընթացակարգի արդյունքները, և տրվում են որոշակի փաստերի վերաբերյալ նախնական, սակայն պաշտոնական գնահատականներ: Նկատի ունենալով այն, որ քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ, այլ ոչ թե անձի նկատմամբ, ուստի այդ գնահատականները կարող են վերաբերել միայն փաստերին և չեն կարող վերաբերել անձին կամ նրա արարքներին: Այնուհանդերձ, այն դեպքերում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ հանցակազմ պարունակող որոշակի փաստեր ուղղակիորեն վերագրվում են կոնկրետ անձին, ապա ողջամտորեն ի հայտ են գալիս ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող մի շարք իրավաչափ շահերի վերաբերյալ մտահոգություններ (հանցագործության մեջ մեղադրվողի պաշտպանության իրավունք՝ 20-րդ հոդված, անմեղության կանխավարկած՝ 21-րդ հոդված): Այդ մտահոգություններն էլ ավելի լուրջ բնույթ են ստանում այն դեպքում, երբ կոնկրետ անձի մատնանշմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դարձվում է հանրության սեփականություն: Նշվածի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ այն անձը, ով մատնանշված է քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ, չի կարող զրկվել հենց մինչդատական վարույթի ընթացքում՝ Սահմանադրությամբ ամրագրված իր իրավաչափ շահերը դատարանի առջև պաշտպանելու և խախտման փաստի արձանագրման դեպքում իրավական պաշտպանության համարժեք միջոցներ ստանալու հնարավորությունից: Հակառակ դեպքում դա կհանգեցնի տվյալ անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Այսպիսով, Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման, եթե դրանում առ-

կա են կոնկրետ անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելու փաստը հաստատող ձևակերպումներ» (տե՛ս նյութեր, էջեր 40-48):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Առաջին ատյանի դատարանը, ըստ էության քննության առնելով դիմող Լ.Պողոսյանի բողոքի պատճառաբանությունները, գտել է, որ «Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գ.ասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ տեղ գտած ձևակերպումները դուրս են քրեական գործ հարուցելու նպատակների շրջանակներից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ, 18-րդ, 20-րդ կետերի, 202-204-րդ հոդվածների բովանդակությունների համադրումից հետևում է, որ կոնկրետ անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու մեջ մեղադրելը վերաբերում է մինչդատական վարույթի ավելի ուշ փուլին՝ քրեական գործ հարուցելուց հետո քննչական գործողություններով ձեռք բերված ապացույցների հիման վրա քրեական հետապնդման հարուցմանը և ենթադրաբար կատարված հանցանքի մեջ անձի մեղավորության մասին եզրահանգմանը, դրանով պայմանավորված՝ անձի իրավունքների սահմանափակմանը: Քրեական գործ հարուցելու և անձին որպես մեղադրյալ ներգրավելու փուլերը միմյանցից տարանջատվում են ոչ միայն ժամանակագրական առումով, այլև անձի մեղավորությունը հիմնավորելուն ուղղված համապատասխան քննչական գործողություններ կատարելու, հավաքված ապացույցները գնահատելու, մեղադրանքն ապացուցված լինելու հետ կապված բոլոր կասկածները փարատելու անհրաժեշտությամբ:

Օրենսդիրը հանցագործություն կատարած անձի ինքնության մասին պարտադիր նշում նախատեսում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ:

Վերաքննիչ դատարանը նույնպես համաձայն է դիմողի այն պնդմանը, որ «Որպես մեղադրյալ ներգրավել» եզրույթը չպետք է մեկնաբանվի նեղ ու կապիլի բացառապես քրեական դատավարության օրենսգրքում դրան տրված բովանդակության հետ, հակառակ դեպքում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքը կկրի պատրանքային բնույթ և չի ծառայի այն նպատակներին, որոնք իրականում նկատի են ունեցվել: ՀՀ Սահմանադրության մեջ այդ եզրույթն ունի ինքնուրույն, ինքնավար իմաստ և դրա մեկնաբանությունը չի կարող դրվել կախման մեջ այն բանից, թե ինչ կարգավորումներ կտրվեն քրեական դատավարության օրենսգրքով: (...)

Իսկ տվյալ դեպքում, գործի փաստական հանգամանքների համաձայն, քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ դատավոր Լևիկ Պողոսյանը պաշտոնապես տեղեկացվել է, որ առկա է ենթադրություն այն մասին, որ իր կողմից կատարվել է քրեորեն հետապնդելի արարք: (...)

Եթե քրեական գործ հարուցելու հիմնական, եթե ոչ գլխավոր նպատակը հանցագործություն կատարած անձի /անձանց/ բացահայտումն է /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդված/, ապա քրեական գործ հարուցելու մասին

որոշման մեջ հանցագործություն կատարած անձի հիշատակումը կարող է կանխորոշել նախաքննության հետագա ընթացքը, և լուրջ վերապահումներ կարող են առաջանալ այն առումով, որ այդպիսի պայմաններում քրեական հետապնդում իրականացնող մարմինը հնարավորություն կունենա կատարելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իր պարտականությունը՝ ձեռնարկելու նույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ավելին, քրեական գործ հարուցելու կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածն էլ չի նախատեսում, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ պետք է մատնանշվի ենթադրաբար հանցագործություն կատարած անձը: Այդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ «որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենսգրքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը»: (...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի մասերի համեմատական-տրամաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական գործ հարուցելու պահին կարևոր նշանակություն է տրվում հանցագործությունից տուժած անձի հայտնի լինելու հանգամանքին, և օրենսդիրը շեշտադրում է կատարում հենց այդ պահից վերջինիս դատավարական կարգավիճակով օժտելու հարցին: Ինչ վերաբերում է քրեական գործ հարուցելու պահին հանցագործություն կատարած անձի հայտնի լինելու հանգամանքին և այն հարուցման որոշման մեջ որևէ կերպ ամրագրելուն, ապա օրենսդիրն այդ հարցին ընդհանրապես չի անդրադարձել՝ նկատի ունենալով, որ քրեական գործի հարուցման գլխավոր նպատակը հենց հանցագործություն կատարած անձի բացահայտումն է: (...)

Եթե «վարույթն իրականացնող մարմինը դատավոր Լ.Պողոսյանի անմեղությունը քրեական գործի հարուցման պահին կասկածի տակ չի դրել, առավել ևս՝ նրան մեղադրելու հնարավորություն և նպատակ չի ունեցել», ինչպես պնդում է դատախազն իր վերաքննիչ բողոքում, ապա ինչո՞ւ է քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական մասում որպես հաստատված փաստական հանգամանք մատնանշել, թե «...դատավոր Լևիկ Պողոսյանը դատական ակտի ի կատար ածելու հետ կապված հարցերի լուծման մասին որոշում կայացնելիս՝ չարաշահելով պաշտոնեական լիազորությունները և կատարելով պաշտոնեական կեղծիք, հիմք է ընդունել և անառարկելիորեն հաստատված է համարել իրականությանը չհամապատասխանող այն հանգամանքը, որ ...», իսկ նույն որոշման եզրափակիչ մասում ամրագրել, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով և 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քրեական գործը հարուցվում է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի

առթիվ» (տե՛ս նյութեր, էջեր 111-118):

10. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը սույն գործով դիմող՝ դատավոր Լ.Պողոսյանին ուղարկվել է դատախազ Կ.Փիլոյանի 2011 թվականի հոկտեմբերի 24-ի գրությամբ, որտեղ որպես հասցեատեր նշվել է «մեղադրյալ Լևիկ Վարդանի Պողոսյան» (տե՛ս նյութեր, էջ 180):

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Դիմող Լ.Պողոսյանը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

12. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանների որոշումներով քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավորեցվել է վերացնել իր իրավունքների խախտումը: Մինչդեռ, ըստ բողոքաբերի, ստորադաս դատարանները, գտնելով, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի՝ «Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» որոշմամբ խախտվել են իր անձեռնմխելիության, հեղինակության, անկախության, անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքները, պետք է իրենց դատական ակտերով վերականգնեին իր խախտված իրավունքները՝ վերացնելով քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

Բողոքաբերի կարծիքով, ստորադաս դատարանների կողմից արձանագրված՝ իր իրավունքների խախտումներն առաջացել են քրեական գործի հարուցման արդյունքում և հանդիսանում են դրա անմիջական հետևանք: Ուստի, կարող են վերացվել միայն քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելով: Այս կապակցությամբ բողոք բերած անձը նշել է նաև, որ քննիչը, ում վարույթում գտնվում է իր վերաբերյալ գործը, քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու իրավասություն չունի: Քննիչն իրավասու է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնել, որը կտարածվի այդ որոշմանը հաջորդող ժամանակահատվածի վրա, մինչդեռ, բողոք բերած անձի կարծիքով, անհրաժեշտ է կայացնել այնպիսի որոշում, որը կտարածվի նաև նախկին ժամանակաշրջանի վրա և կվերացնի իր իրավունքների խախտումները՝ սկսած 2011 թվականի հուլիսի 21-ից:

13. Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները չեն անդրադարձել իր մի շարք կարևոր փաստարկների, ինչն անհամատեղելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի

1-ի մասի հետև և բողոքաբերին գրկել է իր մի շարք իրավունքների ենթադրյալ խախտումների հարցը դատական քննության առարկա դարձնելու և հետագայում նաև վերադաս դատարան բողոքարկելու հնարավորությունից:

Բողոք բերած անձի պնդմամբ, ստորադաս դատարանները չեն անդրադարձել իր այն փաստարկին, որի համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի կողմից պաշտոնապես կասկածի տակ են դրվել դատավոր Լ.Պողոսյանի կողմից 2011 թվականի ապրիլի 22-ին կայացված և օրինական ուժի մեջ գտնվող որոշմամբ հաստատված հանգամանքները, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետ: Բացի այդ, ՀՀ դատախազությունն իրավասու էր և ներկայումս էլ իրավասու է բողոքարկել դատավոր Լ.Պողոսյանի կողմից կայացված՝ 2011 թվականի ապրիլի 22-ի որոշումը, որի փոխարեն, խախտելով ՀՀ Սահմանադրության 5-րդ, 94-րդ և 97-րդ հոդվածների պահանջները, թույլ է տվել վերոնշյալ դատական ակտի օրինականության վիճարկում հատուկ քննչական ծառայության կողմից:

Ինչ վերաբերում է դատական նիստին Յուրա Հարությունյանի մասնակցության մասին դատարանի որոշման մեջ առկա նշագրմանը, ապա դա պարզապես վրիպակ է, որն ակնհայտ երևում է հենց որոշումից, քանի որ որոշման ներածական մասում Յուրա Հարությունյանի անունը՝ որպես նիստին ներկա գտնվող անձի, նշված չէ: Իսկ տեքստում նկատելով նրա անունը՝ դատավորը կարգադրել է ուղղել սխալը: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ համանման վրիպակ է թույլ տվել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանը՝ քրեական գործ հարուցելու որոշման եզրափակիչ մասում «դատավոր Լևիկ Պողոսյանի» փոխարեն նշելով, որ գործը հարուցվում է «դատավոր Լևիկ Պետրոսյանի կողմից...»: Երբ պաշտպանական կողմը նկատել է նշված վրիպակը և այդ մասին նշել է իր բողոքում, գրվել է «21 հուլիսի 2011թ.» թվագրված երկրորդ որոշումը՝ այս անգամ «դատավոր Լևիկ Պողոսյան» ազգանվամբ: Քննիչի որոշման մեջ տեղ գտած ազգանունների տարբերությունը դատախազ Կ.Փիլոյանը համարել է վրիպակ:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ դատախազությունը նույն գործողության համար դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու համաձայնություն է տալիս, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայության դեպքում դիտարկում է որպես իրավական հետևանք չառաջացնող տեխնիկական վրիպակ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի վկայակոչմամբ բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանի կողմից կայացված՝ «Քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին» որոշման դեմ բերված բողոքին կարող էր լուծում տալ բացառապես ՀՀ գլխավոր դատախազը:

15. Վերոգրյալի հիման վրա՝ դիմող Լ.Պողոսյանը խնդրել է ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումն ամբողջությամբ, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 29-ի որոշումը՝ իր բողոքի չբավարարված մասով բեկանել և փոփոխել՝ որոշում կայացնելով իր բողոքն ամբողջությամբ բավարարելու մասին, այն է՝

1) Վերացնել «Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ» ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գ.ասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշումը:

2) Վերացնել իր բողոքը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Կ.Փիլոյանի 2011 թվականի օգոստոսի 5-ի որոշումը:

3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1-րդ հոդվածին համապատասխան՝ լրացուցիչ որոշում կայացնել, որով ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի ուշադրությունը հրավիրել դատավորի կողմից քրեական օրենքով արգելված արարք կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու անթույլատրելիության վրա:

4) Դատախազ Կ.Փիլոյանի վերաքննիչ բողոքի մասով վարույթը կարճել:

16. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

17. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով ստորադաս դատարանների որոշումները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, դրանցում արված հետևությունները հակասում են քրեադատավարական օրենքի բուն իմաստին, քանզի կիրառելուց առաջ պատշաճ կարգով չեն մեկնաբանվել:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասը՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ այն քննիչին պարտավորեցնում է քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշել քրեական գործ հարուցելու հիմքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը հաստատող փաստական տվյալները: Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ քրեական գործ հարուցելիս հանցագործություն կատարած անձի մասին նշումը պարտադիր է, եթե խոսքը հատուկ սուբյեկտով հանցակազմների մասին է, որոնց թվին են դասվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված պետական ծառայության դեմ ուղղված, այդ թվում՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները: Հետևաբար, դատարանի և դատավոր Պողոսյանի անունը քրեական գործ հարուցելու որոշման մեջ նշվել են ոչ թե որպես ինքնանպատակ, այլ որոշման մեջ հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունները, ինչպես նաև օբյեկտը նկարագրելու անհրաժեշտությունից ելնելով: Հակառակ դեպքում, քրեական գործ հարուցելու որոշումը ոչ միայն կհակասեր քրեական գործի հարուցման դատավարական կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջներին և ներքին տրամաբանությանը, այլև կհմաստագրկվեր:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանները տարանջատված, դրանով իսկ ոչ պատշաճ մոտեցում ցուցաբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի վերլուծությանը, չեն անդրադարձել այն հարցին, թե կարո՞ղ էր արդյոք նախաքննական մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների հատկանիշներով քրեական գործ հարուցելիս այդ որոշման մեջ խուսափել դատավորի պաշտոնը և տվյալները նշելուց:

18. Անդրադառնալով ստորադաս դատարանների որոշումներում առկա այն դիրքորոշմանը, որ քրեական գործ հարուցելուց առաջ նախաքննական մարմինը միջնորդավորված պետք է դիմեր ՀՀ արդարադատության խորհրդին՝ դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու համաձայնություն ստանալու նպատակով, բողոք բերած անձը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ մասը և փաստարկել, որ դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ առաջարկը ՀՀ Նախագահին է ներկայացվում հարուցված քրեական գործի ռեժիմով ձեռք բերված, դատավորի ապօրինությունը փաստող ապացույցների գնահատման արդյունքներով, քանի որ ակնհայտ է, որ դատավորին կալանավորելու կամ որպես մեղադրյալ ներգրավելու որոշումներին նախորդող քննչական և դատավարական գործողությունները կարող են կատարվել բացառապես հարուցված քրեական գործի պայմաններում և կատարված նախաքննության արդյունքներով:

19. Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանների որոշումներից հասկանալի չէ, թե դատարանները թույլատրելի, թե անթույլատրելի են համարել ամբողջ նախաքննության ընթացքում՝ քրեական գործի հարուցումից մինչև 2011 թվականի օգոստոսի 29-ը ձեռք բերված ապացույցները:

20. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքը բավարարել, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 29-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումները վերացնել՝ օրինական ուժի մեջ թողնելով ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Ա.Գ.ասպարյանի 2011 թվականի հուլիսի 21-ին կայացրած որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական բողոքարկումը

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. այն դեպքերում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ որպես ենթադրյալ հանցանք կատարած մատնանշվել է կոնկրետ անձի անուն, վերջինս իրավունք ունի՞ արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկել այդ որոշումը:

22. Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական բողոքարկման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ.Գրիգորյանի և Վ.Մանուկյանի գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, Վ.Գրիգորյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, ուստիև՝ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ քրեական դատավարությունում որևէ մեկի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

Այսպիսով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա լինել չի կարող, քանի որ քրեական դատավարությունում քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում» (տե՛ս Վալերի Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ԵԿԴ/0031/11/08 որոշումը, կետ 14):

Վ.Մանուկյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում, գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակ-

ման» (տե՛ս Վարուժան Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0060/11/10 որոշումը, կետ 16):

23. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները, արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ, իսկ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու ինստիտուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Հետևաբար, քրեական գործ հարուցելու մասին որոշումը օրենքին համապատասխան կայացնելու դեպքում որևէ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում: Սակայն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործնականում քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ հաճախ որպես հանցագործություն կատարող մատնանշվում է կոնկրետ անձ, ընդ որում, որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կամ նույնիսկ մեղադրական դատավճռին բնորոշ հաստատական ձևակերպումներով, ուստի՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու որոշման իրավական հետևանքների և բողոքարկման հարցերի առնչությամբ նախկինում արտահայտած իր դիրքորոշումները որոշակի զարգացման անհրաժեշտություն ունեն:

24. Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի գնություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը:

3. Եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական

գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող, իսկ եթե հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ ներկայացված է քաղաքացիական հայց, այդ անձը նույն որոշմամբ ճանաչվում է նաև քաղաքացիական հայցվոր:

4. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

5. Քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ պետք է միջոցառումներ ձեռնարկվեն հանցագործությունը խափանելու և կանխելու, ինչպես նաև հանցագործության հետքերը, այն առարկաները և փաստաթղթերը պահելու և պահպանելու ուղղությամբ, որոնք գործի համար կարող են նշանակություն ունենալ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝ (...)

2) քրեական գործ՝ քրեական հետապնդման մարմնի (...) կողմից իրականացվող առանձին վարույթ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ. (...)

17) քրեական հետապնդում՝ այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը.

18) քրեական հետապնդման հարուցում՝ քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին. (...)

20) մեղադրանք՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործի վարույթը, այն է՝ քրեական գործի հարուցման նախապատրաստումը, հարուցումը, քրեական հետապնդումը, ինչպես նաև հարուցված գործի և իրականացվող քրեական հետապնդման հետ կապված բոլոր դատավարական գործողությունները և որոշումների ընդունումը կատարում են սույն օրենսգրքով սահմանված մարմինները և պաշտոնատար անձինք՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր մի-

ջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: (...)»:

25. Վերոգրյալ դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ քրեական գործի հարուցմամբ սկսվում է քրեադատավարական այն վարույթը, որի շրջանակներում իրավասու մարմինն իրավունք է ստանում ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ հանցագործությունը և այն կատարած անձանց բացահայտելու ուղղությամբ: Միայն քրեական գործ հարուցելուց հետո է վարույթն իրականացնող մարմինն օժտվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողություններ կատարելու լայն լիազորություններով և իրավունք ստանում միջամտելու անձանց իրավունքներին և օրինական շահերին, անհրաժեշտության դեպքում նրանց նկատմամբ կիրառելու դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն:

Այսպիսով, քրեական գործի հարուցմամբ՝

ա) պաշտոնապես ազդարարվում է հանցագործության, դրա հանգամանքների և այն կատարած անձանց բացահայտմանն ու մերկացմանն ուղղված պետական մարմինների գործունեության սկիզբը,

բ) դրվում է այն իրավական հիմքը, որը թույլ է տալիս սահմանափակել անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հարկադրանք կիրառել նրանց նկատմամբ և այլն:

Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածում սահմանել է քրեական գործ հարուցելու որոշման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, ամրագրվել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ պետք է նշվեն՝ քրեական գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է քրեական գործը, հանցագործությունից տուժած անձը, հարուցելուց հետո գործի ընթացքը և այլն:

Այսպիսով, վերոգրյալ դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ ենթադրաբար հանցագործություն կատարած անձի մատնանշման պահանջ նախատեսված չէ:

26. Վ.Գրիգորյանի և Վ.Մանուկյանի գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները մեկնաբանելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը հանդես չի գալիս որպես ենթադրաբար հանցանք կատարած անձին դատավարական կարգավիճակ տալու հիմք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ ենթադրաբար հանցանք կատարած անձին մատնանշելու պահանջ նախատեսված չէ ոչ միայն այն պատճառով, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման նշանակությունն այլ է, քան անձին կարգավիճակ տալը կամ մեղադրանք

առաջադրելը, այլ նաև այն պատճառով, որ այդ որոշման կայացման համար օրենքով ապացույցների որոշակի ծավալ չի պահանջվում: Ավելին, քրեական գործ հարուցելու փուլում ապացուցումն իրականացվում է միայն քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը պարզելու նպատակով, այլ ոչ թե ենթադրաբար հանցանք կատարած անձին կարգավիճակ տալու կամ մեղադրանք առաջադրելու համար: Դրանով էլ պայմանավորված՝ օրենսդիրն այդ փուլում սահմանափակ թվով քննչական և դատավարական գործողությունների կատարում է թույլատրում: Անձին կարգավիճակ տալու կամ մեղադրանք առաջադրելու հիմքերի պարզումը (ամբողջ ծավալով ապացուցում իրականացնելը) արդեն իսկ հարուցված քրեական գործով իրականացվող հետագա վարույթի խնդիր է, որի շրջանակներում թույլատրվում է կատարել տարբեր քննչական և դատավարական գործողություններ, կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 22-26-րդ կետերում շարադրված վերլուծությունը և համապատասխանաբար նաև Վ.Գրիգորյանի և Վ.Մանուկյանի գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը:

28. Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը հիմնված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող «քրեական մեղադրանք» հասկացության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված տեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն (*Դեվերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետեր 44, 46): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (*Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շոբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Ընդ

որում, մինչդատական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (*Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (Shabelnik v. Ukraine)* գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

29. Սույն որոշման 27-րդ կետում շարադրված եզրահանգումը վերլուծելով սույն որոշման 28-րդ կետում մեջբերված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում, նա իրավունք է ձեռք բերում օգտվելու որոշակի դատավարական երաշխիքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից:

30. *Ն.Սիսակյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: (...)» (տե՛ս տուժողի իրավահաջորդ Ներսես Սիսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի ապրիլի 10-ին կայացված թիվ ԱԲԴ-1/0003/11/08 որոշումը, կետ 12):

31. Հիմք ընդունելով սույն որոշման 22-30-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում նա պետք է օգտվի որոշակի դատավարական երաշխիքներից, իսկ այն դեպքում, երբ այդ երաշխիքները չեն ապահովվի, անձը պետք է իրավունք ունենա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքար-

կել քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ դրանով խախտվում են անձի սահմանադրական իրավունքներն ու օրինական շահերը, իսկ այդ որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Այսպիսով, այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ հաստատված է համարվում կոնկրետ անձի կողմից քրեորեն պատժելի որևէ արարք կատարելու փաստը, այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման:

Վճռաբեկ դատարանի այս հետևությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի այն պահանջի վրա, որ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող լինել վերացական:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (*Արտիկոն ընդդեմ Իտալիայի (Artico v. Italy)* գործով վճիռ, 1980թ. մայիսի 13, կետ 33):

32. Սույն որոշման նախորդ կետում սահմանված իրավունքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշման դեմ բողոքը դատական վերահսկողության կարգով քննելիս դատարանն իրավասու չէ անդրադառնալ այնպիսի հարցերի, որոնք հետագայում՝ գործն ըստ էության քննելիս, պետք է դատական քննության առարկա դառնան: Մասնավորապես, դատարանը չպետք է հետևություններ անի և իրավական գնահատականներ տա գործով ձեռք բերված ապացույցներին, դրանց թույլատրելիությանը, վերաբերելիությանը, գործի լուծման համար բավարարողությանը, անդրադառնալ արարքի քրեաիրավական որակմանը վերաբերող հարցերին:

Հետևաբար, ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքի այն հարցադրումը, թե արդյոք թույլատրելի⁶ են նախաքննության ընթացքում՝ քրեական գործի հարուցումից մինչև 2011 թվականի օգոստոսի 29-ը, ձեռք բերված ապացույցները (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը), սույն վարույթի շրջանակներում պարզաբանման ենթակա չէ:

33. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանը 2011 թվականի հուլիսի 21-ի

որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. «Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (...)» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

34. Սույն որոշման 22-32-րդ կետերում ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 33-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ հաստատված են համարվել ոչ միայն դատավորի կողմից պաշտոնեական լիազորությունները և պաշտոնեական կեղծիք կատարելու փաստը, այլև հիմնավորվել է նկարագրված արարքներում նրա մեղավորությունը: Հետևաբար, հիմնավոր է սույն գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերում առկա այն եզրահանգումը, որ քրեական գործ հարուցելու մասին քննիչի որոշման նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ դատավոր Լևիկ Պողոսյանը չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները և կատարել պաշտոնեական կեղծիք (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը): Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու մասին խնդրո առարկա որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման:

II. Դատավորի նկատմամբ քրեական վարույթը

35. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից պահպանվե՞լ են արդյոք դատավորին մեղադրանք առաջադրելու սահմանադրական և օրենսդրական ընթացակարգերը:

36. ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Դատավորի (...) գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Դատավորը (...) [չի] կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև [նրա] նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի (...) համաձայնության: (...)»:

ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատավորին չի կարելի կալանավորել, նրան որպես մեղադրյալ ներգրավել, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկել՝ առանց Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության»:

Մեջբերված սահմանադրական և օրենսդրական նորմերում ամրագրված՝ դա-

տավորի անձեռնմխելիության սկզբունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Ա.Սաղաթեյանի* գործով կայացված որոշման մեջ և արձանագրել, որ. «(...) դատավորի անձեռնմխելիությունն անկողմնակալ, արդար և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության հիմնարար իրավունքի բաղադրատարր է, ուստի այդ բաղադրյալ իրավունքի յուրաքանչյուր կրողի առանձին իրավունք-երաշխիք:

(...) [Դ]ատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքի լիարժեք ապահովումն անհնար կլինի այն դեպքում, եթե դատավորի համար չապահովվի լիազորությունները դադարեցնելուց և դատավորի կարգավիճակը կորցնելուց հետո անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքներ: (...) այդ երաշխիքները կոչված են ապահովել գործող դատավորի և հանրության (արդար դատաքննության իրավունքի կրողների) այն համոզմունքը, որ պաշտոնավարման ավարտից հետո դատավորը չի հետապնդվի իր մասնագիտական գործունեության համար: Միայն այդպիսի երաշխիքների առկայության պայմաններում է հնարավոր բարձր պահանջներ ներկայացնել դատավորի մասնագիտական գործունեությանը և հանրության մոտ ձևավորել գործող դատավորի անկախության և անաչառության նկատմամբ վստահություն: (...)

Դատավորի անձեռնմխելիության ընթացակարգային երաշխիքների համակարգը սահմանող սահմանադրական և օրենսդրական նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ այդ երաշխիքները երկու տեսակի են. առաջին՝ դատավորի ձերբակալմանը վերաբերող երաշխիքներ, և երկրորդ՝ դատավորի կալանավորմանը, որպես մեղադրյալ ներգրավելուն, նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի հարուցմանը վերաբերող երաշխիքներ: (...)

Երկրորդ տեսակի երաշխիքներն արտահայտվում են նրանում, որ բացառում են դատավորին կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու և դատական կարգով վարչական պատասխանատվության հարց հարուցելու հնարավորությունը՝ առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության: Ընդ որում, ՀՀ արդարադատության խորհուրդը, օրենքով սահմանված ընթացակարգի պահպանմամբ, իրավասու մարմնի ներկայացրած միջնորդության հիման վրա նախապես ստուգելով դատավորին կալանավորելու, քրեական կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունը, համապատասխանաբար, որոշում է կայացնում համաձայնություն տալու խնդրանքով Հանրապետության Նախագահին դիմելու մասին կամ մերժում է ներկայացված միջնորդությունը: (...)» (տե՛ս Անահիտ Սաղաթեյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-Գ-5/0022/01/10 որոշման 36-37-րդ, 43-րդ, 45-րդ կետերը):

37. Չարգացնելով *Ա.Սաղաթեյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 22-34-րդ կե-

տերում շարադրված մոտեցումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ դատավորը մատնանշվում է որպես հանցանք կատարող, նա պետք է օգտվի որոշակի դատավարական երաշխիքներից, իսկ այն դեպքում, երբ այդ երաշխիքները չեն ապահովվի, դատավորը պետք է իրավունք ունենա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկել քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ դրանով խախտվում են իր սահմանադրական իրավունքներն ու օրինական շահերը:

Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 31-րդ կետում ձևավորված իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ հաստատված է համարվում դատավորի կողմից քրեորեն պատժելի որևէ արարք կատարելու փաստը, այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ դատավորը կատարել է քրեորեն պատժելի արարք, ապա քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման:

38. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գասպարյանը 2011 թվականի հուլիսի 21-ի որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. «Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով հարուցել քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածների 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով (...)» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Գատախազ Կ.Փիլոյանի կողմից դատավոր Լ.Պողոսյանին հասցեագրված 2011 թվականի հոկտեմբերի 24-ի գրության մեջ որպես հասցեատեր նշվել է «մեղադրյալ Լևիկ Վարդանի Պողոսյան» (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

39. Սույն որոշման 36-37-րդ կետերում, և համապատասխանաբար, նաև Ա.Սաղաթելյանի գործով կայացված որոշման մեջ շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 38-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով քննիչի կողմից կայացված որոշման արդյունքում դատավոր Լ.Պողոսյանին ըստ էության քրեական մեղադրանք է առաջադրվել:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից չեն պահպանվել դատավորին մեղադրանք առաջադրելու սահմանադրական և օրենսդրական ընթացակարգերը: Գատավոր Լ.Պողոսյանին քրեական մեղադրանք է առաջադրվել առանց ՀՀ արդարադատության խորհրդի միջոցով ՀՀ Նախագահի համաձայնությունն ստանալու, ինչի հետևանքով դատավորը փաստացի գրկվել է արդարադատություն իրականացնելու հնարավորությունից:

III. Դատավորի նկատմամբ իրականացվող քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը

40. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. ՀՀ գլխավոր դատախազից բացի որևէ այլ դատախազ իրավաստ^օ է արդյոք հսկողություն իրականացնել դատավորի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով հետաքննության և նախաքննության նկատմամբ:

41. «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող: (...)

4. Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները»:

Վերոշարադրյալ դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն կարող են իրականացնել՝

1) ՀՀ գլխավոր դատախազը.

2) ՀՀ գլխավոր դատախազի կողմից լիազորված դատախազները:

42. ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

4. Դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից տվյալ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (...):»:

Մեջբերված դրույթի վերլուծությունից երևում է, որ դատավորի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն

իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

43. Սույն որոշման 41-42-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաքեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքով սահմանված հատուկ կարգավորման համաձայն՝ դատավորի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու պարագայում, երբ այդ որոշման մեջ նշվում է դատավորի անունն ու ազգանունը, հարուցված քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված է բացառապես ՀՀ գլխավոր դատախազը, և նա չի կարող լիազորել այլ դատախազի իր փոխարեն հսկողություն իրականացնել մինչդատական վարույթի նկատմամբ այն դեպքում, երբ դատավորի կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու մասին կայացված որոշման մեջ նշված է դատավորի անունն ու ազգանունը:

44. Վճռաքեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը հիմնված է հետևյալ հանգամանքների վրա՝

ա) դատավորի կարգավիճակի առանձնահատկությունը ենթադրում է դատավորի անձեռնմխելիության ապահովման լրացուցիչ երաշխիքների, այդ թվում՝ մինչդատական վարույթի նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազի հսկողության առկայություն:

բ) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ՀՀ դատական օրենսգրքում հատուկ կարգավորում նախատեսված լինելը:

45. Սույն գործի նյութերից հետևում է, որ դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելուց հետո այդ գործի նկատմամբ հսկողությունն իրականացվել է ոչ թե ՀՀ գլխավոր դատախազի, այլ ուրիշ դատախազի կողմից (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

46. Սույն որոշման 41-44-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 45-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաքեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշվել է դատավորի անունը և ազգանունը, այսինքն՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել: Նշված հանգամանքը համադրելով ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված պահանջի հետ՝ Վճռաքեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն պետք է իրականացնել ՀՀ գլխավոր դատախազը: Հետևաբար, սույն գործով տեղի է ունեցել օրինականության սկզբունքի խախտում, որն արտահայտվել է նրանում, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն է իրականացվել ոչ պատշաճ դատախազի կողմից:

IV. Գատավորի նկատմամբ իրականացվող վարույթի գաղտնիությունը

47. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված չորրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշման հրապարակումը:

48. ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի նիստերը դռնփակ են, բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, երբ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի հրապարակային քննություն (...)»:

ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Վարույթ հարուցող անձը, վարույթին մասնակցած վկաները և այլ անձինք պարտավոր են պահպանել կարգապահական վարույթի գաղտնիությունը: Կարգապահական վարույթի շրջանակներում առաքվող բոլոր փաստաթղթերը պետք է առաքվեն փակ ծրարներով՝ «գաղտնի» դրոշմագրով (...)»:

«Գատավորի կարգավիճակի մասին» 1998 թվականի Եվրոպական խարտիայի 1.1-րդ կետի համաձայն՝ դատավորի կարգավիճակը նշանակում է այնպիսի ձեռնհասության, անկախության և անկողմնակալության ապահովում, որոնք յուրաքանչյուր մարդ իրավաչափորեն ակնկալում է դատական մարմիններից և ամեն մի դատավորից, որին վստահված է իր իրավունքների պաշտպանությունը: Այն բացառում է ցանկացած իրավիճակ և ընթացակարգ, որոնք կարող են սասանել վստահությունն այդ ձեռնհասության, անկախության և անկողմնակալության նկատմամբ:

Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Գատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների» 17-րդ կետի համաձայն՝ իր պարտականությունները կատարելու ընթացքում դատավորի հասցեին ստացված մեղադրանքը կամ զանգատը, համաձայն համապատասխան ընթացակարգի, պետք է անհապաղ և անաչառ քննարկվի: Գատավորն ունի պատասխանի և արդարացի քննարկման իրավունք: Դժգոհությունների քննարկումը, եթե դատավորն այլ խնդրանքով հանդես չի եկել սկզբնական փուլում, պետք է անցկացվի գաղտնի:

49. Վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծության ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու փուլում կայացվող որոշման մեջ դատավորը մատնանշվում է որպես ենթադրյալ հանցանք կատարած անձ, և նշվում են դատավորի անունն ու ազգանունը, գաղտնիության սկզբունքի պահպանումը դառնում է գերակա հանրային շահ, քանի որ դատավորի նկատմամբ քրեական կամ այլ վարույթ իրականացվելու հիմքով դատավորին կարող է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացվել: Արդյունքում, դատավորը փաստացի կա-

րող է զրկվել արդարադատություն իրականացնելու հնարավորությունից, քանի որ գաղտնիության պահանջները չպահպանելու հետևանքով կարող է կասկածի տակ դրվել նրա անաչառությունը, անկախությունը և հեղինակությունը:

50. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում 2011 թվականի հուլիսի 21-ին հրապարակվել է տեղեկություն այն մասին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 314-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լևիկ Պողոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

51. Սույն որոշման 48-49-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 50-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին որոշման հրապարակումն իրավաչափ չի եղել: Այս առումով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը խախտել է դատավորի նկատմամբ իրականացվող վարույթի գաղտնիության վերաբերյալ միջազգային և ներպետական մի շարք դրույթներ (տե՛ս սույն որոշման 48-րդ կետը), քանի որ դատավորի նկատմամբ իրականացվող յուրաքանչյուր, այդ թվում՝ քրեական վարույթ, պետք է լինի գաղտնի, եթե հակառակը չի պահանջում դատավորը:

52. Ինչ վերաբերում է դիմող Լ. Պողոսյանի բողոքի այն պնդումներին, որ ստորադաս դատարանները, գտնելով, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի որոշմամբ խախտվել են իր իրավունքները, պետք է վերացնեին բողոքարկված որոշումը, այլ ոչ թե իր իրավունքների խախտումը վերացնելու պարտականություն սահմանեին, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1-րդ հոդվածին համապատասխան պետք է լրացուցիչ որոշում կայացնեին, ապա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հանգամանորեն քննարկվել են Վերաքննիչ դատարանի դատական ակտում, որում առկա են բավարար հիմնավորումներ ու պատճառաբանություններ՝ նշված փաստարկների վերաբերյալ (տե՛ս նյութեր, էջեր 116-118):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, դրանում առկա հետևությունները հիմնավորված են և պատճառաբանված: Հետևաբար, բերված վճռաբեկ բողոքները պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 29-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 հոկտեմբերի 5-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

72.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0042/01/11
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Համբարձումյան

ԵԿԴ/0042/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

**Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Կ.ԲԱՏԻԿՅԱՆԻ**

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Նարեկ Գևորգի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 25-ի որոշման դեմ մեղադրողի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. Անհայտ անձի կողմից Ազատ Մկրտչյանի և Արամ Մնացականյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքի առթիվ 2010 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևան քաղաքի ԶՎ Կենտրոնականի

քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցել է թիվ 13142210 քրեական գործը:

2010 թվականի օգոստոսի 25-ին Նարեկ Սարգսյանը ձերբակալվել է:

2010 թվականի օգոստոսի 28-ին Ն.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Ն.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. 2011 թվականի մարտի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի դատավճռով Նարեկ Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ն. Սարգսյանի պաշտպանը:

Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի դատավճիռը պատժի մասով փոփոխվել է, Ն.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով: Գատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբեր 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրողը:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունվել:

5. 2011 թվականի դեկտեմբերի 21-ին Ն.Սարգսյանի պաշտպանը վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել՝ խնդրելով ամբողջությամբ մերժել մեղադրողի վճռաբեկ բողոքը: Բողոքի պատասխանում նշվում է, որ մեղադրողի վճռաբեկ բողոքն անհիմն է, չի բխում քրեական գործով ձեռք բերված ապացույցներից, իսկ Ն.Սարգսյանի նկատմամբ նվազագույն պատժաչափ սահմանելը չի հակասում Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներին:

Գործի փաստական հանգամանքները

6. Ամբաստանյալ Նարեկ Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է այն բանի համար, որ 2010 թվականի օգոստոսի 24-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Երևանի Գ.Քոչար փողոցի 21 հաս-

ցեում տեղակայված «Առլեկինո» կարտոկե ակումբի դիմաց վիճաբանել է Ազատ Սկրտչյանի և Արամ Մնացականյանի հետ, որի ընթացքում կյանքին վտանգ սպառնացող, առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ, իր մոտ պահվող սուր ծակող-կտրող գործիքով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջիններիս, մասնավորապես՝ Ն.Սարգսյանը հինգ հարված է հասցրել Ազատ Սկրտչյանին, որին պատճառել է վնասվածքներ՝ որովայնի ծակած-կտրած թափանցող վերքի, կրծքավանդակի ձախ կեսի հետին մակերեսի շրջանի կտրած-ծակած թափանցող վերքի՝ ձախ թոքի ստորին բլթի և ստոծանու մասնակի վնասումով, աջ նախաբազկի կտրած-ծակած վերքի՝ ծղիկային զարկերակի և ջլերի վնասումով, ձախ բազկի կտրած-ծակած վերքի ձևով, իսկ Արամ Մնացականյանին հասցրել է մեկ հարված՝ պատճառելով վնասվածք որովայնի առաջային պատի ծակած-կտրած թափանցող վիրավորման՝ լեղապարկի, բարակ և հաստ աղիների վնասումների ձևով (տե՛ս Քրեական գործ, հատոր 3, 154-155 էջեր):

7. Ն.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատժաչափը Առաջին ատյանի դատարանը հիմնավորել է հետևյալ կերպ. «(...) ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս պատժի չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում նրա կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության բարձր աստիճանը և նրա անձը: Որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում, որ նա առաջին անգամ է դատապարտվում, բնութագրվում է դրական, ինքնակամ է ներկայացել ոստիկանություն և հանցագործությամբ տուժողներին պատճառված գույքային վնասները հատուցվել են: Դատաքննությամբ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրվեցին: (...)» (տե՛ս Քրեական գործ, հատոր 3, 157 էջ):

8. Վերաքննիչ դատարանը, փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ն.Սարգսյանին դատապարտելով 5 տարի ժամկետով ազատազրկման, արձանագրել է. «(...) Ընդհանուր իրավասության դատարանը, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից ելնելով, չի պատճառաբանել, թե պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող նշված հանգամանքների առկայության պայմաններում ինչու չի նշանակում մեղսագրվող հողվածով նախատեսված նվազագույն պատիժը, որը կոնկրետ գործով կհամապատասխանի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներին, ամբաստանյալի ուղղմանը և սոցիալական արդարության վերականգնմանը, ուստի վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել մեղսագրված հողվածով նախատեսված նվազագույն պատիժը՝ հաշվի առնելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, երիտասարդ տարիքը, տարած առողջական հիվանդագին վիճակը՝ ասթենիկ խանգարման ձևով, արարքի կատարման շարժառիթները, տուժողների նախահարձակ լինելու հանգամանքը և նրանց դիրքորոշումը, որ նրանց պատճառված նյութական վնասները հարթված լինելու պայմաններում նրանք հաշտվել են ամբաստանյալի

հետ և խնդրել են նրա նկատմամբ նշանակել ամենամեղմ պատիժը: (...)» (տե՛ս Քրեական գործ, հատոր 3, 236 էջ):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

9. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները և Ն.Սարգսյանի նկատմամբ նշանակել է անարդարացի, ակնհայտ մեղմ պատիժ, որը չի համապատասխանում կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին, բնույթին, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներին և բավարար չէ պատժի նպատակներն ապահովելու համար:

10. Վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր չեն, ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության հանգամանքները վկայում են նրա արարքի և անձի՝ հասարակական վտանգավորության բարձր աստիճանի մասին: Մասնավորապես, քրեական գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալը գրպանում մշտապես պահել է դանակ, որն օգտագործելով՝ տուժողների առողջությանը ծանր վնաս պատճառելու ուղղակի դիտավորությամբ վեց անգամ հարվածել է վերջիններիս մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ կենսականորեն կարևոր օրգաններին: Ընդ որում, հարվածներից երկուսը տեղակայված են եղել տուժող Ա.Սկրոչյանի կրծքավանդակի հետին մակերեսին, այսինքն՝ ամբաստանյալը տուժողին վնասվածք է պատճառել, երբ վերջինս գտնվել է մեջքով դեպի իրեն: Տուժողներին վնասվածք պատճառելուց հետո նա դեպքի վայրից դիմել է փախուստի, չի գոջացել կատարած արարքի համար, տուժողներից ներողություն չի խնդրել:

11. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումը և ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի նշանակած պատժաչափը փոփոխելու՝ Վերաքննիչ դատարանի իրավագործության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք իրավաչափ է Առաջին ատյանի դատարանի կողմից Ն.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատժաչափը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխա-

նում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխել բացառապես այն դեպքում, երբ վերջինս ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ է: Վերոնշյալ դրույթի վերլուծությունից երևում է նաև, որ առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխելիս Վերաքննիչ դատարանը ևս ղեկավարվում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

14. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում, որի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է ղեկավարվի դատարանը պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝

- ա) օրինականությունը,
- բ) արդարությունը,
- գ) պատժի անհատականացումը,
- դ) մարդասիրությունը:

Պատիժ նշանակելու վերոնշյալ սկզբունքները սահմանում են այն հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվում է դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատժի տեսակն ու չափն ընտրելիս: Նշված սկզբունքներից յուրաքանչյուրը՝ որպես առանձին բաղադրամաս, ունի ինքնուրույն նշանակություն և պարտադիր հաշվի է առնվում քրեական պատիժ նշանակելիս: Սկզբունքների ինքնուրույնությունը, սակայն, չի նշանակում, որ դրանք մեկուսացված են մեկը մյուսից, քանի որ միայն համակցության մեջ այդ սկզբունքները կարող են ապահովել օրինական, արդար, անհատականացված և մարդասիրական պատժի նշանակումը:

15. Պատժի նշանակման օրինականության սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Աբրահամյանի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 6-ի

թիվ ՎԲ-63/07, Ռ.Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07, Հ.Հաբեշյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-145/07 և մի շարք այլ որոշումներում:

Ձարգացնելով վերոնշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրինականության սկզբունքի իմաստով՝ պատիժ նշանակելու հիմնական և առաջին պայմանը հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայությունն է: Պատժի կիրառումը միայն հանցանք կատարած անձանց նկատմամբ մի կողմից բացառում է անհիմն և անօրինական դատապարտումը, մյուս կողմից հանգեցնում է հանրորեն վտանգավոր արարք կատարած անձանց մեկուսացմանը հասարակությունից, կանխում է նրանց կողմից նոր հանցագործությունների կատարումը, որով էլ ապահովվում է անձի, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ պատժի նշանակման օրինականության սկզբունքի իմաստով հանցանք կատարած անձի նկատմամբ կարող են կիրառվել պատժի միայն այն տեսակները, որոնք անմիջականորեն նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքով: Պատժի տեսակների սպառիչ ցանկի օրենսդրական սահմանումը նշանակում է, որ դատարանը հանցագործություն կատարած անձի նկատմամբ չի կարող նշանակել այդ ցանկով չնախատեսված պատժի:

16. Պատժի նշանակման արդարության սկզբունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել Կ.Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-201/07, Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09, Գ.Ավետիսյանի և Ա.Հովակիմյանի վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԱԲԳ/0164/01/09 և մի շարք այլ որոշումներում:

Ձարգացնելով վերոնշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար՝ պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արդարության՝ որպես պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է դատապարտյալի, տուժողի և հասարակության վերաբերմունքը նշանակված պատժի նկատմամբ: Ուստի, պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դատարանից պահանջում է ող-

ջամտորեն հաշվի առնել արդարության մասին վերոնշյալ սուբյեկտների կարծիքը, առավել ևս, որ դրանք ձևավորվում են այն նույն հանգամանքների հիման վրա, որոնք դատարանը հաշվի է առնում պատիժ նշանակելիս (հանցագործության՝ հանրորեն վտանգավորությունը, հանցավորի անձը և այլն): Այս կապակցությամբ ՎՃՈՒԱՐԵԿ դատարանն ընդգծում է, որ պատժի նշանակման արդարության սկզբունքը դատարանը պետք է կիրառի պատժի նշանակման մյուս սկզբունքների, ինչպես նաև պատժի նպատակների համատեքստում:

17. Պատժի անհատականացման սկզբունքի իմաստով դատարանի խնդիրն է հանցանք կատարած անձի նկատմամբ կոնկրետ հանցակազմի սանկցիայի սահմաններում նշանակել կոնկրետ պատիժ: Կոնկրետ պատժի նշանակումը դատարանի համար խիստ կարևոր և պատասխանատու խնդիր է, որի լուծման համար մեծ նշանակություն ունի պատժի անհատականացման կարգի և չափանիշների հարցը:

Վերոգրյալի հիման վրա՝ ՎՃՈՒԱՐԵԿ դատարանն արձանագրում է, որ պատժի անհատականացումն անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից:

1) պատժի անհատականացում օրենքում: Վերջինս ենթադրում է ՀՀ քրեական օրենսգրքի նորմերում արտահայտված ընդհանուր դրույթների առկայությունը, որոնք դատարանը պարտավոր է հաշվի առնել հանցանք կատարած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի սանկցիայի շրջանակներում պատիժ նշանակելիս:

2) պատժի անհատականացում դատարանում: Վերջինս ենթադրում է կոնկրետ անձի նկատմամբ պատիժ սահմանելիս ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասերի դրույթների կիրառում՝ հաշվի առնելով հանցավորի անձի առանձնահատկությունները, հանցագործության կատարման հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքը չի բովանդակում բոլոր այն հանգամանքների սպառնիչ ցանկը, որոնք պետք է հաշվի առնվեն դատարանի կողմից կոնկրետ հանցագործության համար պատիժ նշանակելիս: Օրենսգրքը, սակայն, դատարանին տալիս է պատժի անհատականացման ընդհանուր չափանիշներ, որոնց հիման վրա դատարանը կարող է նշանակել արդարության պահանջներին համապատասխանող պատիժ: Նշված չափանիշներն են՝

ա) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ընդհանրապես, կոնկրետ հանցագործության կատարման հանգամանքների տեսանկյունից՝ մասնավորապես,

բ) հանցավորի անձը,

գ) պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

18. Պատժի անհատականացման չափանիշներից առաջինին՝ հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանին ու բնույթին, ՎՃՈՒԱՐԵԿ դատարանն անդրադարձել է *Գ.Մաղաթյանի* վերաբերյալ որոշման մեջ (տե՛ս Գ-ա-

րուշ Նորիկի Մադաթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշումը, կետ 14):

19. Սույն որոշման նախորդ կետում նշված և, համապատասխանաբար, *Գ.Մադաթյանի* վերաբերյալ որոշման մեջ վերլուծված՝ արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը սերտորեն կապված են պատժի անհատականացման երկրորդ չափանիշի՝ հանցավորի անձի հետ: Հ.Հարությունյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Ձարգացնելով մեջբերված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի, դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այս կապակացությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շատ դեպքերում պատժի տեսակի և չափի վրա ազդում են հանցավորի սեռը, տարիքը, առողջական վիճակը:

20. Պատժի անհատականացման երրորդ չափանիշը պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներն են: Վերջիններիս Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Ռ.Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07, Պ.Բայրամյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07, Գ.Հովհաննիսյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09 և մի շարք այլ որոշումներում:

21. Պատժի նշանակման մարդասիրության սկզբունքն ունի երկու կողմ, այն է՝

- 1) մարդասիրություն հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է:

- 2) մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ. դա նշանակում է մարդկային վերաբերմունք նրա անձի նկատմամբ, պատվի և արժանապատվության հարգում, ֆիզիկական և բարոյական տանջանքների բացառում:

Պատիժ նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի մարդասիրության սկզբունքի վերոնշյալ երկու կողմերը:

22. Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված, ինչպես նաև սույն որոշման 14-21-րդ կետերում շարադրված և զարգացված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի նշանակման իրավական շրջանակները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով: Դրա հետ մեկտեղ, սակայն, վերոնշյալ օրենքը դատարանին հնարավորություն է տվել որոշակի սկզբունքների (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը) պահպանմամբ, իր ներքին համոզմանը և իրավագիտակցությանը համապատասխան, ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասերով նախատեսված սահմաններում որոշել պատժի տեսակն ու չափը: Այլ կերպ՝ ուրվագծելով կոնկրետ հանցանքի համար նշանակման ենթակա պատժի առավելագույն և նվազագույն սահմանները՝ ՀՀ քրեական օրենքը դատարանին տվել է այդ շրջանակում հայեցողություն դրսևորելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի գրեթե բոլոր հոդվածների սանկցիաներում ամրագրված վերոնշյալ մոտեցումը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Ուստի, կոնկրետ արարքի և անձի նկատմամբ համընդհանուր քրեական օրենքով նախատեսված սանկցիան կիրառելիս դատարանը պետք է որոշակի հայեցողություն դրսևորի:

Վերոգրյալից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ առանց դատարանի հայեցողության, պատժի անհատականացումն անհնար է:

23. Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ, պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների հայեցողական և ոչ երբեք կամային գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

24. Ինչպես նշվել է սույն որոշման 13-րդ կետում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վերաքննիչ դատարանը կարող է փոփոխել առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը, եթե այն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով:

Սույն որոշման 12-24-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել առաջին ատյանի դատարանի դատական ակտը հետևյալ դեպքերում.

1) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս չեն պահպանվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները,

2) առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ հանգամանք(ներ)ը հաշվի չառնելը հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս վերոնշյալ պահանջների չպահպանման վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված: Այլ կերպ ասած՝ պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հիմքով առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե պատժի նշանակման հատկապես որ սկզբունքը կամ սկզբունքները չեն պահպանվել, հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել և արդյոք այդ հանգամանքները հաշվի չառնելն է հանգեցրել անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այսինքն՝ եթե վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, պետք է պատճառաբանի, թե ինչու է արտահայտվել պատժի խստության կամ մեղմության ակնհայտությունը:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Ն.Սարգսյանին դատապարտել է 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկման՝ հաշվի առնելով նրա կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության բարձր աստիճանը, ինչպես նաև նրա անձը: Որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ նա առաջին անգամ է դատապարտվում, բնութագրվում է դրական, ինքնակամ է ներկայացել ոստիկանություն, ինչպես նաև այն, որ հանցագործությամբ տուժողներին պատճառված գույքային վնասները հատուցվել են (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքի վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իր հայեցողության շրջանակներում ղեկավարվելով պատժի նշանակման օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքներով, հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, հանցավորի ան-

ձը բնութագրող տվյալները, պատիժը մեղմացնող հանգամանքները, ամբաստանյալին դատապարտել է 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկման:

Փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ն.Սարգսյանին դատապարտելով 5 տարի ժամկետով ազատազրկման՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը չի պատճառաբանել, թե պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող նշված հանգամանքների առկայության պայմաններում ինչու չի նշանակում մեղմագրվող հողվածով նախատեսված նվազագույն պատիժը, որը կոնկրետ գործով կհամապատասխանի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներին, ամբաստանյալի ուղղմանը և սոցիալական արդարության վերականգնմանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը՝ առանց անդրադառնալու դրա անարդար, այսինքն՝ ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հարցին:

26. Սույն որոշման 12-24-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 25-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ամբաստանյալի նկատմամբ նշանակելով հողվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 11-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքների խախտում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված որոշման կայացման:

27. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա վերաքննիչ դատարանի որոշման բեկանման հիմք են:

28. Միաժամանակ, գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալին դատապարտելով ազատազրկման 6 տարի ժամկետով, դեկավարվել է օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքներով, հաշվի է առել հանցագործության ծանրությունը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժը մեղմացնող հանգամանքները և օրենքով նախատեսված հայցողության շրջանակներում տվյալ հողվածի սանկցիայի սահմաններում նշանակել արդարացի պատիժ:

29. Զանի որ գործի նյութերով հերքվում են Վերաքննիչ դատարանի որոշման

մեջ նշված՝ Ն.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը նշանակելու փաստարկները, և հաստատվում՝ պատիժ նշանակելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Նարեկ Գևորգի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

73.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0058/01/10
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Ս.Համբարձումյան

ԵԷԴ/0058/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ**

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

**Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ.ԶՈՒՌՆԱՉՅԱՆԻ**

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման դեմ մեղադրող Ա.Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. Քրեական գործը հարուցվել է 2010 թվականի հունվարի 20-ին:

Նախաքննության մարմնի 2010 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Սիրակ Շավարշի Սաքանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի մայիսի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի դատավճռով Ս.Սաքանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

Մեղադրող Ա.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, բեկանել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 9-ի դատավճիռը և գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

3. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի հունիսի 9-ի դատավճռով Ս.Սաքանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի հիման վրա՝ դատավճիռների համակցությամբ, նոր նշանակված պատժին լրիվ գումարվել է Երևանի քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասը, և Ս.Սաքանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 1 ամիս 7 օր ժամկետով ու տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

4. Մեղադրող Ա.Ստեփանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 9-ի դատավճիռը:

5. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել մեղադրող Ա.Ստեփանյանը:

2011 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրող Ա.Ստեփանյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ս.Սաքանյանի պաշտպան Վ.Զուռնաչյանը՝ խնդրելով մեղադրող Ա.Ստեփանյանի վճռաբեկ բողոքը վերադարձնել:

2. Գործի փաստական հանգամանքները

6. Նախաքննության մարմինը Ս.Սաքանյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ

քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2010 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում, վիճաբանության ընթացքում, իր մոտ եղած դանակով դիտավորությամբ հարվածել է դատապարտյալ Հարություն Նարզիզյանի որովայնի շրջանին և վերջինիս առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, էջ 109-112):

7. Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ Ս.Սաքանյանի կողմից Հ.Նարզիզյանին մարմնական վնասվածքը դիտավորությամբ պատճառած լինելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց գործով ձեռք չի բերվել, գտել է, որ Ս.Սաքանյանի արարքում առկա է անզգուշությամբ մարմնական վնասվածք պատճառելու հանցակազմը, որպիսի արարքի համար էլ նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:

Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա են հետևյալ ձևակերպումները. «(...) մեղքի ձևի գնահատումը իրավական որակման խնդիր է, այլ ոչ թե դատաբժշկական փորձագետի գնահատման, բացի այդ, նման եզրակացությունը դուրս է նաև վերջինիս իրավասության սահմաններից:

(...) նախաքննության մարմինը մեղադրանքի հիմքում դրել է նաև ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի աշխատակից Մամիկոն Աղամյանի ցուցմունքն այն մասին, որ դատապարտյալներ Սիրակ Սաքանյանը և Հարություն Նարզիզյանը վիճաբանել են, սակայն պատճառներն ինքը պարզել չի կարողացել: Վկան նույն հանգամանքը պնդեց նաև դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներով, որևէ կերպ չմատնանշելով իր հայտնած տեղեկության ստացման աղբյուրը, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից: (...)

Նախաքննության մարմինը ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի հաղորդման բովանդակության մեջ պարունակվող՝ «ըստ ստացված տեղեկությունների՝ դատապարտյալներ Սիրակ Սաքանյանի և Հարություն Նարզիզյանի միջև միջադեպը տեղի է ունեցել կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճի և պարտք ու պահանջի հետևանքով...» արտահայտությունը «օպերատիվ տեղեկատվություն» դիտելով դրել է մեղադրանքի հիմքում: Սակայն, միևնույն ժամանակ, նման տեղեկատվության տիրապետման պայմաններում նախաքննության մարմինը չի պարզել և չի հիմնավորել կենցաղային հարցերի, պարտք ու պահանջի կամ վեճի բնույթը և, առհասարակ, դրա առկայության կամ բացակայության փաստը, կամ ընդհանրապես դրա իսկությունը: Հետևաբար՝ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 126-րդ հոդվածի հիմքով նշված հաղորդումը որպես մեղադրանքը հիմնավորող ապացույց դատարանի կողմից չի կարող գնահատվել: (...)

Նախաքննության մարմինը որպես ապացույց է դիտել նաև քրեակատարողական հիմնարկի բուժմասի պետ Վ.Մանուչարյանի կողմից տրված տեղեկանքն այն մասին, որ դատապարտյալ Սիրակ Սաքանյանը չի կարող ցուցմունք տալ «իրավիճակով պայմանավորված ներտոնիկ վիճակ» ախտորոշման պատճառով: Նախաքննության մարմինը չի մեկնաբանել, իսկ դատարանի համար անհասկանալի է, թե ինչ ապացուցողական նշանակություն ունի կամ կարող է ունենալ նշված ապացույցը հանցավորի արարքը հիմնավորելու հարցում: (...)

Համաձայն ապացույց հանդիսացող մյուս փաստաթղթի՝ բժշկական ամբուլատոր քարտի՝ Սիրակ Սաքանյանի պարանոցի ձախ շրջանում դիտվում են քերձվածք՝ 7 սմ երկարությամբ և սալջարդի հետքեր: Ըստ ամբաստանյալի հայտարարության, վերը նշված վնասվածքը պատճառվել է վայր ընկնելու հետևանքով: Վերը նշված փաստի շուրջ ամբաստանյալ Սիրակ Սաքանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ վնասվածքը ստացել է դեպքի օրը պապի հուղարկավորությունից գալու ճանապարհին ավտոմեքենան խափանվելու պատճառով հրելու ժամանակ, սայթաքելու ու վայր ընկնելու հետևանքով: Սակայն նախաքննության մարմինը, նման տեղեկատվության տիրապետելով, սույն հանգամանքը պարզաբանելուն և վնասվածքները համապատասխան մասնագիտական հետազոտության ենթարկելուն ուղղված որևէ միջոցառում չի իրականացրել: (...)

Վերը նշված հանգամանքները նախաքննության մարմնի կողմից առանց որևէ հավաստիության և հիմնավորման դիտվել են որպես ապացույցներ և որպես ենթադրվող հետևություններ դրվել են ամբաստանյալ Սիրակ Սաքանյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորման հիմքում» (տե՛ս Քրեական գործ, հատոր 3, էջ 81-85):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով:

9. Նյութական իրավունքի խախտման կապակցությամբ բողոքի հեղինակը նշել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմնի ձեռք բերած ապացույցները բավարար են եղել Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով որակելու համար, սակայն դատարանն արձանագրել է, որ Ս.Սաքանյանի կողմից Հ.Նարգիզյանին մարմնական վնասվածքը դիտավորությամբ պատճառած լինելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց գործով ձեռք չի բերվել:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով վերաորակելով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում:

10. Դատավարական իրավունքի խախտման կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ժխտողական վերաբերմունք է դրսևորել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալների նկատմամբ: Մինչդեռ, ըստ բողոք բերած անձի, քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն Վերաքննիչ դատարանը կարող էր դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Արարքի քրեաիրավական որակումը և ապացուցումը

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կողմից իրավաչափ է արդյոք Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելը և արդյո՞ք գործում առկա ապացույցները բավարար են Ս.Սաքանյանի արարքը վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավորված համարելու համար:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունը ճանաչողական գործունեություն է, որն ուղղված է նախկինում տեղի ունեցած դեպքի հանգամանքների հետազոտմանը և վերականգմանը: Քրեադատավարական ճանաչողության բովանդակության և կառուցվածքի բացահայտումը սերտորեն կապված է ապացուցում հասկացության հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Ապացուցման նպատակը կազմող ապացուցման ենթակա հանգամանքների համակարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում, որի համաձայն՝ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող

կամ խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

14. Նշված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:

15. Ապացուցման առարկա կամ ապացուցման ենթակա հանգամանքներ հասկացության հետ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կապում է «ապացույցների բավարարություն» հասկացությունը:

Այս կապակցությամբ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրա-

քանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,
- 2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,
- 3) անմեղության կանխավարկած:

16. Ապացույցների բավարարությունը որոշելու առաջին չափանիշը վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքն է: Վերջինիս Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ամխազելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը: (...)» (տես Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶՐԳ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

Ջարգացնելով վկայակոչված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներքին համոզմունքը վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն է այն մասին, որ առկա ապացույցները բավարար են գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ հանգամանքները բացահայտված դիտելու համար:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

- 1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում:

18. Ապացույցների բավարարությունը որոշելու երկրորդ չափանիշը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջն է:

Քրեական վարույթի ընթացքում ընդունվում են բազմաթիվ դատավարական որոշումներ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների ապացուցվածության տարբեր աստիճաններ: Օրինակ, քրեական գործ հարուցելու կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշման համար բավարար է մաս այդ հանգամանքների ենթադրյալ ապացուցվածությունը, մինչդեռ մեղադրական դատավճռի դեպքում պահանջվում է այդ հանգամանքների հավաստի ապացուցվածություն:

Ապացույցների բավարարությունը այս տեսանկյունից ընդգծում է ապացուցողական գործունեության շրջանակները, որն ապահովում է այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքների վերաբերյալ ապացուցման սուբյեկտի իմացության չափը:

19. Ապացույցների բավարարությունը որոշելու երրորդ չափանիշը անմեղության կանխավարկածի սկզբունքն է (անմեղության կանխավարկածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ-0044/01/11 որոշման 14-րդ կետում):

20. Հիմք ընդունելով սույն որոշման 12-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացուցումը քրեադատավարական գործունեության միջուկն է, առանց որի հնարավոր չէ քրեական գործն ըստ էության լուծել և կայացնել այնպիսի դատական ակտ, որը կպարունակի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում ամրագրված՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերի պատասխանները:

21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է մաս, որ ապացուցումը սերտորեն կապված է «հանցագործությունների որակում» հասկացության հետ. դրանք հարաբերակցվում են որպես գործունեություն և արդյունք: Հանցագործությունների որակումը ենթադրում է գործով բացահայտված հանգամանքների հետազոտություն, օրենքի իմաստի բացահայտում, կոնկրետ նորմի ընտրություն, այդ նորմում ամրագրված հատկանիշների հարադրում բացահայտված փաստերի հետ և որպես արդյունք համապատասխան դատավարական փաստաթղթերում հետևության ձևավորում: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 12-րդ կետում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել սույն գործով ապացուցման առարկան, մասնավորապես տեղի ունեցած դեպքը և հանգա-

մանքները, Ս.Սաքանյանի առնչությունը դեպքին և այդ պարզված հանգամանքներին համապատասխան քրեաիրավական գնահատական տալ Ս.Սաքանյանի արարքին:

22. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում սահմանած արարքի քրեաիրավական որակման ընդհանուր կանոնները, Վճռաբեկ դատարանը, մինչև ապացուցման առարկայի ապացուցվածության հարցին անդրադառնալը նպատակահարմար է գտնում վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 120-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելու համար, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությանը կամ թունամոլությանը հիվանդացում:

ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում անզգուշությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

Վերը նշված նորմերի վերլուծությունից երևում է, որ այս երկու հանցակազմերի տարբերությունը մեղքի ձևի մեջ է. եթե ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է անզգուշությամբ, որը կարող է դրսևորվել ինչպես ինքնավստահության, այնպես էլ անփութության ձևով:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածից վերադրակել է 120-րդ հոդվածով՝ պատճառաբանելով, որ Ս.Սաքանյանի կողմից Հ.Նարզիզյանին մարմնական վնասվածքը դիտավորությամբ պատճառած լինելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց գործով ձեռք չի բերվել:

Առաջին ատյանի դատարանը, Ս.Սաքանյանի արարքը վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք է ընդունել տուժող Հարություն Նարզիզյանի, ամբաստանյալ Սիրակ Սաքանյանի, վկաներ Էդուարդ Չիլոյանի և Կարեն Կարապետյանի ցուցմունքներն այն մասին, որ էլեկտրական սալիկը կարճ միացում է տվել, Հ.Նարզիզյանը նստած տեղից փորձել է վագել էլեկտրական

սալիկն անջատելու, այդ ժամանակ Ս.Սաքանյանը, որը նստած դանակով հաց կտրելուց է եղել, կտրուկ շրջվել է դեպի Հ.Նարգիզյանի կողմը, դրա հետևանքով նրանք բախվել են և Ս.Սաքանյանի ձեռքի դանակը վնասել է Հ.Նարգիզյանին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

24. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 12-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտել է գործով ձեռք բերված ապացույցները և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իր ներքին համոզմամբ հանգել է ճիշտ հետևության, որ ձեռք բերված ապացույցներով Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սխալ է որակված, քանի որ դրանցով չի հաստատվում մեղադրանքի կողմի ներկայացված դեպքի նկարագիրը և դրան համապատասխան մեղքի դիտավորյալ ձևը, այլ հաստատվում է սույն որոշման նախորդ կետում ներկայացված դեպքը և դրան համապատասխան մեղքի անգգույշ ձևը, ուստի, Ս.Սաքանյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով վերատրակելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը հիմնավորված են:

25. Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս արձանագրելու, որ դատական սխալի առկայության մասին բողոքաբերի հետևությունը գործի նյութերից չի բխում և իրավաչափ չէ, ավելին, բողոքաբերն ընդամենը բողոքում որոշակի կասկածներ է արտահայտում Ս.Սաքանյանի արարքի որակման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների նկատմամբ, առանց որևէ ուղղակի ապացույց վկայակոչելու:

Անդրադառնալով ապացույցների բովանդակության, թույլատրելիության և վերաբերելիության հարցերին՝ Վճռաբեկ դատարանը *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ՝ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողու-

թյունների, իրադարձությունների վերաբերյալ,

բ) այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային,

գ) ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով: (...)» (տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԲԳ/0632/01/08 որոշման 13-րդ կետը):

26. Նախորդ կետում մեջբերված դիրքորոշումները կիրառելով սույն գործի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազի կողմից վկայակոչված փաստական տվյալներն ընդամենը կարծիքներ են, գնահատողական դատողություններ և որևէ կոնկրետ փաստերի, գործողությունների վերաբերյալ ուղղակի վկայող փաստական տվյալներ չեն: Դրանք չեն վերաբերում ապացուցման առարկայի մեջ մտնող որևէ հանգամանքին. չեն հաստատում կամ հերքում որևէ հանգամանք: Դրանց որոշ մասը ձեռք չի բերվել քրեադատավարական օրենքով սահմանված աղբյուրներից, չեն ամրագրված դատավարական օրենքով սահմանված կարգով, ուստի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

27. Հիմք ընդունելով սույն որոշմամբ բերված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ քրեական հետապնդում իրականացնող մարմնի ձեռք բերած ապացույցները բավարար են եղել Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով որակելու համար, և որ Ս.Սաքանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածով վերաորակելով՝ ստարադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

II. Ապացուցման պարտականությունը

28. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք դատարանը պարտավոր էր սույն գործով քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել քրեական դատավարությունում դատարանի կարգավիճակի և ապացուցման պարտականության հարցերը:

29. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմ-

նակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

Մասնավորեցնելով Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ:

Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...):»:

30. Շարադրված դրույթների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություն անել այն մասին, որ արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է, որը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն:

Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագոր-

ծումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը» (տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ-0044/01/11 որոշման 13-րդ կետը):

31. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը դատական քննության փուլում ապացուցման գործունեության հիմքում դրել է ոչ թե յուրաքանչյուր քրեական գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտադիր պայմանը, այլ մրցակցության և կողմերի իրավահավասարության ապահովման պահանջը, որը համարվում է արդարացի դատական ակտ կայացնելու գլխավոր պայմանը: Միաժամանակ արձանագրում է, որ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը, ինչպես նաև այն, որ դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցակցությունը և ապացուցման գործընթացում դատարանի ակտիվությունը չեն հակասում միմյանց, սակայն կարևոր է հստակ որոշել դատական ակտիվության սահմանները և նպատակը, որպեսզի թույլ չտրվի դատարանին ներքաշվելու մեղադրանքի կամ պաշտպանության կողմին օգնելու, մեղադրյալի մեղքի ապացուցման կամ հերքման գործին:

32. Սույն որոշման 30-31-րդ կետերում շարադրված վերլուծության ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացուցման գործունեության մեջ դատարանի ակտիվությունը նրա համար է, որպեսզի

- ա) ապահովվի կողմերի իրական հավասարությունը և մրցակցությունը,
- բ) կանխվեն անձի իրավունքների ու օրինական շահերի խախտումները կամ անհիմն սահմանափակումները
- գ) դատարանը կայացնի հիմնավորված, օրինական և արդարացի դատական ակտ:

Վերոնշյալից հետևում է, որ դատարանը չի կրում մեղադրանքը ապացուցելու կամ քրեական հետապնդման մարմնի թույլ տված թերացումները վերացնելու պարտականություն: Ապացուցմանը մասնակցելը դատարանի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ընդ որում, դատարանն ինքն է որոշում նոր ապացույց հավաքելու անհրաժեշտության հարցը, բնականաբար, նպատակ չհետապնդելով աջակցելու մեղադրանքը ապացուցելուն: Մեղադրանքը ապացուցելու պարտականությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ և 124-րդ հոդվածների ուժով կրում են քրեական հետապնդման մարմինները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը նույնպես ելնում է այն գաղափարից, որ ապացուցման պարտականությունը դրված է մեղադրանքի կողմի վրա և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի (տե՛ս Barbera, Messegue and Jabardo v. Spain, 1988 թվականի դեկտեմբերի

6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետ 77):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պարտավոր է դատական ճշմարտությունը պարզելու նպատակով կողմերի համար ապահովել հավասար պայմաններ՝ միաժամանակ բացառելով անձի իրավունքների և օրինական շահերի խախտումները կամ անհիմն սահմանափակումները: Այս առումով, դատարանը սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ հավաքելու իր իրավունքը կարող է իրացնել միայն այն ժամանակ, երբ դատաքննության ընթացքում հետազոտվել են բոլոր ապացույցները, և կողմերը նոր ապացույցներ ձեռք բերելու միջնորդություններ չեն ներկայացրել և այն պայմանով, որ հետազոտված ապացույցները դատարանին օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս կայացնել հիմնավորված, պատճառաբանված և արդարացի դատական ակտ:

33. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով բողոքաբերի փաստարկն այն մասին, որ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն դատարանը կարող էր դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը պարտավոր չէին սույն գործով քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները: Հատկապես այն դեպքում, երբ գործում առկա ապացույցները բավարար են եղել հիմնավորված, պատճառաբանված և օրինական դատական ակտ կայացնելու համար: Հետևաբար, բողոքաբերի փաստարկը հիմնավոր չէ:

34. Սույն որոշման 12-33-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում ստորադաս դատարանների դատական ակտերը օրինական, հիմնավորված և պատճառաբանված են, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի, վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

74.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ Ա-62ա/2006
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան

ՎԲ-16/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն.ՈՇՏՈՒՆՈՒ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Արայի Արծրունու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ մաս՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Նարինե Ռշտունու վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով Արսեն Արայի Արծրունին մեղավոր է ճանաչվել 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդված-

ներով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով և դատապարտվել՝ 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, նույն օրենսգրքի 17-100-րդ հոդվածով՝ 12 տարի ժամկետով ազատազրկման, նույն օրենսգրքի 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով՝ մահապատժի:

1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի հիման վրա՝ նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժի մեջ կլանելու սկզբունքով Ա.Արծրունու նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել բացառիկ պատժամիջոց՝ մահապատժի:

2. 2006 թվականի հուլիսի 31-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ վերոհիշյալ դատավճիռը վերանայելու և այն 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու խնդրանքով:

Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի օգոստոսի 8-ին որոշել է. «Արսեն Արայի Արծրունու կողմից կատարած հանցավոր արարքները համապատասխանեցնել 2003թ. ապրիլի 18-ին ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 222 հոդվածի 1-ին մասին, 38-104 հոդվածի 1-ին մասին, 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15 կետերին» (տե՛ս Առաջին ատյանի դատարանում կազմված նյութեր, էջ 4):

3. 2011 թվականի օգոստոսի 22-ին դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Չտունին վերաքննության կարգով բողոքարկել է Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը՝ խնդրելով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերը փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով, քանի որ գործը քննած դատավորի անփութության պատճառով հիշյալ որոշման մեջ տեղ է գտել տեխնիկական սխալ, և արդյունքում խախտվել են դատապարտյալ Ա.Արծրունու հիմնարար իրավունքները:

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Չտունու վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Արծրունու պաշտպան Ն.Ռ.Չտունին բերել է վճռաբեկ բողոք:

Փաստարան Ն.Ռ.Չտունու վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

5. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ արձանագրել է, որ. «(...) վիճարկվող դատական ակտը չի կարող դիտվել վերջնական, ուստի բողոքի ընթացքը պետք է լուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

379-րդ հոդվածի սահմանած սկզբունքներով»:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ և 381-րդ հոդվածի 2-րդ մասերը՝ Վերաքննիչ դատարանը որոշել է «Գատապարտյալ Արսեն Արայի Արծրունու ներկայացուցիչ Նարինե Ռշտունու վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառով» (տե՛ս Վերաքննիչ դատարանում կազմված նյութեր, էջ 1-2):

6. Վերաքննիչ դատարանից ստացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանում բացակայում է Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը: Նյութերում չկա նաև հիշյալ որոշումը և դրա վերաբերյալ նյութերը Առաջին ատյանի դատարանից պահանջելու վերաբերյալ որևէ ապացույց:

7. Փաստաբան Ն.Ռշտունին Վճռաբեկ դատարանի դատական նիստում հայտարարեց, որ դատապարտյալ Ա.Արծրունու կատարած արարքի քրեաիրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցը դեռևս լուծված չէ, իսկ համապատասխանեցման վերաբերյալ դիմումը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (տե՛ս Վճռաբեկ դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լագերային կրիչը):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

8. Վճռաբեկ բողոք բերած անձը նշել է, որ իր բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է այն բացառիկ դեպքը, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի պատճառով դատապարտյալ Ա.Արծրունին 2011 թվականի մայիսի 23-ից պատիժ է կրում այն հանցագործության համար, որի համար նա չի դատապարտվել ՀՀ Գերագույն դատարանի դատավճռով:

Ըստ բողոք բերած անձի, դատապարտյալ Ա.Արծրունուն քրեակատարողական հիմնարկում պահելու հիմք է հանդիսանում ոչ թե նրա նկատմամբ ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճիռը, այլ այդ դատավճիռը վերանայելու մասին Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի սխալ որոշումը: Վերաքննիչ դատարանը, սակայն, Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը չի դիտել գործն ըստ էության լուծող դատական ակտ, այն թողել է առանց քննության՝ չվերացնելով Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը և թույլ տալով ՀՀ Սահմանադրության 16-րդ և 22-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքներ

րի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներով, ինչպես նաև հիշյալ կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածով ամրագրված հիմնարար իրավունքների խախտումներ:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է վերացնել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված ու պատճառաբանված է արդյոք սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից 2006 թվականի օգոստոսի 8-ին կայացված որոշման դեմ բերված բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 101-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են հանդիսանում առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Համաձայն «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2003 թվականի ապրիլի 29-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած, այդ թվում՝ պատիժ կրող ... անձանց վիճակը, դատարանների դատավճիռները և քրեաիրավական ներգործության այլ միջոցներ կիրառելու վերաբերյալ դատական ակտերը ենթակա են վերանայման՝ ... : Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատժից ազատելը, պատիժը մեղմացնելը, հանցանք կատարած անձի վիճակը բարելավելը, սույն հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերով նախատեսված դեպքերում իրականացվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածներով նախատեսված կարգով:

Այսպիսով, վերոնշյալ նորմերի տառացի մեկնաբանությունից հետևում է,

անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելը, նրան պատժից ազատելը, պատիժը մեղմացնելը և վիճակն այլ կերպ բարելավելն իրականացվում է ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերի համաձայն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանք կատարած անձի վիճակը նոր քրեական օրենքի ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճիռն վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեաիրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար, այդ որոշումը ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ և այն ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Արծրունին ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1996 թվականի դեկտեմբերի 10-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ, 17-100-րդ հոդվածներով, 17-99-րդ հոդվածի 8-րդ կետով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Նշված դատավճիռը 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 2006 թվականի հուլիսի 31-ին դիմել է Առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի օգոստոսի 8-ին կայացված որոշմամբ Ա.Արծրունու արարքները համապատասխանեցրել է 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մասին, 38-104-րդ հոդվածի 1-ին մասին, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերին (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ դրանում Ա.Արծրունուն մեղաազրված արարքները տարբերվում են ՀՀ Գերագույն դատարանի դատավճռով Ա.Արծրունուն մեղաազրված արարքներից: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ վկայակոչված է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը («Երկու կամ ավելի անձանց սպանություն»), որը ՀՀ Գերագույն դատարանի դատավճռի մեջ առկա չի եղել:

Նշված հանգամանքը հիմք ընդունելով՝ Ա.Արծրունու պաշտպանը վերաքննության կարգով բողոքարկել է Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը և խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետերը փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով, քանի որ գործը քննած դատավորի անփութության պատճառով հիշյալ որոշման մեջ տեղ է գտել տեխնիկական սխալ, և արդյունքում խախտվել են դատապարտյալ Ա.Արծրունու հիմնարար իրավունքները (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ այն ենթակա չէ լուծման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3761-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա, քանի որ վիճարկվող որոշումը վերջնական դատական ակտ չի հանդիսանում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

13. Սույն որոշման 10-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 11-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումն անհրաժեշտ էր դիտել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ և դրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3761-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից 2006 թվականի օգոստոսի 8-ին կայացված որոշման դեմ բերված բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված ու պատճառաբանված չէ:

14. Բացի այդ, սույն գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը փաստաբան Ն.Ռ.Նտունու վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացրել է Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշման և դրան առնչվող նյութերի բացակայության պայմաններում: Վերաքննիչ դատարանից ստացված նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ դրանում բացակայում է Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 8-ի որոշումը: Բացակայում է նաև հիշյալ որոշումը և դրա վերաբերյալ նյութերն Առաջին ատյանի դատարանից պահանջելու վերաբերյալ որևէ ապացույց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման 10-14-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի, իսկ Վերաքննիչ դատարանը՝ դատավարական իրավունքի խախտում, որոնք իրենց բնությամբ էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանելու համար:

16. Նկատի ունենալով, որ դատապարտյալ Ա.Արծրունու կատարած արարքի քրեաիրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցը դեռևս լուծված չէ, իսկ համապատասխանեցման վերաբերյալ դիմումը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավական պահանջից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով

75.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵԷԴ/0168/01/10
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Դանիելյան

ԵԷԴ/0168/01/10

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ մեղադրող՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ՄԿՐՏՉՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արարատ Վազգենի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ մեղադրող Ս.Սկրտչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հուլիսի 16-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդ-

վածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12125210 քրեական գործը՝ Միհրան Գրիգորյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ:

2010 թվականի հուլիսի 22-ին Արարատ Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Բաղդասարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ Ա.Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նոր մեղադրանք է առաջադրվել:

2010 թվականի դեկտեմբերի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի դատավճռով Ա.Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ՝ Ա.Բաղդասարյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 6-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ս.Սկրտչյանը:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար.

Ա.Բաղդասարյանի հոր՝ Վազգեն Սարգսյանի և վերջինիս քենակալ Միհրան

Գրիգորյանի միջև 2010 թվականի հուլիսի 15-ին հեռախոսային խոսակցության ժամանակ տեղի ունեցած վիճաբանության հետ կապված հարցերը պարզաբանելու նպատակով Ա.Բաղդասարյանի եղբայրը՝ Սերգեյ Բաղդասարյանը և Մ.Գրիգորյանը պայմանավորվել են հանդիպել Երևանի Նոր Արեշ 50 փողոցի 8-րդ տան դիմաց գտնվող «Սառնաղբյուր» սրճարան-գարեջրատան դիմաց: Պայմանավորվածության համաձայն՝ ժամը 23:30-ի սահմաններում Մ.Գրիգորյանն ու Ա.Բաղդասարյանն իրենց մեկական ընկերների հետ ավտոմեքենաներով գնացել են նշված վայր: Մ.Գրիգորյանն ու Ա.Բաղդասարյանը քննարկել են հիշյալ հեռախոսային խոսակցության հանգամանքները, հասկացել իրար և պայմանավորվել են գնալ Բաղդասարյանների տուն: Հեռանալով Ա.Բաղդասարյանից՝ Մ.Գրիգորյանը գնացել է դեպի «Սառը ջուր» ցայտաղբյուրը՝ ջուր խմելու:

Նույն հեռախոսային խոսակցության պատճառով, Մ.Գրիգորյանին սպանելու նպատակով, քննությանը չպարզված ավտոմեքենայով «Սառնաղբյուր» սրճարան-գարեջրատան դիմացի հատված է գնացել նաև Ա.Բաղդասարյանը՝ իր հետ վերցնելով հրազենային զնդակով լիցքավորված, իրեն պատկանող «ՉԿի-34ԺՀ» տեսակի 12 մմ տրամաչափի երկփողանի որսորդական հրացանը: Հասնելով դեպքի վայր և իջնելով ավտոմեքենայից՝ Ա.Բաղդասարյանը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, այն է՝ մոտակայքում գտնվող բազմաթիվ մարդկանց կյանքի համար իրական վտանգի պայմաններում, Մ.Գրիգորյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, հրացանով շուրջ 4,5 մետր հեռավորությունից կրակել է նրա վրա՝ պատճառելով որովայնի աջ կեսի հրազենային թափանցող, միջանցիկ վիրավորման՝ հաստ աղու աղեզալարների բազմաթիվ վնասումներով, կոնքի ոսկրերի կոտրվածքների ձևով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Ա.Բաղդասարյանը սպանությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ անմիջապես հավաքվել են մարդիկ, Մ.Բաղդասարյանը տուժողին անհապաղ տեղափոխել է հիվանդանոց, և բժշկական շտապ միջամտության շնորհիվ Մ.Գրիգորյանի կյանքը փրկվել է:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Այսպիսով, դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և բոլոր ապացույցների՝ միմյանց հետ համադրելու և դրանք վերաբերելիության և թույլատրելիության սահմաններում գնահատելու արդյունքում գտնում է, որ գործով որևէ ապացույց ձեռք չի բերվել, որը կհիմնավորեր ամբաստանյալ Արարատ Բաղդասարյանի կողմից տուժող Միհրան Գրիգորյանի նկատմամբ ուղղակի դիտավորությամբ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ կատարելու փաստը: Գործի հանգամանքները և ձեռք բերված ապացույցները թույլ են տալիս դատարանին հանգել այն հետևության, որ 2010թ. հուլիսի 15-ին Միհրան Յուրիկի Գրիգորյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ընթացքում ծագած վիճաբանության պատճառով Արարատ Բաղդասարյանը, իմանալով, որ Միհրան

Գրիգորյանն իր եղբորը հանդիպելու նպատակով գնացել է «Սառը ջրեր» կոչվող վայր, վերցրել է իրեն պատկանող «ՁԿի-34ԺՀ» տեսակի 12 տրամաչափի 28036 գործարանային համարի երկփողանի որսորդական լիցքավորված հրացանը և գնացել է այնտեղ, որտեղ էլ «Սառնաղբյուր» սրճարան-գարեջրատան մոտակայքում տեսնելով Սիիրան Գրիգորյանին՝ հրացանով շուրջ 4,5մ հեռավորությունից դիտավորությամբ կրակել է նրա վրա՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (...):

Վերոգրյալի հիման վրա դատարանը գտնում է, որ Արարատ Բաղդասարյանի գործողությունը պետք է որակել որպես տուժող Սիիրան Գրիգորյանի առողջությանը դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք պատճառելու հանցակազմով և նրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով որակված արարքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասով, որին համապատասխան էլ նրան պետք է ենթարկել քրեական պատասխանատվության (...):» (տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 76):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է. «(...) Քննության առնելով ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ ձեռք բերված ապացույցներն իրենց համակցության մեջ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ քրեական գործով հաստատված հանգամանքների նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանը ճիշտ է կիրառել քրեական օրենքը, այդ փաստական հանգամանքները համապատասխանում են ամբաստանյալ Արարատ Բաղդասարյանի կողմից ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի հատկանիշներին (...):» (տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 148):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանները ճիշտ չեն գնահատել դատաքննությամբ հետազոտված ապացույցները, սխալ են կիրառել քրեական օրենքը, թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտում: Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի մեղադրանքը սպանության փորձից վերադրակելով ըստ հետևանքի՝ դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի խախտում:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքի հեղինակը շարադրել և վերլուծել է սույն գործի փաստական հանգամանքները, Առաջին ատյանի դատարանի հետևությունները, այնուհետև եզրակացություն արել առ այն, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հիմնավորված է Ա.Բաղդասարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցանքի կատարումը, ուստի նա պետք է դատապարտվեր ծանրա-

ցուցիչ հանգամանքներում սպանության փորձ կատարելու համար:

9. Բողոքի հեղինակն անդրադարձել է նաև հրազենը ներկայացնելու և առգրավելու մասին 2010 թվականի հուլիսի 16-ի արձանագրությունը որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշմանը՝ փաստարկելով, որ դատարանի հետևություններն այս առումով նույնպես անհիմն են:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (սպանություն) և 112-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել) նախատեսված հանցակազմերի մեկնաբանման կապակցությամբ: Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քրեաիրավական վերլուծության ենթարկել վերոնշյալ հանցակազմերը՝ նպատակ ունենալով դրանցով արգելված արարքների համար քրեական պատասխանատվության ոլորտում ապահովել օրենքի միատեսակ կիրառություն:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի արարքում սպանության փորձի հատկանիշների բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպանության, այսինքն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելու համար, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում:

14. Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծության հիման վրա՝ Վճռա-

բեկ դատարանն արձանագրում է, որ մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններից հանրային առավել բարձր վտանգավորությամբ առանձնանում է սպանությունը: Սպանության օբյեկտ են հանդիսանում հասարակական այն հարաբերությունները, որոնք ուղղված են մարդու կյանքի անվտանգության ապահովմանը: Այլ կերպ ասած՝ նշված հանցագործության անմիջական օբյեկտը յուրաքանչյուր մարդու կյանքն է, որը ենթակա է քրեաիրավական պաշտպանության նրա ծնվելու պահից մինչև մահ:

Օբյեկտիվ կողմից սպանությունը դրսևորվում է մեկ ուրիշին դիտավորությամբ, ապօրինաբար կյանքից զրկելու մեջ, որը կարող է կատարվել և՛ գործողությամբ, և՛ անգործությամբ: Գործողությամբ կատարվող սպանությունը կարող է տեղի ունենալ տուժողի վրա ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան ներգործության միջոցով: Անգործությամբ պատճառված մահվան համար կարող է քրեական պատասխանատվություն առաջանալ միայն այն ժամանակ, երբ հաստատվի, որ անձն անհրաժեշտ գործողություններով չի կանխել վրա հասնող մահը, թեև տվյալ կոնկրետ իրադրությունում ոչ միայն պարտավոր էր, այլև իրական հնարավորություն ուներ դա անելու:

Օբյեկտիվ կողմից սպանությունը բնութագրվում է նաև հանցավոր արարքի և առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի պարտադիր առկայությամբ:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է տուժողին մահ պատճառել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը, չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահվան առաջացումը կամ անտարբերություն է դրսևորում այդ հետևանքի առաջացման նկատմամբ:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Նշված հանցագործության անմիջական օբյեկտը մարդու առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից տվյալ արարքը բնութագրվում է այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որի արդյունքում մարդու առողջությանը ծանր վնաս է պատճառվում: Հանցավորի գործողություններն արտահայտվում են տուժողի վրա ֆիզիկական, հոգեկան, մեխանիկական և նմանատիպ այլ ազդեցության գործադրմամբ: Մարդու առողջությանն անգործությամբ ծանր վնաս պատճառելն առկա է, երբ հան-

ցավորը չի կատարում որոշակի գործողություններ, որոնք նա պարտավոր էր և տվյալ իրադրությունում կարող էր կատարել՝ սպառնացող վնասի առաջացումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից ելնելով՝ կարելի է եզրահանգել, որ առողջությանը պատճառվող ծանր վնասը կարող է լինել երկու տեսակի՝ կյանքի համար վտանգավոր և կյանքի համար ոչ վտանգավոր՝ արտահայտված օրենքում հատուկ նշված հետևանքների առաջացմամբ:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Բացառություն է կազմում այնպիսի վնասի պատճառումը, որն առաջացրել է հանցավորի համար ակնհայտ տուժողի առողջության քայքայում՝ զուգորդված նրա մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով: Այս դեպքում, ինչպես հետևում է օրենսդրական ձևակերպումից, դիտավորությունը կարող է լինել միայն ուղղակի:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Օբյեկտիվ կողմից հանցափորձը բնութագրվում է՝

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելով:

Հանցափորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիտավորությամբ նախատեսվածը (օրինակ՝ սպանության փորձի ժամանակ տուժողը ոչ թե մահանում է, այլ ստանում է ծանր մարմնական վնասվածք): Ուստի, այն դեպքերում, երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հատկանիշներ են, ապա դրանք կլանվում են հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չեն որակվում:

Հանցափորձը բնութագրող հաջորդ հատկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցափորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ:

17. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության փորձը դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուց սահմանազատելու համար

առաջնային նշանակություն ունի վնասվածքներ հասցնելու պահին հանցավորի դիտավորության ուղղվածության բացահայտումը: Մասնավորապես, եթե սպանության փորձի ժամանակ հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողին կյանքից զրկելուն, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելիս դիտավորությունն ուղղված է տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելուն:

Ս.Հունիկյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները (զենքը), մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականոթեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն: Կատարված հանցանքին քրեախրավական ճիշտ գնահատական տալու համար կարևոր նշանակություն ունի այնպիսի հատկանիշների բացահայտումը, ինչպիսիք են հանցանքի կատարման շարժառիթներն ու նպատակը (տե՛ս Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշումը):

Վերը նշված հանգամանքների համադրման և վերլուծության հիման վրա է հնարավոր միայն բացահայտել դիտավորության ուղղվածությունը և դրա տեսակները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի կատարված արարքին քրեախրավական ճիշտ գնահատական տալուն և տարբեր հանցակազմերը, մասնավորապես՝ սպանության փորձը տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուց սահմանազատելուն:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2010 թվականի հուլիսի 15-ին ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի հոր՝ Վ.Բաղդասարյանի և վերջինիս քենակալ, տուժող Մ.Գրիգորյանի միջև տեղի է ունեցել հեռախոսային խոսակցություն՝ կապված բնակարանն իրենց զոքանչի կողմից անվանափոխելու հարցի հետ, որի ընթացքում Մ.Գրիգորյանը վիրավորական արտահայտություններ է արել Վ.Բաղդասարյանի հասցեին:

Նույն օրն ամբաստանյալ Ա.Բաղդասարյանը, տեղեկանալով վերոգրյալ հեռախոսային խոսակցության ժամանակ Մ.Գրիգորյանի կողմից հոր հասցեին արված վիրավորական արտահայտությունների մասին, ինչպես նաև, որ եղբայրը՝ Ս.Բաղդասարյանը Մ.Գրիգորյանի հետ պայմանավորվել է հանդիպել՝ տեղի ունեցած վիճաբանության հետ կապված հարցեր պարզաբանելու համար, մեկնել է դեպքի վայր՝ վերցնելով իրեն պատպանող «ՁԿի-34ԺՀ» տեսակի 12 մմ տրամաչափի

երկփողանի որսորդական հրացանը՝ լիցքավորված կապար պարունակող հրազենային զնդակով:

Հասնելով դեպքի վայր՝ Ա.Բաղդասարյանն անմիջապես, առանց որևէ պարզաբանում պահանջելու կամ որևէ բառ փոխանակելու, հիշատակված հրացանով շուրջ 4,5 մետր հեռավորությունից կրակել է Մ.Գրիգորյանի կենսականորեն կարևոր օրգանների շրջանին՝ որովայնին՝ պատճառելով հրազենային թափանցող, միջանցիկ վիրավորման՝ հաստ աղու աղեգալարների բազմաթիվ վնասումներով, կոնքի ոսկրների կտրվածքների ձևով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Կրակոցից հետո անմիջապես հավաքվել են մարդիկ, որոնց օգնությամբ Մ.Գրիգորյանը տեղափոխվել է հիվանդանոց, և բժշկական շտապ միջամտության շնորհիվ վերջինիս կյանքը փրկվել է (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Ա.Բաղդասարյանի արարքն ավարտին չի հասցվել նրա կամքից անկախ պատճառներով, մասնավորապես՝ տուժող Մ.Գրիգորյանի կյանքը փրկվել է այլ անձանց միջամտությամբ վերջինիս ցուցաբերված բժշկական օգնության շնորհիվ:

19. Սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով 18-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները, և հաշվի առնելով, մասնավորապես, հանցանքի կատարման շարժառիթը, հանցավորի վարքագիծը հանցագործությանը նախորդող պահին, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող հրազենի տեսակը, ինչպես նաև հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության կատարման պահին ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի դիտավորությունն ուղղված է եղել տուժող Մ.Գրիգորյանին ապօրինաբար կյանքից զրկելուն և ոչ թե վերջինիս առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուն:

Հետևաբար, ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի արարքում սպանության փորձի հատկանիշների բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը) անհիմն են և հերքվում են քրեական գործի նյութերով:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի արարքում սպանության փորձի հատկանիշների բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի արարքը սպանության փորձից դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմով վերաորակելու մասին որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական

76.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԷԴ/0044/01/11**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԵԷԴ/0044/01/11
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող՝ Ա.ՓԱՆՈՍՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին **ք. Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Արմեն Զիվանի Բաբայանի և Սուրեն Ռ-ազմիլի Թումանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ մեղադրող Ա.Փանոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12141610 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով՝ Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի կողմից խուլիգանություն կատարելու

փաստի առթիվ:

Նույն օրն Ա.Բաբայանը և Ս.Թումանյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումներով Ս.Թումանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, իսկ Ա.Բաբայանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումներով Ս.Թումանյանի և Ա.Բաբայանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2010 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացվել Ա.Բաբայանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու, լրացնելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

Նախաքննության մարմինը 2011 թվականի մարտի 10-ին որոշումներ է կայացրել առաջադրված մեղադրանքները լրացնելու մասին, և Ս.Թումանյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, իսկ Ա.Բաբայանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով:

2011 թվականի մարտի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2 . Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճռով Ա.Բաբայանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ:

Նույն դատավճռով Ա.Բաբայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ Ա.Բաբայանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով:

Ս.Թումանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամ-

կետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ Ս. Թումանյանն ազատվել է պատժի կրումից: Ամբաստանյալ Ս.Թումանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա ազատվել է կալանքից դատական նիստի դահլիճում:

3. Երևան քաղաքի դատախազ Հ.Բադալյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 5-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա.Փանոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները

5. Ամբաստանյալներ Ա.Բաբայանին և Ս.Թումանյանին մեղադրանք է առաջադրվել, և նրանք դատապարտվել են հետևյալ արարքների համար:

Ա.Բաբայանը և Ս.Թումանյանը 2010 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, մոտեցել են Երևանի Ազաթանգեղոս և Մովսես Խորենացի փողոցների հատման խաչմերուկի մոտ կանգնած մարմնավաճառ կանանց, որտեղ Ա.Բաբայանը Վարսիկ Բադոյանին գումարի դիմաց սեռական հարաբերություն ունենալու առաջարկություն է արել: Մերժում ստանալով՝ Ա.Բաբայանը, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, անհիմն վիճաբանության մեջ է մտել Վ.Բադոյանի հետ և այլ անձանց ներկայությամբ շուրջ 2-3 րոպե տևողությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է տվել վերջինիս հասցեին:

Դրանից հետո Ա.Բաբայանը և Ս.Թումանյանը գնացել են «Այրարատ» կինոթատրոնի մոտակայքում գտնվող հասարակական սննդի օբյեկտներից մեկը, որտեղ կրկին ոգելից խմիչք են օգտագործել և ժամը 23-ի սահմաններում, գտնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, մոտեցել են նույն մարմնավաճառներին: Վերջիններս, տեսնելով հարբած վիճակում գտնվող Ա.Բաբայանին և Ս.Թումանյանին, ինչպես նաև ոստիկանների պահանջով փորձել են հեռանալ մայթեզրից: Նշված հանգամանքից վրդովված՝ ամբաստանյալները սկսել են հայհոյել, տարածքում հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող՝ ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի ոստիկաններ Հրաչյա

Խաչատրյանը և Գագիկ Սարգսյանն Ա.Բաբայանից և Ս.Թումանյանից պահանջել են չխախտել հասարակական կարգը: Այդ պահին նրանց է մոտեցել պատահաբար դեպքի վայրով անցնող, նույն գնդի ոստիկան Արայիկ Խաչատրյանը՝ քաղաքացիական հագուստով: Տեսնելով իր գործընկերների հետ ագրեսիվ տոնով խոսող և նրանց օրինական պահանջը կատարել չցանկացող Ս.Թումանյանին՝ Ա.Խաչատրյանը, նպատակ ունենալով իր միջամտությամբ զսպել նրա հակահասարակական պահվածքը, Ս.Թումանյանին ցույց է տվել իր ծառայողական վկայականը և հայտնել, որ նույնպես ոստիկան է: Սակայն դրանից հետո Ս.Թումանյանը դարձել է ավելի ագրեսիվ և, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, չարամտորեն չենթարկվելով հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող ոստիկանների օրինական պահանջներին, խուլիգանական հայիռյանքներ տալով նրանց հասցեին, հարձակվել է Ա.Խաչատրյանի վրա և բռունցքով հարվածել նրա կրծքավանդակին: Գ.Սարգսյանը միջամտել է, ցանկանալով խափանել Ս.Թումանյանի գործողությունները, որի ընթացքում վերջինս, դիմադրություն ցույց տալով ոստիկանության աշխատակիցներին, բռնել է Գ.Սարգսյանի ծառայողական բաճկոնի օձիքից, քաշքշել ու պատռել է այն, ինչպես նաև բռունցքներով 3-4 անգամ հարվածել է Գ.Սարգսյանի գլխին ու մարմնի մյուս մասերին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Խուլիգանության կատարմանը ներգրավվել է նաև Ա.Բաբայանը, ով նույնպես կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով հասարակության նկատմամբ, չարամտորեն չենթարկվելով հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող ոստիկանների օրինական պահանջներին, դիմադրություն ցույց տալով նրանց՝ տվել է սեռական բնույթի հայիռյանքներ և գործադրելով ապօրինի կրած սառը զենք հանդիսացող որսորդական շեղբավոր ծալովի դանակը՝ դրանով դիտավորությամբ հարվածել է Գ.Սարգսյանի կրծքավանդակի ուղղությամբ և վնասել նրա համազգեստը:

Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի խուլիգանական գործողությունները տևել են շուրջ 20 րոպե, որից հետո նրանք փորձել են փախնել, սակայն փախուստը կանխվել է ոստիկանության աշխատակիցների կողմից, և Ա.Բաբայանն ու Ս.Թումանյանը բերման են ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղ շուրջ 30 րոպե տևողությամբ շարունակել են ոստիկանության աշխատակիցների հասցեին տալ սեռական բնույթի հայիռյանքներ, ոտքերով հարվածել հերթապահ մասի ժամանակավոր պահման խցերի ճաղավանդակներին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին

ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով նախաքննության մարմինը և դատարանը, հաստատված համարելով Ա.Բաբայանին և Ս.Թումանյանին մեղսագրվող արարքները, դրանց տվել են քրեաիրավական սխալ որակում՝ անտեսելով հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող իշխանության ներկայացուցիչ Գ.Սարգսյանի նկատմամբ ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ Ս.Թումանյանի կողմից՝ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր, իսկ Ա.Բաբայանի կողմից՝ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հանգամանքը: Ըստ բողոքաբերի՝ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների պայմաններում Ա.Բաբայանի արարքը պետք է լրացուցիչ որակվեր իշխանության ներկայացուցիչ նկատմամբ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Ս.Թումանյանի արարքը՝ իշխանության ներկայացուցիչ նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Բողոքաբերը նշել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը և միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածը լիազորում է մեղադրողին առաջադրված մեղադրանքը փոփոխել և լրացնել բացառապես առաջին ատյանի դատարանում գործի դատական քննության ընթացքում, մեղադրող կողմը վերաքննիչ բողոք է բերել Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ՝ խնդրելով բեկանել այն քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման հիմքով և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով թույլ տրված նյութական իրավունքի խախտումները, մերժել է բողոքը՝ դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

7. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածներից բխում է, որ քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում գործի նյութերի հետազոտման արդյունքում պարզելով, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում առկա ապացույցներից, դատարանը լիազորված է կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում՝ նշելով ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի առկա թերությունները:

Տվյալ դեպքում, մեղադրական եզրակացությունում Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի կատարած արարքների նկարագրությունն ակնհայտորեն չի համապա-

տասխանել դրանց տրված որակմանը, որպիսի պայմաններում գործը դատական քննության նախապատրաստելու փուլում Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում կայացնել, սակայն նման որոշում չի կայացրել:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս մեղադրողին վերադարձնելու իրավական ինստիտուտի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ, ինչպես նաև դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու՝ մեղադրողի իրավասության սահմանների առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

1. Գործը դատական քննության նախապատրաստելիս մեղադրողին վերադարձնելը

9. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. գործը դատական քննության նախապատրաստելիս պարտավոր է արդյոք դատարանը որոշում կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առաջարկելով փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը, եթե պարզում է, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից:

10. Գործը դատական քննության նախապատրաստելիս այն մեղադրողին վերադարձնելու դատարանի լիազորությունը և դրա իրականացման կարգը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածներում:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝ (...)

4) գործը մեղադրողին վերադարձնելու մասին. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի հա-

մապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից:

2. Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշման մեջ, բացի նման որոշում կայացնելու հիմքերից, նշվում է այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի մեղադրական եզրակացությունում առկա թերությունները (...):»:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման 9-րդ կետում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել արդարադատության իրականացման ընթացքում դատարանի կարգավիճակը, ինչպես նաև քրեական դատավարության մի շարք կարևորագույն սկզբունքներ:

11. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: (...)

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուս մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանց իրականացումն են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...):

6. Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, (...) չպետք է կանխակալ մտտեցում ցուցաբեր[ի] ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն [տա]՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

12. Շարադրված դրույթների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություն անել այն մասին, որ քրեական դատավարության փուլային համակարգում հիմնական և վճռորոշ փուլը դատական քննությունն է: Դատական քննության փուլում են հետազոտվում մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, և ըստ էության այդ փուլում է պատասխան տրվում քրեական գործի հիմնական՝ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին:

Դատական քննությունը՝ որպես քրեական դատավարության կենտրոնական փուլ, իրենից ներկայացնում է դատավարական (դատական) գործողությունների կատարման և որոշումների կայացման բարդ համակարգ, որոնք իրականացվում են քրեադատավարական օրենքով ամրագրված իրավական կանոններին համապատասխան: Նշված կանոններն իրենց ամբողջության մեջ կազմում են դատական քննության ընդհանուր պայմանները և պարտադիր են դատական քննության ողջ

ընթացքում: Վերոնշյալ պայմանների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովել քրեական դատավարության բոլոր սկզբունքների կենսագործումը՝ դրանով իսկ հասնելով արդար դատական քննության հիմնարար արժեքի անխափան իրագործմանը:

13. Սույն որոշման 11-րդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է:

Մրցակցության սկզբունքը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառնությունների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառնությից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն:

Մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը:

Անդրադառնալով դատարանի անաչառության կարևորությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ժողովրդավարական հասարակությունում հիմնարար նշանակություն ունի այն հանգամանքը, որ դատարանները վստահություն ներշնչեն հասարակությանը, իսկ քրեական վարույթի պարագայում՝ առաջին հերթին վստահություն ներշնչեն մեղադրյալին (տե՛ս *Sander v. The United Kingdom*, 2000 թվականի մայիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 34129/96, կետ 22): Դատարանի անաչառության պահանջն ունի երկու կողմ, նախ՝ դատարանը պետք է զերծ լինի անձնական նախապաշարումներից կամ կողմնապահությունից: Երկրորդ՝ այն պետք է անաչառ լինի նաև օբյեկտիվ տեսանկյունից. այսինքն՝ պետք է բավարար երաշխիքներ ապահովի այս կապակցությամբ առաջացող որևէ օրինական կասկած բացառելու նպատակով (տե՛ս *Findlay v. The United Kingdom*, 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22107/93, կետ 73):

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Նշված սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն

կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից:

Անմեղության կանխավարկածի բովանդակությունն արտացոլված է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (*in dubio pro reo*) կանոնի մեջ: Այս կանոնն իր ամրագրումն է ստացել ինչպես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջ և հանդիսանում է մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքի գործնական երաշխիք քրեական դատավարության և, մասնավորապես, դատական քննության ընթացքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով, անմեղության կանխավարկածը, *inter alia* պահանջում է, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, իսկ ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի: Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է համարել այն իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին համապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն նրա վերաբերյալ ընդունված դատական որոշումից կարելի է կարծիք կազմել, որ նա մեղավոր է (տե՛ս *Barbera, Messegue and Jabardo v. Spain*, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետեր 77, 91):

Ինչպես երևում է վերոգրյալից, անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի: Ուստիև՝ դատարանը, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահը, իր գործողություններով, այդ թվում՝ որոշումներով որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին:

15. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանը, պարզելով, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից, իրավասու չէ որոշում կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առաջարկելով վերջինիս փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանի կարծիքով, գործը դատական քննության նախապատրաստելիս առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու

առաջարկով գործը մեղադրողին վերադարձնելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում: Ուստի, եթե առաջադրված մեղադրանքը փոփոխվի այս ինստիտուտի կիրարկմամբ, և արարքին դատարանի նախաձեռնությամբ տրված նոր որակմամբ մեղադրական դատավճիռ կայացվի, ապա դատապարտյալն օբյեկտիվ հիմքեր կունենա պնդելու, որ գործը մեղադրողին վերադարձնելու պահից (նախքան դատավճռի կայացումը) դատարանն իր նկատմամբ որոշակի նախատրամադրվածություն է ունեցել:

Այս դեպքում ստացվում է այնպես, որ դատարանն, առանց պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ապացույցների հետազոտման դրանց նախապես տալիս է հաստատված ապացույցի ուժ: Մինչդեռ, մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, ուստի, առանց պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտման՝ դրանց չի կարող հաստատված ապացույցի ուժ տրվել:

Հետևաբար, մեղադրողին առաջարկելով փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը՝ դատարանը դուրս է գալիս անկողմնակալության սկզբունքի շրջանակներից և ուղղորդում է մեղադրողին՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղադրող կողմի, արդյունքում տեղի է ունենում քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում: Դատարանի կողմից նման որոշման կայացումն անհամատեղելի է նաև նշված իրավական ակտերով ամրագրված անմեղության կանխավարկածի հետ: Նման դատական ակտի կայացմամբ, ըստ էության, շրջանցվում է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած՝ «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (in dubio pro reo) կանոնը:

16. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վերոգրյալին համահունչ իրավական դիրքորոշում է հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-872 որոշման մեջ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում էր, որ «եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչև 10 օր ժամկետով հետա-

ծգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ տեղակալին՝ վերահաստատելու մեղադրական եզրակացությունը (...)»:

Այդ կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «(...) դատական իշխանության անկախությունը չի կարող դիտարկվել միայն զուտ իշխանությունների տարանջատման տեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար, որը և հանդիսանում է դատական իշխանության հիմնական առաքելությունը: Այս տրամաբանությանն ամենևին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դատավորը մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշտելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել (...)»:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն ընդհանրապես, այդ թվում՝ դատական քննության նախապատրաստության փուլում, իրավասու չէ հանդես գալ առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու նախաձեռնությամբ: Նման նախաձեռնությունը կհանգեցնի մրցակցության և անմեղության կանխավարկածի սկզբունքների խախտման, ինչն էլ իր հերթին կբերի արդար դատական քննության հիմնարար արժեքի առարկայազրկման:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ և 296-րդ հոդվածներով սահմանված դատական քննության նախապատրաստության փուլում գործը մեղադրողին վերադարձնելու իրավական ինստիտուտին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից նման որոշման կայացումն արդարացված կլինի միայն մեկ դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը կազմված է քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներով, օրինակ՝ դատախազը չի հաստատել մեղադրական եզրակացությունը, այն ստորագրված չէ քննիչի կողմից, չունի նկարագրական-պատճառաբանական մաս, օրենքով սահմանված անհրաժեշտ հավելվածներ և այլն:

II. Դատարանում մեղադրանքը փոփոխելու մեղադրողի իրավասության սահմանները

18. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալներ Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքների սահմաններում կայացնելով մեղադրական դատավճիռ, թո՞ւյլ է տվել արդյոք քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

19. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

(...)

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը (...): Գատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող:

(...)

3. Քրեական գործի վարույթով իր լիազորություններն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին հանդմունքի վրա, և պատասխանատու է իր ընդունած որոշումների համար:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

2. Գատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան:

3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է: (...):»:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունը ճանաչողական գործունեություն է, որն ուղղված է նախկինում տեղի ունեցած դեպքի հանգամանքների հետազոտմանը և վերականգմանը, ինչը ենթադրում է, որ քրեական դատավարության՝ իրար հաջորդող յուրաքանչյուր փուլում ձեռք են բերվում լրացուցիչ տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել դեպքի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ քրեական գործի հարուցումից մինչև քրեական գործի լուծումը գործի քննությունը գտնվում է զարգացման վիճակում, իսկ դատավարական ճանապարհով ձեռք բերված նոր տվյալներով պայմանավորված՝ կարող են փոփոխվել գործի հանգամանքները և մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը:

Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածը նախատեսում է առաջադրված մեղադրանքը փոփոխելու կարգ նաև առաջին ատյանի դատարանում՝ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Նշված հոդվածի հիման վրա մեղադրանքը փոփոխելու իրավական ընթացակարգերը Վճռաբեկ դատարանի կողմից մանրամասն վերլուծության են ենթարկվել *Ս.Նալբանդյանի* վերաբերյալ գործով կայացված որոշման մեջ (տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԲԲԳ-2/0144/01/09 որոշման 19-25-րդ կետերը):

21. Միևնույն ժամանակ, ինչպես երևում է սույն որոշման 19-րդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծությունից, դատախազը պետության քրեական քաղաքականությունն իրականացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձ է, որին վերապահված է դատարանում քրեական մեղադրանքը պաշտպանելու, ինչպես նաև այն փոփոխելու իրավասություն: Ընդ որում, դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավասությունը դատախազը կարող է իրագործել միայն առաջին ատյանի դատարանում՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի

նկատմամբ և միայն նրան առաջադրված մեղադրանքի սահմաններում:

22. *Ա.Սերոբյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանն ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես, կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուսկ «քրեաիրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայագուրկ է:

Սինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող վերացական լինել:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (*Artico v. Italy*, 13.05.1980թ., կետ 33) (...)» (տե՛ս Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը):

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրողը օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի, այդ թվում՝ մեղսագրվող արարքին տրված քրեաիրավական որակման հիմնավորվածության ռիսկը և օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է առաջին ատյանի դատարանում այն փոփոխելու իրավական հնարավորություն: Դատախազի կողմից վերոնշյալ հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն

իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները և դուրս գալ ամբաստան-
յալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից:
Գատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մե-
ղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների
հետազոտման արդյունքում մեղսագրվող արարքը կհաստատվի, դատարանը պար-
տավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական
որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական
եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական
հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ
որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ առաջին ատյանի
դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը չիրացնելով՝ մեղադրողը
քրեական գործի հետագա քննությունների ընթացքում զրկվում է նման նախաձեռ-
նությամբ հանդես գալու հնարավորությունից: Այս համատեքստում Վճռաբեկ դա-
տարանն անթույլատրելի է համարում նաև այն իրավիճակը, երբ վերադաս դատա-
րանի կողմից կարող է բեկանվել գործով կայացված դատավճիռը և գործն ուղարկ-
վել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որպեսզի նոր քննության ընթաց-
քում մեղադրողը հնարավորություն ստանա շտկելու նախորդ դատական քննության
ընթացքում թույլ տրված բացթողումը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
309¹-րդ հոդվածի գործադրմամբ փոփոխի առաջադրված մեղադրանքը: Նման մո-
տեցման դեպքում ուղղակիորեն կիմաստագրկվի ամբաստանյալի պաշտպանու-
թյան իրավունքը:

24. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ
դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմի-
նը, հաստատված համարելով, որ ամբաստանյալները կատարել են սույն որոշման
5-րդ կետում շարադրված արարքները, Ս.Թումանյանին մեղադրանք է առաջադրել
միայն խուլիզանության, իսկ Ա.Բաբայանին՝ խուլիզանության և սառը զենք կրելու
համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապա-
տասխան հոդվածներով:

Նույն փաստական հանգամանքների պայմաններում, միևնույն իրավաբա-
նական որակմամբ կազմվել է նաև մեղադրական եզրակացություն, որը հաստատ-
վել է դատախազի կողմից, և գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ ըստ
էության քննելու (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանում մեղադրողն ամբաստանյալներ Ս.Թուման-
յանին և Ա.Բաբայանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու
միջնորդությամբ հանդես չի եկել, որպիսի պայմաններում դատարանը, ապացույց-
ների հետազոտման արդյունքում հաստատված համարելով մեղսագրվող արարք-
ները, մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից դրանց տրված քրե-
աիրավական որակման սահմաններում կայացրել է մեղադրական դատավճիռ

(տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

25. Սույն որոշման 20-23-րդ կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 24-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալներ Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքների սահմաններում կայացնելով մեղադրական դատավճիռ, թույլ չի տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, որի պայմաններում նշված դատական ակտը բեկանելու օրենսդրական հիմքեր Վերաքննիչ դատարանը չի ունեցել:

26. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արմեն Զիվանի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով և ամբաստանյալ Սուրեն Ռ-ազմիկի Թումանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

77.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության **ԵԿԴ/0503/06/10**
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0503/06/10
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին ք. Երևանում

դմբաց դատական նիստում, քննության առնելով Արամ Հայկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2010 թվականի հունիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2010 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ Արամ Հայկի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-

րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2010 թվականի օգոստոսի 17-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ ներկայացված միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով՝ նրան հայտնաբերելու պահից:

3. 2011 թվականի հուլիսի 23-ին մեղադրյալ Ա.Սարգսյանն ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին:

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), 2011 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ կրկին քննության առնելով մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորման հարցը, բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը և անփոփոխ է թողել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, իսկ գրավ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի միջնորդությունը մերժել է:

5. Մեղադրյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 25-ի որոշումը:

6. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել մեղադրյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Ղազարյանը:

2011 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրյալ Ա.Սարգսյանի պաշտպան Կ.Ղազարյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Ա.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա,

1997 թվականի օգոստոսին նշանակվելով որպես Երևանի քաղաքապետարանի «Մ.Ճանպազյանի անվան թիվ 79 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և մինչև 2010 թվականի փետրվար ամիսը զբաղեցնելով նշված պաշտոնը, հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնի կազմակերպությունում մշտապես կազմակերպատնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2007-2009 թվականների ընթացքում, չարաշահելով իր պաշտոնական լիազորությունները, շահադիտական և անձնական շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, այն է՝ նշված ժամանակահատվածում միջնակարգ դպրոցում շրջանառվող մի շարք պաշտոնական փաստաթղթերում՝ աշակերտների շարժի մատյաններում, դասամատյաններում և հիմնական կրթության վկայականների բաշխման մատյաններում, ակնհայտ կեղծ տեղեկություններ և գրառումներ մտցնելու միջոցով, առանց կրթություն ստանալու և ավարտական քննություններ հանձնելու կազմել և հիմնական կրթության կեղծ վկայականներ է հանձնել 52 աշակերտների, որով էական վնաս է պատճառել պետության և կազմակերպության օրինական շահերին: Արդյունքում, սահմանված կրթական ծրագիրը չանցած, բավարար ուսում չստացած աշակերտները կեղծ վկայականների օգտագործմամբ հնարավորություն են ստացել նորմատիվ ակտերի խախտմամբ շարունակելու հետագա ուսումը, բացի այդ, խաթարվել է պետական կրթական քաղաքականության և կրթության օջախների՝ դպրոցների նկատմամբ հասարակության վստահությունը:

8. 2011 թվականի մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշումը (այսուհետ՝ համաներման ակտ), որի 6-րդ կետի 3-րդ ենթակետն առերևույթ կիրառելի է Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքների նկատմամբ: Այսպես՝ համաներման ակտի 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների կամ դատարանի վարույթում գտնվող քրեական գործերը, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի, որոնցով սույն որոշման 2-րդ կետում թվարկված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում»:

Համաներման ակտի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Պատժից ազատել, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի, առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված՝ 60 տարին լրացած անձանց»: Նույն որոշման 16-րդ կետի համաձայն՝ «(...) սույն որոշումը (...) տարիքային հիմքով կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնց 60 տարին լրանում է մինչև 2011 թվականի սեպտեմբերի 21-ը ներառյալ»:

9. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սարգսյանին մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 314-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված արարքների կատարումը, որոնց սանկցիաներով նախատեսված պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը:

10. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ա.Սարգսյանը ծնվել է 1951 թվականի հուլիսի 5-ին, հետևաբար վերջինիս 60 տարին լրացել է 2011 թվականի հուլիսի 5-ին (տե՛ս Նյութեր, էջ 41):

11. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման հարցը կրկնակի քննության առնելու արդյունքում դատարանը գտնում է, որ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ մեղադրյալի՝ ազատության մեջ մնալու դեպքում վարույթն իրականացնող մարմնից կրկին թաքնվելու, քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց խուսափելու հավանականությունը բարձր է» (տե՛ս Նյութեր, էջ 41):

12. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը հիմնավոր և ողջամիտ է համարում նաև կասկածն այն մասին, որ ազատության մեջ մնալու դեպքում Ա.Սարգսյանը թաքնվել է և կրկին կփորձի թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և կխոչընդոտի գործի քննությանը:

Վերաքննիչ քրեական դատարանն այսպիսի հետևության գալիս է՝ հաշվի առնելով Ա.Սարգսյանի կատարած, հանրորեն վտանգավոր արարքի բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հաշվի առնելով նրա անձը, այն, որ վերջինս թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, ուստի, վերը նշված պատճառաբանությամբ մեծ է հավանականությունը, որ Ա.Սարգսյանն ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, կատարել քրեական օրենքով արգելված նոր արարք» (տե՛ս Նյութեր, էջ 82):

13. Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը փոփոխված մեղադրանքով 2011 թվականի դեկտեմբերի 12-ին ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու համար:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

14. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանների կողմից բույլ են տրվել դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես՝ դատա-

րանները խախտել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք նորմերի պահանջներ:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում շարադրված պահանջը՝ բողոքաբերը փաստարկել է, որ մեղադրյալ Ա.Սարգսյանի կողմից կատարված հանցագործությունների համար նախատեսված պատիժները չեն գերազանցում 5 տարի ազատազրկումը, ուստի, առաջնորդվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով՝ համաներման ակտը վերջինիս նկատմամբ պետք է կիրառվեր համաներման ակտի 2.2-րդ և 6.3-րդ կետերին համապատասխան, որը չի կիրառվել. արդյունքում խախտվել են Ա.Սարգսյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, քրեադատավարական օրենսդրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները:

15. Ըստ բողոքաբերի՝ նախաքննության մարմինն Ա.Սարգսյանի ինքնակամ ներկայանալու դեպքում նրան մեղադրանք առաջադրելուց հետո պետք է համաներման ակտի հիման վրա նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում կայացնել, մինչդեռ՝ վերջինիս նկատմամբ ընտրվել է խափանման միջոց կալանքը՝ առանց իրավական հիմքերի և դրա անհրաժեշտության, քանի որ այն հանգամանքներում, երբ անձին մեղսագրվող արարքները համաներման ակտի ուժով վերացնում են դրանց համար քրեական պատասխանատվությունը, դատարանը չէր կարող ընտրել խափանման միջոց կալանավորումը:

16. Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարաններն իրենց որոշումներով որևէ կերպ չեն հիմնավորել մեղադրյալին կալանքի վերցնելու անհրաժեշտությունը և չեն նշել գործով ձեռք բերված որևէ ապացույց, որը հիմք կհանդիսանար ենթադրելու, որ Ա.Սարգսյանը կարող էր կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված գործողություններ՝ հաշվի չառնելով վերջինիս կողմից ինքնակամ ներկայանալու և գործի արդարացի լուծման ելքով շահագրգռված լինելու հանագամանքը:

Մինչդեռ՝ մեղադրյալ Ա.Սարգսյանը նախաքննության ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, ինքնակամ ներկայացել և չի խոչընդոտել մինչդատական վարությամբ գործի քննությանը, բնութագրվում է դրականորեն, նախկինում արատավորված չի եղել, երկար տարիներ աշխատել է որպես մանկավարժ-դպրոցի տնօրեն, մեծահասակ է և ունի առողջական խնդիրներ, ինչն էլ փաստում է, որ չկա որևէ վտանգ, որ կխոչընդոտի նախաքննության իրականացմանը:

17. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 25-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշումները, վերացնել

Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը կամ նրա նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառել գրավը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է:

Այս առումով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության դեպքում խափանման միջոց ընտրելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմանները

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքների նկատմամբ համաներման ակտի առերևույթ կիրառելիության պայմաններում իրավաչափ են արդյոք վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումները:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

- 1) բացակայում է հանցագործության դեպքը.
- 2) արարքի մեջ հանցակազմ չկա.
- 3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.
- 4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.
- 5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.
- 6) անցել են վաղեմության ժամկետները.
- 7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարիությունը.
- 8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա՝ փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման ակտ»:

Վերը նշված նորմի վերլուծությունից երևում է, որ թեև թվարկված հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...)խափանման միջոց կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ խափանման միջոցները կարող են կիրառվել միայն սկսված և շարունակվող քրեական

վարույթի ընթացքում, ընդ որում, նպատակ ունենալով կանխելու այդ նույն քրեական վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը և որպես հետևանք՝ ապահովելու դրա բնականոն ընթացքը: Այսպիսով, խափանման միջոցների ընդհանրապես և՛ կալանավորման, մասնավորապես, կիրառման պարտադիր պայմաններից է սկսված և շարունակվող քրեական վարույթի առկայությունը: Հետևաբար, եթե քրեական վարույթի ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք բացառում են վարույթի հետագա ընթացքը, ապա տրամաբանորեն վերանում է նաև դատավարական հարկադրանքի միջոցների (այս դեպքում՝ կալանավորման) կիրառմամբ այդ վարույթի բնականոն ընթացքի ապահովումը երաշխավորելու անհրաժեշտությունը:

22. Կալանավորման կիրառման պայմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ. Գևորգյանի վերաբերյալ որոշման մեջ, որում դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությունը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեախրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը» (տե՛ս Վահրամ Գևորգյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ-0678/06/10 որոշման 19-րդ կետը):

23. Վերահաստատելով և զարգացնելով այդ դիրքորոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 20-22-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի են քրեական վարույթը բացառող հանգամանք-

ներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման:

Այսինքն՝ անձի ազատությունը սահմանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով՝ նրան հայտնաբերելու պահից (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

2011 թվականի մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է համաներման մասին որոշում, որն առերևույթ կիրառելի է Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքների նկատմամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանները Ա.Սարգսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց վերահաստատել են՝ նշելով, որ չեն վերացել և շարունակում են առկա լինել մեղադրյալ Ա.Սարգսյանին կալանավորելու հիմքերը (տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ ստորադաս դատարաններն Ա.Սարգսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց վերահաստատել են՝ անտեսելով համաներման ակտի՝ որպես քրեական վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիության հարցն Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքների նկատմամբ:

25. Սույն որոշման 20-23-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 24-րդ կետում շարադրված և վերլուծված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, վերահաստատելով Ա.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, պարտավոր էին քննարկման առարկա դարձնելու համաներման ակտի կիրառելիության հարցը և դրան համապատասխան որոշում կայացնելին:

Հետևաբար, իրավաչափ չեն Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքների նկատմամբ համաներման ակտի առերևույթ կիրառելիության պայմաններում վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումները:

II. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանները քրեական վարույթը բացառող հանգամանքների գնահատման առումով.

26. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իավական հարցը

հետևյալն է. մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության և կիրառելիության հարցի քննարկումը դատարաններն ի՞նչ սահմաններում պետք է իրականացնեն և ի՞նչ իրավական հետևանքներ կարող են ունենալ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, դրա ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ միջնորդության քննարկման համար քրեական վարույթը բացառող հանգամանքների առերևույթ առկայությունը և կիրառելիությունը:

27. Այս հարցը Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտնում քննարկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էության և խնդիրների համատեքստում:

Ներսես Միսակյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (տե՛ս Ներսես Միսակյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ԱԲԳ-1/0003/11/08 ապրիլի 10-ի որոշման 12-րդ կետը):

Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը հանդիսանում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության յուրահատուկ միջոց, որը կատարում է քրեական հետապնդման մարմիններին զսպող գործոնի դեր և ուղղված է ինչպես անձի իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելուն, այնպես էլ՝ բացառելու քրեական գործով մինչդատական վարույթում այդ իրավունքների և ազատությունների անհիմն և անօրինական սահմանափակումները և խախտումները:

28. Վերը շարադրվածի լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կե-

տում սահմանված խափանման միջոց կիրառելու պայմանը (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայությունը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա անտեսմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց, որի հետևանքով էլ չի իրականացվում դատական վերահսկողության առաքելությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը և այդ իրավունքների և ազատությունների անօրեն և չիմնավորված սահմանափակումների բացառումը:

29. Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը գործում է որպես մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող միջոց, ուստի չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրան համապատասխան որոշում կայացնելու նպատակ, որը բուն արդարադատության իրականացման գործառույթ է: Դատարանն այս դեպքում որոշում է բացառապես անձի իրավունքների սահմանափակման օրինականության և հիմնավորվածության հարցը: Դա նշանակում է, որ խափանման միջոց կալանքը ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս դատարանը, հավաստելով քրեական վարույթը բացառող հանգամանքների առերևույթ առկայությունը և կիրառելիությունը, պարտավոր է ընդամենը մերժելու նախաքննության մարմնի միջնորդությունը: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, հակառակ դեպքում կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, ինչպես նաև քրեադատավարական գործառույթների տարանջատման և դատարանի անկախության սկզբունքները:

III. Սույն որոշման իրավական արժեքը

30. Սույն որոշման 18-29-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտերը բեկանելու և բողոքը բավարարելու համար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման կայացման պահին Ա.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը փոփոխված մեղադրանքով գտնվում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ըստ էության քննելու համար (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը), ուստի, բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք եղել են ժամանակավոր և իրավաբանորեն այլևս գոյություն չունեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արամ Հայկի Սարգսյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 25-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ

78.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՏԳ-2/0009/06/11
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան

ՏԳ-2/0009/06/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ներկայացուցիչ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով Հարություն Լարվենտի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի օգոստոսի 24-ի որոշման դեմ մեղադրյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Շ.Բրեյդիի և ներկայացուցիչ Ե.Մարգարյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հուլիսի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 56104411 քրեական գործը:

2011 թվականի հուլիսի 27-ին Հարություն Լարվենտի Խաչատրյանը ներ-

գրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2011 թվականի հուլիսի 27-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով մեղադրյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Շ.Բրեյդիի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 27-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել մեղադրյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Շ.Բրեյդին և Ե.Մարգարյանը:

2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մեղադրյալ Հ.Խաչատրյանի պաշտպան Շ.Բրեյդիի և Ե.Մարգարյանի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Հ.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպության անդամ, 2011 թվականի գարնանը խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից (տե՛ս Նյութեր, էջ 4):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Դատաքննությամբ նա հայտնեց, որ հրաժարվում է զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, քանի որ իր հավատքը թույլ չի տալիս անդամակցել զինվորական կառույցներին: Վերը նշվածով, դատարանի համոզմամբ հիմնավորվում է Հարություն Խաչատրյանի առնչությունը կատարված իրավախախտմանը, և առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալը կատարել է այն հանցանքը, որում նա մեղադրվում է: Հարություն Խաչատրյանին մեղսագրվող հանցագործության համար նախատեսվում է կալանք առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատագրվում առավելագույնը երեք տարի ժամկետով» (տե՛ս Նյութեր, էջ 18):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) քննության ընթացքում ձեռք են բերվել բավարար ապացույցներ, որոնցով հիմնավորվում է մեղադրյալի առնչությունը կատարված արարքին, ինչպես նաև մեղադրյալին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն որ մեղսագրվող արարքն ուղղված է ՀՀ կառավարման կարգի դեմ, հաշվի է առնվել մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ այն արարքի համար, որով նրան մեղադրանք է առաջադրվել, որպես պատիժ նախատեսվում է 1 տարուց ավելի ժամանակով ազատազրկում, ինչը մեծացնում է հավանականությունը, որ մնալով ազատության մեջ մեղադրյալը կարող է կատարել քրեական օրենքով արգելված նոր արարք և խուսափել պատասխանատվությունից: Բացի այդ, իր բացատրությունում և ցուցմունքներում մեղադրյալը հետևողականորեն պնդել է այն, որ ինքը չի պատրաստվում կատարել իր քաղաքացիական պարտականությունը՝ կապված այլընտրանքային ծառայության հետ: Այնուհետև, Վերաքննիչ դատարանում ստացված տեղեկությունների համաձայն՝ Հարություն Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան և Դատարանի «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» 2011 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է նույնը» (տե՛ս Նյութեր, էջ 85):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձինք փաստարկել են, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում, մասնավորապես, 2010 թվականի հուլիսի 23-ին ընդունված Տարոն Հակոբի Պիրապյանի վերաբերյալ թիվ ԱԲԴ-1/0028/06/10 որոշմանը:

9. Ի հիմնավորումն իրենց վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ ինչպես սույն, այնպես էլ *Տ. Պիրապյանի* գործով մեղադրյալները հանդիսացել են Եհովայի վկաներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, մինչդեռ, վերջիններս նշել են, որ պատրաստ են կատարել եվրոպական չափանիշներին համապատասխանող այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

Փաստարկելով, որ նշված այլընտրանքային ծառայությունն ապահովելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդին անդամակցելով՝ բողոքաբերները նշել են, որ ՀՀ-ում այլընտրանքային ծառայությունը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Ուստի, զինվորական վերահսկողության ներքո իրականացվող այլընտրանքային ծառայու-

քյան ծրագրին մասնակցելուց հրաժարվելու համար Հ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու արդյունքում խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկը՝ բողոք բերած անձինք նշել են, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-ի հոդվածի 5-րդ կետի հիման վրա ՀՀ կառավարության կողմից պետք է փոխհատուցվեն հետապնդման հետևանքով Հ.Խաչատրյանին պատճառված վնասները, այս կապակցությամբ բողոքաբերները վկայակոչել են *Բայթյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվոպական դատարանի կողմից 2011 թվականի հուլիսի 7-ին կայացված վճիռը (գանգատ թիվ 23459/03) և նշել, որ ՀՀ կառավարությունը պետք է համապատասխան կերպով փոխհատուցի իրենց պաշտպանյալին հետապնդելու արդյունքում պատճառված վնասները:

10. Համադրելով *Տ.Պիրսայյանի* և սույն գործի փաստական հանգամանքները՝ բողոք բերած անձինք նշել են, որ երկու դեպքերում էլ ստորադաս դատարաններն անդրադարձել են միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի ընդհանուր շարադրանքին՝ չնշելով որևէ ապացույց, որը կհաստատեր կալանքի անհրաժեշտությունը: Ավելին, սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, չի նշել որևէ ապացույց, որը կարդարացներ Հ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու հիմնավորվածությունը, ինչպես նաև չի անդրադարձել այլ խափանման միջոց ընտրելու հնարավորությանը: Այս կապակցությամբ բողոքաբերները նշել են, որ մեղադրյալը 20 տարեկան է, ապրում է ծնողների հետ, օրինապահ անձնավորություն է և երբևէ չի մեղադրվել քրեական հանցանքի կամ վարչական զանցանքի կատարման մեջ, ավելին, զինվորական կոմիսարիատից ուղարկված ծանուցագրին ի պատասխան՝ Հ.Խաչատրյանը գրություն է ուղարկել, որում նշել է, որ հանդիսանում է Եհովայի վկա և իր կրոնապես դաստիարակված խիղճը թույլ չի տալիս իրեն մասնակցել զինվորական ծառայությանը, սակայն պատրաստ է կատարել եվրոպական չափանիշներին համապատասխանող իսկական քաղաքացիական ծառայություն:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 27-ի և Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 24-ի որոշումները, վերացնել Հ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը և նրան ազատ արձակել կալանքից, ինչպես նաև ՀՀ կառավարությանը պարտավորեցնել Հ.Խաչատրյանին վճարել 33 եվրո՝ կալանավայրում անցկացրած յուրաքանչյուր օրվա դիմաց:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանները հիմնավոր կասկածի որոշման հարցում

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս դատարանն իրավասու^o է արդյոք անդրադառնալ անձին առաջադրված մեղադրանքի էությանը և հիմնավորվածությանը:

13. Վճռաբեկ դատարանն *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված): Ուստի, մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից: (...)

Ընդ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից» (տե՛ս Ասլան Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 18-րդ և 22-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Վ.Գևորգյանի* վերաբերյալ որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի՝

ա) անձի առնչությունն իրեն մեղազրկող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

(...) [Կ]ալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կող-

մից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: (...)

Դիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի մաս ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում, անհրաժեշտ է ունենալ մաս բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես մաս կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին» (տե՛ս Վահրամ Գևորգյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ-0678/06/10 որոշման 19-րդ և 21-րդ կետեր):

Ձարգացնելով վերը մատնանշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածը պետք է ապահովվի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի երաշխիք այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու համար:

Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբեր-

յալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեա-դատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:

Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան:

14. Մինչդատական վարույթում դատական վերահսկողության էությանը և խնդիրներին Վճռաբեկ դատարանը *Ներսես Միսակյանի* վերաբերյալ որոշման մեջ սահմանել է, որ «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (տե՛ս *Ներսես Միսակյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ԱԲԴ-1/0003/11/08 ապրիլի 10-ի որոշման 12-րդ կետը):

15. Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ կետում տրված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջին՝ առկա՞ են արդյոք կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաքննության ընթացքում մեղադրյալը հայտնել է, որ կրոնական նկատառումներով հրաժարվում է զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, գտել է, որ մեղադրյալն առնչություն ունի կատարված իրավախախտմանը, հետևաբար՝ առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ նա կատարել է իրեն մեղսագրված հանցանքը:

Անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը ևս փաստարկել է, որ առկա են ապացույցներ, որոնցով հիմնավորվում է մեղադրյալի առնչությունը կատարված արարքին: Հ.Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև այն, որ մեղադրյալը հետևողականորեն պնդել է, որ չի պատրաստվում կատարել իր քաղաքացիական պարտականությունը՝ կապված զինվորական կամ այլընտրանքային ծառայության հետ (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց են ընտրել՝ հիմք ընդունելով այն, որ առկա են փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ, որոնք հիմնավորում են Հ.Խաչատրյանի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որն առերևույթ համապատասխանում է քրեական օրենսգրքով չթույլատրվող համապատասխան հանցակազմի հատկանիշներին:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրավացիորեն իրենց որոշումները հիմնավորել են՝ հաստատելով հիմնավոր կասկածի առկայությունը և անձի արարքի ու նրան մեղսագրվող հանցանքի կապը:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերների այն փաստարկին, որ ՀՀ-ում այլընտրանքային ծառայությունը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բարձրացված հարցի քննարկումը ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից դուրս է գտնվում:

II. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշման հիմքում դրվող հանգամանքները

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս որպես որոշման հիմնավորվածություն Հ.Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու և վերջինիս կողմից 2011 թվականի օգոստոսի 19-ին կայացված՝ «Քրեական գործը դատական քն-

նության նշանակելու մասին» որոշմամբ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը նույնը թողնելու հանգամանքները շարադրելը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...)խափանման միջոց կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն անդրադառնալով քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածներում սահմանված կալանավորման կիրառման հիմքերին՝ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...)Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման հիմքերը սահմանող՝ վերևում մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառնիչ է, հետևաբար՝ անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է և անօրինական: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը» (տե՛ս Վահրամ Գևորգյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշման 18-րդ կետ):

Կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության հարցին Վճռաբեկ

դատարանն անդրադարձել է նաև *Ս. Ճուղորյանի* վերաբերյալ որոշման մեջ և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: (...)» (տե՛ս Արամ Ճուղորյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումն անփոփոխ թողնելիս Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Հ.Խաչատրյանի կալանավորման հիմքերին, ի թիվս մեղադրյալի կողմից նոր հանցանքներ կատարելու և պատասխանատվությունից խուսափելու հավանականության մասին հետևությունների, նշել է նաև այն, որ Հ.Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան, և վերջինիս կողմից 2011 թվականի օգոստոսի 19-ին կայացված՝ «Զրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ մեղադրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է նույնը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Սույն որոշման 20-րդ կետում տրված մեկնաբանությունների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 21-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումներն անթույլատրելի է հիմնավորել այդ անձի վերաբերյալ քրեական գործը դատարան ուղարկված լինելու և դատարանի կողմից գործը դատական քննության նշանակելու փուլում կալանքի վերաբերյալ որոշում կայացված լինելու հանգամանքով, քանի որ այդ հիմնավորումը չի բխում կալանավորման թույլատրելի հիմքերը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

23. Սույն որոշման նախորդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 21-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը

որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հիմքում դնել նրա վերաբերյալ քրեական գործը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված լինելու և դատարանի կողմից 2011 թվականի օգոստոսի 19-ին կայացված՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ Հ.Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը նույնը թողելու հանգամանքները:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքները պետք է հանել Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի շարքից:

24. Սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգման առկայության պայմաններում վերլուծելով Հ.Խաչատրյանի կալանավորման հիմնավորվածության հարցը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների որոշումներում հիմնավորված է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պայմանների և հիմքերի առկայությունը: Նշված հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս արձանագրելու, որ սույն որոշման 21-րդ կետում նշված կալանավորման հիմքի բացակայության պայմաններում ևս Հ.Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումները հիմնավորված են: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են բողոքաբերների փաստարկներն այն մասին, որ սույն գործով ստորադաս դատարանները չեն հիմնավորել Հ.Խաչատրյանի կալանավորման անհրաժեշտությունը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Հարություն Լարվենտի Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 27-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 24-ի որոշումը թողնել օրինական ուժ մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն
Դատավորներ՝ ստորագրություններ*

79.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԶԲԳ/0341/01/08
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան

ԵԶԲԳ/0341/01/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման դեմ դատապարտյալ Խոսրով Հայրապետի Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2007 թվականի օգոստոսի 7-ին հարուցվել է թիվ 62205807 քրեական գործը: Նախաքննության մարմնի 2007 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Խոսրով Հայրապետի Ավագյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով:

2008 թվականի հուլիսի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ

նույնարկվել է Երևանի քրեական դատարան:

2. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճռով ամբաստանյալ Խ.Ավագյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ցմահ ազատազրկման:

Տուժողի իրավահաջորդ Թամարա Հարությունյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Ամբաստանյալ Խ.Ավագյանի պաշտպան Կ.Մանուչարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դատապարտյալ Խ.Ավագյանը, որը Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2011 թվականի հունիսի 14-ին դատապարտյալ Խ.Ավագյանը դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ 143-Ն օրենքի հիման վրա վերանայել Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ դատապարտյալ Խ.Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը համապատասխանեցվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ 143-Ն օրենքին, արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, իսկ մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

6. Գատապարտյալ Խ.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 14-ի որոշումը:

7. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դատապարտյալ Խ.Ավագյանը, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

8. Դատապարտյալ Խ.Ավագյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2006 թվականի դեկտեմբերի վերջին, շահադիտական դրդումներից ելնելով, Երևանի Լենինգրադյան փողոցի 6-րդ շենքի 38-րդ հասցեի բնակարանին փաստացիորեն տիրապետելու նպատակով, Խ.Ավագյանը ԲԻ-58 տեսակի թունաքիմիկատով թունավորելու եղանակով կյանքից զրկել է քույրեր Վարսենիկ և Մարգո Գյուրջինյաններին (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, էջ 280):

9. Գործի նյութերում առկա է դատապարտյալ Խ.Ավագյանի դիմումը հետևյալ բովանդակությամբ. «Ես՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Խոսրով Հայրապետի Ավագյանը, 21.10.2008 թ-ին Երևանի քրեական դատարանի կողմից դատապարտվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով ցմահ ազատազրկման: Խնդրում եմ վերանայել դատարանի կողմից իմ նկատմամբ կայացրած դատավճիռը՝ նկատի ունենալով ՀՀ քրեական օրենսգրքում ՀՀ Ազգային ժողովի կողմից 25.04.2011թ. կատարված փոփոխությունները» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, էջ 131):

10. Դատապարտյալ Խ.Ավագյանի դիմումն Առաջին ատյանի դատարանում քննության է նշանակվել 2011 թվականի հուլիսի 14-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, էջ 135), իսկ Վերաքննիչ դատարանում՝ 2011 թվականի օգոստոսի 22-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, էջեր 21-22):

11. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարանների կողմից նշանակված դատական նիստերի տեղի և ժամանակի մասին ծանուցագրերը դատավարության մասնակիցներից ուղարկվել է միայն մեղադրող կողմին (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, էջ 135 և հատոր 6-րդ, էջեր 23-24ա):

Քրեական գործում բացակայում է դատապարտյալ Խ.Ավագյանին դատական նիստերի տեղի և ժամանակի մասին ծանուցելու վերաբերյալ որևէ ապացույց:

12. Վերաքննիչ բողոքում դատապարտյալ Խ.Ավագյանը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանում վերջինս ներկա չի գտնվել իրեն մեղսագրված արարքի քրեախրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցի քննարկմանը (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, էջեր 5-6):

13. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ օրենքի ուժով դատապարտյալ Խոսրով Հայրապետի Ավագյանի վերաբերյալ դատական ակտը վերանայելու՝ համապատասխանեցնելու արդյունքում, ընդհանուր իրավասության դատարանն իրավացիորեն Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճռով Խոսրով Հայրապետի Ավագյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ

կետերով հանցավոր արարքը համապատասխանեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ կետերին՝ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը՝ ցմահ ազատազրկումը, թողնելով անփոփոխ» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, էջ 35):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

14. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջները: Մասնավորապես, ստորադաս դատարանների կողմից քննության չեն առնվել արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ արդեն իսկ փոփոխված մեղադրանքի շրջանակներում, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, ինչի արդյունքում իր նկատմամբ նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ:

15. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացված բոլոր պահանջներին՝ Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությանը, դատավճիռը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելուն առնչվող դիմումների քննության կարգին, մասնավորապես, այն հարցին, որ Առաջին ատյանի դատարանում դատավճռի վերանայումը տեղի է ունեցել դատապարտյալ Խ.Ավագյանի բացակայությամբ, ինչպես նաև դատավճռի համար օրենքով սահմանված պահանջների պահպանմանը: Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը:

16. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ բողոքի քննությունը կատարվել է առանց իր մասնակցության, ինչի հետևանքով ինքը հնարավորություն չի ունեցել ներկայացնել հիմնավորումներ, տեղեկանալ մեղադրանքի կողմի փաստարկներին և դրանց տալ մեկնաբանություններ: Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել նաև այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել մրցակցության սկզբունքը:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը:

տասխանեցնելը, նրան պատժից ազատելը, պատիժը մեղմացնելը և վիճակն այլ կերպ բարելավելն իրականացվում է ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերի համաձայն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանք կատարած անձի վիճակը նոր քրեական օրենքի ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անձի կատարած արարքի քրեախրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեախրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար, այդ որոշումը ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ (...» (տե՛ս *mutatis mutandis* Արսեն Արայի Արծրունու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գատական որոշման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատական նիստում՝ դատապարտյալի մասնակցությամբ»:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համակարգային վերլուծությունից երևում է, որ անձի կատարած արարքի քրեախրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցի քննարկմանը դատապարտյալի մասնակցությունն Առաջին ատյանի դատարանում պարտադիր է:

Ա.Ղարիբջանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական քննությանը մասնակցելու՝ անձի իրավունքին և դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) դատական քննությանը մասնակցելը կողմերի՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքն է, իսկ նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը: Գործի քննությանը մասնակցելու կողմերի իրավունքը, ի թիվս այլոց, դատարանն ապահովում է գործի քննության տեղի և ժամանակի մասին նրանց ծանուցելու միջոցով, ուստի կարևոր իրավական նշանակություն ունի այն, որ այդ ծանուցումը կրի պատշաճ բնույթ» (տե՛ս *mutatis mutandis* Ամալյա Սերժիկի Ղարիբջանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԳ/0008/06/11 որոշման 16-րդ կետը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Վերը նշված նորմի վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ վարույթում Վերա-

քննիչ դատարանի գործառույթն է նաև ստուգել ստորադաս դատարանի գործողությունների իրականացման քրեադատավարական պատշաճ ձևի պահպանումը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Խ.Ավագյանի դիմումն Առաջին ատյանի դատարանում քննության է նշանակվել 2011 թվականի հուլիսի 14-ին: Մինչդեռ, դատապարտյալ Խ.Ավագյանն Առաջին ատյանի դատարանում իր վերաբերյալ գործի քննությանը ներկա չի գտնվել, իսկ գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ դատական նիստերի տեղի և ժամանակի մասին դատապարտյալ Խ.Ավագյանը ծանուցված է եղել, ինչպես նաև դիմում, որը պարունակեր դատապարտյալ Խ.Ավագյանի խնդրանքն իր վերաբերյալ գործի քննությունն իր բացակայությամբ իրականացնելու մասին (տե՛ս սույն որոշման 9-11-րդ կետերը):

Վերաքննիչ բողոքում դատապարտյալ Խ.Ավագյանը բարձրացրել է նաև Առաջին ատյանի դատարանում իր բացակայությանը հարցը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն անդրադարձել է միայն Խ.Ավագյանի արարքի քրեաիրավական որակման և պատժի հարցերին (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարձրել Առաջին ատյանի դատարանում դատապարտյալի՝ իրեն մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցի քննարկմանը ներկա չգտնվելու փաստարկին:

23. Սույն որոշման 21-րդ և, համապատասխանաբար, նաև *Ա.Արծրունու* և *Ա.Ղարիբջանի* վերաբերյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 22-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատապարտյալ Խ.Ավագյանին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցը քննարկել դատապարտյալի բացակայությամբ, իր հերթին Վերաքննիչ դատարանն իրավաչափ չի գործել չանդրադառնալով այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանում դատապարտյալ Խ.Ավագյանն իրեն մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցի քննարկմանը ներկա չի գտնվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Խ.Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ 143-Ն օրենքին համապատասխանեցնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր էր միջոցներ ձեռնարկել դատական նիստերին դատապարտյալի մասնակցությունն ապահովելու համար: Այդ նպատակով դատարանը, ի թիվս այլ գործողությունների, պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեր նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին ծանուցելու և վերջիններիս՝ դատական քննությանը մասնակցելու իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար: Միաժամանակ, եթե առկա է գործի քննությունն իր բացակայությամբ իրականացնելու վերաբերյալ դատապարտյալի խնդրանքը, ապա դատարանն իրավասու է դատապարտյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը քրեական օրենքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու հարցը քննարկել նրա բացակայությամբ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանին, ապա վերջինս դատապարտյալ Խ.Ավագյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ստորադաս դատարանի կողմից կայացված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս պետք է անդրադառնար Առաջին ատյանի դատարանի կողմից քրեադատավարական օրենքի նորմերի պահպանման խնդրին:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...):

Հիմք ընդունելով սույն որոշման 20-23-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Առաջին ատյանի դատարանի ու Վերաքննիչ դատարանի որոշումները և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

25. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշման 18-րդ կետում նշված՝ նյութական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկներին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գատապարտյալ Խոսրով Հայրապետի Ավագյանի վերաբերյալ «Գատավճիռը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին» Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 14-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ ստորագրություն
Գատավորներ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ 2010 Թ. II ԿԻՍԱՄՅԱԿ, 2011 Թ.

Հատոր III

Տպագրությունը՝ օֆսեր: Չափսը՝ 70x100¹/₁₆:
Թուղթը՝ օֆսեր: Ծավալը՝ 56 փպ. մամուլ:
Տպաքանակը՝ 750:



Տպագրվել է «Ամարաս» տպարանում:
Երևան, Տերյան 44:
Նեռ. 56 04 79, 56 74 64
E-mail: amaras-print@mail.ru
